

ԷՍՏԱ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

9/47.925
3 - 75

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԲՆԱՌԻՑՈՒՏ

ԷՍՍԱ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ
ՈՒԽՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

4985

ՄԵՄՐՈՊ ԱՐՔ. ԱԾՋԵԱՆ

ԱՆՏԵՂԱՋԱՐ

93



ARCH. MESROB ASHJIAN

BOOK SERIES

93

ԵՐԵՎԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԲՆԱՌԻՑՈՒՏ
2013

Գիրքը հրատարակության է երաշխավորել
 «ՀԱՅ պատմության ինստիտուտի գիտական խորհուրդը»

պատասխանատու Խմբագիր՝ Ա. Ա. Մելքոնյան, պ.գ.դ.,
 «ՀԱՅ բորակից անդամ»

Կոստանդյան Է.
 Կ 755 Հայագիտական ուսումնասիրություններ/ Է. Կոստանդյան. -Եր.:
 Պատմության ինստիտուտ, 2013. - 538 էջ:

Գիրքը ներառում է «ՀԱՅ պատմության ինստիտուտի գլխավոր գիտաշխատող, պատմագիտության դոկտոր Էմմա Աշոտի Կոստանդյանի» հայ ժողովրդի պատմության նոր շրջանի վերաբերող հասարակական-քաղաքական, հոգևոր-եկեղեցական հարցերին, ազգային ազատագրական շարժումներին և մշակույթի պատմության գործիչներին միլիոնական այլ գործընթացը դառնում է լիարժեք, եթե եղածին գումարվում է նաև գիտնականի քաղաքացիական նկարագիրը:

Նախատեսված է պատմաբանների և լճթերցող լայն հասարակայնության համար:

ՀՏԴ 941(479.25)
 ԳՄԴ 63.3 (2)

©Պատմության ինստիտուտ, 2013

**ՅՈՒՐԱՀԱՏՈՒԿ ՀԱԾՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԳԻՏՆԱԿԱՆԻ
 ԱՆՑԱԾ ՊԱՏՎԱԲԵՐ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԱՍԻՆ
 (Էմմա Կոստանդյանի հողվածների ժողովածուի
 հրատարակության առիթով)**

Յուրաքանչյուր գիտնական անցնում է ուրույն ստեղծագործական ուղի: Սակայն գիտության մշակի դժվարին, բայց պատվաքեր ու պատասխանատու կոշմանն արժանանալու համար անհրաժեշտ է հաղթահարել պահանջվող բոլոր աստիճանները. նաև՝ ստիպել գիտական հանրությանն իր շարքերն ընդունել երիտասարդ հետազոտողին, ապա հարգանքով վերաբերվել նրա ստեղծած առաջին գործերի հետ, իսկ արդեն ծանրակշիռ ժառանգության առկայության պայմաններում՝ արժանին ճատուցել կայացած գիտնականին: Ընդ որում, հասուն գիտնականի կայացնան այդ գործընթացը դառնում է լիարժեք, եթե եղածին գումարվում է նաև գիտնականի քաղաքացիական նկարագիրը:

Այսօր արդեն գիտամանկավարժական գործունեության 55-րդ տարին նախաշեմին, վատահարար կարող ենք ասել, որ պատմական գիտությունների դրվագը, «ՀԱՅ գիտությունների ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտի նոր պատմության բաժնի երկարամյա վարիչ Էմմա Աշոտի Կոստանդյանն անցել է այդ փառահեղ ուղու բոլոր ասինքներով և վաստակել հայագետների ընդիմական սերն ու հարգանքը, իր պատմաբանների շարքում: Այն, որ Էմմա Կոստանդյանն անցել է գիտնականին վայել ճանապարհ, հասուլ երեսում է նրա կենսագրական համառոտ ակնարկից. ծնվել է 1934 թ. հուլիսի 23-ին ՀՍՍՀ Կիրովական (այժմ՝ Վանաձոր) քաղաքում արինստավորի ընտանիքում: 1941-ին ընդունվել և 1951-ին ուկե մեղալով ավարտել է Կիրովականի № 1 միջնակարգ իջական դպրոցը: Նա նոյն թվականին դառնում է Երևանի պետական համալսարանի քանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի ու գրականության բաժնի ուսանող: Հայաստանի մայր բուիր և Կոստանդյան ավարտում է գերազանցության դիպլոմով (1956 թ.): 1958 թ. Հայաստանի Գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի նոր պատմության բաժնում, լար-

րանտի համեստ պաշտոնում է։ Կոստանդյանի աշխատանքի անցնելը նրա համար ունենում է ճակատագրական նշանակություն։ Երիտասարդ հետազոտողն այն ժամանակ չէր պատկերացնում, որ այդուհետ իր ողջ գիտական գործունեությունը կապվելու է պատմության ինստիտուտի հետ, և նրա կենսագրությունը դառնալու է գիտական այդ հաստատության տարեգրության մի մասը։

1964-ին Է. Կոստանդյանն արդեն հարազատ ինստիտուտի նոր պատմության բաժնի ասպիրանտ էր։ Նրան բախտ էր վիճակվել անցնելու պատմագիտական հզոր դպրոց՝ աշակերտելու ականավոր պատմաբաներ, Գ-Ա ակադեմիկոսներ Սկրտիչ Ներսիսյանին և Աշոտ Հովհաննիսյանին։ Առաջին գիտական պրատուններից հետո 1968-ին Կոստանդյանը դառնում է ինստիտուտի կրտսեր գիտաշխատող։ 1971-ին պաշտպանում է թեկնածուական ատենախոսությունը «Գ-արեգին Մրացանձի հասարակական-քաղաքական գործունեություն» թեմայով։ Մեծ հայագետ-քանահավաք Մրգանձյանցին նվիրված ատենախոսությունը լրացշակելուց հետո 1979 թ. լոյս է տեսնում որպես մենագրություն։ 1978 թ. Է. Կոստանդյանն ընտրվում է ավագ գիտաշխատողի պաշտոնում։

Գ. Մրգանձյանցի գիտահասարակական գործունեությունն ուսումնասիրելով՝ Է. Կոստանդյանը կուտակել էր հսկայական փորձ ազգային գործիչների անցած ուղին հավոր պատշաճի գնահատելու առողջությունը։ Հենց այդ փորձն էլ նրան հնարավորություն տվեց ձեռնամուխ լինելը, որպիսին Սկրտիչ Խորիմյանն էր։ Նորահայտ նյութերի հիման վրա գրված բազմաթիվ արժեքավոր հոդվածներից հետո Կոստանդյանը գիտական հանրության դասին հանձնեց Խորիմյան Հայրիկի կյանքի ու ատենախոսությունն ու մենագրությունը։ Նրան շնորհվեց պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան (1999 թ.), իսկ մենագրությունը, որ արժանացավ բարձր գնահատականի, լոյս տեսավ 2000 թ. և

Հատկանշական է, որ հեղինակը խորապես գիտակցել է թեմայի տարրութակությունը, Խորիմյան ազգային գործչի գործունեության բագ-

մապիսի ու բազմաբնույթ էությունը, նրա ապրած դարաշրջանի բարդ ու հակասական պատկերը, և բայց այդ էլ խնդիրը պարզաբանել ամբողջ մի դարաշրջանի հորովույքի մեջ։ Առաջին հայացքից բվամ է, թե Կոստանդյանի աշխատությունները զուտ Սկրտիչ Խորիմյանին նվիրված գործեր են։ Սակայն իրականում դրանք 19-րդ դ. երկրորդ կեսի և 20-րդ դ. սկզբի Հայ առաքելական եկեղեցու, ազգային-ազատագրական և սոցիալական շարժումների, բաղարական կուսակցությունների պատմության բազմաթիվ դրվագների ինքնատիպ լուսաբանումներ են։

Էնճա Կոստանդյանի գիտակազմակերպական ունակությունները հատկապես ուսուորվեցին ինստիտուտի նոր պատմության բաժնի վարիչի պատասխանատու պաշտոնում։ Նրա պաշտոնավարության շրջանում (2003–2012 թ.) բաժինն ունեցավ լորջ ձեռքբերումներ հայոց նոր պատմության հանգուցային խնդիրների նորովի ու անաշառ լուսաբանման բնագավառում, զգալի աշխատանք տարվեց Հայոց պատմության ակադեմիական երրորդ հասորի ստեղծման ուղղությամբ։ Շարունակելով ազգային-հոգևոր գործիչների կյանքի ու գործունեության թեմայով հետազոտությունները՝ ինստիտուտի գլխավոր գիտաշխատող Կոստանդյանն այժմ էլ ձեռնարկել է ևս մի նշանավոր անհատականության։ Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանին նվիրված աշխատությունների ստեղծման շնորհակալ գործը։ Պատահական չէ, որ Հայ եկեղեցու պատմության ուսումնասիրության բնագավառում ունեցած լորջ ձեռքբերումների համար Էնճա Կոստանդյանին շնորհվել է Հայաստանյաց առաքելական եկեղեցու «Սուրբ Սահմակ և սուրբ Մելքոն» բարձր շքանշանը։

Էնճա Կոստանդյանի մասին մեր խոսքը լիարժեք չէր լինի, եթե շանդառադանայինք նրա մարդ-քաղաքացու նկարագրին։ Դևո խորիրդային տարիներին նա ակտիվորեն մասնակցել է ինչպես ինստիտուտի, այնպես էլ հանրապետության հասարակական-քաղաքական կյանքին։ Շատերը իիշում են նրա համարձակ ու կրակոտ ելույթները Արցախյան շարժման նախօրյակին և ընթացքում։ Այժմ էլ, անտեսելով բազմաթիվ դժվարություններ, Է. Կոստանդյանը երիտասարդական ավյունով, կրտսեր գործընկերների հետ Հայաստանի Հանրապետության և Արցախի գորամասերում հայ գիննորականության առջև հանդես է գալիս հայրեղուածակություն և ազգային գործունեության մեջ։

նասիրական դասախոսություններով, շարունակում ապրել հայրենիքի առօրենական հոգսերով:

Ընթերցողի դատին հանձնվող ներկա ժողովածուն ևս մի ինքնատիպ հաշվեովուրյուն է զիտնական-քաղաքացու անցած ուղու մասին: Ժողովածուում տեղ է գտնել տասնամյակների ընթացքում Կոստանյանի հեղինակած հոդվածների, գրախոսությունների, հարցազրույցների ընտրանին: Համոզված ենք, որ այն խիստ օգտակար կյիմի ինչպես մասնագետ-պատմաբաններին, այնպես էլ հայագիտությամբ գրադարձներին ուներցող լայն շրջանակներին:

Աշոտ Մելքոնյան, ՀՀ ԳԱԱ պատմոյան ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ

**ԳՈՒՄ-ԳԱՎՈՒԻ ՑՈՒՅՑԸ
(100-ամյակի առթիվ)**

XIX դ. 80-ական թվականներից Արևմտյան Հայաստանի տարրեր վայրերում սկսում են ստեղծվել ազատազրական նպատակներ հետապնդող գաղտնի կազմակերպություններ և ընկերություններ՝ Վանոս («Սև խաչ»), Կարինում («Պաշտպան հայրենյաց»), «Փոքր Հայրի կազմակերպության» մասնաճյուղերը Մարզվանում, Եվդոկիայում, Արարկիրում, Սեբաստիայում, Մալաթիայում: Այդ կազմակերպությունների հիմնական շարժիչ ուժը գյուղի և քաղաքի արիեստավորներն ու երկրագործներն էին, իսկ զեկավարությունը շատ հաճախ իր ձեռքն էր վերցնում զավառի դեմոկրատ մտավորականությունը: Նրանք կատարում էին գործնական աշխատանք ժողովրդի ինքնապաշտպանության գործը կազմակերպելու համար: Չնայած որոշ անհաջողությունների («Պաշտպան հայրենյաց», «Փոքր Հայրի կազմակերպություն» և այլն), այնուամենայնիվ, այդ կազմակերպությունները պարարտ հող էին նախապատրաստում 80-ականների երկրորդ կեսին ձևավորվող քաղաքական կուսակցությունների համար: «Սև խաչ»-ի հիմնական նար կազմավորում է «Արմենական» կուսակցությունը, իսկ Սև ծովի ափամերձ քաղաքներում գտնվող «Փոքր Հայրի կազմակերպության» մասնաճյուղերը մեծ նասամք ներգրավվում են Հնչակյան կուսակցության մեջ: Տասնամյակի վերջին ավելի է սաստկանում սուլթանական ռեակցիան: Գավառի դեմոկրատ մտավորականության ներկայացուցիչներին և ժողովրդանվեր հոգևոր առաջնորդներին արգելվում է մնալ գավառներում: Էրգորումից հետանում է Մաղաքիա Օրմանյանը, Վանից արտաքսվում է Սկրտիչ Փորբուգայանը, պատվավոր արտոր է մեկնում Սլրտիչ Խրիմյանը, Տրավիգոնից Կ. Պոլիս է կանչվում Գարեգին Սրբանձտյանը, Մուշից՝ Գրիգորիս Ալեաքճյանը: Պողոս Նարանյանը Շալուից «Վապանոր» արտաքսվում է և «Ժյուրընկալվում» Կ. Պոլսի բանտում, Արարկիրից նոյն քայլատին է արժանանում հոգևոր առաջնորդ Եղիշիկ Ապահովի վարդապետը: Եվդոկիայում բանտարկվում են մի խումբ ուսուցիչներ՝ Գ. Փասապանյանի զիսավորությամբ: Հալածանքներին ուղիղ համեմատական վերելք էր ապրում ազգային-ազատազրական շարժումը: Տասնամյակի

Վերջին հայտնվում են առաջին հայրուկները, որոնք գաղտնի տարրեր ճանապարհներով զենք են փոխադրում երկիր:

90-ականների սկիզբը նշանավորվում է նոր իրադարձություններով: Կարինի երիտասարդությունը, համախմբված Սանասարյան վարժարանի դեկանության և դեմոկրատ մտավորականության շուրջը, գաղտնի մեծ աշխատանք է ծավալում ժողովրդի մեջ: «Պաշտպան հայրենյաց»-ի նախկին դեկանար Խաչատոր Կերեքցյանի՝ բանտից ազատվելուց հետո այդ աշխատանքներն ընկնում են ավելի հմուտ ձեռքերի մեջ: Սակայն քնած չին նաև բուրքական կառավարության տեղաբանը երկար նախապատրաստվում են Կարինի հեղափոխական ուժեւության մոլուսնդությունը, իրակրելով նրանց քալանի և ավարի, Կարինի գինվորական նախանգաղաքատի իրամանով 1890 թ. հունիսի 18-ին խուցին: Զենք գտնելու պատրվակով քանդում են վարժարանի հատակի տախտակներն անզամ, իսկ եկեղեցին խուզարկելու ժամանակ քալանում նրա գույքը, պղծում սուրբ ամրություն ու պատկերները: Դա լցնում է Կարինի հայության համբերության քաժակը և փոխհրաձգություն է սկսվում կառավարական գորքերի և հայ երիտասարդների միջև: Խաղաղությունից լինում են գրիեր¹: Դիմադրող հայերի մի մասին հաջողվում է ապաստանել օտարերկրյա հյուպատոսարաններում: Գագանական ամբոխը հարձակվում է նույնիսկ հյուպատոսարան- է անզիւական հյուպատոսարանը: Ուստական հյուպատոս Դենինը որ «քուրք ամբոխը նախօրոք պատրաստված էր և նրա հարձակումը անակնիալ չէ»²: Երգումի դեպքերը ճնշող ազդեցություն ունեցան ողջ

արևմտահայ իրականության մեջ: Երկիր անցած հնչալյանները, որոնք գործում էին Փոքր Հայրում, մեկնեցին Կ. Պոլիս, դրանց բվում Ռուբեն Խանագատը, Գարրիել Կաֆյանը, Հակոբ Մելափորյանը: Կ. Պոլսում նրանք հանդիպեցին մինչև Հնչակյան կուսակցության կազմակորպվելը այնտեղ գործող Վարիչ Մարմնի աշքի ընկնող անդամների հետ և որոշեցին կազմակերպել հայ հեղափոխականների խաղաղ ցույց՝ հայության ողին բարձրացնելու, Երգումի իրադարձությունների ճնշող տպագրությունը ցրելու համար: Կ. Պոլիսը ցույցի վայր ընտրելով բացատրվում էր նրանով, որ օսմանյան մայրաքաղաքը նաև արևմտահայ մշակութային կենտրոն էր, որ կար ավելի քան 200.000 հայություն, որն իր ձայնը պետք է բարձրացներ հօգուտ գավառահայության: Ցույցի նպատակն էր օսմանյան դեսպանությունը ուղարկել հայկական հարցի վրա, ստիպել սուլթանին՝ բոլացնել գավառահայության նկատմամբ կիրառվող հալածանքները, անհապաղ գործադրել Բեղլինի դաշնագրով նախատեսված բարենորոգումները: Երկար քննարկվեց ցույցի պլանը: Որոշվեց ցույցն անցկացնել հունիսի 15-ին, Կարինի դեպքերից ուղիղ մեկ ամիս անց, բուրքական տոնակատարության՝ գորպան բայրամի առաջին օրը: Ծրագրվեց նաև ցույցի բովանդակությունը: Պետք է գրվեր կարճ պահանջագիր, որը կարդացվելու էր Գում-Գափուի մայր եկեղեցում՝ հոգևոր արարողության ժամանակ: Այնուհետև, պատրիարք Աշրայանի հետ այդ պահանջագիրը պետք է ներկայացվեր անձանք սուլթանին: Դրա համար ընտրվելու էին երկու հոգի՝ պահանջագիրը կարդալու, և պատրիարքի հետ սուլթանի պալատը մեկնելու համար: Այդ գործը կամագոր հանձն առան վանեցի («Սև խաչ»-ի նախկին անդամ, այժմ Կ. Պոլսի Վարիչ Մարմնի անդամ) Հարություն Շանկույանը և Կ. Պոլսի Կեղրոնական վարժարանի աշակերտ Համբարձում Պոյաճյանը (հետագայում հայտնի դարձավ մեծն Մուրադ անունով): Գարրիել Կաֆյանը, Հ. Մելափորյանը և Ռ. Խանագատը ցույցը կազմակերպելուց հետո պետք է հետանյային Կ. Պոլսից, որպեսզի բռնվելու դեպքում կառավարությունը տեղյակ չլիներ օտարահպատակների մասնակցությանը: Հունիսի լույս 15-ի գիշերը Կ. Պոլիսը գավառին կապող հեռագրաքելերը նախատեսված էր կտրտել, որպեսզի սուլթանի կողմից տրված ջարդի հրամանը չհասներ տեղ: Այդ գործը հանձնարարված էր Տիվրիկցի Թորոս

¹ Հայ ուստական հյուպատոսի տվյալների՝ 14 հոգի սպանման, 200-ից ավելի վիրաբույժի արտաքին բաղարականության արխիվ (այսուհետև՝ ՌԱ.ՁԱ.): ԱՎՈՐԻ, ֆ. Պոլիտարքություն, գ. 3441, թ. 16: (Արքiv Վնешней политики Российской империи ՌԱ.ՁԱ., բաղարիխ ֆ., գ. 3441, թ. 16):

² Ուստական հյուպատոսի տվյալների՝ 14 հոգի սպանման, 200-ից ավելի վիրաբույժի արտաքին բաղարականության արխիվ (այսուհետև՝ ՌԱ.ՁԱ.): ԱՎՈՐԻ, ֆ. Պոլիտարքություն, գ. 3441, թ. 16:

անոնվ մի երիտասարդի: Զգուշության նկատառումներով ցոյցի պլանի մասին չկը հայտնաված անգամ տասնապետներին: Միայն նրանց հրահանգված էր իրենց տասնակներով պատրաստ լինել մայր եկեղեցու մեջ: Սակայն գործողությունները չընթացան ծրագրված պլանով: Հոգևոր արարողությունն ընդիատելով, Հարություն Շանկույլյանը վերցրեց պահանջազիրը և սկսեց կարդալ: Ժողովրդին պատես հոգում, և սկսվեց խառնաշփոր: Օգտվելով դրանից, պատրիարք Խ. Աշրջանը փախավ Եկեղեցու սրահից և փակվեց խցիկներից մեկում: Եկեղեցու պատին փակցված սուրբանի հրովարտակը պատուելուց հետո Շանկույլյանն ու Պոյաճյանը հետապնդեցին Աշրջանին, ստիպելով նրան իրենց հետ կառը նստել և գնալ սուրբանի պալատը՝ պահանջազիրը ներկայացնելու համար: Սակայն պատրիարքը ընդդիմացավ և հրաժարվեց: Շանկույլյանը ատրճանակի սպառնալիքի տակ կառը բարձրացրեց նրան: Եկեղեցու իրարացման լուրը հասել էր մայրաքաղաքի ոստիկանապետին, որը մի խմբով շտապեց կառքին ընդառաջ: Փոխադարձ ընդհարումից հետո նրանց հաջողվեց բռնագրավել կառը:

Ցոյցի լուրը հասել էր նաև սուրբանին, տոնակատարության հենց սկզբին: Սարսափած սուրբանը ցանկացավ ընդիատել տոնակատարությունը, սակայն պաշտոնյաները համոզեցին նրան շարունակել արարողությունը մինչև վերջ:

Սկսվեցին զանգվածային ձերբակալությունները: Համբարձում Պոտեղափոխութել Հնշակյան կենտրոնը: Սի քանի օր անց ձերբակալվեց Ա. Արքիարյանը: Այնուհետև ձերբակալվում են Ազգային ժողովի նախկին ատենապետ, ազատականների պարագուխ, դոկտոր Հարություն Թիրաքյանը, Տատյան Վահրամ Ալեյք և Պետրոս Տոնապետյանը: Ազգային ժողովի երեխոխսան, կրոնական ժողովի ատենապետ Մ. Խրիմյանը հրավիրում է բարձրաստիճան հայ հոգևորականների համագումար-ժողով, որը բոլոր-տեղեկագրեր է ներկայացնում Բ. Դուռ, պահանջելով դաշտաբեցնել հալածանքները հայ ժողովրդի նկատմամբ, իրազորել խոստացած բարենորոգումները, հոգևոր առաջնորդներին վերադադարձուց բոլորագրի համար ստորագրող եպիսկոպոսներին (Մ. Խրիմյան,

Մ. Խզմիրյան, Գ. Արվանձտյանց, Գ. Ալեարճյան) Բ. Դուռը տալիս է համապատասխան պատիճ: Երուսաղեմ է արտովում Խրիմյանը: Սովորանի հրամանով կազմվում է մի հանձնաժողով, որը պետք է քններ հոգումների պատճառը և մշակեր միջոցառումներ: Այդ հանձնաժողովի մեջ մտան հայազգի կառավարական պաշտոնյաները: Ֆինանսների նախարար Հակոբ Փաշան, արտարին գործերի նախարարի օգնական Արքին փաշան Տատյանը և արդարադատության նախարարի օգնական Վահան Եֆենդին¹: Հանձնաժողովի աշխատանքները և գեկուցումը պահպան էր խիստ գաղտնի: Օգոստոսի 4-ին վերջինս ներկայացվեց սուրբանին: Այն ուներ «խաղաղասիրական» բնույթ, համոզում էր պատրիարքին հետ վերցնել հրաժարականը և դրամ սուրբանին՝ հնարավորին չափ բավարել հայ բնակչության ամենատարրական պահանջները: Սակայն սուրբանը մտադիր չէր գիտումների: Ըստ Արքին փաշայի՝ ուսական դիվանագիտական կորպորատիվ աշխատակից Ժադովսկու հետ ունեցած գրույցի տվյալների, Բ. Դուռն անգործության էր մատնված և հակված չէր դրական որևէ տեղաշարժի, իսկ հայ ժողովրդական հոգումները հասել էին այն աստիճանի, որ հայազգի բորբական պաշտոնյան խաղաղ կը չէր տեսնում կատարվածից²: Սուրբան ավելի սարսափում էր եվրոպական պետությունների՝ կոնկրետ Անգլիայի և Ռուսաստանի, միջամտությունից, դրա համար էլ մի կողմից սիրաշահվում կին օտարերկրյա դեսպանները, մյուս կողմից՝ ուժեղացվում հալածանքները:

Օգոստոսի սկզբին եղավ ցուցարարների դատը: Հարություն Շանկյույլյանը դատի ժամանակ երույթ ունեցավ, դատավարութեած օսմանյան կառավարության հայահպատակ քաղաքանությունը, պահանջեց ժողորդիայում ապրող բոլոր ժողովուրդների ցեղային խորականության վերացում: Նա միտեց դատարանի կողմից հայ ժողովրդին անջատողականության մեջ մեղադրելու փաստարկը: «Մենք մեր պահանջազրով մեր իրավունքին մեջ ենք և ձեզն կայսերական իրենքն ապահովություն կատարած ենք անքերի, ասոր փոխարեն բայ օրենքի կողենք, որ գործադրվի և կիրարկվի մեր իրավունքը, որով հայերս իրենք մարդ ապրինք, ինչպես կապրին ձեր

¹ Ո.Ա.Ք.Ա, քաղաքի թ., գ. 3441, թ. 72:

² Նոյն տեղում, թ. 90-91:

հայտակ այլազան տարրեր, այսինքն մեզի տրվին մեր իրավունքները՝ բոլոր լրացուցիչ պայմաններով, որով ուրիշ պահանջ մը չէ, այլ հավասարության գործադրությունը կապահանջենք, ինչպես ունին մյուս տարրերը կյանքի, ինչքի և պատվո ապահովության, նույնն ունենանք և մենք»¹: Պահանջելով հայկական զավաների հարստահարությունների վերացում, միևնույն ժամանակ Շանկույլյանը խնդիր էր դնում, որ հայ ժողովրդին տրվի ինքնապաշտպանության միջոցներ, սեփական ուժերով շարագրօններին դիմագրավելու համար: Հակառակ դեպքում մեղադրյալը գտնում էր, որ կզան նոր մարդիկ, որ «Պիտի ընդգենք, նորեն կըրկնեն, առանց անջատողական զաղափար մը ունենալու, և պիտի պարզենք ըմբռութության և ապատամբության դրոշակը. մաս կամ ազատություն գոշելով ձեր դեմք պիտի ենթենք մինչև վերջին շունչերնիս կովիլ և մեր արյան վերջին կարիլը թափել, կամ այն է իրք մարդ ապրելու մեր իրավունքը ձեռք բերել և կամ պատվավոր կերպով մեռնիլ»²: Մեղադրյալը հանդես էր գալիս իրք մեղադրող և պահանջում արմատական վերափոխումներ քուրքական պետական մերենայի մեջ: Դատարանը Հարություն Շանկույլյանին դատապարտեց մահվան, մյուս ձերքակալվածներին՝ 5–15 տարի բանտարկության: Այս սուլքանը «ուղորմածարար» կյանք շնորհեց Շանկույլյանին՝ դատապարտելով ցլյանս բանտարկության քուրքական ամենադաժան բանտերից մեկում Արքայում: Հեռակա կարգով ցլյանս բանտարկության դատապարտվեց նաև Համբարձում Պոյաճյանը, թերթերում հայտարարություն տրվեց, որ նկարագրում էր նրա արտաքինը:

Ցույցը բարձր գնահատականի արժանացավ Հնչալյան կենտրոնի կողմից: «Հնչալք»-ը հոդված նվիրեց այդ ցույցի նշանակության բացահայտմանը. «Ապստամբ հայ արյունն առաջին անգամ ոռոգեց Քյուզանի փողոցները: Հայն իր գրուսը արդեն բարձրացած էր հեղափոխական դրոշը ձեռքին: Հանկարծ Եվրոպան վեր թռավ և աչքը ցեց դեպի Արևելք, այդտեղ պատրաստվում էր ազատ անկախությունը դարերով սուրուկ մնացած մեկ ազգի: Եվ ժողովրդի բաժանման խնդիրը նորից

¹ Հ. Շանկույլյան, Հիշատակներ հայկական ճգնաժամնեն, մասն Գ, Կ. Թոլիս, 1913, էջ 108:
² Նոյն տեղում, էջ 109–110:

երեան նկավ: Ամեն ճիգ, ամեն ջանք զործ դրած, սարսափած քուրք կառավարության ու շողոքորք և կեղտու մամովի կողմից Եվրոպայի աշքին աննշան դարձնելու հուլիսի 15-ը, ապարդյուն անցավ... Ժողովրդի բազմավեր մերկ մարմինը կրկին ընդհանուրի քննության ենթարկվեց, ամենը ու տեսան, որ ժողովրդին երկունքի մեջ է, նրան դեռ ստրուկ մնացած օտար ազգությունների ազատությունը ծնվելու վրա է, գնով նրա, ժողովրդի սեփական մահի: Ահա թե ինչ ցույց տվեց Տաճկաստանին 15-ը հուլիսի¹: Անշուշտ, չափազանց մեծ դեր է վերագրվում Հնչալյան կենտրոնի կողմից Գում-Գափուի ցույցին: Իրականում դա խիստ անհանգստացրեց սուլքանին և նա իր հավատարմատարի միջոցով դիմեց ուսական ցարին վերջինիս բարեհաճությունը շահելու և քոյլ չտարու նրան անզիյական կառավարության հետ միասնական գործողություններ սկսել՝ ստիպելու բարենորդումների իրագործման համար:

Ուսական ցարը իր կողմից ապահովության երաշխիքներ տվեց սուլքանին, նշելով, որ իր համար աննպաստ է սահմանամերձ շրջաններում ունենալ անհանգիստ իրավիճակ և իրահանգեց Կովկասի քաղաքացիական մասի կառավարչապետին՝ թոյլ չտալ կովկասահայերին ջոկատներ կազմած քափանցել Արևմտյան Հայաստան և զենք փոխադրել այնտեղ²:

Իրարանցում սկսվեց նաև քուրք հասարակական-քաղաքական շրջաններում: Ժողովրդական համարյա բոլոր թերթերը անդրադասն հուլիսի 15-ի դեպքերին, որակերտ այն իրք դադարձնույթուն: Արևմտահայ լիբերալ օրգաններից մեկը՝ «Արևելք»-ը, որն աչքի էր ընկնում իր հակասական հոդվածներով, բարգմանաբար հայ ընթերցող հասարակությանն էր ներկայացնում քուրքական «Սիզանի» և «Ժերմենան» իր հազիգար», թերթերի հոդվածները, մեկ-երկու նախադասությամբ իր վերաբերմունքն արտահայտելով դրանց նկատմամբ: Այսուղ ուշագրավը ոչ թե հայ խմբագրի նկատուումներն էին, այլ քուրք խմբագիրների դիրքորոշումը ժողովրդական հոգումների վերաբերյալ: Տիրող ազգի ներկայացուցիչները անհախաղեալ էին համարում կայսրության մայրաքաղաքում հայտառ մողովոյի այդ ցույցը և գտնում, որ հայերը հոգում

¹ «Հնչալք», 1890, թ. 60:

² Ռ.Ա.ԲԱ, քաղաքական ֆ., գ. 3441, թ. 81, 88:

ների ոչ մի իրավունք չունեն, քանի որ նրանց մի մասը պետության մեջ գրավում է դեկազար պաշտոններ: Թեև առանց փաստի, այդ հոգումները նրանք վերագրում էին «օտար գործիչներու խոռվահույզ թեկաղրությանց» և նկատում, որ հայերը իրենք պետք է պահանջնեն մեղավորների խստագույն պատիժը: Ժխտելով հայկական բարենորոգումների անհրաժեշտությունը, «Միզանի» խմբագիրը գտնում էր, որ բարենորոգումների կարիք ունեն ողջ պետությունը և կայսրության բոլոր ժողովուրդները: Նա հակասում է ինքն իրեն, եթե գտնում է, որ հայերն ունեն մյուս մահմեդականներին հավասար իրավունքներ, ասլա, դիմելով պատմությանը, բացարում, որ «արի իրավունքով» հպատակված ազգի «քաղձանքներն ու ձգումները առ ոչինչ կզրվեն», և նրանց «մասնավոր սովորությունը կվրճատվին՝ զանոնք ի մի ձուլելու և Տերության միությունն և հանդարտությունը ապահովելու նպատակով»: Նա մխոտում է հայ պետականության հազարամյա պատմությունը, վերապահորեն ընդունելով միայն շուրջ «2000 տարի առաջ Տիգրան անուն ցեղապետին»¹: «Արևելք»-ի խմբագիրը շարադրելով թուրք իրապարակախոսի հայացքները, վիրափում է, եթե «Միզանի» խմբագիրը հայերին վերագրում է անջատողական ձգումներ, սակայն չի հապաղում շեշտել, որ «Հայոց փափարը կենաց, պատվու և ընչից ապահովություն, բարեկեցություն և խաղաղ զարգացումն է բաղարակրթության շափին մեջ»²: Ինչպես տեսնում ենք, փաստորեն, հեղափոխական հինակյան Շանկյույսի ելույթը դատարանում, նրա ցանկությունը համընկնում է լիբերալ խմբագիր՝ Բ. Քեշյանի կարծիքին: Նրանք փախենում էին հայտարարել անկախ, ինքնուրույն հայկական պետություն ստեղծելու ցանկության մասին և բավարփում էին միասնական օսմանյան հայրենիքի արմատական բարեփոխումներով³: Ցույցի մասին հետազայտ լրիվ մխոտղական կարծիք

¹ Եթե թուրք նորագույն պատմաբանները ընդիմանաբախս մխոտում են հայերի բնիկ լինելը, այս նրանց ոչ հեռու անցյալի գրչակիցները քաջորյուն ունեն ընդունելու «հայոց բաղարակրթական անցյալը» այդ տարածքում, միևնույն ժամանակ նշելով, վիճակը կայսրությունում հսկա թիվ են կազմում՝ «միլիոններով կիամբ-

² Արևելք, 28. VII. 1890:

³ Առանձին հոդվածի նյութ կարող է լինել մի կողմից «Արևելք»-ի, մյուս կողմից թուրքական «Միզանի» ու «Թերենմանը հազըքարի» բանակովից Փոքր Սահա-

հայտնեց վաստակաշատ զիտնական Լեռն 1934 թ. Փարիզում հրատարակված «Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը գրքում: Դատապարտելով «Հնչակ»-ին իր գնահատականի համար, նա գտնում էր, որ այդ և դրան հաջորդող նման ցույցերը հետագա տարիներին դուռ բացեցին հայկական կոտորածների համար. «Այդ մի աննշան ու չնշին դեպքի օր էր, որ սակայն դարձավ մի բնդարձակ ու լայն բացված դուռ, որի միջոցով աղետների աղետների հետեւից սկսեցին բափել անմեղ և անզիտակ բուրքահայ գյուղացիության զլիսին»¹: Իհարկե, հեշտ էր, համարյա կեսդարյա հեռվից նման գնահատական տալ այդ ցույցին, սակայն այլ հարց էր. արդյո՞ք դա համապատասխանում է պատմական իրականությանը:

Բ. Դուռ հայացինց բաղարականության սկիզբը փաղուց էր դրվել, դեռևս XIX դ. սկզբից, եթե աստիճանաբար կազմավորվում էր թուրք բորժուազիան, որը, հանձինս այլազգի նախաձեռնողների, տեսնում էր իր պոտենցիալ մրցակիցներին: Ազգային բորժուազիայի ստեղծման ճամապարհին մեծ խոշընդուռ էր հոյն և հայ ձեռնարկատերերի ներկայությունը: Սակայն այդ բաղարականությունը առավել նպատակապաց դարձավ ոռու-թորքական պատերազմից և Բեղլինի կոնգրեսից հետո, եթե Թուրքիան Եվրոպայում կորցրեց իր տարածքի մեծ մասը, և կարող լի փոանց սպառնալ նաև նրա փորբախական տարածքին: Ֆուադ փաշայի՝ հայերի ինքնուրույնության ձգումները ոչնչացնելու մասին կտակը ստեղծվել էր անմիջապես այդ դեպքերի ազդեցության տակ, եթե ընդհանրապես գոյություն չունեին ոչ հայկական գաղտնի կազմակերպությունները, ոչ էլ առավելապես բաղարական կուսակցությունները: Զգեստը է շփորել պատճառահետևանքային կապը: Վերահիշյալ այդ թուրք մարմիններն ստեղծվեցին Թուրքիայի հակահայկական բաղարականության հետևանքով: Ավելի ճիշտ էր զոհիվել պատմեշի և բարիկադի վրա, զենքը ձեռքին, պաշտպանելով մարդկային արժանապատվությունը, քան մատադացու գառ դառնալ: 1915 թ. իրադարձությունները ցույց

յում իրազործվելիք բարենորոգումների մասին (տե՛ս «Արևելք», 1890, № 1960, 1969, 1971, 1975, 1976, 1977, 1978, 1980, 1983):

¹ Լեռ, Թուրքահայ Հեղափոխության գաղափարաբանությունը, հ. Ա, Փարիզ, 1934, էջ 175:

տվեցին, որ փրկվեցին նրանք, ովքեր մարտնչում էին: Գում-Գափովի ցույցը իր հարյուրամյա հեռվից մեզ նաև դա է այսօրվա համար:

Կից հրատարակվում են Կ. Պոլսի «Արևելք» օրաթերթում տպված հողվածները և պաշտոնական մեկ գեկուցագիր: Դրանք առավել բնող գծում են ցույցի ժամանակ և հետո Կ. Պոլսում ու Արևմտյան Հայատաւում տիրող սրբած իրավիճակը, իայ և բոլոր հասարակական շրջանների վերաբերմունքը: Ուստեղն փաստաբույրը վերցված է Ուստաստանի արտաքին քաղաքականության արխիվից:

№ 1

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑԱԳԻՐ ԳՈՒՄ-ԳԱԲՈՒԻ ԴԵՊՔԸ

Այս ավոր, բոլոր լրագրաց մեջ հրատարակված է հետևյալ պաշտոնական հայտարարությունը.

Սպարապետի դրան մեջ գումարյալ Զինվորական Ասյանն արձանագրած է յուր վճռն այն անձանց նկատմամբ, որը Գուրապան Պայյրամի առաջին օրը կիրակի ի Գում-Գաբու հայոց պատրիարքարանին ու դեմք գտնված եկեղեցվոյն մեջ հավաքելով հպատակության հանգամանաց հակառակ անպատճեն վարժանց մեջ գտնվիլ համարձակված էին:

Ասոցնե և այս դեպքի պարագային մերեն Արքին Շիհանկույյան նահկան դատապարտված է, որովհետև օսմանյան հպատակները օսմանյան կառավարության դեմ ապստամբեցուցած է և ձեռնարկած է օսմանյան երկրներու մեկ մասը կառավարության իշխանութենուն հանելու:

Սերաստացի Արքին Նարության - դատապարտված է 15 տարվա բերդարգելության յԱրեա: Սերաստացի Նազարեթ - նույնացես 15 տարլության ի Սիսլիլի: Հոյն Նիկոլա - 5 տարվա բերդարգելության ի Սինոպ: Ավետիս և Ջորահյացի Պարոն - 5 տարվա բերդարգելության ի Սինոպ: Երգնկացի Կարապետ - 5 տարվա բերդարգելության ի Քիոս:

Հոյն Եռվան - 5 տարվա բերդարգելության ի Բայյաս, Խաչիկ - 5 տարվա բերդարգելության ի Լեմնի:

Այս վճռո-որոշմամբ նախարարաց խորհրդու, Վեհափառ Սուլթանին մատուցած ըլլալով Զինվորական Ասյանը անսրարտ արձակած է այս դեպքին առթիվ իրեւ ամրաստանյալ ուստիկանության դրույլ որկած 16 անձեր, Նորին Վեհափառությունը բարեփոխած է Արքին Շիհանկույյանի համար որոշված մահկան պատիժը, հրամայելով, որ ցլյանս շղթայակապ աշխատության դատապարտվի յԱրեա: Իսկ մյուս անձանց համար հրամայած է գործադրել Զինվորական Աստենին վճռը: Այն անձինք, որը կառավարության մը հպատակն յուր գերիշխան պետության դեմ կապստամբեցնեն և կամ կձևուարկեն տերության երկրի մեկ մասը հանել մահկան կրատապարտվին և ամեն երկրի մեջ բնականաբար այս պատիժ կգործադրվի. թեև այս անգամվա համար Արքին Շիհանկույյան բարձրագույն ներման արժանացած է, սակայն Կայսերական իրատե մը բացարձակապես հրամայած է, որ երեւ օսմանյան երկրներու մեջ անգամ մ' ալ այսպիսի դեպք պատահի, հեղինակներն անմիջապես ձերբակալվելով Զինվորական Աստենի մը պիտի հանձնվին և այս վերջնոյն կողմեն ըստ Օրինի վճռված պատիժն ամբողջովին պիտի գործադրվին առանց ներվելու և կամ մեղմվելու:

Արևելք, 8. VIII. 1890 (20 օգոստոսի, № 1969)

№ 2

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ «ՄԻԶԱՆԻ» ՄԵԿ ՀՈՂՎԱԾԸ ՍԱՅՐ ԵԿԵՂԵՑՎՈ ՑԱՎԱԼԻ ԴԵՊՔԻՆ ԱՌԹԻՎ

«Միզանի» կարեւոր շարաբարերին մեծահարգ տնօրենը Սուլթան պել, որ օսմանյան գրականության մեջ երևելի տեղ մը կրոնէ, յուր հինգշարքի ավոր բվով ուշագրավ խմբագրական մը նվիրած է Սայր Եկեղեց-

վո հանրածանոր դեպքերին «Քաղաքական տեսություն» խորագրոյն ներքեւ: Հետաքրքրաշարժ կիամարինը մեր հարգու պաշտոնակցին տեսությունները ներկայացնել մեր ընթերցողաց, որք բուրքերն իրածը գրականությամբ խճագրյալ բնագիր կարդալու կարող չեն. բայց ավելորդ է ազդարարել, թե «Միզանի» կարծեաց պատասխանատվորթյունը իրեն կվերաբերի, և մեր իր ասույցները ընելու պաշտոն շունչինը այժմ: Մեր լրագրության առաջին պարտավորությունը միայն կկատարենք՝ գլեթե ամեն օր մեր բուրք պաշտոնակցաց կարծիքները ծանուցանելով մեր այն ընթերցողաց, որք չեն կարդար բուրքերն լրագրեր: «Միզանի» սապես կսկսի յուր հոդված. Պայրամին առաջին օր Գում-Գափուի հայոց եկեղեցվույն մեջ ցավախի դեպք մը տեղի ունեցավ, որուն օսմանյան ժողովրդոց պատմության մեջ չկրկնվիլն հուսանք թե փափաքելի է նույն ինքնի դեպքին հեղինակներուն, դեպք, զոր հավատարիմ հայ ազգն ամոռով և որիշ օսմանցիներն ալ ապշությամբ և ցավով տեսան»:

Դեպքն այնքան անակնկալ էր, որ երես վավերական տեղեկությամբ համոզված չիներ, «Միզանի» հավատ շպիտի ընծայեր «Հպատակության տարրական զգացմամբ օժտյալ մարդ մը, մարդկային ընկերության էական պայմաններուն տեղյակ և քիչ շատ խելահաս մարդ մը անհավատախի պիտի գտներ այս արկած»: «Անիմաստ, անդեպ խոռոչություն մը, զոր «Միզան» չի, վարանի մի քանի օտար գործիչներու խոռվահույզ թելադրությանց վերագրել. «Ամենեն ավելի ոյք պետք է ցավին, խոռվության հեղինակներուն պատժումը ամենեն ավելի ոյք պետք է խնդրեն: Եվ հետզիւտե կրկնվող այս կարգի արկածներու հանդեպ կառավարական օրինաց գործադրումն ամենեն ավելի ոյց հավանության պետք է արժանանա»:

«Միզան» տարակույս չունի, թե ամենեն ավելի հայ ազգ զոհ պիտի մնա, որ այսպիսի արկածը չկրկնվին և հեղինակները պատժվելով՝ ազգին ընդհանրությունն իամախոն չկարծվի:

«Մեր քաղաքային նոր դրույթուններն և օրենքները ժողովրդոց մեջ ըստ օրինի տիրող և տիրապետյալ, հարստահարող և հարստահարյալ անվամբ ուրույն քաժանումներ չեն բողած այլև: Ընդ հովանյակ վեհ. Սուլթանին ամեն օսմանցիք իրավանց և պարտոց, արտոնությանց և առանձնաշնորհմանց մասին հավասար են: Եվ երես շատ քարակ քաղ-

դատություններ ընելու ելներ, կրնանք բաել, թե առավելությունն ոչ մահմենուական ժողովրդոց կողմն է, որք արյան տուրքեն զերծ կգտնվին: «Մանականդ հայ ազգ ամենեն ավելի պատվուց և իշխանությանց արժանացած է: Կարեորագույն նախարարությանց և նախարարական խորհրդակցությանց պաշտոնը, դեսպանությունը, Ծերսկույտի և պետական խորհրդու անդամությունը, գերագույն ատենից նախագահությունը, ընդիանուր դատախազությունը, ի մի բուն Տերության մեջ ամենաբարձր պաշտոնը բաց գտնված են հայոց կարողության և արժանավորության առջև: «Միզան» կիարե «Ոչ ոք կանդէ, թե օսմանյան տերության մեջ հանրային բարեկեցության և ապահովության տեսակետով հարկավոր դատված տիօրինությունը լիովին ի գործ դրված են: Չենք ալ բաել, թե ներքին զավառաց մեջ անկարգությանց վերջը բերել կարելի եղած է դեռ: Բայց դիտելի երկու պարագաներ կան, որք առարկերու իրավունք չեն տար ոչ մեկու, նախ թե վեհ. Սուլթանին գտնակալութենէն ի վեր անկարգության պատճառներ բառնալու և պետք եղած քարեկարգություններն ի գործ դեռու համար կայս. կառավարությունն ամենայն փորածանությամբ կաշխատի, և երկրորդ, դեռևս մնացյալ անքարեկարգությանց երեսնեն Տերության ժողովրդոց ոչ թե մին, այլ ամենքն, ոչ միայն Հայք, այլև մահմենուական ժողովուրդը կվճառվին: «Միզան» արգելը մը չի տեսներ, որ հայրենիք և տերություն մեծակշիռ քառերը գործածելով Հայք օսմանյան հայրենիքն և օսմ. Տերությունն եւր իմանան, օսմ. Տերության անձնվեր լինին և մերժեն խոռվահույզ ձեռնարկներն»:

«Եվ երես այս արգելը ներկայանի նկատմամբ գոյություն չունի, անցելույն նկատմամբ գոյություն ունի⁹ միրեն»:

Մեր բուրք պաշտոնակից հոս պատճական կարեսոր խնդիր մը կիուզե և իրեն հատուկ տեսություն մը կալարգե. «Դնչան իին ազգաց քաղաքակրթական անցյալ ծառայություններն հարգանոր կիիշենք, հայոց ևս քաղաքակրթական անցելույն սիրով կծափահարենք: Բայց թե իրենց անցելույն վրա հենվելով օսմանյան միության շրջանակեն դրու քաղաքական ինքնուրույն գոյություն մը չեն կարող երեսակայել՝ դյուրին է ապացուցանել պատմություն ի ձեռին: Երբ ազգ մը յուր աշխարհականության շրջանին մեջ քախվելով որիշ քաղաքակրթյալ և կազմակերպյալ ազգի մը՝ զրալե գայն և յուր երկրին հետ միացնե, պարտված ազգին

բաղձանքներն ու ծգումներն առ ոչինչ կզրվին «սրո իրավամբ», և եթե փրայեն ժամանակ անցած է իրքը «կատարյալ իրողություն» կնկատվի նոր դրույթունը: Նաև, արդարացուցիչ պատճառներ կրնան ցույց տրվի աշխարհակալ ցեղին այն տնօրինությանց ոգով՝ երկիրը միօրինակ վարչությանց վերածելու և հանրային հանրարտությունը լավագույն ապահովելու համար՝ մասնավոր ժողովրդոց հատուկ ստվորություններն ու դրույթունները կրծատեն, կիտիւխւե: Արդի բաղաքակիրք դարու մեջ իսկ այս իրողության օրինակները կերպին Գերմանիո, Ավստրիո և Ռուսիո մեջ, և հայր իրենց անձնական փորձով ալ զիտեն նույնն: Իսկ եթե օսմանյան պատմությունը քննինք, այս տեսակ արդարացուցիչ պատճառներ որոննելու պետք ալ չենք զգար: Օսմանցիր հայկական կառավարության մը վերջ չտվին: Օսմանցիներեն առաջ հայոց վրա իշխող Սելուզյանը և Արայիանը և անկախ Հայաստանի մը չբախեցան: Ասկե 2000 տարի առաջ Տիգրան անուն ցեղապետն յուր անձնական ջանիվը կհաջողի պետություն մը կազմել, բայց ժամանակ մը ետքը հոռմայեցի գորավար Լուկովոս 11000 զորքե բաղկացյալ իր բանակով կհաղթե Տիգրանի, որ կիսատակի հոռմեական տերության: Յորմեն անտի Հայոց բնակած երկիրն ի սկզբան Արևմտյան Հռոմա և հետո Արևելյան Հռոմա (Բյուզանդիոնի) Տերության և ապա հաջորդաբար Արայիանց, Մելիքաց և ի վերջո Օսմանցիոց նահանգներեն մին եղավ: Ուրեմն, ոչ իսկ պետք ունինք պատերազմական իրավամբ երկրին տիրած լինելու փաստն ի մեջ բերել, որ երկրորդական փաստ, մ' է: Գարով այն տնօրինությանց, որով հպատակ ժողովրդոց մասնավոր ստվորութիւնը կրծատվին՝ զանոնք ի մի ծովելու և Տերության Սիուրյունն և հանդարտությունն ապահովելու նպատակով օսմ. տերությունն աշխարհի վրա եզական հանդիսացած է յուր ներդաշտությամբ և առատարտությամբ, որով ազգային ուրույն իրավունքներն ու ստվորություններն հարգված է միշտ: Ֆրանսայի և Ամերիկայի հանրապետություններն որք իրենց երկրեն վանեցին ճիզվիքներն ու նորմոններն՝ այն նասին օսմ. տերությունն շատ ետ մնացած են: Հայք, որ հարյուր հազարներով կիամրվեին, երբ օսմանյան վարչության հայրական հովանույն ներքեւ ապաստանեցան, այսօր միլիոններով կիամրվին և իրենց առողջին բարեկեցությամբ և ապրելու եղանակավ մահմետական ժողովրդէն ավելի հառաջացյալ վիճակ մ ունին:

Հետևապես «Սիզան» կրաղձա, որ Հայք սիրով և հավատարմությամբ հարյալ մնան օսմ. Տերության և հետ այսորիկ կառավարական պաշտոնյաներն ավելի հոգ տանին, որ Մայք եկեղեցվոր դեպքին նման արկածը չկրկնվին օտար թելապությամբ կամ տկար դատողությամբ: Ի վերջո, «Սիզան», ի սեր բարեկեցության հստարակային հայրենյաց, կմխիքարվի խորիելով, թե այս ցավախի արկածին պատասխանատվորություն բովանդակ հայ ժողովրդյան չի պատկանիր:

Կանխավ ըսինք, թե մեր հարգու պաշտոնակցին քննած խնդրույն վրա չպիտի խոսինք: Արդի պարագայից մեջ սրատմական վիճաբանություն մը ալ անպատեն պետք է համարինք: Բայց անհնար և մանավանդ աններելի է չիփեցնել մեր հարգու պաշտոնակցին, թե ձրի ենքադրություն մը կընեն կարծելով. թե Հայք ինքնուրույն ալետություն մը լինելու հետամուտ գտնվին:

Այս տեսությամբ յուր ըրած բոլոր խորիդածությունը և եզրակացությունը ավելորդ կրվին մեզ. Բաց աստի, քանի որ այս հստարակային հայրենյաց մեջ ամեն ժողովրդաց սիրավիր հայրենակցության փափսքող կերեկի, մեր պաշտոնակցից պետք է զգուշանա հայ ժողովրդյան նույնակ մեկ փոքրամասնության վերագրե ծայրահեղ խորհուրդներ, որք մահմեղական և հայ ժողովրդոց մեջ պատություն ձգելու պատճառ կրնան լինել, բայ մը, որ յուր հայրենասիրական բաղձանաց զիստվին հակառակ պետք է զա:

Հայոց փափաքը կենաց, պատվու և ընչից ապահովություն, բարեկեցություն և խաղաղ զարգացուն է բաղարակրության շափին մեջ, և ապահով են, թե այս բարիքը կրնան միշտ վայելել ընդ գերիշխան հովանույն գործությամբ և պաշտպանությամբ իրենց վեհապետին, սուրբան Արդարական Համբարձության կամաց գործադրմանը Ն. Կ. վեհապետության բարեմիտ և հոգածող տնօրինությանց և գլուխագործությանց ի բարեկեցություն յուր հպատակաց:

Արևելք, 38. VII. 1890 (Թօգոսուսի, № 1960)

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

«Միզան»-ի մեկ նոր հոդվածը Մայր Եկեղեցվո դեպքին վրա, թեև մեր մյուս քուրք պաշտոնակիցը կատարյալ լուրջուն կպահեն, բայց «Միզան», որ յուր անցյալ հինգշաբթի ավոր (2 օգոստ.) բվով զարմանք կիայտներ քուրք լրազրաց լուրջան վրա, յուր երեկի բվով երկրորդ հոդված մը կնվիրե Մայր Եկեղեցվո հանրածանոր ցավալի դեպքին, որո պաշտոնական եքն ընթերցողը տեսան Արևելքի չորեցաբթի ավոր բվով քարգմանյալ կառավարական հայտարարության մեջ: «Միզան»-ի այս նոր հոդվածն ևս իրեւ հետաքրքրաշարժ ինչ կներկայացնենք մեր ընթերցողաց, վերապահելով մեր պատասխան:

«Միզան»-ի նոր հոդվածին խորագիրը (զի խորագիրն անգամ ուշագրավ է), սա է, «Անկեղծության պետքն»: Անկեղծություն կպահանջեն յուր հայ պաշտոնակիցներեն, որը սակայն կեղծավորությամբ շնորհանչեցին այս խնդրույս մեջ: Եվ ինք կձեռնարկե յուր ինքնուրույն ոճով՝ անկեղծորեն և համարձակապես զրուցել մեզ, ինչ որ յուր հայրենանվեր միտքեն կանցնի այս վշտալի դեպքին վրա, որուն անպատճառ ավագ կարևորություն մը տալու կիամառի ազգասիրաբար: «Միզան» կըսէ, թե Պայրամին առաջին օրը Գում-Գափու հայոց Եկեղեցվոյն մեջ պատահած ցավալի դեպքին վրա յուր հրատարակած խմբագրականն ներքուստ և արտաքուստ արձագանք գտած է մեծապես:

«Այս այլազան արձագանց մեջն մեզ ամեննեն ավելի հաճելի էին տեղական հայ մանրույն հերթողական պատասխանները:

Մեր հենվելով պաշտոնապես ստուգված և հրատարակված իրության վրա, իիշեք էինք, թե հայոց մեջ կան խորվահույզներ, որք Օսմ. Տերության ամբողջության անհամաձայն դաշտարական խորիդոց զիւտ կպնդեն: Ցուցուեք էինք, թե հայոց ոչ անցյալն և ոչ ներկան արգելք չեն իրենց, որ մահմեղական և որիշ հայրենակցաց հետ եղայրահավատարմության շափուին մեջ: Հետևապես հույս հայտներ էինք, թե հասարակությունը նախաձեռնարկ պիտի լիներ այդ անպատեն

շարժման հանդինողաց պատմվիլը պահանջելու, որպեսզի այս երկրին մեջ և արտաքը երկրին հայոց համբավը շարարտի:

Հայերեն հրատարակությունը ոմանք, պնդելով թե Օսմ. Տերության միության և ամբողջության նույնիսկ դույզն հարված մը տալու տրամադիր հայեր չեն գտնվիլը, անպատեն ցոյց տվին մեր խորիդածություններ, որք հայրենակից ժողովրդոց մեջ պաղություն կրնան եղեք ձգել:

Երբ այսպես հայ լրագիրը մեր գրածին հակառակ կպնդեն, հօգուտ երկրին և պետության կիավագրեինք անկեղծապես, որ իրենք իրավունք ունենային և մեր խոսքը լիներ սխալ: Բայց կցավինք, որ իրենց դատը մերինի շափ ապացուցյալ չի բվիր գործնական իրողությամբ:

Եվ իրոք, կարգ մը վճատակար թերթերու գոյուրյունն, որ չուրացվիր և ինչ-ինչ խոռվահույզ շարժմունք կապացուցանեն, թե գոցե օտար թելապրմանց անսարք՝ հայրենասիրական պարտավորությանց հակառակ գործող անհատը ոմանք կգտնվին հայ ժողովրդյան մեջ, որ որևէ կերպի պետք չէ երթեք տածե օսմանյան դարավոր պետության միության և ամբողջության ներիակ ձգտումներ:

Թե այս անհատը փոքր թիվ մը կկազմեն կամ թե իրենց անպատեն արարք անել կմնան՝ տարբերություն շրներ. ամոք կա և կմնա հայ ժողովրդյան համար և անշուշտ խորին վիշտ կպատճառե մեր հայրենասիրության և հավատարմության¹: Կացուրյունը նկարագրելով ըստ հաստատյալ իրողությանց, կիուսայինք անկեղծապես թե յաշս ուշիմ հայ ժողովրդյան ևս առավել խոտելի պիտի բվելին այդ արարք և շարժմունք: «Միզան» չի կրնար ընդունիլ, որ յուր ընթացք թյուր մեկնվի, կամ յուր արտահայտած տեսությունը պարզապես սխալ կարծիք մը համարվին հայ լրագրաց կողմէն. «Ինչպես հասպա, Պայրամին առաջին օրը, երբ՝ ընդհանուր թերկրության մեջտեղ՝ Տերության ավագանին և աստիճանավորք կիությաին յոտս զահոյից նորին օգոստափառ վեհափառության իրենց ծառայական խորին մեծարանքը մասուցանելու, ճիշտ այն պատկառելի և մեծավայելու արարողության միջոցին, հայ ժողովուրդը

¹ Յոր նախորդ հոդվածով մեր հոգևոր պաշտոնակից կիաստառե, թե ազգին ամբողջությունը պատասխանատու չի կրնար բոնվիլ յուր անդամոց ոմանց ծայրահետաքրթերուն համար:

Գում-Գափովի խոռվահոյց արկածն հառաջ թերելով և այն պաշտոնական սրբազն արարողության բարեկարգությանը խանգարելով. միքե յուր մահմետական հայրենակցաց գոհության և շնորհակալության արժանացավ¹:

Արդյոք կվարձեն, թե այս բաները դատելու չափ մտավոր կարողություն և զգալու չափ սիրու չկա ի մեզ և թե իրենց ամեն ուտնագությանց աչք գոցելու հարկադրված ենք: Ամեն պարագայի մեջ ակներեւ է, թե մեր պաշտոնակցաց կողմն թիշ մը ավելի անկեղծություն ակնկալելու իրավունք ունինք:

Սեր կետ նպատակին է, թե Տերության պաշտոնական գործառնության մեջ «օսմանցի» փառավոր անվամբ հորջորջյալ ամեն հասարակության միջև «Սեր» և «Դուք» խորողական բացատրությանց գործածնան տեղի չմնա: Օսմ. Կայս, կառավարությունն այս մասին ինքնահոժար կարգ մը գոհողություններ ընելով, խնդիրը տեսականորեն կարգադրած է: Մնացյալն ոչ թե կառավարության ջանքերեն, այլ ժամանակին օգնութենան կակնկալի, կամ բաղարային բարեկարգությանց տակավ արդյունավորումն, և ինչ-ինչ հասարակությանց ինքնարուխ աջակցութենեն, որպեսզի այս բաղարային բարենորոգմունք օր առաջ ընծայե ակնկալյալ պտուղներ:

Լրագիր մը կզբն, թե «Հայր օսմ. Տերութենեն բաժնի շեն ուզեր, այլ միայն Հայոց պլատի, կենաց և ընչից ապահովություն կպահանջեն»:

Այս բանիս ամենեն ավել փափազող մեր օգոստոսափառ վեհապետն ինքն է: Ապահովության արդի չափն անբավական համարելով, կայս. կառավարաքայլը՝ զայն կատարելագործելու համար՝ չի կասիր նոր կազմակերպություններ, հաստատություններ և տնօրինություններ ի կիր առնեն: Այդ ապահովության չափն յաշ Կայսերական կառավարության փափաքյալ աստիճանին հասնի թե ոչ, ճշմարտություն մը կա, որ հերքում չի վերցներ. այսինքն՝ Ն. Կ. Վեհափառության հայ հպատա-

¹ «Միզան» ահոելի հակասության մեջ է: Թիշ մը վերը կրուեր, թե խոռվահոյցը բանի մը անհատը են, ինչպես Պաշտոնական հայտարարութենեն ալ երեցավ. մինչ հոս այս ժամանակին հարձակողական պարբերության մեջ՝ բռվանդակ հայ ժողովուրդն դուրյունը:

կաց պատիվը, կյանքն և ինչըն ամեն պարագայից մեջ թուրքաց, Քրդաց և Արարաց պատփյոն, կյանքին և ինչքին չափ և թերեւ ավելի պաշտպանություն և ապահովություն կվայելեն արդեն: Չայս դյուրին էր ապացուցանել, եթե առտնին բարեկեցության և հանրային հարստության մասնակցության վիճակագրական ցուցակը պատրաստված լինեին: Ուրեմն փոխանակ ըսելու, «այն ինչ ազգին կենաց պատվու և ինչից ապահովություն», ինչու չըսի «առեղական ժողովրդյան կենաց, պատվու և ընչից ապահովություն»¹: Այս բանիս իրեւ արգելք սա միայն կա, թե հպատակությանց ոճանց անհատներու մեջ անկեղծության և փոխառության գումարություն մը կնշանակ դեռևս:

«Միզան», ևս քան զևս բացահայտելոյ պետք զգալով, հետևյալ կերպով իրեւ անպատեհեն կիշակակի բաժանողական ձգումներն, որոնց գոյությունը կկարծե նշանակ հայ ազգին մեջ: Տերությունն սկզբամբ ոչ մեկ ժողովուրդ առանձնաշնորհյալ նկատելով, ամենուն նկատմամբ հավասարապես արդարություն և պաշտպանություն ի գործ կգնեն: Մանավանդ հայ ազգն այլու մասնավոր իրավունք մը շտմի օսմ. Տերության վրա:

Ենթադրենք, թե բանն այսպես չինի: Ենթադրենք, թե Հայր պատճառներ ունենան օսմ. Տերութենին բաժնվելու համար աշխատելու: Բայց լարձյալ խոհեմություն չեմ կրնար համարել այդպիսի ընթացքի մը հետևիլ: Եվ այս 2 պատճառով: Նախ Հայր, որ օսմ. Տերության ամեն կրողմեր ցրվյալ են, ոչ որեւ բնակչաց մեծամասնություն կազմած են²:

Եվ երկրորդ, Եվրոպա օսմ. Տերության մեջ բաղարական շարժմաներն և սնուտի ակնկալություններն յանցելումն բաջակերելու համար այնքան դառնապես զգացած է, թեև ուշ-որ՝ շնորհիվ օգոստոսափառ Վեհապետին՝ Եվրոպա այլու այնպիսի ոտնագություններ ընելու փափագ չի տածեր բնալ:

¹ Հայ լրագրաց մեջ չգրվեցավ այնպիսի դիտողություն մը, թե «Կենաց, պատվու և ընչից» ապահովություն հայոց համար միայն պետք են:

² Ուրեմն եթե մեծամասնություն կազմենին, կամ կազմել կարծենին, ներելի պիտի լինե՞ր իրենց այս տեսակ բաժանողական խորհուրդներ տածեն: Չարմանալի է, որ լինե՞ր իրենց այս տեսակ բաժանողական խորհուրդներ տածեն: Այս պատճենը (ծանորագրությունները «Արեւելք» խմբագրի):

Ուստի, մինչև իսկ եքեն օսմ. Տերության վարչության մեջ կենան պատճառներ, որը այն Տերութենեն բաժնվելու շարժման իրավունք տան, դարձյալ հարկ անհրաժեշտ է ջանալ այն պատճառներ բառնալու անկեղծ և զգուշավոր գործողությամբ: Բայց երբ գիտենք, թե՝ շնորհիվ կայսերական ջանից և հոգածորյանց, այնպիսի պատճառներ չեն մնացած, ո՞չ ապարեն բնական է խորին ցավ զգալ, եքեն օսմ. Տերութենեն բաժնվելու ծզտմունք և շարժմունք տակավին շարունակեն:

Արեւը, 10. VIII. 1890 (23 օգոստոսի, № 1971)

№ 4

«ՄԻԶԱՆ», «ԹԵՐՃԻՄԱՆԸ ՀԱԳԻԳԱՅ» ԵՎ ԻՐԵՆՑ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆԸ

«Միզան»-ի դափնիք անքուն բողեր էին զ «Թերճիմանը հագիգար», որ չուզեր զրկել զմեզ այս նոր անոր լույսերն, զրու ինք ուներ ի պահեստի, ի բացարություն Մայր Եկեղեցվու ցավալի դեպքին, որու ելք՝ յորն հայերու և 2 հոյներու դատապարտությունը Չինվորական Ատենեն, արդեն ծանոք է մեր ընթերցողաց:

Փուրանք հաստատել, թե մեր այս հարզու պաշտոնակից «Թերճիմանը հագիգար» «Միզան»-ի օրինակին կիետնի Հայոց վրա գրելով միայն, և ոչ թե իրավցնելով «Միզան»-ի տեսությունները: Չա՞րժեր միիր բոլոր պաշտոնակցաց այս զանազան կարծիքները ծանոքացնել մեր ընթերցողաց այնպիսի խնդրու մը վրա, որ ուղղապես կվերաբերի մեզ, մինչև իսկ թեև հարկադրյալ լինինք կրկնել թե մեր մասին՝ այսպիսի խնդրոց վրա վիճաբանություն անպատեն է: Պատեհութենեն ավելի, խոհեմության հակառակ է գուցել:

Եվրոպյան լրագիրը ոմանք ծանուցած էին թե Հայոց դատն իիմնավոր նկատվելով, Ռուսիա և Անգլիա համաձայնած են Բ. Դրան ընդունել տալու հայոց պահանջումներն: Ուրիշ լրագրեր անմիջապես հերթեցին

այս լուր, ինչպես մեր ևս հաղորդեցինք Փարիզի լրազրո մը մեջ (Վոլքեն) երեցած հերքումը: «Թերճ. հագիգար» առանց այս հերքման ալ այդ լուր անհիմն կնկատե, որովհետև, կրսէ, Ռուսիս որիշ քրիստոնյա ազգություններ պաշտպանելով ինտո այնքան զղացած է, որ Հայոց վրա նոր վորձ մը բնելու չի կրնար հրապուրվիլ: «Բայց ո՞յլ և ի՞նչ նպատակով կիերյուրեն այս սուտը: Անոնք շահակից կառավարությանց ուշադրությունը գրավելու նպատակով չեն գրծեր անշուշտ, ըստ որում կառավարությունը արդեն ուշադիր կգտնվին այս նորը խնդրոց: Այս սուտերը հերյուրողներուն բուն նպատակը միամիտ հայերը խարել է: Հայոց մեջ կարծիք մը գոյացնել կուզիլի թե՝ «Տեսեք, մեր խնդրույն համար այս երկու մեծ տերությունը, Ռուսիա և Անգլիա, ինչպիսի համաձայնության մը հանգել են: «Թերճիմանը հագիգար» թե պաշտոնապես և թե անպաշտոն լրազրաց միջոցով հաղորդեալ տեղեկությանց վրա հենրով համոզված է, թե Մայր Եկեղեցվու դեպքն ոմանք հարուցած են դրամական քաջալեր բնդունելով որոշյալ տեղերեւ և կիետնեցնեւ, թե Հայ ազգն այս դեպքին պատճառ ամորթապարտ կամ պատասխանառու չի կրնար բոնվիլ: «Հայ ժողովրդյան և օսմանյան հանրային մարմնոյն միջև կեցած հայրենակցական բարվոր հարաբերությունը այս դեպքին պատճառով պետք չէ խանգարին: Եվ ինչու խանգարին, քանի որ Պաշտոնական հայտարարութենեն ալ երեցավ, թե խոռվահույզը ինն իովի էին ևեր, որոց երկուքն հույն, Նիդրան և Եռովան: Հայուրավոր ներկայից մեջնեւ երբ ինն անձինք ևեր հանցապարտ կճանցվին և անոնց ալ երկուքն որիշ ազգության մը կպատկանին, ինչպես կարելի է այս պատճառով բովանդակ հայ հայ ժողովրդը զրկել մեր վստահութենեն ու համակրութեն են»:

Ակներեւ է «Միզան»-ի և «Թերճիմանը հագիգար»-ի կարծյաց հիմնական տարբերությունն այս խնդրոց վրա: «Միզան», մանավանդ այս երկրորդ հրաշակերտով, բովանդակ Հայ ժողովուրդը խոռվահույզ ոգու մը վարակեալ կցուցաներ, բովանդակ հայ ազգն ամորթապարտ և պատասխանառու կը ուներ Մայր Եկեղեցվու դեպքին համար, զոր այլև անհատից ոմանց գործ չէր համարեր: «Թերճիմանը հագիգար» այդ դեպքը միայն ինդվի գործ կնկատե, որը արդեն դրամ ընդուներ են իրենց այս հանդիպության համար և այս 9 իովլոց ալ երկուքը հույն զտնվելով, «Թերճիմանը հագիգար» անտեղի կիամարի բովանդակ հայ ազգը պա-

տասխանակու բռնկ յորի հոգի արարքին համար: Այս երկու տարքեր տեսակէտներ այլ և այլ տեսությամբ ուշագրավ են, «Թերճիմանը հազար» հետևյալ կերպի կեզրակացնե.

«Լրագրաց ոմանց մեջ այս խնդրոյն կարևորություն տալու համար իրատարակված հողվածներուն որոց կողմեն և քանի դրուշի տրված լինելը իմացված ստուգված է: Հեղինակներն իրենք ալ գիտեն, թե Եվրոպա այս իրատարակութեններն չի խարիլո: Ուրեմն իրենց նպատակն հայրը խարել է միայն, եթի կշարունակեն այն իրատարակություններ: «Տեսեք մեզ համար որպիսի բաներ կգրվին»: Այս խարեւորյամբ խեղմերը պատժական խառությանց ենրարկել տալ կուզվի: Այս ճշմարտության առջև պետք է բացվին Հայոց աշքերն և 8–900 տարիների հետեւ, այսինքն՝ Օսմ. Տերության կազմութենին առաջ արդեն հայրենակից գտնվող և խաղաղապես ասլող այս երկու ժողովուրդը (Հայր և Օսմանիիր), որ երբեք իրարու չեն վնասած, պետք է անվրար պահեն և շարունակեն իրենց միասիրու և միարան հայրենակցությունը»:

Արևելք, 16. VIII. 1890 (28 օգոստոսի, № 1975)

НИКОЛАЮ КАРЛОВИЧУ ГИРСУ ОТ НЕЛИДОВА БЕЮКДЕРЕ, 19/31 ИЮЛЯ 1890 Г.

Выдающимися являются кровавые беспорядки, происходившие в воскресение в Стамбуле, близ армяно-тригрианской патриархии в Кум-Капу. Сведения о беспорядках приведены были во дворец среди церемонии поздравлений по случаю праздника Курбан-Байрама. Султан был жестоко встревожен и испуган. Он хотел тотчас же прекратить торжество, но его уговорили довести его до конца. Для усмирения бунтовщиков послан был из дворца Дервиш Паша, которому и удалось восстановить порядок. Но этим дело не кончилось. Среди армян господствует жестокое возбуждение, поддерживаемое беспрестанными арестами и

преследованиями всех подозреваемых в принадлежности к предполагаемому революционному комитету, устроившему манифестацию против Патриарха. Существует ли здесь действительно подобный комитет, узнать трудно, но несомненно, что беспорядки вызваны возбуждением извне, преимущественно из Лондона, откуда центральный армянский комитет поддерживает брожение и раздувает неудовольствие среди армянского населения Турции, с целью поставить на очередь Армянский вопрос. Нельзя не подозревать, что этому действию сочувствует английское правительство, надеющееся тем вызвать усложнения на русско-турецкой границе и ослабить наши хорошие сношения с Портою. На это указывал и намек, сделанный мне на прощальной аудиенции Султаном распущеных в Константинополе слухах, будто армянское брожение вызвано нами. Нельзя не пожалеть, что со своей стороны турецкие власти безумною подозрительностью и бес tactным приложением мер строгости вызывают ненависть и враждебность армянского населения, очень значительного в столице и рассеянного по всей Турции.

Из этого легко могут произойти весьма опасные усложнения.

НЕЛИДОВ

Н. К. Гирс-министр иностранных дел России.
АВПР, ф. Политархив, д. 3441, л. 31–32.

Լրարեր հասարակական գիտությունների, 1990, № 8, էջ 67–79:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԵԶՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ ԵՎ ՄԵՆՔ ՊԵՌԼԻՆԻ ՄԵԶ ԿՈՐՈՆԵՆՔ ԶԱՅՆ (Գարեգին Սրբանձտյանցի ծննդյան 150-ամյակի առթիվ)

«Տան տղամարդը իր տան մշակն է, կըսէ առածը... Իբր մեր եկեղեցին և ազգի տան տղան և մշակ, այդի փորելու, քաղիան ընելու, արտ ջրելու, փլած պատերը շարելու, խառնակ ճամբաներ հարթելու, անալես բույսեր խառակելու, ցորեն հնձնելու, այսուր աղալու ծառայությանց մեջ գտնվեցա և տեղ տեղ զլուս կոտրեցին, կուրծքս պատառեցին, սիրտս ծակեցին, ինչպես բնական է պատահիլ արտ ու այդի մշակողներուն, կալ ջաղաց ունեցողներուն, մեր երկրներու սովորության համաձայն»:

Հայ քանահյուսության, քանազիտության ու ազգագրության մեծ երախտավոր Գարեգին Սրբանձտյանցի այլաբանական այդ խոսքերը լիովին բռուրագրում են իր ժամանակի ակտիվ հասարակական, մշակութային գործին, կրորու քաղաքացուն, ջերմ հայրենասերին, որն իրը Հայաստանեաց եկեղեցին և հայ ազգի տան տղան ու մշակ, առանց խնայելու իր կյանքն ու առողջությունը, նետիկեց կյանքի հորձանուտը խառնակ ու մրրկու ժամանակներում, իր ծիրքերն ու կարողություններն օգտագործեց ոչ քեզ մի բնագավառում, ուր կարող էր հասնել մեծ հաջողությունների, այլ «մշակի» նման ձեռնարկեց ազգային բոլոր անհրաժշտ գործերի կատարմանը՝ իր սրտի հրամանով ու պատրիարքարաբն հանձնարարությամբ՝ «այօր քարոզի, վաղը ժողովու մը անդամ, օր մը հեղինակ, օր մը նվիրակ, օր մը դաստիարակ, բնիչ, առաջնորդ, խաղաղաբար, ուղևոր, դաստավոր, վանահայր, տեղական վարչական ժողովու անդամ և այլն»:

Գարեգին Սրբանձտյանցը ծնվել է 1840-ին, Վանի Այգեստան քաղամասում, Սանդեց Ավետիսի քազմանեամ ընտանիքում: Սանուկ Օհանեար (դա նրա մկրտության անունն էր) սկզբնական կրությունն ստանում է Վանի Հայնկույսների վարժարանում, ապս հաճախում է տեղի նշանավոր մանկավարժներ Ավետիս Սահառունու և Քոլոզ Օհանեսի դպրոցը: 1857-ին նրա կյանքի նշանավոր դեպքերից էր Վարազա նորաբաց «Ժառանգավորաց» վարժարանի սան դասնալը: Այդ ժամանակ-

վանից նրա անունը միահյուսվեց վարժարանի տնօրեն Ակրտիչ Խրիմյանի անվանը: «Ժառանգավորացը» նորություն էր արևմտահայ կյանրում. լուսավոր դասասենյակներ, բարտեզ, գլորոս, քանգարան և մանավանդ ուսուցչավետը՝ Ակրտիչ Խրիմյանը, վաճրում հիմնադրած իր տպարանով, «Արծոի Վասպուրականի» ամսագրով, որն առաջին պարբերականն էր Արևմտյան Հայաստանի տարածքում: Ուսումնառության տարիներին պատահի Օհանեսի վրա խոր հետք է քողնում Եղիշեի պատմությունը և նա իրեն վերանվանում է այդ պատմության հերոսներից մեկի՝ Գարեգին Սրբանձտյանցի անունով: «Ժառանգավորաց»-ի առաջին սաները դաստիարակվում են ուսուցչի գաղափարական մքնությունում, ուսուցիչ, որն արբնության կոչ էր անում «Հայկա որդիներին», ներշնչելով երիտասարդ սերնդին «վերանորոգել խախտյալ հիմունք հարյենյաց»: Սրբանձտյանցի ուսումնառության շրջանը համբնկում է «Արծոի Վասպուրականի» ամսագրի վարագյան շրջանի բուն գործունեությանը: Ամսագրի էջերը զարդարվում են «Փայր և Ճագ» արծիվների ստեղծագործություններով: «Դրանց մեջ առանձնապես ուշագրավ են Սրբանձտյանցի իրապարակախոսական հողվածները. սկզբում քարոյախոսական բրուվանքներ, հետզհետև առնականանում է նրա գրիչը, լույս են տեսնում «Շիրիմք Նախնյաց», «Հայրենասիրություն և հայրենիք», ապա «Սկսենք մեր գործ, նորեն սկսենք», ուր 22-ամյա հեղինակը Զեյրոնի ապստամբության պարտությունից հետո խրախուս էր կարդում հայ երիտասարդությանը՝ շրնկվել, շխտահատվել, անընդհատ պատրիաստվել գալիք մարտերին, անսայման հաղթելու վճռականությամբ. «Կտիսէ ու կոլալիք, զարկ ու զարկվիք, ինկար՝ վեր կանգնիք, անշուշտ կիաղբես, մեռնիս էլ կիաղբես, վասնզի նոր ես ու լուսավոր ես...»: «Արծոի» էջերում լոյս է տեսնում նաև «Շինական հայոց կյանք ի Հայաստան» (քշված նկարագրություն) մեծածավալ հողվածը, ուր հեղինակը տալիս է հայ զյուղացիաթյան կյած ծանր գրկանքների ու տառապանքների իրական պատկերը. վերջին հողակտորից գրկված հայ զյուղացու պանդստության մեկնելը, մերկացնում հայ վաշխառութերի, բորդ ցեղապետների հարստահարությունները:

1860 թ.-ին Սրբանձտյանցն ավարտում է «Ժառանգավորաց»-ը ու մնում վարժարանում իրը ուսուցիչ, նաև «Արծոի Վասպուրականի»

փոխսմբագիր ու գլխավոր աշխատակից: Չկար մի համար, որտեղ շտպվեր Սրբանաւոր կամ հոդվածը, կամ նկարագրությունը, կամ որևէ քանաստեղծություն: Նույն բվին էլ նա ուղեկցում էր Խրիմյանին Արևելյան Հայաստան կատարած ճանապարհորդության ընթացքում, լինում արևելյան մշակութային կենտրոններ Թիֆլիսում, Երևանում, Էջմիածնում, ապա անցնում Ղարաբաղ, Շուշի, այնուհետև՝ Ազուլիս և Դավթեժի վրայով Վերադառնում Վան: Ճանապարհորդությունը, որն սկսվել էր 1860 թ. նոյեմբերին, ավարտվում է 1861 թ.-ի հուլիսին: Այդ մասին մանրամասն հոդված է գրում Սրբանաւոր Սպահանի «Անդամ»՝ «ՈՒղևորություն Սկրտիչ վարդապետի Խրիմյան ի Ռուսահայր» խորագրով, որը լույս է տեսնում 1862 թ.-ին: Այդ հոդվածում աշակերտը ևս ուսուցի նման անհաշտ Վերաբերմունք է ցուցաբերում ժամանակի բարձրաստիճան հայ հոգևորականության նկատմամբ, մերկացնում Էջմիածնի վեհարանում տիրող բարքերը, պաշտպանում ուսուցչին, ջատագովում նրա բարոգած գաղափարները:

1862 թ.-ին Սրբանաւոր Խրիմյանի հետ մեկնում է Տարոն: Ուսուցիչը Կ. Պոլսի պատրիարքարանի հանձնարարությամբ նշանակվում է Տարոնի հոգևոր առաջնորդ և Ս. Կարապետ վանքի վանահայր, իսկ աշակերտը զարկ է տալիս հայաշտ ու հարստահարված այդ գաղափարության գործին, Ս. Կարապետ ժառագավորաց վանքում բոր վարժարան, որի տնօրին ուսուցիչը դառնում է ինքը: Դարոցում գերիշխող աշխարհիկ ոգին էր, դասավանդումը կատարվում էր ժամանակի առաջադիմական մերութերով: Սրբանաւոր ուշադրությունից չեն վրիպում նաև Տարոնի գյուղերը: Նրա անմիջական նախաձեռնությամբ դպրոցներ են բացվում Մշո դաշտի, Վերին ու Ներքին Պուտանըների, Մանազկերտի, Վարդոյի գյուղերում: Վարդագից բերված փայտե տպագրական մերենայով Սրբանաւոր 1863 թ.-ին իրատարկում է Տարոնի առաջին պարբերականը՝ «Արծվիկ Տարոն» երկշարաբերը, որի վրա գրված էր՝ «Ժոռուցյալ թևոք Վասպորական Արծվոյն»: Այդ խոսքերով խմբագիրը հաստատում էր իր պատկանելությունը Վարագա դպրոցին, հավատարմությունը ուսուցչին և «Արծուի Վասպորական» դպավանաբներին: «Արծվիկ» հետ համեմատած «Արծվիկ» աշի ընկնում իր դեմոկրատական ուղղվածությամբ, հայի անցյալի

փառքի գովերգմանը փոխարինում էր պայքարը այլազգի և սեփական հարատակարիչների դեմ, մերկացնում բարձրաստիճան հոգևորական ների գործած պիղծ արարքները, որոնք կարողիկոսական զահ են բարձրանում իրենց նախորդի սպանության գնով (խոսքը վերաբերում է Աղթամարա Խաչատուր կարողիկոսին): Սրբանաւոր կանգնում է հայ աշխատավոր գյուղացու պաշտպանության դիրքերում, Կ. Պոլսի Ազգային վարչության ուղղած բողոքագրում բացահայտորեն նշում է. «Արտաքին ձեռք չէ զմեզ շարշարող մենք կտանօջինը մեր ձեռքեն, կշարշարվինք մեր ազգեն. իրենց փառաց համար զմեզ կզոհեն, իրենց շահուն համար զմեզ կվաճառեն»: Նման գործունեության համար հալածանք է սկսվում ուսուչի և աշակերտի դեմ: Գալապի աղայական վերնախավը միացած տեղական բուրք պաշտոնեության հետ 1864 թ.-ին ժամանակավորապես վակել են տալիս և թերքը, և վարժարանը: Արդարանալով պատրիարքարանում, Սրբանաւոր Սկրտիչ վերսկսում են իրենց հայրենապիրական առաքելությունը: Վերաբացված թերքը հաճախ է դիմում եզովպոսյան միջոցների, բայց չի օգնում: 46 համար լույս տեսնելուց հետո քաղաքականապես անբարեհույսի պիտակի տակ ընդմիշտ փակվում է երկշարաբերը, ժառանգավորաց վարժարանը, աշակերտները ցրվում են:

Սեծ գործ կատարեցին այդ երկու պարբերականները, որոնք 19-րդ դարի ընթացքում առաջինը և անկրկնելին եղան Արևմտյան Հայաստանի տարածքում: Նրանք շեփորակարեցին ազգային-ազատազրական գաղափարներ, արքանացը ազգային ինքնազիտակցության և արժանապատվության զգացումը Արևմտյան Հայաստանի 2 մեծ նահանգներ՝ Տարոնի և Վասպորականի հայության մեջ, և այդ գործում դժվար է գերազնահատել Սրբանաւոր կամացի ավանդը:

1867 թ.-ին Սրբանաւոր Վարդապետ է ձեռնադրված Կարինի հոգևոր առաջնորդ Հարություն արքեալիսկոպոս Վեհապետյանի կրողից: Ի՞նչ էր դրդում Սրբանաւոր Վարդապետը լընդումել կուսակրոնություն, եթե ինքը անընդհատ խարազանում էր հոգևորականների բացահայտական գծերը: Ըստ Սրբանաւոր Վարդապետի պետականությունից գործ հայ ժողովրդի համար եկեղեցին ազգապահապանան ամենակարևոր գործուներից մեկն էր: Նա գտնում էր, որ անհրաժեշտ է մաքրել եկեղեցին պլոտ ու ապաշնորի

հոգևորականներից, սնուցելու աճեցնել ազգանվեր և ժողովրդանվեր գործիչների նոր բոյլ, իրքև տիպար եկեղեցական նաև համարում էր իր ուսուցչին՝ Խրիմյանին, իսկ նրա վաճահայրության ներքո գտնվող Վարազա և Ս. Կարապետ վանքերը՝ խկապես տիպար վանքեր՝ ժառանգավորաց վարժարանով, քանօքարանով, ձեռագրատնով և գրադարանով։ ՈՒսուցչին հետևելու նպատակով էլ նաև ընդունեց կուսակրտնություն։ Հոգևորականի վեղարը նրա համար ոչ թե նպատակ էր, այլ միջոց։ Դա հնարավորություն կտար հանրային գործին անարգել շրջել գավառներում, ծավալել ժողովրդանվեր գործունեություն։ Վարդապետական կոչում ստացած Սրբանաւորացը մերժում էր վաճական նեղ ու անծովկ մթնոլորտը, ժողովրդից հեռու ճգնակյաց կյանքը։ Վարդապետական առաջին քարոզը Խրիմյանի խորհրդով նաև կարդում է հարազատ Վանում։ «Հասիր ի վերա ժամու և տարաժամու, շունչ ու հոգի տուր այդ մեռյալները, իուր եկի արկանել, ասա և կրակ տուր, գուցե հաջողվի թեզ խառնել Վաճա ծով, արքնացնել մեռյալ ժողովուրով»։ Նորբնծա վարդապետի քարոզները իրենց վրա են իրավիրում ժողովրդի ուշադրությունը։ 1869 թ.-ին Կարճու հայությունը Սրբանաւորացին պահում է Կարինում, նրան հաճանելով քաղաքի վարժարանների լիազոր տեսչի պաշտոնը։ Սրբանամակ նաև ստանձնում է ազգային պատմության դասերը, կիրակօրյա երեկոյան դպրոց է քացում մեծահասակների համար, դպրոցներում մոցնում դասավանդման նոր մեթոդներ և այդ հողի վրա հակառակության մեջ է մտնում Կարինի հոգևոր առաջնորդ Վեհապետյանի հետ։ Նույն 1869 թ.-ին Խրիմյանն ընտրվում է Կ. Պոլսի պատրիարքը։ Լայնանում է Սրբանաւորացի գործունեության ոլորտը, Վասպորական ու Տարոնը, այդ երկու հայաշատ վայրերը՝ նրա գործունեության ասպարեզը։ Նորբնտիր պատրիարքի կողմից նշանակվելով Ս. Կարապետ վանքի վաճահայրության փոխանորդ, նաև կազմակերպում և Բ. Դուռ ու հայոց պատրիարքարան է ուղարկում քողոքազրեր։ Կ. Պոլսի հայ լրազերը իրատարակում են նրա հոդվածները, որոնցում քննադատվում են Տարոնի քորք պաշտոնյանները, Մշո մեջլիսի անդամները, հայ վաշխառուները, ընչարադ ու կաշառակեր հոգևորականները։ Ալիքան գյուղի սրբադության, Հովհաննավանքի կողովում, Տարոնի գյուղերի հարատահարարությունների և կեղերումների Սրբանաւորացի նկարագ-

րություններն իրենց վրա են գամում ողջ արևմտահայության ուշադրությունը։ «Մշեցվոց վրա ընդիմանոր տեսուրյուն մը» Խորվածաշարը, որը լույս տեսավ Կ. Պոլսի հայատառ քորքերն անանդում առաջացրեց նոյնիսկ Բ. Դուռ պաշտոնյանների շրջանում։ Հողվածի լոյս բնածայնան սպատճառով լրագիրը կանգնեց դադարեցման փուանգի առաջ։ Թեև վարդապետ, սակայն Սրբանաւորացը անարգանքի սյունին է զամում քրիստոնեական՝ շարին չարով չիակառակվելու, համակերպության քարոզները, դրանց նաև հակադրում է «նահատակության հանդեսը», կոչ էր անում իր հայրենակիցներին «մահը աչք առնել և չը բոլով թշնամվոյն ովածն ընելու, այնինչ կը մեռնին և կը սպանվին ամեն ժամանակ շատերը, քայց զոր տեղը, ոչ իրենց կյանքը նշանակոր լինելով և ոչ իրենց մահը պատվավոր և արդյունավոր»։

Մի ամբողջ տասնամյակ Խրիմյանի հրահանգով Սրբանաւորացը գործում է Տարոնում և Վասպորականում։ Տարոնում՝ իրքև Մշո Ս. Կարապետ վանքի վաճահայրության փոխանորդ և Վասպորականում՝ իրքև սահմանադրության գործադրից՝ «ամառն ի Տարոն, ձմեռն ի Վասպորական»։

Սրբանաւորացի հրաժարականին ուսուցիչ պատրիարքը պատասխանում էր մերժումներով։ «Երե Հայրիկի ուխտին մեջ երկու հատ Գարեգինի վարդապետ լլլար, անշուշտ զծեզ ազատ կրողնեի, քայց միայն եք, պետք է տանիք ձեր առաքելության պաշտոնը մինչև աստված ուրիշ Գարեգինի մի հանե, կամ բուռիկ ծներ... Ուրիշ մեկը Ս. Կարապետ կապած է, մեկն ալ ի Վարագ. Մուշ և Վասպորական աշխարհ քո առաջադիմության ասպարեզ պետք է լինեն»։ Սրբանաւորացը դրսուրում է կազմակերպչական, վարչական գործչի ունակություններ։ Նրա միջնորդությամբ հաճախ պաշտոնանկ են արվում քորքական տեղական պաշտոնյաններ։ շրջահայության շնորհիվ նրան հաջողվում է պաշտպանել հայ առաջադեմ գործիչներին, որոնց շուրջ կառավարական պաշտոնյանները դաշտեր են նյութում։ Առաճանապես ուշադրության արժանի է Սրբանաւորացի գործունեությունը Վասպորականում 70-ականների սկզբին, եթե՛ պատրիարքարանի կողմից հանձնարարություն էր ստացել գործադրել ազգային սահմանադրությունը այդ հսկա տարածքում, պայ-

քար մղել այդ ժամանակվա Վասպուրականի հոգեոր առաջնորդ Պողոս Սելիքյանի դեմ, նրան պաշտոնանի անելու և հայաշատ կենտրոնը հայանուն այդ շեյխից ազատելու համար: Այդ պայքարը համահունչ էր մի տասնամյակ առաջ Մ. Նալբանդյանի և Հ. Սվաճյանի մղած պայքարին: Սրբանձտյանցը գլխավորում է պայքարի դեմոկրատական թիգը: Նրան հաջողվում է պատրիարք Խրիմյանի միջոցով հեռացնել Պողոսին Վանից: Պաշտոնանկ եղած Պողոսը դիմում է մատնության, Բ. Ռուսնք՝ ժամանակի պատրիարքին և նրա սանին ներկայացնելով իրքը պետական դավաճաններ: Դրանից բացի Սրբանձտյանցը գործուն մասնակցություն է ունենում Վանում իիմնված արևնտահայերի առաջին գաղտնի կազմակերպության աշխատանքներին: Ազատազրական նպատակներ հետապնդող այդ կազմակերպության՝ «Միության ի փրկություն» կոչի բնագիրը պահպում է Գ.Աթ-ի Սրբանձտյանցի ֆոնդում և նրա վրա եղած ուղղումները պատկանում են Սրբանձտյանցի գրքին: Ֆիզիկական բնաջնջման սպառնալիքից հուսահատ Վանի հայությունը ստեղծելով այդ գաղտնի կազմակերպությունը, կոչ էր անում. «Կամ պետք է մեռնել ու չտեսնել այս սարսափելի վիճակը, կամ վերակենդանություն ստանալ ի ծոց հայրենյաց...փրկության միջոց փնտրենք, ապա թե ոչ կորուստ մերձ է խապառ»: Կոչը մեծ արագությամբ տարածվեց Վանի շրջակա գյուղերում և այդ համայնքների ներկայացուցիչները դիմումներ ներկայացրին կազմակերպության մեջ ընդունվելու համար: Խրիմյանի գրած նամակից պարզ է դառնում, որ Սրբանձտյանցը պակասամիտ անձանց գործ էր համարում ոռուադավանությունը ընդունելով քուրքական լծից ազատազրկելով, դրենով որոնել այլ ուղիներ: Պողոս Սելիքյանը իմանալով Սրբանձտյանցի և Խրիմյանի՝ այդ կազմակերպության մեջ կատարած դերը, բարձրածայն աղաղակում էր, որ պատրիարքը և նրա սանը պետական դավաճաններ են և ցանկանում էր նրանց դատի տալ:

1873 թ.-ին Խրիմյանը երաժարական է տալիս պատրիարքությունից. համեմատաբար նեղանում է Սրբանձտյանցի հասարակական գործունեության ոլորտը: Այդ տարիները նա նվիրում է իր աշխատանքի արդյունքները երազարակ հանելուն: Սեկը մյուսի հետևից լոյս տեսած նրա ժողովածուները՝ «Գրոց-Քրոց», «Հնոց ու Նորոց», «Մանանա», «Համով-Հոտով», եղան հայ ազգազրության և ժողովրդազրության

առաջնեկները և զարմանարով ու հիացմոններով ընդունվեցին հայ մտավորականների կողմից: Այդ ժողովածուների մասին դրվագանքի հոլվածներ լոյս տեսան արևմտահայ և արևելահայ պարքերականներում, որոնց հեղինակներն էին Շաֆիկին, Ստ. Պալասանյանը, Սեղրակ Մանդինյանը, Քերովքի Պատկանյանը, Ակրտիչ Էմինը և որիշներ:

Սրբանձտյանց գործի, ուսուցի, երազարակազի, բանահավաքի և բանագետի համբավը դրւում էր եկել արևմտահայության շրջանակներից: Նրա հետ նամակագրական կապեր են հաստատում և սկսու հարաբերություններ պաշտպանում ժամանակի հայ մշակութային կենտրոնների բազմաթիվ ներկայացուցիչներ: Առանձնակի լայն գործունեություն ծավալեց Սրբանձտյանցը 1877–78 թթ. ուսու-քուրքական պատերազմի ավարտից հետո: Կ. Պոլսի պատրիարք Ներսէս Վարժապետյանի երահանգով նա երեք այլ վարդապետների հետ միասին մեկնեց Արևմտյան Հայաստանի գավառներ՝ կազմելու հայ բնակչության ճշգրիտ բվահամարը, վիճակագրելու երկիրը, վաճքերը, նրանցում պահպող ճնուազրերը, բարողերու ժողովրդին հաստատ մնալ հայրենի «շենից և ավերակաց» վրա: Նա հորդորում էր իր հայրենակիցներին ետ կանգնել գաղքելու մտրից, մնալ, պայքարել, հաղթել ու շենացնել մեր հայրերից ու պապերից ժառանգություն ստացած հայրենիքը: Միջազգային դիվանագիտության առարկա դարձած հայկական հարցի արմատական լուծումը նա կապում էր ոչ թե մեծ տերությունների բարի կամքի, այլ ժողովրդի ինքնօգության, նրա «կարող որդիների» ներկայության հետ: Նա կոչ էր անում համեմատաբար բարեկեցիկ կյանքով ապրող հայ զարդարաների ականավոր հայերին՝ թժիշկներին, իրավաբաններին, գրողներին, հսկուատներին, վերադառնալ Հայաստան և ընդհանուր ոժեղութ ձեռնամուխ լինել նրա վերաշինության մեծ գործին: «Հայաստանի մեջ է բոն հայկական խնդիրը և մենք Պեղլինի մեջ կորոններ գայն», - Սրբանձտյանցի այս հակիրճ խոսքերը հետազայտ դարձան կարգախոս և նշանաբան ժամանակի առաջադիմ գործիչների համար: Ինչքան այժմեական են հնչում այդ խոսքերը, եթք մի փոքր փոխելով դրանք, կարող ենք ասել. «Արցախի մեջն է բոն Արցախյան խնդիրը, իսկ մենք Կրեմլի մեջ կորոններ գայն», կոչ անել արցախցիներին վերալստնալ հայրենի եզերիքը, շենացնել և վերածնել պահպանել այն:

Երկրորդ անգամ Սրբանձտյանցը գալաքսիներ մեկնեց 1879 թ. ապրիլի 30-ին՝ Բ. Դուան Կողմից կոմիսեր նշանակված Արելին փաշայի հետ, իր հետ ունենալով քարենորդումների որոշակի ծրագիր, որոնք նա մտադիր էր գալաքսին հայ ժողովների անոնց ներկայացնել տեղական կառավարության մարմիններին։ Պատրիարքարանի կողմից նա հանձնարարություն էր ստացել հսկել քուրք կոմիսերի գործունեությունը, հարկ եղած դեպքում աջակցել նրան և պատրիարքարանին հղած տեղեկագրով հաղորդակից ամել հայ գալաքսի իրավան պատկերի հետ։ Ամեն մի գալաքսի Սրբանձտյանցը Կ. Պոլսի Ազգային վարչությանն է հղում այդ վայրում ծավալած գործունեության մանրամասն հաշվետվություն-տեղեկագիրը։ Մեծ հետաքրքրություն են ներկայացնում այդ վիճակագրություն-հաշվետվությունները, որ դրսերքում է հայրենասեր գործչի բացասական վերաբերմունքը քուրքական կենտրոնական և տեղական կառավարության մարմինների նկատմամբ։ Նա հայտարարում է, որ չսկիուր է հավատալ կառավարության խոստումներին և անհրականալի ցնորք են օսմանյան քարենորդումների ծրագրերը։ Միևնույն ժամանակ նա մերկացնում է օսմանյան կառավարության ազգային քաղաքականությունը, որի նպատակն էր իրար դեմ գրգռել փոքր ժողովուրդներին, մասնավորապես հայերին և քրդերին, այսինքն իրականացնում էր «քածանիր, որ տիրես» վաղեցական ասացվածքը։ Թվարկելով հատուկ չարագործ քուրք ցեղապետերի անմարդկային արարքները, Սրբանձտյանցը միաժամանակ իր համակրանքն էր արտահայտում խեղճ երկրագործ ռայա քրդերի նկատմամբ, նշելով որ նրանք հայերի նման հավասարապես զրկված և կեղերված են։ Այդ նկատառումով էլ նա քննադատում էր այն հոգևոր առաջնորդներին (մասնավորապես Տիգրանակերտի և Խարբերդի), որոնք ընդգծում էին հայ-քրդական հակասությունները, մերմելու փոխարեն։ Սրբանձտյանցը առաջ է քաշում հայ-քրդական համատեղ պայքարի անհրաժեշտության գաղափարները։ Այդ երկու շրջագայությունների արդյունքները Սրբանձտյանցն ամփոփեց երկատորոս «Թորոս աղքար ճամփորդ Հայաստանի» աշխատության մեջ, որը նորի, ուղեգրության, վերհուշի, վիճակագրության մի ինքնատիպ համաձուլվածք է։ Այդ աշխատությունը պատրիարքարանին ուղղած հաշվետվությունների միասին հավատի պատմական աղբյուրներ են։

Այսօր Արևմտյան Հայաստանի 19-րդ դարի երկրորդ կեսի պատմության հետազոտողը չի կարող շրջանցել Սրբանձտյանցի այդ աշխատությունները, որոնք հետնորդների համար հավերժ կենդանի են պահում կորույալ հայրենիքի աշխարհագրական, պատմաճարտարապետական, մշակուրային և հոգեկան անանց արժեքները։

80-ական թվականներին Սրբանձտյանցը առաջնորդական պաշտոններ է վարում նշանավոր հայկական գալաքսիներում՝ Ակնում, Վանում իրքի հոգևոր առաջնորդ, Խորխյանի փոխանորդ, Քաղեջում և Խարբերդում, ապա Տրապիզոնում։ Վանում նա գործուն մասնակցություն է ունենում դեմոկրատական և հետադեմ ուժերի պայքարին, հանդես գալով իրքի դեմոկրատների պարագրուի, այնուհետև իր ուժերն է ներդնում «Սև խաչ» գաղտնի կազմակերպության աշխատանքներին։ 1884 թ.-ին համար ընտրական պայքարուն նա հաղում է եպիսկոպոս Արիստակս Դերձակյանին և ընտրվում պոնտահայության հոգևոր առաջնորդ։ Ուստանանի արտարին քաղաքականության արխիվից հայտնաբերված մի փաստարդում, որը ուստական դիվանագիտական կորպուսի աշխատակցի գեկուցագիրն է, նշվում է, որ Գարեգին Սրբանձտյանցը մեծ համակրանք է վայելում հատկապես պոնտահայության չուներ, աղքատ ժողովովի շրջանում, իսկ Արիստակս Դերձակյանը հարուստ մեծատունների սիրելին է։ 1886 թ.-ին նա լինում է Լօժմիածնում, Վեհափակարողիկոսի կողմից օծվում է եպիսկոպոս։ 1887 թ.-ին Կ. Պոլսի Ազգային վարչությունը Սրբանձտյանցին ուղարկում է Տարոն՝ Ս. Կարապետ վանիքի վաճահայր, այդտեղ նա մնում է 8–9 ամիս։ Եռանդուն գործունեությունը իր վրա է հրավիրում օսմանյան կառավարության ուշադրությունը և նրա վրա սահմանվում է խիստ հսկողություն։ Կառավարության գործականները նրա վրա մատնազրեր են հղում Բ. Դուան։ 1887 թ.-ի վերջերին նա դարձյալ Տրապիզոնում է և իր աշխատանքի ընթացքում պաշտպանում է ժողովրդի շահերը, հովանավորում է Օրդուի գալաքսի վլուղացիական երույթները աշարի հարկահավաքների ապօրինությունների դեմ։ Գյուղացիների բանտարկությանը հետևում է հայ մատնիշի սև գործը։

Պոլսում և հանգիստ չի նատում Սրբանձտյանցը։ Նա բուռն մասնակցություն է ցուցաբերում տեղի հանրային կյանքին, ընտրվում է Ազ-

զային վարչության կրտսական ժողովի դերատեմայետ, սուրբ Երրորդության եկեղեցու քարոզիչ: Գում-Գափովի հայտնի ցույցից հետո, 1890 թ.-ին 4 հայրենասեր հոգևորականներ՝ Սկրտիչ Խրիմյանը, Մատքեռս Խզմիրյանը, Գրիգորիս Ալեարճյանը և Գարեգին Սրբանձույանցը մի քողոք են հղում Բ. Դուռը, պահանջելով պաշտոնանկ անել պատրիարք Խ. Աշրջյանին, բարեկավել գավառահայ ժողովրդի վիճակը, Պոլիս արտրված գավառական առաջնորդներին ևս ուղարկել գավառներ: Այդ հանդինության համար չորսն էլ պատմվում են: Երուսաղեմ է աքսորվում Սկրտիչ Խրիմյանը, Գարեգին Սրբանձույանցը այլևս չի ընտրվում կրտսական ժողովի անդամ, իսկ Խզմիրյանի և Ալեարճյանի ընտրությունը Բ. Դուռը չի վավերացնում: Կառավարությունն ավելի է խստացնում իր հսկողությունը Սրբանձույանցի նկատմամբ: Համախոհներից մեկին գրած նամակում Սրբանձույանցը նշում է, որ իր նամակները ենթարկվում են քննության՝ «զի մեր գործոց և գրվածոց վրա խիստ հսկողություններ կան»:

Անընդհատ ճանապարհորդությունները Արևմտյան Հայաստանի դժվար երթենկության պայմաններում, ամառվա տապին և ձմռան սառնամնիքին, ուղրով կամ ջորո կրնակին խիստ վատրարացել էին նրա առողջությունը: 52 տարեկան հասակում նա անբուժելի հիվանդ էր շարարախտով, աղիների և երիկամների բորբոքումով: Դրան միացած հոգեկան ծանր ապրումները, հայրենի եզերքից կտրվածությունը, հարազատ ժողովրդի ծանր կացությունը կատարում են իրենց ավերիչ գործը: 1892 թ.-ի նոյեմբերի 18-ին Կ. Պոլսի Ա. Փրկչի հիվանդանոցում մեռնում է Գարեգին Սրբանձույանցը, Խրիմյանի արտահայտությամբ՝ «արծվո ընտրելագույն ճետը»: Նա քաղվում է Պոլսի Շիշլիի գերեզմանատանը: Իր վարած գուսակ ու խնայող կյանքի ընթացքում նա վաստակել էր 1000 օսմանյան ոսկի: Ողջ կյանքում տիպար ճարդը, ուսուցիչը, գործիչը, պարկեշտ եկեղեցականը մահով և կտակով անգամ դաս է տալիս ապրումներին: Այդ հազար ոսկին օգտագործել երկու նպատակով. առաջինը՝ տապանաքար դնել Զադար Ա. Նշան վանրում ամփոփված «անտապան, անարձան, անհիշտակագիր խնկելի Եղիշեի շիրիմին», երկրորդը՝ Վանում որբերի համար քացել արհեստագործական ուսումնարան: Սակայն դրանցից ոչ մեկը չիրականացավ: Թուրքական կառավարութ-

յունը գրավեց հայերի այն բոլոր ավանդները, որոնք գտնվում էին օսմանյան բանկում... Սևակ նրա հիշատակը և գործը հարգողներիս համար բաղձակի կլիներ, որ մեր ափեցափ վորքիկ Հայաստանում բարձրանար մի սրբատաշ քար, որը խորհրդանշեր նրա ոչ թե մահը, այլ անմահությունը:

Հայաստան օրաբերք, 12 դեկտեմբերի, 1990:

ՅԱՐԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պետականությունից գորկ հայ ժողովրդի համար եկեղեցին դարերով կատարել է նաև պետականության դեր: Այդ իմաստով մեծ դեր է խաղացել Ամենայն հայոց կարողիկոսությունը իրեն հայահավաքման, ազգային միավորման և հայապահպանման կարևոր գործոն: 1828-ին Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միանալուց հետո, Եշմիածնում գտնվող Ամենայն հայոց կարողիկոսությունը ևս անցավ ռուսական տիրապետության ներքը: Ցարական արքունիքի վարած գաղութային քաղաքանությունն անհարիք էր հայ եկեղեցու ունեցած համեմատական ազատությանը: Եկեղեցուն համազգային հեղինակությունից գրկերու, գործունեության ոլորտները սահմանափակվելու և վերահսկելու նպատակով, ցարական կառավարությունը 1836 թ. իրատարակեց մի կանոնադրություն՝ «Պոլոժենիա», որով պետք է առաջնորդվեր հայ եկեղեցին ուսական կայսրության տարածքում: Ըստ «Պոլոժենիայի» հովվապեսը՝ հայոց կարողիկոսը, որին պետք է ընտրեր աշխարհիկ և հոգևոր պատգամավորներից կազմված ժողովը, կարող էր հաստատվել միայն ցարի կողմից: Այդ նպատակով առաջարկվելու էին երկու կարողիկոսական թեկնածուներ, որոնցից մեկին՝ քաղաքական առումով նպատակահարմարին, նախապատվություն էր տարու ցարը: «Պոլոժենիան» դժգոհությանը ընդունվեց հայ ժողովրդի կողմից, իրավամբ գնահատվելով իրենց յամբ ընդունվեց հայ ժողովրդի հայոց կարողիկոսը՝ կառավարությունը ստուգությունում պահպան էր առաջարկվելու համար:

ազգային իրավունքները սահմանափակող մի կանոնադրություն: 19-րդ դարի կեսերից սկսած հայոց հայրապետները աննահանջ պայքար մղեցին հայ եկեղեցու իրավունքները վերականգնելու ուղղությամբ: Ներսէս Աշտարակեցի, Մաքենա Ա. Կոստանդնուպոլսեցի, Գևորգ Դ. Կոստանդնուպոլսեցի կարողիկոսները չնայած ընտրվում են ցարական արքունիքի հաճուրյամբ, սակայն գործադրում են իրենց բոլոր ջանքերը հայ եկեղեցուն խորք օրենքներից, ցարական «հովանավորությունից» ազատելու և իր ավանդական դերին վերադարձնելու համար: Ներսէս Աշտարեկեցու հետո մի համառ հետևողականությամբ հայ ժողովուրդը կարողիկոս է ընտրում միայն արևմտահայերից: Ցարական կառավարությունը Գևորգ Դ-ի մահից հետո (1882 թ.) փորձեր է անում ստիպել հայ ժողովուրդին կարողիկոսական թեկնածու առաջադրել արևելահայ եկեղեցական գործիչներից: 1882–1884 թթ. ընթացքում հայ ժողովուրդի բոլոր խավերը գրադադար էին կարողիկոսական ընտրություններով: Հայ հասարակական գործիչների համար կարողիկոսի ընտրությունը ստու եկեղեցական, հոգևորական ոլորտին պատկանող հարց չէր: Հայոց հովապետի ընտրությունը ամենից առաջ հայ եկեղեցու և հայ ազգի քաղաքական, հասարակական-մշակութային ինքնուրույնության հարցն էր: Այդ պատճառով արևելահայ և արևմտահայ գործիչները միահանուն ջանքեր էին քափում վեհափառի քափուր գահի վրա տեսնել դարձյալ արևմտահայ արժանավոր մի հոգևորականի, որի ցարահպատակ չինելու հանգամանքը կապահովեր հայ եկեղեցու համեմատական ազատությունը ցարական կառավարության մեծ ու փոքր աստիճանավորների ուսնագործուներից: Այսպիսով, Կարողիկոսական ընտրության խնդիրը դառնում էր հայ ազգային ազատագրական շարժումների յուրատեսակ մի դրսևորում: Այդ պատճառով է ողջ արևելահայ մամուլը լայն քննարկման ու քանավեճի առարկա է դարձնում կարողիկոսական ընտրություններին վերաբերող քաղմարիկ հարցեր: Ցարական արքունիքում ևս այդ հարցը քննարկվում է մի քանի անգամ: Թե ինչ մեծ նշանակություն էր տալիս ցարական կառավարությունը կարողիկոսական ընտրություններին և ընդհանրապես Ամենայն հայոց կարողիկոսությանը իր ներքին ու արտարին քաղաքանության հետ կապված մի շարք խնդիրներում, պարզում են Արտա-

րին գործող նախարարությանը կից Ռուսաստանի Արտարին Քաղաքականության արխիվում պահպող քաղմարիկ նորահայտ փաստարդքեր:

Գևորգ 4-րդի մահից հետո, 1883 թ. մարտի 13-ին Ներքին Գործերի նախարար Դիմիտրի Տոլստոյի նախագահությամբ Պետերբուրգում հրավիրվում է հասուն խորիրակացություն, որին մասնակցում էին Արտարին գործերի նախարար Նիկոլայ Գիրսը, ժողովրդական լուսավորության նախարար Իվան Դելյանովը, Կովկասի քաղաքացիական մասնիկ կառավարչապես Ալեքսանդր Դոնդուկով-Կորսակովը և Ասիական դեպարտամենտի պետ Իվան Զինովևը: Խորիրակացությունը նվիրված էր հայոց կարողիկոսի ընտրության հարցերին: Այն իրավիրվել էր իմբը ունենալով պետական քարտուղար քարոն Նիկոլաևի գաղտնի գրայունը, որով առաջարկվում էր որոշակի դարձնել ուսական կառավարության քաղաքականությունը հայոց կարողիկոսի ընտրության նկատմամբ: Ներկաների խնդիրն էր վճռել երկու կարևոր հարց: առաջինը՝ կարողիկոսական թեկնածուին արևմտահայերից առաջադրելու նպատակահարմարությունը և երկրորդ՝ համապատասխան միջոցառումներ մշակել ընտրությանը մասնակցող թեմերի և արևմտահայ պատգամավորների թիվը նվազեցնելու համար: Խորիրակացության մասնակիցները պարտադիր կարգով հայտնում են իրենց տեսակետները երկու հարցի վերաբերյալ: Փաստարդում կարդում ենք. «Արտարին գործերի նախարարը հայտարարեց, որ Կովկասի նախկին փոխարքա իշխան Բարյատինսկու կարծիքը քորքահպատակ անձնավորությանը կարողիկոսի կոչում շնորհելու նպատակահարմարության մասին, չնայած իր համարձակությանը, արժանացել է նախարարության համաձայնությանը: Նախարարությունը հույս ունի, որ այդ ուղիով կտարածվի Էջմիածնի գահի ազդեցությունը բուրքական կայսերության բոլոր հայերի վրա, կամրանա կարողիկոսի խսխտված հեղինակությունը, դրա հետ մեկտեղ կուժենդանա ուսական ազդեցությունը «Արևելքում»: Ցավոք, կառավարության հետապնդած նպատակը լիովին չի իրագործվել վերջին կարողիկոսների գործելակերպի հետևանքով, նաև այն պատճառով, որ կարողիկոսի քաղաքական նշանակությունը հետզին էր տեղը զիջեց Կ. Պոլսի պատրիարքին և տեղի ազգային ժողովին: Դեռևս վերջնականապես չհաստատված ցուցակում այժմ վճռել, թե ում պետք է տալ նախապատվոր-

յունը՝ ոռոսահայտակ թե քուրքահայտակ հոգեորականին, խիստ դժվար է, որովհետև եկեղեցու ապազա հովհապետի անձնական հասկություններն ու քննավորությունը կունենան ավելի վճռորոշ նշանակություն, քան հպատակությունը։ Պետական քարտուղար Գիլյար սկզբունքուն չի պնդում քուրքահայտակ թեկնածուին ոռոսահայտակից գերադասելու վրա, չնայած չի կարող չնշել այն հանգամանքը, որ Էջմիածնի գահի հավակնորդը ոռոսահայտակով փոխարինելով, նրա ազդեցությունը Կ. Պոլսի հայ համայնքի վրա հավանաբար կղառնա խիստ անհան և այդ անձնավորությունը չի օգտվի արտասահմանյան ազդեցիկ հայերի աջակցությունից, որոնք կասկածամտորնեն են վերաբերում այն հոգեոր հայերին, որոնք իրենց միջավայրից չեն։

Կովկասի քաղաքացիական մասի կառավարչապետը մատնանշելով կովկասյան վարչության մշտական ընդհարումները վերջին երկու կարողիկոսների հետ և Գևորգ Դ-ի քննական գործելակերպը Ռուսաստանի նկատմամբ, արտահայտեց այն կարծիքը, որ արտասահմանյան հայերի նկատմամբ քացահայտ հովհանավորության սկզբունքը ի վեհաս սեփական հպատակներին, մշտական գիշումները Կ. Պոլսի Ագային ժողովին, դուրս եկան քացառապես ոչ հիմնավոր։ Հանգամանքների բերումով մինչև վերջին ժամանակներս կարողիկոսները իրենց գլխավոր ուշադրությունը դարձնում էին ոչ թե հոգեոր, այլ քաղաքական գործերի վրա, ենթարկվելով Կ. Պոլսի ամենազօր ազդեցությանը։ Այդ քաղաքի հայ համայնքը պատրիարքի գլխավորությամբ և նախկինում, և այժմ քննամարար և տրամադրված Ռուսաստանի նկատմամբ, ենտապնելով ազգային շահեր և ծգտելով ապագայում հասնել լիակատար ինքնավարության։ Գիտակցելով, որ անհնար է օգտվել մեր կառավարության աջակցությունից, Կ. Պոլսի հայ հասարակությունը ամբողջովին ենթարկվել է Արևմտյան տերությունների, առավելապես Անգլիայի ազդեցությանը, որի գործունեությունը քուրքական նահանգներում անկանած կուտեղանա մոտ ժամանակներում, եզիւդութական հարցի լուծումից հետո։ Իրերի այս վիճակում ոչ մի գիշում չի կարող մեր կողմը գրավել Կ. Պոլսի հայերին և քուրքական գլխավոր քաղաքների հայ հասարակություններին։ Գեներալ-ադյուտանտ իշխան Դոնդոկով-Կորսակովի կարծիքով թվում էր ավելի ցանկալի մեկրնդիշտ հրաժարվել անհրա-

գործելի խնդրից, կենտրոնացնել ողջ ուշադրությունը մեր հպատակ հայերի հոգեոր գործերը լավագույն վարելու և մեր ազդեցության ամուր հաստատման վրա այն քուրքահայերի շրջանում, որոնք սերտ շաղկապահ են մեզ հետ հարեւանությամբ և նյութական շահերի ընդհանրությամբ, հատկապես մեզ սահմանակից քուրքական մարզերի հայ քնակիշների վրա։ Այդ պատճառով իշխան Դոնդոկով-Կորսակովը արտահայտվելով ոռոսահայ թեկնածուի օգտին, համաձայն է արտարին գործերի նախարարի կարծիքին՝ զիսավոր ուշադրությունը դարձնելով ապազան թեկնածուի անձնական հատկանիշների և քննավորության վրա, ավելորդ նշանակություն շտարով նրա ծագմանը, նուահոգվել այն բանով, որ նախատեսված անձնավորությունը չգտնվի քացառապես Կ. Պոլսի հայերի ազդեցության տակ և չինտապնի որևէ քաղաքական նպատակ, այլ կենտրոնացնի ողջ ուշադրությունը իր հոտի հոգեոր կարիքները քավարարելու համար։

Գաղտնի խորիդական Զինովել՝ Ասխական դեպարտամենտի պետը, գտնում է որ ավելորդ է պնդել քուրքահայտակ թեկնածուի ընտրության վրա։ Մեր ազդեցությունը կարողիկոսի վրա պայմանավորված պետք է լինի քացառապես այն շահերով, որոնք մեր կառավարությունը կարող է ընձեռնել նրան։ Դրա համար անհրաժեշտ է ընդունել այնպիսի գործելակերպ, որի դեպքում կարողիկոսը ստիպված կլիներ սեփական օգուտի համար հենվել քացառապես Ռուսաստանի վրա և նրա աջակցության մեջ տեսնել իր իշխանության գլխավոր հիմնավորումը։

Ժողովրդական լուսավորության նախարարը արտահայտվեց ուսահպատակ թեկնածուին նախապատվություն տալու օգտին։ Պետական քարտուղար Դեյանովի կարծիքով վերջին կարողիկոսների շատ գործություններ քացարդվում են իրենց այն հանգամանքով, որ այդ անձնավորությունները ծնված և դաստիարակված լինելով Թուրքիայում, ի վիճակի չին հասկանալու մեր կառավարության արդարացի պահանջները և մշտական փորձում էին կիրառել մեր մոտ քննապետական այնպիսի հնարաններ, որին նրանք սովորել էին իրենց նախկին հայրենիքում։ Այդ պատճառով էլ նրանք չին կարող մեր իշխանության նկատմամբ տածել այն հարգանքը, որ իրավացիորեն պահանջում էր քարեխնամ կառավարությունը։ Այս անհարմարությունները և այստեղից բխող

բյուրիմացությունները կվերանան ինքնաբերաբար, երբ կարողիկոսի կոչումը կշնորհվի Ռուսաստանում դաստիարակված անձնափորտյան, որը ծանոթ է քաղաքակիրք պետության պահանջմունքներին և սովոր՝ հնագաղղվել իշխանության նախադրույթներին։ Դրա հետ միասին հարկ է հուսալ, որ ռուսահպատակը բուրքահպատակից առավել պակաս կծագուի ազգային ինքնավարության անիրականանալի գաղափարներին։

Քննարկելով վերոշարադրյալ տեսակետները, խորհրդակցությունն ընդունեց հետևյալ որոշումը. «Հրաժարվել ապագայում կարողիկոսության հավակնող բուրքահպատակ անձնափորտյանը ընտրելուց, նախապատվությունը տալ ռուսահպատակին, դրա հետ միասին գլխավոր ուշադրությունը դարձնել ոչ քե ծագման, այլ թեկնածուի անձնական հատկանիշների վրա»¹։

Խորհրդակցության բննարկման երկրորդ կարգը վերաբերում էր արևմտահայության՝ կարողիկոսական ընտրություններին մասնակցելու ձևերին և պատգամավորների թվին։ Ցարական բարձր աստիճանավորների կարծիքով Արևմտյան Հայաստանից կարողիկոսական ընտրություններին մասնակցում էին ավելի մեծ քվով պատգամավորներ, քան ռուսահպատակ թեմերից։ Առանց հաշվի առնելու տարածքային տարբերությունները, Խորհրդակցությունը որոշում է խիստ սահմանափակել արևմտահայ պատգամավորների քանակը, իրահանգ և տալիս ժուրքիայի ռուսական դեսպանին, որ իր հյուպատոսների և գործակալների միջոցով հավաստի տեղեկություններ հավաքի արևմտահայ թեմների քանակի վերաբերյալ և բացառի առանձին խոշոր վաճքերի եախսկություն վանահայրերին պատգամավոր ընտրելու փաստը։ Վերոհիշյալ փաստաբերի կարևորությունն ընդգծվում է այն հանգամանքով, որ նրա բովանդակությանը ծանորանում և իր համաձայնությունն է արտահայտում Ռուսիայի ինքնակալ կայսրը։

Ժուրքիայի ռուսական դեսպանության աշխատակիցները գործի են անցնում։ Նրանք տեղեկություններ են հաղորդում իրենց բարձրաստիճան դեկանական արևմտահայության մեջ տիրող խմբումների,

¹ ՌԱ.ՌԱ. Հայկական գործեր ֆ., 1882–1883 թթ., գ. 124, էջ 82–90։ Թարգմանությունը իմ է – Ե. Կ.)։

կարողիկոսական թեկնածու տարբեր հոգևորականների նպատակահարմարության մասին։ Մեծ հետաքրքրություն է ներկայացնում Էրգրումի ռուսական գլխավոր հյուպատոս Ալեքսանդր Դեննետի գեկուցագիրը՝ նվիրված Էջմիածնի բափուր գահի տարբեր հավակնորդներին։ Թվարկելով հավանական այդ թեկնածուներին՝ Կ. Պոլսի նախկին պատրիարք Սկրոտիչ Խորիմյանի, Կ. Պոլսի ժամանակի պատրիարք Ներսես Վարժապետյանի, Զմյունիայի հոգևոր առաջնորդ Սելրիսնեկել Մուրադյանի, Էրգրումի նախկին հոգևոր առաջնորդ Հարուրյուն Վեհապետյանի, նախկոպոս Մատրևոս Իզմիրյանի և ուրիշների թեկնածությունները, ցարական աստիճանավորը պատասխանատվորյան մեծ զգացումով քննարկում է նրանց յուրաքանչյուրի անձնական և հասարակական հատկանիշները, ցոյց է տալիս ամեն մեկի դրական և բացատական կողմները, մասնավորապես նշելով, թե որքանով նրանք կարող են համընկնել ցարական կառավարության վարած քաղաքականության գծին։ Ահա մի հատված այդ փաստաբերից։

«Ժուրքիայի հայ բարձրաստիճան հոգևորական եկեղեցու բարձրաստիճան հոգևորականների մեջ Էջմիածնի գահի առավել նախապատվելի թեկնածուներ են համարվում հետևյալ անձնավորությունները. 1. Վանում ապրող Կ. Պոլսի նախկին պատրիարք Խորիմյան. այդ անձնավորությունը աշքի է ընկնում բարձր բարոյական հատկանիշներով, օժտված է խոսքի իիաքանչ ձիբռով, բայց լինելով հոգով բանատեղ, նա հեշտությամբ ենթարկվում է պոետական երապուրաներներին։ Պրակտիկ կյանքի որորում արքեպիսկոպոս Խորիմյանը, ինչպես և նման խառնվածքի անձնավորությունները, խիստ համեստ գործիչներ են։ Կ. Պոլսի պատրիարքության նրա կառավարման ժամանակ պատրիարքավայրական գործերը մեծապես քայլայվեցին։ Մեզ համար Խորիմյանը ընտրությունը ձեռնոտու չէ այն հանգամանքով, որ նման մտքի և խառնվածքի պատճառով նա հեշտությամբ կարող է երապուրվել և կանգնել ոչ մի քանի հետ չիաշտվող ընդդիմադիր ուժերի կողմը և իր կարծիքով արտար գործի համար պատրաստ է նույնիսկ մարտիրոսանալ։ Բնածին դյուրահավատության պատճառով Խորիմյանը կարող է գործիք դառնալ իր մերձակոր ճարպիկ ինտրիգաների ձեռքում։ 2. Սելրիսնեկել արքեպիսկոպոս Զմյունիայի գիտնական անձնավորություն, վար-

շական գործունեության քիչ ընդունակ՝ հակված չէ. Ուստաստանի կողմը: 3. Քարողությունն արքեպիսկոպոս Բրուսացի. նշանակալից հնարավորություններ ունի Ներսեսի պատրիարքությունից հեռանալուց հետո ընտրվել Կ. Պոլսի պատրիարք: Աչքի է ընկնում անզիացիներին նվիրածությամբ: 4. Մատրես Իզմիրյան. ապրում է Կ. Պոլսում, հայտնի է իր անհաջող քարով, նվիրված է ինտրիգներին, հետաքրքրվում է առավելապես իր սեփական շահերով: 5. Խորեն Նարապետ, արքեպիսկոպոս Պեշիկրաշի. աչքի է ընկնում գիտնականությամբ, գերազանց տիրապետում է մի քանի եվրոպական լեզուների, նշանավոր իրապարակախոս, բնավորության քարյալական շափանիշների անբավարար հատկություններով, խորամանկ է, նենգ և հպարտ: Ուստաստանի նկատմամբ տածում է քացահայտ համակրանք: 6. Էրգրումի ճախսկին արքեպիսկոպոս Հարություն. աչքի է ընկնում առողջ դատողությամբ: Նրան խորը են հայկական անկախության վերականգնման երազային ցնորդները: Զի վայելում պատրիարք Ներսեսի և Կ. Պոլսի հայության համակրանքը: Չունենալով լայն մտահորիզոն, Հարությունը պյակտիկ կյանքի հմտությունը է, ենթադրությունը է ունալ հնարավորությունների վրա և առաջնորդվում ոչ քեզ վերացական տեսություններով, այլ առողջ մտածողությամբ: Կարողիկոս ընտրվելու դեպքում բոլոր թեկնածուներից մեզ համար առավել բարձր երաշխիքներ ունեցող անձնավորությունն է նա»¹:

Փաստաբերում առավել ուշագրավը զիսավոր հյուպատոսի եզրակացությունն էր, որ հուշում էր մշակել կարողիկոսի ընտրության կուտ համակարգ, որի դեպքում «եթե նույնիսկ ընտրված կարողիկոսի անձնական հատկանիշները լիովին չհամընկնեն մեր ցանկություններին, այնուամենայնիվ նա չկարողանա իրաժարվել այն ուղուց, որը գծել է ցարական կառավարությունը իր շահերին համապատասխան»:

Թե ինչքանով իրականացան ցարական աստիճանավորի «կուտ և ամուր» համակարգ ստեղծելու ցանկությունները, ցույց տվին կարողիկոսական ընտրությունների հետազա արդյունքները: 1884 թ. մարտի 19-ին կայացան կարողիկոսական ընտրություններ, որի ժամանակ

¹ Ո.Ա.ՔԱ, Հայկական գործերի ֆ., գ. 154, էջ 3-10-ը ընհատումներով:

ձայների մեծամասնությամբ կարողիկոս ընտրվեց Կ. Պոլսի պատրիարք Ներսես Վարժապետյանը: Նա մեծ հեղինակություն էր վայելում աշխարհի բոլոր ծագերում սփոված հայության մեջ իրեւ հայկական հարցն արձարծող հեղինակ: Սակայն Վարժապետյանը իրաժարվում է կարողիկոս օծվելուց և մի քանի ամիս անց կնքում իր մահկանացուն: Հայրահարելով բազմարիվ դժվարություններ, հայությունը ձեռնարկում է կարողիկոսական նոր ընտրություններ: Առաջարկվում և ընտրվում են երկու կարողիկոսական թեկնածու՝ Մելքիսեդեկ Մուրադյանը և Մակար Մամիկոնյանը: Ելնելով ուսական պետության մեծապետական բաղարականությունից, ցարը վավերացնում է Վերջինիս ընտրությունը: 1885-ին Մակարը հայտարարվում է կարողիկոս ամենայն հայոց: Կ. Պոլսի ազգային ժողովը դժգոհությամբ է ընդունում այդ լուրը: Արևմտահայ հոգևորականների մի մասը իրաժարվում է Մակարին իրեւ կարողիկոս հիշատակել պատարազի ժամանակ: Հետաքրքրական է գաղտնի խորիրդական Նելիքովի գեկուցազիրը այդ իրադարձությունների մասին: «Արքեպիսկոպոս Մակարի կարողիկոսի պաշտոնում ընտրվելը հոգումներ առաջարցրեց բորբահայերի շրջանում, առանձնապես այսպիս կոչված արմատականների մոտ, որոնք ձգտում են կարողիկոսության առաջին թեկնածուի՝ նորին սրբազնության Սևլքիսեդեկ Զմյունացու հաստատմանը: Հրահրված նրա կողմնակիցների, գուցե և անմիջապես նրա կողմից, Կ. Պոլսի հայ մամուլը ուժգնորեն փորորկում է հաստարակական կարծիքը նոր հաստատված Մակարին կարողիկոս շահնաշելու համար: Եթ կողմից կայսերական դեսպանությունն ուշադրություն շղարձնելով հայ խառնակիցների սպառնալիքներին, ցանում էր ազդել բարձրաստիճան հոգևորականության և հայ հսմայնի աշխարհիկ ազդեցիկ ներկայացուցիչների վրա, նրանց բացարելով, որ նոր կարողիկոսին ճանաչելուց իրաժարվեր չի սարսափեցնում Ուստաստանին, սակայն դա կարող է բերել բորբահայերի և Էջմիածնի հոգևոր կապերի խօսումն: Պետք է արժանին մատուցել Կ. Պոլսի պատրիարք Հարությունին, ինչպես և մյուս հոգևոր հայրերին: Նրանք դիմադրեցին այսպիս կոչված լիբերալների ձգտումներին և իրենց հայտարարեցին կարողիկոս Մակարի ճանաշման կողմնակիցներ: Երենց կողմից հոգևոր և աշխարհիկ խորհուրդների ներկայացու-

ցիներ Պեշիկքաշի եպիսկոպոս Խորեն Նարպեյը և քուրքական պետական խորհրդի անդամ Նորյան Էֆենջին ջերմորեն պաշտպանում էին Մակարի թեկնածությունը, ճարպկորեն և հմտությամբ վարելով այդ գործը: Նրանք փորձեցին ստիպել Ազգային Շնդիանուր ժողովին ճանաչել Մակարին իրեւ կաթողիկոս: Հասուկ այդ նպատակով նիստ իրավիրեց երկու շաբաթ առաջ: Մակայն պատրիարք նախագահ Հարությունի հենց առաջին հայտարարության ժամանակ ժողովին սովորական խառնակիչները և եկեղեցու դարպասի մոտ գտնվող աճրովը առաջացրին այնպիսի անկարգություններ, որ նախագահը ստիպված ընդհատեց նիստը և կազք վերականգնելու համար դիմեց քուրքական ոստիկանության օգնությանը: Ազգային ժողովի նիստերը վերսկսվեցին անցած ուրբաթ, քայլ այս անգամ փակ դրների հետևում: Կողմ և դեմ աղմկալից ճառերից հետո վերջապես հաղթեց ողջամտությունը և նորին սրբություն Մակարը ճայների մեծամասնությամբ (42 ծայն ընդդեմ 17-ի) քուրքահայերի կողմից ճանաչվեց իրեւ կաթողիկոս: Պատրիարք Հարությունը հոգևորականության և քուրքահայ հոտի անունից այդ իրադարձության մասին հեռազրով անմիջապես հաղորդեց Նորին Սրբություն Մակարին: Այս ամենի մասին ես պատիվ ունեցա հալորդել Զերդ Քարեննությանը գաղտնի հեռազրով: Այսպիսով, համարյա երկու տարի ձգձգված կաթողիկոսի ընտրության գործը բարեհաջող վախճան ունեցավ, չնայած ճանապարհին հանդիպած բոլոր խոչընդոտներին: Այսպես հաջողվեց հարգանք ներշնչել մեր օրենքների նկատմամբ, ընտրությունների ժամանակ կիրառելով հանրահայտ «Պոլոժենի» դրույթները և միևնույն ժամանակ պաշտպանելով քուրքահայերի ավանդական հարաբերությունն ու սերտ կայլ ուսահայերի և Էջմիածնի գահի նկատմամբ: Այդ հանգամանքը, իմ կարծիքով, մեծ նշանակություն ունի մեր վարած արեւելյան քաղաքականության մեջ այժմ և ապագայում»¹:

Մակարը ժողովրդի կողմից արժանանում է «ցարքնտիր» տիտղոսին, սակայն իր գործունեության առաջին խև քայլերից նա չի արդարացնում ցարական արքունիքի հույսերը, դեմ է արտահայտում կառա-

¹ Ո.Ա.ՔԱՅ, զիսավոր արխիվ Փ., Հայկական գործեր, ց. 461, գ. 135, էջ 17-19:

վարության մշակված և 1884-ի փետրվարին հաստատած «Կովկասի հայ լուսավորչական եկեղեցական ուսումնարանների մասին որոշմանը», որով նոյնիսկ հոգևոր դպրոցները պետք է ընկնեն ցարական լուսավորթյան նախարարության իրավասության ներքո: Մակարի ձեռնարկած միջոցառումներից առավել կարենքները նրա քափած ջանքերն են ցարական կառավարության կողմից փակված հայկական դպրոցները վերաբացելու ուղղությամբ և որոշակի քայլերը հայ կարողիկոսների իրավունքների վերականգնման համար: Փատորեն, ցարական աստիճանավորների ձեռնարկումները կարողիկոսական ընտրության ուժեղ համակարգ ստեղծելու ուղղությամբ չտվին դրական արդյունքներ: Վճռորոշ եղավ ոչ թե ցարական իշխանավորների ստեղծած համակարգը, այլ հայ կարողիկոսների հայրենասիրական, ազգին և ժողովրդին ծառայելու ավանդական պատրաստականությունը: Եթե «ցարքնտիրն» լր դեմ դրու գալիս կառավարության քաղաքանությանը, ասլա պարզ է, թե ինչ դիրք կրոներ կառավարության քաղաքականությանը նկատմամբ ժողովրդի մեծ մասի համակրանքը վայելող թեկնածուն: Այդ քանին ակնառու երևաց կարողիկոսական հաջորդ ընտրության ժամանակ: 1891-ին վախճանվեց Մակար կարողիկոսը: 1892-ին մայիսի 5-ին կայացած կարողիկոսական ընտրությունների ժամանակ հայ ժողովրդի բոլոր խավերի կողմից միաձայն ընտրվեց կարողիկոս Սկրտիչ Խորմյանը՝ հայ ազգային-ազատագրական շարժումների և «երկարեւ շերեփի» գաղափարախոսը, որն իր ազգանվեր գործունեության պատճառով, իրեւ քաղաքականական անբարեկույս անձնավորություն երկու անգամ արտորի էր դատապարտվել օսմանյան կառավարության կողմից (առաջին անգամ 1885-ին Վանից արտաքսվել էր Կ. Պոլիս, երկրորդ անգամ Գում-Գափուի ցույցից հետո՝ Կ. Պոլիս Երևանում) և իր իսկ արտահայտությամբ «արծիվը քանտվել էր ճնճղուկի վանդակում»: Ցարական կառավարության համար համելի չէր տեսնել նման անձնավորությանը իր սահմաններում, հայոց հովապետի պաշտոնում, սակայն ժողովրդական հոգումների ալիքի տակ, ավելի քան մեկ տարի ձգձգելուց հետո, ցարը վավերացրեց նրա ընտրությունը 1893 թ. հունիսի 3-ին: Ցարական քարձը աստիճանավորի և օսմանյան արտաքին գործերի նախարարի երկար քանակցություննե-

թի վերաբերյալ գրազրությունները բացահայտում են այն երկակի անվահուրյունը, որ տածում են երկու կողմերը նորբնտիք կարողիկոսի նկատմամբ: Երկար ժամանակ թուրքական կառավարությունը չէր համաձայնվում լուծել նրան Երուսաղեմի արսորից ազատելու և թուրքակատակությունը հանելու խնդիրը: Երկարատև ձգձգումներից հետո համաձայնությունը տալով հանդերձ, սուլթան Արդուլ Համիդ Երկրորդը հրաժարվում է պահպանել մինչ այդ սահմանված կարգը՝ ընդունել նոր բնտիք կարողիկոսին, պարզեատրվել իր տերության բարձր շրանշանով և շուրջով ու պատվով ճանապարհել իր նստավայրը՝ Էջմիածին: Վախենալով արևմտահայության հուզումներից և ժողովրդական ելույթներից, սուլթանն արգելում է նոյնիսկ Խրիմյանի մուտքը թուրքական պետության մայրաքաղաքը: Շատ հետաքրքրական է ոուսական դեսպանության գործերի հավատարմատար, խևական պետական խորհրդական ժաղովսկոյի զեկուցազիրը այդ իրադարձությունների մասին: «Սուլթանի հետ ունեցած իմ վերջին հանդիպման ժամանակ գաղտնի խորհրդական Նելիդովը հարմար առիթ գտավ Սուլթանի ուշադրությունը երավիրել կարողիկոս Խրիմյանին Էջմիածին ճանապարհելու գործը արագացնելու մեր ցանկության վրա: Սուլթանը նորից քվարկեց իր առարկումներն ու նկատառումները և խնդրեց դրանք մանրամասնորեն ու անկեղծությամբ ներկայացնել ինքնակալ կայսեր բարեհաջող ուշադրությանը, ամելացնելով, որ հենց սկզբից հայտնում է իր համաձայնությունը՝ հպատակիլ նորին մեծության որոշմանը, ինչպիսին էլ, որ այն ինչի: Դրան համաձայն ևս շիապաղեցի հայտնել սուլթանին, որ լրու ուշադրություն դարձնելով բոլոր առարկությունների վրա, ինքնակալ կայսրը միաժամանակ գտնում է, որ Խրիմյանի կարողիկոս շիաստատվելը ներկայացնում է անհամեմատ ավելի մեծ վտանգ, քան այն դժվարությունները, որոնք կառաջանան նրա՝ Էջմիածնում հաստատվելուց: Այնտեղ իշխանությունների արրուն հսկությունը կիսանգարի նրան ամեն անգամ խառնվել թուրքահայերի բաղարական գործերին: Նկատի ունենալով մեր ընդհանուր քշնամիների ցանկությունը՝ օգտագործել Խրիմյանի ուղևորության հետաձգումը հայերի շրջանում քաղաքական հուզումներ առաջացնելու համար, ցանկալի է, որ Խրիմյանին թույլտվություն շնորհվի ուղևորվել որքան

հնարինոր է կարճ ժամանակում: Հավատարիմ իր խոստմանը՝ խոնարհվել ինքնակալ կայսեր կամքի առաջ, սուլթանն անհապաղ և առանց սովորական տատանումների ինձ տվեց դրական պատասխան, հայտարարելով, որ իրենից կախված հանձնարարություններ կտրվեն նոյն ակնքարրում:

...Մյուս օրը ևս համոզվեցի, որ Սուլթանի որոշումը այս անզամ անկեղծ և անշրջելի է: ...Սայդի վաշան հայտնեց ինձ այդ մասին, ավելացնելով, որ Սուլթանը որոշելով Խրիմյանի ճանապարհվելու հարցը, պայման է դնում, որ նրա երբը Թուրքիայի միջով առիթ շտառ ոչ մի ցույցի: Դրա համար նախարարը խնդրում է դեսպանությանը գործերը դասավորել այնպես, որ կարողիկոսը ուղևորվի Հայֆայից և շմտնելով Կ. Պոլիս, ուղիղ անցնի Տրիեստ, կամ էլ ոուսական շոգենավով, առանց կանգ առնելու Կ. Պոլսում, ուղիղ ճանապարհվի Ռուսաստան: Ես ընդունեցի նրա հայտարարությունը և խնդրում եմ կայսերական նախարարության կազմակերպելով համակրական ցույցերը մայրաքաղաքում, այլ նաև իրեն ցանկանում եր ազատել տիած պարտականությունից՝ ընդունված կարգի համաձայն կազմակերպելով նոր կարողիկոսի ընդունելությունը և շնորհել նրան թուրքական բարձր շրանշան: Պարտը համարելով այս առիթով ներկայացնելու իմ նկատառումները, ես բոյլ եմ տալիս ինձ եղրակացնել, որ հարգանքով ընդունելով Սուլթանի կատարած այդ գիշումները, որոնք կարող են շոյել նրա ինքնամփությունը, մեկ դժվար պլանը է լիներ մերժել նրան նման փոքր հարցերում, նրա արած ծանր գոհարերության դիմաց: Քանի որ ընդունված կարգի համաձայն, կարողիկոսները սովորաբար Կ. Պոլսից ուղևորվում են Ռուսաստան ռազմանավով, ապս առանձնապես անսովոր ոչինչ չի լինի, եթե նախը վերցնի Խրիմյանին որևէ նավահանգստում, ասենք Դարդանելում և այդտեղից անկանգ ուղևորվի Բարում: Գաղտնի տեղեկությունների համաձայն ինձ հայտնի է, որ Բ. Դուռը միջոցառումներ է մշակել Խրիմյանին ճանապարհելու համար. ֆինանսների նախարարին հրամայված է հաշվարկ կատարել և վճարել նրան հասանելիք ողջ բո-

շակը, որն արգելափակված էր մայրաքաղաքից նրան հեռացնելուց ի վեր»¹:

Հակառակ ցարական կառավարության ողջ ջանքերին, որպեսզի Խրիմյանի մուտքը Ռուսաստան անցներ աննկատ և անշուր, նրա ժամանած բոլոր վայրերում կատարվում են ինքնարության համաժողովրդական մեծ շրահանդեսներ: Նախատեսված երկու եպիսկոպոսների փոխարեն նրան կամավոր ուղեկցողներ են դառնում բազմաթիվ անձնափորություններ, որոնք նրա ժամանած ամեն մի վայրում ձնահյուսքի նման ավելանալով, վերջում դառնում են մի պատկառելի շրախումը: Մեստեմբերին Էջմիածնում կայանում է Խրիմյանի հանդիսավոր օծումը իբրև Կարողիկոս Ամենայն Հայոց: Նորընտիր կարողիկոսը իր գործունեության առաջին խկ քայլերից ջանում է քարելավել հայ Եկեղեցու և ցարական կառավարության հարաբերությունները, առանց վճատելու ժողովրդի ազգային շահերին: 1895–96 թթ. նա անխոչ գործունեություն է ծավալում Արևմտյան Հայաստանի կոտորածներից մազապործ գաղթականությանը տեղափորելու, վերստին իր հայրենիքը վերադարձնելու ուղրությամբ՝ Արևմտյան Հայաստանը հայարափ անելուց փրկելու համար:

1895-ի փետրվարին ծերունազարդ կարողիկոսը ձեռնարկում է հեռավոր մի ճամփորդություն՝ դեպի Ս. Պետերբուրգ ցարի մոտ լնդունելության, հայկական քարենորդությունների հարցը վերստին արծարծելու նպատակով: Սակայն նա համոզվում է, որ փոխվել է Ալեքսանդր 2-րդի հայանապատ քաղաքականությունը. նրա որդի Ալեքսանդր 3-րդը վարում է հայկահյակական քաղաքականություն, ձգտելով սիրաշահել քորրական սուլթանին: Նույն հայկահյակական քաղաքականությունն է որդեգրում նրա որդի Նիկոլայ 2-րդը, որը 1903 թ. օրենք է ընդունում հայ Եկեղեցու ունեցվածքը հարբունիս բռնագրավելու համար: Զգալով, որ իր բազմաթիվ դիմումները և բողոքները մնում են «ձայն բարբառոյ յանապատի», Խրիմյանը հրաման է արձակում Ռուսաստանի տարածքում գտնվող բոլոր թեմական առաջնորդներին՝ շնորհարկելով արայական հրամանին, ցարական աստիճանավորներին շրույլատրել

ցուցակագրելու Եկեղեցու ունեցվածքը: Արևելահայ ազատազրական շարժումների հետարրիք էջերն են կազմում համաժողովրդական այն պայքարը, որ գլխավորեց ալեհեր կարողիկոսը՝ ալաշտայանելով իր ժողովրդի իրավունքները, հայ Եկեղեցու անկախությունն ու ինքնուրույնությունը: Երկու տարի տևեց այդ պայքարը, որն ստիպեց «ամենաուղղորմած ցարին» վերացնել հոմիսերեքյան հրամանը, բույլատրել հայկական դպրոցների գործունեությունը, հայ Եկեղեցու համեմատական ազատությունը հոգերը և մշակութային բնագավառում:

Նոյն գործունեությունն են որդեգրում նաև 20-րդ դարասկզբի հաջորդ կարողիկոսները:

Էջմիածին, 1992, № Դ-Ե, էջ 53-63:

ԻՆՉՊԵՍ ՎԱՅԵԼ Է ԱԶԳԻ ՀԱՅՐԵՐԻՆ

Թումանյանն այն գրողներից է, որոնց մասին ասված է ամենից շատ և բվում է, ամեն ինչ: Սակայն գրականագետ Լուսիկ Կարապետյանի «Հովհաննես Թումանյանի հասարակական գործունեությունը» աշխատությունը, որը վերջերս լույս է ընծայել ՀՀԳԱ հրատարակչությունը, նշանակն է հակառակ տրամադրանության ու հալաստումն մեծ քանաստեղծի «Ծատ քան կա, որ չգիտեք և ոչ ոք չի իմացել» խոստովանության: Հեղինակը քանասերի ու պատմաբանի գուգորդված հետազոտական աշխատանքով հայտնաբերել, ի մի է բերել ու շրջանառության մեջ դրել տարրեր արխիվներում ցարդ նիրեալ քազմաքիվ նոր փաստեր ու տեղեկություններ, բննարկել հայ պարբերական մամուլում տպագրված թումանյական մեծարժեք հոդվածները, անդրադարձել դրանց գրման պատմությանը: Աշխատությունում հայ ազգային-ազատազրական շարժումների մակրներացորդությունների ու տեղատվությունների, մեր ժողովրդի հոյս-ակնկալիքների, հիասքափությունների և մեծ ողբերգության հենքի վրա քննարկում են քանաստեղծի հասարակական գործունեության հիմնական դրվագները:

¹ ՈԱՀԱ, գլխավոր արխիվ, ֆ. հայկական գործեր, գ. 101, էջ 14–15:

Մենագրությունը բաղկացած է 7 գլխից:

Թիֆլիսի պահնորդական բաժնի նյութերի հիման վրա բացահայտվել են այն դրդապատճառները, որոնք ցարական գործակալներին բելադրել են անվտահություն դրսերել հասարակական կյանք տակավին նոր թևակրիսած գրողի հանդեպ: ՈՒշադրության արժանի է Հ. Թումանյանի, Ղ. Աղայանի, Ավ. Խահակյանի մասնակցությունը մեր ժողովրդի ազգային-ազատազրական մաքառումներին: Բազմաթիվ փաստերի, նամակների ու հուշերի համարմամբ հստակել են գրողի առնչությունները նորաստեղծ ազգային գաղտնի խմբակների, այնուհետև Երիտասարդ Հայաստան, Հնչալյան և ՀՀ Դաշնակցություն ազգային կուսակցությունների հետ: Խորն է արծարծված Թումանյանի ու Էջմիածնի հոգևոր-գործիչների փոխհարաբերությունների հարցը: Յորովի գնահատելով Ամենայն Հայոց կարողիկոսության միավորող դերը պետականություն չունեցեղ հարազատ ժողովրդի ազգային ճակատազրում՝ գրողը բուռն հետարրություն ու գործուն մասնակցություն է քերել ժամանակին ծավալված կարողիկոսական ընտրապայրարին: Մակար կարողիկոսի մահից հետո Թումանյանի, ինչպես և առաջադեմ այլ գործիչների, թեկնածուն հանրահոչակ Խրիմյան Հայրիկն էր, Երուսաղեմում «ճնճուկի փանդակում բանտված արծիվը», ով 1892-ին աշխարհի չորս ծագերից Էջմիածնի ժամանած 72 պատգամավորների միահամուռ կամոր իրավունք նվաճեց բազմելու Սր. Գրիգոր Լուսավորչի հաստատած գահին, սակայն Ալեքսանդր Յ-րդ ցարի կողմից փափարացվեց ընտրությունից միայն 13 ամս անց, քանզի համառ դիմադրություն էր ցուցաբերում արյունուշտ սուլթան Արդուլ Համիդ երկրորդը: Պատգամավոր Թումանյանն ընտրապայրարի եռուն օրերին տպագրում է «Ազդ» բանաստեղծությունը, որը «մարդկային կյանքի վեճ խորհուրդ էր» համարում անշափ պատասխանատու դիրքում ժողովրդի ընտրյալին տեսնելը: Հայտնի ու անհայտ շատ խոշովնոր հաղթահարած ծերունազարդ հայրիկը Ս. Էջմիածնում կարողիկոս օծվելուց առաջ 1893 թ.-ի օգոստոսի 29-ին, ժամանելով Թիֆլիս՝ բարեհաճ ընդունելության է արժանացում նաև Երիտասարդ Թումանյանին, ով հմայված էր իր անձով ու հերոսականությամբ: Տարիների ընթացքում, ճշմարիտ է, նվազեցին գրողի հիացումն ու ոգևորությունը, տեղի տալով քննադատական հայացքի, տա-

կայն բանաստեղծը, իրք զնահատանքի դրսերամ կարողիկոսի ազգանիվ գործունեալության, գրեց «Հայ ուստափորին» ու «Հոսղին» քերքվածները, որոնց տարբեր հրապարակումների համադրումից արժեքավոր եղրակացությունների է հանգել հետազոտողը:

Թումանյանն աներկրա համակրանքով էր վերաբերում Էջմիածնի միարանության գիտնական հոգևորականներին, առանձնապես Գարեգին Հովսեփյանին ու Սահակ Ամաստունուն: Նա հիացմունքով ու պատկառանքով էր մոտենում նաև Սխիրարյանների գիտական մեծարժեք ժառանգությանը: Սակայն գրողի խորաքափանց հայացքից չին վրիպում բնդիսաբավես հոգևորականության դասում առկա հոռի երևոյթները, հոգևոր հաստատություններն անառականոց դարձրած անաշխատ տգետ անձնավորությունները: Բանաստեղծն ուներ կատարյալ հոգևորականի իր պատկերացումները, իյնալ-անձնավորությունները: Ներսես Սեծ, Սահակ Պարքե, Վանն Երեց, Եղիշե... Այդ շաբաթ եզրափակվում էր իրօյա ժողովրդանիվեր գործիչներով, որոնց «սոսկ գոյությունը, ներկայությունն ավելի շատ գործ է տեսնում, քան թե հազարավորների գործը: Այլպիսի դեմքեր էին վերջերս հայոց ժողովրդի մեջ, Խրիմյանն ու Էջմիածնանը»: Ժողովրդին ծառայելու համարելով բոլոր հոգևորականների սրբազն պարտքը՝ Թումանյանն այդ շափանիշով է գնահատում նաև Խրիմյանից հետո կարողիկոս օծված Գևորգ Հինգերդին (Սուրենյանց):

Թումանյան բաղաքացու կերպարը, ազգային գործչի նրա պատկառելի ավանդը ժողովրդի ինքնապաշտպանության գործում խորությամբ են տրված աշխատության «Խաղաղության ալատգանով» գլխում: Բանաստեղծի գործունեությունը 1905–1906 թթ. հայ բարարական ընդհարումների ժամանակ դրսերում է նրա հոգեկան վեճ հատկանիշները: Հարազատ ժողովրդի ինքնապաշտպանության կազմակերպումն ամեն ինչից վեր դասող, իր մասին մշտապես լրող Թումանյանն անգամ այդ օրերի մասին գրում է. «...Այսօր ես այնքան զոհ չեմ, որ զրականության մեջ մի որեւէ բան եմ արել, որքան զոհ եմ, որ ակներեւ կարողացա իրար դեմ կանգնած ժողովուրդների սրերը պատյան դնել տալ և շատ ու շատ անմեղների ազատել այս գագանական կոտորածից»: Բանաստեր Լուսիկ Կարապետյանը բարեխստությամբ է հավաքել այդ իրադարձությունին:

յուններին նվիրված բոլոր արձագանքները, ցոյց տվել Թումանյանի կատարած գործը հայրենի Լոռում, որ նրա ջանքերով ապահովում է տեղի հայության անվտանգությունը: Իր ժամանակի ակտիվի քաղաքացին հրավերի չի սպասում, նա այնուղ է, որտեղ իր կարիքն է զգացվում: Համեմատաբար հանգիստ Թիֆլիսից նա ընտանիքով մեկնում է Լոռի, որ անհրաժեշտ էր նրա ներկայությունը: «Շատ լավ գիտեի, որ խառնակություններ են պատահելու, գիտեի որ մեր զավառում անհիշխանություն և ամեն կարգի անկարգություն կարող է լինել և ես շատ պետք կօգամ, քայլ պատահածն իմ սպասածից էլ ավելի եղավ», - հետագայում արձանագրում է Խաղաղության առաջըալը: Կոտորածները կանխելու համար նա դիմում է հնարավոր և անհնարին բոլոր միջոցներին, մերկացնում ազգամիջյան հրահրումներ սերմանելու ցարական աստճանավորների քաղաքականությունը, միաժամանակ կարողանում քավարար հարաբերություններ հաստատել նրանց մեջ եղող խոհեմ և խոճճիտ դեմքերի հետ՝ կանխելու աղետը, զապելու շարագրութներին, դատապարտելու ոճրագործներին: Ոչ միայն ամենօրյա գործունեությամբ, այլև ժամանակի մասնություն տված ճիշտ տեղեկատվությամբ, սխալ լորերի ճշտումներով նա մերկացնում է կոտորածների սաղրիչներին: Աշխատության հեղինակը բանափրական արպատումներով ապացուցում է, որ Թումանյանն է հեղինակը մասնություն լույս տեսած բազմաթիվ անսուրագիր կոչերի և հորվածների:

Թումանյանի հասարակական-հրապարակախոսական գործունեության անբաժանելի մասն է կազմում այս մեծ աշխատանքը, որ նա կատարեց Լեռյի հետ լինելով ՀՀ Դաշնակցության Արեւելյան Բյուրոյի օրգան «Հորիզոն» թերթի փաստացի խմբագիր: Նրանց լայնավորության շնորհիվ այդ լրագիրը, չսահմանափակվելով միայն նեղ կուսակցական շահերով, իր էջերում արտացոլում էր արեւելահայ կյանքը իր ողջ հակասություններով և բազմերանգությամբ: «Հորիզոնում» միշտ էլ հյուրներական էին տարրեր հասարակաշերտերի ներկայացուցիչներ: Իսկ Թումանյանի գրած առաջնորդող խմբագրականները աչքի են ընկնում բովանդակության հարստությամբ, ողջ հայկական կյանքն ընդգրկելու խորությամբ: Սինչև այժմ, հասկանալի պատճառներով, շատ քիչ է գրվել, կամ համարյա չի գրվել խմբագիր Թումանյանի այդ գործունեությունը:

յան մասին: Աշխատության հեղինակը տրնաջան աշխատանք և պրայտումներ է կատարել, համադրությունների միջոցով ճշտել նաև անսուրագիր հոդվածների Թումանյանի հեղինակությունը, քաշահայտել գրողի մեծությունը այդ բնագավառում ևս:

Թումանյանի գործունեությունը առաջին աշխարհամարտի տարիներին, նրա մասնակցությունը Թիֆլիսում ստեղծված Ազգային բյուրոյի աշխատանքներին մանրամասն քննարկված է աշխատության 5-րդ գիշում: Պատերազմի հենց սկզբից արեւելահայությունը, արևմտահայ իր եղբայրների ազատագրությանը նպաստելու ջերմ փափազով, մեծ եռանդով արձագանքեց ցարական կառավարության կոչին՝ կազմել կամավորական գները և ուսական բանակի հետ միասին մասնակցել Արևմտյան Հայաստանի ազատագրմանը: Ահա այդ ժամանակ է, որ Թիֆլիս է ժամանում Անդրանիկ Օզանյանը, որ Թումանյանի հետ առաջին անգամ հանդիպել էր 19 տարի առաջ. նրաց հարաբերությունները վերածվում են ջերմ ու հոգիչ բարեկանության: Առանձնակի հետաքրքրությամբ են ընթերցվում ամենալայն ժողովրդականություն վայելող այդ երկու մեծ հայերի (Երկուսն էլ փետրվարի ծնունդ. Թումանյանը՝ 19-ին, Անդրանիկը՝ 25-ին) բարեկանության դրվագները, արևմտահայության ազատագրությանն ի նպաստ նրանց համատեղ ջանքերը նկարագրող էջերը:

Թումանյանը սերտ համագործակցում է բոլոր հասարակաշերտերի ներկայացուցիչների հետ: Գրքում ջերմ ստողեր են նվիրված Թիֆլիսի և Եմերերիայի հայկական թեմի հոգենորդ Մեսրոպ Խավսկոսոս Տեր-Մովսիսյանին, որն ընտրվել էր ազգային բյուրոյի պատվավոր նախագահ: Աշխատության վերջին երկու գլուխների ընթերցումը ստիպում է պատմական գրականությունը անցկացնել հայ ժողովրդի համար ճակատագրական, ճգնաժամային այն օրերի և մեր ժամանակի միջև: Ժողովրդի իմաստությունն իր մեջ ամրարած ազգային բանաստեղծն առաջին աշխարհամարտի հենց սկզբից կողմնորոշվեց դեպի Ռուսաստանը: 1914-ի հոկտեմբերի 31-ին լույս տեսավ նրա «Երրորդ գարկը» հոդվածը, որը դրվերվեց նրա բաղաքական հավատաճրը Ռուսաստանի նկատմամբ: Ժամանակի ընթացքում բազմաթիվ փոփոխություններ եղան նրա այդ մտածելակերպի մեջ: Թումանյանի այցելությունները պատերազմի

բատերաբեմ, շփումները ցարական չինովնիկների և ոռոսական բանակի հրամանատարական կազմի տարրեր ներկայացուցիչների հետ նրա համար պարզեցին ամենակարող ճշմարտությունը՝ պատերազմում ցարական Ո-ուսաստանն ունի իր նվազողական ծրագրերը, որոնք ոչ մի կայ չունեն հայերի ազատագրության հետ։ Բանաստեղծն ակտանատես է լինում, թե ինչպես կովկասյան ռազմաճակատի մի շարք հրամանատարների երահանգով ամեն ինչ արվում էր նսեմացնելու հայկական կամագորական ջոկատների կատարած սխրանքները, ամեն կերպ ջրատում նրանց ուժերը՝ ի դեմս այդ ջոկատների տեսնելով ինքնավար Հայաստանի ազգային բանակի կորիգը։ Այդ բոլորով հանդերձ ի բնե լավատես Թումանյանը, որի հավատի հիմքը իր ժողովրդի անկոտում կամքն էր «հնօրյա վիշապի» դեմ կովելու, «վերջին տագնապի» և «վերջին զարկի» հետ ողջունում էր ոռոսական բանակի հաղթանակները։ Թեկուզ և հուսախար, Ո-ուսաստանի օգնությանը երկար սպասող արևմտահայերը դարձյալ իրենց հույսը կապում էին ոռոսական բանակի հետ։

Թումանյանը ծանր ապրեց արևմտահայության եղեռնը և տեղահանությունը։ Հայկական հարցի արձարծումից, Անտանտի երկրների օգնությունից հուսախար՝ նա սեփական աշքերով տեսել էր կովկասյան բանակի ռազմական գործողությունների հետևանքով բուրք իրսակների վրեժխնդրությունը հայ անմեղ բնակչության նկատմամբ, հայկական ռազմարիվ բնակավայրերի ավերումն ու բնակչության սպանողը, ցնցվել ահավոր այդ ողբերգությունից։ Սակայն այդ մեծ ցավը կարծես նաև մեծ ուժ էր ներարկել նրան՝ բուրքական հաղթանակից մազապուրծ արևմտահայ խյակներին օգնության շտավելու, որբերին օգնելու և համաճարակների դեմ պայքարելու գործում։ Գրքի ամենահոգիշ էջերն են այն մանրամասները, որոնք առավել աճքողջական են դարձնում մեծ մարդասերի կերպարը։ Մոռացած սեփական ընտանիքը, իր գավակներին (ինչպես տրտնջում էր կինը Թումանյանին ուղղած նամակում), նա ամիսներով անքուն, անդադար, ավագ դստեր՝ Նվարդի հետ աշխատում էր գեր փորքիկ սպելակնի դնել Էջմիածին լցված բազմահազար որբերի վերքերին։ Աշխատության 7-րդ գլուխը նվիրված է այդ տագնապալի իրադարձությունների բնարկմանը և կրում է «Ազգային ճակատագրի արևավիրքների մեջ» խորագիրը։ Այդ շրջանում ծավալված Թումանյա-

նի հրապարակախոսական և հասարակական գործունեությունն ընթանում է սերտորեն միահյուսված։ «Հայաստանը պետք է խոսի» հոդվածը ցույց է տալիս, որ Թումանյանի երկու այցելությունները ռազմաճակատ, Էջմիածնում կուտակված գաղրականության մեջ կատարած ծանր ու հոգեմաշ աշխատանքը, արևելահայ ժողովրդի ճգնաժամային վիճակը նրան ստիպում են նոր տեսանկյունից նայել հայ ժողովրդի ազատագրության գործին, շառաջնորդվել իին գաղափարներով, որոնել և գտնել պայքարի նոր ձևը։ Քննարկվում են Թումանյանի և Անդրանիկի այդ տարիներին գրված հոդվածները, ցույց է տրվում թե ինչպես է Թումանյանը նեցուկ դառնում Անդրանիկին, զրիշ վերցնում և ցրում ժողովրդական հերոսի մասին նրա թշնամիների կողմից տարածված ստահող լուրերը, սաղրանքները։ Անսպառ նուանով, ուժերի գերլարտումով Թումանյանն ստեղծում է Հայոց Հայրենակցական Սիուրյունների Սիուրյունը և իրեւ նրա նախազահ ձեռնարկում է տարբեր միջոցներ բորբական հարձակումը կասեցնելու, կործանման եզրին գտնվող հայ ժողովրդին փրկելու համար։ Այդ գլխի ընթերցումը առավելապես ստիպում է պատմական զուգահեռների ավերված երկիր, պատերազմ, զաղրականություն, Ղարաբաղյան պայքար և անկախ Հայաստան... Նոյնին է և հիմա։

Եվ դառն են պատմության դասերը, առավելապես Թումանյանի դասերը։ 70 տարի հետվից մեր ականջին է ինչում ազգային հոգու խառնարանից պարորկած բանաստեղծի խոսքերը։ «Այո՛, անկախությունը լավ բան է։ Դրա մասին շխոսենք...»

Եթե անկախությունը թուկ է դառնալու հայությանը խեղդելու համար, չենք ուզում։ Եթե անկախ Հայաստանը դառնալու է մի փորքիկ վանդակ ամեն կողմից դրները փակված և միակ դրուն էլ որ բաց է - բաց է տաճիկ ասկյարի համար, չենք ուզում։»

Ստեղծվել է արժեքավոր աշխատություն, որն իսկապես ներդրում է թումանյանագիտության մեջ։ Գրքի խմբագիրն է անվանի գրականագետ, թումանյանագետ, բանահանագետ, բանափրական գիտ. դրկտոր, ՀՀ ԳԱ իսկական անդամ Էդվարդ Զրբաշյանը։

Գրական թերթ, 5 մարտի, 1993։

ԱՆՎԱՆԻ ՊԱՏՍԱԲԱՆԸ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱՎԱՆ ԳՈՐԾԻՉԸ

(Ակադեմիկոս Մ. Գ. Ներսիսյանի ծննդյան 85-ամյակի առթիվ)

Պատմական Արագածոտնի Փարայի գյուղը տվել է երկու նշանավոր պատմաբաններ. Ղազար Փարպեցի՝ V դարի հոչակավոր պատմիչ, և Սկրտիչ Ներսիսյան՝ XX դարի ականավոր պատմաբան, մեր օրերի հայ պատմագիտուրյան հաստաբուն կաղճին, որի ծննդյան 85 և աշխատանքային գործունեուրյան 65 տարին լրացավ վերջերս:

Մ. Ներսիսյանի՝ իրքև պատմաբանի գործունեուրյունն սկսվել է 30-ականներից, երբ դեռևս համալսարանի ուսանող պատման պրայուս էր հայ ժողովրդի քաղմաղարյան պատմուրյան խորքերը: Դեռ այն ժամանակից նրան առանձնապես հոգում են հայ ժողովրդի պատմուրյան երկու հանգուցային խնդիրները՝ հայ-ոռոսական քաղաքական հարաբերյունները և հայ ազգային-ազատազրական շարժումները: Դրանց մեջ մտնող ընդգրկուն հարցախմբի լայնածավալ ուսումնախրուրյանը նվիրաբերեց նա իր ողջ գիտական կարողուրյունները: 1939-ին պաշտպանել է թեկնածուական դիսերտացիա հենց այդ հանգուցային խնդիրներից մեկի մասին: Դիսերտացիան վերաբերում էր Անդրկովկասում գործող նարողնիկական խմբակներին, և այդ առնչուրյամբ քննարկվում էին նաև հայ նարողնիկների՝ ուսու նարողնիկներից կրած ազդեցուրյունն ու կապերը: Մեկ տարի անց այն հրատարակվեց «Նարողնիկական խմբակներն Անդրկովկասում (1870–1880 թթ.)» խորագրով:

Ուշադրուրյան արժանի է հատկապես մի հանգամանք: Այն ժամանակ, երբ երիտասարդ Խորհրդային Հայաստանի նշանավոր շատ գիտականներ և գործիչներ, որոնք անցյալում ունեցել էին պատկառելի ավանդ և փաստակ, ցարիզմին քննադատելու միտումվ, տուրք տալով պատեհապաշտուրյանը, աշխատուրյուններ էին գրում, հոդվածներ հրատարակում, որտեղ արևմտահայուրյան ազատազրական շարժումը համարում էին դրախ ներնուծված, իսկ Թուրքիան համեմատելով Յարկան Ռուսաստանի հետ գտնում էին, որ հայերի դրուրյունը բուրքական կայսրուրյունում իր ավելի լավ էր, քան Ռուսաստանում, Սկրտիչ

Ներսիսյանը հակադրվում էր այդ մտայնուրյանը, պաշտպանում և վերականգնում XIX դարի հայ անվանի մտավորականների՝ Միքայել Նալբանդյանի, Ռաֆֆո, Գրիգոր Արծրունո, Սկրտիչ Խրիմյանի, Գարեգին Սրբանձույացի և ուրիշների զաղափարները արևմտահայ ազատազրական շարժումների պատճառների և իրավական հիմքի վերաբերյալ: Բազմաթիվ արխիվային վավերագրերի, հայոց պատմուրյան դիվանների, ստեղծված գրականուրյան հետազոտուրյան հիմքի վրա Ներսիսյանը գրում է բուրքական բռնապետուրյան դեմ ուղղված՝ հայ ժողովրդի ազգային-ազատազրական պայքարին նվիրված կորուպային մի ուսումնախրուրյուն, որը 1946-ին ներկայացնում և պաշտպանում է իրքեւ դրկտորական դիսերտացիա: Իր ինքնահաստումը գտած գիտնականի և քաղաքացու կողմից կատարված գիտական սիրունք էր այդ աշխատուրյունը: Անհատի պաշտամունքի տարիներին, երբ արևմտահայ ազգային-ազատազրական շարժումների մասին խոսելը կամ գրելը համարվում էր ազգայնականուրյան դրսևորում, երբ մեզանում արգելված հեղինակներ էին Ռաֆֆին, Պատկանյանը, Արծրունին, առավել ևս Խրիմյանը, հորելյարը իրեն հատուկ խիզախուրյամբ, հմուտ պատմաբանի ըննախույզ հայացքով ուսումնախրում էր հայ ազգային-ազատազրական շարժման ակունքներն ու ընթացքը, նրա զաղափարախուրյունը, կապը ճնշված այլ ժողովուրյունների ազատազրական շարժումների հետ, ցույց տալիս բուրքական բռնապետուրյան հայահալած քաղաքականուրյունը, բացահայտում Թուրքիայի եվրոպականացման ճիգերի սնանկուրյունը, մեծ պատուրյունների գալուքատիրական նկրտումները: Եվ պատահական չէր, որ այդ աշխատուրյունը լույս տեսավ միայն Ստալինի մահից հետո սկսված ճնհալի տարիներին:

Գիտնականի անխոնջ աշխատասիրուրյան արդյունքը եղավ հայուսական հարաբերուրյուններին նվիրված ուսումնախրուրյունների շարքը՝ «Սովորովը և հայ-ռուսական հարաբերուրյունները 1770–1780 թթ.», «Դեկաբրիստները Հայաստանում», «Հայ-ռուսական հարաբերուրյունների պատմուրյունից» (Երկիատոր), «1812 թ. Հայրենական պատերազմը և Կովկասի ժողովուրյունները» և այլ լուրջ աշխատուրյուններ:

Ներսիսյան գիտնականի ամենամեծ ծառայությունը հայոց եղեռնին, հայ ցեղասպանությանը նվիրված փաստաբարդերի արժեքավոր ժողովածուն է, որը լույս տեսավ հայոց Մեծ Եղեռնի 50-ամյակի առիվ, 1966-ին: Ժողովածուն լույս է տեսել ոուսերեն, իր առաջ դնելով հեռահար նախատակներ, ոուսերենի միջոցով աշխարհին ծանոքացնել երիտրուրքերի կողմից սանձազերծված՝ 1915 թ. մարդկության դեմ կատարված ամենամեծ ոճին՝ հայ ժողովրդի ցեղասպանությանը: Գիրքը բաղկացած է երկու մասից: Առաջին մասի փաստաբարդերն արտացոլում են Արդու Համիլ Ա-ի տիրապետության ընթացքում (1876–1908 թթ.) իրագործված հայկական կոտորածները: Երկրորդ մասը վերաբերում է հայ ժողովրդի զանգվածային կոտորածներին, որոնք տեղի ունեցան երիտրուրքերի իշխանության գրուստ անցնելուց հետո: Փաստաբարդերի մեծ մասը, որ արխիվային վավերագրեր են, արտացոլում են 1880-ական թվականներից սկսած բորբական կառավարության հակահայկական բաղարականությունը: Դրանց գերակշռող մասը հայ, ոուս, անգլիացի, ֆրանսիացի, գերմանացի, ամերիկացի, բուրք բարձրաստիճան պաշտոնյաների, թուրքիայի տարածքում գտնվող դեսպանների, հյուսատունների, զինվորական-կցորդների պաշտոնական գեկուցագրերն են՝ ուղղված իրենց երկրների արտաքին գործոց նախարարություններին, և ճշմարտացի պատկերացում են տալիս դեռ 80-ականներից սկսած տուրանական, ապա երիտրուրբական կառավարության առավել դաժան, պետական մակարդակով կատարված հրեշավոր ոճրագործության մասին, ոճիր, որի հետևանքով գոհվեց ավելի քան մեկ և կես միլիոն հայություն, ավերվեցին շեն ավաններն ու քաղաքները, ամայացավ Արևմտյան Հայաստանը, մարդկային բաղարակքրության պատմության մեջ ծանրակշիռ ավանդ ունեցող մի աշխատաեր ժողովրդից բոնագավրվեց իր պատմական հայրենիքի ինը տասներորդ մասը: Ժողովածուի հակիմք, բայց խիստ տարրունակ առաջարանում Ներսիսյանը տալիս է արխիվային վավերագրերի գիտական գնահատականը, բացահայտում է թուրքական կառավարության հայաջինջ քաղաքականության դրդապատճենը: Իբրիհամականների գաղաքարախտուններ Նազիմ քեյի, Էնվեր փաշայի, Թալեաք քեյի երույթներից և հեռագրերից բերված մեջքերումների օգնությամբ բացահայտում է բորբական կառավարության

հրեշավոր ծրագրերի հակամարդկային էությունը: Հեղինակը ճշտումներ է նոցնում նաև մեծ տերությունների որոշ դեսպանների գեկուցագրերում տեղ գտած անձշտություններում՝ իր գնահատականը տալով կատարված իրադարձությունների նկատմամբ դրսերած նրանց վերաբերմունքներին: Առաջարանի բարձր գիտական մակարդակը, ժողովածուում ամփոփված արխիվային փաստաբարդերի բազմազանությունը, հարատուրյունը, դրանք առաջին անգամ գիտական շրջանառության մեջ դրվելու փաստը, ժողովածուն դարձնում են մեծարժեք: Պատահական չե, որ ժողովածուն ունեցավ մի քանի հրատարակություն (2 ոուսերեն և 1 հայերեն), ընդունելություն գտավ և՛ գիտական հասարակայնության, և՛ ընթերցողների լայն շրջաններում՝ միշտ մնալով փնտրված գիրք: Դա վկայում է ոչ միայն ժողովածուի արժանիքների մասին, այլև մեր ժողովրդի վերաբերմունքի՝ իր համար շատ ցավուու ու հոգեհարազատ թեմայի նկատմամբ:

Խոսել Ներսիսյան գիտնականի մասին, առանց հիշելու նրա՝ գիտության մեծ կազմակերպիչ ունակությունները, անհնարին է: Երկար տարիներ նա եղել է Հայաստանի Հանրապետության Գիտությունների Ազգային Ակադեմիայի պատմության ինստիտուտի փոխտնօրեն ու տնօրին, ՀԳԱ ակադեմիայի հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ՀՀ ԳԱԱ-ի փոխնախագահ, մեկ տասնամյակից էլ ավելի տարիներ վարել է Երևանի պետական համալսարանի ռեկտորի պաշտոնը (1966–1977 թթ.): Ունկուոր Ներսիսյանի ջանքերի շնորհիվ համալսարանում բացվեց արևելագիտության ֆակուլտետ, ուր և դրվեցին մեր ժողովրդի հետ սերտ առնչություն ունեցող պարսիկ, արաբ, քուրդ, բուրք բուրք ժողովուրբների լեզվի, բանափրության և պատմության ուսումնամիաբնության հիմքերը:

Առավել նշանակալիցը Սկրտիչ Ներսիսյանի մանկավարժական գործունեությունն է: Երկար տարիներ նա հայ ժողովրդի պատմություն է դասավանդել պետական համալսարանում, Խ. Արտվյանի անվան մանկավարժական ինստիտուտում: 1940–50-ականներին ուսանողները առաջին անգամ նրանից են լսել մեր անվանի հայդրկների, ժողովրդական վրիժառուների, մասնավորապես Անդրանիկի անունը, որի մասին Հայաստանում առաջին տպագիր հոդվածի հեղինակը լինելու պատիվը

նոյնպես պատկանում է անվանի գիտնականին: Նրա ուսանողներից շատերը այժմ ճնշաչված անուններ են պատմագիտուրյան բնագավառում, ՀԳԱ ակադեմիայի խկական և թղթակից անդամներ, դոկտորներ, թեկնածուներ, գիտուրյան կազմակերպիչներ: Այդ առնչուրյամբ պետք է խոսել նաև Ներսիսյանի ստեղծած գիտական դպրոցի մասին: Նա եղել է բազմարիվ ասպիրանտների գիտական դեկանար: Հաշվի շառներով իր ահոելի գրադադարյունը՝ միշտ էլ ժամանակ է գտել ասպիրանտների գիտական աճը և հասունացումը ուղղ ճանապարհի վրա դնելու համար: Ես պատիվ և բախս եմ ունեցել լինելու նրա ասպիրանտը 1965–68 թթ. և չեմ կարող մոռանալ, թե ինչ բժախնդրուրյամբ էր հետևում իմ գիտահետազոտական աշխատանքի առաջին քայլերին: Հետևողակարակած հաջող հոդվածներով:

Չի կարելի մոռանալ Ներսիսյանի գիտական-հրատարակչական գիտուրյան պրոպագանիզման բնագավառում կատարած գործունեության մասին: Այդ այն բնագավառն է, որին մեծարգո գիտնականը նվիրվել է անմնացորդ սիրով և խանդաղատանքով: 1958 թ. նրա կողմից հիմնադրվեց «Պատմա-քանակիրական հանդես», որը մեծ հեղինակություն է վայելում և ճանաչում է գտել ոչ միայն մայր երկրի բանասերների ու պատմաբանների, այլ նաև սփյուռքի, արտասահմանյան հայագետների շրջանում: Հեղինակների համար մեծ պատիվ է հրատարակվել գիտական այդ պատկառելի ամսագրում, որովհետև բոլորը գիտեն Ներսիսյան գիտնականի բարձր չափանիշները և անգիտողականուրյունը գիտական խոտանի նկատմամբ: Հիմնադրման օրից մինչև օրս Սկրտիշ Ներսիսյանն այդ ամսագրի անփոփոխ խմբագիրն է ու շարունակում է իր գործը երիտասարդի ավյունով և իմաստնացած՝ հասակի հարուստ կենսափորձով: Մեծ է Ներսիսյանի ավանդը երկու այլ ամսագրերի հիմնադրման գործում ևս: Համալսարանում պաշտոնավարելու տարիներին (1967 թ.)՝ նրա անմիջական նախաձեռնուրյամբ սկսեցին հրատարակվել «Քանրեր Երևանի համալսարանի» և «Երևանի համալսարան» (ներկայում՝ «Հանդես Երևանի համալսարանի») հանդեսները, որոնք հարատևում են մինչև օրս:

Զնայած պատկառելի տարիքին՝ մեծարգո կորելյարը այժմ էլ մեր գիտնականների առաջին շարքերում է: Վարում է Հայաստանի Գիտուրյունների ազգային ակադեմիայի պատմուրյան ինստիտուտի «Հայուսական հարաբերուրյուններ» և «Հայերի ցեղասպանուրյուն» թեմատիկ խմբերի աշխատանքները, որ պլանավորված է «Հայերի ցեղասպանուրյունը Օսմանյան կայսրուրյունում (1918–20 թթ.)» փաստաթղթերի նոր ժողովածուի հրատարակուրյունը, որի առաջին հատորի տրամաբանական և ժամանակագրական շարտնակուրյունն է լինելու:

Նա եռանդուն մասնակցում է ինստիտուտի գիտական խորիրդի նիստերին, որտեղ ունեցած նրա ամեն մի եղույթը ներկաներին զարմանք և իիացմունք է պատճառում: Անբնդիատ որոնումների մեջ է: Նրա պրապտուն միտքը հանգիստ չունի: Նա առաջինն է տեղյակ լինում արտասահմանում լույս տեսած գիտական նորույթների մասին՝ կրտսեր գործընկերների ուշադրուրյունը թե՛ռելով դրանց վրա:

Ներսիսյանը ոչ միայն անվանի գիտնական է, այլև սկզբունքային, անհիաշտ, անօգիտում քաղաքացի, հասարակական գործիչ: Կրուու խառնվածքը, պատասխանատվուրյան մեծ զգացումը ներկա և ապագա սերտների նկատմամբ, նրան օժտում են պայքարելու մեծ եռանդով: Նա թշնամի է ամեն տեսակի պատեհապաշտուրյան, պաշտպանում է ազնվուրյունն ու գիտական բարեկարգուրյունը, դատավարուում անարդարուրյունը: Նրան հասուկ է անաշառուրյունը, հավատարմուրյունը դավանած սկզբունքներին: Ութունիինգամյա գիտնականը պայքարի է նետվում երիտասարդի խանդով և ավյունով: Ցանկանք երկար տարիների արևատուրյուն մեծարգո գիտնականին և ուսուցչապետին:

Հանդես Երևանի Համալսարանի, 1995, № 3, էջ 23–27:

ԱՐԺԵՔԱՎՈՐ ՆԵՐԴՐՈՒՄ

ՀԱՅ ՊԱՐՔԵՐԱԿԱՆ ՍԱՍՈՒԼԻ

ՊԱՏՍՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԵջ

Դժվար է գերազնահատել պարբերական մամուլի դերն ու նշանակությունը ժողովրդի պատմության շարադրման, հասարակական մորփ պատմության ուսումնասիրության գործում: Պարբերական մամուլը եղել և մնում է հայ ժողովրդի պատմության առաջին և անփոխարինելի սկզբնադրյութերից մեկը: Անհնար է պատկերացնել մասնավորապես 19-րդ դարի պատմության ուսումնասիրությունը առանց օգտագործելու մեր հարուստ պարբերական մամուլը: Սակայն մամուլը ոչ միայն պատմության ուսումնասիրման սկզբնադրյութ է, այլ նաև ուսումնասիրության օրինակ: Երկուհարյուրամյա հայ պարբերական մամուլը ունեցել է իր երախտաշատ ուսումնասիրութերն ու զնահատողները դեռևս ավելի քան հարյուր տարի առաջ: Նիկողայոս Տեր Հարությունյան, Գրիգորիս Գալենքերյան, Մկրտիչ Պոտուրյան, ապա Գարեգին Լևոնյանց - այն պայծառ անձնավորություններն են, որոնք քաջ գիտակցելով ու բարձր զնահատելով մամուլի դերն ու նշանակությունը, սկսած 1878-ից հայ մամուլի պատմության ուսումնասիրության բնագավառում բացեցին մի արակետ, որը ժամանակի ընթացքում դարձավ լայնակուն պողոտա:

Հայ մամուլի ուսումնասիրությունը առավել գիտական հիմքերի վրա դրվեց Հայաստանի Գիտությունների Ակադեմիայի Պատմության ինստիտուտում, որի կազմում արդեն երեք տասնամյակ գործում է հայ պարբերական մամուլի ուսումնասիրությամբ գրադիտ գիտական աշխատողների մի պատկառելի խումբ: Նրանց ջանքերով տարիների ընթացքում լոյս են տեսել բազմաթիվ արժեքավոր աշխատություններ, նվիրված հայ մամուլի առանձին օրգանների ուսումնասիրությանը: Այսպիսով հող նախապատրաստվեց առավել ընդգրկուն և հյունարար աշխատության ստեղծման համար: Այդ ջանքերի պասակը եղավ վերջերս իրատարակության համար գիտական անցագիր ստացած «Հայ պարբերական մամուլի պատմություն» առաջին հատորը, որի կատարումը գիտական սիրանք էր և իրականացվեց մեծ մասամբ այդ բաժնի աշ-

խատակիցների ուժերով, բարձր գնահատականի արժանանալով ինստիտուտի գիտական խորհրդի կողմից: Բաժնի աշխատակիցների, գիտական հասարակայնության մեջ ճանաչված անուն է և պատկառելի ավանդ ունի հայ պարբերական մամուլի ուսումնասիրության մեջ ինստիտուտի ավագ գիտական աշխատակից Մարգո Մխիթարյանը, որի հետազոտությունը՝ «Արևելահայ մամուլի սկզբնավորումը և լուսավորական շարժումը» խորագրով, վերջերս լոյս ընծայեց Գիտությունների Ազգային Ակադեմիայի «Գիտություն» իրատարակչությունը:

Լայն է և բնդգրկուն Մ. Մխիթարյանի հետաքրքրությունների շրջանակը: Բազմաթիվ գիտական հոդվածների և մենագրությունների հեղինակին գրադեցրել են հայ պարբերական մամուլի թե՛ առավել ուշագրավ, թե՛ անշահ բիացող օրգանները, հայ առաջին պարբերականի, նրա աշխատակիցների, արևելահայ հասարակական մորփի գագար «Հյուսիսավայր»-ի, ապա 19-րդ դարի 2-րդ կեսի արևելահայ պարբերականներից «Փորձ»-ի և «Արձագանք»-ի ստեղծման, հայ հասարակական կյանքում նրանց կատարած դերի և նրանց հետ առնչվող բաղմարիվ հարցեր նրա գրչի տակ ստացել են իրենց համակողմանի լուսաբանումը: Գրախսովող մենագրությունը ընդլայնում է գիտնականի հետաքրքրությունների շրջանակը, արևելահայ առաջին պարբերականից մինչև «Հյուսիսավայր» բնկած դժվարին և վշշոտ ճանապարհ անցած հայ մամուլի ուղին: Գիտական հասարակայնությանը անհայտ կամ թիւ հայտնի, Աստրախանում իրատարակված «Արևելյան ծանուցմունք» և Թիֆլիսի «Կովկաս», ապա «Արարատ» շաբարաքերերը առաջին անգամ դառնում են առանձին ուսումնասիրության առարկա: Աշխատությունը բաղկացած է շորս մասից: Առաջին մասի առաջին գլուխը նվիրված է «Արևելյան ծանուցմունք»ի ստեղծման և իրատարակության պատմությանը: Հրատարակվելով Աստրախանում «Աստուշնի Խզվեստիա» շաբարաքերի հետ մեկտեղ այն եղել է երկեղզվան շաբարաքերի մի ճյուղը, լոյս է տեսել ընդամենը քասեյոր թիվ և դադարել է խրմագրի մահվան պատճառով: Շաբարաքերը դրական դեր է կատարել, գաղրօջախի հայությանը կապելով մամուլին, նրան տալով ընթերցանության նյութ: Այն Ռուսաստանի տարածքի հայ պարբերականն էր և մի նոր աստիճանի բարձրացրեց Աստրախանի հայության հասարակական կյանքը: Կարճ

կյանք ունեցավ այդ շարաբարերքը և այդ իսկ պատճառով չկարողացավ դրսերել իր ողջ հնարավորությունները, շտարածվեց Անդրկովկասում և ավելի քան մեկ ու կես դար մատնված էր մոռացության: Մետք է արժանին մատուցել հեղինակի գիտական բարեխողությանը, որը հարգանքով է նշում այն բոլոր ուսումնասիրողների անունները, որոնք ինչ-որ շափով առնչվել են այդ շարաբարերքի հայտնաբերմանը:

Աշխատության առավել ուշագրավ գլուխներից է «Հայացք դեպի ակունքներ» խոսուն վերնագիրը կրող բաժինը, որը քննարկում է ոչ թե մամուլի որևէ օրգան, այլ համակողմանի բացահայտում է Անդրկովկասի և Ռուսաստանի հայ մշակութային կենտրոններում Թիֆլիսում և Սոսկվայում ընթացող հասարակական երևոյթները, նոր դպրոցի համար պայքարող գործիչների՝ Ալամդարյանի և Արովյանի նման լուսավոր դեմքների գործունեության շառավիղները, Ներսես Աշտարակեցու և Հովհակիմ Լազարյանի ծավալած լուսավորական գործունեությունը, համապատասխանարար «Ներսիսյան» դպրոցի և «Լազարյան» ճեմարանի աշխատանքների, նրանց ուսուցիչների և առաջադեմ սաների, նրանց ջանքերով 1828 և ասպա 1829 թվերին հրատարակած «Երախայրիք Ներսիսյան դպրոցի» և «Մողաք Արարատյան» ժողովածուները: Հենվերդ Ալեքսանդր Երիցյանի ելակետային այն դրույթի վրա, որ այդ երկու ժողովածուների ծնունդը կապված է Կովկասում հայ մամուլի սկզբնավորման գաղափարի հետ, աշխատության հեղինակը հանգանանորեն քննարկում է այդ ժողովածուները, արժեքավորելով դրանք իրեն 19-րդ դարի 30-ական թվականների գրական հրապարակախոսական մտքի արտիհայտություն:

«Ներսիսյան» դպրոցի աշակերտների գրական ժողովածուն իր վրա է կրում դպրոցի արժանավոր տեսուչ Հարություն Ալամդարյանի իրոր ազդեցությունը: Բանասիրական պրպոտումների միջոցով Ալիքարյանն ապացուցում է ժողովածույուն տեղ գտած անսորագիր բանաստեղծությունների Ալամդարյանին պատկանելու հարցը: «Երախայրիք»-ի գրական ստեղծագործությունների մեծ մասում հեղինակները ցննություն են արտահայտում Արևելյան Հայաստանի պարսկական լծից ազատագրվելու առիրով, փառաբանում Ներսես Աշտարակեցու և Հարություն Ալամդարյանի հայրենանվեր գործունեությունը:

«Երախայրիք»-ի հրատարակությունից մեկ տարի անց ուսուցիչ Սիլիքյան Սալլամբյանի դեկավարությամբ լոյս տևակ «Լազարյան» ճեմարանի սաների գրական ստեղծագործությունների ժողովածուն՝ «Մողաք Արարատյան» խորագրով: Այն ևս, ինչպես առաջինը, կազմը ված է երկու մասից: «Քերթվածք նանկանց» վերնագրով առաջին մասի բանաստեղծությունների գգալի մասը նվիրված է Լազարյանների տոնի փառաբանությանը, Մոսկվայի հայ գալրօջախի դերի գնահատմանը: Ժողովածուի երկրորդ մասը բննության է առնում լուսավորչական և կարողիկ եկեղեցիների դավանաբանական տարրերությունները և ընդգծում է այն միտքը, որ բոլոր եկեղեցիներն ել պետք է անկախ լինեն, ոչ մեկը շատորադասի մյուսից: Այս բաժինը, որ կազմված է հարց ու պատասխանի ձևով, բացահայտում է ճեմարանի սաների մեծ ունակությունը բանավիճային արվեստում: Որզ ժողովածուն շնչում է հայրենասիրության տմզին զգացումով և դրանով վարակում է ընթերցողին: Ազգահավաքման կոչերով, ազատասիրական գաղափարների արձարձնամբ, Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալու պատմական ակտի ըստ արժանիքուն գնահատմանը, ժողովածուն մի երևոյթ է դառնում արևելահայ մշակութային կյանքում: Աշխատության այդ գլուխն աշքի է բնկնում իր բարձությամբ, նոր խոսքի տմզնությամբ: Հեղինակի աշքից չի վրիպում երկու ժողովածուների քերած նորությունը հայ հասարակական մտքի պատմության մեջ և, ըստ այդմ էլ, արժանանում է բարձր գնահատականի: Առանձնապես մեծ ջերմությամբ է շարադրված այդ զիվի երրորդ բաժինը՝ «Ապագայի ծրագրեր» վերտառությամբ, որը նոր խոսք է ատկում Խ. Արովյանի, նրա ուսուցիչ Հարություն Ալամդարյանի մասին: Առավել գնահատելի է այն հանգանանքը, որ Ս. Սիմիքարյանը զերծ է մնում իր նախորդ հետազոտողների միայն բացասական կամ միայն դրական (սև և սպիտակ) միակողմանի գնահատականներից, այլ կատարում է բարեխոլդ օրեկտիվ վերլուծություն և տալիս առավել հավատարակշռված գնահատական:

Աշխատության երկրորդ մասը նվիրված է «Կովկաս» շարաբարերքի ըննությանը: «Կովկաս»-ը ոչ թե ուստերեն «Կավկազ» պաշտոնական օրգանի հայերեն ճյուղն էր, այլ ինքնուրույն մի մարմին, որը մեծ դեր կատարեց Թիֆլիսի հայության կյանքում: Չնայած այն հանգանանքին,

որ թերքն ստորագրում էր ուսւ խմբագիր Կոստանդինովը, սակայն նա չէր խառնվում ոչ միայն նյութերի ընտրությանը, այլև դրամական հաշվներին: Այդ գործը մեծ արժանապատվությամբ իրականացնում են նրա հայ գործընկերները՝ Հակոբ Արզամանը և Հակոբ Կարենյանը, իսկ մեկ տարի անց նրանց է միանում Գարրիել Պատկանյանը: Այստեղ առավել և այն աշխի է ընկնում գիտական նյութի մատուցման մեծ հմտությամբ, շարադրանքի կոտ պլանավորմամբ ու ծրագրավորմամբ: Երկու տարվա վաճանք ունեցած շարադրերը ենթարկվում է համակողմանի ըննության, բացահայտվում են շարադրերի իրատարակման նախապայմանները, ժամանակի հասարակական կյանքում ընթացող մակընթացություններն ու տեղատփությունները: Շարադրերը գնահատվում է իրեն ժամանակի տարեգիր, ընդդիմում նրա դերը անցյալ դարի 40-ական թվականների լուսավորական շարժման մեջ, ըննարկվում այնտեղ մշակված ծրագրերը, որոնք նպատակամդիմում էին դպրոցական գործի բարելավմանը: Մեծ հետաքրքրությամբ է ընթերցվում շարադրերի հետ ունեցած Արովյանի առնչությունների մեկնարաբանումը: «Կովկաս»-ի գրական դպրոցի ներկայացուցիչների՝ Գալուստ Շերմազանյանի, Սովուս Չոհրաբյան Արցախեցու և մանավանդ Գարրիել Պատկանյան բանաստեղի, ազգագրագետի, ըննադատի և բանավիճողի կերպարների բացահայտումը, ընթերցող հասարակության նրանց գործունեությանը ծանոթացնելը աշխատության լավագույն էջերն են և ընթերցվում են շնարող հետաքրքրությամբ: Այդ բաժինն աշխի է ընկնում նոր անունների և դեմքերի, դեպքերի, մշակութային կյանքի և գործունեության ներմուծումով, ուսական պարերական մամուլի տարրեր օրգանների հետ ունեցած առնչություններով և նույնիսկ նրանցից ունանց հետ ունեցած բանավեճով: Այդ հենքի վրա է կերտվում Գարրիել Պատկանյան բաղադրությունը, ազգային արժանապատվության բարձր զգացումով համակած մարդու և գործի կերպարը, որի ամբողջացումը շարունակվում է աշխատության հաջորդ՝ երրորդ մասում:

Աշխատության երրորդ մասը նվիրված է Գարրիել Պատկանյանի «Արարատ» շարադրերի հիմնադրման, ծրագրի, կառուցվածքի, լեզվի, ըննարկված հարցերի, նրանում տեղ գտած գրական ստեղծագործությունների արժեքավորմանը:

Ի տարբերություն «Կովկաս»-ի, «Արարատ»-ը իրատարակվում էր գրական աշխարհաբարով՝ «ամենեցուն հասկանալի» դառնալու մեծ ցանկությամբ: Իր ծրագրային հոդվածում խմբագիրն արտահայտում էր կյանքից անժամանակ հեռացած Խաչատոր Արովյանի ավանդներին հավատարիմ մնալու գաղափարը, հայ մամուլը և գրականությունը, մանկավարժությունը նրա գծած ուղիղվ դնելու անհրաժեշտությունը: Միիրարյանն ըստ արժանվույն գնահատում է Պատկանյանի ավանդը լեզվաշինության բնագավառում, ուսւերենին համարժեք նոր բառեր ստեղծելու և օգտագործելու կարողությունը: Առանձնապես արժեքավորվում է շարադրերին ընորոշ մանկավարժական ուղղվածությունը: Քահանա խմբագիրը ընթերցողին հասկանալի, մատչելի ձևով բացատրում է կրոնական տարրեր հասկացություններ, կրոնական տոներ և ծեսեր, մեկնարաբանում աստվածաշնչյան ավանդություններ: Սակայն նմանօրինակ նյութերի առկայությունը չը բացառում Գարրիել Պատկանյանի դրական վերաբերմունքը գիտական մտքի և գիտության նորագույն նվաճումների նկատմամբ: Այս տեսակետից ընորոշ է մարդակազմությանը, բնական գիտություններին նվիրված հոդվածները, առանձնապես՝ «Աստեղաբաշխական բաժինը», որ տպված հոդվածները ժամանակի բնակչության մտքի դիրքերից ընթերցողներին ծանոթացնում էր տարրեր մոլորակների հետ:

Աշխատության երրորդ մասի արժեքավոր գլուխներից է «Գարրիել Պատկանյան և Ներսես Աշտարակեցի» բաժինը, որը հանգանանորեն լուսաբանվում են հայ իրականության այդ երկու ակնառու դեմքերի առնչությունները, բարդ փոխհարաբերությունները: Ներսես Աշտարակեցի վիրխարի ֆենոմենը բացահայտվում է իր հայացքների և գործունեության բարդ հանգույցներով. Իմերերիայի թեմի հոգեւոր առաջնորդ, արտորական հոգեւորական և Բեսարաբիայի թեմի առաջնորդ, ապա կարողիկոս Ամենայն Հայոց անձնավորության գաղափարական էվոլուցիայով: Ընդհանրապես աշխատության առավել արժեքավոր էջերն են Ներսես Աշտարակեցի-Ալամդարյան, Աշտարակեցի-Պատկանյան հարաբերությունների պարզաբնությունը:

Աշխատության չորրորդ մասը վերաբերում է 19-րդ դարի 40-50-ական թվականների լուսավորական շարժմանը: Սա փաստորեն նաև

խայերսիսափայլյան շրջանն է, նորա հրատարակությանը նախորդող տասնամյակների պատմությունը: Չնայած աշխատության առաջարանում հեղինակը նշում է այն փաստը, որ Նազարյան-Նալբանդյան հարաբերության խնդիրը իրենից առաջ քննարկման առարկա է դարձել բանասերների և պատմաբանների կողմից, սակայն այս բաժինը և շահեկանորեն աչքի է ընկնում հարցադրումների բարմուրյամբ և իին կամ հայտնի փաստերը նորովի մեկնարաններու մեծ հմտությամբ: Արովյան, Ալամդարյան, Պատկանյան առաջին սերնդի հայ լուսավորիչներին փոխարինելու են գալիս երկրորդ սերնդի լուսավորիչները՝ Ստեփանոս Նազարյանը և Միքայել Նալբանդյանը:

Նազարյանը մեծ ջանքեր է քափում սկզբում Կազանում, ապս Անդրկովկասում հայ պարբերական մամուլի օրգան հիմնադրելու համար: Թույլտվություն ստանալու համար գրությանը կից դրված հրատարակելիք ամսագրի ծրագիրը բացահայտում է լուսավորիչ գործչի հայացքների լայն ընդգրկումը, հայոց պատմությունն ու գրականությունը, աշխարհագրությունն ու ընդհանուր պատմությունը, երկրագործությունն ու բնագիտությունը, վիճակագրությունն ու վաճառականությունը,- ահա համառոտ բվարկումը այն թեմաների, որոնց վերաբերյալ երիտասարդ լուսավորիչը պատրաստվում էր գիտա-մասսայական հոդվածներ հրատակել իր ապագա ամսագրում: Չստանալով այդ հնարավորագործունը, նա չի հուսահատվում և դիմում է գիտական հետազոտությունների ժամանքն. օգտվելով Կազանի համալսարանի ընձեռած հնարավորություններից, 1844 թ. նա ոռուելու հրատարակում է իր ուսումնասիրությունը՝ «Հայ գրականության պատմության բոուցիկ ակնարկ՝ սկզբնավորումից մինչև 13-րդ դարի վերջը» թեմայով: Երկու տարի անց նա ոռում է այդ հետազոտության շարունակությունը՝ «Նորագույն ժամանակների հայ գրականության պատմության տեսություն 14-րդ դարից մինչև մեր օրերը» գիրքը: Կապված լինելով ոռուական իրականության հետ և մեծապես կրելով ոռուական մշակույթի՝ մասնավորապես Բելինսկու հոգոր ազդեցությունը, Ստ. Նազարյանը հայ գրականությանը նվիրված իր վերոհիշյալ տեսությունները կազմում է Բելինսկու տարեկան տեսությունների ծեսով: Վեր հանելով և գնահատելով նախորդ դարերում, ապա իր ժամանակներում ստեղծված մշակութային արժեքները, Նազարյանն

բնրեցողի ուշադրությունն է հրավիրում հրատապ լուծում սրսանցող խնդիրների վրա: «Նրանցից ամենակարեւորը՝ գրական կենդանի լեզվի մշակումը և նոր գրականության ստեղծումը, Նազարյանը համարում է հայ ժողովրդի լուսավորության առաջին հիմնական գործոնը և նախապայմանը: Իր ուսումնասիրություններում Նազարյանը համակողմանիորեն քննարկում է հայ նոր գրականության ստեղծման հարցը. գրականություն, որ պատասխաններ նոր ժամանակների պահանջներին և հոգեղեն սնունդ տար երիտասարդ սերնդին: Միսիրարյանը դիտում է Նազարյանի այդ տեսությունները իրքն երկրորդ սերնդի լուսավորչի լուսավորական ծրագրի հավասու հանգանակ, որոնցով դրվում էին հայ լուսավորական շարժման գիտական հիմքները:

Արգասավոր էր Նազարյանի նախայուսափայլյան շրջանի գիտական, հրապարակախոսական գործունեաւրյունը. իր հրատարակած գործերում նա մշակեց գիտական աշխարհաբարի հաստատման և հարատացման ուղիներու: «Հանդես նոր հայախտառության» ուսումնական երկիատոր ծեռնարկը նրա բոլոր ծրագրերի հրականացումն էր և լեզվաշինարար հետինակի պրակտիկ գործունեության արտահայտությունը:

1850-ական թվականներին լուսավորական շարժումը ստացավ նոր երանգ ու փայլ Միքայել Նալբանդյանի մասնակցությամբ: 1853 թ. ամսունը Նոր Նախիջևանից մեկնելով Մոսկվա, նա այնտեղ գտավ իրեն գաղափարակից և հոգեհարազատ մի գործչի՝ Ստ. Նազարյանին և աշնանից սկսվեց նրանց համագործակցությունը: «Լազարյան» ճեմարանի այդ երկու դասախոսները գործնականում իրականացրին «Նազարյանի կողմից տեսականորեն հիմնավորված գրական աշխարհաբարի քաղաքացիական իրավունքների վավերացումը»: «Հայագստ հայկական մատենագրության ճառ» Նալբանդյանի աշխատությունը շարունակում էր սյաշտպանել Նազարյանի ոռուերեն լույս տեսած «Տեսություններ»-ի ավանդությունները: Գիտական մեծ բարեկանգությամբ քննարկելով Նալբանդյանի «Ճառ»-ի և Նազարյանի «Տեսություններ»-ի մասին, նրանց նմանությունների կամ տարբերությունների վերաբերյալ արտահայտած տնիստիր բոլոր կարծիքները, աշխատության հեղինակը գերծ է մնում ժխտելու կամ հաստատելու մինչ այդ հրատարակված թեզերից: Միսիրարյանը կատարում է մի բժախնդիր աշխատանք՝ համեմատելով մինչ

այդ լրուս տեսած Նազարյանի «Տեսություն»-ը և Նալբանդյանի «ճառ»-ը և հանգում մեր տեսակետով այն ճշշտ կարծիքին, որ «ճառ»-ի ծրագիրը լուսավորական շարժման այդ երկու խոշոր գործիչները մշակել են համատեղ: Դա նրանց ստեղծագործական պրոցեսի, համատեղ աշխատանքի արդյունքն էր, տվյալ դեսյրում կրտսեր բարեկամն իրականացնում էր ավագ զինակցի գաղափարները: Նալբանդյանի «ճառ»-ի ամենամեծ արժանիքը հայ գրականության իր ժամանակի արժեքներին տված նրա զնահատականներն են: Եթե քառասունական թվականներին Նազարյանը կրելով Բելինսկու ազդեցությունը, հայ գրականության պատմությանը նվիրված իր ուսումնասիրությունները գրում էր «Տեսության» ժանրով, ապա 50-ական թվականներին, այս անգամ արդեն Նալբանդյանը, դարձյալ Բելինսկու օրինակով, իր բննական խոսքն էր ասում հայ գրականության և մանուկի իր ժամանակի իրավիճակի մասին:

Առանձնակի հետաքրքրությամբ է ընթերցվում աշխատության չորրորդ մասի երկրորդ գլուխը՝ «19-րդ դարի 60-ական թթ. մեծ քանավեճի նախաշեմին» պատկերավոր խորագրով: Այս քաժնում քննարկվում են Նազարյան-Մսեր Մսերյան, Լազարյաններ և Մսերյան, Նալբանդյան և Մսերյան բարդ փոխհարաբերությունները, վերջինիս կապը Անդրկովկասի պահպանողական մտայնության տեր գործիչների՝ Առաքել Արարատյանի, Սարգս Զալայյանի և այլոց հետ: Հանգամանորեն թեսարկելով երկու թեր տեսական և զեղարկվեստական ստեղծագործությունները, աշխատության հեղինակն իրավացիորեն գտնում է, որ նրանց միջև մղվող գաղափարական պայքարը արտացոլում էր լուսավորական շարժման գործիչների առաջադիմական-վերսանորոգչական ձգտումների և կղերաֆեռողական հոսանքի գործիչների բախումները:

Աշխատությունն ավարտվում է: «Հյուսիսափայլ»-ի հեղինակը ակտով, այն արձանագրվելով իր հայ հասարակական կյանքի վերելքի նոր փուլի սկիզբ: Աշխատությունն ընթերցվում է շրուլացող հետաքրքրությամբ: Հարկ ենք համարում առանձնապես շեշտել հեղինակի գիտական բարեխնդությունը: Զկա մի որևէ հարցադրում, որի մասին նշյալ հեղինակը: Հատ արժանվոյն զնահատվում են բոլոր ուսումնասիրությունների կատարած աշխատանքները, նոր միայն նշվում իր բերած նորը: Աշխատության արժանիքներից թերևս ամենամեծը նրա հանրագի-

տարանային բնույթն է: 19-րդ դարի երկրորդ տասնամյակից մինչև վեցերորդ տասնամյակը արևելահայ հասարակական կյանքում գործող բազմաթիվ հայտնի և անհայտ հասարակական գործիչների, ենթաների մի շեղ պատկերաբան է հառնում ընթերցողի աշքի առջև, ընդլայնելով նրա նտահորիզոնը բազմաթիվ նոր իրադարձություններով, հասարակական կյանքի ալերախումներով:

Թերևս կարելի է իրեկ դիտողություն նշել, որ «Երախայրիք Ներսիսյան դպրոց»-ի, «Մուգայք Արարատյան» ժողովածուների, ապա «Կովկաս» և «Արարատ» շաբարաթերթերի գրական ստեղծագործությունները թեսարկվում են խիստ հանգամանորեն, ընդլարձակ և մանրամասն, ծզձգված և մեջքերումները: Մեզ բփում է, կարելի էր սեղմել այդ բաժինները: Սակայն կարող ենք նաև արդարացնել մանրամասն և երկարաշունչ գրելու հեղինակի այդ միտումը: Վերոհիշյալ ժողովածուներն ու մանուկի այդ օրգանները փաղուց դարձել են մատենագիտական հազվագյուտ արժեքներ և ոչ մատչելի լայն ընթերցող հասարակության համար: Այդ գրքով ընթերցողը հնարավորություն է ստանում լաւ ամենայնի գաղափար կազմել նրանց մասին և այդ ձևով հաղորդակցվել նրանց:

Առանձնահատուկ ուշադրության են արժանի հեղինակի ծանրագրությունները, որոնք ամեն մեկը մի դեպքի կամ փաստի պարզաբնուն են և անպայման ընդլայնում է ընթերցողի նտահորիզոնը, դրանից բացի դշգրտումները են մտցնում մինչ այդ տարրեր փաստերի մեկնարանությունների մեջ: Հեղինակի գիտական բարեխնդության և բարոյական բարձր չափանիշների արտահայտություններ են դրանք, մանաւագնի, երբ ուղրումներ և մտցվում տարիներ առաջ նոյնիսկ իր կողմից հրատարակած փաստերի մեջ:

Աշխատությունը գրված է անգերազանց հայերենով, շարադրված է հստակ և կուր տրամաբանությամբ: Այստեղ տեղին է նշել՝ ոճն ինքը մարդն է: Մ. Միհրարյանի գիտական ձեռագիրը հնարավոր չէ շփոթել որիշների հետ: Ամփոփենք. ընթերցողի սեղանին է դրված մի ուշագրավ աշխատություն, որն աներկայորեն նվաճում է արևելահայ մանուկի պատմության ուսումնասիրության մեջ:

Ասպարեզ, Լու-Անցելես, 14 մարտի, 1995:

ՀԱՅ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԴԵՐԸ ՍԱՍՈՒՆԻ 1894 Թ. ԱՊԱՏԱՄԲՈՒԹԵԱՆ ԸՆԹԱՅՔԻՆ

Երկու տարի առաջ լրացաւ Սասունի 1894 թ. ապատամբութեան հարիսը տարին: Քրդական համիլիէ գնդերի և բուրքական կանոնաւոր բանակի դէմ նրուած այս հերոսամարտ-գրյամարտը, ապա նրան յաջորդած արինանեղ կոտորածները մեծ արձագանգ առաջացրին ողջ աշխարհի հայութեան մէջ: Սասունի ապատամբութեան նախապատրաստութեան, ազգային զարքօնքի, ինքնազիտակցութեան արքնացման մէջ իրենց պատկառեղի լուման ներդրին հայ հոգենորականները: Այս յոդուածը մի համեստ փորձ է նրանց աւանդը գնահատելու ասպարեզում:

Պետականութիւնից գորկ հայ ժողովրդի համար Հայաստաննայց եկեղեցին ճշտապէս կատարել է հոգեւորի հետ նաև աշխարհիկ ֆունկցիաներ: Թէ՛ արեւելեան Հայաստանում, եւ թէ՛ առաւելապէս արեւելեան Հայաստանում, Ամենայն Հայոց Կարողիկոսութիւնը և Կ. Պոլսի Հայոց Պատրիարքարանը վարում էին հայութեան ներքին գործերը, կարգադրում հայութեան յարաբերութիւնը տիրող պետական վարչական օրգանների հետ:

Սասունը պատմական Տարօնի մի մասն էր և ենթարկուում էր Տարօնի հոգեւոր առաջնորդությանը: 19-րդ դարի 60-ականների սկզբից՝ 1862-ին Տարօնի հոգեւոր առաջնորդ Ս. Կարապետ վանրի վանահայր նշանակուեց Վարազայ վանահայր Ակրտիչ Խրիմնեանը, որն արդէն յայտնի անուն էր արեւմտահայ իրականութեան մէջ «Արծոի Վասպուրականի» ամսագրով, Վարազայ վանրի «Ժառանգաւորաց» վարժարանով և իր ծառալած ժողովրդանուեր գործունեութեամբ: Խրիմնեանը իր հետ Տարօն տարաւ իր նախկին սամին և մերձաւոր գինակցին՝ Գարեգին Սրուանձտեանցին, և նրա խմբագրութեանը 1863-ի Ապրիլին Ս. Կարապետ վանրում սկսեց իրատարակուել «Արծոիկ Տարօնոյ» երկարաբերքը՝ Տարօնի առաջին պարբերական մամուլը: Ժամանակակիցների և ուսումնասիրողների վկայութեամբ մեծ էր «Արծուիկ»-ի դերը ազգային ինքնազիտակցութեան արքնացման, հարկահաւաքների, պետական պաշտօնեաների և բիւրդ աղաների ապօրինութիւններն ու հարստահարքիւնները բոլորների տեսրով Կ. Պոլսի Հայոց Պատ-

րիարքարան ու Բարձր Դուռ հասցնելու գործում: «Արծուիկ»-ը ժողովրդին սովորեցնում է «առիւծ լինել» գայերի ոհմակի դէմ պայքարելու համար: Քաղաքական մատնուրեամբ «Արծուիկ»-ը փակուեց, սակայն Խրիմնեան ու Սրուանձտեանցը շարունակեցին իրենց գործունեութիւնը Տարօնում և մանաւանդ Ս. Կարապետի վանրում: Այդ վանրի հիմնադրումը աւանդութիւնները կապում էին Գրիգոր Լուսատորիչի հետ. «Սուրբ Կարապետը տեսակ մը կեղրոնական արոռ էր պատմութեան ըմբացքին, Էջմիածնէն ետք ամէնէն ազդեցիկ ու համահայկական արոռը կը նկատուիր, բուն Գրիգոր Լուսատորի կողմէ հիմնադրուած: Այդ հանգամանքով Ս. Կարապետի վանահայրը ամբողջ թեմին վանահայր ու առաջնորդն էր»¹: Ս. Կարապետի «Ժառանգաւորաց»-ը նշանաւոր էր, սակայն համարեա բոլոր վանրերն ունեն իրենց դպրոցները. Առաքելոցը կամ թարգմանչացը, Ս. Ցովհաննու և Ամրտոլու վանրերը, Ս. Դանիէլի և այլն:

Սասունը սերտօրէն կապուած էր Ս. Կարապետի, Ս. Ցովհաննուի և Առաքելոց վանրերին: Ս. Ցովհաննու գտնուում էր Սասունյ Կուրտիկ լերան կողերին, իսկ Առաքելոցը՝ Ծիրին կատարի ստորոտին՝ մի քարձուանուակի վրայ: Սասունցինների գլխաւոր ուխտատեղին վերը նշուած երեք վանրերն էին: Սասունցիպատանինների մեծ մասը իրենց կրութիւնն ստացել էին այդ վանրերի վարժարաններում, մօր կարի հետ սնուել ազատափական գաղափարներով: 80-ականների ազգային-ազատագրական շարժման առաջին սերնդի հայ յեղափոխութեան նախակարապետներն ու առաջին ֆիլայինները յաճախել են այդ վարժարանները, իրենց հոգեւոր սնունդն ստացել Խրիմնեանի ու նրա սաների գաղափարական մքննորդուում: Այդ երեք վանրերից բացի Սասունյ լեռնաշխարհի ամէն մի զաւառակն ուներ իրեն մերձակայ վանքը. Շատախը՝ Ս. Արքունին, Շենիկը՝ Կարմրավանքը, Խուոր Բոնաշէնը՝ Ս. Աղքերակայ նշանաւոր վանքը, Մոտկանն ու Փանիքը՝ Ս. Մարտուկը և այլն... 90-ականներին այդ վանրերի միարանութեան անդամների մեծ մասը Խրիմնեանի սաներն էին: Նրանք, անհրաժեշտութեան դէպում, պատսպարում էին ֆիլայիններին, նրանց համար գէնը և ուտելիք հայրայրում:

¹ Կ. Սասունի, «Պատմութիւն Տարօնի Աշխարհի», Պեյրուր, 1957, էջ 289:

Այսպէս, դեռ Արարոյի ժամանակներում Արտօնությունը վաճրի բոլոր ծակու-
ծովերին քաջատեղեակ Գելորգը, որ Արարոյի խմբի անդամ էր, աննկա-
տելի մտնում է այդ վաճրը, ներկայանում վաճահայր Յովհաննէս Վար-
դապետին, որը մի քանի օր պատսպարում է նրան և իր ընկերներին,
քաքնում վաճրի նկուղներում, ապա գենքեր հայրայթելով ճանապար-
հում Սասնոյ լեռները¹:

1888-ին Ա. Կարապետի վաճահայր Գրիգորիս Ալեաքճեան հայրե-
նանուէր եպիսկոպոսը Բարձր Դրան կողմից հեռացուեց վաճահայրու-
թինից և արսորուեց Կ. Պոլիս: Նրան յաջորդեց Գարեգին Արուանձ-
տեանցը, որը միաւորեց Տարօնի հոգեւոր առաջնորդութիւնը և Ա. Կա-
րապետի վաճահայրութիւնը: Սակայն նրա ժողովրդանուէր գործունե-
թիւնը իր վրայ իրավիրեց քուրք պաշտօնեաների ուշադրութիւնը, խիստ
հսկողութիւն սահմանուց ոչ միայն նրա գործունելութեան, այլ ստեղծա-
գործութեան նկատմամբ: Ազատազրական շարժման վերելքի այլ տա-
րիներին բորբական կառավարութիւնը հանդուրժեց նրա ներկայությունը
Տարօնում ընդամենը ուր ամիս: Կարճ ժամանակ Տրավիգոնի հոգեւոր
առաջնորդի պաշտօնը վարելուց յետոյ, իբրեւ քաղաքականապէս ան-
բարեյոյս անձնաորություն նա արսորուեց Կ. Պոլիս, որը դարձել էր
անհնագանի հոգեւորակների և մտաւորականների արտրավայր:

Տարօնից Արուանձտեանցին հեռացնելուց անմիջապէս յետոյ նրան
փոխարինեց (1888 թ. դեկտեմբերին) Ներսէս վրդ. Խարախանեանը: Տա-
րօնի և մասնաորապէս Սասունի կեանքում մեծ դեր խաղացած այդ
վարդապետը ծնուել է Մշոյ դաշտի Արան գլխում, կրտորինը ստուցել է
Ա. Կարապետի վարժարանում, նոյն վաճրում էլ ընդունել է կուսակրօ-
նութիւն և ձեռնադրուել վարդապետ: Երիտասարդ հոգեւորականի
ազատասիրական նկրտումները երեւան եկան դեռևս 70-ականների
վերջին: 1877-ին քրդական Տմիկ ցեղախումբը սպառնում է վաճրի միա-
բանութեանը. սպասվում էր նրանց յարձակումը վաճրի վրայ: Վարդա-
պետների մեծ մասը փախչում է վաճրից: Մինչ վաճրի վաճահայր
Մամբրէ եպիսկոպոսը պաշտպանութիւն խնդրելով դիմում է կառավա-
րութեանը, Ներսէս Խարախանեանը կազմակերպում է վաճրի ինքնա-

պաշտպանութիւնը, յորդորելով մնացած վարդապետներին և վաճրի
մշակներին՝ գերադասել պատուաոր մահը, քան բոլ տապ քրդերին
սղծել վաճրը և աւարի ու աւերի մատնել այն: Դա նրան յաջողությ է:
Այդ ժամանականից նա շահում է տալուահայրեան ջերմ սէրն ու
համակրանքը:

1888-ի դեկտեմբերից փոխարիններով արտրուած Արուանձտեան-
ցին, Խարախանեանը շարունակում է վերջինիս և Խրիմնանի աւան-
դոյրները, հակում «Երկարէ շերեփ»-ի նտայնութեանը: Ժամանակա-
կիցների վկայութեամբ նա համարուել է յեղափոխական վարդապետ և
իր գործունելութեամբ նպաստել է ազատազրական շարժմներին:

Միիրան Տարօնեանի ձերբակալութիւնից յետոյ Սասուն է մտնում
Համբարձում Պոյաճեանը (Մուրատ): Կառավարութեան տեղական
պաշտօնեաներին զգում են նոր գործչի առկայութիւնը, սակայն չեն կարո-
դանում պարզել նրա ինքնութիւնը: Այդ նպատակի համար Բիբլիսի ճա-
հանգապետը ճնշում է գործադրում նրա վրայ և յաջողութեան շհասնե-
լով պահանջում հոգեւոր առաջնորդի բանտարկութիւնը: Սարգիս Բղէ-
եանը գրում էր. «Առանց առաջնորդի վկայութեան կարելի քան չէր, որ
յեղափոխական անձեր կարենային պատսպարան գտնել Սասունի
մէջ»: Հիմնաւոր էր բուրք նահանգապետի կասկածը, որովհետեւ սա-
սունցին յեղափոխութեան քարոզիչներին տեղում ընդունելու համար հո-
գեստը առաջնորդի կարծիքն ու համաձայնութիւնն էր հարցնում: Եթ նրա
տուած կարծիքի համաձայն նորեկ գործիչը կամ մերժում և կամ ըն-
դունում էր: Կասկածամիտ նահանգապետը հսկողութիւն սահմանեց
Խարախանեանի վրայ: Նպատակին հասնելու համար որոնում էին
մատնիչների, որոնց յօրինած գրպարտութիւններով հնարաւոր էր «գաս
ու դատաստան» կազմակերպել: Ձերբակալութեան առիթը չուշացաւ:

1883-ին Տարօնում տաստիկ երաշտ էր: Ա. Կարապետ վաճրի ցան-
քատարածութիւնից աննշան քերը հաւաքուեց: Վաճրի կարիքները հո-
գալու համար հանգանակութեան իրաւունք ստանալով Մշոյ փաշայից,
Խարախանեանը շրջում էր Տարօնի գատառները ժողովրդից ցորեն հա-
ւաքելու: Շրջագայութիւնների ուղին անցնում էր Պոլանը, Կեննով. նա
քարոզում և մխիթարում էր ժողովրդին, յուսադրում՝ հաւատ ներշնչում
սեփական ուժերի նկատմամբ: Մի քանի դաւաճաններ Մշոյ գայմազա-

¹ Ուրեմ, «Հայ Յեղափոխականի մը յիշատակները», հ. 3, էջ 121:

մին հաղորդում են, որ Ներսէսը ցորեն է հաւաքում ոչ թէ վանքի կարիքների, այլ յեղափոխական ընկերութիւններին օգնելու նպատակով: Հիմնաւոր կասկած... Սինչ այդ տեղի էին ունեցել Սաստինի 1893 թ. հայրդական ընդհարումները: 1893-ի իրադարձութիւնները ցոյց տուին, որ կառավարութիւնը համիլիտ գնդերը կազմակերպել է միայն ու միայն հայկական յեղափոխութիւնը իր բնում խեղդելու, քրդերի ձեռքով հայերի հետ հաշուեյարդար տեսնելու նպատակով: Հենց այդ իրադարձութիւնները հիմք հանդիսացան, որ 1894-ի ինքնապաշտպանական կոինիներից մէկ տարի առաջ Խարախսանեանը կազմեց մի ընդարձակ տեղեկագիր Բաղէջի նահանգի (որի կազմի մէջ էր Սաստինը) ընդհանուր վիճակի վերաբերեալ: Տեղեկագիրը Խարախսանեանն ուղարկեց Կարինի հոգեւոր առաջնորդ Դեւոնի եպս. Շիշմանեանին, որպէսզի վերջինս այն յանձնի տեղի անզիշական փոխհիմնապոս Հովկորդին: Թուրքական իշխանութիւնների նկատմամբ ունեցած երկիրդից Կարինի առաջնորդը տեղեկագիրը շխասցրեց ըստ պատկանելոյն: Սիայն 1895-ի ապրիլին անզիշական "Daily Telegraph"-ի թղթակիցը ձեռք բերեց այդ տեղեկագիրը և իրատարակեց այն նոյն բոլոր ապրիլի 13-ին: Ծանօթութիւնը տեղեկագրի բովանդակութեանը պարզում է մի հետարքիր հանգամանք: Դեռ 1893-ին՝ Սաստինի ապստամբութիւնից մի տարի առաջ, Խարախսանեանը տարակոյսներ էր արտայայտում Սաստինի վիճակի վերաբերեալ և նշում, որ կառավարութիւնը հանդէս է զայս սաղրիչի դերում:

Յեղափոխականներ որոնելու և բանտարկելու պատրուակի տակ կառավարութիւնն ուժեցանում է իր հալածանքները: Մասնաւոր ուշադրութեան առարկայ են դառնում վանքերը, որոնք դիտում են իրեն յեղափոխականների ապաստարան: Առանց հաշուի առնելու ժողովրդի կրօնական զգացումները, ոստիկանները ներխուժում են վանքերը, խուզարկում սրբատեղերը: Տարօնը զլսատելու նպատակով առաջին հարուածը հասցուում է հոգեւոր առաջնորդին: 1893-ի մի զիշեր կանոնաւոր գօրքերը շրջապատում են Ս. Կարապետ վանքը և ձերքակալում Ներսէս Խարախսանեանին: Անզիշական "Daily Telegraph"-ը այդ բանտարկութեան համար մեղայրում է Ս. Կարապետի միաբանութեան մի քանի վարդապետների, որոնք հոգեւոր առաջնորդին մատնեցին կառավարութեանը իրեն Տամատեանին համախոհ ու կուսակից, Պոյաձեանին հովանու-

րու: Սակայն նա միակը չէր: Բազմաքի հոգեւորականներ քանտ են նետում յեղափոխական լինելու ամբաստանութեամբ: Ձերքակալուեցին նաև Ս. Յովհաննէսի վանահայր Առաքել Վարդապետը և Վարդան վրդ. Յակոբեանը: Սակայն այս երկուոր շուտով արձակուեցին քանտից յանցանշանների խսպատ բացակայութեան պատճառով: Ձերքակալուած հոգեւորականների քում էին Սուշից Ղազար Վարդապետը, Կոփայ Ս. Դանիէլ վանքի վանահայր Սիմեոն վրդ. Յովհաննիսեանը, տեղի քահանայ Խորայէլ Զիրկասեանի և Համզաշէս գիտի 12 գիտացինների հետ: Վերջիններիս ամբաստանում էին հոգեւորականների յորդորանքով յեղափոխական ընկերութիւններ կազմելու և արտասահմանից զէնք ու զինամքերը փոխադրելու մէջ: Ամբաստանութեան մէջ նշում էր, որ երիտասարդների այդ գործողութիւնները դեկավարում է Սիմեոն վարդապետը, իսկ շոբայի ծայրը հասնում էր մինչեւ Ներսէս Խարախսանեանը:

Ձերքակալուած հոգեւորականները Կարին թերուեցին և խիստ հսկողութեան ներքոյ, կապաճններով տարուեցին Կ. Պոլիս: Հոգեւորականների հետ բանտերում վարդում էին առաւել խստութեամբ, նրանց ենթարկում աներեւակայելի լլկանքների և կոտաճնների: Բանտարկուածների մնձ մասը իր վրայ կրելով բուրքական բանտերի ողջ սարսափները, այնուեղ մնաց մոտաւորապէս երեք տարի: Սիայն Սաստինի ապստամբութեան պարտութիւնից և սանձադերծուած կոտորածներից յետոյ, նրանց ողջ մնացած մասը արձակուեց քանտից՝ նորընտիր պատրիարք Մատրէս Իզմիրեանի պահանջով և միջնորդութեամբ:

Խարախսանեանի բանտարկութեան ժամանակ Տարօնի առաջնորդութեան բավիուր արոռը ժամանակատրապէս անցաւ Առաքելոց վանքի փոխվանահայր Յովհաննէս վրդ. Սուրալեանին, որը եւս մնձ յարգանք էր վայելում իր ապատասիրութեամբ և օգտագործեց ողջ կարողութիւնները ճգնաժամային այդ օրերին «ժողովրդին ծխացող ցաւերը ամորելու համար»¹:

Խարախսանեանի բանտարկութեան լորմ առնելով, քողնելով Կենածի հոգեւոր առաջնորդի պաշտօնը, Ս. Կարապետ և շտապում Վարդան վրդ. Յակոբեանը, որպէսզի բախուր շնուայ վանքի վանահօր պաշտօնը:

¹ Ս. և Ս. Բդէհան, «Հարազատ պատմութիւն Տարօնոյ», էջ 60:

Երկար ժամանակ նա վարում է վաճահայրութիւնը մեծ ձեռնհասութեամբ: Լեզենդար ու առասպելական, անձնուրաց ու անձնագործ այդ համեստ վեղարաւորը ասք էր դարձել դեռ իր կենդանութեան օրոք: Ոչնչով աչքի շընկնող, համեստ, պարզ կրօնաւորի հագուստով այդ մարդը առաջին ակնիքարք բողոքում էր մենակեաց վարդապետի տպաւորութիւն: Խրիմեանի ժամանակներից մինչեւ Եղերական 1915-ը նա եղել է Տարօնի և մասնաւորապէս Սասունի բոլոր գլաքերի և իրադարձութիւնների եւ վկան, եւ ակտի մասնակիցը, եւ ժողովրդական առաջնորդը: Պատահական չէ, որ նրա յեղափոխական ծածկանուններն էին Յեսու և Վկայ: Նրա ողջ գործունեութիւնը համապատասխանում է աստուածաշնչեան Յեսուին՝ ժողովրդական առաջնորդին:

Ծնուել է Սասունի Ակրոնի գիտում, սովորել Ս. Կարապետի «Ժառանգաւորաց»-ում, ներշնչուել Խրիմեանով և աստիճանաբար դարձել հոգեւորի հետ նաև յեղափոխական առաջնորդ: 1893-ի հայ-քրդական ընդհանրումներից յետոյ, միս գործիչների նման զգում է գալիք մարտերի անխուսափելիութիւնը և խորհրդակցելով Սասունի իշխանների, մասնաւորապէս Գրգորի և ամենահեռատէս յեղափոխական Արմենակ Ղազարեանի (Դժոխը Հրայր) հետ, միաւորեցին ողջ ուժերը և մեծ ջանքեր քափեցին Ֆարդինից գենք ու կապար Սասուն փոխադրելու համար:

Ակրոնը գիտը Խուլփի կենտրոնն էր, որ գործում էր Աննա մայրիկը՝ Վարդան վարդապետի գարմուիին (Կարծ Սասունիի մայրը): 1893 թ. աշնանից սկսած Վարդան վարդապետի օգնութեամբ, իշխան Գրգորի եօթը կտրիծ սասունցիներ դեռ ձիմք շրած մտնում էին Ակրոնը, այստեղից անցնում Ֆարդին, ապա վստահելի ջորեպանների ուղեկցութեամբ լեռնային անանցանելի կածաններով գենք ու զինամքերը էին փոխադրում Ակրոնը, այստեղից էլ Տալորիկ, Շենիկ, Գելիեգուգան, Սեմալ: Ինչպէս վարդապետը, այնպէս էլ Սասունյ իշխանները համոզուած էին, որ գալիք 1894-ը ուժին յարձակումների և ընդհարումների, մեծ պայքարի տարի է լինելու: Յամառ դիմադրութեան էին պատրաստուում Սասունի բոլոր գիտերը: Սասունցին այլընտրանք չունիր: Գոյատեսման այդ դաժան պայքարում նա պիտի պաշտպանէր իր ազատութիւնն ու գոյութեան իրաւունքը: Այդ գործում դժուար է գերազ-

նահատել Վարդան վարդապետի դերը: Խրատացի էր Ռուբեն Տէր Սինասեանը, երբ զրում էր: «Երէ հնար լինէր կերպով մը ներկայացնել Վարդան վարդապետի կենսագրութիւնը, ասով արդէն պիտի պատկերանար Դուրսան-Քարձրաւանդակի ժողովրդի ամբողջ կեանքը»¹: Զարմանալի էր այն հանգամանքը, որ նա մեծ ճասամբ կարողանում էր խուսափել բանտից, հալածանքից և հետապնդումից: Դա նրա ճարպիկ ու նորք դիմանագիտութեան շնորհի էր: Ս. Կարապետ վանքի նուիրատուութիւններն ու հարատութիւններն նա օգտագործում էր բուրքական տարբեր պաշտօնեանների կաշառելու համար: Նրա կաշառների և լարած քակարդների շնորհի պաշտօնանկ էին լինում շատ պիտական պաշտօնեաններ, տարբեր բրդական ցեղեր պառակտուում էին և սկսում փոխադարձ կրիներ, հնարաւորութիւն տալով հայերին փոքրինչ ազատ շնչել: Խակ որտեղ կաշառը անհնար էր, Վարդան վարդապետը մեծ հմտութեամբ կազմակերպում էր անքարեյոյս անձնաւորութիւնների ահարեկում: Մեծ էր Վարդան վարդապետի դերը Սասունի ապստամբութեան պարտութիւնից յետոյ, 1895–96 թթ., երբ երուպական բննիչ յանձնաժողովը ժամանեց Սասուն: Վարդան Վարդապետին յաջողուեց, ինքը սովուերում մնալով, կազմակերպել ցոյցեր և հանրագրութիւններ, որը պարզաբանում էր ժողովրդի անտանելի կացութիւնը, կառավարութեան հայահալած քաղաքականութիւնը: Հակառակ բուրքական պաշտօնեանների ջանքերի՝ բննիչ յանձնաժողովի անդամների համար ակնյայտ դարձաւ ճշմարտութիւնը:

"Daily Telegraph"-ը 1895-ի Փետրուարի 27-ին հաղորդում էր, որ բուրք պաշտօնեանների կալմից կաշառուած մի քանի հոգեւորականներ, մասնաւորապէս Ս. Կարապետի միաբանութեան անդամներ երուպական Յանձնաժողովին ցուցմունք են տուել, թէ հայերի մէջ «իրօք մի վստանքաւոր յեղափոխական շարժում կար օրինաւոր կառավարութեան դէմ և ապստամբութեան նշանը արդէն տրուած էր օսմանեան զնդերին որեւէ իրացան արձակելուց առաջ և բուրք զինուորների վճռական ընթացքը հայ գիտացոց յամառ դիմադրութեան հետեւանք էր»: Անզիսական նոյն բերքը կասկածի տակ էր տանում այդ յայտարա-

¹ Ո. Տէր Սինասյան, «Հայ Յեղափոխականի Մը, Յիշատակները», հ. 3, էջ 130:

բութինը եւ տարակասում, թէ ինչպէս բացատրել այն հանգամանքը, որ հայ զիտացիները ոչ մի քուրք զինուոր չեն սպանել, իսկ հակառակը՝ անքի: Թերքը մեղադրում էր բուրքամէտ վարդապէտների գործունութիւնը եւ աւելացնում, որ նրանք Սասունում չեն եղել: Ահա այդ վարդապէտների շարունակուող դարանական արարքները կանխելու համար Վարդան վարդապէտը դիմեց ծայրայեղ միջոցների: Սկզբում Սոկոնը մօտ սպանուեց Տէր Բարսեղը: Կարապետ վրդ Եսայեանը եւ նրա կարգակից մի քանի հոգեւորականներ առժամանակ դադարեցրին իրենց ազգադաւ ընթացը: Կառավարութիւնը շաջողուոց իրեն նպաստ հանրազրութիւնների ստորագրութիւնների անհրաժեշտ բին ապահովել: Այնուհետեւ Վարդան վարդապէտի գործունութիւնը նպատակամդուոց սասունցիներին սովոր ճիրաններից փրկելու եւ իրենց օճախների վրայ հաստատ պահելու ուղղութեամբ: Նա ուղ ուժերով դիմակայեց կառավարութեան՝ Սասունը հայարափ անելու ջանքերին եւ դա նրան յաջողուոց: 1895-ի վերջերին Սասունը համարեա վերականգնուած էր: Մեր խնդրից դուրս է անդրադանակ հայրենասէր վարդապէտի ողջ գործունեութեանը, որն իր աւարտին հասաւ 1915-ին: Հայրենասէր հոգեւորականը իր մահկանացուն կնքեց Եղեռնի սեւ օրերին, մինչև վերջ անդաւաճան ծառայելով իր ժողովրդին եւ նրա հետ ընպեսվ մահուան բաժակը, այրուեց քուրք բարբարոսների խառոյիկ վրայ:

Բարձրաստիճան այդ հոգեւորականներից բացի Սասունի ապստամբութեան ժամանակ իրենց համեստ մասնակցութիւնն են քերել տեղի քահանաները: Պատմութիւնը խնամքով անքեղել է այդ հայրենասէրների անունները, որոնք յաճախ խաչը փոխարինել են հրացանով եւ գենքը ձեռքին պայքարել են հաստի, են հայրենիքի համար: Ալ վախճաջ գիտի քահանայ Տէր Հասրաք, Խազիւլի յեղափոխական քահանայ Տէր Քերոք, Խաշխալտուիսից Տէր Խաչատուր քինյ. Խաչատուրեան, Գելիեգուզանից Տէր Քաջ (նահատակուեց 1899-ին), Սեմալից քաջ կուուո՞ Տէր Կարապետ, Տալորիկից՝ Տէր Գարբիել, Ընձքարից՝ Ս. Գեղրդի վանահայր՝ Տէր Խաչատուր, Փասիքից՝ Վարդան վարդապէտի աջ բազուկը՝ Փիդայի Ստեփան վարդապէտը, որն ապստամբութեան պարտութիւնից յետոյ բարձրացաւ Անդր ել այնտեղ էլ նահատակու-

եց, Մգղենը գիտից Մկրտիչ Ա. քինյ. Մուրադեանը, անձնաորութիւններ են, զարդարուած հայրենասիրութեան լուսապսակով եւ դարձել են ազատութեան և պայքարի խորհրդանիշներ:

Սասունի ապստամբութեան նկատմամբ իր վերաբերմունքը արտայայտեց Կ. Պոլսի հայոց նորընտիր Պատրիարք Մատքես Իզմիրլեանը, որը ժամանակակիցների կողմից որակուեց «Երկարէ» մականունով: Խորեն Աշրգեանի իրաժարականից յետոյ, Կ. Պոլսի պատրիարքական գահը երկար ժամանակ բափոր մնաց: Միայն Սասունի կոտորածներից յետոյ սուլթանը համաձայնութիւն տուեց պատրիարքական բնտրութիւն կատարենու համար, այն նկատելով իրեն արեւմտահայութեանը պարզեւած շնորի: Բարձրաստիճան հոգեւորականներից կազմուած կրօնական ժողովը Պատրիարք ընտրեց Մատքես Իզմիրլեանին՝ սուլթանին ոչ հաճոյակատար մի հոգեւորականի, որն շտապեց յայտարարել իր դժողովութիւնը քուրքական հայահալած քաղաքանուրեան դէմ եւ սպանաց Սասունի կոտորածների պատճաների ուսումնասիրութեան համար այնտեղ ուղարկել սեփական քննիչ յանձնաժողով, դրանով դրդելով երուպական պետութիւնների դեսպաններին իրենց ձայնը բարձրացնել այդ կոտորածների առիթով: Այդ մասին յատուկ յայտարարութեամբ հանդէս եկաւ «Ռոյքը» գործակալութիւնը. «Գործերի դրութիւնը քննելու համար Պատրիարքը որոշել է Սասուն ուղարկել իր ներկայացուցիչը: Պատրիարքի այդ պահանջը խորհրդանշական էր, որպիսիւեւ անզլիական "Times"-ի հաղորդման համաձայն չպետք է ընդուներ քուրքական կառավարութեան կողմից, փոխարէնն առաջացնելով սուլթանի գայրոյքը»¹: Սուլթանը առժամանակ կուլ տուեց այդ դառը դեղահարը, սակայն կարճ ժամանակ անց, 1896-ին անհինազանդ եւ ըմբռատ Պատրիարքին արտորեց Եղիպտոս:

Մի այլ բարձրաստիճան հոգեւորական, Մատքես Իզմիրլեանին յաջորդած Պատրիարք Մաղարիս Օրմանեանը, տարիներ անց, երբ ստեղծում էր իր կորուպային աշխատութիւնը՝ «Ազգապատում»-ը, ժամանակակիցի եւ ականատեսի իրաւունքով տալիս է դէպքերի սրափ գնահատականը Սասունյ ապստամբութեան, նրա պարտութեան և յա-

¹ «Սուլթ», 1895, թի 1, էջ 147:

զորդած կոտորածների մասին. «Հայր ոչ թէ ապստամք էին, այլ յարձակմանց դէմ ինքինքնին կը պաշտպանէին, հայերը ջարդուեցան առանց հասակի և սեղի խորութեան, երեք շաբարի ժամանակամիջոցին մէջ օգոստոս 12-ից սեպտեմբեր 4-ր եւ թուրք կառավարութեան փնտուածք ոչ թէ այնչափ խառնակից Մուրատ մը գտնելն էր, որչափ Գելիեգուզան եւ Տալորիկ գաւառները իիմնովին ջնջել, այսինքն՝ հայ Սասունի կելրոնները»¹:

Սասունի ապստամբութեան եւ պարտութեան լուրը Ամենայն Հայոց Կարողիկոսին հասաւ 1894-ի վերջերին: Աշխարիի տարրեր ծայրերից Սկրտիչ Խրիմնանին էին համում նամակներ, բողոքներ, խնդրագրեր, որոնցով ողջ աշխարհում սիոնած հայութեան տարքեր ներկայացուցիչներ խնդրում եւ պահանջում էին Կարողիկոսից՝ արեւմտահայ ժողովրդի արդար դատոր պաշտպանելու համար դիմել ուստական ցար Նիկոլայ Երկրորդին: Հայոց հայրապետը անսարով ժողովրդի խնդրանից, 1894-ի դեկտեմբերին յատուկ շքախմբով սկսեց իր ճանապարհորդութիւնը դէպի Պետերբուրգ: ճանապարհորդութեան ժամանակ Ռուսաստանի տարրեր վայրերի հայ համայնքների հետ հանդիպման ընթացքում Խրիմնանը քանի դեռ բոյլատուութիւն չէր ստացել Սասունի բնակչության օգտին համահայկական հանգանակութիւն սկսելու, յորդորում է ժողովրդի առանձին ներկայացուցիչներին, հայ գաղրօջախների մեծահարուստներին եւ բարեզործներին՝ իրենց նպաստը քերել հայ գաղրականների եւ Սասունի կոտորածներից փրկուածների օգտին²: Մեծ հանրահաւաքներ եղան Նոր Նախիջենանում, Մոսկուայում, Պետերբուրգում: Այդ վայրերի հայութեան ջանքերով եւ կարողիկոսի յորդորներով հաւաքում է զգալի զումար: Չքաւարարուելով լրանով Կարողիկոսը խնդրագրեր է յուում Ռուսաստանի ներքին գործոց նախարարին՝ ողջ ուստական կայսրութեան հայարնակ վայրերում համահայկական հանգանակութիւն քացելու բոյլատուութիւն ստանալու նպատակով, Սասունի կոտորածներից փրկուածներին օգնելու եւ զարքականներին իրենց տները վերադարձնելու համար: Խրիմնանի վայելած աննախաղեալ ժողովրդականութեան շնորհի յաջողուում է արեւե-

լեան Հայաստանում եւ Ռուսաստանի հայկական գաղրօջախներում հաւաքել պատկառելի զումարներ եւ դրանք օգտագործել Սասունի անօրենան ժողովրդի կարիքները հոգալուն: Ռուսական «Նովսրի», «Պրախտելստվենի» Վեստնիկ», «Ցերեկովսկի Վեստնիկ» լրագրերը բնդարձակ յօդուածներ տպագրեցին Հայոց Կարողիկոսի ազգօգուտ եւ ազգասիրական գործունեութեան վերաբերեալ:

Կարողիկոսը սերտ յարաբերութիւն է պահպանում Կ. Պոլսի Պատրիարք Իզմիրեանի հետ, մանրամասն հավորդում, թէ ինչպէս է կարողացել զումարներ հաւաքել յօդուս սասունցիների եւ ինչ միջոցներով է այդ զումարներն ուղարկել Պատրիարքի ձեռքը՝ ըստ արժանավոյն օգտագործելու համար: Սի փոքրիկ վաստ պերճախօս վկայում է թէ Ս. Կարապետի նախկին վաճահայր Հայոց Հայրապետը ինչպէս է աշխատում օգնել տարօնահայութեանը: Կ. Պոլսի Պատրիարքին ուղղուած նամակում Խրիմնանը յանձնարարում է՝ «Եթէ Յանձնաժողովը արժան կը համարի Մշոյ Ս. Կարապետի Վանուց որքանոցին համար բաժին հանելու է, որ պէտք է Մշոյ փոխանորդ Վարդան Վարդապետի ձեռորով մատակարարել, վասնզի այդ վարդապետը լաւ ճանաչում եմ, անձնուեր եւ հաւատարիմ պաշտօնեայ է»¹: Տարբեր պիտույժների սահմաններով անջրակետուած լինելով հանդերձ, Խրիմնանը քաջատեղեակ էր Արեւմտեան Հայաստանի անցուղարձին, գիտեր ովքեր են հոգում ժողովրդի հոգսերը, ինքն էլ աշխատում էր աջակցել նրանց:

1894-ի ընթացքում Ամենայն Հայոց Կարողիկոսի պաշտօնական օրգան «Արարատ»-ը ոչ մի տող շտպեց Սասունի իրադարձութիւնների մասին: «Արարատ»-ը լրեց նաև Խրիմնանի ճանապարհութեան ընթացքում: Հայ հասարակական գործիչներից մէկին ուղղած նամակում Խրիմնանը վախենալով ցարական գինուրների ուսնձութիւններից յանձնարարում էր բարձրաձայն շայտարարել հանգանակուած զումարների շափի մասին: 1895-ի վերջերին, երբ Կարողիկոսը արդէն վերադարձել էր Մայր Արոռ, պաշտօնական օրգանը սկսեց ոչ միայն լուրեր, այլև մանրամասներ հրատարակել ոչ միայն Սասունի կոտորածներից, այլև ողջ Արեւմտեան Հայաստանի տարբեր վայրերում ծայր

¹ Ս. Օրմանեան, «Ազգապատում», հ. 3, էջ 5022:

² «Մուրճ», 1895, թի 3-4. էջ 559, թի 5, էջ 728:

¹ ՀՀՊՊԱ, ֆ. 57, գ. 268, թի 71:

առած քստմնելի իրադարձություններից: Կաթողիկոսը չէր խնայում ոչ մի միջոց ու ջանք՝ արևմտահայ իր հոտի խլեակներին ձեռքից եկած կարելին եւ անկարելին անելու համար:

Ասպարեզ, Լու-Անջելես, 23 ապրիլ, 1996, էջ 11-14:

ՀԱՅ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ԶԵՅԹՈՒՆԻ 1895 Թ. ԱՊԱՍԱԲՈՒԹՅԱՆ ՆԿԱՏԱԱՐ

Պետականությունից գորկ հայ ժողովրդի համար եկեղեցին դարեր շարունակ կատարել է ազգահավաքման մեծ գործ, իրավանացրել նաև աշխարհիկ իշխանության գործունեություն: Արևմտյան Հայաստանում և բորբական կայսրության մյուս հայաբնակ վայրերում հայ եկեղեցին կատարում էր պետության և հայության հարաբերությունները կարգավորող մարմնի դեր: Տեղերում գործող հայ հոգևոր առաջնորդները շատ հաճախ դրսերում էին դիվանագիտական ճկունություն՝ կասեցնելով ժողովրդի զիսին կախված օրիասը, հաճախ էլ հայտնվում էին ժողովրդին կազմակերպողի, խրախուսողի դերում և նոյնիսկ զիսավորում արևմտահայ գավառի ընդգումները: Գավառներում գործող հոգևորականները մեծ մասամբ դուրս էին եկել ժողովրդի ծոցից, ընդունել հոգևորականի վեղարը՝ հասարակական կյանքում առավել հաջողությամբ գործելու համար: Արևմտահայության այդպիսի հոգևորականներ պարզեց Սլրտիչ Խրիմյանի բացած հոգևոր «Ժառանգավորացը» Վասպուրականի Վարազա վանքում: Ժողովրդին անմնացորդ նվիրված գործիչների մի փաղանգ էր այդ հոգևոր վարժարանի ուսուցչական կազմը և մանափանդ շրջանավարտների խումբը: Հետազոտում այդ գործը հաջողությամբ շարունակվեց նրա սանի՝ Գարեգին Սրբանձույանցի կողմից պատճական Հայաստանի Տարոն նահանգի Ս. Կարապետ վանքում բացված մի այլ հոգևոր «Ժառանգավորացում»: Պատահական չէ, որ 1880-ականների վերջին Տարոնում, Սասնա լեռներում հայտնված հայուկների մեծ մասը սնվել ու աճել էր այդ երկու «Ժառանգավորացնե-

րի» հոգևոր քորայում: Սակայն չպետք է կարծել, թե զավարի հոգևորականները բոլորն եւ ժողովրդին նվիրված անձնվեր գործիչներ էին: Բավական է իհշել տիտանակակ Պողոս Սելիքյանին՝ Վասպուրականի բոլոր բեկերի, բոլոր աղաների և հայ վաշխառուների հետ գործակցող այդ հոգևորականներ, որն իր արդար հաստուցումն ստացավ 1896-ին, հայ վրիմառուի զննակով: Հար ու նման գործունեություն էին ծավալել Բրուսայի հոգևոր առաջնորդ Բարյուլիմենոս Չամչյանը, Ալբանարի կարողիկոս Խաչատոր Շիրոյանը, որոնց՝ հոգևոր առաջնորդի բարոյական կերպարի հարցը երկար ժամանակ քննարկման նյութ էր դարձել Կ. Պոլսի Ազգային ժողովում: Արևմտյան Հայաստանի համարյա ողջ տարածքը ուրով շրջագայած Գարեգին Սրբանձույանցը պատրիարքարանին ուղղած իր զեկույցներում առաջարկում էր անցկացնել հայ եկեղեցու ունիոն, բարենորոգում: «Ժառանգան է եկեղեցին մաքրել ապականարար հայ սրբերեն, ազգը հանել տիրացուսկան վիճակից և քաղաքական քայլ առնուլ»¹, - ահա Սրբանձույանցի պահանջը:

1880-ականների վերջերին և 1890-ականների սկզբին զավաներում գործում էին նոր զաղափարներով տողորված եկեղեցական սերնդի ներկայացուցիչները: Այդ պատճառով էլ նրանք հաճախակի շրթյալակապ հայտնվում էին Կ. Պոլսի բանտերում (ինչպես պատահեց Պողոս Նարանյան և Ապահովյաց Եզնիկ վարդապետների հետ) կամ, իրք պատվավոր արտոր, նրանցից ոմանք կանչվում էին Կ. Պոլսի (ինչպես Ակրտիչ Խրիմյանը, Գարեգին Սրբանձույանցը և Գրիգորիս Ալեաքճյանը), նրանց արգելվում էր գործել «գավառ» անունով որակվող Արևմտյան Հայաստանում, որպեսի օսմանյան մայրաքաղաքում գտնվեին Բ. Դուսի աշակուրջ հսկողության ներքո:

Չեյքունը ևս այդ հարցում բացառություն չէր կազմում: Այդ ըմբոստ արձվարույնը ենթարկվում էր Կիլիկիայի կարողիկոսական թեմին: Տեղի կարողիկոսների ընտրության հարցը 1870-ականներից սկսած ալեկուծում էր Ազգային ժողովի նիստերը: Ինքնակոչ Նիկողայոսին գահազրելուց հետո օրինական ճանապարհով կարողիկոս ընտրվեց Սլրտիչ

¹ Ե. Զարենցի անվան գրականության և արվեստի բանգարան, թ. Ազատյանի ֆ., բաժին XII, գ. 10525:

Քեֆսիզյանը, որը, սակայն, շարդարացրեց ոչ ժողովրդի, ոչ էլ պատրիարքանի հույսերը:

Այլ էր Զեյրունի հոգևորականությունը: Զեյրունն իր շրջակա գյուղերով ապրում էր կխանճկախ կյանքով: Այդ անկախությունը դրսերդում էր նաև հոգևորականության բնորության ասպարեզում: Ժամանակակիցների վկայությամբ, գյուղերի քահանաներին բնտրում էր տվյալ գյուղի համայնքը: Երկար ժամանակ քննարկվում էր թեկնածուի մարդկային արժանիքների հարցը: Չափանիշը ոչ թե սուրբ գրքի իմացությունն էր, մաքրակրոնությունը, այլ հայրենասիրությունը. «Զեյրունցին քահանա կձեռնադրե այնպիսի մեկը, որը ոչ թե միայն քիչ թե շատ ուսած և իին ու նոր կտակարան ծանոթ ըլլա, ոչ թե միայն իր գաղափարները գրչով կամ խորով հայտնելու կարող ըլլա, այլ ֆիզիկային ալ առողջ և քաջասիրու պետք է ըլլա: Վերոհիշյալ ուսմունքների գորկ ըլլա նե, հոգ չըներ, հերիք է, որ ազգասեր, հայրենանվեր և մանավանդ պատերազմասեր ըլլա»¹: Անձը որոշելուց հետո քահանայացուն անցնում էր քառասնօրյա ապաշխարության շրջան, որի ընթացքում յուրացնում էր կրոնական զիտելիքները, սուրբ գրքերի իմացության այն նվազագույնը, որ անհրաժեշտ էր նրան հայ եկեղեցու ծեսերը կատարելու և անձնութաց հովիվ լինելու համար: Զեյրունի Մնացական Սեմերճյանը այդ առիրով գրում էր. «Սույն խստակրոն եկեղեցական, եախսկոպոս, վարդապետ, քահանա, տիրացու, սարկավագ, ամենքն ալ քուրքի հետ պատերազմ ծագելուն պես մեկ-մեկ առյուծ դարձած, բոլորովին զինյալ պատերազմի վայրը կդիմեն՝ սպասնել և սպասնել աշքերնին առնելով»²: Այդ հանգամանքը լավ զիտեին Զեյրուն անցած հնչակյան գործիչները: Ժողովրդի վատահորյունը շահելու, Զեյրունի հայտնի իշխանական տների գորսակցությունն ապահովելու համար անհրաժեշտ էր ամենից առաջ հավաքագրել ժողովրդի աշքում հեղինակություն վայելող հոգևորականների: Նրանք այդպիս էլ վարվում էին: «Մոռացված հերոսներ» և «Զեյրունն ու շրջակաները» աշխատություններում Աղասին (Կարապետ Թուր-Սարգսյան) պատմում է, որ 1892-ից սկսած հնչակյան կուսակցության շարքերն են

լոնդոնվել մի քանի գյուղերի անվանի հոգևորականներ: Զեյրուն մուտք գործելուց առաջ Աղասին կապ է հաստատում Մարաշի քահանա Պետն Տեր-Նահապետյանի հետ: Այս անձնավորությունը մասնակցել էր նախակոտակցական հեղափոխական շարժումներին, հայրենասիրական գործունեության համար քանից քանտարկվել էր սովորական կոսավարության կողմից, 1880-ին օճվել էր քահանա, իսկ հետագայում դարձել հնչակյան կուսակցության Մարաշի մասնաճյուղի հիմնադիր անդամներից ու դեկապարներից մեկը³: Նա կապեր էր հաստատել Զեյրունի ապատամբների հետ՝ խոստանալով Բերդուգ-Զայի ճակատամարտին օգնության հասնել 500–800 զինյալ կորիծներով: Սակայն նա չկատարեց իր խոստումը, որովհետև այդ ընթացքում տեղի ունեցավ Մարաշի հայության կոտորածը, իսկ Պետն քահանան այլ հայրենասերների հետ բանտ նետվեց: Զեյրունցիներից հնչակյան կուսակցության անդամ էր Թեղեմելիք գյուղի ավագ քահանա Մարտիրոս Տեր-Մարտիրոսյանը, որը, Աղասու վկայությամբ, այդ գյուղի հնչակյան մասնաճյուղի ատենապետն էր: Այդ 70-ամյա ալեգարդ իրամանատարը մեծ հնտությամբ կարողացավ խոյս տալ բորբական հետապնդումից և Հալիսի մասնաճյուղի ուղարկած գումարը՝ 120 ուկին, Մարաշից անվտանգ հասցեց ապատամբության դեկապարներին:

Սակայն 1895-ի ապատամբությանը մասնակցած հոգևորականներից ամենաուշագրավը ժամանակակիցների կողմից «վեղարափոր հերոս» անունով մեծարված Բարդուղիմեոս վարդապետ Թագագիւղյանն էր՝ Ֆոնուցի և Կարապետ վանքի վանահայրության վոխանորդը, ապա վանահայրը: Համեմատելով ապատամբությանը նվիրված աշխատություններն ու հուշերը, ականատեսների գրառուները (Մնացական Սեմերջյան, Տեղիեր Գևորգյան, Աղասի, Հովհաննես Ահարոնյան, Կարապետ Տեր-Հակոբյան, Մամիկոն Վարժապետյան, Սմբատ Բյուրատ, Հանրի Վիթրո) և վերջապես մեր գործընկերներ Հայկազ Պողոսյանի և Ռաֆիկ Հովհաննեսյանի արժեքավոր բնդիհանրացումները՝ հնարավոր է դառնում զրել այդ խենթ խիզախության և անձնագրի հերոսության չափանիշ հոգևորականի կյանքի ողիսականը, որն Աղասու պատկերավոր

¹ Զեյրունի, Զեյրունի անցյալին և ներկային, Ա մաս, Վիեննա, 1900, էջ 152:

² Նոյն տեղում, էջ 161:

³ Կարապետ Թուր-Սարգսյան, Մոռացված հերոսներ, Բեյրութ, 1952, էջ 80:

բնութագրումով XIX դարի Ղևոնդ երեցն ու Գրիգոր Լուսավորիչն էր: Ծնվել է Ֆոնտում, 1850-ին: Ակրտուրյան անունը Մինաս էր: Տեղի վկայությամբ, նա մեծացել ու ապրել է Ֆոնտովի Ս. Կարապետ վանրում, Նիկողոս Եպիսկոպոսի ձեռքի տակ: Դեռ 1878-ին սարկավագ Մինասը սարսափեցնում է Անդրտնի բռնակալ Եայրճրօղլուին, որը պարտվում է հայերից, ներում խնդրում և երդվում հավատարիմ բարեկամ լինել նրանց: 1880-ին Ֆոնտովի վանահայր Նիկողոս Եպիսկոպոսը Մինաս սարկավագին ձեռնայրում է վարդապետ՝ Բարդուղիմնոս անունով: 1890-ին վարդապետը դառնում է այդ վանքի վանահայրության փոխանորդը: Իրեն քաղաքականապես անքարեիույս անձ՝ նոյն թվին բանտարկվում է Հաղեպում: Մեկ տարուց հետո ազատվում է, և նրան տեսնում ենք վանքի վանահոր պաշտոնում: Գործուն դեր է խաղում 1895 թ. Զեյթունի ապատամբության ողջ ընթացքում՝ Գարանը տերեի (Մուր ծոր) ժողովից մինչև հաշտության բանակցությունները: Տեղի արժեքափոր ուսումնասիրության մեջ ապատամբության տեղական զինվորական պետերի շարքում առանձնանում են 5 հոգի՝ Նազարեթ Չավուշ, Հաճի Սերկանյան, Փանոս Շամբեշիշյան, Փանոս Չոլազյան և Բարդուղիմնոս վարդապետ: Բոյոր հետագոտողները և հուշագրողները բարձր են զնահատում Մուր ծորի ընդհանուր ժողովում Բարդուղիմնոսի բարոզը, որը վճռական նշանակություն ունեցավ ապատամբություն սկսելու հարցում: Զեյթունի հայությունը տեղյակ էր 1894 թ. Սասն ինքնապաշտպանական մարտերին, 1895-ին կայսրության ողջ տարածքում մոլեզնող հայկական կոտորածների փաստին, այդ պատճառով էլ հայրենասեր վարդապետը իրենց գործի արդարության և հայրանակի համար ունեցած հավատով ժողովականներին ներշնչում է առանց տարակույթի պարզել ապատամբության դրոշը, հակառակ դեպքում իրենք էլ կարժանանան նոյն բախտին: «Քիչ մնացեր է, որ կորավի ու ջնջվի հայությունը: Հայաստանը օրբատօք կալարպվի, յուր հարազատ որոյիք և բնակիչը օտար երկիր կզարդեն, օտար ազգերու կիսառնվեն, իսկ մեզը մնացողը կիեծեն ու կփշանան: Պատերազմինք, եղրայրք, ջարդվինք, իոզ չէ, բոլ ազգը ազատվի: Այս պատերազմը անցյալ պատերազմներուն շնմանեցնենք, ասիկս շատ մնձ է և վերջինն է... կը պատվիրեմ ձեզ, զինվեցեք բոլորդ, այր, կին, ծեր ու երիտասարդ, ամուրի կամ օրիորդ, մինչև իսկ

մանր տղայք: Հրացան ունեցողը իրացան պետք է առնու, ասորճանակ ունեցողը՝ ասորճանակ, վեցիարկած ունեցողը՝ վեցիարկած, դաշույն ունեցողը՝ դաշույն: Խսկ ասոնք չունեցողները քող զինվեն կացինով, հատոցով, մանգաղով, շամփուրով ու մուրճով»¹: Այս կոչը վճռականություն է հայորդում նոյնիսկ տատանվող ժողովականներին, և զեյթունցիները համաձայնվում են հնչալյան կուսակցության ներկայացուցիչների առաջարկին՝ պարզել ապատամբության դրոշը: Անգնահատելի են վարդապետի ծառայությունները Զեյթունի գորանոցը գրավելու և բուրք պաշտոնեարյան ու զինուժի համանանան զործում: Զորանցի բուրք իրամանատարը կորականապես մերժում է հնչալյան գործիչներին համանանավելու առաջարկը, պատճառաբանելով, որ նրանք տեղացիներ չեն, հյուրեր են, այսօր կան, վաղը՝ ոչ: Զեյթունի իշխանական տների ներկայացուցիչներն ու ռազմական ավագանին խուսափում են բուրք գորահրամանատարի հպատակության ստորացուցիչ արարողությանը ներկա լինել, դա համարելով անխոհեմություն: Բարդուղիմնոս վարդապետը առանց երկմտելու, խաչը՝ կրծքին, բուրք՝ ձեռքին կանգնում է հնչալյան դեկավարների առաջ և ընդունում բուրք սպայակույտի և զինվորների հպատակության բափորը: Թուրք պաշտոնյաների կանայք հարգանքով համբուրում են վարդապետի ձեռքը, իրենց անձն ու պատիվը փառակելով «վեհարավոր հերոսին» և անցնում են նրա քրի տակով: Վարդապետը մասնակցում է նաև Զեյթունի շրջակա հայկական զյուղերի բնակչության պաշտպանությանը, իր 200–300 հոգիանոց զինվորների խմբով փրկում նրանց տեղի բուրքերի մոլեզնադ հարձակումներից:

Անմոռաց էջերից է Անդրտնի ճակատամարտը, որին մասնակցում էին 100 զեյթունցիներ, 100 զինվոր Շիլիլիկ գյուղից և Բարդուղիմնոս վարդապետի 200 հոգիանոց խոմբը: 400 զինվորներից բաղկացած հայկական միացյալ ջոկատը շարժվեց Զեյթունից 18 ժամ հեռու զտնվող 400 տնից բաղկացած Անդրտնի գյուղը, որի փոքր մասը՝ թվով 150 հոգի, հայ էին և բանտարկվել էին բուրք զայմազամի ձեռքով: Այդ հայերի փրկության համար սկսվեց ճակատամարտը: Հայկական ուժերը բաժանվեցին երեք մասի. մեկի դեկավարը վարդապետն էր, մյուս երկուի-

¹ Զեյթունից, նշվ. աշխ., թ մաս, Վիեննա, 1900, էջ 94:

նը՝ Փանոս Չոլագյանը և Նշան Ենիտունյանը: Հարձակումը սկսեց վարդապետի խումբը: Աղասու Վկայությամբ, Կովի մեջ աչքի ընկավ Բարդուղիմեռու վարդապետը, իսկ Տեղիքը պատճում է, որ ականատեսները զարմացած նայում էին, թե ինչպես վարդապետին ուղած տեղատարափ գնդակները կարծես մի կախարդական ուժով չէին կպչում նրան: Հայկական ջոկատին հաջողվեց ազատել քանտում գտնվող ողջ մնացած բոլոր հայերին: Բարդուղիմեռու վարդապետի անմիջական մասնակցությամբ կատարվեց Ենիճն Գալեի կարողիկ վանրի վանահայրեր Թորիկոյի, Կարսիայի և միարանության անդամների փրկուրյունը: Մինչ այդ բուրքերը կենդանի այրել էին հայր Սալվադորին և 12 այլ անձանց: Կարողիկ միաբանության ողջ մնացած անդամներին վարդապետը բերում է Զեյրուն և տեղափորում կարողիկ եկեղեցում:

Ապստամբության ողբերգական դրվագներից է Ֆոնուգի ճակատամարտը, երբ Ալի բեյի մեծարիկ քանակը հարձակվեց գյուղի վրա: Տեղացիների օրիսական ճիգերը, Հրաշյայի և Ապահի խմբերի ջանքերը, Բարդուղիմեռուի խմբի ուղղմական գործողություններն ի վիճակի չեղան կանխելու աղետը: Զեյրունից ոչ մի օգնություն չհասավ գյուղին, որովհետև մյուս կողմից Ռեմզի փաշայի քանակը հարձակվեց Զեյրունի վրա: Չնայած Ֆոնուգը պյարտվեց, բայց գյուղն իր վրա զամեց Ալի բեյի քանակի ողջ ուշադրությունը, և Զեյրունը փրկվեց երկու ճակատով կռվելու դժվար իրավիճակից: Գյուղից նահանջող ուժերը վարդապետի խմբի հետ միասին միացան Զեյրունի պաշտպաններին: Թուրքերը դաժան հաշվեհարդար տեսան տեղի և շրջանի գյուղերից այստեղ ապաստանած բնակիչների հետ: Գերի վերցրին Կապանի քահանա տեր Թորոս Շահան-Քեշիշյանին, Պոնտուսի քահանա տեր Օհանեսին, Ենիճն Գալեի քահանաներ տեր Կարապետին ու տեր Գրիգորին, որոնց սպանելուց հետո կախեցին ծառերից, իսկ մի քանի քահանաների վանրի պատի վրա խաչաձև զամեցին: Ինչպես տեսնում ենք, բուրքերի վրեմինդուրյան գործ առաջին հերթին դառնում են քահանաները, ոչ միայն կրոնական մոլեռանության պատճառով, այլ որովհետև նրանք էին տեղերում կազմակերպում գյուղացիների դիմադրությունը: Բարդուղիմեռու վարդապետի մասին, որպես ապստամբության դեկապարի, վկայում է այն փաստը, որ ապստամբության հադրանակից հետո նա մասնակցում

է մեծ տերությունների հյուպատոսների և բուրք գորակրամանատարի հետ կայացած հաշտության բանակցություններին: Հնչակյան դեկապարներին պաշտպանելու և Զեյրունի աշխարհիկ գորակրամաններին պատասխանատվությունից ազատելու միտունով, նա իր վրա է վերցնում ողջ պատասխանատվությունը՝ իրեւ ապստամբության դեկապար, ինչպես խնդրել, ապսպել էին մյուսները: Իսկ և իսկ՝ «Հովիս քաջ զանձն իր դնէ. ի վերայ ոչխարաց իրոց»: Բանակցությունների ժամանակ տաքարյունն և վճռական վարդապետը բուռն առարկում է բորբական պայմաններին. դրանց հակադեկով իր առաջարկը: Վարդապետը զտնում էր, որ չնայած գերունցիների տաքար հաղթանակին, նրանք կրել են մեծ վնասները: Անհուն դառնություն կա մեծ տերությունների հյուպատոսների երևակի շարտած նրա ճշմարիտ խոսքերի մեջ. «Պարոն իյուպատոսներ, ես Ֆոնուգի վանահայրն եմ. այսրան զոհեր տվինք ազատության սիրույն համար, տակավին այդ անհավատների սուրբն տակ պիտի մնանք ու հյուծինք: Սիրելի Ֆոնուգ, սիրելի վանր, բեմի մեջ զտնված եկեղեցիներս այրեցին, հանձնվող ժողովուրդը՝ ծեր, կույսեր և մանուկներ ջարդեցին անխնա, քահանաներին անխնա ծառերն կախեցին, 500-է ավելի կիսներ ու այստիկներ Մարաշ գերի տաքար են, դեռ բուրքին անարդար և քրիստոնյայի արյունին ծարավի կառավարության տակ Ֆոնուգ պիտի երրա՞ն, բուերու ծայներ լսելու և ավերակներու վրա ողբալու»¹: Վարդապետի անառարկելի տոնն այնպէս է վիրավորում բուրք փաշային, որ քահանակցությունների դեկապար խուպական հյուպատոս Վիքոյի հրահանով Բարդուղիմեռուին չի բույլատրվում մասնակցել քահանակցություններին: Դրանց ավարտից հետո վարդապետը մեկնում է Մարաշ՝ վանրի վերաշինության համար ծախսեր հայրայքելու նսպատակով և խարեւությամբ ծերքակալիում: Մի քանի ամիս հետո հյուպատոսների միջնորդությամբ ազատվում է բանտից և դարձյալ նույն նսպատակով մեկնում Երուսաղեմի: Երուսաղեմի պատրիարք բորբամետ Հարություն Վեհապետյանը մերժում է վարդապետի խնդրանքը՝ վանրի վերաշինության համար գումար տրամադրել. «Կանոն չէ»: Վարդապետը խստորեն դատապարտում է այդ մերժումը: «Ուոք առնելու կանոն ունիք, տվելու կանոն

¹ Զեյրունի պատմագիրը, Պուենոս Այրես, 1960, էջ 632:

չունիք»: Ժողովրդի հարազատ զավակն ու անձնվեր հովիլը մինչև վերջ մնաց իր ժողովրդի հետ, կրեց նրան բաժին ընկած ողջ տառապանքները, տարագրություն և արսոր Աղանայում, անսալով ժողովրդի խնդրանքին, եկեղեցու բեմից բարողի փոխարեն նրա հոգուց դուրս պոռքաց ցասում և անեծք մեծ տերությունների վարած նենգ բաղարականության հասցեին: Տառապանքի ուղիներով անցած և խմատնացած վարդապետը այդ անեծքով հայտարարեց բոլոր ժամանակների ճշմարտությունը՝ ազգի ազատությունը միայն ու միայն տվյալ ազգի գործի է, ոչ մի այլ պետություն իր շահերից բացի, այլ շահեր չի ճանաչում: Բարդույինեռու վարդապետի հայրենանվեր գործունեության վկայությունն են դեռ նրա կենանության օրոր նրա մասին հյուսված ժողովրդական բանահյուսության նմուշները, որնցում գովերգվում են վեղարափոր հերոսի բարոյական բարձր շափանիշները, նույնիսկ քշնամու կողմից նրա մեծ հարգանքի արժանանալը: Զեյրունի «Տարանում» նրա մասին հյուսված քառյակների թիվն անցնում է տասից: Դրանք վերաբերում են նրա կատարած բոլոր նշանափոր գործերին:

Զեյրունի ապստամբությանը գործուն մասնակցություն է ունեցել նաև մի այլ հոգևորական՝ Զեյրունի առաջնորդական փոխանորդ Կարապետ քահանա Երկանյանը, որի մասին ուսումնասիրությունների մեջ կա երկակի վերաբերություն: Աղասու հուշագրություններում նև համեմատվում է թուրք պաշտոնյայի հետ, համարփում դափաճան, որը ցանկանում էր ծովակի մեջ գցել իր ազգակիցներին: Համադրելով ապստամբության մասին ստեղծված ուսումնասիրությունների մեծ մասը՝ զալիս ենք այն եզրակացության, որ Աղասու տված զբահատականը խիստ աշառու է և չի համապատասխանում իրականությանը: Ուղղակի, որպես նարդ, նրանք երկուստեր իրար նկատմամբ հակակրանք են տածել: Չնայած դեռ 1892-ին, իր կամքին հակառակ, Մարտաշում Երկանյանը, հափաքագրվում է հնչականների կողմից, բայց ձեռքը դնելով Ավետարանի վրա երդիկում է հավատարիմ մնալ հնչակյան կուսակցության հավատամքին: Նա հավատարիմ է մնում իր երդմանը¹: Զեյրունի նշանափոր տոհմերից մեկի՝ Պողոլենց գերդաստանի շառավիղներից մեկն էր տեր

Կարապետը, զավակը նշանափոր Խելքոցու, լեզենդար քահանա Դելի-Քեշիշի (խնճիր քահանայի) մի տարրերակի, որ այս անգամ Խև մականունն էր ստացել: Տեր Կարապետը ուսուցչությամբ էր սկսել իր աշխատանքային գործունեությունը, ապա՝ ձեռնադրվել քահանա: Հմտության դիմումներու մասում էլ տարրեր ատիրներով հավաստում է. «Տեր Կարապետ Երկանյան այն համճարեղ եկեղեցականն է, որ Զեյրունի ճակատագիրը վարեց ամբողջ քառորդ դար և իր գործեւ քաշվելի հետո է միայն, որ գեյրունցվոց գործերն սկսան ավրվիլ: Տեր Կարապետ կզանար լեզու գտնել կառավարության հետ և փրկել ընդհանուր վտանգված կացությունը և բանտարկյանները, ինչպես որ հետագային ալ պիտի փրկեր այնշափ բանտարկյաններու կյանք»¹: Զեյրունի ավագանու ժողովի ժամանակ, երբ պետը է վճռվեր վերաբերմունքը ապստամբության նկատմամբ, տեր Կարապետը, որ բոլորի աշբում պահպանողականի համբավ ուներ, «կզար, թե շատ ալ դյուրին գործ մը չէ կառավարության հետ հաշտ ապրիլը»: Նա հասկանում էր, որ չէր կարելի ժողովրդի խանդավառության վրա սառը ջուր լցնել, իսկ երե կատարեին նահանգապետի՝ դրսեկներին (հնչակյան դեկապարներին) հանձնելու պահանջը, նորից կակսվեր բանտարկությունների ու աքսորի ժամանակը: Թորքերի հետ համաձայնություն գալու դեպքում Զեյրունը կգրկվեր իր զինական ուժից: Ահա այդ պատճառով տեր Կարապետը դեմ չկանգնեց ապստամբության կողմնակիցներին: Նրան մնում էր հայրենակիցներին օգնել նաև դիվանագիտական հնարքներով:

Սանդրիի ճակատամարտի ժամանակ, երբ գեյրունցիները քշնամու ծանրակշիռ հարվածներից նահանջում են, ծերունազարդ իրամանաւար Կարապետ Բասիլոսյանը, որ սկզբից դեմ էր ապստամբությանը, չունելով հայերի նահանջը, բացականչում է. «Ճիս թերեք շտուռլ և մի ծի էլ տեր Կարապետի համար»²: Երկու Կարապետների սրբնաց արշավը այնպէս է ոգևորում հայերին, որ նրանք հետ են դառնում և

¹ Գ. Տեմվեր, «Պատմություն Զեյրունի 1895-ի պատերազմներուն, տեղական բարքերով և իին դեպքերով ալ ճնշացած», մ. 1-3, Փարիզ, 1945-49, էջ 68:
² Զեյրունի պատմագիրը, Պուենու Այրես, 1960, էջ 377:

¹ Նոյն տեղում, էջ 502:

ջախչախիչ պարտության մատնում թշնամուն: Այդ ճակատամարտում զոհվում է տեր Կարապետի միակ որդին՝ 17-ամյա Վարդեվառը: Տեր Կարապետի դերը առանձնապես կարևորվում է հաշտության բանակցությունների ժամանակ, երբ նա մեծ տերությունների հյուպատոսներին և բուքք փաշային բացատրում է, որ ամբողջ ժողովուրդն է գենք վերցրել և աշխարհում չկա մի օրենք, որպէս արգելվի ինքնապաշտպանությունը: Դեպքերի անմիջական մասնակից Հովհաննես Ահարոնյանը վճռականորեն հերքում է տեր Կարապետի մատնիչ կամ դավաճան լինելը և Սեմերձյանի ու Տեղվերի նման անվերապահորեն հաստատում, որ 1895-ի ապստամբությունը չունեցավ ոչ մի դավաճան: Դա վերաբերում է նաև տեր Կարապետին: Սեր Խորին համոզմամբ, տեր Կարապետն ու Բարդուիմեն վարդապետը շահեկանորեն լրացնում էն իրար: Սեկը՝ հայուն ու տարարյուն, մյուսը՝ հանդարտ ու դիվանագետ:

Հետաքրքիր է Կ. Պոլսի պատրիարքարքարանի դիմուրությունը Զեյթունի ապստամբության նկատմամբ: Ազատազրական շարժումների հանդեպ բացասական վերաբերմունք ունեցող խորեն Աշքայան պատրիարքին Սասունի ինքնապաշտպանական մարտերից անմիջապես հետո փոխարինեց Մատթեոս Իգմիրյանը, որը Բ. Դուն նկատմամբ վարեց շատ վճռական քաղաքականություն: «Երկաքե պատրիարք» սուրբանից հաշիվ էր պահանջում Սասունի խաղաղ բնակչության, ապա նաև Արևմտյան Հայաստանի ողջ տարածքում ծայր առած սարասիլի կոտորածների համար, անմիջապես հարաբերությունների մեջ մտնում մեծ տերությունների դեսպանների հետ, կապ հաստատում հենչալյան կուտակության պարագուխնների հետ: Անծ տերություններից հուսախար պատրիարքն Ամենայն հայոց կարողիկոսին ուղղած նամակներում հայտնում էր Զեյթունի խլուտումների և հայկական կոտորածների մասին, խնդրում հայրապետին՝ դիմել ուստական ցարին, գործի դնել հնարավոր և անհնար բոլոր միջոցները, հայկական բարենրոդումների խնդրին դրական լուծում տալու համար: Զեյթունում ապաստանած, կոտորածներից մազապուրծ հայերին շտապ օգնություն և օժանդակություն հասցնելու խմբանքով պատրիարքը համարյա ամեն օր դիմում էր կարողիկոս Ալքուի Խորիմյանին, որին հաջողվել էր ցարական բարձր պաշտոնության բույստվությամբ համահայկական հանգանակություն

բացել ուստական կայսրության տարածքում: Իզմիրյանը հաղորդում էր կարողիկոսին, որ կոտորածներ սանձազերծած սովորանք իրենից պահանջել է Զեյթունի, Կարինի, Վանի ինքնապաշտպաններին հակապետական գործունեության համար կոնդակով դատապարտել, իսկ ինքը մերժել է. «Այդպիսի կոնդակը շատ անիրավ պիտի ըլլար, ...հանիրավի բափկած այլրան կոտորածների պատասխանավորությունը զոհելուն վրա բողնելու և ջարդեր կարգադրող ու գործադրողների ի շրմելս հանելու աշխարհի առջև»¹: Հետաքրքիր է, որ նման պահանջով կարողիկոսին է դիմում Ուստաստանի ներքին գործոց նախարարության գործերի կառավարիչ Գորեմիկինը: Մատնացոյց անելով Զեյթունի, Տիգրանակերտի, Կարինի, Վանի ինքնապաշտպանական եղույթները և դրանք որակելով իրքն հեղափոխական արարքներ, ցարական պաշտոնյան վեհափառից պահանջում է կոնդակով կովկասահայերին հորդորել կապ շպահապանել արևմտյան հեղափոխականների հետ, կոտորածների մեղքը բարեկելով նրանց վրա և ընդգծելով այդ շարժումների վնասակարությունն արևմտյան համար²: Սի այլ դեպքում սուրբական կառավարությունը բողոքում է ցարական դեսպանին, որ արևելահայերի՝ օգնություն և նայաստ ուղարկած գումարները առաքվում են ապատամբներին: Պատրիարքը զգուշացնում է կարողիկոսին, որ տեղերի ուստական հյուպատությունները հրաժարվում են վերցնել օգնության նպատակով ուղարկած գումարները և դրանք հետ են դարձնում արևելահայերին: Կարողիկոսը գործադրում է իր հեղինակությունը, այդ գումարները տարբեր ճանապարհներով Արևմտյան Հայաստան հասցնելու համար:

1895 թ. քափուր էր մնացել Կիլիկիայի կարողիկոսական արքուր, և պատրիարք Իզմիրյանի ջանքերով կարողիկոս է ընտրվում արքեպիսկոպոս Գրիգորիս Ալեարձյանը: Սակայն Բ. Դուռը չի վավերացնում նրա կարողիկոսությունը, որպես քաղաքականական անքարեկույս անձի: Երկար տևեց Կիլիկիայի կարողիկոսական ընտրության քաշըշուկը. Ալեարձյանի թեկնածությունը վերջնականապես մերժվեց: Դրվելով գործելու անեկանելի պայմանների մեջ, պատրիարք Իզմիրյանը հրաժարա-

¹ ՀՀ Ուստական կենտրոնական պատմական արխիվ, ֆ. 56, գ. 17, գ. 55, թ. 135 (Այժմ ՀԱՀ):

² Նոյն տեղում, գ. 14, գ. 52, թ. 2:

կան տվեց, որն անմիջապես ընդունվեց, իսկ 1896-ին Բ. Դուան հրամանով նա արտորվեց Երուաղեմ: Խզմիրյանից հետո պատրիարքական տեղապահ է ընտրվում տիտրահոչակ Քարդուղինեոս Չամչյանը, որը մինչ այդ էլ հայտնի էր իր հակաժողովրդական դիրքորոշումով: Նորընտիր տեղապահը շտապեց հավաստիացնել սուլթանին, թե իր ամենամեծ փափազն է լինել սուլթանի հավատարիմ ծառան և կատարել նրա բոլոր հրամանները: Այդ հաճոյակատարության համար սուլթանի կողմից նա պարզեատրվեց շրանշանով: Սակայն մեկ շաբաթ անց, ժողովրդական հոգումների ազդեցության տակ, սուլթանի կամակատար պատրիարքական տեղապահը հրաժարական տվեց: Կ. Պոլսի պատրիարք ընտրվեց Մաղաքիա Օրմանյանը՝ 1880-ականների Կարինի «Պաշտպան հայրենյաց» գաղտնի կազմակերպության համակիրն ու հովանավորը: Սակայն տարիների քեռը նրան դարձրել էր զգույշ, խոհեմ, պահպանողական գործեակերպով, ճկուն դիմանագիտական հատկություններով օժտված մի անձնափորություն: Ժամանակակիցները նրան որակել են իրեն «զագանազուապ»: Օրմանյանը դիմում է բոլոր միջոցներին՝ հրաժարի վրա գունդող արևմտահայության խյակներին օգնելու, ֆիզիկական բնաջնջումից փրկելու համար: Զցանկանալով ամրատանել իր նախորդին, Մատրեոս Իզմիրյանին, հայ եկեղեցու անաշառ պատմագիրը զրում է. «Երկաքն պատրիարք մակդիրով գովկեցավ, որոնք շնտածեցին, թե ավելի հասու է ճկուն պողպատը, քան անքերելի երկարը և թե մետաղներուն ազնվագույնը երկարը չէ»¹: Կարողիկոս Խրիմյանը ողջունեց Օրմանյանի ընտրայունը, գունելով, որ այդ ճգնաժամային պահին նա միակ անփոխարինելի պատրիարքն է: Կարողիկոսաւության պաշտոնական օրգան «Արարատը» 1895 և 1896 թթ. ընթացքում նյութեր էր հրատարակում Արևմտյան Հայաստանում սանձագերծված կրտորածների և ինքնապաշտպանական մարտերի մասին՝ իր համակրանքն արտահայտելով մարդկային արժանապատվությունը պահպանող ըմբուստների նկատմամբ: Կարողիկոսական դիվան և Սինոդի օրագրություններ արխիվային ֆոնդերի ուսումնասիրությունից պարզվում է, որ «Արարատում» հրապարակված նյութերն Արևմտյան Հայաստանի տարբեր գա-

վատների հոգեոր առաջնորդների նամակներն են ուղղված վեհափառ Հայրապետին, որ ամսագրին էր տրամադրում կարողիկոսը՝ ապագայի նկատմամբ ունեցած մեծ պատասխանատվությամբ, գալիք սերնդին հայ ժողովոյի նորավանջային օլերին հաղորդակից դարձնելու մտահոգությամբ:

Լրաբեր հասարակական գիտությունների, 1997, № 1, էջ 66–73:

ՀԱՐԳԱՆՁԻ ՈՒԾԱՅԱԾ ՏՈՒՐՔ

Հատուկ խորհուրդ ունի հայ ժողովոյի համար մայիս ամիսը, նրա հարատեսությունը հաստատող, ապրելու և հաղթելու կորովն ամբապընդող ամիսը: 451 թ. Ավարայրի ճակատամարտը, ուր վճռվեց մեր ժողովրդի լինելության հարցը, տեղի ունեցավ մայիսի 26-ին: Մայիսին էր նաև. 20-րդ դարի Ավարայրը՝ Սարդարապատի ճակատամարտը, երբ հայ ժողովուրդը հավաստեց ապրելու և հարատելու իր իրավունքն ու անկոտում կամքը: Սարդարապատի ճակատամարտը կարծես ստվերի տակ է բոլել իրենց նշանակությամբ նրան չգիշող Ղարաբիլսայի և Բաշ-Ապարանի ճակատամարտերը: Հայ պատմաբաններն ու գրողները, որ պատմական հետազոտություններ և գեղարվեստական ստեղծագործություններ են նվիրել Սարդարապատի հերոսամարտի մեծ նշանակությունը Վերիանելուն, մոռացել են կամ հաւանցիկ են անդրադարձել Վերոհիշյալ ճակատամարտերի պատմական նշանակության գնահատականին: Այդ թեմային են նվիրված մի քանի գրքերի հեղինակ, հայտնի լրագրող, վաղամեռիկ Սիրայել Ամիրքելյանի «Վերջին հողակտորի վրա» պատմավեպի երկու հատորները, որոնցից առաջինը լույս տևավ 1973-ին, երկրորդը՝ վեց տարի անց, 1979-ին:

Հեղինակը, ծնունդով Ղարաբիլսեցի, դեռ երիտասարդ մասնակցեց Սևծ հայրենականին, տուն վերադարձավ, մարտի դաշտերում թողնելով իր մեկ ոտքը: Մարմնական ծամր վնասվածքը չխարարեց նրա հոգին, ընդհակառակը, նրա մեջ առավել ընդգծվեց հաստատակամությու-

¹ Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. Գ, մաս Գ, Երուաղեմ, 1927, էջ 5043:

նը, վճռական կամքը: Պատերազմի դաժանությունները սեփական մարմնի վրա գգացած երիտասարդը ոչ թե դաժանացավ, այլ լցվեց անսահման բարությամբ, մարդկանց օգներու մեծ ցանկությամբ: Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետն ավարտելուց հետո աշխատեց հանրապետության մամուլի տարրեր օրգաններում, մեծ սիրով օգնեց երիտասարդ լրագրող ուսանող ուսանողություններին արտադրական փորձառության շրջանում, շատերի կյանքում բախտողություններ խաղաց իրենց մասնագիտության կայացման ընթացքում: Այս վերջնականապես հաստատվեց «Սովետական Հայաստան» սփյուռքի հայության համար լույս տեսնող գեղարվեստական ամսագրի աշխատողների շարքում: Լրագրողի իր ողջ գործունեության ընթացքում գրեց բազմաթիվ հրապարակախոսական հոդվածներ, որոնք արժանացան հանրության ուշադրության ու գնահատականին: Սակայն նրան շրափարեց լրագրողի աշխատանքը: Ինչքան զնում, ընդլայնվում էր նրա հետարքրությունների շրջանակը, նա զգում էր, որ կարող է ստեղծել գրական մնայուն արժեքներ: Հրատարակեց պատմվածքների մի ժողովածու՝ «Անանուն ծաղիկը» խորհրդանշական խորագրով. պատմվածքների գողտրիկ մի փունջ, որը ամենագրավիշը գրքի խորագիրն արտահայտող պատմվածքն էր մեծ երգահանի՝ Կոմիտասի մասին: Ամիրեկյանին միշտ հետարքրություն էին հայ ժողովրդի պատմության ողբերգական և հերոսական շրջաններից մեկը, ոչ վաղ անցյալի՝ 1917–1920 թթ. իրադարձությունները: Նրա ուշադրությունը ընեղվեց հայրենի քաղաքի, ողջ հայ ժողովրդի՝ բուրք հրոսակների դեմ մղած պայքարի վրա: Կենաց և մահու մի պայքար էր դա, մեր ժողովրդի ազատագրական պատերազմի պայծառ էջերից մեկը: Ամիրեկյանը պատմաբանի բարեխաճորյանք երկար տարիներ աշխատեց Հայաստանի տարրեր արխիվներում, մասնավորապես Պատմության կենտրոնական պետական արխիվում, հալաքեց բազմաթիվ արխիվային վավերագրեր, ուսումնասիրեց մեծ քանակությամբ գիտական գրականություն (որն այն ժամանակ, ավաղ, աչքի չէր ընկնում անաշառությամբ): Առանձնակի կարևորություն ստացավ այն քծախնդիր աշխատանքը, որ կատարեց հեղինակը, շրջելով Հարաբիլիսայի ճակատանարտին մասնակցած և կոտորածներից վերապրած ականատեսների մեջ, մեկ առ մեկ գրի առնելով նրանց հուշե-

րը: Երկարատև, համառ աշխատանքը տվեց ցանկալի արդյունքը: Առաջին հատորը, ինչպես նշեցինք, լույս տեսավ 1973-ին և ջերմ ընդունելության արժանացավ շարքային ընթերցող հասարակության մեջ: Պաշտոնական քննադատությունը լուրջամբ ընդունեց գրքի հրատարակության փաստը: Իսկ հրատարակության գրաբնիշը կատարեց իր սև գործք՝ վեպից կրնաւելով բազմաթիվ արխիվային վավերագրերի մեկնաբանություններ և իր կարծիքով «գաղափարական վիպաւմներ»: Հեղինակը սրտից ցափով համաձայնվեց մաքրաջրման նման աշխատանքներին, միայն թե վեալը լույս տեսներ: Չէ՞ որ անհրաժեշտ էր հրատարակել նաև վեպի երկրորդ հատորը:

Իրադարձությունները ծավալվում են 1917–1920 թթ. ամառանոցային փորբիկ քաղաքում՝ Ղարքիլիսայում (Կիրովական, այժմ՝ Վանաձոր): Այնքան հավաստի է հեղինակի շարադրանքը, գործող անձանց անուն ազգանունը, նրանց գերդաստանը, ապրած քաղամասը, որ կարդալիս թվում է, թե դա ոչ թե վեպ է, այլ իրողության կախարդիչ շարադրանքը: Իրական-պատմական գործող անձինք համերաշխ ապրում են գեղարվեստական հերոսների կողքին և շատ դժվար է որոշել նրանց սահմանը. ո՞րն է հեղինակի ստեղծած հերոսը և որը իրականության գեղարվեստական արտացոլումը:

Թիֆլիսի Ներախյանն ավարտելուց հետո, ուսուցչություն անելու նպատակով Ղարաբիլիսա է գալիս Ռուբենը և միանգամից միարձում քաղաքի հասարակական կյանքի մեջ: Նարոց, գրադարան, գրադարանավարութիւ Վերգուշ Միհիբարյան (որը Ստեփան Զորյանի «Գրադարանի աղջիկը» վիպակի հերոսութիւն է), իին դարաքիլիսեցիներ, ցարական քանակի շարքերում մարտնչող հայ ոսպմիկներ և բարձրաստիճան սպաներ: Հնարավոր չէ հաշվել, թե քանի գործող անձ կա վեպում: Հերոսների մի մեծ ու շքեղ պատկերասրահ է վեպը, որի ներկայացուցիչներից շատ-շատերը երկար ժամանակ անջինջ են մնում ընթերցողի հիշողության մեջ:

Գափառական քաղաքի անդրբը միանգամից խախտվում է: Նրա երկարության կայարանը դառնում է իրադարձությունների հանգուակետ: 1917 թ. բոլշևիկյան հեղափոխությունից հետո քայլայիւմ է կովկասյան ուսումնական գրադարանը, ցարական քանակի գինուրները բոլոնում են

Կովկասյան ճակատը և մեկնում Ռուսաստան: Կովկասյան ճակատի քայրայումը հնարավորություն է ընձեռում քորք նվաճողներին, որուց առաջ արդեն քաց էր ճանապարհը դեպի Արևելյան Հայաստան, շարունակել Արևմտյան Հայաստանի ցեղասպանությունը, ձեռնամուխ լինել նաև Արևելյան Հայաստանի հայության բնաջնմանը, համարութանական ծրագրի իրականացմանը: Յարական քանակի հայ քարձրաստիճան զինվորականությունը վճռական պահին կազմակերպում է հայկական ինքնուրույն ազգային քանակ, որն սկզբում դեկավարփում էր Անդրկովկասյան Սեյմի, ապս Հայաստանի առաջին հանրապետության ուղղման ճախարարության կողմից: «Մոտ տասնինգ հազար մարտիկ ուներ նորաստեղծ քանակը: Նա փոխարինեց պատմական Հայաստանի տերիտորիայից հեռացած ավելի քան 200.000 ռուսական ընտիր զորքին և պատրաստվեց դեմ առ դեմ կանգնել քորքական վերահսկության առջև, փրկել հայ ժողովրդին նոր սպանից ու բնաջնջումից, փակել Անդրկովկաս տանող իշմնական ճանապահը», - այսպես է նկարագրում իրադրությունը հեղինակը, երբ հայկական պետականության անկումից հետո վերստին ստեղծվեց հայկական ազգային քանակ՝ իր դեկավարով՝ սպարապետ տիտղոսով: Այդ պաշտոնն ստանձնեց ցարական քանակի հմուտ զորակրամանատար, գեներալ Թովմաս Նազարեկովը: Արդյոք պատրաստ էր պատմական այդ մեծ առաքելությունը իր վտիտ ուսերին առնել նորաստեղծ քանակն ու նրա սպարապետը: Եվ հեղինակն անհուն կարեկցանով բացականչում է՝ «Խեղծ սպարապետ...»: Այդ որակավորման մեջ արտահայտվում է Ամիրբեկյանի մեծ ցավը այն իրողության նկատմամբ, որ այդ պատկառելի զինվորականը կարծես խաղալիք էր դարձել հանգանակների ձեռքին: Արտակարգ ողբերգական է Ալեքսանդրապոլի՝ քորքերի կողմից գրավման տեսարանը. բվում է, ոչ թե զիրք ես կարդում, այլ շարժանկարի վրա աչքիլ առաջ տեսարանները հաջորդում են իրար: Ամենից ողբերգականը սպարապետի փախուստն է մերենայով և զյոմբեցու՝ նույնիսկ այդ ահավոր պահին հանսպարաստից հումորը, որը օգնում է նրան ամենաօրինական պահին անզամ պահպանել ոգու կորովի: «Նազարեկով չեղավ, նազար բեգու եղավ»: Այդ սրափեցնող ծաղըն է, որ կանխում է ալեզարդ զինվորականի շփորք, սոխառում են դառնալ, ոյմել վճռական զործողությունների,

որոնք, սակայն, անցնում են անարդյունք: Ալեքսանդրապոլի անկումը անասելի ծանր կացություն է ստեղծում քաղաքում կուտակված արևմտահայ գաղրականության և տեղացիների համար: «Հայաստանի վերջին փոքրիկ հողակտորը, որը շրջապատված էր քշնամական ուժերով, կորցրեց փախուստի, փրկության միակ հոյսը՝ միակ երկարուղային ճանապարհը և բոլորովին կորվեց աշխարհից»:

Հոգիչ և պատկերավոր է նկարագրված ժողովրդի նահանջի, փախուստի տեսարանը: Ինքնապաշտպանության կույր բնազդով սարսափահար ժողովորդը զարմանային հորդ հեղեղի պես սրընթաց լցվեց նորածիլ արտերն ու մշակած այզիները, ոտքի տակ տրորելով, փշացնելով ամեն ինչ: Իսկ քորքական զորքերը երեք տարրեր ուղղություններով շարունակում էին արշավանքը Հայաստանի վրա. առաջինը՝ դեպի Բորչալու, երկրորդը՝ Արագածի լանջերով դեպի Երևան, երրորդը՝ Զաջուռի բարձունքից դեպի Դարձիլիսա: Երևանի պաշտպանության ճակատը ծևափորվեց Սարդարապատում գեներալ Սիլիկյանի դեկավարությամբ: Վերջինս զգալով Ավարանի տակտիկական նշանակությունը մայրադարձի պաշտպանության գործում, Սարդարապատից հանում է հայկական զորքերի մի գունդ, աշխարհագորային խմբեր, իրետանային մարտիկոց և ուղարկում Ապարան: Այդպես ծևափորվում է հայ ժողովրդի ինքնապաշտպանության երկրորդ ճակատը: Երրորդը՝ Նարաքիլիսայի ճակատն էր, որ ծևափորվում է նրա մասույցներում, Համամլուից Հաջիղարա ընկած տարածքում, զնդապետներ Սերոք Սամարչյանի, Բեյ Սամիկոնյանի, Նորդանյանի մասնակցությամբ: Ռուսական քանակի հայազգի փառապանձ գեներալը, կտրված իր արմատներից, շատ ճակատամարտեր էր փարել իրեն ուստական քանակի զորակրամանատար, բայց այստեղ՝ Հայաստանի վերջին հողակտորի վրա, առաջին անգամ զգաց, որ հայկական բնակավայրերը ոչ թե բարտեզի վրա նշված «Օրինատիրներ» են, այլ հարազատ ժողովրդի բնօրբանը՝ շեն, ծխացող երդիկներով, նրա մեջ ապրոյ հարազատ ժողովրդով, որի ճակատապիրը իր ձեռքին է, իր զինվորների ձեռքին: Յավագին ուժգնությամբ նա զգաց այն սորտալարը, որ իրեն կապում էր այդ ժողովրդի հետ, հավաքեց, կենուրնացը վերջին ուժերը ժողովրդի պաշտպանության համար: Մեծ ջերմությամբ է

ստեղծված ոչ միայն նրա, այլ նաև Սերոք Սամարջյանի կերպարը՝ ոռուսական բանակի գնդապետից մինչև Հայաստանի տարրեր փայթերում մարտեր վարող հմուտ ու զագմական դեկապար: Արտակարգ նրբությամբ է տրված նրա «հայացման» ընթացքը, հարազատ ժողովրդի բախտը կիսելու նրա պատրաստակամությունը: Ամրոջ երկու հատորում ծավալված գործողությունների ընթացքում նա հանդէս է գալիս իրեւ զինվորների հարազատ հայր, արդարադատ և կորովի հրամանատար: Ափսոսանքի մեծ զգացում է առաջացնուու նրա մահը:

Հեղինակը համգամանորեն նկարագրել է Սարդարապատի, Ղարաբիլսայի, Բաշ-Ասլարանի ճակատների ստեղծումը և բացահայտել նրանց արտակարգ նշանակությունը. «...Երեքն էլ ստեղծվեցին առանց հրամանների, առանց նախօրոք մտածված, նշակված ու զագմական պլանների: Նրանք ծնվեցին ինքնարեք՝ հայ զինվորի, հայ ժողովրդի, ապրելու և հարատեկու մշտարքուն բնազդով, անխորտակ կամքով: Ծնվեցին զրեք իրարից անկախ, բայց կազմեցին մի ընդհանուր միասնական ճակատ: Տեղագրական իմաստով Բաշ-Ասլարանը դարձավ այդ ընդհանուր ռազմաճակատի կենտրոնը, Սարդարապատը՝ ճախ, Ղարաբիլսան՝ աջ քենըր»: Ընթերցողի իիշողության մեջ երկար է մնում Ղարաբիլսայի ճակատամարտի գեղարվեստական նկարագրությունը, նրան մասնակցող իերոսների կերպարները, առանձնապես հմուտ իրետանավորների՝ կապիտան Մովսիսյանի, Վերիյանի անձնազնի գործողությունները, որոնք ապահովում են աշխարհազորայինների և հետևակի հաղթանակը: Չորավար Անդրանիկը չէր մասնակցում այդ մարտին. ժողովրդական իերոսի վիրափորփած ինքնասիրությունը չի բողոքում նրան Դսեղից օգնության հասնել մարտնչողներին: Սակայն ճակատամարտի ընթացքում հետախուզական հեծյալ ջոկատի հրամանատար Անդրանիկ Ազատյանի անունը լսելիս բուրքերը կարծում են, թե իրենց վրա հարձակվողը նա է՝ «Անդրանիկ փաշան» և սրտալատառ փախչում են: Անդրանիկ անունն անգամ սարսափ է ազդում բուրքերի վրա: Չորավարը միշտ ներկա է բուրքերի դեմ մղած կոհիվներում:

Հուզիք տեսարաններ շատ կան վեպում. սակայն կապիտան Գորգեն Մովսիսյանի գոկվելու և բաղումը նկարագրելու տեսարանը արտա-

կարգ սրտառուչ է: Առանց արցունքի հնարավոր չէ կարդալ այդ տեսարանները:

Ղարաբիլսայի ճակատամարտի տարրեր հատվածների նկարագրությունը այսօրվա ընթերցողին տանում է ետ, 1918 թ. բախտորոշ բվականը, հաղորդակից դարձնում Ղջաղ, Դարրաս զյուղերի մոտ մղված մարտերին, Մայմելսի բարձունքներում, հայ աշխարհազորայինների անձնազոհությանը Ալբունքախոտում, Սարալ և Շորսալի բուրքական զյուղերի մոտ մղված կոփներին: Ղարաբիլսայի ճակատամարտի ամենախոշոր գործողությունը Հաջիլարայի մոտ մղված մարտն էր, որ ճակատագրի զարմանալի զուգաղլարությամբ տեղի ունեցավ Ավարայրի ճակատամարտի՝ օրը մայիսի 26-ին: Պատմական հավաստի փաստերով, ականատեսների վկայություններով գեղարվեստական սրանչելի նկարագրություններով, թշնամիների՝ բուրք սպաների տարիների հեռվից տփած գնահատականներով զգացվում է, թե ինչ անօրինակ սխրանքներ էին կատարել հայ մարտիկները զնողապետ Սամարջյանի դեկավարությամբ: Իրական հերոսների կողքին հիասքանչ է հայ կնոջ՝ Նազանի գեղարվեստական կերպարը, որ տղանարդու շորեր հազար մարտի դաշտ էր եկել իր ամուսնու հետ, նրա հետ ապրելու, նրա հետ կրվելու և մեռնելու հաստատ վճռականությամբ: Հաջիլարայի մոտ հայերը այնպիսի ջարդ տվեցին բուրքական զորքերին, որ իիմնովին ջախջախեցին բուրքական 11-րդ դիվիզիոնի երկու զնողերը. մոտ երեք հազար զինվոր և սպաս իրենց վերջին հանգրվանը գտան զյուղի մոտակա լսնջերին, իսկ հրաշքով փրկված ընդամենը մի քանի տասնյակ մարդ տարիներ հետո լի սարսափով և դառնությամբ բացականչում էին՝ «Էլս, Հաջիլար», «Հաջիլար»...» Եսվ այսպիս, մայիսի 26-ին ուազմաճակատի բոլոր հասփածներում հայկական զորքերը փայլուն հաղթանակ տարան մինչև ատամները զինված թշնամու դեմ: Այդ ճակատամարտերին մասնակցած հայ գորակամանատարների, կրվող անձնազնի կերպարների կողքին կերտված են նաև բուրք զորակամանատարների, նրանց հետախուզական և լրտեսական խաղերի հետաքրքիր նկարագրություններ, միջոցների մեջ խորություն չդնելու փորձեր, մարդավելական՝ նպատակն արդարացնում է միջոցները կարգախոսի նրանց գործադրումը: Ամփրեկյանը հմուտ նկարչին փայել բանձր վրանահարվածներով է կեր-

տում բորբական գործերի կովկասյան ճակատի հրամանատար Վեհիք Փաշայի կերպարը: Մարտերում թրծված գորականն ու հնուտ քաղաքացիությունը է, թե ինչպես հայերը բոլեցին իրենց անառիկ բերդեր՝ Էրզրումը, Կարսը և Վճռական հակահարված տվեցին Ղարաբիխսայում, Բաշ Ապարանում և Սարդարապալատում: Սակայն կանքի փորձություններով իմաստնացած քննամի գորահրամանատարը կարողանում է գտնել այդ մեծ ինչով պատասխանը: Հայ գորքն ու ժողովուրդը ինչքան նահանջել, այնքան ուժգնացել էր նրա ատելությունն ու գայրութը. ինքնապաշտպանության իր բնագործ նա զգացել էր, որ այս վերջին հողակորի վրա պարտավոր էր սկսել համաժողովրդական պատերազմ իր դարավոր քննամու դեմ, գործի դնել բոլոր հնարավոր և անհնար միջոցները և դրական պատասխան տալ լինել թե չինել հարցին: Թուրք գորահրամանատարը հետապնդող գազանի հոտառությամբ զգում էր, որ վիրավոր և հայածված որսի հետ պետք է զգույշ լինել, գործի դնել նաև դիմագիտական լարախաղացություն, իր և իր գորքի պատիվը փրկելու, Բարումում հայերի հետ «պատվավոր» հաշտություն կնքելու համար: Զայրացած Վեհիք Փաշան խոստովանում է, որ հայերը Սարդարապատում ջարդեցին բորբերի «քեները», «Ղարաբիխսայում» «տուրերը» և խիստ դժվարացրին Բարու հասնելու իրենց ծրագրի իրականացումը: Հետին թվով իմաս բվում է, թե հեշտ է նկարագրել պատմական այդ իրողությունները և արժանի գնահատական տալ այդ իրադարձություններին, մանավանդ արդեն վերացել է ուսումնասիրությունների առաջ դրված տարուն. պատմական ճշմարտությունը իր ողջ կերպարանքով կարող է կանգնել ընթերցողի առաջ: Քաղաքացիական մեծ խիզախություն և պատասխանատվություն էր պահանջում 1973-ին գրել այդ ճակատամարտերի իրական նշանակության մասին, ցույց տալ, որ ոչ թե «քայլատանիք ազգային կուսակցությունները» (ինչպես տասնամյակներ շարունակ գրել են) հայտարարեցին Հայաստանի առաջին անկախ հանրապետության ստեղծման փաստը, այլ այդ գոյության իրավունքը նվաճեց ողջ հայությունը՝ Վճռական հաղթանակ տանելով բորբական գորքերի դեմ, նրանց ստիպելով գնալ այլպիսի գիշումների և Բարումի պայմանագրով հաշտվել հայկական «փոքրիկ պետության» առեղծման փաստի հետ: Անդրովկասյան Սեյմի հայ պատվիրակների անտեղյա-

կուրյունը երեք ճակատամարտերում հայ ուազմիկների տարած հաղթանակներին բույլ շտվեց նրանց Բարումի բանակցությունների ընթացքում դիմագիտական ասպարեզում լիովին օգտագործել այդ հաղթանակների արդյունքները: Սակայն հայ պետականության իինգդարյան կորսությունը թեկուու և շատ փոքր տարածքում վերականգնվեց հայ պետականությունը: Չնայած Ժամանակին գրաբնիշի կատարած «մաքրացրմանը», Ամիրեկյանին հաջողվեց ցույց տալ, թե ինչպես հայ բոլշևիկները հավատացին բուրք «կարմիր ասկյարների» հեղափոխական առաքելությանը և մողոված համաշխարհային հեղափոխության հաղթանակի գաղափարով, նրանց աշքերի առաջ բուրքերի ձևորով սրի քաշվեց Ալեքսանդրապոլի և Ղարաբիխսայի մեծ բվով խաղաղ բնակչություն:

Ինչպես սկզբում նշեցի, վեաի սյուժետային բարդ հանգույցները ծավալվում են նրա երկու զլասավոր հերոսների՝ Ռոբերն՝ և Խապարի կյանքի տարբեր իրադարձությունների ֆոնի վրա: Սակայն դա զեղարվեստական մի հնարանը էր՝ այդ երկու հերոսների միջոցով նկարագրել ուազմանակատային կյանքի և գավառական փոքրիկ քաղաքի, որանց հետ միասին Արևելյան Հայաստան կոչվող 10.000 քառակուսի կմ փոքրիկ տարածքի վրա ապրող մոտ մեկ միջին հայության մաքրառուները, օրիասական ճիգերը, արևի տակ ապրելու տեղ նվաճելու համար: Երեք տարփա դեպքեր են նկարագրված վեպում, բայց ի՞նչ երեք տարփ... ամեն մի օրը, ամեն մի ժամը ճակատագրական է այդ հինավոր ժողովրդի իր վերջին հողակորին կառչած զավակների համար, որոնք չեն ուզում դառնալ վերջին նոհիկաններ: Առանց շափականցության այդ երեք տարփին ամբողջ մի դարաշրջան է հայ ժողովրդի բազմադարյան պատմության մեջ: Հնարավոր չէ խոսել վեպի բոլոր հերոսների մասին, իսկ նրանց անունների բարկումն անզամ մեզնից կլաի բազմաթիվ եցեր: Պատմական հայտնի այրերից բացի ընթերցալը հուզմոնքով հիշում է և վերլուներցում հստակ մարդկանց սիրանքների նկարագրությունները, Հաջիղարա զյուղի բնակիչ ութունն անց Ալեք բիձայի և նրա պատավ բրոց՝ Մարգարիտի անօրինակ սիրագործությունը զարմանք և հիացմունք է առաջացնում ընթերցողի մոտ: Հինգ տասնյակից ավելի բուրք զինվոր և սպա ոնչացնելով, իրենք էլ զոհվում են բուրքերի կողմից պայրեցված գոմում: Եթե բուրքերը հայտնաբերում են, թե

Են եղել իրենց դեմ կովողները՝ «անշարժացած մերմակ առատ մորուրով ծերունի և սևազգեստ մի պառավ», զարհուրանքով հեռանում են: Եթե ծերունիներն են այսպէս կովում, որեմն պետք է անհապաղ հեռանալ շեյքանի այդ գյուղից:

Չես կարող հուզմոննորով չիշել Ղարաբիլիսայի բնակիչներ Աղարյան քոյրերի և նրանց 12 հարևան հայուիթների ինքնարունավորման տեսարանը. գեղեցիկ աղջիկները գերադասում են մեռներ, քանի հանձնվել թուրքերի ողորմածությանը: Ատելուրյամբ ես լցում թուրք վախչուտ սպայի նկատմամբ Մարուշի մահվան տեսարանը կարդախի: Մանուշակի աշքերով այդ փխրուն աղջիկը մկնդեղ է ընդունում և մեռնում անրիծ:

Իգական սեռի շատ կերպարներ է կերտել հեղինակը. Վերգոշը՝ իր ժողովրդի ապագային հավատացող, վճռական հասարակական գործիչ Դշլուսին՝ գարբականի աղջիկը, որը քաղցից շմեռնելու համար գնում է բիրտ ու վայրենի Գալոյի հետ, բայց ինքը հասկանում է, որ հացից կարևոր սերն է կյանքում: Ահա Քարմիլեն՝ Պոլսում հարազատներին եղենի ժամանակ կորցրած աղջիկը, որը ճակատագրի բերումով հայտնվել է հեռավոր Լու-Անջելոսում, ապա արյան կանչով հայտնվել է հայ-քորքական մարտերի բոհուրուում, Սիրանը, Հերիքնազը... տարբեր մարդիկ են նրանք, ունեն տարբեր բնավորություն, ոչ մեկին մյուսի հետ չես շփորի, սակայն նրանք բոլորը մեր ավանդապահ հայ կանայք են և աղջիկներ, որոնք եքն պահի գա, կարող են կովել եզ առյուծի խիզախությամբ, բայց կարող են լինել քնքույշ ու նուրբ, սրատվախնդիր, արարիչ ձեռքերով և հոգով, ընտանիքի ամրությունը պահպանող...

Առավել հարուստ է տղամարդ հերոսների շարքը. ամենից առաջ Խալարը, համեստ, քաջ, անձնազոհ, միենույն ժամանակ համառ և սկզբունքային, անհաջող տմարդի վերաբերմունքի նկատմամբ: Նա ոչ մի անգամ չի քարնվում, չի խուսափում զորահավաքից: Երեք տարիների ընթացքում մարտնչում է տարբեր վայրերում, կովում խիզախությամբ: Դեռևս ցարական բանակում ցուցաբերած արիության համար պարգևատրվում է Գեղրգիկյան խաչով: Նրա համար հայրենիքը վերացական հասկացություն չէ, այլ ուեալ ու շոշափելի, հայրենի Ղարաբիլիսան, հեռավոր Կարսի ու Էրզրումը, Սերդենեկը և հայրենի փոքրիկ շենքը՝

Ղյաղը, Դարբասը, Հաջիղարան: Մարուշի կորատյան կոկիծը նրա հոգում քացում է չսպիացող վերք, սակայն նրա բարի հոգին չի դաժանանում. անհուն կարեկցանքով է նա վերաբերվում դժբախտացած աղջիկներին, սիրակարոտ սրտերին, նոյնիսկ քրուիի Սուրբին, որին ստիպում էին հայ գիննվորների որսով զրադեկ: Ահա Ռուբենը՝ Ներսիսյանն ավարտած ուսուցիչը, որը հաստատվում է Ղարաբիլիսայում, այնուղի ու որոնում հայուրյան լավագույն ապագայի սաղմերը, դառնում տեղի կոմոնիստական առաջին կազմակերպության անդամ, սկզբում դատապարտում է իր կարծիքով «խմբապետների սարքած կոխվը» քորքերի հետ և մտածում է՝ «իրենց կոխվն է, քող իրենք էլ կովեն»: Սակայն հայտնվելով ռազմաճակատում նա հասնում է այն գիտակցության, որ այդ կոխվը ողջ հայ ժողովրդի կոխվն է, իրենց լինելուրյան երաշխիքը և կովում է ուժերի ողջ լարումով: Անձնական կյանքում խանդուտ, կասկածող և անհավատ Ռուբենը միամտորեն հավատում էր, որ 1920-ին Հայաստան մտած քորքերը ոչնչացնելու են միայն «գրաշնակ իմպերիալիստների տիրապետությունը»: Իր չպատճառաբանված հավատի համար նա պատասխան է տալիս կյանքով: Դաժան են հնչում թուրք փաշայի խոսքերը. «Հերիֆ եք, հայեք, կոմունիզմը կարող է ամեն տեղ մտնել, բացի Թուրքիայից և Հայաստանից: Թուրքիա չի մտնի, բանզի մենք չենք ուզում, Հայաստան չի մտնի, բանզի շտուռ Հայաստան չի լինի»:

Գրքի հերոսների շքեղ պատկերաբանում չես կարող չիշել գնդապետ Մազմանյանին՝ ալեքսանդրապոլցի խիզախ հրամանատարին, որի միակ նպատակը և ցանկությունը հարազատ ժողովրդին ծառայելն է, նրա պաշտպանության ապահովությը: Նազարբեկովը, որ սկզբում նրա մասին մտածում էր, թե «անդոր են սեփական կարծիք ունեցող մարդիկ», մարտի ընթացքում համոզվում է, թե ինչ անկեղծ հայրենասերի սիրտ է տրուիում նրա մարմնում, զարմանում ժողովրդի մարդու նրա պարզ կենսափիլխոփայության վրա, ըստ արժանվույն գնահատում նրա զործունեությունը: Զեմ կարող երկու խոսքով չիշել հոչակած հայդուկ Կոտոշ Արամի (Արամ Սանոյան), Սուրեն Եղշատյանի սիրանքների նկարագրություններով կերտված նրանց էսիզովիկ կերպարները, որոնք ավելի քանի և հավաստի են դատում տասնամյակներ հետո, ար-

Դեն Կիրովականի հին գերեզմանատանը նրանց շիրմների վրա սպացող կանանց ներկայությամբ: Վեպի երկու հատորում էլ ներկա է, մի հետաքրքիր կերպար՝ Կարարիխսայի նահապետներից մեկը՝ Մոտ բիծան: Իրական անձնավորություն է նա, որ իր ներկայությամբ հոյս ու հավատ է ներշնչել բորբական ժամանակավոր լծի տակ գտնվող դարաքիլիսեցիներին: Որպեսզի ժողովուրդը չկորցնի հոյսը վաղվա օրվա նկատմամբ, այդ դժոնի օրերին Մոտ բիծան հազել է իր տոնական զգեստները՝ ավանդական չուսան և գեղեցիկ փափախը, այցելել հոյսահատ, դժբախտության մեջ գտնվող ընտանիքների, սիրտ տվել, օգնել ապրել ու մաքառել: Գեղեցիկ է նույնիսկ նրա մահը՝ խիճով ու զվարքությամբ լեցուն: Խնճունն անց նրա մանկության ընկերք գրագ էր եկել, որ Մոտ բիծայից երկար ապրելու դեպքում պետք է պարի նրա քաղման ժամանակ: Եվ մանկության ընկերք կատարում է իր խոստումը. քաղում և պար ... Սեծ խարհուրդ կա դրա մեջ, չէ՞ որ շարունակվում է Մոտ բիծայի սերունդների՝ որդիների և քոռների կյանքը, ծխում է ծուխը ծխանի: Հիշողության մեջ անխարք է մնում նաև եղափլվեցի Մացակի կերպար՝ իր թերե պարծենկուտությամբ, խեճը հերոսությամբ, շարին պատռող, մահվան աշքերին անգամ աներկյուղ նայող աներեր և անկոտրում կամքով:

Դրական այդ հերոսներից յուրաքանչյուրի մեջ իր հարուստ հոգուց մի մաս է դրել հեղինակը, մի պայծառ նրբերանգ, մի նուրբ ելեւջ, կենասհաստատ մի սեր, անսահման բարություն, անսպառ հումոր: Նրանք բոլորը իրական անձնավորություններ լինելով հանդերձ, Ամիրքելյանի հոգեգափակներն են, նրա սրտի, հոգու, մտքի և տքնածան աշխատանքի արդյունքը... այդքան բազմարիվ և այդքան տարբեր, այդքան առանձնահատուկ...

Հնարավոր չէ պատմել վեպում կատարվող բոլոր իրադարձությունները, վերլուծել ստեղծած գեղարվեստական բոլոր կերպարները: Համառոտակի ծանրությունը վեպում ծավալված դեպքերի մի մասին ուներ միայն մի նայատակ. որ ընթերցողը իմանար, թե ինչ հետաքրքրություն են ներկայացնում վեպի երկու հատորները, որոնք ընթերցվում են մեկ շնչով: Պատճական իրավիճակների համանմանությունը կօգնի ընթերցողին լավ հասկանալու, թե ինչ զնով է մեզ հաջողվել վերստին ստեղծել

մեր պետականությունը: Համարյա երկու տասնամյակ է անցել վեպի տպագրությունից: Այն մեծ հաճույքով, չխամրող հետաքրքրությամբ ընթերցվում է նաև այսօր և մտածում ես, թե ինչքան լավ կլիներ տեսնել վեպի երկրորդ հրատարակությունը, սակայն ոչ այն տեսքով, որ հրատարակվել է, այլ այն տեսքով, որ հրատարակության է հանձնել հեղինակը: Ամիրքելյանի այրին՝ Լիլիկ Մարտիրոսյանը, որը գրողի մահից հետո մեծ խնամքով ու սիրով կազմել և հրատարակել է պատմվածքների երկու ժողովածու՝ «Անծանոք ծանրություն» և «Չանկետացող ստվերներ» խոսուն վերմագրերով, նախանձախնդիր հետևողականությամբ վերականգնել է վեպի նախնական տարրերակը, վերականգնել գրաքննիչի «զաղափարական» կրծատումները և պատրաստ է ընթերցողի դատին ներկայացնել երկու հատորները իրենց ամրողության մեջ: Հավատացած եմ, որ այն ջերմ ընդունելության կարժանանա ընթերցող հասարակության շրջանում և իր հայրենասիրական առաքելությունը վկատարի երիտասարդ սերնդի առաջ, առանց վերամբարձ խոսքերի նրան տարով անձնազոհ հայրենասիրության դասեր, որ այժմ այնքան պետք է մեզ բոլորին: Դա կլիներ նաև հարգանքի ուշացած տորք վաղամեռիկ հեղինակի սլայծառ հիշատակին, որը, ավատ, նրան արդեն պետք չէ:

Դա խիստ անհրաժեշտ է մեզ՝ ապրողներիս...

Հայաստան օրաբեր, 27 մայիսի 1997:

ԱՇՈՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ ԵՎ ԱՐԵՎԱՏԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՏՍՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ

Արանավոր պատմաբան Աշոտ Հովհաննիսյանի «Նալբանդյանը և նրա ժամանակը» կորողային աշխատությունը հայ ժողովրդի պատմության մի ժամանակահատվածի՝ անցյալ դարի 50–60-ականների խիստ բարդ ու հակասական հարցերի ու խնդիրների յուրատեսակ հայելին ու արձագանքն է: Հայ ժողովրդի արևելյան և արևմտահայ հաս-

վածների հասարակական միտքը հուզող բազմարիվ հարցեր իրենց ինքնատիպ արտացոլումն ու լուծումն են գուել այդ աշխատորյան նանականդ առաջին հատորում: Աշխատորյունը կարծես թե բանալի է տվյալ ժամանակաշրջանի ցանկացած խնդրի վերծանման ու բացահայտման համար: Այդ մեկնակետից էլ ես մոտեցել եմ նշված աշխատորյանը՝ արևմտահայ կյանքի, սահմանադրական շարժման, նրա կողմնակիցների և հակառակորդների, այդ ժամանակի նշանավոր գործիչներ Սկրտիչ Խրիմյանի և Գարեգին Մրվանձոյանի կյանքի ու գործունեության շառավիդները պարզաբանելիս: Այս հոդվածում խիստ սեղմ և համառոտակի կաշխատեմ անդրադառնալ Աշոտ Հովհաննիսյանի հարցադրումներին, որոնք վերաբերում են Սիրայել Նալբանդյանի դիրքորոշմանն արևմտահայ սահմանադրական շարժմանը, ազգային-ազատագրական պայքարին, ապա նրա գործն այլ պայմաններում և այլ ժամանակներում ինքնատիպ շարունակողներին՝ Սկրտիչ Խրիմյանին և Գարեգին Մրվանձոյանցին, նրանց տված՝ Աշոտ Հովհաննիսյանի գնահատականին:

Իր արտասահմանյան ուղևորությունները ձեռնարկելիս, Սիրայել Նալբանդյանը երկու անգամ եղավ Կ. Պոլսում: Առաջին անգամ Կ. Պոլիս մեկնելուց առաջ 1860 թ. օգոստոսի կեսերին նա եղավ Երևանում, ապա Էջմիածնում, կարողիկոս Չոխաճյանից հեղիկահայ վաճառականների կտակների գործը ստանձնելու արտոնություն ստանալու համար: Հենց դրանից հետո Թիֆլիսում Նալբանդյանը հանդիպումներ ունեցավ իր վաղեմի քշնամու՝ Սարգսի Զալալյանի հակառակորդ մտավորականների հետ, և այդտեղ էլ նոր ուժով բորբոքվեց Նալբանդյան-Զալալյան պայքարը: Սեր խնդրից դուրս է անդրադառնալ այդ պայքարի մանրամասներին: նկատենք միայն, որ, ինչպես միշտ, Նալբանդյանը հաղբանակով է դուրս գալիս այդ պայքարից: Կարողիկոսից ստանում է օրինության կոնդակ, որը, անշուշտ, գավել էր նրա քշնամիներին: Կարճ ժամանակ անց՝ 1860 թ. նոյեմբերի 20-ին Նալբանդյանը Կ. Պոլսում էր: Դրանից 10 օր առաջ, 1860 թ. նոյեմբերի 10-ին Սկրտիչ Խրիմյանը Գարեգին Մրվանձոյանցի, Երևմիա Տեկանցի և Հրաշյա Ակիլյանի հետ Վաճից Պարսկաստանի վրայով ուղևորվում է Անդրկովկաս՝ ծանրանալու արևելահայ մշակութային կենտրոններին, հասարակական

գործիչներին և իր «Ժառանգավորացի» համար հանգանակություն կատարելու նպատակով: Երևանում նրանց սպասում էր ջերմ ընդունելություն: Տեղի մտավորականները մի ամիս առաջ պատփառ էին ունեցել հյուրընկալելու ուսւահայ հրապարակախոսութիւն, և նրանցից մեկը խանդավառ տողեր էր հանձնել քղյուն «հսկա, բարձր հասակով, սև հոնքերով, մեծ խաժակ աշքերով, առնական դեմքով»¹ Նալբանդյանի մասին: Ահա նոյն այդ մարդիկ ջերմորեն բնդունում են Խրիմյանին, որի մասին մինչ այդ Սելիրզադեն կողման կողման արդյունավետ էր տպել նոյն Նալբանդյանի աշխատակցած «Հյուսիսափայլում»²: Երևանցի մտավորականը Նահապետ Արանայանն էր՝ Խաչատոր Արովյանի նախկին աշակերտը, որ արդեն մեկ ամիս անց անդքան է մտերմանում Խրիմյանի և Մրվանձոյանցի հետ, որ նրանց հետ ուղևորվում է Արևմտյան Հայաստան, դատնում «Ժառանգավորացի» աշակերտներից մեկը, ապա «Արծվիկում» հանդես գալիս հրապարակախոսական հոդվածներով:

Էջմիածնում կարողիկոսից կոնդակ վերցնելով՝ Խրիմյանն սկսում է իր շրջագայություններն արևելահայ մշակութային կենտրոններում: Առանձնապես բուռն բնդունելության է արժանանում Խրիմյանը Թիֆլիսում: Տեղի եկեղեցիներում նրա բարոգների ժամանակ հավաքվում էր հսկա բազմություն: Դա բացատրվում էր նրա բարոգների բովանդակությամբ: Այդ տարօրինակ վարդապետը, մի կողմ դրած հայսմավորքն ու ավետարանը, շանքեր էր արձակում ժողովրդի ցեցերի՝ վաշխառուների և նոյնիսկ իրենց հոգևոր պաշտոնը շարաշահած հոգևորականների վրա: Այդ շանքերից բաժին հասան նաև Խմերեքիայի թեմի հոգևոր առաջնորդ Սարգսի Զալալյանին: Ակալեց քսուրյունների և նենգությունների մի մեծ արշավանք, ընդիհատվեց Խրիմյանի շրջագայությունը Թիֆլիսում, ցուցակագրված հանգանակությունների գումարը դեռևս շնավարված «Արծվիկ... ձեռնունային ու թեարափ վերադարձավ Երևան», իսկ Էջմիածնում նրանից հետ վերցրին կարողիկոսի կոնդակը, Խրիմյանի ճանապարհորդությունն ընդհատվեց: Փաստորեն Զալալյան-Խրիմյան պայքարն ավարտվեց առաջինի հաղորդյամբ, չնայած բարոյական հաղբանակը Խրիմյանի կողմն էր: Ինչպես տեսնում ենք,

¹ Ա. Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, հ. 1, Երևան, 1955, էջ 333:

² «Հյուսիսափայլ», 1860, թ. 11, էջ 407-408:

տարրեր են գործիչները. ուստական կայսրության կենտրոնում հրատարակվող պարբերականի՝ «Հյուսիսափայլի» գլխավոր աշխատակիցը և Արևմտյան Հայաստանի տարածքում առաջին պարբերականի խմբագիրն ու գլխավոր աշխատակիցը: Սակայն նոյն ուղղությամբ էին տեղում նրանց մոլած պայքարի շաճքերը՝ Սարգիս Զարայանի և նրա արքանյակների դեմ, որոնք Խրիմյանի դիպուկ խոսքերով ոչ թե հոգևորական էին, այլ «աղ անհամեալը» և վաղուց էին հեռացել իրենց քրիստոնեական գործեակերայից:

Նոյն այդ ժամանակ Նալբանդյանը Կ. Պոլսում ծավալել էր իրեն հատուկ կրօստ և քուն պայքար: Նա գիտակցում էր Կ. Պոլսի դերը արևմտահայ մշակութային ու հասարակական կյանքում, որ այդ ժամանակ սուր պայքար էր ընթանում ազգային սահմանադրության ընդունման համար: Պայքարն ընթանում էր մի կողմից՝ բորբական կառավարության և նրան հարած ամիրայական վաշխառուական վերնախավի, մյուս կողմից՝ Ֆարանշայում կրթություն ստացած լուսավորյալ մտավորականների և նրանց հարած արենատափորական խավերի ու գավառից պանդխտած հոծ հայության ներկայացուցիչների միջև: Թեև ժամանակակիցների բնորոշմանը՝ պայքարող այդ կողմերն ստացան «զուսավորյալը և խավարեալը»¹ անվանումը, բայց պայքարի հիմքում ընկած էր տեսեսական գործոնը: Նալբանդյանը միանգում հայտնվեց այդ պայքարի հորձանուում: Չնայած այն համգամանքին, որ 1860 թ. մայիսի 24-ին հայոց Ազգային ժողովը Կ. Պոլսում ընդունել էր սահմանադրությունը, սակայն օսմանյան մայրաքաղաքը շարունակում էր մնալ արևմտահայերի ազգային ինքնորոշման համար պայքարող ուժերի կարևոր հանգրվաններից մեկը: Աշոտ Հովհաննիայանի քնորագրությամբ, Կ. Պոլսում Նալբանդյանը «խստ կարիք էր զգում ազատ և անշպար խոսք ասելու իր ժողովրդին, համախմբելու նրա ազատագրման համար պայքարող ուժերին, պարզելու նրանց անելիքը, մշակելու նրանց գործողությունների համար հասուկ իրահանգներ ու ծրագրեր»²:

Կ. Պոլսում Նալբանդյանն ուներ իր համակիրների մի քոյլ, որոնք վաղօրոք ծանոթ էին նրա գրվածքներին Սվաճյանի «Մեղվում» և Ստ.

¹ Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, ձև. 4177, լ. 40:

² Ա. Հովհաննիայան, նշվ. աշխ., 330:

Ուկանի «Արևմուտքում», «Հյուսիսափայլից» արտատպած հոդվածներից: Նալբանդյանի՝ Կ. Պոլս ժամանելու պահին ժողովրդական զանգվածների ճնշման տակ ազգային գործերի տնօրինությունը, խմբելով կղերաամիրայական վերնախավի ծեռքից, անցնում է արենատափորների ծեռքը: Քիչ ժամանակ անց այդ շրջադարձին հաջորդեց հակասահմանադրական ուսակցիան: Վախեցած ժողովրդական շարժումներից՝ սահմանադրության հեղինակները դաշն կնքեցին հակասահմանադրականների հետ, և ազգային սահմանադրությունը հանձնվեց Բ. Դուն վերաբենությանը: Արդյունքում ստացվեց, Նալբանդյանի բնորոշմամբ, «Քլիփատված» սահմանադրությունը: Ուսահայ հրապարակախոսը հայտնվեց սահմանադրականների և նրանց հակառակորմների միջև մղվող պայքարի կիզակեռում և իր սլաքներն ուղեց սահմանադրության բացահայտ քննամիների՝ Չամունցյան-Տերյենց պատվելիի և նրա արքանյակների դեմ, որոնք ազգային սահմանադրությունը մատնում էին բորբական իշխանություններին, բնորագրելով այն որպես «պետություն պետության մեջ»: Սվաճյանի «Մեղվում» լույս տեսան Ս. Նալբանդյանի «Կ. Պոլսի լուսավորչական համայնքը», «Ազգային քշվառությունը» և հատվածներ «Երկու տող» պամֆլետից: Այդ հոդվածները Ս. Նալբանդյանի մղած պայքարի արտացոլումն էին: Առանձնապես ուժգին էին «Ազգային քշվառություն» հոդվածը և «Երկու տող» պամֆլետը, որ ուսահայ հրապարակախոսը հայ հոգևորականների դեմ Ուսասատանում մղած սուր պայքարը տեղափոխում էր Կ. Պոլս, մերկացնելով նրանց արևմտահայ գործիչներին, Կ. Պոլսի և արևմտահայ գավառի ազգային ջոջերին՝ Պոլսու Սելիքյանին, Հովհաննես Չամունցյանին և այլոց: Ս. Նալբանդյանը հարձակվում էր Կ. Պոլսի Ազգային և կրոնական ժողովների վրա, որոնք կիսատ-պյուտ որոշումներով պաշտպանում էին Վանի հոգևոր առաջնորդ, վարդապետ, ապա եալիսկոպոս Պոլսու Սելիքյանին: Ազգային սահմանադրության իրավական նորմերի գործադրման տեսանկյունից Նալբանդյանը պահանջում էր Պոլսուն դատավարութել իր գործած չարիքների համար ոչ թե կրոնական ժողովի կիսատպատ որոշումներով, այլ պետության պատժական մարմինների միջոցով՝ իրեն քրեա-

կան համագործի: Գավառահայ ունակցիոն կրերը սարսափում էին սահմանադրական վարչական բարեկուստումներից: Նրանք իրենց դեկապար Պողոսի հետ դաշն են կնքում հայ չորպաճիների, քորդ շեյխութի և դերքեյների հետ: Անզիջում Նալբանդյանը կտրուկ ներկայացնում է իր հավատամքը. «Չի կարելի իրավադատուրյուն քարոզել և անիրավությունը պաշտպանել... Չի կարելի ազատուրյուն քարոզել և խոճմտանք բռնաբարել»¹: Վերլուծելով Մ. Նալբանդյանի՝ Պողոսի դեմ ուղղված պայքարի ընթացքը, Աշոտ Հովհաննիսյանը նշում է. «Պողոսին մերկացնում էին Խրիմյանն ու նրա աշակերտները՝ Սրբանձտյանցը և որիշներ, արտահայտելով տեղական առևտիք և ապրանքայնացող գյուղատնտեսուրյան պրոգրեսիվ մղումները»²: Զնայած «պրոգրեսիվ» սիմակին, համեմայնդեպս, այստեղ Խրիմյանը և Սրբանձտյանցը ներկայացվում են իրեն գավառական նոր զարգացող բորժուազիայի ներկայացուցիչներ: Այս գնահատականի հետ համաձայնել չենք կարող: Նրանք երկուսն էլ՝ և ուսուցիչը, և՝ աշակերտն արտահայտում էին ամենալայն դեմոկրատիայի՝ շրավոր գյուղացիուրյան և արիեստավորուրյան շահերը և այդ դիրքերից էլ պայքարում էին և բարձրաստիճան հոգևորականուրյան, և՝ ամիրայուրյան, և՝ սահմանադրուրյան նախկին հեղինակների դեմ, որոնք աստիճանաբար դաշն էին կնքում նրանց քշնամիների հետ: Շարունակելով իր միտքը գավառահայ բորժուազիայի մասին, Աշոտ Հովհաննիսյանը գրում է. «Գավառահայ բորժուազիան ավելի մոտ էր կանգնած գյուղացիուրյանն ու արիեստավորուրյանը...: Նրա առաջավոր ձայնատարները պայքարի մեջ էին ֆեռդալների և առևտրակաշխառուական ցեցերի հետ: Նրա զաղափարախոսներից մեկը՝ Խրիմյանը, քանի դուռ չէր լրել գավառը և չէր կորցրել կապերը գավառի ժողովրդի հետ, քարոզում էր ժողովրդասիրական, հայրենասիրական իդեալներ, լուսավորում արտադրող ճասայի միտքը, խրախուսում արտադրուրյան բարձր եղանակներ, շարժում գավառահայ բորժուազիայի ազգային-քաղաքական մրափած

նուանու ու գիտակցությունը»¹: Խրիմյանի գործունեության հետևողական ուսումնասիրությունը մեզ հանգեցրել է այլ կարծիքի: Նա երբեք իր կապը չկտրեց հայ գավառներից: Այդ հարցին թերևս լավագույնն կարելի է պատասխանել հայ եկեղեցու ականավոր պատմաբան և հմտութարենքիր Մադարիա Օրմանյանի՝ Խրիմյանի վերաբերյալ աջ դիրքերից արված բննադրատուրյամբ. «Խնճն գավառի գավակ, գավառական կյանքի անձնանվեր, գավառի ժողովրդին վիճակով տոգորված և գավառացի տարրին բարվորումը միայն իրեն նպատակ ըրած, գավառեն զատ բան չխոսեցավ, գավառեն զատ բան չսեց, բայց դժբախտաբար այդ նպատակին մեջ ալ արյունավոր չեղավ»²: Բավական է հիշել պատրիարք Խրիմյանի օրոր կազմված «Գավառական հարստանարությունների» տեղեկագիրը և նրա բննարկումը սահմանադրական հորջորջված Ազգային ժողովի նիստերում, որպեսզի անվերապահուեն շեշտենք, թե պատրիարք Խրիմյանը կապը երբեք չկտրեց գավառից և նրա շահերի պաշտպանուրյան համար էլ հրաժարական տվեց պատրիարքուրյունից: Պատրիարք Խրիմյանի պայքարն ազգային սահմանադրուրյան վերաբնուրյան համար փաստորեն նպատականդված էր գալառական՝ գյուղացիական և արիեստավորական խավերի շահերի պաշտպանուրյանը: Խրիմյանի գործունեության բնուրագիրը չի փոխվում նաև հետագա տարիներին: Աշոտ Հովհաննիսյանի վերոհիշյալ միտքը ճիշտ է ընդիանուած իրեն գնահատական բորժուազիայի վերընթաց շարժմանը, երբ ֆեռդալիզմի կապանքներից ազատվելու համար նա դաշինք էր կնքում ժողովրդական զանգվածների հետ: Բայց կոնկրետ տվյալ դեպքում Խրիմյանն ու Սրբանձտյանցը հանդիս էին դայխ իրեն ժողովրդական զանգվածների, ոչ թե բորժուազիայի ներկայացուցիչներ և շահերի արտահայտիչներ:

Սակայն հետ դառնանք նորից Նալբանդյանի պոլիսյան գործունեությանը: «Ազգային քշվառուրյուն» հողմածում Նալբանդյանը պահանջում է եկեղեցու ուժորմ համարյա բոլոր բնազավաններում. ուժորմ եկեղեցու տնտեսական կառավարման մեջ, եկեղեցականների՝ դեպի

¹ Ա. Հովհաննիսյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 2. Երևան, 1947, էջ 304:

² Ա. Օրմանյան, Ազգապատում, հ. Գ, Երևանիւմ, 1927, էջ 4255:

1. Ա. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 2. Երևան, 1947, էջ 304:
2. Ա. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 374:

ազգն ունեցած հարաբերության մեջ, եկեղեցականների կրթության հարցում և այլն: Ակզրից եկեղեցու ռեֆորմ պահանջելով վերից՝ այսինքն, կրտնական ժողովի կողմից, Նալբանդյանն զգուշացնում է, որ հակառակ դեպքում ժողովրդական զանգվածները ուժի կենսն եկեղեցու դեմ: Սակայն նույնիսկ այդ սուր հողվածն ի գորու չեղավ օգնելու Կ. Պոլսի կրոնական ժողովին՝ Պողոս Մելիքյանին կարգադրության անելու կամ պատժելու համար: Դեռ դատը շավարտված, Պողոսը փախավ Վասպորական և շարունակեց հոգեոր առաջնորդի իր պաշտոնը: Անցավ 10 տարի: Նոր պատրիարք Խրիմյանը 1870-ին սահմանադրության գործադրիչի պաշտոնով Վաճ է ուղարկում իր նախկին սահման ու գինակցին՝ Գարեգին Սրբանձույանցին: Այդ նշանակումն ինքնին հարցականի տակ էր դնում Պողոս Մելիքյանի՝ իբրև հոգեոր առաջնորդի լինելությունը: Վաճում նոր ուժով բորբոքվում է պողոսյան-ապողոսյան պայքարը: Ժամանակակիցներից մեկի դիպուկ բնութագրությամբ¹ ողջ արևմտահայ կյանքը, նոյնիսկ Պոլիսը, անգամ բուրժական իշխանությունները բաժանվում էին երկու խմբի՝ պողոսյաններ և ապողոսյաններ, բայ որում, սուրբանը նշվում էր իբրև Պողոսի կողմնակից: Արխիվային նյութերը² հավաստում են, թե ինչ վճռական պայքար է նդել Պողոսի դեմ Սրբանձույանցը: Պատրիարք ուսուցին ուղղած իր նամակներում մեկ առ մեկ բվարկելով Պողոսի հանգանքերը (ինչպես ժամանակին անում էր Նալբանդյանը), ցոյց տալով նրա կապը Վաճի շորպաճների՝ Մարտրյանի, Պանիքյանի, հայկական ծագում ունեցող քորքացած Թեմորքաղների գերդաստանի հետ, Սրբանձույանցը վճռականորեն պահանջում է Խրիմյանից Պողոսին հեռացնել Վաճից՝ թեկուզ իշխանությունների միջոցով, դատել նրան որպես քրեական հանցագործի (այսինքն՝ այն, ինչ պահանջում էր Նալբանդյանը տասը տարի առաջ): Իրեն ձերքակալելու եկած զաքրիների մոտ Պողոսը բացականչում է. «Խիանաք (դավաճան – Է. Կ.) Խրիմյան»,՝ ազգի մեջ եղած հակառակարական խլոտումների հեղինակը համարելով հայոց պատրիարքին. «Զեյրունը ապստամբեցուց կառավարության

դեմ»³, հայտարարությամբ Պողոսը հայոց պատրիարքին և նրա զինակիցներին մատնում է կառավարությանը: Նույնիսկ Պողոսին աքտորելուց հետո, օգտագործելով Խրիմյանի հրաժարումը պատրիարքությունից, Պողոսի կողմնակիցների՝ Պոլսի և զավառի կրելասամիրայական վերնախավը, ցանկանում էր առանց միջոցների մեջ խորականություն դնելու, վերականգնել նրա դիրքերը: Սակայն դա չի հաջողվում: Փաստորեն Նալբանդյանի մղած պայքարն ափարտին է հասցվում Խրիմյանի և Սրբանձույանցի միջոցով: Վերջինս, որ 70-ականների երկրորդ կեսից ուղրով շրջագայել էր Արևմտյան Հայաստանի համարյա ողջ տարածքը, կազմել էր բազմաքիլ վայրերի վիճակսպառությունները, «Ժորտ աղքար» աշխատության մեջ և պատրիարքարանին ուղղած իր հաշվետու գեկուցագրերում մերկացնում էր իր կարգակից հոգեորականների շահասեր և արծարասեր ընթացքը և իր մեծ նախորդի նման դնում էր հայ եկեղեցու բարենորոգման պահանջը. «Ժամն է ազգն այ մարք եկեղեցին ու ժողովուրդը իր պականարար սրբազններն և հայ սրբերն: Ժամանակն է ազգը տիրացուական վիճակից հանել և քաղաքական քայլ առնոլ տար»⁴: Աղեքանները Նալբանդյանի և Սրբանձույանցի միջև ակներեն են: Սիրայի Նալբանդյանի մղած գաղափարական պայքարի անմիջական շարունակությունը նշան Խրիմյանի «Ազգային երկպատակություն», «Ազգային կեղրոնական վարչություն», «Հայրենյաց նոր հառաջադիմության համար նա՞րդ պեսոր է, թե Սահմանադրությունը», խորագրերով հոդվածները, որոնք բայց տեսան «Արծոի Վասպորականում»⁵: Առավել սուր և հետևողական էր նրա երիտասարդ զինակից Գարեգին Սրբանձույանցի՝ խորով և գործով մղած պայքարը: Իր խմբագրած «Արծոիկ Տարբոն» երկշարարերի էջերում հրատարակված բազմաթիվ հոդվածներում նա ցոյց է տալիս սահմանադրության պարզեցած «Չնորիները», այն, որ այդ օրենքը չի գործադրվում Կ. Պողոսում նրա հեղինակների աշքի առաջ, որ մնաց զավառում. «Եւ բաց առնունք զՏարբն և որ արյուր կտեսնանք գործ կամ կյանք սահմանադրության, որ գավառի հայր վայելեց նորա շնորհը. բողունք զգալառներ, Պոլիսն ինչ տեսավ տակալին. կկանգնի և

¹ Ա. Թերզիպաշյան, Արծիվը իր բույնի մեջ, Փարիզ, 1938, էջ 188:

² Ե. Զարենցի անվան Գ-քականության և արվեստի բանագրան (այսուհետև՝ Գ-ԱԹ), Սրբանձույանցի թ., 2-րդ բ., գ. 30, 32, 190, 191, 312, 466 և այլն:

³ Դիվան հայոց պատմության, հ. Ժ. Թիֆլիս, 1915, էջ 444:

⁴ Գ-ԱԹ, Թ. Ազատյանի թ., թ. XII, գ. 10525:

⁵ «Արծոի Վասպորական» 1861, № 1, 2, 3, 5, 8:

կիյնա. կրծշկվի և կրկին վիրավորված կապառկի. ազգը դեռ բարիք մը չտեսավ»¹: Այդ պայքարն առավել սուր կերպարանը ընդունեց, եթիւ Խրիմյանը նշանակվեց Տարոնի հոգեոր առաջնորդ, իսկ Ս. Կարասպիտ վաճրի միաբանները, խոշընդուտերով Խրիմյանի սահմանադրական ճիգերին, համերաշխավերով մի շարք զյուղապետերի՝ ռեխների հետ, բորբական իշխանության տեղական մարմիններին մատնում էին հոգեոր առաջնորդի ժողովրդաշահ գործունեությունը, նրան մեղադրելով պետական դավաճանության մեջ: Դավերն ու բարոյունները հասան այն աստիճանի, որ վաճրի միաբանությունը վարձեց բորդ ավագակի՝ Խրիմյանին սպանելու համար: Երեք անգամ կրկնվեցին մահափորձները, որից հետո Խրիմյանն իր համախոհներով մեկնեց Կ. Պոլսի: Իր ժողովրդանվեր գործունեության համար «արդարանալու» Ազգային կեդրոնական վարչության առաջ:

Նալբանդյանն այդ ժամանակ ազատազրկված էր Պետրովսկիովյան ամրոցում: Նոյնիսկ Ալեքսեյան ռավելինում նա ուշի ուշով հետևում էր արևմտահայությանը հոգող խնդիրներին, արձագանքում իր բարեկամ ու զինակից Հարուրյուն Սվաճյանի բոլոր հողվածներին: Իսկ Սվաճյանը, ինչպես վայել էր «Սեղմի» խրազրին և Մեշտինչային, իր հերթին անմիջականորեն արձագանքում էր բոն Արևմտյան Հայաստանում կատարվող կարեւոր իրադարձություններին: Նա հաճախ, առանց ինքնուրյունը հայտնելու, հողվածներ էր արտատպում Գ. արենքին Սրբանձույանցի «Արծվիկից», ուր խմբագիրը մերկացնում էր Ազգային կեդրոնական վարչությանը, նկարազրում տարոնահայության քշվառ կացությունը²: 1864 թ. բանտում գտնվող Նալբանդյանը բույլտվություն ստացավ Յ-րդ բաժանմունքի հսկողության ներքո հողված տպել «Հյուսիսափայլում»: Այդ հնարավորությունը Նալբանդյանն օգտագործեց զնահատելու «Սեղմի» և Սվաճյանի կատարած գործը, դրա հետ միասին բնորազրելու նաև Խրիմյանին և նրա խմբին. «Գ. ավառների դրու-

յունը նկարազրեց Մեղոն, Վասպուրականի թշվառությունը ստորագրեց Մեղոն, Տարոնի խոռվորյունը պատմեց Մեղոն, արժանապատիվ Սկրտիչ վարդապետին պաշտպանեց Մեղոն, նորա վերա զիշերային լուրյան մեջ իրացան դատարկողների ընդդեմ բողոքեց Մեղոն, գավառ շբողեց, գեղ շբողեց, ամեն ծակ ու ծուկ մտավ Մեղոն, բող մեռնի Մեղոն, բող վաճեցի պողոսները վառավորվեն»³: Նոյն 1864-ին Սրբանձույանցը պայքարում է ոչ միայն Պոլսի, այլ նրանից բարձր աստիճանի վրա գտնվող հոգեորականի՝ Ալբանարա Խաչատուր կաբովիկոսի դեմ, որն իր նախորդի՝ Պետրոս Բյուլբյուլի սպանությամբ զավթեց կարողիկուսական արոռը և Պաղսից ավելի անհազ շահագործում էր տարոնահայությանը: «Այս Խաչատուրն է, որ խեղճ ժողովուրդը այսպես կհարստահարէ, կկեղերէ ու մորքագերծ կընէ, նա է գավառին բանգիմարը, բաշիրը և զամշուր առնողը, որով հարյուրապատիկ կնեղեն գժողովուրդ...»⁴: Պատմելով Խաչատուրի բազմարիվ հանցանքների, հավաքած հարկերի և դրամաշորբուրյան մասին, Սրբանձույանցը մեծ համարձակությամբ Պոլսի Ազգային վարչությունից պահանջում է. «Ժ պատիժ Վարչություն, ի պատիժ արկեր ձեր ձեռքերը, քննեցեր, բայց և պատմեցեր, մեր ազգի թե՛ եկեղեցական և թե՛ աշխարհական ստահակները շատ են»⁵: Սրբանձույանցը մեկ առ մեկ բվարկում է հայ եկեղեցականների կատարած չարագործությունները Վասպուրականում, Այրարասում, Երուսաղեմում և Կ. Պաղսում, ապա պահանջում է. «Ժակ դու Վարչություն... փոքր ծգել քո ձեռն ըստ ձեռնիստության ի դատաստան, սրբել ազգը նենգավորներէ և շարագործներէ. այս է քո միակ մեծագործությունը»⁶: Ինչպես տեսնում ենք, Սրբանձույանցի կրքոտ ոճը չի զիջում Նալբանդյանին: Այնքան մեծ էր ուսահայ իրավարակախոսի հմայրը, ուժը և ազբեցուրյունն արևմտահայ դեմոկրատների վրա, որ նրանք հաճախ վերջինի խոսքերն առանց փոփոխության, առանց հայտնելու հեղինակի ինքնուրյունը, գրաբնությունից խոսափելու համար, զրում էին իրենց թերթում, իրենց անոնից: Այդպես է վարվում և

¹ «Արծվիկ Տարոն», 1865, № 44:

² Ի դեպ, ուսումնասիրողներից Հ. Ղազարյանը այդ հողվածները վերազրել է. Սվաճյանին, Սրբանձույանցի հողվածներով հաստատել Սվաճյանի հեղափոխական դեմոկրատ լինելը, իսկ Սրբանձույանցին դասել պահպանողականների շարքում (տե՛ս Հ. Ղազարյան, Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և բաղարական կացությունը 1800-1870 թթ., Երևան 1967, էջ 624):

³ Ս. Նալբանդյան, նշվ. աշխ. հ. 3, Երևան, 1940, էջ 108:

⁴ «Արծվիկ Տարոն», 1864, Բ. շրջան, նոյեմբերի 15 (№ 30), էջ 23:

⁵ Նոյնի տեղում, էջ 24:

⁶ Նոյնի տեղում:

Սրբանձտյանցը, իր «Արծվիկի» էջերում զետեղելով Խ. Արովյանի նախկին աշակերտ Նահապետ Արանասյանի՝ առաջին հայացքից կրոնական թվացող հոդվածը, որի խորագիրն էր. «Արձանական դիմառնորին ի տապանէ սրբոյն Սահակայ Պարքի հայրապետին»¹: Այդ հոդվածում հեղինակը Սահակ Պարքի անոնցից հայտարարում է. «Ծառը արմատովն է ծառ. տուն եիմամբ է տուն, եւտևարար ազգորյան լծակն ու հաստարանն է հասարակ ժողովորդը, առանց ասոնց չկա: ազգորյուն և ուր չկա ազգորյուն, իոն ի՞նչ մարդկորյուն»: Նալբանդյանի այս խոսքերի կրկնությունը ցույց է տալիս հոդվածի հեղինակի և խմբագրի հավատարմությունն այդ դրույքներին:

Աշոտ Հովհաննիսյանի աշխատորյան մեջ հանգամանորեն վերլուծում են Նալբանդյանի «Երկրագործորյունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատորյան հեղինակման և լույս ընծայման շարժառիթներն ու նպատակները: Գտնելով ազգի փրկության խելացի հնարի հոդի և երկրագործորյան մեջ, Նալբանդյանը ոչ քե եւ էր նայում դեպի «ճատորալ-տնտեսական ուսուոյական իդիլիան»², այլ ազգային փաճառականության միջոցով տեղական բնական բերքերի և երկրագործորյան արդյունքների փաճառահանումը համարում էր երկրագործորյան զարգացման նպատակը: Նալբանդյանն առաջ էր քաշում փոխառվական բանկերի կամ հատուկ ընկերությունների ստեղծման գաղափարը, որոնք պետք է նպաստեին նանր գյուղացիական տնտեսություններին: Նալբանդյանի աշխատորյան անմիջական արձագանքը եղավ Սպածյանի կողմից Սեղվում հրատարակված «Ով այսօր հոդ չունի, վաղը հաց չունի» հոդվածը³, որն էլ իր հերքին ունեցավ այլ արձագանքներ: Խրիմյանը և Սրբանձտյանցը խոսրով և գործով ձեռնամուխ եղան այլ գաղափարների՝ կյանքում իրականացմանը: Վասպորականում և Տարոնում վերջիններիս հովանափորությամբ և օգնությամբ ստեղծվում են բազմաթիվ ընկերություններ, որոնք իրենց կանոնադրությունները հրատարակում էին «Արծովի Վասպորական»-ի և «Արծովիկ Տարոն»-ի էջերում: Երկրագործորյան զարգացումը Սրբանձտյանցը համարում էր պան-

դիստուրյուն կոչված շարիքին դիմակայելու ամենագործուն միջոցներից մեկը. «Թեսոր է, հոդեր գնել, պետք է, տեղ տեղ փոքրիկ պանք հաստատել, որոնք գոնե հայր պանդխատորյան դիմելն եւս կկեցնի»¹: Գյուղատնտեսության հետ միասին Սրբանձտյանցը ցանկանում էր զարկ տալ արդյունաբերության զարգացմանը, որպեսի հասարակ ժողովուրդը, ընշագույն զանգվածն աշխատանք և ապրուստ որոնելու շրի հայրենի եզերը և շրոնի պանդխատորյան ուղին:

Գյավոր խոսրին հաջորդեց Սրբանձտյանի պրակտիկ գործունեությունը: 1865-ին նա գործուն մասնակցություն է ցույց տալիս Ակնում Սիսար մժիմուրյանի կողմից կազմված «Նահապետական» ընկերության գործունեությանը: Իրև այդ ընկերության վատակած անձ, Սրբանձյանցը տնօրինում է նրանց գումարները: Նրան հաջողվում է ընկերության համար գնել Մշո դաշտի անմարդաբնակ Շքավդիան զյուղը և իմնապետել «Նոր հայ» զյուղ: Սիսար մժիմուրյանը լույս է ընծայում ընկերության կանոնադրությունը և արտահայտում իր հայացքներն այդ ընկերության գործունեության մասին: «մժուս Աղքար»-ի առաջին հատորում վերլուծելով ընկերության գործեակերպը, Սրբանձտյանցն ընդուրածակ հատվածներով մեջքերում կատարելով, համերաշխափում է այդ հայացքների հետ: Մժիմուրյանն ու Սրիանձտյանցը ցանկանում էին «Նոր հայ» զյուղը զարդեցնել Ակնա «խեղճերին» և այլ վայրերի աղքատ մարդկանց և վարեկն «օրինավոր տնտեսություն»: Գյուղը վարելու էր շորս հոգուց բաղկացած տեղական ժողովը: Աշխատանքի արդյունքը պետք է բաշխվեր այնպես, որ բավարարեր տարվա ապրուստը, իսկ մնացորդն ուղարկվելու էր վաճառքի՝ էման և մատշելի գնով: Այդ հանգամանքը հատուկ ընդգծվում էր: Ընկերության անդամներն իրար դիմում են ընկեր զրաբարյան գեղեցիկ բառով...²:

Որոշ ժամանակ նախապատրաստական աշխատանքներ կատարելուց հետո ակնեցինները տեղափոխեցին «Նոր հայ» զյուղը, տակայն, Սրբանձտյանցի խոսքերով, «երկրի ու բաղարականության դժվարությանց» պատճառով, մժիմուրյանը չկարողացավ «Նահապետական» ըն-

¹ Նոյն տեղում, Ա շրջան, օգոստ. 15 (№ 24), էջ 94:

² Աշ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 519:

³ «Մեղու», 1862, հունիս:

¹ Գ. Սրիանձտյանց, Թորոս աղքար, հ. 1, Կ. Պոլիս, 1879, էջ 269:

² Ի տարբերություն մերօրյա բաղարական այրերի, որոնք այլ բարին տալիս են սուկ բոլշևիկյան պատկանելություն:

կերությունը դնել բաղձացյալ վիճակի մեջ: Արևմտյան Հայաստանում այդ փաստը եզակի չէ: Նման նպատակով գործունեություն են ծավալում քրուսահայերը և խնդրում Խրիմյանի օժանդակությունը¹: Առավել ցայտուն է քրությունի մի խումբ հայրենասերների փորձն էր՝ «Երկրագործական տիխապար ագարակ» հիմնելու և երկրագործության զարկ տալու համար: Ընկերության անդամները գործուն նամակագրություն սկսեցին Ս. Խրիմյանի հետ², նրա խորհուրդն ու օգնությունն ստանալու նպատակով: Սակայն քուրքական կառավարությունը կտրականապես արգելեց գնիված հողային տարածքը հայերի վրա թափու անելու: Երկրագործական այդ ընկերության անհաջողությունից հետո հետո նրա հիմնադիր անդամներն ստեղծեցին «Պաշտպան հայրենյաց» գաղտնի կազմակերպությունը: Կարող ենք նկատել, որ այդ ընկերությունները եղան ազատազրական նպատակներ հետապնդող կազմակերպությունների նախադրութ:

Այսպես կարելի է շարունակել փաստերը: Սակայն քերպածն էլ բավարար էր ապացուցելու, որ Խրիմյանն ու Սրբանձույանցը արևմտահայ դեմոկրատների առաջին շարքերում էին: Փաստորեն Աշ. Հովհաննիսյանի աշխատության, արխիվային փաստարդերի և հազվագյուտ մատենագիտական արժեք ներկայացնող մամուլի փաստերի համադրությամբ փորձ ենք կատարում վերանայել մեծ գիտնականի բնութագրությունները Սկրտիչ Խրիմյանի և Գարեգին Սրբանձույանցի վերաբերյալ:

*Լրաբեր հասարակական գիտությունների,
1998, № 2, էջ 34–43:*

ԱՐԺԵՔԱՎՈՐ ՆԵՐԴՐՈՒՄ ՍՓՅՈՒԹՆԱԳԱԶԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ընորհակալ գործ է կատարել և կատարում հայրենի գրականագետ Սույնեն Դանիելյանը՝ գիտահետազոտական իր ողջ աշխատանքը նվի-

րելով սփյուռքահայ գրականության բազմաբնույթ շերտերի ուսումնասիրությանը: Դեռևս ժամանակին թեկնածուական իր թեզում նա քննել էր Դանիել Վարուժանի և արևմտահայ գրականության մեջ դարիս 10-ական թթ. սկզբնավորված. «Երանուական» գրական շարժման գեղագիտական խնդիրները: Հետագայում արդեն նա ընդլայնեց գիտական հետարքրությունների իր շառավիղները՝ ընթերցողի սեղանին դնելով սփյուռքահայ գրական աշխարհին վերաբերող մի շարք աշխատություններ («Ամերիկահայ վիպագիրներ», Երևան, 1990: «Սփյուռքահայ վեպը. ժանրը, ավանդույթները, պատմության փիլիսոփայությունը» գրքի առաջին հատորը (Անքիլիաս, 1992), որոնց միայն խորագրերը բացահայտում են հեղինակի գիտական նպատակադրությունը):

Առանձնակի ընդգծում ենք վերջին մենագրությունը, որն ուսումնասիրում է Սփյուռքի վեպի զարգացման հիմնարար ուղղությունները, հայ գրականության մեջ ժանրի ավանդույթների շարունակականությունը: Պատահական չէ, որ այդ ծանրակշիռ աշխատությունը հեղինակը սյաշտայանեց իրեն դոկտորական թեզ, իսկ գրքի հրատարակությունն արժանացավ Հայաստանի Գրողների Սիության Ս. Նալբանդյանի անվան մրցանակին:

Այժմ գիտնականը մեծ սիրով ու խանդով շարունակում է Սփյուռքի գրական աշխարհի առանձին հատվածների ուսումնասիրությունը: Այսուել նրա համար բացառիկ նշանակություն ունի պրլսահայ ժամանակակից գրականությունը: 1996-ին արևմտահայ մշակութային կենտրոններից մեկում՝ Կ. Պոլսում (ավաղ՝ արդեն վիլխակերպված «Հայրանպություն») լույս տեսավ Ս. Դանիելյանի նոր, «Ռոպեր Հատուկնեան. ներաշխարհի գեղարդուետական քննութիւն» աշխատանքը:

«Մարմարա»-ի երեսնամյա ամիսնց խմբագիրը, փիլիսոփան, արձակագիրը և բատերագիրը, վաղուց ի վեր Սփյուռքում նվաճած ճանաշում ու պատիվ, սակավածանոք է Հայաստանի ընթերցող հանրությանը: Սիրայն 1997-ի վերջին Ն. Ս. Օ. Ս. Գարեգին Առաջին Ամենայն Հայոց Կարողիկոսի բարձր հովանավորությամբ Ս. Էջմիածնում լոյս տեսավ Ո. Հատուենյանի ամենից համբահայու «Հուշտեսոր» խոհագրական ստվարածակալ ընտրանին, որը, ի դեպ, կազմել, խմբագրել եւ առաջարանը գրել է Ս. Դանիելյանը: Ուրախալին այն է, որ Վեհափառ Հայրաբանը գրել է Ս. Դանիելյանը:

¹ Գ.Ա. Սրբանձույանցի թ., թ. II, գ. 316, 437:

² Յ. Ա. Նշկյան, Առաջին կայծեր, Պայտարի տպարան, 1930, էջ 110:

պետք, Ո. Հատուենյանի գրչի ջերմ համակիրներից մեկը, շտկեց նրա անվան շորջ տասնամյակների անհարկի, ընդգծված լրուրյամբ վերաբերմունքը Հայաստանում, որ ոչնչով արդարացնել չէր կարելի:

«Մարմար» օրաթերթի Ստամբուլում վերահրատարակվել է 1940-ից հայ մամուլի երախտավոր Սուրեն Շամյանի աներևակայելի ջանքերով: Հիսնական թի., արդեն Պետրոս և Սեղա Չոպյանները իրենց շորջ համախմբեցին Երկրորդ աշխարհամարտից հետո զարդոնք ապրող պոլսահայությանը: Այսուղ Վարուժան Աճեմյանի, Զահրատի, Զարեհ Խրախոսուն և, իհարկէ, Ո. Հատուենյանի ջանքերով կանոնավոր սկսեցին լույս տեսնել երկշաբարյա «Գրական գեղարվեստական էջեր»-ը, որոնք լավագույն ուրվագծեցին նոր սերնդի ձեռավորման դժվարին ընթացքը:

Իսկ ահա 1967 թ. հոկտեմբերի 26-ից մինչև օրս այդ հայաշունչ և հայահունչ օրաթերթի ոգին, սիրտն ու զարկերակն է նրա՝ այլև անփոխոխ խմբագրավետ Ուոպեր Հատուենյանը: Գրեթէ եզակի այս փաստը միայն բավական է արժանին մատուցելու անդադրում և անհանգիստ մտավորականին, պյուսահայ գրական-գեղարվեստական նորօրյա կյանքի կազմակերպչին: Եւ իսկապես, անհնար է պատկերացնել Ստամբուլում ազգային հոգևոր կամ մշակութային որեւէ ձեռնարկ՝ առանց խմբագրավետի գործուն մասնակցության:

Բանափրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս. Դանիելյանի աշխատությունը հայրենի ընթերցողների առաջ քացում է Պոլս գրական հարուստ աշխարհի և միայն այդ խորքի վրա զծում մեծ անհատականության անպարիսակ ստեղծագործական և՛ ազգային, և՛ խոր արտահայտված փիլիսոփայական շերտերը: Սեր աշրի առաջ խմացական ստեղծագործողն է, որ գիտակցում է համայնքի գրական կայուն շնչառության հանդեպ էկզիստենցիալիստական համակարգից յուրացրած պատասխանատվության իր բաժինը՝ որպես հայ մտավորական, որպես Պոլս ավանդությների պաշտպան:

Գրաքննադատը մենագրության մեջ քայլ առ քայլ հետեւում է իր հեղինակի ընկերային, հասարակական գործունեության աստիճանահական ծավալուներին, տախու դիպուկ բնուրագրումներ, անում արժեքագործուներ: Առանձնահատուկ գրելառն ունի մեր հետազո-

տողը՝ կապիլած, բնականաբար, նյութին՝ Ուոպեր Հատուենյանի խորակառույց եղանակներին, արեւմտահայերենի՝ իր վրա բողած բարերար ազդեցությանը: Գտնում ենք, որ ստեղծագործական ներգործուն ոճը, ներկայութելով գիտական խորին, շարադրանքը դարձել է շահեկանուն ինքնատիպ, ընթերցանության տեսակետից՝ անհամեմատ գրավիչ: Այդ հանգամանքը փաստում են արդեն հետազոտության խորագիրը և գեղարվեստական-փիլիսոփայական երանգ ստացած կառուցվածքային ներարածինները:

Մեզ թվում է, որ գրողի կենսագրական և ստեղծագործական ընդհանուր գնահատության հատվածը յուրահատուկ էստ. է. Էստ-քննադատություն, Էստ-հետազոտություն, որտեղ՝ «Էստն» ոչ թե բոլոցնում է հարցերի քննության գիտականությունը, այլ ուղղված է նյութը բացերու արտահայտչականության՝ հենց քննության ենթակա հեղինակի ստեղծագործությունների միջոցով: Եւ սա գրաքննադատի հաջողության նախապայմաններից է, որնցով արմետրվում է Սփյուռքի մեջ պոլսահայ գրական ջոկատը, մտավորականի բարձր բարոյական կերպարը, նրա ծագալած հայապահպան գործունեությունը:

Ընթերցողը ծանոթանում է խմբագրի ծանր, աներեւոյր հոգեմաշ առօրյային (ըթէ է ասել երևուն տարի շարունակ, օրը օրին, նկարագրել թուրքիայի հայության հույսերն ու հենհառը, եկեղեցական համազգային բարձր ծառայությունը, ընդառաջել գրական, երբեմն հանդիպող երերուն, բայց ջանքի մեջ ազնիվ որոնումներին, ճշմարիտ տեղեկատվություն տալ սփյուռքահայ տարրեր գաղութների հասարակական-մշակութային կյանքի վերաբերյալ, ոչակառությամբ բացել հայ և քորք հարաբերությունների բաղարական գարգացման միտումները՝ տեսությունների ձեռվ, որոնք, մասնավանդ այսօր, առատորեն հայտնվում են քուրքական նամուլում, ինչով Հայաստանը հնարավորաբեր ունի առաջին ձեռքից ստանալ բաղարական առարկայական գարգացումների ուրվագիծը): Եր հերքին «Մարմարա»-ն պլուեցիններին հասցնում է Հայաստանի ձայնը՝ «Արմենալրես» և «Նոյենան տապան» գործակալությունների ամենավերջին բարմ լորերը՝ ժամբ ժամին:

Մենք իմանում ենք Հատուենյան-խմբագրի, մարդ-քաղաքացու գործունեության ոլորտները՝ «Կոր սեղաններ», գրական ասուլիսներ, «Մու-

րատ օֆեր» գրահրատարակչական նախաձեռնություն, ինչի շնորհիվ իր տպագրած գրքերի քանակն այսօր, եթե չեմ սխալում, անցնում է 300-ից: Դա նշանակում է՝ թիկունք կանգնել գրչընկերներին, խրանել նրանց գրափորձերը, վաստակած օջախի գրական դիմագիծը:

Այսուհանդերձ, Ռոպեր Հատտեճյանի գնահատության գլխավոր արժանիքը նրա ստեղծագործությունն է: Եւ Սուրեն Դանիելյանի հետազոտության հիմնական նպատակը գրող Հատտեճյանի ներաշխարի գիտական քննությունն է: Նախ, բացահայտված են այդ գրականության իմացական ակունքները, Էկզիստենցիալիզմի սկզբունքների հարաբերությունը ազգային գրական ավանդույթին, ինչին մեզանում քիչ ուշադրություն է դարձվել: Բերենք պատասխանատվության սկզբունքի ճամաչումը Ո. Հատտեճյանի գեղարվեստական համակարգում, որ Ժան Պոլ Սարտրի, Մարտի Պրուտի ստեղծագործական առանցքային հարցադրությունից է: Պատասխանատվություն ժողովրդի, նրա պատմության, մշակույթի առջև: Պատասխանատվություն, որ Ո. Հատտեճյանի հերոսներից շատերը կապում են «ապրելու դատապարտվածության» գոյապաշտական հայտնի բանաձևի հետ: Ս. Դանիելյանի վերլուծությունը ակնբախ է այդ ձևակերպությունը ազգային խորիմաստ բանաձևը՝ կապված ժողովրդի պատմական անցյալի հետ մեր ներքին ձայնի ճանաչմանը:

Արտաքնապես հեշտին, իրականում աշխատատար է նման կարգի հետազոտումը, գիտնական-կենսագիրը պարտավոր է հասու լինել միջավայրին, գրական շարժումների կորին, փիլիսոփայական հայացքների բովանդակությանը, նրա գեղարվեստական ճաշակը նախորոշում է շատ բան եւ առաջին հերքին՝ գրողի իրական մեծությունը: Լայն իմաստով գիտնականի բացած ներաշխարի պետք է համահունչ լինի իր՝ գիտնականի ներաշխարիից բխող արձագանքներին: Եվ այստեղ մենք տեսնում ենք գիտական աշխատանքի բուն հաջողության պայմանը:

Գրականագետ Ս. Դանիելյանը բայլ առ բայլ հետևել է գրողի լինելության դժվարին ուղղուն, մանրամասն քննել նրա գրական հարուստ ժառանգությունը: Ո. Հատտեճյանի գրական մուտքը պատմվածքներն ու քատերգություններն ինը: Սևնագրության առաջին բաժնում վերլուծված են գրողի հոգերանական պատմվածքները, ուր, ճիշտ է, չկան շատ գոր-

ծողություններ, բայց կա հերոսների ներքին մտածումների շերտերը բավանցելու կարողություն: Դա են վկայում նրա պատմվածքների երկու ժողովածությունները՝ «Բառասխալ» և «Ծարդոց մեծության ու խեղճության մասին» խոսուն վերնագրերով, որոնց հերոսների մեջ (նկատի ունենք «Խենքի պատմություն», «Տարբեր աշխարհ», «Դպրոցականներու մահը» և այլ կարճ պատմվածքներ) Ս. Դանիելյանը որսում է ողբերգական ապրումի տարրը: Հմտավի վերլուծությունների, Սփյուռքի տարրեր գրչօջախների գրողների հետ խմաստալի գոգահետների շնորհիվ նա հանգում է ավելի լայն ընդհանրացումների, քեզ տագնապը, ողբերգական ապրումի տարրը գալիս են սփյուռքահայ կեցությունից, այն նահանջից, որի կոչնակները Շ. Շահնուրը խփել էր դեռևս 20-ական քք. վերջերին, ինչով արդեն հատկանշվում է ողջ սփյուռքահայ գրականությունը: Այդ առումով հետարրըրթյամբ է ընթերցվում Ո. Հատտեճյան – Վ. Շոշանյան համեմատական քննությունը, որոնց հերոսների «գիտակցական ներհոսի» տիպարանական քննության շնորհիվ բացվում են տառապանին նրանց դիմակայության ներքին սահմանները:

Բնականաբար, խոսքը չի վերաբերում միայն պատմվածքներին, բայտերգություններին, այլ նաև, զուցել և սառաջին հերքին՝ «Առաստաղ» վեպին, որը, Ս. Դանիելյանի ճշմարիտ դիտարկումով, Ո. Հատտեճյանի ստեղծագործական բարձրակետն է: Այն 1983-ին արժանացել էր «Ալեք Մանուկեան» գրական բարձր մրցանակին: Տեղին է տրված գրողի դպրոցական ընկերոջ՝ տասնամյակներ առաջ հայրենիք ներգաղթած Գեղամ Սևանի հայացքների մեջ շրջադարձը. դուրս գալով դասակարգային հակվածության շրջանից՝ նա «Առաստաղ» վեպին տալիս է բարձր գնահատական:

Ս. Դանիելյանի մոտեցումները վեպի հարցադրումներին, գլխավոր հերոսի ընտրության մեկնական ելակետներին բխում են անհատի ու ընկերության հարաբերակցության նոր «ընթերցումից»: «Լքված, խեղված ծերունու ուսերին,- գրում է գրականագետը,- Ո. Հատտեճյանը դնում է դարի խիդը, բարոյաբանական դասերի ողջ ծանրությունը: Այսպիսով, գեղարվեստական մասնավոր փաստը (հեղինակը նկատի ունի անանուն ծերունու անկումը և անկումն գամվելը – Է. Կ.) վերաճում է խորիդանիշի, գրողը խորապես դժգոհ է դարաշրջանից, բանի որ մար-

դու մեջ նահանջել և առայսօր շարունակում է նահանջել մարդկայինը, գործը»: Ընդգծված այս մտքով վեպի հեղինակը և նրա հայրենի գրադատը բարձրացնում են բոլոր ժամանակների համար մարդկային բարոյական բարձր արժեքների հարատևության նախապայմանը, դրանից շանգատելով նաև մեր ժողովրդի ազգային գոյապահպանման գերխնդիրը տարաշխարհիկ հորիզոններում, որ, ինչպէս նշում է Ս. Դանիելյանը, «... հայր եւ հայկական լուծում են օտար միջավայրին՝ ի շահ ... սոսկ գոյության, բարեկեցության, որի մեջ ազգային պահպանողականությունը ուղղակի խաճապիշ հանգամանը է»: Ի դեպ, այս տարի վեպը Ստամբուլում ունեցավ երկրորդ տպագրություն:

Ո. Հատտենյանի ստեղծագործություններին առանձնակի երանց են հաղորդում նրա պիեսները, որոնց գերակշիռ մասը թեմայրվել են Պոլսի Սանուց Միության դահլիճներում, իսկ մեկը՝ նաև Երևանի հեռուստաբարունում («Սարդը և իր պատյանը», թեմայրիչ՝ Պերճ Ֆազլյան): Սկզբնական շրջանում, հետևելով փորձառու բատերագիր Վարուժան Աճեմյանի խորհրդին, գրում է կատակերգություններ, որոնց մեջ հանդիսատեսը ծիծաղի միջից որսում է աշխարհաճանաշման աննկատ, չպարտադրված Փիլիսոփայական նատվածքը: Դեռևս 70-ական թթ. ջերմ ընդունելության են արժանացել Ո. Հատտենյանի «Կյանքի մը երեք կիրակիները», «Կիրակնօրյա հաշվեկալք», իսկ իննունականներին՝ «Սահրայս է արդյոք» բատերական երկերը, որոնցից վերջինը, ինչպէս «Առաստաղ» վեպը, բացում է լրում, առանձնության ողբերգական իրողությունը անհատի և ժողովրդի մերօրյա բնրունումներում: Սա արդեն մեր հիշատակած նահանջի ահազնությունն է, որից ազատագրվել չեն կարողանում ոչ դրամատուրգը, ոչ նրա հերոսները:

Ս. Դանիելյանի գիտական աշխատանքին մեծապես նպաստել է ինքը՝ Ո. Հատտենյանը: Բանն այն է, որ գրողը, խմբագրի հանգամանքի բերումով, իր կենսագրին «հուշում է» շատ դեպքերում, բացում ժամանակի մեջ հայ կեցության խորհուրդների առեղծվածը: Անմը նկատի ունենք նրա իրապարակախոսական հարուստ ժառանգությունը, հատկապես 1981-ից ցայսօր «Մարմարա»-ի էջերում իրքն խմբագրի սյունակ լույս տեսած առօրյա խորհրդագործությունները «Հուշատեսոր» ընդհանուր խորագրի ներքո, որոնք իրատարակվել են նաև առանձին, տասնյակից

ավել հատորներով: Այն չոր ու ցամաք իրավարակագրություն չէ: ճիշտ է նկատում Ս. Դանիելյանը, թե այստեղ կարելի է համդիալել գեղագետ եւ բաղարացի Հատտենյանի յուրատեսակ դաշինքին:

Սենք կարծում ենք, որ հայրենի գրականագետին հաջողվել է ներքնապես բացել ստամբուլահայ նորագույն գրականության աշխարհը և այնտեղ ճշտել նրա կազմակերպիչներից՝ Ռուբեր Հատտենյանի խաղացած բացառիկ դերը: Ավելին, Պոլսու գրական ջոկատը քննվում է Սփյուտրի և հայրենիքի գրական հարուստ կյանքի ընդհանուր խորքի վրա, որն այս աշխատության շահեկան առանձնահատկությունն է:

Մարմարա օրաբերք, 14 սեպտեմբերի, 1998, Ստամբուլ:

Ո-ՌԱՎԱԿԱՆ ՓՈԽՀՅՈՒՊԱՏՈՍ ԿՈՍՏԱՆԴԻՆ ԿԱՍՍԱՐԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՆՈՒՄ 1880-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

1877–78 թթ. ուսու-բուրբական պատերազմի հաղթական ավարտից, Սամ-Ստեֆանոյի դաշնագրից և Բնույթի կոնգրեսից հետո մեծ պետությունները՝ հատկապես Ռուսաստանն ու Անգլիան, իբրև վեհաժողովի որոշումների կատարման երակնիք Արևմտյան Հայաստանի առավել կարևոր կենտրոններում ստեղծում են ներկայացուցություններ՝ հյուպատոսություններ, իսկ նահանգական կենտրոններում վոլխիուպատություններ: Փոքր Ասիայի ուղղմավարական կարևոր հանգույցներից մեկում՝ Էրզրումում, ստեղծվում է ուսուական գլխավոր հյուպատոսություն: Այդ պատունում նշանակվում է գեներալ-մայոր Ա. Ռ. Դենինետը: Վաճի վոլխիուպատության առաջին պատունակատար է դատում հայագղի Կատանին Կամսարականը:

Ծնվել է 1840 թ. Նովիխոտ: Սկզբնական կրթությունը տեղում ստանալուց հետո ավարտում է Մոսկվայի ուղղմական ուսումնարանը: Մասնակցում է 1877–78 թթ. ուսու-բուրբական պատերազմի Կովկասյան ուղղմաճակատի պատերազմական գործողություններին: Պատե-

բազմի ավարտից հետո գեներալ-լեյտենանտ Կամսարականը կարծ ժամանակով նշանակվում է Երգրումի զինվորական նահանգապետի օգնական (մինչև ոռոսական գորքերի հեռանալը), այս տեղի փոխհյուպատոս: Գլխավոր հյուպատոս Դեննետի գալուստից հետո նշանակվում է Վանի փոխհյուպատոսի պաշտոնակատար (1878 թ. սեպտեմբերից): Վանի հայությունը մեծ խանդավառությամբ ընդունեց ընդհանրապես հյուպատոսների գալուստը. անզիւկան փոխհյուպատոսը Վանում մասնագիտությամբ հնագետ կապիտան Քեյստոնն էր: Իսկ հայազգի ոռոսական փոխհյուպատոսի պաշտոնակատարին Վանի հայությունն ընդունում է ընդգծված հանդիսավորությամբ: Ականատեսի վկայությամբ «հայրանակի հանդիսավոր համգամանք ստացավ Կամսարականի մոտքը ի Վան և առաջին օրերը բուրքերն անվանեցին զայն հայոց փաշա»¹: Հայերի խուներամ բազմությունն ազգային գործիչների գլխավորությամբ ընդառաջ զնացին փոխհյուպատոսի հայազգի պաշտոնյամերը խոժոռ հայացքներով, շքարցրած անբարյացակամությամբ ընդունեցին նրան, առաջին իսկ օրից խորհելով նրան պաշտոնանկանելու մասին: Կամսարականը Վանում ծավալեց բազմաբնույթ քեղմնավոր գործունեություն: Իրեք մեծ տերության ներկայացուցիչ նաև ուսումնաֆրում էր տեղի բարձրաստիճան բուրք պաշտոնյաներին և բաղաքական անցուղարձ: Ամեն մի նշանակալից անցրի մասին նաև գեկուցագրեր էր ներկայացնում Երգրումի գլխավոր հյուպատոս Ա. Ռ. Դեննետին, Կ. Պոլսի ոռոսական դեսպանության կառավարիչ Ա. Բ. Նելիովին, դեսպանության հավատարմատար Մ. Կ. Օօուին, դեսպան Ե. Պ. Նովիկովին, Կովկասի քաղաքացիական մասի կառավարչապետ Շերեմետեվին և բազմաթիվ այլ անձանց²: Սակայն մեծ տերության փոխհյուպատոսի պաշտոնակատարն առաջին հերթին հայրենասեր հայ էր:

¹ Հ. Երամեան, Հուշարձան Վան-Վասպուրականի, ի Ա., Ալեքսանդրիա, 1929 թ., էջ 115:

² Կ. Կամսարականի բազմաթիվ գեկուցագրերը պահպանվում են Ռուսաստանի Արքային Քաղաքականության Արխիվում (Արխiv Внешней Политики России - архивистике. АВПР) և Ռուսաստանի Կենտրոնական Պետական Ռազմա-Պատմական արխիվի (Центральный Государственный Военно-Исторический Архив - архивистике. ЦГВИА) բազմաթիվ ֆոնդերում:

Վանից նա նամակագրական սերտ հարաբերություններ է հաստատում արևելահայ նշանավոր գործիչներ Կ. Եզյանի, Ար. Հովհաննիսյանի, Ավ. Բարայանի, ոռոսական հայամետ թերթերից մեկի՝ «Գոլոս»-ի խմբագիր Կրաևակու և այլոց հետ¹: Վանում Կամսարականը գործակցում է տեղի առաջադիմական տարրեր խմբավորմների հետ, նրանց գործողությունը հաճախ ուղղելով ազգաշահ և ազգանախատ հունով: Այդ ժամանակ Վանի վերադարձավ և հոգեւոր առաջնորդ ընտրվեց Բեղինի վեհաժողովի հայ պատմիրակության ղեկավար, հուսախար և պատրանաքահ Սկրտիչ Խրիմյանը: Փոխհյուպատոսի պաշտոնակատարի միջոցով նա նահանգի հայության օրբատորե ծանրացող կացուրյանն էր հաղորդակից դարձնում Ռուսաստանի արտաքին քաղաքականության բնագավառի տարրեր գործիչներին, 61-րդ հոդվածի իրագործման միջոցառումներ մշակելու, իսկ բուրքական տելական պաշտոնյաների մոտ հայության շահերը պաշտպանելու համար: Այդ տարիներին Վանում էր գործում Հայոց Սիացյալ ընկերությունների հիմնադիր անդամներից մեկը՝ Սկրտիչ Փորբուզայանը, որը հայաշատ կենտրոնում ծավալում էր կրթական-լուսավորական քեղմնավոր գործունեություն: Նրա՝ Վարժապետանոցի և ապա Կենտրոնական վարժարանի սաները քաղաքի երիտասարդության սկզբունքն էին, համակված ազգային-ազատազրական գաղափարներով: Կամսարականը մտերմանում է նաև Փորբուզայանի հետ: Երեք գործիչների համագործակցությունը տալիս է դրական արդյունք: Փոխհյուպատոսի պաշտոնակատարն առատ ֆինանսական օգնություն է հատկացնում Փորբուզայանի դպրոցին, Սկրտիչ Խրիմյանի նախագահած Սովելոց հանձնաժողովին և նրա հիմնադրած երկրագործական վարժարանին: Կամսարականը դառնում է կապող օղակ արևելահայ և արևելահայ գործիչների միջև: Վերջիններս իրենց հանգանակած գումարները Կամսարականի միջոցով հասցնում էին Սկրտիչ Խրիմյանին, նրա հայեցողությանը բողնելով այդ գումարների հատկացնումները²:

¹ Ա. Սյսիբարյան, 19-րդ դարի 2-րդ կեսի արևելահայ պարբերական մամուլի պատմությունից, Երևան, 1976, էջ 62-65:

² Հ. Երամեան, նշվ. աշխ., էջ 123:

Վանի նորահաս երիտասարդությունն այդ տարիներին ստեղծել էր «Սև խաչ» գաղտնի կազմակերպությունը, որի նպատակն էր դժմակայել քորրական հայակալած քաղաքականությանը, զինել ժողովրդին, պատրաստել նրան ինքնապաշտպանության համար: Կամսարականը տեղյակ էր այդ կազմակերպության գոյությանը, ֆինանսավեն օժանդակում էր նրան, աշխատում հեռու պահել անխոհեմ արարքներից, համար և հետևողական աշխատանք կատարելով նրա՝ գործունեությունը նպատակամիել ինքնապաշտպանության: Առուսական արքունի խորհրդական Կոմսարականն այդ կազմակերպության գոյության մասին տեղեկություններ է հաղորդում արտաքին գործոց նախարարության տարբեր պաշտոնյաների: 1880 թ. նոյեմբերի 12-ին նա գեկույց է ներկայացնում, որ հաղորդում է. «Վանում կազմակերպել են գաղտնի կոմիտեներ, որոնց նպատակը դեռ լիովին չի որոշված: Երիտասարդությունը հուսախարված մեծ տերությունների տարածայնություններից, կորցնելով հույսը Հայաստանում կատարվելիք քարենորդումների նկատմամբ, ապստամբություն է քարոզում կառավարության դեմ: Կոմիտեների առավել խոհեմ և զգույշ անդամները ցանկանում են սահմանափակվել միայն զինվելով, որպեսզի պատրաստ լինեն դիմակայելու ամեն տեսակի պատահականությունների»¹: Մեր կարծիքով «գաղտնի կոմիտեներ» բնորոշման տակ Կոմսարականը նկատի ուներ «Սև խաչ» կազմակերպությունը և «Զինակիր» խմբակը: «Սև խաչ»-ի անդամ Հարություն ճանկույանը հետազայտմ մեծ հիացմունքով է արտահայտվում Կոստանդնուպոլիս ավելի կրօնությեր և կիառաջադիմներ, երբ նկատի կունենար, Կոստանդնուպոլիս պեյ Կամսարական եյուպատոս, նշանավոր հայրենասեր չափ հաճելի չեր քվեր կազմակերպությունը: Վանա երիտասարդության յունը և այդ տեսակի հեղափոխական կազմակերպության ուժ տալը»²:

¹ ԱՐԲИԱ, գ. 450, դ. 98, լ. 37.

² Հ. Կ. ճանկույան, Հիշատակներ հայկական ճգնաժամին մասն Ա և Բ, Կ.Պոլիս, 1913, էջ 53:

Նոյն այդ ժամանակ Կովկասի հայկական լրագրերը չստուգված լուրեր են հրապարակում, թե Վանի հայերն ապատամբել և գրավել են քերը: Արևելահայերի մեջ սկսվում է տենդագին մի շարժում: Պատրաստություն են տեսնում խմբերով անցնելով ոուս-քուրքական սահմանը և օգնության հասնել Վանի հայությանը¹: Այդ նոյն լուրը Կամսարականը հայուրդում է Կ.Պոլիսի ոուսական դեսպանին, ավելի մանրամասն և ստոյգ տեղեկություններ հայտնելով սահմանն արդեն անցած 35 հոգիանց զինված առաջատար խմբի մասին, որոնց շարքում կային քազմաքիլ գերօգիևան շքանշանակիրներ²: Ըստ Կամսարականի, այդ խումբն Ալաշկերտում սպասում է մնացած խմբերի գալստյանը, որպեսզի միացյալ ոմերով մնտնեն Վան: Կամսարականի գործուն միջամտությամբ, համոզվելով, որ Վանում ոչ մի ապստամբություն չկա, առաջատար խումբը հետ է դառնում, արգելելով նաև մյուս խմբերին: Տարբեր տեղեկությունների և Կամսարականի տեղեկագրերի համադրումից պարզվում է նրա սերտ հարաբերությունը Վանի հասարակական գործիչների, ազատագրական պայքարի դեկավարների հետ: Փաստորեն, վերջիններս Կամսարականից ստանում էին ոչ միայն նյութական աջակցություն, այլև գործեկակերպի հրահանգներ: Ալաշկերտ անցած հայերից երկու հոգի՝ Գալուստը և Բարդասարը (հետագայում դառնում են ֆիլայիններ) հետ չեն վերադառնում, հասնում են մինչև Վան, շրջում Վասպուրականի տարբեր գավառներում, հայ բնակչության մեջ քարոզական աշխատանք են ծավալում, նրանց նախապատրաստում ինքնապահտպանության: Այդ բոլորը տեղի է ունենում Խրիմյանի և Կամսարականի գիտությամբ: Ազատագրական գաղափարներին և շարժումներին դեմ Ալրամբարա Խաչատոր կարողիկոսն իմանում է կովկասահայերի գործունեության մասին և նրանց մատնում է ուտիկաններին: «Սև խաչ» անդամներն իբրև պատիժ կարողիկոսի մատնության, ձեռնարկում են նրա կուտակած դրամների հափշտակությունը, կազմակերպության համար օգտագործելու նպատակով: Թե մատնությանը և թե այդ անցույթարձերին տեղյակ էր Կամսարականը: Նա մեծ ջանքեր է քափում Բայազետում բանտարկված Գալուստին և Բարդասարին բանտից ազա-

¹ «Մորճ» (ամսագիր), Թիֆլիս, 1907, № 1, էջ 73:

² ԱՐԲИԱ, գ. 450, դ. 98, լ. 37.

տեղու համար¹: Երկու ամիս Բայազետի քանտում մնալուց հետո, Կամսարականը խնդրում է Էրգրումի գլխավոր հյուպատոս Դեննետին՝ գործադրել իր ողջ հեղինակությունը ոռուահայերին՝ ոռուական հպատակներին բուրքական քանտից ազատելու համար²: Սյայն այդ ժամանակ նրանց ազատում են բանտից, առաջարկելով անհապաղ հեռանալ երկրից: Թուրքական իշխանությունների տեղական ներկայացուցիչներն առանց հափաստի տեղեկության, հոտառությամբ գգում էին ոռուական փոխհյուպատոսի պաշտոնակատարի կապը Վաճում տեղի ունեցող հուզումների հետ: Նրանք խիստ հսկողություն են սահմանում Կոստանդնովի վրա և բոլոր հնարավոր միջոցներով ցանկանում անվանարկել նրան Ռուսաստանի արտարին գործոց նախարարության տարբեր աստիճանավորների աշջուում՝ աշխատանքից, առավելապես Վաճից հեռացնելու նպատակով: Բանք հասնում է նրան, որ Բ. Դուսի թերթաթաճրով և Վաճի նահանգապետի հրահանգով տեղական ուստիչանությունը բոնագրավում է Կամսարականի վիստը, նրա ստանալիք մանուլը, ապա թուրքական արտարին գործոց նախարարության միջամտությամբ բողոքում Էրգրումի ոռուական գլխավոր հյուպատոսին և Կ. Պոլսի ոռուական դեսպանին Կամսարականի հայամնետ գործունեության համար³: Նրանք առաջ են գնում իրենց բոլորների մեջ և գրավարում Կամսարականին: Չիմանալով, որ Կամսարականի ճանապարհորդությունները հայկական տարբեր վայրերում (Մոլց, Բասեն, Սոլերտ, Դիարբերի) կատարվում են Կովկասի ուղղական շտարի հրահանգով, նրանք մեղադրում են ոռուական փոխհյուպատոսի պաշտոնակատարին հայարձակ նահանգներում ինքնակամ շրջազայելու, հակարութքական քարոզություն ծավալելու և հայ բնակչության մեջ հուզումներ առաջացնելու համար:

Կ. Պոլսի ոռուական դեսպանի մեղադրանքներին փոխհյուպատոսի պաշտոնակատարը տախիս է արժանապատիվ պատասխան: Հերքելով թուրքական հերյուրանքները, նա գրում է. «Բ. Դուսու անկարու է ճանանել թեկութ որևէ աննշան փաստ, որն ապացուցեր նրանց բոլորների

¹ Հ. Կ. ճանկութեան, նշվ. աշխ., էջ 54–57:

² АВПР, ф. Армянские дела, д. 119, л. 19.

³ АВПР, ф. Посольство в Константинополе, д. 1568, л. 1–2.

հիմնավորումը իմ նկատմամբ: Եթե ես այն կարծիքին լինեի, որ քուրքահայերի ապստամբությունն ու հուզումները նրանց օգտակար կիմնեին, նոյնիսկ այդ ժամանակ ես չեմ կարող ծավալել նման գոծունեություն այն պարզ պատճառով, որ ես իրավունք չունեմ իմ քաղաքականությունը վարել այնուղիւ: Մանավանդ ես այն կարծիքին եմ, որ տեղի հայերի ապստամբության բոլոր փորձերը այժմ դատապարտված են անհաջողության»⁴:

Եթե քուրքական պաշտոնյաները ցանկանում էին հեռացնել Կամսարականին Վաճից, ապա տեղի հայ հասարակական գործիքները Ա. Խորիմյանի դեկապարտյամբ խնդրագրեր են հղում Կ. Պոլսի ոռուական դեսպանին² մի կողմից, ինքը Կամսարականը, Թիֆլիսի նրա համախուները խնդրում են գաղտնի խորհրդական Կ. Եղյանին և մեծահարուսա Մ. Սանասարյանին մյուս կողմից³, Կամսարականին հաստատել փոխհյուպատոսի պաշտոնում: Թուրքական գրավարությունների հարցը բնինարկման առարկա է դատնում Էրգրումի ոռուական գլխավոր հյուպատոսի և Կ. Պոլսի դեսպանի միջև: Եվ թուրքական, և հայկական դիմուններին Ա. Դեննետն առաջարկում է տալ բացասական պատասխան և հմտությամբ հիմնավորում է երկու մերժումը: Նա գտնում է, որ «Կամսարականի նկատմամբ հայ բնակչության բացահայտ համակրանքի և թուրքական իշխանությունների կողմից ընդգծված քննամանքի պատճառով» Կ. Կամսարականին չի կարելի հաստատել Վաճում փոխհյուպատոս, բայց նրան այդտեղից հեռացնելն էլ համարում է անժամանակ և աննպատակահարմար, որովհետև դա կրծվարացներ իր աշխատանքն Էրգրումի իրեն գլխավոր հյուպատոս և կնշանակեր «որոշակիորեն ընդառաջել թուրքական իշխանությունների բոլորին»⁴:

Գործերին առավել մոտիկից ծանրանալու նպատակով գլխավոր հյուպատոս Դեննետը մեկնում է Վաճ: Մանրամասն ուսումնասիրելով փոխհյուպատոսի պաշտոնակատարի գործունեությունը, համեմատելով անզիական և ոռուական փոխհյուպատոսների գործելակերպը և տեղի

¹ АВПР, ф. Армянские дела, д. 119, л. 25.

² АВПР, ф. Посольство в Константинополе, д. 1566, л. 7.

³ Ա. Սլիմարյան, նշվ. աշխ., էջ 64:

⁴ АВПР, ф. Армянские дела, д. 119, л. 26, 27.

հայուրյան մեջ ունեցած ժողովրդականությունն ու հեղինակությունը, Երգուստի գլխավոր հյուպատոսը եզրակացնում է. «Կանի բրիտանական գործակալները նույնիսկ բորբական ադմինիստրացիայի օգնությամբ չեն կարող հաջողության հասնել Կամսարականի հետ մրցակցության մեջ»¹: Եթե մեկ տարի առաջ (1881 թ. հուլիսի 2-ին) Դենինետը մերժում էր Կամսարականին հաստատել փոխհյուպատոս, առաջ քաշելով իր պատճառարարանությունները, ապա մեկ տարի անց՝ 1882 թ. նոյեմբերին Նելիդովին է հաղորդում իր նկատառումները:

Կամսարականին փոխհյուպատոս հաստատելու նկատմամբ, համոզուիք հայտնելով, որ այսուհետև վերջինս իրեն կրթություն ուսական փոխհյուպատոսին վայել փարքազգով: Համոզմունքի այդ փոփոխության մեջ փոքր դեր չսահաց նահանգի հայուրյան ուսական կողմնորոշումը և ուսանապատ գործունեությունը:

Քեռինի կոնգրեսում Սևծ Բրիտանիայի բոնած քորքամետ դիրքավորությունից հիմքավագած, Խրիմյանն իր հայացքը հառեց հյուսիսային հզոր հարեանին՝ Ռուսաստանին, նրա աջակցությունը որոնելով հայկան հարցի լուծման մեջ: 80-ական թվականներին Կամսարականի խորհրդով և գործուն մասնակցությամբ Վանի երեսփոխանական ժողովը (նախազահ Մ. Խրիմյան) երկու անգամ դիմումներ հղեց ուսական ասանդը 2-ին: Իրեն պատասխանատու համարելով հայկական հարցի սկզբնավորման մեջ, Խրիմյանը դիմում է ուսական կայսրին՝ նրանից հայցելով Քեռինի վեհաժողովի 61-րդ հոդվածի կենսագործումը: Քեռինի կոնգրեսից անցել էր 21 ամիս: 61-րդ հոդվածը ոչնչով չէր բարեկավել արևմտահյուրյան վիճակը, հակառակ՝ քորքական կառավարության «ձեռնարկումները» կարող են հանգեցնել հայ բնակչության ֆիզիկական ոչնչացմանը: Վիճակագրական տվյալների օգնությամբ Խրիմյանը փաստում է, որ «հայոց մեծամասնություն ունեցող երկիրներու մեջ» մահմերական բոլոր ազգերի ներկայացուցիչներից պետական պաշտոնյաներ կան: «Խակ հայն ոչ թե վալի, այլ պարզ ուստիկան մը անգամ չկրնար լինի, ամրող Հայաստանի մեջ մեկ հայ մյուսիր մը իսկ չը

¹ АВИР, ф. Полоцкое в Константинополе, д. 1568, л. 10.

գտնվիր»²: Վասպուրականի հոգեոր առաջնորդը խնդրում է ուսական ինքնակալից մեծ Բրիտանիայի ձեռքից վերցնել նախաձեռնությունը և իր դեկավարությամբ «Եվրոպական խառն հանձնաժողով մը կազմելով... իիմնական բարենորդում մը հաստատել Արևելյան Ռումելիո բարենորդմանց իիման վրա, որով հայերն ալ շնորհիվ Զեր վեհափառության, ինքնիշխանության ազատությունը վայելելով կարենան իրեւ մարդ ապրել և զարգանալ...»³:

80-ականների սկզբին արևելահայ և արևմտահայ գործիչներին ինչոր մի պահ ոգեորեց Արևմտյան Հայաստանի ուսական գրավման հեռանկարը: Այս նամակն այդ ակնկալիքների արտահայտությունն էր: Անցնում է երկու տարի: Նարոդիկների կողմից սպանված Ալեքսանդր 2-ին փոխարինում է Ալեքսանդր 3-ը: Մեծ փոփոխություններ են տեղի ունենում Ռուսաստանի արտաքին և ներքին քաղաքականության մեջ: Ալեքսանդր 3-ը հայկական հարցի նկատմամբ փարում էր տրամագծություն ինկատակ քաղաքականություն: 1882 թ. փետրվարի 10-ին դարձյալ Կամսարականի միջոցով Խրիմյանը դիմում է Ալեքսանդր 3-ին: Այս նամակին Կամսարավանը կցում է երկու տարի առաջ հյած ուղերձի պատճեն, իր կողմից ավելացնելով Վանի հայուրյան վիճակի օրեցօր վատրացման անկողմնակալ նկարագիրը⁴: Ինչքան ծանրանում էին արևմտահյուրյան կյանքի պայմանները, այնքան ուժեղանում էր Կամսարականի հնչեցրած տագնապի ահազանգը ուղյած Էրգուսի և Կ.Պոլսի ուսական տարբեր աստիճանի գործիչների: Դրանից ուշադրություն է գրավում 1882 թ. հուլիսին Կամսարականի գեկուցագիրը, ուղյած Կ.Պոլսի ուսական դեսպանության հավատարմատար Մ. Կ. Օնուին: Նկարագրելով Վասպուրականի հայուրյան տագնապները, տեղի մուտքմանների «մոլեռանդ տրամադրություններն ու սպառնալիքները քրիստոնյա բնակչության նկատմամբ», ուսական փոխհյուպատոսը հաղորդում է, որ Վանի երեսփոխանական ժողովի պատվիրակները (նախազահ, քարտուղար և երկու այլ անդամ) դիմել են իրեն, ինչդեղով ուսական իշխանությունների ուշադրությունը իրավիրել իրենց «վտանգնար լինի, ամրող Հայաստանի մեջ մեկ հայ մյուսիր մը իսկ չը

¹ АВИР, ф. Полоцкое в Константинополе, д. 1568, л. 10.

² Նույն տեղում, լ. 11:

³ Նույն տեղում, լ. 12:

հայուրյան մեջ ունեցած ժողովրդականությունն ու հեղինակուրյունը, Երգրումի զլսափոք հյուպատոսը եգրակացնում է. «Վաճի բրիտանական գործակալները նույնիսկ բուրքական ադմինիստրացիայի օգնությամբ չեն կարող հաջողուրյան հասնել Կամսարականի հետ մրցակցության մեջ»¹: Եթե մեկ տարի առաջ (1881 թ. հուլիսի 2-ին) Դեմնետը մերժում էր Կամսարականին հաստատել փոխհյուպատոս, առաջ բաշելով իր պատճառաբանությունները, ապա մեկ տարի անց՝ 1882 թ. նոյեմբերին Նելիդովին է հաղորդում իր նկատառումները:

Կամսարականին փոխհյուպատոս հաստատելու նկատմամբ, համոզունք հայտնելով, որ այսուհետև վերջինս իրեն կրթուելով ուսական փոխհյուպատոսին վայել վարքագծով: Համոզունքի այդ փոփոխության մեջ փոքր դեր չսահաց նահանջի հայուրյան ուսական կողմնորոշումը և ուսանմաստ գործունեությունը:

Բեռլինի կոնգրեսում Մեծ Բրիտանիայի բոնած բուրքամետ դիրքավորումից հիսարքափած, Խրիմյանն իր հայացքը հառեց հյուսիսային հզոր հարևանին՝ Ռուսաստանին, նրա աջակցությունը որոնելով հայկական հարցի լուծման մեջ: 80-ական թվականներին Կամսարականի խորհրդով և գործուն մասնակցությամբ Վաճի երեսփոխանսկան ժողովը (նախագահ Ս. Խրիմյան) երկու անգամ դիմումներ հղեց ուսական ցարերին: Առաջինն ուղղված էր «քրիստոնյաների ազատարար» Ալեքսանդր 2-ին: Իրեն պատասխանատու համարելով հայկական հարցի սկզբնավորման մեջ, Խրիմյանը դիմում է ուսական կայսրին՝ նրանից հայցելով Բեռլինի վեհաժողովի 61-րդ հոդվածի կենսագործումը: Բեռլինի կոնգրեսից անցել էր 21 ամիս: 61-րդ հոդվածը ոչնչով չեր բարեկավել արևմտահյուրյան վիճակը, հակառակը՝ բուրքական կառավարության «ձեռնարկումները» կարող են հանգեցնել հայ բնակչության ֆիզիկական ոչնչացմանը: Վիճակազրական տվյալների օգնությամբ Խրիմյանը փաստում է, որ «հայոց մեծամասնություն ունեցող երկիրներու մեջ» մահմեղական բոլոր ազգերի ներկայացուցիչներից պետական պաշտոնյաներ կան: «Իսկ հայոց ոչ թե վայի, այլ պարզ ուստիկան մը անգամ չկրնար լինի, ամբողջ Հայաստանի մեջ մեկ հայ մյուսիր մը իսկ չը

¹ АВПР, ф. Политархив, д. 1625, л. 6, 8, 69,71.

գտնվիր»²: Վասպուրականի հոգևոր առաջնորդը խնդրում է ուսական ինքնակալից մեծ Բրիտանիայի ձեռքից վերցնել նախաձեռնությունը և իր դեկապարությամբ «Եվրոպական խառն հանձնաժողով մը կազմելով... ինքնական բարենորդուում մը հաստատել Արևելյան Ռուսկան բարենորդմանց իիման վրա, որով հայերն ալ շնորհիվ Զեր վեհափառության, ինքնիշխանության ազատությունը վայելելով կարենան իրեւ մարդ ապրել և գարզանալ...»³:

80-ականների սկզբին արևելահայ գործիչներին ինչու մի պահ ոգեսրեց Արևմտյան Հայաստանի ուսական գրավման հետանկարը: Այս նամակն այդ ակնկալիքների արտահայտությունն էր: Անցնում է երկու տարի: Նարոդիների կողմից սպանված Ալեքսանդր 2-ին փոխարինում է Ալեքսանդր 3-ը: Մեծ փոփոխություններ են տեղի ունենում Ռուսաստանի արտաքին և ներքին քաղաքականության մեջ: Ալեքսանդր 3-ը հայկական հարցի նկատմամբ վարում էր տրամադրություն հակառակ քաղաքականություն: 1882 թ. փետրվարի 10-ին դարձյալ Կամսարականի միջոցով Խրիմյանը դիմում է Ալեքսանդր 3-ին: Այս նամակին Կամսարականը կցում է երկու տարի առաջ հղած ուղերձի պատճեն, իր կողմից ավելացնելով Վաճի հայուրյան վիճակի օրեցօր վատրացման անկողմնակալ նկարագիրը³: Ինչքան ծանրանում էին արևմտահյուրյան կյանքի պայմանները, այնքան ուժեղանում էր Կամսարականի հնչեցրած տագնապի ահազանգը ուղղած Երգրումի և Կ.Պոլսի ուսական տարբեր աստիճանի գործիչների: Դրանից ուշադրություն է գրավում 1882 թ. հուլիսին Կամսարականի գեկուցագիրը, ուղղված Կ.Պոլսի ուսական դեսպանության հավատարմատար Ս. Կ. Օնուին: Նկարագրելով Վասպուրականի հայուրյան տագնապիները, տեղի մուսուլմանների «մոլեռանդ տրամադրություններն ու սպառնալիքները բրիստոնյա բնակչության նկատմամբ», ուսական փոխհյուպատուար հաղորդում է, որ Վաճի երեսփոխանական ժողովի պատվիրակները (նախագահ, քարտուղար և երկու այլ անդամ) դիմել են իրեն, խնդրելով ուսական իշխանությունների ուշադրությունը հրավիրել իրենց «վտան-

¹ АВИР, ф. Посольство в Константинополе, д. 1568, л. 10.

² Նոյն տեղում, լ. 11:

³ Նոյն տեղում, լ. 12:

զավոր ներկայի» վրա, որպեսզի ստիպեն Բ. Դուանը «ձեռնարկել անհետաձգելի միջոցառումներ սպասվող անկարգությունները կանխելու համար»: Կամսարականը, որ «Աև խաչի» ենտ միասին ֆինանսապես օգնում էր նաև Էրգրումի «Պաշտպան հայրենյաց» գաղտնի կազմակերպությանը, Ակրտիչ Խրիմյանի ենտ միասին կապ էր հաստատել նրանց ենտ, իր գեկուցագրերում անդրադառնում է նաև բորբական իշխանությունների կողմից այդ կազմակերպության բացահայտվելուն: Նա նկարագրում է այն ազդեցությունը, որ քողել է վաճեցիների վրա այդ իրադարձությունը և ավելացնում, որ իրք համերաշխատքան նշան Էրգրումի հայրենասերների ենտ, տեղի երթասարդության մեջ հաստանում են խմբումներն ու հոգումները, որոնք ամեն վարկյան կարող են վերածվել լորջ շարժումների¹:

Կամսարական փոխային պատուի գործունեության մեջ առավել գնահատելի է այն աշխատանքը, որ կատարեց վերջինս շեյխ Օրյելուլլայի անվան ենտ կապված քրդական շաժման մեջ: Շարժման առաջին օրերից Կամսարականն իր գեկուցագրերն է հղում Էրգրում, Դոլիս, Կովկասի ոսպմական շտար, հաղորդելով իր գործակալների և շեյխի հարաբերությունների մասին, նշելով վերջինիս ոուսական կողմնորոշումը և ոուսահավատակություն ընդունելու պատրաստակամությունը²: Իրեն պահելով անկողմնակալ դիտողի դերում, Կամսարականն ամենայն պատասխանատվությամբ կատարում է իր պաշտոնական առաքելությունն առանց մոռանալու հարազատ ժողովրդին: Երկու տարբա ընթացքում հղած ամենօրյա գեկուցագրերում ամբողջանում է մեծ հայրենասերի, ազնիվ մարդու և օրինավոր աստիճանավորի կերպարը: Ամենափել չղավելով այն գործին ու երկրին, որին ծառայում էր, նա ամեն կերպ ցանկանում էր արևմտահայությանը գերծ պահել շեյխի արշավանքի ենտ կապված արհավիրներից: Օրյելուլլան կարծեն երկակի խաղ էր խաղում ոուսական և բորբական պետությունների ենտ: Դժգոհելով բորբական իշխանություններից, որ իր ծառայությունները 1877–78 թթ. ոուս-բորբական պատերազմի ժամանակ համապատասխան վարձատրում չեն ստացել և չեն գնահատվել, նա Կամսարականին հաղորդում է, որ ցան-

կանում է ընդունել ոուսական հավանավորություն և նույնիսկ հպատակություն, քանի որ օսմանյան Թուրքիայում հնարավոր չէ ապահովել կյանքի նորմալ պայմաններ¹: Որոշ ժամանակ անց շեյխն արժանանում է սուլրանի ջերմ ընդունելությանը: Արդու Համիլը ցանկանում է շեյխի շարժումն օգտագործել հայկական կոսորտածներ կազմակերպելու և հայ-քրդական հարաբերությունները սրելու նպատակով: Դեպքերի ականատես և անմիջական մասնակից Կամսարականն իրադարձություններին տալիս է այլ ընթացք: Նրա գործակալներից մեկը՝ Սիմոն Զիլինգարյանը, որը ոուսակայ վաճառականի անվան տակ շրջում էր Արևմտյան Հայաստանում, սերտ հարաբերություններ է հաստատում շեյխ Օրյելուլլայի ենտ, 1880 թ. հոկտեմբեր ամսից դառնում է նրա խորհրդականը և արշավանքի ողջ ընթացքում ուղեկցում նրան սարդարի տիտղոսով: Այդ ընթացքում որոշվում է և շեյխի շարժման ուղղությունը: Հայկական կոսորտածներ կազմակերպելու փոխարեն շեյխն արշավում է բորբ-պարսկական սահմանը, այնտեղ քրդական կենտրոն ստեղծելու նույնությամբ: Սիմոն Զիլինգարյանին հաջողվում է արշավանքի ճանապարհին գտնվող հայկական գյուղերը գերծ պահել ավերներից: Նրա իրահանգով հայկական գյուղերը կապույտ դրոշ բարձրացրին ի նշան համերաշխատքան բոլոր ապատամբների ենտ և ազատվեցին կոսորտածներից: Թուրքական կառավարությունը, որ կատարածում էր ոուսակայ վաճառականի «անկողմնակալ վարքի» համար, քանից խուզարկումներ է կատարվում և նույնիսկ հասուկ իրահանգով բարձել տալիս նրա ոնեցվածքը՝ փաստեր հայտնաբերելու նպատակով²: Սակայն ոչ մի անգամ չի հաջողվում գտնել որևէ ապացույց, իսկ Կամսարականն իր գործակալին պաշտպանելու նպատակով օգնություն է խնդրում Էրգրումի գլխավոր հյուպատոսից, իր քարտուղարին և ներկայացուցիչն ուղարկում է մասնակցել Զիլինինգարյանի գյուղերի դատին, որ ոուսահավատակ մյուս վաճառականներն ապահով կատարեն իրենց առևտրական գործառնությունները³:

¹ АВГР, ф. Посольство в Константинополе, д. 1563, л. 34.

² Նոյն տեղում, լ. 22:

³ Նոյն տեղում, լ. 23:

¹ Նոյն տեղում, լ. 49:

² ԱԳԲԱ, ֆ. 450, լ. 98, լ. 28–29.

Ծեյխ Օքելուլայի շարժումը, նրա սկիզբը, վերելքը և անկումը տևեց շորջ երկու տարի՝ 1880-ից 1882 թ.: Այդ ընթացքում Կամսարականն իր ամենօրյա դիտարկումները, գործակալներից ստացած լուրերն անընդմեջ ուղարկում է և Կ.Պոլսի դեսպանություն, և Կովկասյան ռազմական շտաբ¹: Օքելուլայի շարժումն ավարտվեց պարտությամբ: Մեծ պատությունների միջամտությամբ բնում խեղդվեցին քրդական շարժումները և շեյխն արտրվեց: Այդ լուրերի ամփոփումով վերջացան Կամսարականի՝ շեյխի շարժման մասին տեղեկագրերը: Վանի հասարակական կյանքի վրա խփած վերահսկողություն սահմանած քուրքական տեղական իշխանություններն օգտվելով Խրիմյանի՝ հոգևոր առաջնորդի պաշտոնից իրաժարվելուց հետո Պոլսու Սելիքյանի ընտրության ժամանակ եղած հոգումներից, խուզարկություններ և կատարում վանեցի երիտասարդների տներում և հայտնաբերում փաստարդերեր, որոնք հավաստում են Կամսարականի կայլ «Սև խաչի», մասնավորապես նրա գործուն անդամների հետ: Վանի նահանգապետը հասուկ գրույցի է իրավիրում Սկրտիչ Խրիմյանին և նրան մեղադրում Կամսարականին քաջալերելու, ուստական կողմնորոշման և իր թե ուստերին գինվոր մատակարարելու մեջ: Սեղադրանքների մեջ շեշտվում էր նաև այն հանգամանքը, որ Խրիմյանը Վարազա վաճրը դարձել է «հեղափոխական ուժերի» հավատելին և ժամադրավայրը²: Խրիմյանը հերքում է այդ մեղադրանքները, սակայն ուստայնը Կամսարականի շորջն արդեն հյուսվում էր: Եթե 1882 թ. քուրքական գրայարտություններն արդյունքի չհասան, ապա 1883 թ. վերջին պատկերն այլ էր: Դեկտեմբեր ամսին, եթե Կամսարականը Կովկասի Ռազմական շտաբի հանձնարարությամբ շրջագայում էր «Արևելյան Անատոլիայում»՝ Արևմտյան Հայաստանի տարբեր տարածներում, Կովկասի Փոխարքա Դոնդուկով-Կորսակովը ծածկագիր հեռազիր է հղում Պետերբուրգ, որ Կամսարականի ճանապարհորդությունից հետո նա կուղարկվի Թիֆլիս³: Կամսարականի հեռացումը Վա-

¹ Ապատամության առաջին շրջանի Կամսարականի գործունեության մանրամասն վերլուծությունը իրատարակվել է հետևյալ ժողովածողի մեջ “Сборник материалов по Азии”, выпукл 11, 1884, Санкт-Петербург.

² Ա. Թերզիական, Արծիվը իր բոյնին մեջ, Փարիզ, 1938, էջ 70-71:

³ ԱՊՏԱ, գ. 450, ձ. 102. լ. 23.

ից ձգձգվում է մինչև 1884 թ. կեսերը: Այդ ընթացքում նա ցանկանում էր օգտագործել իր կապերը Պետերբուրգի հեղինակավոր գործիչների հետ, տեղափոխումը Վանից կանխելու համար, բայց արդյունքի չի հասնում: 1884 թ. կեսերին փոխարկությունը ժամկետը լրաճարու պատրվակով Կամսարականին տեղափոխում են Սիրիայի դեսպանատան տրամադրության տակ, արաբներով բնակեցված մի խոլ ավան՝ Համա: Վանի հայությունը գրկվեց իր հայրենասեր գավակից, իր մեծ հովանափորից և ողբաց նրա հեռացումը¹: Կամսարականը ևս զգում էր, որ իր գործունեության շառավիղները նեղանում են ոչ հայկական միջավայրում և քանի որ հայկական ասացվածքի համաձայն «ձուկը ուժեղ է ջրում», նա Եղյանին հաղորդում էր, որ իրեն բոլացնելու համար ուստական քաղաքական գործիչները “քաշու ... վեճրօսիտ մենա հացու”²: Կամսարականին Վանից հեռացնելուց հետո վանի փոխարկությունը նշանակվեց գեներալ Կոլյուբակինը: Չնայած վեջինս աշխատում էր ամեն կերպ օժանդակել Վանի տարբեր լուսավորական ձեռնարկներին, սակայն Կամսարական հյուպատոսի գործունեության բարեկար ազդեցությունը երկար տարիներ չջնջվեց վանեցիների հիշողությունից:

Հայ-ոստական հարաբերությունների պատմության հարցեր,
Երևան, 1998, էջ 76-89:

ԷՐԶՐՈՒՄԻՑ ԶԱՎԱԽ
(Գրախոսություն Ա. Մելքոնյանի «Զավախը. պատմության
ուրվագծեր» աշխատության մասին)

Պատմական թարձր Հայքը գտնվում էր Օսմանյան թուրքիայի կը քրումի նահանգում և դարեր շարունակ հայության պատմամշակութային կենտրոնն էր: 19-րդ դարի սկզբին, չնայած քրդական և քուրքական ցեղերի ներխուժումներին և տեղաշարժերին, նահանգը շարունա-

¹ Հ. Երամեան, նշվ. աշխ., էջ 181:

² Մ. Սիրիական, նշվ. աշխ. էջ 65:

կում էր պահպանել հայկական դիմագիծը: Թուրքական կայսրությունը երկրի բոլոր ժողովուրդներին բաժանում էր հիմնականում երկու ազգության՝ ուղղահավատներ և անհավատներ: Իսլամն օրենքից դուրս էր դնում անհավատներին, նրանց համար ստեղծելով լյաճրի անտանելի պայմաններ: Էրգրումի նահանգը ևս բաժանված էր լիվաների, դրանք էլ՝ սանջակների կամ զավառների: Էրգրումի նահանգը մնձ նշանակություն ուներ կայսրության վարչատարածքային ենթակառուցվածքում: Թռն մինչ խորհրդային, և թե՛ խորհրդային պատմաբաններին հետարքքել են ընդգծված հայկական դիմագիծ ունեցող նահագի սոցիալ-տնտեսական իրավիճակը, մշակութային լյաճրը, զաղունի կազմակերպությունների ստեղծումն ու ազատագրական շարժումները: Հետարքքությունն ավելի մեծացավ հետխորհրդային շրջանում, երբ պատմաբանների համեմատաբար երիտասարդ սերնդի սենուն ուշադրության առարկան դարձավ Արևմտյան Հայաստանը:

Ուսումնասիրողների շրջանում հայտնի է երիտասարդ պատմաբան Աշոտ Մելքոնյանը: Ծնունդով ջավախսեցի հետազոտողը զիտական առաջին աշխատությունը նվիրել է Էրգրումի նահանգի ազգային կազմին, հայերի տեղաբաշխմանը և 1828–1829 թ. ոուս-րուրքական պատերազմից հետո սկսված զաղրին: Աշխատությունը բաղկացած է երկու գլխից: Առաջինը նվիրված է Էրգրումի նահանգի 19-րդ դարասկզբի հայկական բնակավայրերին, մանրանասն վերլուծված են հայկական զավառները: Ընթերցողի համար ամբողջանում է նահանգի բոլոր զավառների նկարագիրը՝ աշխարհագրական դիրքը, գետերը, բնական հարստությունները, բնակչությունը, նրանց բվարանակն ու տեղաբաշխությը: Գրքի շահեկան կողմը 14 քարտեզներն են. առաջինը ամբողջ նահանգի վարչական բաժանումն է 19-րդ դարի առաջին երեսնամյակին, մյուսները նվիրված են զավառներին(Էրգրում, Դերջան, Բարերդ, Երզնկա, Կամախ, Կելիք, Շապին-Գարահիսար, Քդի, Սպեր, Թորում, Վերին և Ստորին Բասեններ, Խնոս, Ալաշկերտ, Խամսուր, Դիաղին և Բայազետ): Քարտեզներում նշված գյուղերի անուններն իսկ վկայում են հայերի գերակշռությունը: Երկրորդ գլուխը հանգամանորեն ներկայացնում է նահանգի հայերի բվարանակը և դիմամիլկան: Համեմատելով օսմանյան վեզիր Ոնիս Լինդու, գերմանացի վիճակագիր Գ. Հասելի և հայ

ուսումնասիրող Ե. Խարանասյանի վիճակագրությունները, լրացնելով վրաց պատմաբան Իոսան Բագրատիոնի և ոուս Լիխուտինի տվյալներով, Ա. Սելրոնյանը եզրակացնում է, որ Արևմտյան Հայաստանում, մասնավորապես Էրգրումի նահանգում «հայերը բվարանակով գերազանցում էին» մյուս ժողովուրդներին: Նշվում են կոնկրետ փաստեր՝ հիմնավորված արխիվային վավերագրերով, թե որ զավառում քանի հայկական և բրդական բնակավայր կա՝ բնատանիքների կանկրետ քվով: Առանձնակի հետարքքությամբ են ընթերցվում 1828–1829 թ. ոուս-րուրքական պատերազմի հետևանքով հայ ազգաբնակչության տեսաշարժերի վերաբերյալ բաժինները: Պատերազմի լնբացրում ոուսական գործերի հաջողություններն առաջացրին մահմեղականների զայրույթն ու կատաղությունը: Դաժան հալածանքների ենթակվող հայությունը պատերազմի ավարտից հետո կանգնած էր կորատյան շեմին: Թեմի հոգեոր առաջնորդ Կարապետ Բագրատունու նախաձեռնությամբ, չսպասելով գաղթի պաշտոնական բույլտվությանը, սկսվեց նահանգի հայ բնակչության արտագաղթը Արևելյան Հայաստան: 1830 թ. վաղ գարնանը գաղթն ստացավ կազմակերպված բնույթ: Մի քանի ամիս անց Ախալցխա, Ախալքալաք, և Ծաղկա հաստա գաղրականները և գումարվելով տեղի հայ բնակչությանը, փոխեցին ժողովրդագրական պատկերը: Աշխատությանն իրեն հավելված կցված է Էրգրումի նահանգի 16 զավառների հայկական բնակավայրերի սպասիչ ցուցակը, որն ապացուցում է հեղինակի թեզը, թե հայաշատ այդ նահանգը արտագաղթից հետո լը պահպանեց իր հայկական դիմագիծը և համարվեց տարբեր վայրերից եկած հայ ազգաբնակչությամբ:

Իրեն աշխատության տրամաբանական շարտեակություն 1999-ին Աշոտ Մելքոնյանը իրատարակեց Եղիշե Գեղամյանի «Կարապետ արքային կարություն» աշխատությունը՝ գրելով առաջարան ու ծանոքագրելով: 1829–30 թ. գաղթի կազմակերպիչ Կարապետ Բագրատունուն նվիրված Ե. Գեղամյանի այս աշխատության իրատարակությունը Բարձր Հայրի հայության գաղրած սերունդների հարգանքի տուրքն է: արժանապատիվ հոգեօրականի ծննդյան 220-ամյակին: Այդ հանգամանքի առավել ցայտուն ապացույցն է Աշոտ Մելքոնյանի՝ դարձյալ 1999-ին իրատարակած «Զավախը, պատմության որվագծեր» աշ-

խատուրյունը: Առաջին զլսում՝ «Զավախրի պատմական անցյալից», հեղինակը հենվելով Մովսես Խորենացու, Փափստոս Բյուզանդի, Հովհան Սամիկոնյանի, Ստ. Օքբեյանի, Մատթեոս ՈՒռհայեցու, վրացական աղբյուրների վկայությունների վրա, օգտագործելով «Աշխարհացոյցը», միջին և նոր շրջանի պատմաբանների աշխատությունները, ապացուցում է Պատմական Զավախրի (հայկական, հայաբնակ), Սև Հայքի 15 նահանգներից՝ Գուգարքի ինք զավառներից մեկը լինելը: Աշխատության երկրորդ գլուխը վերնագրված է «Զավախրի պատմության ողբերգական էջը (1918–1921 թթ.)», հանգամանորեն պարզաբանվում են Անդրկովկասի վարչատարածքային բաժանման հարցերը, որոնք դարձան բննարկման առարկա 1917 թ. փետրվարյան հեղափոխությունից հետո: Վրաց քաղաքական ուժերի կարծիք դիրքորոշումը Լոռու և Ալսալքարի հարցում հակասության մեջ նուալ տեղի հայության ազգային գատումների հետ: Դրա վկայությունն է Ախալքալաքի զավառյին գործադիր կրմիտեի որոշումը Ալեքսանդրապոլի զավառին վարչականորեն միահալու մասին: Այդ իրադարձությունները ժամանակավորապես տեղի տվին քորրական վտանգի առաջ, երբ տեղի հայ և վրացի բնակչությունը միասնաբար ձեռնամուխ եղավ Ախալքալաքի և Ալսալքսայի պաշտպանությանը: Թուրքական գործերի ներխուժումը Ախալքալաքի զավառ ծանր վիճակ ստեղծեց փորքարիվ և վատ զինված հայկական ջոկատների համար, իսկ զավառի հյուսիսային և հարավային գյուղերի բնակչությունը գաղթեց Բակուրիան և Ծալկա: Զանգվածային զարդի այդ օրերին ստեղծվեցին Անդրկովկասի երեք հանրապետությունները: Հայոց Ազգային խորհուրդը իրեն հայտարարեց հայկական զավառների գերազույն և միակ իշխանությունը: Այդ անորոշ հայտարարությամբ Ազգային խորհուրդը ցանկանում էր խուսափել հարեան պետությունների հետ ընդհարումից, սակայն վրաց մենչևիկերը հունիսի 4-ին Թուրքիայի հետ կնքած պայմանագրով հայերով բնակեցված Ալսալքսայի և Ախալքալաքի զավառները որոշեցին հանձնել Թուրքիային: Հեղինակը փաստերով ապացուցում է, որ վրացիների այդ որոշումը հետապնդում էր հետահար նպատակներ: Արխիվային մեծաքանակ փաստերի հենքի վրացույց է տրված հայկական զավառների հայարափման գործողությունները վրաց կառավարողների կողմից: Հայոց զաղթականական խոր-

իուրդը, Ախալքալաքի հայրենյաց վարչությունը, Կովկասի Հայոց Բարեգործական ընկերությունը ջանքեր էին բափում հայ զաղթականության հոգսերը հոգալու համար: Սակայն 80–85.000 մարդկանց համար նրանց աշխատանքները շոշափելի արդյունքներ չեն տալիս: Թուրք-վրացական սահմուեցուցիչ գործողությունների նպատակամղված գործեկակերպություններից Վրաստանի խորհրդայնացումից հետո էլ՝ սրողված «ինտերնացիոնալիստական» երանգներով: 1921 թ. հուլիսի 7-ին Ուկրաինական պարյուրոյի պլենումը պատմական Զավախրը հանձնեց Վրաստանին. Երկու օր առաջ Լեռնային Ղարաբաղն էր հանձնվել Ալեքսանդրին: Աշխատության մեջ մանրամասն բննարկված է 1918–1921 թթ. Զավախրի՝ Հայաստանին միավորվելու ձախողման ընթացքը՝ մեղավոր համարելով նաև Հայաստանի առաջին հանրապետության դեկապարներին, որոնք Արևմտյան Հայաստանի խնդիրը առաջնային համարելով, անհրաժեշտ ուշադրություն շաբաթին Ալեքսանդրի և Վրաստանի բռնազարդած տարածքների վրա: Նոյնիսկ խորհրդայնացումից հետո հնարավոր շեղավայրի հարցի հայանապատ լուծումը՝ վրաց-աղբբեջանական համերաշխության և հակահայկական գործողությունների պատճառով: «Այսօր պատմական Զավախրի երկու շրջանները հայաբնակ 100 գյուղերով և ավելի քան 100.000 բնակչությամբ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գտնվող ամենամիատարր հայաբնակ երկրամասն են, որոնք շարունակում են ապրել իրեն հայաշունչ և հայեցի կյանքով», գրում է հեղինակը: Հետխորհրդային շրջանի հայ պատմաբանները պատմական դեպքերին տալիս են ճիշտ զնահատական, առանց հարեան ժողովուրդների «քարեկամական» հարաբերությունների գովերգման: Ա. Սելլոնյանի այս աշխատությունը զաղափարական պայքար է ընդիմ մոռացության և հանուն պատմական ճշմարտության: Այդ խմաստով անգնահատել է աշխատության հավելվածը, որը պարունակում է Հայաստանի, Վրաստանի և նախկին ԽՍՀՄ-ի այլ հանրապետությունների պետական արխիվներում պահպանված Զավախրի պատմության 1918–1921 թթ. ժամանակաշրջանի վերաբերյալ նյութեր:

Հայաստանի Հանրապետություն օրաբերք,
1999, 12 օգոստոսի:

**ԵԿԵՂԵՑՈՒ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ
(19-րդ դարի 2-րդ կես, Ռուսաստան, Թուրքիա)**

Պետականությունից գորկ հայ ժողովրդի համար դարեր շարունակ Եկեղեցին միակ կազմակերպությունն էր, որ ուներ համագային քննոյթ և միավորում էր տարբեր տիրապետությունների տակ գտնվող հայ ժողովրդի տարածառված հաստվածները: Առանձնակի մեծ դեր է խաղացել Ամենայն Հայոց կարողիկոսությունը իրեւ հայահավաքնամ, ազգային միասնության և հայապահպանման կարևոր գործոն: Խալամի դոգմաներով՝ դեկավարվող պետությունների տիրապետության ներքո գտնվող հայությունը համարվել է կրոնական համայնք, որի դեկավարը՝ հայ հոգևորականությունը, միջնորդ օղակի դեր է կատարել տիրող պետության և հայության միջև, հաճախ իրականացրել նաև աշխարհիկ իրավասություններ: Իր գործունեության ընթացքում Հայ Եկեղեցին և հոգևորականությունը հաճախ ստացել են որոշ իրավունքներ ու արտոնություններ, համեմատական ազատություն, բայց ավելի հաճախ՝ հսկածվել:

1828-ին Արևելյան Հայաստանը միացավ Ռուսաստանին: Քաղաքան այդ ակտին իրենց եռանդուն մասնակցությունը բերեցին նաև հայ հոգևորականության մի շարք ականավոր գործիչներ: Ցարական կառավարությունը ցանկանում էր Հայ Եկեղեցու դիրքն ու հեղինակությունն օգտագործել իր իշխանությունը Արևելյան Հայաստանում անրապնդելու և իր ազդեցությունը թուրքիայի տիրապետության տակ գտնվող Արևմտյան Հայաստանի և հայկական մեծ զանգվածներ ունեցող այլ փայրերի վրա տարածելու համար: Այդ նկատառումով ցարական կառավարությունը Հայ Եկեղեցու նկատմամբ դրսելորում էր երկակի վերաբերմունք: Երան մի կողմից անհրաժեշտ էր, որ Ամենայն Հայոց կարողիկոսությունը պահպաններ իր ազդեցությունը հայկական բոլոր շրջանների վրա, որպեսզի նրա միջոցով առաջ տաներ իր Արևելյան քաղաքականությունը, մյուս կողմից ցարին պետք էր, որ Հայ Եկեղեցու կանգնած անձնավորությունը լիներ հնագանդ, իր կողմից հսկ-

տառված մեկը, որը ծառայեր ցարիզմի վարած քաղաքականությանն ինչպես սովորական շարրային աստիճանավոր: Այդ նպատակաւոր վածությամբ 1836-ի մարտի 11-ին վավերացվեց հատուկ հանձնաժողովը՝ կողմից մշակված Հայ Եկեղեցու կանոնադրությունը, որը պատմույան մեջ մտավ «Պոլոյեն» անունով: 10 զիսից և 141 հոդվածից բաղկացած այդ կանոնադրությունը ավելին էր, քան Եկեղեցու կանոնադրությունը. այն իր մեջ ներառում էր ազգային կյանքի գործունեության տարբեր բնագավառներին վերաբերող խնդիրներ: Դա մի կողմից Ռուսական կայսրության տարածքում գտնվող հայ ժողովրդի ազգային մշակույթի ինքնորոշման առանձնաշնորհմների մի համակարգ էր, մյուս կողմից՝ իրավունքների սահմանափակում: Դա ամենից առաջ վերաբերում էր Ամենայն Հայոց Կարողիկոսի ընտրության համակարգին: Ամբողջ հայության կողմից ընտրված Համազգային ժողովը (ամեն թեմից երկու անձ՝ մեկ աշխարհիկ, մեկ հոգևորական) առաջադրում էր արժանավոր եպիսկոպոսների մի ցանկ, որից ընտրում էին կարողիկոսական երկու թեմնածու: Այստեղ սահմանափակում էին հայության իրավունքները: Յարը երկու թեմնածուներից մեկին տալիս էր «քարձրագոյն հաստատությունը»: Խակ այլ մեկը կարող էր լինել քաղաքականավես քարեհոյս և նպատակահարմար անձ: Փասորեն, կառավարությունը հենարավորություն էր ստանում Ամենայն Հայոց Կարողիկոսի այդ քարձը պաշտոնին հաստատել իրեն ցանկայի անձնափորություն: Ըստ «Պոլոյեն»-ի Հայոց Հայրապետը Ռուսական կայսրության սահմաններից դուրս ապրող հայության հետ կարող էր հարաբերություններ հաստատել միայն Արտաքին գործոց նախարարության միջոցով: Այդպիսով, կարողիկոսը կախման մեջ էր ընկնում զանազան աստիճանափորներից:

Կարողիկոսի իշխանության սահմանափակման մի փաստ էր նաև 1837-ին ստեղծված Եկեղեցական Սինոդը, որը դեկավարվում էր ցարական կառավարության կողմից նշանակված դատախազի կողմից, չնայած նրա նախագահը կարողիկոսն էր: «Պոլոյեն»-ի մեջ կային նաև դրական կողմեր. դա վերաբերում էր մասնավորապես կրթական գործի կազմակերպմանը, ծխական և թեմական դպրոցների, հոգևոր ճեմարանի բացմանը: Հայ Եկեղեցին իրավունք էր ստանում բացել հայկական դպրոցներ, պահպանել ազգային կեզմու և ազգային-հոգևոր առանձնա-

ԵԿԵՂԵՑՈՒ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ (19-րդ դարի 2-րդ կես, Ռուսաստան, Թուրքիա)

Պետականությունից գործ հայ ժողովրդի համար դարեր շարունակ Եկեղեցին միակ կազմակերպությունն էր, որ ոճեր համագույն քնույր և միավորում էր տարբեր տիրապետությունների տակ գտնվող հայ ժողովրդի տարանջատված հատվածները։ Առանձնակի մեծ դեր է խաղացել Ամենայն Հայոց կարողիկոսությունը իրև հայահավաքման, ազգային միասնության և հայապահպանման կարևոր գործոն։ Խվանի դրամաներով դեկավարփող պետությունների տիրապետության ներք գտնվող հայությունը համարվել է կրթնական համայնք, որի դեկավար՝ հայ հոգևորականությունը, միջնորդ օղակի դեր է կատարել տիրող պետության և հայության միջև, հաճախ իրականացրել նաև աշխարհիկ իրավասություններ։ Իր գործունեության ընթացքում Հայ Եկեղեցին և հոգևորականությունը հաճախ ստացել են որոշ իրավունքներ ու արտնություններ, համեմատական ազատություն, բայց ավելի հաճախ՝ հալածվել։

1828-ին Արևելյան Հայաստանը միացավ Ռուսաստանին։ Քաղաքան այդ ակտին իրենց եռանդուն մասնակցությունը բերեցին նաև հայ հոգևորականության մի շարք ականավոր գործիչներ։ Յարական կառավարությունը ցանկանում էր Հայ Եկեղեցու դիրքն ու հեղինակությունն օգտագործել իր իշխանությունը Արևելյան Հայաստանում ամրապնդելու և իր ազդեցությունը թուրքիայի տիրապետության տակ գտնվող Արևմտյան Հայաստանի և հայկական մեծ զանգվածներ ունեցող այլ վայրերի վրա տարածելու համար։ Այդ նկատառումով ցարական կառավարությունը Հայ Եկեղեցու նկատմամբ դրսերտում էր երկակի վերաբերունքը։ Երան մի կողմից անհրաժեշտ էր, որ Ամենայն Հայոց կարողիկոսությունը պահպաներ իր ազդեցությունը հայկական բոլոր շրջանների վրա, որպեսզի նրա միջոցով առաջ տաներ իր Արևելյան քաղաքականությունը, մյուս կողմից ցարին պետը էր, որ Հայ Եկեղեցու կանգնած անձնավորությունը լիներ հնագանդ, իր կողմից հաս-

տառված մեկը, որը ծառայեր ցարիզմի վարած քաղաքականությանն ինչպես սովորական շարքային աստիճանավոր։ Այդ նպատակառությամբ 1836-ի մարտի 11-ին վավերացվեց հասուլ հանձնաժողովի կողմից մշակված Հայ Եկեղեցու կանոնադրությունը, որը պատմույան մեջ նույն «Պոլոյենի» անունով: 10 գլխից և 141 հոդվածից բաղկացած այդ կանոնադրությունը ավելին էր, քան Եկեղեցու կանոնադրությունը. այն իր մեջ ներառում էր ազգային կյանքի գործունեության տարբեր բնագավառներին վերաբերող խնդիրներ։ Դա մի կողմից Ռուսական կայսրության տարածքում գտնվող հայ ժողովրդի ազգային մշակույթի ինքնորոշման առանձնաշնորհումների մի համակարգ էր, մյուս կողմից՝ իրավունքների սահմանափակում։ Դա ամենից առաջ վերաբերում էր Ամենայն Հայոց Կարողիկոսի ընտրության համակարգին։ Ամբողջ հայության կողմից ընտրված Համագույն ժողովը (ամսն թեմից երկու անձ՝ մեկ աշխարհիկ, մեկ հոգևորական) առաջադրում էր արժանավոր եպիսկոպոսների մի ցանկ։ որից ընտրում էին կարողիկոսական երկու թեմնածու։ Այստեղ սահմանափակում էին հայության իրավունքները։ Յարը երկու թեմնածուներից մեկին տախան էր «քարձրագոյն հաստատություն»։ Իսկ այդ մեկը կարող էր լինել քաղաքականապես բարեհույս և նպատակահարմար անձ։ Փաստորեն, կառավարությունը հետարարություն էր ստանում Ամենայն Հայոց Կարողիկոսի այդ բարձր պաշտոնին հաստատել իրեն ցանկավի անձնավորություն։ Ըստ «Պոլոյենի»-ի Հայոց Հայրաբանության Ռուսական կայսրության սահմաններից դուրս աարող հայության հետ կարող էր հարաբերություններ հաստատել միայն Արտաքին գործոց նախարարության միջոցով։ Այդպիսով, կարողիկոսը կախման մեջ էր ընկնում զանազան աստիճանավորներից։

Կարողիկոսի իշխանության սահմանափակման մի փաստ էր նաև 1837-ին ստեղծված Եկեղեցական Սինոդը, որը դեկավարփում էր ցարական կառավարության կողմից նշանակված դատախազի կողմից, չնայած նրա նախագահը կարողիկոսն էր։ «Պոլոյենի»-ի մեջ կային նաև դրական կողմներ. դա վերաբերում էր մասնավորապես կրթական գործի կազմակերպմանը, ծխական և թեմական դպրոցների, հոգևոր ճեմարանի բացմանը։ Հայ Եկեղեցին իրավունք էր ստանում բացել հայկական դպրոցներ, պահպանել ազգային կեզուն և ազգային-հոգևոր առանձնա-

հատկությունները: Կառավարության հսկողության տակ գտնվող Հայ Եկեղեցին նյուրական օգնություն չէր ստանում պետությունից. նրա գոյատևման միակ միջոցը ժողովրդական նվիրատվություններն էին և Եկեղեցական կալվածքներից ստացվող նկամուտները: «Պոլոշենի»-ն դժգոհությամբ ընդունեց Եկեղեցու, հոգևորականության, ժողովրդական զանգվածների և առանձնապես արևմտահայության կողմից, այն համարվեց հայ ազգային ավանդությունները ուժնահարու և Եկեղեցու իրավունքները սահմանափակող օրենքների համակարգ: 19-րդ դարի երկրորդ կեսից սկսած Հայոց Հայրապետության աննահանջ պայքար սկսվին Հայ Եկեղեցու իրավունքները վերականգնելու նպատակով: Ներսես Աշտարակեցի, Մատրես Ա Կոստանդնուպոլսեցի, Գևորգ Դ. Կարողիկոսները չնայած ընտրվում էին ցարական արքունիքի հաճությամբ, սակայն չէին դադարում ջանքեր գործադրել՝ Հայ Եկեղեցին ազատել խորք օրենքներից և ցարական հսկողությունից, այսպես կոչված հովանավորությունից, իր ավանդական դերին վերադարձնելու համար: Ներսես Աշտարակեցու հետո ողջ հայությունը համար հետևողականությամբ կարողիկոս էր ընտրում միայն արևմտահայերից: Այդ ժամանակահատվածում հայության ձգտումները համբնվում էին ցարիզմի վարած արտաքին քաղաքականության հետ: Գևորգ Դ-ի ժամանակ ցարական կառավարության արտաքին քաղաքականության վիտիմիտությունները, սակայն, առաջացրին նոր գործելակերպ կարողիկոսական ընտրելիների ցուցակ կազմելիս: Գևորգ Դ-ն մահացավ 1882-ին: 1882–84 թթ. ընթացքում հայ ժողովրդի բոլոր խավերն զրադարձ էին կարողիկոսական ընտրություններու: Դա սույն Եկեղեցական հոգևոր ոլորտին պատկանող հարց չէր, այլ հայ ազգի և Եկեղեցու քաղաքական, հասարակական-մշակութային ինքնուրույնության հարցն էր: Արևելահայ և արևմտահայ գործիչները միասնական պայքար էին մղում Վեհափառի քափոր զահի վրա արևմտահայ արժանավոր մի հոգևորական ընտրելու համար, որի ցարահպատակ չինելու հանգամանքը կապահովվեր Հայ Եկեղեցու համեմատական ազատությունը ցարական տարրեր աստիճանավորների ուննաձգություններից: Այդ պատճառով կարողիկոսական ընտրության հարցերը դաշնում էին արևելահայ և արևմտահայ մամուլի քննարկման և քանավեճերի առարկա: Կարողիկոսական ընտրության խնդիրը դառ-

նում էր հայ ազգային-ազատազրական շարժումների յուրատեսակ դրսերումը: Թե ինչ մեծ տեղ էր հատկացնում ցարական կառավարությունը հայ կարողիկոսների ընտրությանը, ցոյց են տալիս Ուսուաստանի Արտաքին քաղաքականության արխիվում մեր հայտնաբերած փաստարդթերը¹: Ուսուաստանի Պետական քարտուղար քարոզ Նիկոլային գաղտնի գրությամբ դիմում է Ներքին գործոց նախարար Դիմիտրի Տոլստոյին, որպեսզի վերջինս Արտաքին գործոց նախարար Ն. Գիրսի, Լուսավորության նախարար Դեյանովի, Կովկասի Քաղաքացիական մասի կառավարչապետ Ալեքսանդր Շ-ոնդոկով-Կորսակովի և Ասխական դեպարտամենտի պետ Խվանովի հետ հասուկ խորիրդակցությամբ քննարկեն և վճռեն հայոց կարողիկոսական ընտրությունների ամենակարենը խնդիրները՝ կարողիկոսական թեկնածուին արևմտահայերից առաջադրելու նպատակահարմարությունը և ընտրություններին արևմտահայ պատգամավորների բվի նվազեցման հարցը²: Խորիրդակցության բոլոր մասնակիցները պարտադիր կերպով պետք է իրենց տեսակետն արտահայտեն նշանակած խնդիրների նկատմամբ:

Կարողիկոսի անձի նպատակահարմարության մասին խոսելիս խորիրդակցության մասնակիցներն օգտվում էին Արևմտյան Հայաստանի իրենց գործականների քննութագրություններից: Սեծ հետաքրքրություն է ներկայացնում Էրզրումի ոուսական զիսավոր հյուսատոս Ալեքսանդր Դ-նենետի քննութագրություններն էջմիածնի քափոր զահի արևմտահայ հավանական թեկնածուների մասին: Հավանական ցուցակում նշվում են Կ. Պոլսի նախկին պատրիարք Սկրոտիչ Խրիմյանի, ժամանակի պատրիարք Ներսես Վարժապետյանի, Զմյուռնիայի հոգևոր առաջնորդ Սելիքինեկ Մուրադյանի, Էրզրումի նախկին հոգևոր առաջնորդ Հարություն Վեհապետյանի, Եպիսկոպոս Խօմիրյանի անունները և պատրիարք Խանատավայրական մեծ զգացումով քննարկվում են ամեն մեկի անձնական և հասարակական հատկանշները, դրական ու բացառական կաղմերը, մատնանշելով ամենակարևորը՝ որբանո՞վ են նրանք համապատասխանում ցարական կառավարության քաղաքական գծին: Թվարկված հոգևորականների գոնե երկուսի քննութագրումով կարելի է բացահայտել

¹ Ո.Ա.Ք.Ա, Հայեական գործեր Փ., 1882–83 թթ., գ. 101, 124, 135, 154:

² Նոյն տեղում, գ. 124, էջ 82–90:

գարական աստիճանավորների վերքերմունքը: Կարողիկոսական առաջին թեկնածուն Սկրտիչ Խրիմյանն էր, որի մասին Դեննետը մտորում էր. «Այդ անձնավորությունն աշքի է թնկում բարոյական բարձր հատկանիշներով, օժտված է խոսքի հիասքանչ ձիբրով, բայց, լինելով բանաստեղծ, նա հետությամբ ենթարկվում է պրետական հրապուրանքներին: Առօրյա կյանքում եայիսկոպոս Խրիմյանը, ինչպես և նման խառնվածքի անձնավորությունները, խիստ համեստ գործիչներ են: ...Մեզ համար Խրիմյանի ընտրությունը ծեռնտու չէ այն պատճառով, որ նման մտքի և խառնվածքի պատճառով, իր կարծիքով արդար գործի համար նա պատրաստ է նույնիսկ մարտիրոսանալ»¹: Համեմատենք այս բնութագրումը Հարություն Վեհապետյանի մասին տրված բնութագրման հետ. «Երգորումի նախկին արքայիսկոպոս Հարությունն աշքի է թնկում առողջ դատողորությամբ: Նուան խորք են հայկական անկախության վերակնօնման երազային ցնորքները: Չունենալով լայն մտահորիզոն, Հարությունը պրակտիկ կյանքի հմուտ գործիչ է, հենվում է ունալ հնարավորությունների վրա և առաջնորդվում ոչ թե վերացական տեսություններով, այլ առողջ մտածողորոշյամբ: Կարողիկոս ընտրվելու դեպքում բոլոր թեկնածուններից մեզ համար առավել բարձր երաշխիքներ ունեցող անձնավորությունն է նա»²:

Ինչու Խրիմյանը ոչ նպատակահարմար էր, իսկ Վեհապետյանը՝ հարմար կարողիկոսական թեկնածու. աշքի է զարնում ամենակարևոր հանգամանքը. «Հարությունին խորք են հայկական անկախության վերականգնման երազային ցնորքները»: Նոյն հատկության համար նա զնահատվում էր նաև բուրքական կառավարության կողմից, և պատահական չէ, որ Ներսես Վարժապետյանից հետո պատրիարքական Արքուն անցավ թ. Դուան համակրանքը վայելող Վեհապետյանին: Նորից դառնանք ցարական Պետական խորհրդին: Խորհրդակցության համարյա բոլոր մասնակիցները համամտուին էին, որ կարողիկոսական թեկնածուն լինի ուսահապատակ, որովհետև նա ստիպված կընդունի արքունիքի բոլոր հրամանները: Նրանք գտնում էին, որ ուսահապատակը բուրքահայտակից ավելի կծոցի ազգային ինքնավարության անիրակա-

նանակի գաղափարին»³: Այդ բոլորի հետ միասին ընդգծվում էր, որ կարենոր ոչ թե կարողիկոսի տարածքային պատկանելիության խնդիրն է (արևմտահայ թե արևելահայ), այլ կարողիկոսի անձնական հատկանիշները²: Առավել ուշագրավը Դեննետը առաջարկությունն էր՝ մշակել կարողիկոսի ընտրության կոու համակարգ (սիստեմ), որի դեպքում «եթե նոյնիսկ ընտրված կարողիկոսի անձնական հատկանիշները լիովին չհամընկնեն մեր ցանկություններին, այնուամենայնիվ նա չկարողանա հրաժարվել այն ուղուց, որ գծել է ցարական կառավարությունն իր շահերին համապատասխան»³:

Խորհրդակցության թնարկնան երկրորդ հարցը վերաբերում էր արևմտահայության՝ կարողիկոսական ընտրություններին մասնակցելու եղանակին և պատգամավորների թվին: Հաշվի շատներով այն հանգամանքը, որ Արևմտյան Հայաստանի տարածքն անհամեմատ մեծ է Արևելյան Հայաստանից, և թնականարար արևմտահայ թեմերը թվով ավելի շատ են Ռուսական տիրապետության տակ գտնվող վեց թեմերից, խորհրդակցությունը որոշում է սահմանափակել արևմտահայ պատգամավորների թիվը: Թուրքիայի ուսական դեսպանը իրահանգ է ստանում իր հյուպատոսների և գործականների միջոցով հավաստի տեղեկություններ հավաքել արևմտահայ թեմերի քանակի մասին, բացառել առանձին վանքերի և պատկուապոս վանահայրերին պատգամավոր ընտրելու հնարավորությունը: Այդ փաստարդի կարևորությունն ընդգծում է այն փաստը, որ նրա բովանդակությանը ծանրություն է և իր համաձայնությունն է հայտնում ինքնակալ կայսրը՝ Ալեքսանդր 3-րդը: Եվ այսպես, 1884-ին կայացան կարողիկոսական ընտրությունները: Հակառակ ցարական աստիճանավորների ջանքերին, ձայների մեծամասնությամբ կարողիկոս ընտրվեց Ներսես Վարժապետյանը, որը հրաժարվեց կարողիկոս ընտրվելու և շուտով կնքեց իր մահկանացուն: Նորից սկսվեց կարողիկոսական ընտրությունների թու ու բուրքը: Կարողիկոսական թեկնածու առաջարկվեցին դարձյալ Խրիմյանը, Սևլիլսելիկ Մուրասյանը և Մակար Մամիկոնյանը: Համազգային ժողովն ընտրեց վերջին երկուսին: Ել-

¹ Նոյն տեղում, Արմանեա ծելա Փ., լ. 154, լ. 3-10 ընդհատումներով:

² Նոյն տեղում, գ. 124, էջ 82:

³ Նոյն տեղում:

ներկ Ռուսաստանի քաղաքական ուղեծրից, ցարը վավերացրեց ռուսական քենածովին՝ Շեսարաբխայի թեմի առաջնորդ Մալկար արքեպիսկոպոսին, որը կարողիկոս օծվեց իրեն Մալկար Թեղուտեցի (1885 թ.): Երկար կտևեն այն իրադարձությունների նկարագրությունները, որոնք տեղի ունեցան Արևմտյան Հայաստանում և ւ. Պոլսի Ազգային ժողովում, եթե արևմտահայությունը, զայրացած ցարի վավերացումից, հրաժարվեց «ցարընտիր» Մալկարին ճանաչել իրեն Ամենայն Հայոց: Ի վերջո, հաղթեց ողջամտությունը: Արևմտահայությունը չէր կարող իր կապերը խզել արևելահայերից: Ժվում էր, հաղթել էր ցարական կառավարության կարողիկոսական ընտրության «կուռ համակարգը»: «Յարընտիր» կարողիկոսն իր գործունեության առաջին խոկ քայլերից շարդարացրեց ցարական արքունիքի հույսները: Դեռ իր կարողիկոսանալուց մեկ տարի առաջ ցարական կառավարությունը մշակել և հաստատել էր «Կովկասի հայ լուսավորչական Եկեղեցական ուսումնարանների մասին» որոշումը, ըստ որի նոյնիսկ հոգևոր դպրոցները պետք է ենթարկվեին լուսավորության նախարարության իրավասությանը: Նորընտիր կարողիկոսը դեմ է արտահայտվում այդ որոշմանը և մեծ ջանքեր գործադրում ցարական կառավարության կողմից փակված հայկական դպրոցները վերաբացելու և հայ կարողիկոսների իրավունքների վերականգնման համար: Ստացվում էր, որ հաղթեց ոչ թե ցարական աստիճանավորների ստեղծած կուռ համակարգը, այլ հայ կարողիկոսների՝ ազգին և ժողովրդին ծառայելու հայրենասիրական, ավանդական համակարգը: Եթե «ցարընտիրն» էր դեմ դուրս գալիս կառավարության վարած քաղաքականությանը, ապա ինչ դիրք կգրավեր ժողովրդական թեկնածուն՝ Մկրտիչ Խրիմյանը: Սակայն մինչ նրա ընտրություններին անդադանար փոխադրվենք օսմանյան կայսրության տիրապետության տակ գտնվող Արևմտյան Հայաստան:

1461 թ. սուլթանի հատուկ հրովարտակով օսմանյան մայրաքաղաքում ստեղծվեց հայոց պատրիարքությունը, որը միջնորդ օղակ էր կառավարության և ողջ արևմտահայության միջև: Մինչև 19-րդ դարի երկրորդ կեսը պատրիարքության իրավունքներն օրենքի ուժ ստացած ավանդություններն էին: 19-րդ դարի 50-ական թվականներից մայրաքաղաքի հայ գաղթօջախի կյանքում սկսվեցին խլոտումներ: Եվրոպայում

կրրույցուն ստացած մի խումբ երիտասարդներ, ղեկավարելով մայրաքաղաքի արիենստավորների լայն ժողովրդական շարժումը, ձեռնարկեցին արևմտահայ հասարակական կյանքը վարելու համար ստեղծել մի կանոնադրություն, որն ստացավ մեծադրորդ՝ «Ազգային Սահմանադրություն» անվանումը: Շարժումը հաղթությամբ պասկեց 60-ականներին: Սահմանադրական պայքարին իրենց մասնակցությունը բերեց նաև հոգևորականությունը՝ քածանված երկու խմբի՝ կողմնակիցների և հակառակողների: Ժամանակակից հոգևորականներից մեկն այդ մասին գրել է. «Ունծանանություն իին Եկեղեցականաց, ազնվականաց, հարստաց ընդդեմ լինելով զՍահմանադրության, կոչեցան խավարյար, իսկ նոր Եկեղեցականը, նոր ազնվականը, գիտնականը և վարժապետը, ազատ սկզբան և Սահմանադրության հարյալը, կոչեցան լուսավորյալը»¹: Շարժման ոգին էին Գ.ր. Օսյանը, Նիկողայոս Պայյանը, Նահապետ Ո-սիմինյանը՝ ազատամիտ երիտասարդներ, որոնք ամիրայության և կղերականության դեմ մղած իրենց պայքարում բնավ չժխտեցին Եկեղեցու գաղափարը, ջանացին արժանիքներ գտնել և ստեղծել առաջադեմ հոգևորականների կերպարներ: 1854 թ. վարդապետ ձեռնադրված Խրիմյանն այդ ժամանակ գտնվում էր ւ. Պոլսում: Առաջին խոկ օրից նա համակրեց շարժմանը, մասնակցեց նրա ղեկավարների գաղափարական հալարքներին: Հակառակորդները սահմանադրությունը ներկայացրին Բ. Դուանը՝ իրեն պետություն պետության մեջ: Այդ պատճառով էլ 1860-ին Ազգային ժողովի կողմից ընդունված Սահմանադրությունը երբ հանձնվեց սուլթանի հաստատմանը, ամբողջ երեք տարի առաջ արքունիքում և, Նալբանդյանի դիպուկ արտահայտությամբ, «թլփատված» Սահմանադրությունը դրվեց գործողության մեջ: 1863-ին հաստատված Սահմանադրությունը նախատեսում էր սահման դնել սուլթանի հաճուրյամբ «ընտրված», ավելի ճիշտ՝ նշանակված պատրիարքի և ազգի ղեկը վարող հայ պետական պաշտոնյաների չարաշահումներին: Սահմանադրությունը ենթարկում էր Եկեղեցու պետերի՝ կենտրոնում՝ պատրիարքի և գալանտերում՝ հոգևոր առաջնորդների ընտրություն՝ ժողովրդի լայն մասնակցությամբ: Սահմանադրությամբ ընտրված Ազգային Ընդ-

¹ Սատենադրաբան, ձեռագիր հ. 4177, թէրը 40:

հանուր ժողովն օրենսդիր մարմին էր, իսկ Քաղաքական և Կրոնական ժողովները՝ պատրիարքի դեկավարությամբ՝ Գործադիր: Պատրիարքն ընտրվում էր Ընդհանուր ժողովի կողմից: Սահմանադրությունը հավակնում էր ներկայացնել ողջ արևմտահայության շահերը, սակայն երեսփոխաների ծանրակշիռ մասը գաղրօջախի ներկայացուցիչներն էին: Փաստորեն, 200.000 հայություն ունեցող գաղրօջախը վեր էր դասպում երկու և կես միլիոն արևմտահայությունից:

Ժամանակակիցներից մեկի դիպուկ արտահայտությամբ այդ անվարձ ու անբոշակ երեսփոխաները հավաքվում էին շարարական մեկ անգամ, մի քանի ժամով՝ տնօրինելու ողջ արևմտահայության հոգեոր և հասարակական գործերը: Նրանք ի վիճակի չին լուծելու նույնիսկ 200.000 հայ բնակչություն ունեցող այդ գաղրօջախի խնդիրները, որ մնաց՝ ողջ արևմտահայության:

Մինչև 1869 թ. Կ. Պոլսի պատրիարք էին ընտրվում օսմանյան մայրաքաղաքի և ծովամերձ գաղրօջախների համեմատարար ասլահով կյանքով ապրող ներկայացուցիչները: Անտեղյակ և անհաղորդ արևմտահայության տառապանքներին՝ նրանք կիսատ-պրատ հոգում էին գաղրօջախի խնդիրները: 1869 թ. սեպտեմբերին Կ. Պոլսի պատրիարքական զահին բարձրացավ պատմական Հայաստանի Վասպորական նահանգի կենտրոն Վանի բնակիչ Վարագա Արծիվը, Տարոնի արծվիկների հայրը, տարոնցիների կողմից «Հայրիկ» պատվանունին արժանացած Ալքուիչ Խրիմյանը: «Հայաստանի ցավոց պատկեր» Պատրիարքը գործունեության առաջին բայերից ջանքեր ներլից Սահմանադրության մեջ ուժահարված գավառահայության շահերի պաշտպանության համար: Նա բարձրացրեց Սահմանադրության վերաբենության հարցը, առաջարկեց գավառահայության համար հասուն մարմին ստեղծել, Ազգային ժողովի անդամներ ընտրել բուն Արևմտյան Հայաստանի ներկայացուցիչներին: Եվ քանի որ Արևմտյան Հայաստանն անհամենատ մեծ էր, քան Կ. Պոլսի գաղրօջախը, որեմն Ազգային ժողովում պետք է գերակշռեին նրանց կողմից ընտրված երեսփոխաները, որոնց վրա հենվելով նորընտիր պատրիարքը մեծամասնություն կկազմեր և Սահմանադրության մեջ կընդունվեին գավառահայության՝ այսինքն բուն Արևմտյան Հայաստանի շահերն արտահայտող հոդ-

վածներ: Ազգային ժողովում բուն դրած էֆենդիները, սակայն, նոյնիսկ չհամաձայնեցին, որ Ազգային ժողովի 140 երեսփոխաներից գոնես կեսն ընտրվեն Արևմտյան Հայաստանի ներկայացուցիչները: Պատրիարքի ձեռնարկումները պաշտպանեցին արևմտահայ դեմոկրատական մանուկի օրգանները՝ Հակոբ Պարոնյանի դեկավարությամբ: Վերջինիս լրագիրը մի քանի անգամ փակվեց օսմանյան գրաբնության կողմից պատրիարքին պաշտպանելու համար: Տարիներ անց ընդիմադիրներից մեկը խոստովանեց, թե Պատրիարք Խրիմյանին զահընկեց անելու համար դրամական ինչ միջոցներ է ծախսել Կ. Պոլսի էֆենդիական-ամիրայական դասը¹: Սիայն «Խրիմյանի անհողորդդ կամքի և անհիմատ ստիպումների շնորհիվ նոյն տարվա (1872) սեպտեմբերին կազմվեց գավառների համար հասուն Սահմանադրական իրահանգ», որտեղ մանրամասն նշվում էր, թե Սահմանադրությունն ինչպես պետք է հարմարեցվի գավառի (այսինքն՝ Արևմտյան Հայաստանի) սրբազնություններին²: Հակաժողովրդական տարրերի ճնշումների տակ Ալքուիչ Խրիմյանը իրաժարական տվեց:

Թուուցիկ նշենք, որ արևմտահայ հոգեորականության ընտրանին 70-ականների վերջին և 80-ականներին ծավալած ազգանվեր գործունեությամբ արծարծեցին հայկական հարցը Սան-Ստեֆանոյում, եվրոպական պետությունների բարձրագույն ասոյաններում և Բնույթինի վեհաժողովում՝ ներկայացնելով հայության իդեալը, շահերը, ակնկալիքները, այսինքն իրականացնելով աշխարհիկ իրավասություններ: Չնայած հետո պատմաբաններից ունաճ ծաղրանքով, բայց և ցավով նրանց առաքելությունն անվանեցին կերպական դիվանագիտություն, որովհետև դա էր իրականությունը: Տարիներ հետո, 1917-ին, Զերազը, պաշտպանելով հայ պատվիրակությանն ու նրա դեկավարին, գրում էր, որ Խրիմյանի չափ ոչ ոք չգիտեր Արևմտյան Հայաստանը և նրա կարիքները: Անձ պետությունների դիվանագիտությունից դասեր քաղած Խրիմյանը 1879-ի կեսերից մինչև 1884-ի կեսերը գործունեություն ծավալեց իրեւ Վասպորականի հոգեար առաջնորդ: Այդտեղ էլ նա հանդես էր գալիս ողջ նահանգի հայության անունից և դիմումներ հղում Ալեքսանդր 2-րդին և

¹ Ծերենց, Կարողիկասություն և Խրիմյան, Թիֆլիս, 1884, էջ 22:

² Թ. Ե. Գ., Խրիմյան Հայրիկ, Փարիզ, 1925, էջ 51:

Յ-րիմ՝ խնդրելով իրենց ձեռքը վերցնել 61-րդ հոդվածի բարենորոգումների գործը¹:

80-ականների կեսերից բուրքական կառավարության աշրում բաղադրականապես անբարեհույս Խրիմյանը Բ. Դուսի կողնից կանչվեց Կ. Պոլիս՝ մշտական հսկողության տակ պահելու նպատակով: Դա փաստացի աքսոր էր: Այստեղ, դարձյալ Ազգային ժողովում Խրիմյանը սատար կանգնեց ժողովրդավարական ուժերին, ընտրվեց Ազգային ժողովի երեսփոխան, կրօնական ժողովի առենապետ, Եկեղեցական համագումար ժողովի նախագահ: Նոյնիսկ այսօրվա չափանիշներով առաջնորդվելու դեպքում, զարմանում ենք ժողովրդանվեր գործիչների այդ փաղանցի ծավալած գործունեության վրա, եթե համիլյան բռնապետության օրերին, Գում-Գավուի խաղաղ ցույցը զնդակոծվելուց հետո, Եկեղեցական համագումար-ժողովը Խրիմյանի դեկապարությամբ արտակարգ համարձակ տեղեկագիր է ներկայացնում Ազգային ժողովի ընճարկմանը՝ Բ. Դուսի հանձնելու համար: Իննը բարձրաստիճան հոգևորականներից իինքը իրաժամկեցին ստորագրել այն՝ փախենալով սուլթանի զայրույթից: Տեղեկագիրն ստորագրեցին համագումար-ժողովի նախագահ Խրիմյանը, Գարեգին Սրբանաւոյանը, Գրիգորի Ալեաքճյանը և Մատրես Իգմիրյանը: Այդ փաստարդությունը համագումար-ժողովը պահանջում էր օսմանյան արրունիքից՝ շմիջամտել Հայ Եկեղեցու ներքին գործերին, գրաքննության շնթարկել հոգևոր գրականությունը, չահմանափակել Ազգային ժողովի ու պատրիարքի՝ սահմանադրությամբ ընդունված արտոնությունները, չիալածել զավառական հոգևոր առաջնորդներին, չկտրել իրենց թեմերից²: Տեղեկագիրը ներկայացվեց սուլթանի անձնական բարտուղար Սուրեյա փաշային: Այդ հանգներության համար չորս նպակառություններն իւ պատժվեցին. Խրիմյանը երկրորդ անգամ աքսորվեց, այս անգամ՝ Երուսաղեմ... Աքսորական Խրիմյանը Մակար Թեղուցու մահից հետո երկրորդ անգամ առաջադրվեց կարողիկոսական ընտրելի և 1892 թ. մայիսի 5-ին դարձավ համագօգային ընտրյալ: Երկրորդ թեկնածուն Մատրես Իգմիրյանն էր: Յարը փավե-

¹ АВПР, ф. Посольство в Константинополе, д. 1568, л. 10-11, ф. Армянские дела, оп. 461, д. 119, л. 47.

² Անձնագրությունը Ազգ. ժողովո, 1890-94 թթ., էջ 64-74:

բացրեց Խրիմյանի թեկնածությունը: Երկարատև բանակցություններ սկսվեցին ուստական և բուրքական համապատասխան գերատեսչությունների միջև Խրիմյանին աքսորից ազատելու, բուրքական ժողովությունից հանելու համար: Ուստաստանի արտարին բաղադրականության արխիվից հայտնաբերել ենք այդ բանակցությունների վերաբերյալ բազմաթիվ փաստարդերի¹: Դասից մեջ սուլթանը համոզում էր ցարին՝ թեկնածու կարողիկոսական ընտրությունները և նոր ընտրություն սկսել, որովհետև և՛ փավերացված, և՛ երկրորդ թեկնածուն անբարեհույս անձնավորություններ են: Յարը հավաստիացրեց սուլթանին, որ Էջմիածնում ցարական աստիճանավորների խիստ հսկողության ներքո Խրիմյանը չի համարձակվել խառնվել արևմտահայության ներքին գործերին, իսկ նրան շվավերացնելը առիր կոտա մեծ հոգումների հայության երկու հատվածներում²: Ընտրությունից միայն 17 ամս հետո Խրիմյանն օծվեց կարողիկուս: Նրա կարողիկոսական շրջանը եղավ հայ ժողովրդի հերոսական և ուրեմնագական շրջաններից մեկը: Հայոց Հայրապետը գործի դրեց իր ողջ ուժերը՝ «Պոլոշենիք»-ի ընձեռած հնարավորություններով պաշտպանելու նոյնիսկ արևմտահայությանը: 1895-96 թթ. կոտորածներից հետո սուլթանն արգելեց արևմտահայերի Սահմանադրության կիրառությունը: Դադարեցին Ազգային ժողովի նիստերը: Այդ բոլորը սուլթանի կողմից մեկնարանվում էր իրեն Սահմանադրությունը վերաբերելու և տարրեր հողվածներ փոփոխելու ջանքերով: Իրականում նա խոչընդոտում էր հայության երկու հատվածների հարաբերություններին: Նա իրամայել էր փոփոխության ներարկել Սահմանադրության 60 և 61-րդ հողվածները, ըստ որոնց Ամենայն Հայոց Կարողիկոսի ընտրությանը պետք է մասնակցեն ամեն թեմից երկու պատգամավոր՝ մեկ աշխարհական և մեկ հոգևորական: Սուլթանը պահանջում էր, որ թեմերի փոփոխեն կարողիկոսի ընտրությանը մասնակցի Ազգային ժողովի ընդամենը երկու ներկայացուցիչ, որոնք փաստուեն կիմնեին նրա առաջարկած անձնավորությունները³: Բ. Դուսի նպատակն էր դիմակայել ուստական ազդեցության ուժեղացմանը: Այդ հանգամանքն օգտագործելով, Վեհա-

¹ АВПР, ф. Армянские дела, д. 119, л. 5, 14.

² Նոյն տեղում, թ. 14:

³ ՀՀԿՊԸ, թ. 56, գ. 14, գ. 52, թ. 5, 8-9:

փառը բանակցություններ է վարում ոուսական Արտաքին գործոց նախարարության հետ, որպեսզի խոշնորութեն բուրքական ձգտումներին:

Վեհափառն ավելի հաճարձակ գործողությունների դիմեց Հայոց Եկեղեցու իրավունքները պաշտպանելու ուղղությամբ՝ այս անգամ ցարական կառավարության ուժնձգություններից պաշտպանելու նպատակով, 1903 թ. հունիսի 12-ի օրենքի դեմ, որով նախատեսվում էր հարքունիս գրավել Հայ Եկեղեցու շարժական և անշարժ գույքը: Հենվելով ցարկանի կողմից հաստատված «Պոլոյշենի»-ի վրա, Խրիմյանն ապացուցում էր, որ ցարական կառավարությունը ուժնահարել է իր պետության սրբազն իրավունքը՝ մասնավոր սեփականության անձեռնխելիությունը, խախտել Հայոց Հայրապետի բոլոր իրավունքներն ու արտոնությունները: Կարողիկոսի բազմաթիվ դիմումներն ու բողոքները մնացին անհետևանք՝ «Զայն բարրառ հանապատի»¹: Իր բիկունիքին ունենալով ազգային կուսակցությունների աջակցությունը՝ Վեհափառ Հայրապետը դիմեց անօրինակ խիզախ մի քայլի. նա իրաման արձակեց Ռուսաստանի տարածքում գտնվող բոլոր թեմական առաջնորդներին՝ չենթարկվել արքայական իրամանին, ցարական աստիճանավորներին չբույրատրել ցուցակագրել հայ Եկեղեցու ունեցվածքը: Սկզբեց համաժողովրդական մի հումկու շարժում, որին մասնակցեցին արևելահայության անխորդ բոլոր հասարակաշերտերը, նաև ողջ աշխարհի հայությունը: Արևելահայ ազատազրական շարժումների հետքրքիր էջերն են կազմում համաժողովրդական պայքարի այն արտահայտությունները, որոնց գիտափորողը եղավ ալեներ կարողիկոսը՝ պաշտպանելով իր ժողովրդի իրավունքները, Հայ Եկեղեցու անկախությունն ու ինքնուրույնություննը: Երկու տարի տևած այդ պայքարը պատկեց հաղորդյամբ: «Ամենաողորմած ցարը» 1905 թ. օգոստոսի 1-ին իրաման արձակեց՝ չեղյալ հայտարարել հունիսերերյան օրենքը, վերաբացվեցին հայկական դպրոցները, Հայոց Եկեղեցին համեմատական ազատություն ստացավ հոգեոր և մշակության բնագավառում:

20-րդ դարի հայ կարողիկոսները որդեգրում են հայրենասիրական գործունեության նույն ուղեծիրը, արդեն այլ պայմաններում: Փաստուն

հայկական նվիրապետությունները պաշտպանում էին հայության իրավունքներն ու շահերը Հայոց Եկեղեցու պաշտպանության միջոցով: Այսինքն Եկեղեցին ու ժողովրդը միասնական ամրողություն են: Պատմությունը մեզ համար ներկայի դասն է և հիմքը. Եթե Հայոց Եկեղեցին ու հայ կարողիկոսները նման գործունեություն են ծավալել օտար պետությունների լծի տակ, այսօր Եկեղեցու և նրա Հայրապետի առաջ կանգնած են խնդիրներ, որոնք պետք է լուծվեն հայրենի պետության քաղաքական այրերի հետ:

Էջմիածին, 2000, № 8, էջ 48-59:

ՄԱՐԳՈ ՀԱՍՏԱՐՁՈՒՄԻ ՄԽԻԹԱՐՅԱՆ

2001 թ. հուլիսի 27-ին, կյանքի 81-րդ տարում, մեզնից հեռացավ անվանի բանասեր-պատմաբան, հայ պարքերական մամուխ անխոնց հետազոտող, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, բանասիրական գիտությունների բնկնածու Մարգո Համբարձումի Սխիքարյանը:

Տավոշի շրջանի Ներքին Կարմիրադրյուր գյուղում 1920 թ. ծնված աղջնակը նախնական կրթությունը ստացել է Ղազախի ոչ լրիվ միջնակարգ դպրոցում, ապա ուսանել Թքիլիսի ինդուստրիալ տեխնիկումի շինարարական ֆակուլտետում: Սակայն անսահման սերը հայրենի գրականության նկատմամբ նրան տարել է Բաքվի պետական մանկավարժական ինստիտուտի հայոց լեզվի և գրականության ֆակուլտետ: Այն գերազանցության դիպլոմով ավարտելուց հետո, Մ. Սխիքարյանը երեք տարի աշխատել է Ղազախի միջնակարգ դպրոցում իրու հայոց լեզվի և գրականության ուսուցչությունից: Չնայած փայլուն մանկավարժ էր, բայց գիտությամբ գրադիվելու անհազությ գգտումը նրան մղել է շարունակելու ուսումնառությունը Երևանում, որտեղ 1944 թ. նա ընդունվել է Պետական համալսարանի ասպիրանտուրա՝ հայ նոր գրականություն մասնագիտությամբ:

¹ ՀՀԿՊԱ, ֆ. 57, գ. 299, թ. 8, ֆ. 56, գ. 14, գ. 73, թ. 3-34:

1949–1957 թթ. նա մնեց պատասխանատվորյամբ վարել է համալսարանի ասպիրանտուրայի քաժնի վարիչի պաշտոնը:

1954 թ. Ա. Մխիթարյանը պաշտպանեց թեկնածուական ատենախոսությունն «Հյուսիսափայլ» ամսագիրը թեմայով, իսկ 1958 թ. այն լույս ընծայեց առանձին գրքով, որն արժանացավ գիտական հասարակայնության քահանաւականին:

Թեկնածուական ատենախոսությունն ու հրապարակված առաջին մենագրությունը վերջնականացես նախանշեցին Մխիթարյան գիտնականի հետազոտական կյանքի ուղին: Նա հետազոտողի իր կյանքն ամբողջությամբ նվիրաբերեց հայ պարբերական մամուլի պատմության ուսումնասիրությանը: Ուստի, պատահական չէր, որ երբ 1960 թ. ԳԱԱ Գ-րականության ինստիտուտում ստեղծվեց Հայ պարբերական մամուլի պատմության բաժինը, Ա. Մխիթարյանը դարձավ նրա հիմնադիր անդամներից (1965 թ. քաժնը փոխադրվեց ԳԱԱ Պատմության ինստիտուտ):

Լայն էր և ընդգրկուն Ա. Մխիթարյանի հետաքրքրությունների շրջանակը: Նրան զրադեցել են հայ պարբերական մամուլի թե՛ առավել ուշագրավ, թե՛ արտաքուստ անհանու թվացող օրգանները: Հայ առաջին պարբերականը և նրա աշխատակիցները, շնորհիվ Ա. Մխիթարյանի գրքի, իրենց արժանի գնահատականն են ստանում, երբ 1970 թ. Փարիզում իրականացվում է «Ազդարար»-ի երկիրատոր ֆարսիմիլյային վերատպությունը՝ նրա ծավալուն և արժեքավոր առաջարանով:

Արևելահայ հասարակական մտքի 1860-ականների գագար «Հյուսիսափայլին» նվիրված ուսումնասիրությունից հետո, 1976 թ. լոյս տեսավ Ա. Մխիթարյանի արտակարգ ուշագրավ «XIX դարի երկրորդ կեսի արևելահայ պարբերական մամուլի պատմությունից» («Փորձ», «Արձագանք») խորագիրը կրող մենագրությունը, որտեղ մամուլի խնդրու առարկա օրգանների պատմությունը քննված է ժամանակի հասարակական-քաղաքական կյանքի ու մտքի ընդարձակ հետնախորքի վրա: Առավել նշանակալից էր, որ դրանում իր արժանի գնահատականն էր ստանում ազգային-պահպանողական հոսանքի հայրենանվեր գործիչների մի պատկառելի աստղաբույլ: Ոչ միայն շարքային ընթերցողը, այլ մասնագետները հայտնաբերեցին արտակարգ հետաքրքիր փաստեր՝

սուլթանական թորքիայի հայակալած և ցարիզմի ուսականացման քաղաքականության դեմ պայքարող հոսանքի մասին, որն իր դրոշն ու հավատու հաճախական էր դարձրել ազգային միասնության գաղափարը: Աշխատության քննարկումը և հրատարակությունն առաջ թերեցին տեսակետների սուր բախում: Ժամանակի գաղափարավախության «պաշտպանները» քննադատեցին ազգային-պահպանողական հոսանքին հեղինակի կողմից տրված հավասարակշռված գնահատականը: Ա. Մխիթարյանը, հենքելով Արշ. Սելիբրյանի և Աշ. Հովհաննիսյանի ելակետային դրույթների վրա, խիզախորն պաշտպանեց իր հայացքները և, մեր կարծիքով, հաղթեց:

Տարիների ընթացքում ընդլայնվեց գիտնականի հետաքրքրությունների ոլորտը. արևելահայ առաջին պարբերականից մինչև «Հյուսիսափայլ» ընկած՝ հայ պարբերական մամուլի դժվարին և փշոտ ուղին արժանվույն լուսաբանվեց Ա. Մխիթարյանի նոր՝ 1994 թ. լոյս տեսած «Արևելահայ մամուլի սկզբանավորումը և լուսավորական շարժումը XIX դարի առաջին կեսին» մենագրության մեջ: Այս աշխատությունը նախայուսիսափայլյան շրջանի հայ հասարակական կյանքի, լուսավորական շարժման առաջին և երկրորդ սերունդների, նրանց թերած նոր և արժեքավոր ներդրությունների, հայտնի և անհայտ գործիչների մի շքեղ պատկերասրահ հրամցրեց ընթերցողին՝ հարստացնելով նրա գիտելիքները բազմարիվ անհայտ փաստերով, պատմական դեմքերով և իրադարձություններով: Ներփայան դպրոցի և Լազարյան ճեմարանի առաջադեմ ուսուցիչների ու աշակերտների, Արովյանի, Ալամդարյանի, Գարբիկել Պատկանյանի և Ներսես Աշտարակեցու, ապա նախահյուսափայլյան շրջանում՝ Ստեփանոս Նազարյանի և Միքայել Նալբանդյանի հարաբերությունների պարզաբանումը կատարվել է գիտական մեծ վարպետությամբ, և, որ կարևոր է, հեղինակը ոչ միայն մերժել է մինչ այդ ընդունված դրական կամ բացասական պիտուակները, այլև բարեկայի և անկողմնակալ վերլուծության շնորհիվ տվել է հիմնավորված և հավասարակշռված գնահատականներ: Գիտական բարձր մակարդակի արտահայտություն են Ա. Մխիթարյանի ծանրակշիռ ծանոթագրությունները, մի բան, որը հատկանշական է նրա բոլոր աշխատություններին: Դրանք գիտական բարեխպատճենած և բարոյական բարձր չ-

փանիշների ապացույցներ են: Այդտեղ հեղինակն ուղղումներ է մտցնում տարիներ առաջ նույնիսկ իր կողմից հրատարակված փաստերում: Մ. Սլսիքարյանի բոլոր աշխատություններին, մանավանդ վերջին երկու մենագրություններին, հատկանշական է հանրագիտարանային բնույթը: Չկա մի հիմնախնդիր, հասարակական երեսույթ և ժողովրդի համար փոքրիշատե ազգանպաստ գործ կատարած որեւէ գործիչ կամ կարևոր իրադարձություն, հասարակական կյանքի որևէ ալեքախում, որը վրիպած լինի հեղինակի տեսադաշտից, կամ ըստ արժանվույն մեկնաբանված շինի նրա կողմից:

Խիստ արժեքավոր են Միքայել Նալբանդյանի երկերի ակադեմիական հրատարակության 2-րդ և 3-րդ հատորների «միքարյանական»՝ գիտական այնպիսի նորույթներ պարունակող ծավալուն ծանոթագրությունները, որոնք կարող են իրենց հենք ծառայել նույնիսկ երկու դրկտորական ատենախոսության համար:

Նալբանդյանի գնահատության ապացույցը՝ Մ. Սլսիքարյանի կողմից նրա «Հրապանակախոսական երկերի» (Ե., 1979) հրատարակության իրականացումն էր:

Ինչպես տեսնում ենք, չնայած ժամանակագրական առումով հերթականության խախտմանը, Մ. Սլսիքարյանն իրականացրել է արեելահայ պարբերական մամուլի պատմության ծանրակշիռ հատվածներից մեկի հետազոտությունը և պատահական չէ, որ հրատարակության գործընթացում գտնվող «Հայ պարբերական մամուլի պատմության» Ի հատորի՝ արեելահայ մամուլին վերաբերող հոդվածների մեծ մասի հեղինակն է:

Մենագրություններից զատ, Մ. Սլսիքարյանի գրչին են պատկանում շուրջ 100 գիտական և բանավիճային հոդվածներ, որոնց մի մասը նվիրված է պատմական գործիշների ծածկանունների վերծանմանն ու տարրեր առեղծվածների բացահայտմանը: Գիտական աշխատանքին նաև նվիրվում էր անմնացորդ և ինքնամոռաց, ստեղծագործական նախանձելի ավյունով ու կրոպ. այդպիսիք էին նրա էուրյունը և ապրելակերպը:

Գիտահետազոտական աշխատանքներից բացի, Մ. Սլսիքարյանը, սկսած 1949 թ., դասախոսական աշխատանք է կատարել համալսարա-

նի բանասիրական ֆակուլտետի ժուռնալիստիկայի պատմության ամբիոնում, վարել հայ պարբերական մամուլի և ուսու ժուռնալիստիկայի պատմության դասընթացներ: Հարյուրավոր ուսանողներ հիացմունքով են հիշում և գնահատում նրա դասախոսությունները: Միաժամանակ, նա անփոխարինելի գիտական դեկանար էր: Բազմաթիվ սկսնակ գիտաշխատողներ իրենց առաջին քայլերը գիտության խրին քառուղիներում կատարել են նրա դեկանարությամբ:

Հնում գիտական ու դասախոսը նաև անաշառ և սկրոնքային քաղաքացի էր: Գիտական խորհրդի նիստերում, ինստիտուտի ժողովներում նրա ունեցած յուրաքանչյուր եղույթ աչքի էր ընկնում սկզբունքայնությամբ, քայլանդրությամբ և բարոյական աննահանջ շափանիշներով: Շնայած լոյս բնծայված աշխատությունների պատկառելի քանակին, Մ. Սլսիքարյանի գրչին պատկանող մի շարք աշխատություններ դեռևս մնացել են անտիպ և սպասում են արժանավոր մի հովանափոր՝ լոյս աշխարհի գալու համար: Ապրուներիս պարտք է խորհրդածել այդ ուղղությամբ և ամեն կերպ օժանդակել այդ հայրենանվեր առաքելությամբ:

Սարգո Միքարյանի անունը կարող էր գարդարել յուրաքանչյուր գիտական կոչման և աստիճանի, սակայն նա իր մահկանացուն կնքեց հայարտ՝ իր ունեցածով և անտարբեր՝ գիտական որևէ տիտղոսի նկատմամբ:

*Լրաբեր հասարակական գիտությունների,
2001, № 2, էջ 233–235*

ՄԽԹԱՐԵԱՆՆԵՐԸ ԵՎ ՍԿՐԻՖԴ ԽՐԻՍՏԵԱՆԸ

ԺԹ դարի երկրորդ կեսին հայ հասարակական-քաղաքական, հոգևոր-մշակութային կեանքում կային գործիշներ, դլմեր, անձնատրություններ, որոնք իրենցով խորհրդանշում էին մի ողջ ժամանակաշրջան: Այդ անձնատրությունների շարքում առանձնայատուկ տեղ ունի Սկրտիչ Խրիմեանը՝ վարժապետ, վարդապետ, Հայաստանի տարածքի առաջին

պարբերականի խմբագիր, վաճահայր, հոգեւոր առաջնորդ, եպիսկոպոս, Կ. Պոլսի հայոց Պատրիարք, Ըեռլինի վեաժողովի հայ պատուիրակութեան ղեկավար, Ազգային ժողովի երեսփոխան, Կրօնական ժողովի ատենապետ, քաղաքականապէս անքարեյոյս անձնաւորութիւն Բ. Դուան աշքում եւ այդ իսկ պատճառով Երուսաղէմի արտորեալ, ապս համազգային ընտրութեամբ՝ Կարողիկոս Ամենայն Հայոց: Դա համառու քուարկումն է այն ամենի, ինչ կատարել է կամ ինչպէս հանդէս է եկել Սկրտիչ Խրիմեանը, գործի քերմանք իսկ դառնալով հանուր հայութեան իդձերի արտայայտիչ: Այդ իսկ պատճառով Խրիմեանի ապրած ժամանակաշրջանում շկար որեւէ համազգային նշանակութիւն ունեցող ձեռնարկում կամ հաստատութիւն, որի հետ ինչ-որ շափով շաղընչուէր Խրիմեանի գործունեութիւնը: Իսկ Մխիթարեան միաբանութիւնն այն հաստատութիւնն է, որ դեռևս ԺԸ դարի սկզբից ծաւալեց իր գործունեութիւնը լուսաւորական, գիտա-հրատարակչական այնպիսի բնագաւառներում, որ ձեռք բերեց համազգային նշանակութիւն, ճանաչում եւ յարգանք: Մխիթարեան հսկայածաւալ գործունեութիւնը չէր կարող վրիպել հասարակական գործունեութեան ասպարեզում իր առաջին քայլերն անող Խրիմեանի տեսադաշտից: Դեռ պատանի, ուսման անյագ տենչը սրտում, հիասքանչութեած Լիմ եւ Կոտոց անապատների վանական դպրոցների կորքական մակարդակից, նա երազում էր ուսանել Երուպայում, Ս. Ղազար կղզու ուսումնական հաստատութիւնում: Միջոցների պակասը, սակայն, անկատար բողեց նրա իդձի իրականացումը: Յնտագայում, Կ. Պոլսում ինքնակրքութեամբ իր մտաւոր կարողութիւնների գարգացմանը ձեռնամուխ եղած Խրիմեանը վարժապետութիւն էր անում, ակնդէտ հետեւում գրական, գիտական նոր հրատարակութիւններին, ազահօրէն կլանում հայ պարբերականներում լոյս տեսած գրական-գեղարտեստական, պատմագիտական, առանձնապէս հայագիտական յօդուածները: 1843-ից Ս. Ղազարում հրատարակուող «Քազմավէյք»-ը Խրիմեանի ամենասիրած պարբերականներից էր, իսկ այն հրատարակող միաբանութիւնը վայելում էր վերջինիս յարգանքն ու ակնածանքը: Բայց Խրիմեանը դրանով չէր բաւարարում: Նա նամակագրական կապ է հաստատում «Քազմավէյք» խմբագրութեան հետ: 1849-ին վարժապետ Խրիմեանն ամսագրին ուղարկում է նամակ եւ բանա-

տեղծութիւն: Ամսագրի խմբագիրն այդ ժամանակ Ղետնի Ալիշանն էր. նա ամսագրի ընթերցողներին համառու տեղեկութիւն է տալիս Խրիմեանի անձի եւ նրա ուղարկած բանաստեղծութեան մասին, ապս հրապարակում այն: Բանաստեղծութիւնը նուիրուած էր Վիրզիլիոսի «Մշականք»-ի հայ բարգմանցին՝ հայր Արտէն Բազրատունուն, որը բարգմանութիւնը կատարել էր Վերականգնելով իին հայկական տաղաչափութիւնը, նաև այդ տաղաչափութեամբ գրել սեփական՝ «Հայկ դիցազն» պոեմը: Ալիշանը հրատարակում է իր իսկ խօսքերով այդ «ոտանաւոր գովեստը» եւ խոստանում հրատարակել Խրիմեանի միա քերպուածները, որոնք «կը յուսանք, թէ պատի ընեն իրեն եւ իր հանճարաշատ հայրենակցաց վանեցուց եւ յորդոր համազգի պատանեաց՝ հայրենական դպրութեան նախանձախնդիր ըլլալու»¹: Բանաստեղծութեան մէջ հեղինակը գովերգում է հայր Բազրատունուն իր բանաստեղծական եւ բարգմանշական սիրանքի համար, այն բանի համար, որ նա հայ ընթերցողին հաղորդակից է դարձել «Վիրզիլեան ճարտար քերպուածին» եւ յայտնում մի նուիրական ցանկութիւն՝ հեղինակն իր «քաղցրալոր քնարը»-ինչեցնի ոչ թէ օտար երկրում, այլ հայրենիքում՝ Արարատի ստորադիմ եւ հրաշածայն նուազով իր շուրջը հասարի «Թորգոնեան զմանկատիս բոլոր», շոյի նրանց լատութիւնը եւ միաժամանակ ինքը նոր ոյժ ու ոզի ստանայ հայրենի բնուրեան գեղեցկութեամբ: Խրիմեանը յորդորում է. «Հայր, առաւել արժան էր թե ոչ զօտարին բնար հարկանել, Այլ գրոյգ՝ որ վեհ ոգուվ քաջ ես ինչի հայրենույն, ... Եւ դու ի յԱրարատ առ դրախտին երանի թէ նատէիր նրագլիք գեղեցկութիւն»²:

Ինչպէս տեսնում ենք, դեռ իր գործունեութեան վաղ արշալոյսին Խրիմեանը՝ իր սկզբունքներին հաստատիմ, գտնում էր, որ հայութեան համար ամենասիրանկը հայրենի հողն է, հայրենի եզերը, իսկ ինքը, որ «զօղ ծըծեալ Հայաստանեայց՝ շոտ զզացի զոգի նախնեաց», եւ այդ պատճառով իր ականջին աւելի հաճելի էր Բազրատունու անզուգական քնարը: Այս նամակով եւ բանաստեղծութեամբ չսահմանափակուեց Խրիմեանի կապը ո՛չ Ս. Ղազարի միաբանութեան, եւ ո՛չ էլ Արտէն Բազրատունու հետ: Պոլսում Մխիթարեաններն ունիին գրատուն, որտեղ վա-

¹ «Քազմավէյք», 1849, № 20, հոկտ. 15, էջ 309:

² Նույն տեղում:

ճառում էին միարանորեան հեղինակների աշխատորինները: Խրիմեանն այդ գրատան ամենաեռանդուն յաճախորդն էր, զբերի եւ ամսագրերի գնորդը:

1850-ին Պոլսում լրյու տեսած Խրիմեանի «Հրատիրակ երկրին Արարատեան» պոեմը կրում էր դարձեալ Բագրատունու «Հայկ ոլոցազն» պոեմի ազդեցորինը, գրուած էր նոյն հին հայկական տաղաչափութեամբ, եւ նրա նման պոեմը գրելու շարժադիրը համարում էր «հայրենեաց սէրք»:

1854-ին Աղրամար կղզում Խրիմեանը ծեռնադրում է վարդապետ: Խորին յարգանք եւ ակնածանք տածելով Ս. Ղազարի Սլսիրարեան միարանորեան նկատմամբ՝ Խրիմեանը ցանկանում էր Աղրամարը դարձնել Հայաստանի Վենետիկ, վաճրում հիմնել տպարան ու վարժուան, բայց տեղի միարանորինը թշնամանքով դիմաւորեց նրան: Ակսուեցին հալածանքները, որի պատճառով Խրիմեանը հեռացաւ Պոլիս: Այնտեղ 1855-ին նա հրատարակեց «Արծովի Վասպորական» անսագիրը՝ նպատակ ունենալով այն փոխադրել Հայաստան: Այս անգամ Խրիմեանը գործեց աւելի հեռատես և շրջահայեաց: Տեղի նշանաւոր հայկական գերդաստանների օժանդակութեամբ, ժամանակի Յակորոս Պատրիարքի կոնդակով և Բ. Դուսի ֆերմանով Խրիմեանը դարձաւ Վարչաց վաճրի վաճահայր, իսկ վաճրը հանուեց Վասպորականի հոգեւոր առաջնորդի իրաւասորինից: 1857-ին Վարազայ վաճահայրը դարձեալ հետեւելով Սլսիրարեաններին, հիմնադրում է վաճական դպրոց՝ Ժառանգաւորացը, ապա սկսում հրատարակել «Արծովի Վասպորական» հանդէսը՝ առաջինը Հայաստանի տարածքում, այդ իսկ պատճառով է՛ առաւել ծանր, դժուարին պայմաններում: Դա իսկապէս խիզախորին էր, սիրանք: Իր հեղինակութեամբ գրուած յօդուածներն ապացուցում են, որ նա աշալքութեամբ ուսումնասիրում էր Սլսիրարեանների իրատարակած պատմագիտական, հայագիտական աշխատորինները: Ս. Մաշտոցին, Սովուս Խորենացուն, Դաւիթ Անյաղրին, Եղիշեին եւ Եզնիկ Կողբացուն նովրուած յօդուածներում¹ նա իր երախտագիտորինն է յայտնում Սլսիրարեան հայրերին, որ գիտական մեկնարանորիններով

իրատարակել են հայոց այդ մեծերի աշխատորինները՝ նշերով որ բուականին՝ ուժը:

Անցնում են տարիները, Խրիմեանի ազգանուեր գործունեութիւնը լայն քայի է ստանում: Երեւ սկզբում նա միայն Վասպորականում էր, 1862-ից տարօնահայութեան խնդրագրով ել պատրիարքարանի հաստատումով նա դառնում է Տարօնի հոգեւոր առաջնորդ եւ Ս. Կարապետ վանիք վաճահայր: Ժառանգաւոր է բացում նաև այդ վաճրում, լրյու է տեսնում մի նոր պարքերական «Արծովիկ Տարօնյոյ»: Խրիմեանը շրատարուեց հոգեւոր դպրոցներով: Նրա յանձնարարութեամբ աշակերտ, ապա գործունեկեր Գարեգին Սրուանձտեանը բազմաթիւ դպրոցներ բացեց Տարօնի գիտերում: Վարագում եւ Ս. Կարապետում «Արծովի» և «Արծովիկի» հետ մեկտեղ տպում էին զանազան դասագրքեր եւ անվճար բաժանում գիտական վարժարաններին: Հասկանալի է, որ Խրիմեանի հրատարակչական բափը չէր կարող համեմատուել Սլսիրարեանների կատարած գործի հետ, սակայն տեղի եւ պայմանների համեմատ նրա կատարած սիրանք էր: Վաճահայր եւ վարդապետ Խրիմեանը շրջում էր հայրենին գիտերում, յայտնաբերում բազմաթիւ ընդունակ երեխաններ, ոմանց ծրիափարժ ընդունում իր բացած վարժարաններում¹, ոմանց ուղարկում ւ. Պոլիս ուսանելու, ոմանց համար էլ բախսածագին խնդրագրեր յղում Սլսիրարեան հայրերին իրենց ուսումնական հաստատութիւններում ընդունելու համար:

Գրականութեան եւ արտեստի բանգարանի արխիվի Խրիմեանի ֆոնդում յայտնաբերել ենք ուշագրաւ երկու նամակ, մէկն ուղղուած է Արևն Բագրատունուն, միաւը՝ Դեւնդ Ալիշանին: Նամակների հիմնական շարժառիրը վանեցի մի որքին Ոստանիկ անունով ընդունակ պատաստուն Փարիզի Մուրադեան վարժարանում ծրիափարժ աշակերտ ընդունելու խնդրանքն էր: Երկու նամակների այդ հաստուածներն ընդգծում են Խրիմեանի մարդասիրութիւնը, անհուն բարութիւնը, մեծ հոգատարութիւնը նատաղ սերնդի, առաւելապէս որք երեխանների նկատմամբ: Նամակները գրուած են այնպիսի յուղիչ զգացմունքայնութեամբ, որ անհնար էր դրանց մերժելը: Այդ մասնաւոր շարժադիրը պատճառ է դարձել,

¹ «Արծովի Վասպորական», 1858 թ., № 7, 8, 9, 10:

¹ Գ.Աթ, Խրիմեանի Փ., գ. 142, Էջ 3:

որ Խրիմեանը նամակներում շարադրի նաև իր գեղարունատական շափանիշները, գնահատի են Բագրատունու, են Ալիշանի գրական-գեղարունատական, քարզմանական և հասարակական գործունեությունը: Երկու նամակն ել կրում են նոյն բուականը օգոստոսի 19, 1864 թ.: Անդրադառնանք նամակներին առանձին-առանձին: Բագրատունուն ուղղուած բանակում¹ Խրիմեանը յիշեցնում է իրենց 16-ամեայ բարեկամութիւնը, 1848 թ. սկսած, երբ ինը «Հայկ դիցազն» պոեմի ազդեցուրեան ներքոյ բանաստեղծութիւն է ձօնել հեղինակին: Բարձր գնահատականի է արժանանում Բագրատունու քարզմանական գործունեութիւնը, որի միջոցով հայ ընթերցողը ծանօթանում է Վիրզիլիոսի «Մշակականքին», Հոմերոսի «Ինչականին»: Խրիմեանը նշում է, որ Հոմերոսի նախկին բարզմանիշը այդ բարձրարժէք գործը «անտաշ» էր բարզմանել, իսկ Բագրատունու բարզմանութիւնը «արտեստակէս յոկեալ է» եւ Հոմերոսին արժանի: Նշելով Վիրզիլիոսի եւ Հոմերոսի ստեղծագործութիւնների «անգիտական» եւ բարձրարտեստ որակը, Խրիմեանը դրանց շարքում դասում է նաև «զհայկ դիցազն գրազմարիտն վաստակ աշխատասէք ծերունյը»: Սակայն անմիջապէս աւելացնում է, որ չի ցանկանում շուղորդուել հայր Արտէնին, որի պոեմը բարձր է առաւելապէս հայկական ոգով: Գնահատականներից պարզում է, որ Խրիմեանը բազածանօր է ոչ միայն համաշխարհային ճանաչում գտած արժէքներին, այլև Սիլլոոնի «Կորուսեալ դրախտին»՝ դարձեալ Բագրատունու բարզմանութեամբ: Այս զրի բարզմանութեան մէջ Խրիմեանի կարծիքով բարզմանիշ հայ հանճարը մրցում է անզիական հանճարի հետ և պատուով ելնում մրցութիւնից: Խրիմեանը գնահատում է եօք տասնամեակն անցած Բագրատունու եռանդն ու աշխատասիրութիւնը և գտնում, որ «ամէն գրասէք հայ, որոց կիրք է ճաշակ առ արգասիս բաղցը վաստակաց քոյին, համբերելով սպասէ տակալին վայելել ի բերաց աշխոյժ հոգի ծերունյը»²: Փաստօրէն ինքնակրրութեամբ իր միտրն ու հոգին հարստացրած Խրիմեանը, Սլիքրաբեանների ծալալած բազմարդիւն իրատակութիւնների շնորհի, հաղորդակցուել է երազական գրականութեան գոհարներին, դարձել դրանց գնահատողը եւ տարածողը հայ իրա-

¹ Նոյն տեղում, գ. 159, էջ 1:

² Նոյն տեղում:

կանութեան մէջ: Այս նամակում այնքան հոգի եւ միտր, հիացմունք ու զգացմունք է յդրել Խրիմեանը, որ նոյնիսկ այսօրուայ ընթերցողին յուզում է այն: Առաել յուզիչը Բագրատունու պատասխանն էր ազգանուեր գործին¹: Նամակն ուղարկելու 11 օր անց, 1864 թ. սեպտեմբերի 1-ին, Բագրատունին պատասխանում է Խրիմեանին՝ դիմելով նրան իբրև «Գերարդի Արծուի Վասպորական»: Այդ պատասխանից տեղեկանում ենք, որ նրանց նամակագրական կապը պահպանուել է 1848-ից մինչեւ 1858 թ., իսկ դրանից յետոյ՝ բնդիատուել, որը մեծ ցաւ է պատճառել Հայր Արտէնին: Նշուած բուականներն իրենք են յուշում նամակագրական կապի բնդիատման պատճառը. 1856-ին Խրիմեանը, բոլոնելով Պոլիսը, վերադառնում է հայրենիք՝ ձեռնամուխ լինելու ժողովրդի լուսաւորութեան, կրրութեան եւ հոգեւոր դաստիարակութեան դժուարին գործին: Ըստ երեսյրին, արեւմտահայ գաւառի ծանր հոգսերը Խրիմեանին հնարաւորութիւն չեն տալիս անխափան կապ պահպանել իր կողմից մեծ յարգանք վայելող անձնաւորութիւնների հետ: Սակայն «Հայկ դիցազնի» հեղինակն իրենց նամակագրական կապի բնդիատման համար Վշտանալով հանդերձ, շտապում է պատասխանել «հայրենասէք ձայնին», որ նրա խնդիրըն անպայման կը կատարուի, վանեցի «Ոստանիկ պատանեալը» կ'ընդունուի Փարիզի Մուրադեան վարժարան իբրև «Ճրիալարծ զիշերօրիկ սան», եւ յոյս է յայտնում, որ այդ սլարագան «նորոգորին լիցի յիշատակ եւ պարծանը իին սլրոյ մերոյ»:

Երկրորդ նամակն ուղղուած էր Ղետոնդ Ալիշանին, բուազրուած դարձեալ 1864 թ., 19 օգոստոսի: «Յոշիկների» հեղինակին Խրիմեանը դիմում էր այսպէս. «Հոգի սիրահար հայրենեաց, հայր Ղետոնդ Ալիշանին, նահատակեալ աղեկելով հոգով ի սիրտ, ի ոլք, ի կոծ՝ վասն հայրենեաց»²: Խրիմեանն ու Ալիշանը տարեկիցներ էին. գուշ դա էր պատճառը, որ Բագրատունուն ուղղած նամակի խիստ յարգախց եւ որդիսկան ձեւին ու ոճին այստեղ վիտսարինել էր մտերմիկ հարազատի գրոյցը: Ժուարկերով Ալիշանի ստեղծագործութեան թեմաները՝ «հայրենասիրական գրուածոց մէջը, Շաւարշական դաշտին մէջ, պիլ-պիլն Աւարայրին մէջ, դառն ողբերույ մէջ, ընտիր ընտիր ճառերուն մէջ, Մասեան շու-

¹ Նոյն տեղում, էջ 3:

² Նոյն տեղում, էջ 3-4:

որ Խրիմեանը նամակներում շարադրի նաև իր գեղարտեստական շափանիշները, գնահատի եւ Բազրատունու, եւ Ալիշանի գրական-գեղարտեստական, քարզմանական եւ հասարակական գործունեութիւնը: Երկու նամակն էլ կրում են նոյն բուականը օգոստոսի 19, 1864 թ.: Անդրադառնանք նամակներին առանձին-առանձին: Բազրատունուն ուղղուած նամակում¹ Խրիմեանը յիշեցնում է իրենց 16-ամեայ քարեկամութիւնը, 1848 թ. սկսած, երբ ինը «Հայկ դիցազն» պոեմի ազդեցութեան ներքյ քանատեղծութիւն է ծօնել հեղինակին: Քարձր գնահատականի է արժանանում Բազրատունու քարզմանական գործունեութիւնը, որի միջոցով հայ ընթերցողը ծանօթանում է Վիրգիլիոսի «Մշակականքին», Հոմերոսի «Ինչականին»: Խրիմեանը նշում է, որ Հոմերոսի նախակին քարզմանիշը այդ քարձրարժէք գործը «անտաշ» էր քարզմանել, իսկ Բազրատունու քարզմանութիւնը «արուեստապէս յղկեալ է» եւ Հոմերոսին արժանի: Նշերով Վիրգիլիոսի եւ Հոմերոսի ստեղծագործութիւնների «աճզիւտական» եւ քարձրարուեստ որակը, Խրիմեանը դրանց շարքում դասում է նաև «զհայկ դիցազն գրազմաքիրտն վաստակ աշխատասէր ծերունյ»: Սակայն անմիջապէս անելացնում է, որ չի ցանկանում շողոքորեկ հայր Արսէնին, որի պոեմը քարձր է առաւելապէս հայկական ոգով: Գնահատականներից պարզում է, որ Խրիմեանը քաջածանօթ է ոչ միայն համաշխարհային ճանաշում գտած արժէքներին, այլև Սիլլոոնի «Կորուսեալ դրախտին»՝ դարձեալ Բազրատունու քարզմանութեամբ: Այս գործի քարզմանութեան մէջ Խրիմեանի կարծիքով քարզմանիշ հայ հանճարը մրցում է աճզիւտական հանճարի հետ եւ պատուով կենում մրցութիւնից: Խրիմեանը գնահատում է եօթ տասնամեակն անցած Բազրատունու եռանդն ու աշխատափրութիւնը եւ գտնում, որ «ամէն գրասէր հայ, որոց կիրք է ճաշակ առ արգախս քաղցր վաստակաց բոյն, համբերելով սպասէ տակաւին վայելել ի բերաց աշխայժ հոգի ծերունյը»²: Փաստորէն ինքնակրութեամբ իր միտքն ու հոգին հարստացրած Խրիմեանը, Սիլիքարեանների ծալալած քազմարդին իրատակութիւնների շնորհի, հաղորդակցուել է երուպական գրականութեան գոհարներին, դարձել դրանց գնահատողը եւ տարածողը հայ իրա-

¹ Նոյն տեղում, գ. 159, էջ 1:

² Նոյն տեղում:

կանութեան մէջ: Այս նամակում այնորան հոգի եւ մխոր, հիացմունք ու զգացմունք է դրել Խրիմեանը, որ նոյնիսկ այսօրուայ ընթերցողին յուզում է այն: Առանել յուզիչը Բազրատունու պատասխանն էր ազգանուելք գործչին¹: Նամակն ուղարկելու 11 օր անց, 1864 թ. սեպտեմբերի 1-ին, Բազրատունին պատասխանում է Խրիմեանին՝ դիմելով նրան իրեւ «Գերարդի Արծուի Վասպուրական»: Այդ պատասխանից տեղեկանում ենք, որ նրանց նամակագրական կապը պահպանուել է 1848-ից մինչեւ 1858 թ., իսկ դրանից յետոյ՝ բնդիատուել, որը մեծ ցաւ է պատճառել Հայր Արտէնին: Նշուած բուականներն իրենք են յուշում նամակագրական կապի բնդիատուն պատճառը. 1856-ին Խրիմեանը, բողներով Պուլիսը, վերադառնում է հայրենիք՝ ձեռնամուխ լինելու ժողովրդի լուսաւորութեան, կրրութեան և հոգենոր դաստիարակութեան դժուարին գործին: Ըստ երեսոյիքին, արեւմտահայ գաւառի ծանր հոգսերը Խրիմեանին հնարաւորութիւն չին տալիս անխափան կապ պահպանել իր կողմից մեծ յարգանք վայելող անձնաւորութիւնների հետ: Սակայն «Հայկ դիցազն» հեղինակն իրենց նամակագրական կապի բնդիատունան համար Վշտանալով հանդերձ, շտապում է պատասխանել «հայրենասէր ձայնին», որ նրա խնդիրըն անպայման կը կատարուի, վաճեցի «Ոստանիկ պատասեակը» կ'ընդունուի Փարիզի Մուրադեան վարժարան իրեւ «ձրիավարծ զիշերօրիկ սան», եւ յոյն է յայտնում, որ այդ պարագան «նորոգութիւն լիցի յիշատակ և պարձանը իին սիրոյ մերոյ»:

Երկրորդ նամակն ուղղուած էր Ալիշանին, բուազրուած դարձեալ 1864 թ., 19 օգոստոսի: «Յոշիկների» հեղինակին Խրիմեանը դիմում էր այսպէս: «Հոգի սիրահար հայրենեաց, հայր Անոնդ Ալիշանին, նահատակեալ աղեկէզ հոգով ի սիրտ, ի ողք, ի կոծ՝ վասն հայրենեաց»²: Խրիմեանն ու Ալիշանը տարեկիցներ էին. գուցէ դա էր պատճառը, որ Բազրատունուն ուղղած նամակի խիստ յարգախց եւ որդիսկան ձեւին ու ոճին այստեղ փոխարինել էր մտերմիկ հարազատի գրոյցը: Թուարկերով Ալիշանի ստեղծագործութեան թեմաները՝ «հայրենասիրական գրուածող մէջը, Շատարշական դաշտին մէջ, ալիլ-պիլս Աւարարին մէջ, դասուն ուղերդուղ մէջ, ընտիր ընտիր ճառերուն մէջ, Մասեաց շու-

¹ Նոյն տեղում, էջ 3:

² Նոյն տեղում, էջ 3-4:

քին տակ, Հրազդան գետին եղեքը, այո, կը ճանշնամ գրեգ, դու մեր հայրենեաց հանրածանօթ մատենապիրն ես, ո՞վ է, որ գրեգ չի ճանշնար»: Ապա Խրիմեանը հարցնում է՝ իսկ Ալիշանը ճանաշը¹ ու «հայրենի աւերակաց մէջ բնակուող հեզ Արծուին»: Իրեն ու Ալիշանին համարելով ԺՇ դարի հայ հայրենիքի երկու քշուառ սիրահարներ, Խրիմեանը մտորում է, թէ իրենցից ո՞րն է աւելի քշուառը: Պատասխանը ակներեն է. «Հեզ Արծիւր իրաւապէս քշուառ է. գիտե՞ս, հայրենի զաւակները տոշորոդ Բարելունեան հնոցի մէջն է, աղքատուրեամբ, քշուառուրեամբ, հայրենի երկրեն զարդող զաւակներու յուժարկաւորն է»: Նամակագիրը գտնում է, որ իրեն բաժին են ընկել սարսափելի հոգսեր, Վասպուրականից Տարօն և Տարօմից Վասպուրական՝ ժողովրդի ծանր տառապանքների ականատես, հայրենի քշուառ զաւակների հետ «շարշարեալ»: Ալիշանը, ճիշտ է, տառապում է հայրենիքի աղէտների համար, բայց, գտնուելով ազատ ու քաղաքակիրը երկրի մէջ, սփոփուում է զիտական եւ գրական աշխատութիւններով, ամորում: Սակայն հայրենիքը ողբերից եւ աղէտներից բացի ունի սփոփանքներ եւ իրաշալիքներ: Խրիմեանը հայրենակարօս եւ հայրենաբաղձ Ալիշանին իրափրում է Հայրենիք՝ Հայաստանը տեսնելու, Եփրատի ջրերում լողանալու եւ վերստին մկրտուելու, Այրարատում շրջելու, Երասխի ջուրը խմելու, Անիի աւերակների վրայ ողբալու, «Ծիրակնեան լերանց ծաղիկները քաղելու»: Նամակն աւարտում է նոյն խնդրանքով: Հայր Արտէնի հետ միացեալ ոյժերով միջնորդել Ռստանիկ որդին Փարիզի Մուրադեան վարժարան, այդ «ֆմասուրեան տաճարն» ընդունելու համար: Արդիւնքը պարզ էր. արժանապատի հայրերը յարգում են Խրիմեանի խնդիրը:

Թէ յետազայտմ ինչպիսին էին Սլիքարեան միաբանութեան որոշ հայրերի և Խրիմեանի յարաբերութիւնները, արխիւային փաստարդերը լուս են: Յայտնի է, որ Բեղինի վեհաժողովի հայ պատուիրակութեան դեկալարը վեհաժողովի աւարտից յետոյ տունդարձի ճանապարհին մտաւ Վիեննա աւստրիական արտաքին գործոց նախարարի մօն, որպէսզի վերջինս Կ. Պոլսի իր դեսպանին յանձնարարի հայկական

խնդիրը¹: 1878-ի յուլիսի 11-ին նա այցելեց տեղի Սլիքարեաններին: Ըստ երեւոյրին, վեհաժողովի արդիւնքներն իւն պատճառը, որ այդ այցելուրինը մնաց անարձագանք:

Տարիներ անց արտրական Խրիմեանն ընտրուեց Կարողիկոս Ամենայն Հայոց: Էջմիածին ուղեւորուելու ճանապարհին նա դարձեալ եղաւ Երոպայում²: Վենետիկի Սլիքարեանները Տրիեստ ուղարկեցին երկու վարդսալես՝ նրան ճանապարհելու համար: Առաել ջերմ էր Վիեննայի Սլիքարեանների հետ ունեցած հանդիպութը: Տեղի արքահայրը Այտրնեանը երկու վարդսալեսների ուղեւկցութեամբ 1893 թ. օգոստոսի 30-ին այցելեց Վեհափառին: Յաջորդ օրը Խրիմեանը պատուիրակութեան անդամների հետ փոխադարձեց այցելուրինը³: Մոտքի առաջ նրան ընդունեց արքահայրը եւ առաջնորդեց երկրորդ յարկ՝ վաճքի ընդունարան: Այս կարողիկոսն այցելեց վաճքի հարուստ մատենադարան, եռայարկ տպարան, բանգարան, որի ամենաուշագրաւ հարատուրինը Կիլիկեան արքաների, մասնաւրապէս Ռուբինեանների դրամական հասարածուն էր: Այցելուների մատեանում Խրիմեանը քողեց հետեւեալ մակազուրինը. «1878-ի յուլիսի 11-ին եկայ Վիեննա, այցելեցի Սլիքարեան վաճուց: 1893-ի օգոստոսի 31-ին դարձեալ այցելուրեան եկի ի սոյն վաճան, որում ժամանակի ուխտին վաճահայրն էր Արտէն արքեալիկուպոս Այտրնեան. տեսի միաբանական ուխտ, տեսի ամէն յառաջադիմուրին, աշխատութիւնս գրական հանդէսի, օրինեցի եւ մաղրեցի, որ երրազով ես պատշաճը լինի վաճն փառաց Քրիստոսի եկեղեցւոյ: Կարողիկոս Ամենայն Հայոց Խրիմեան Հայրիկ»: Վեհափառի օգտագործած գրիչը Հայր Գրիգորիս Գալէմբեարեանը վերցրեց, որ պահեն բանգարանում իրքեւ յիշատակ: Միս օրը Վեհափառը նրանց ուղարկեց իր լուսնեկարը հետեւեալ մակազուրեամբ. «Յիշատակ առ միաբանական ուխտն Սլիքարեան ի

¹ Սարուխան Ա., Հայկական խնդիրն եւ Ազգային սահմանադրութիւնը Թուրքիայում (1860-1910), հ. Ա, 1912, էջ 475, նաև Կոստանդնեան Է., Սլիքի Խրիմեան. հասարակական բանագույն գործունեութիւններ, Երևան, 2000, էջ 263:

² Տէր-Սուվիսիսանց Մերովով Վրդ., Ուղեւորութիւն Տ. Տ. Սլիքի վեհափառ Կարողիկոսի Ամենայն Հայոց Երևանում, Էջմիածին, 1894, էջ 200:

³ Նոյն տեղում, էջ 217:

ըին տակ, Հրազդան գետին եզերը, այո, կը ճանշնամ զքեզ, դու մեր հայրենին հանրածանօթ մատենագիրն ես, ո՞վ է, որ զքեզ չի ճանշնար»: Ապա Խրիմնանը հարցնում է՝ իսկ Ալիշանը ճանաշո՞ւմ է «հայրենի աւերակաց մէջ բնակուող հեզ Արծուին»: Իրեն ու Ալիշանին համարելով Ժմդղարի հայ հայրենիքի երկու քշուառ սիրահարներ, Խրիմնանը մտորում է, թէ իրենցից ո՞րն է աւելի քշուառը: Պատասխանը ակներեւ է. «Հեզ Արծուը իրաւապէս քշուառ է. զիտե՞ս, հայրենի զաւակները տոշորոյ Բարելնեան հնոցի մէջն է, աղքատորեամբ, քշուառորեամբ, հայրենի երկրն զարդող զաւակներու յուղարկատրն է»: Նամակագիրը գտնում է, որ իրեն բաժին են ընկել սարսափելի հոգսեր, Վասպուրականից Տարօն և Տարօնից Վասպուրական՝ ժողովրդի ծանր տառապանքների ականատես, հայրենի քշուառ զաւակների հետ «չարշարեար»: Ալիշանը, ճիշտ է, տառապում է հայրենիքի աղէտների համար, բայց, գտնուելով ազատ ու քաղաքակիրք երկրի մէջ, սիրովում է զիտական և զրական աշխատութիններով, ամորտում: Սակայն հայրենիքը ողբերից և աղէտներից բացի ունի սփոփանքներ և իրաշալիքներ: Խրիմնանը հայրենակարու և հայրենաբաղձ Ալիշանին իրայիրում է Հայրենիք՝ Հայաստանը տեսնելու, Եփրատի ջրերում լողանալու և վերստին մկրտուելու, Այրարատում շոշելու, Երասխի ջուրը խմելու, Անիի աւերակների վրայ ողբալու, «Քիրակնեան լերանց ծաղիկները քաղերու»: Նամակն աւարտում է նոյն խնդրանքով: Հայր Արտենի հետ միացեալ ոյժերով միջնորդել Ռատանիկ որբին Փարիզի Սուրադեան վարժարան, այդ «ֆմաստորեան տաճարն» ընդունելու համար: Արդինքը պարզ էր. արժանապատի հայրերը յարգում են Խրիմնանի խնդիրը:

Թէ յետագայում ինչայիսին էին Սլսիրարեան միարանորեան որոշ հայրերի և Խրիմնանի յարաքերութիւնները, արխիտային փաստարդերը լուս են: Յայտնի է, որ Քեռլինի Վեհաժողովի հայ պատուիրակութեան դեկալարը Վեհաժողովի աւարտից յետոյ տունդարձի ճանապարհին մտաւ Վիեննա աւստրիական արտարին գործոց նախարարի մօտ, որպէսի վերջինս Կ. Պոլսի իր դեսպանին յանձնարարի հայկական

խնդիրը¹: 1878-ի յուլիսի 11-ին նա այցելեց տեղի Սլսիրարեաններին: Ըստ երևոյթին, վեհաժողովի արդինքներն էին պատճառը, որ այդ այցելութիւնը մնաց անարձագանք:

Տարիներ անց արտորական Խրիմնանն ընտրուեց Կարողիկոս Ամենայն Հայոց: Էջմիածին ուղեւորուելու ճանապարհին նա դարձեալ եղաւ Երոպայում²: Վենետիկի Սլսիրարեանները Տրիեստ ուղարկեցին երկու փարզավետ նրան ճանապարհելու համար: Առաել ջերմ էր Վիեննայի Սլսիրարեանների հետ ունեցած հանդիպումը: Տեղի արքահայր Այտրնեանը երկու փարզավետների ուղեկցութեամբ 1893 թ. օգոստոսի 30-ին այցելեց Վեհափառին: Յաջորդ օրը Խրիմնանը պատուիրակութեան անդամների հետ փոխադարձեց այցելութիւնը³: Մոտքի առաջ նրան ընդունեց արքահայրը և առաջնորդեց երկրորդ յարկ՝ վանքի ընդունարան: Այս կարողիկոսն այցելեց վանքի հարուստ մատենադարան, եռայարկ տպարան, թանգարան, որի ամենատշագրաւ հարստութիւնը Կիլիկեան արքաների, մասնաւորապէս Ռուբինեանների դրամական հաւաքածուն էր: Այցելուների մատենանում Խրիմնանը բողեց հետևեալ ճակագրութիւնը. «1878-ի յուլիսի 11-ին եկայ Վիեննա, այցելեցի Սլսիրարեան վանուց: 1893-ի օգոստոսի 31-ին դարձեալ այցելութեան եկի ի սոյն վանս, որում ժամանակի ոխտին վանահայրն էր Արքեն արքեալիսկովոս Այտրնեան. տեսի միարանական ուստ, տեսի ամեն յառաջադիմութիւն, աշխատութիւն զրական հանդէսի, օրինեցի և մաղրեցի, որ երբարկ ես պաղաքեր լինի վասն փառաց Քրիստոսի եկեղեցոց: Կարողիկոս Ամենայն Հայոց Խրիմնան Հայրիկ»: Վեհափառի օգոստորդած գրիշը Հայր Գրիգորիս Գալէմքեարեանը վերցրեց, որ պահեն բանգարանում իբրև յիշատակ: Սիւս օրը Վեհափառը նրանց ուղարկեց իր լուսանկարը՝ հետևեալ մակագրութեամբ. «Յիշատակ առ միարանական ոխտն Սլսիրարեան ի

¹ Սարուխան Ա., Հայկական խնդիրն և Ազգային սահմանադրութիւնը Ժորժիայում (1860–1910), հ. Ա, 1912, էջ 475, նաև Կոստանդնուպոլիս Է., Սկրտիչ Խրիմնան. հասարակական բանագարք գործութեամբ, Երևան, 2000, էջ 263:

² Տեր-Մովսիսեանց Սեպտեմբեր Վրա, Ողեւորութիւն S. S. Ակրախի վեհափառ Կարողիկոսի Վիեննայի Հայոց Երուսալեմից, Էջմիածին, 1894, էջ 200:

³ Նոյն տեղում, էջ 217:

Վիեննա - Խրիմեան Հայրիկեն: Թէ կենդանազիր մահկանացուիս երբայ ի գերեզման, սուկ ստուերն իմ մնասցի առ Զեզ յիշատակ»¹:

1900 թ., երբ ողջ հայութիւնը նշում էր Սլսիքարեան միաբանութեան 200-ամեակը, Խրիմեան Կարողիկոսն արտայայտում է իր ջերմ վերաբերմունքը: Ասանդութիւնը պատմում է, թէ Սեւանայ վանքում յուսահատուած Սլսիքարը ծննդիր աղօրում է Աստուածածոր պատկերի առջեւ կարծում, թէ լսում է նրա ձայնը՝ «Ուզածդ քող լինի»²: Այդ տեսլիքից ոգետրուած Սլսիքարը հետանում է Սեւանից իր անիրականանալի կարծուած ծրագրերը իրականացնելու: Ողջ կեանքի ընթացքում նա մտորում է, որ իրեն օգնել է Աստուածածայրը և Սեւանում գտնուող նրա պատկերը: Սլսիքարեան միաբանութեան 200-ամեայ տօնակատարութեան օրերին Խրիմեանը ցանկանում է կարողիկոսական կոնդակի հետ միաբանութեանը նուիրել այդ հինաւորց նկարը: Մի շաբ պարբերականներ, «Նոր դար»-ի գլխաւորութեամբ, բննադասում են կարողիկոսի այդ որոշումը³: Գուցէ ճիշտ էր բննադասութիւնը, և կարողիկոսը ետ կանգնեց որոշման իրագործումից: Սակայն այստեղ ընդգծելին կարողիկոսի բուժն ու ջերմ վերաբերմունքն էր Սլսիքարեան միաբանութեան նկատմամբ: Դա նաեւ նրա գնահատականն էր, մեծարանքը, նրա ակնածանքն ու խնկարկումը այն մարդկանց նկատմամբ, որոնց ողջ կեանքը եղաւ Եկեղեցուն, հայրենիքին, ողջ հայութեանը բոլորանուէր ծառայելու մի սրանչելի օրինակ:

Սեծերը խոնարհուում են Սեծերին:

Բազմավեց, 2001, № 1-4, էջ 177-187:

¹ Նոյն տեղում, էջ 218:

² Քանի մը հայ նշանաւոր դեմքեր, էջ 35:

³ Նոյն տեղում, էջ 58:

ՄԵՍՐՈՊ ՄԱՉՏՈՅՑԸ ԵՎ ՆՐԱ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿԻ ԳՆԱՀԱՏՈՒԹՅԱՄ

Մեսրոպ Մաշտոցի հայապահպանման գործունեությունը, գիտական սխրանքը և հայ եկեղեցու ամրապնդման մեջ ներդրած ջանքերը բարձր են գնահատվել և նրա ժամանակակիցների, և հետնորդների կողմից: 1600 տարիների ընթացքում մեր մշակույթի հետ առնչվող բազմաթիվ նշանավոր դեմքեր ամեն պատեհ առիրով իրենց հարգանքի և մեծարանքի տուրքն են մատուցել այդ գիտական սխրանքին, որը «հայ ժողովրդի բաղարական ու մշակութային ուրույն գործությունն ապահովելու համար որպես պայքարի հզոր գենք կյանքի կոչեց ազգային գիրն ու գրականությունը¹: Այդ գործիչների շարքում իր յուրահատուկ տեղն ունի Սկրտիչ Խրիմյանը՝ ուսուցիչ, խմբագիր, հոգևոր առաջնորդ, Կ. Պոլսի պատրիարք, ապա Կորողիկոս Ամենայն Հայոց, բայց ողջ կյանքի ընթացքում գրչի մշակ, հայրենի մշակույթի նվիրյալ: Գրական գործունեության առաջին բայերի ընթացքում, իր գրական երախայրիքում՝ «Հրափրակ Երկրին Արարատեան» հայրենասիրական պոեմում նա նկարագրում է Արարատյան աշխարհի սրբությունները, որոնցից ամենաուշագրավը՝ Էջմիածնին համահավասար, համարում է Օշականը, սուրբ Սեսրոպի հավերժության հանգստավայրը, «ուր ուսումնասէր հայ մանկուին կ'ընդունեն եռամնեն վարդապետին՝ Սեսրոպին օրինությունն ու խրատը, անկորուստ պահել հայեցի դպրութեան գանձերն անգին»: Իրեն համարելով Սեսրոպի ուշ շրջանի աշակերտուն ու նվազ հետևորդը, առաջնորդվելով նրա խորություններով, Խրիմյանը նպատականդպում է պայքարել Մաշտոցի գործի հաղթանակի և հարատեան համար՝ իր ապրած ծանր ու դժոխ ժամանակներում: Հասարակական գործունեության սկզբում, Կ. Պոլսում մեկ տարի «Արծվի Վասպուրականին» հրատարակելուց հետոյ, նա վերադառնում է հայրենի եզերը: Ժամանակի Հակոբոս պատրիարքի կոնդակով և Բ. Դուսի Ֆերմանով 1857-ին Խրիմյանը դառնում է Վարազա վանքի վանահայրը, իսկ մեկ տարի անց նոյն վանքում վերսկսում է ամսագրի հրատարակությունը: Խրիմյանի այդ

¹ Մեսրոպ Մաշտոց, յօդուածների ժողովածու, Երևան, 1962, էջ 7:

ձեռնարկը խիզախություն էր, խկական հեղափոխություն: Մինչ այդ հայ պարքերական մանուլը սկզբնավորվել և տարածվել էր մայր Երկրից դուրս՝ հայ գաղթօջախներում: Խրիմյանն առաջին նվիրյալն էր, որ տպագրական մերենան՝ գոտտենբերգյան հրաշագործությունը հասցեց քուն Հայաստան, որ նա վերադարձել էր իրեն առարյալ ու լրասավորիչ: Նա ցանկանում էր իր գործունեությամբ սպեղանի դնել գավառահայության՝ այսինքն քուն արևմտահայահայության վերքերին ու կարիքներին, բացել նրա աշշերը, օգնել նրան մաքառումների երկար ու դժվարին իր ճանապարհին և մեր սուրբ նախնիների օրինակով, հաղթահարելով բոլոր դժվարությունները, հարատևել մայր Երկրում: Այդ նախատակով նա վաճրում բացեց «Ժառանգավորաց» վարժարան և իր գործընկերների ու սաների օգնությամբ վերսկսելով ամսագրի հրատարակությունը, ձեռնամուխ եղավ իր հայրենանվեր առաքելությանը՝ ժողովրդին հաղորդակցելու իր անցյալի պատմությանը, մեր նախնիների օրինակով զինվելու, պայքարելու և հարատևելու:

Հայրենիքում հրատարակվող ասագիրը շահեկանորեն տարրեր-վում էր Կ. Պոլսի «Արծուից»: Այստեղ նյութերը դասակարգվում էին մի քանի բաժինների, որոնցից առաջինը կրում էր «Հանդես աստվածապահության՝ եկեղեցաշն հարցն» խոսուն խորագիրը: Խճբագրի համոզմամբ այլտեղ պետք է զետեղվեին հողուածներ՝ նվիրված հավատին, եկեղեցուն, հոգևորականությանը, հայ եկեղեցու նշանակոր գործիշներին, որոնք իրենց անձնազոհ սխրանքներով դասվել են հայ եկեղեցու սրբերի շարքը: Այդ քաժնի առաջին հողվածները նվիրված են մեր Երկրում քիչատունեություն տարածած առարյաներին՝ Թաղեռսին ու Բարդուխիմեռսին, ապա Գրիգոր Լուսառյշին և նրան հաջորդած որդի ու քոռ կարողիկոսներին: Այդ շարքում առանձնակի տեղ են զրավում Սեսրու Մաշտոցին և նրա աշակերտներին՝ սուրբ քարգմանիշներին նվիրված հողվածները, որոնք հետապնդում են նախատակ, առաջին և ամենակարևոր՝ հասարակ ժողովրդին ժանորացնել և ուսուցանել մեր նախնիների, մեր հայրենի քողած մշակութային ժառանգությունը, ցույց տալ մեր անցած ու անցնելիք ուղին և երկրորդ՝ զիահատել նրանց գործը իր ժամանակի գիտության դիրքերից: Ինչքանո՞վ էր նա կարողանում իրականացնել իր ծրագրերը: «Արծուի Վասպուրականի» 1858 թ. № 7-ում

տպված՝ է Խրիմյանի հոդվածը՝ «Սուրբն Մեսրովը՝ հեղինակ և գտիչ հայկական տատից» խորագրով: Այն սկսվում էր «Երանելի Մեսրովին» արժեքափորտմով, որ «հրաշալի արտեստին հոգեստարգել նորոգին գրոցն ձեռն տուեալ կանգնեցին նորասրանց ճարտարապետութեամբ գիյակապ տաճարն իմաստութեան եկեղեցւոյ Հայաստանեայց¹»: Այդ ընդհանուր բնութագրումից հետո նա իր ընթերցողներին մանրանան պատմում է Մաշտոցի կյանքը, ընդգծում նրա ծագումը՝ Տարոնի Հացեկաց գյուղը, որպեսզի ընթերցողին հասկացնի, թե ով է մեզ համար ամենամեծ սրբերից մեկը: Նրա կյանքի դրվագների ծանորացումը հասցնելով մինչև Ավետարանին զինվորագրվելը, Խրիմյանը նկարագրում է Մաշտոցի տառապահները, շրջագայությունները հայրենի Երկրում, մասնավորապես Գողթան գավառում, որ ժողովուրդը դեռ փարված «հերանոսության հայրենի առփությանը», չեր ցանկանում ունենալով «ճշմարտութեանն Ավետարանին», որտեղին սրբազն զրբերի ընթերցումը, մարգարեների և Ավետարանի ծայնը, Առաջալների բղբերը անհասկանալի էին նրան և հնչում էին նրա ականջին իրեւ «խուժաբուժ բարբառ»: Ժողովուրդը չեր հաղորդակցվում «յանուշահամ ճաշակացն Աստուածայն բանիցն»: Այդ բոլորը նրան բերում են այն համոզման, որ հայ եկեղեցու դիրքերի ամրապնդման համար անհրաժեշտ է սուրբ գրքերը լինեն հայկական նշանագրերով: Նոյն պահին էլ Խրիմյանը շեշտում է հայ նշանագրերի անհրաժեշտությունը առաջին հերթին հայապահպանության համար: Խրիմյանը իր ժամանակի հոգևորականն էր և ընդգծում էր, որ Մաշտոցի հայտնագործությունը ոչ միայն և ոչ այնքան նրա գիտական կարողությունների արդյունքն էր, ոչ էլ Սահմակ Պարքեի ու Վուանշապուհի մեկնեասության, ոչ նույնիսկ «մեծահամբաւ իմաստասէր Դանիէլի» օգնության ու խորհրդների, այլ «միմիայն մեծազօր ձեռն հանձարո Աստուածայնոյ հոգայն, որն ընդունեց Մեսրովի աղօրբեները, նրան ներշնչեց և օժտեց աստուածյին շնորհով, աստուածային տեսլիքով և երանելին յօրինեց զձեւն այրութեական տառից իրեւ ի քարելէն պատզամագիր»: Ըստ Խրիմյանի, մեր ժողովրդի համար այդ նշանագրներից բարձր ոչինչ չկա, ոչ աշխարհի վաղանցուկ մեծություն, ոչ ու-

¹ «Արծուի Վասպուրական», 1858, № 7, էջ 167:

կի, ոչ պատվական թվացող որեւէ այլ արժեք: Այդ նշանագրերը մեր ժողովրդի համար բացեցին այն ճանապարհը, որի աներկյուու վստահությամբ առաջնորդում է դեպի «զուսաւոր արքունական պողոտան», միայն դրանց միջոցով կարելի է աշխարհի ավեծածան ծովում անվտանգ նափարկել և հասնել «վերին նավահանգիստն»:

Խրիմյանը նկարագրում է Արարատյան աշխարհի ցնծությունն ու խնդրությունը, Սահակ Պարքեի, Վոամշապուհի, ազատամու, նախարարների և ողջ հայության դիմավորումը եռամեծար վարդապետին, որ բերելով «զգիր օրինաց ի Հայաստան աշխարհ, որով լուսաւորեցան ազգ որդոց Թորգոնայ»: Առանձնակի զնահատականի է արժանանում Սուրբունի առակների կատարած Մաշտոցի քարգմանությունը, հայերեն առաջին նախադասությունը՝ «ճանաչել զիմաստութիւն և զլորատ, իմանալ զրանս հանճարոյ»: Դրա համար Մաշտոցն արժանանում է «Նոր Հայկազն Սուրբուն» կոչմանը, որը քազմած իմաստության արողին, հրահանգում է հայ մանուկներին՝ «ծանաչել զիմաստութիւն և մի օտարանայր ի նմանէ. պատուեցէք զիանճար, որ արդ ի ձեռն հարսնաւեր պատզամատր վարդապետիս ձեզ ի հարսնությին ընծայի»:

Եվ սկիզբ առավ Աստվածաշունչի քարգմանությունը. Մաշտոցն իր անդրամիկ աշակերտների հետ եռանդագին ձեռնամուխ եղավ աստվածահան այդ գործին: Դսիրները, եկեղեցու ժամերգություն կատարողները, որ մինչ այդ հոգեոր գրականությունը կարդում էին հունարեն և ասորերեն, այսուհետև «բնիկ հայկական բարբառով վերածնէին», որի հետևանքը եղավ հայ եկեղեցու պայծառությունը. «Ընթերցուածք լսեի լինէին յունկ ժողովրդեան, տադր Սովուսագիր մատենից՝ հայաբարբառ հնչէին, դպրոց բանային, մանկունք կրթէին, քաջարաջ յուսման ասպարեզ խիզախէին»: Խրիմյանը գտնում էր, որ Մաշտոցի կատարած գործը առաջնորդել և առաջնորդում է հայ գործիչների քազմարիվ սերունդների և նրանց օգնությամբ ծարավ հայոց երկրին «կենդանարար ջրոյ աղբիքը բխէին»:

Ուսուցչապետին տփած զնահատականից հետո, ամենածավալուն հոդվածը Խրիմյանը նվիրում է նրա աշակերտներին: «Անձնուէր աշա-

կերտը սրբոց քարգմանչացն» խորագիրը կրող հոդվածը¹ նախատակ ուներ իր ընթերցողներին մանրամասն ծանորացնել այն աստղաբոյլին, որոնք եղան «գերիմաստ դաստիարակների»: Սահակի և Սեպուակի աշակերտները, բացահայտել և գնահատել նրանց կատարած գործերը: Սահակ Պարքեի անդրամիկ արժանաբանուիր աշակերտ Հովհանք Վայոցձորեցին, սուրբ Սեպուակի գործակից, Սամոսատ և Եղիսիա քաղաքներում քարգմանությամբ գրադապով Յովսենի տնից, նրա մերձավորագույն ընկերն ու Սեպուակի նվիրյալ մյուս աշակերտը՝ Հովհանք Եկեղեցաց գավառից, Ղեղոնդ Երեցը՝ «ընտրելագոյն բողբոջ Վանանդայ զաւադի», «այր սրանչելի Կորինը» նվիրյալ աշակերտը և Սեպուակի «հրաշակենցաղ վարուց քաջ նկարագիրը», Եղիշեն՝ «Սևծ Վարդանա Սամիկոնեանի ատենապահիրը» և «Շաւարշանայ դաշտի արտասուալից ճառագիրը» Մովսես Խորենացին՝ «հրաշարուեստ քերրողը հայկական դպրութեան» և ամենազխավորը՝ Հայոց աշխարհի «անհամենաստ մատենագիրը»: Այս որակավորումը ցոյց է տալիս Խորենացուն տված մեծ զնահատականը. Խրիմյանը Խորենացուն հավասար պատմագիր չի գտնում: Ուշագրավ է մի այլ հարցադրում. հոդվածի հեղինակը Սամբրեն Վերծանողին և Դավիթ Անհաղթին ներկայացնում է իբրև Խորենացու մերձավոր ազգականներ՝ Սամբրեն-կրտսեր եղբայր, իսկ Դավիթը՝ քեռորդի: Կասկածից վեր է, որ Խրիմյանը ծանոր էր Խորենացու ապրած Ժամանակաշրջանի մասին արտահայտած գիտական տարրեր տեսակետներին: Այդ ազգակցական կապը շեշտեղով, Խրիմյանը մերժում է Խորենացուն ուշ շրջանի հեղինակ համարելու կարծիքը: Սեպուակի աշակերտների շարքում քվարկվում են հմուտ երաժիշտ Ստեփանոս Սյունեցին, Աբրահամը, Անանիան, Բասենի Թուրիկ եպիսկոպոսը, Տիրայր Խորձենացին, Մուշե Տարոնեցին, Աղվանից Ենովք վարժապետը, Արձան Արծրունին, Ընձակն ու Խուրուկը, Ղազարիկ ճարտասանը, Գյուտ և Հովհանք Մանդակունի ընտրյալ կարողիկուները: Հեղինակը մտորում է, թե գուցե եղել են այլ պանծադիր անուններ, որոնք չեն հասել սերունդներին և մոռացության են մատնվել: Խսկ այդ աշակերտները զնահատվում են իբրև «Ս. Սահակա և Սեպուակ երկանց սրանչելի ծնունդը կենդա-

¹ «Արծուի Վասպուրական», 1858 թ., № 8, էջ 195:

նարար վտակք ջուր իմաստութեան յորովայնէ նոցին բխեալ, գետօրէն զնացիք զուարթացուցեալ ուրախացուցին զբառամեալ դրախտն Հայաստանեայց¹:

Հողվածում արտակարգ հուզիչ են նկարագրում աշակերտների՝ Արենքից վերադառնալու և ուսուցիչների մահվան լուրը լսելու դեպքերը: «...Վախճանեալ էին սուրբքն և բարձեալ բազաւորութիւն, բայրայեալ վայելչորիւնն և սպառեալ ուսումնասիրութիւն, աղաւաղեալ կարգասորութիւն և բազմացեալ անկարգութիւնն, նսեմացեալ ճշմարտութիւն և զօրացեալ արութիւն»²: Հեղինակը գտնում է, որ այդ երեսույթները հասուն են և իր ժամանակին, երբ հոգեորականներն ու աշխարհականները չեն զանազանվում իրարից, վարում են նույն բաղաքականությունը: «Ամենեան խոտորեցաք, ի միասին անայիտացաք, վասն որո մատնեցաք ի ձեռս թշնամեաց մերոց ատելիք... անօրէնք եկեղեցին մեզ և հակառակորդը կոփարեցին անխնայ»³: Սակայն Խորիմյանի նպատակը միայն ողբը չէր: Նրա առաքելությունն էր դաստիարակել իր ժամանակակցին՝ գեղջուկին և արիենտավորին: «Ծրկիր հայոց, զատա՞ն գեղեցիկ, աշխարհ արևելեան, ծանիր զլատութիւն քո, ընդե՞ր տգեղացաք... ծանիր զմեծութիւն քո, ընդե՞ր վրիպեցաք...»⁴: Խորիմյանի նպատակն էր մեր բազմաշնորհ նախնիների օրինակով դաստիարակել իր ժամանակակցին: Այդ նպատակով գրվում է մի այլ հոդված՝ սուրբ բարգմանիշների աշակերտներից ամենահզորի մասին՝ «Մովսէս թերողահայր ակնաղեք հայացի դպրութեան»⁵: Հեղինակը ցափով արձանագրում է, որ անցել է հայոց պատմության ու մշակույթի «ոսկեղենիկ դարը, տղիսութեամբ գիշերացել», խավարն է պատել Հայոց աշխարհին, սակայն աստիճանաբար զալիս են նոր ժամանակներ, երբ «որդիք մօրն Արարատայ», որ հեռացել էին մայր Երկրից, աշխարհի չորս ծագերից իրենց հայացքը դարձրին բիբլիական լեռան շողշողուն կատարին:

¹ «Արծոի Վասպուրական», 1858 թ., № 8, էջ 197–198:

² Նոյն տեղում, էջ 200:

³ Նոյն տեղում, էջ 201:

⁴ Նոյն տեղում:

⁵ «Արծոի Վասպուրական», 1858 թ., № 9, էջ 223–229:

Խորիմյանը տուն է կանչում պանդուխտներին, բայց դա բավական չէ. ողջ հայությանը նա կոչ է անում վերադառնալ ժողովրդի արմատներին. «Ծանեար ճշմարտի, թէ ծառն արմատով է ծառ, տունն իիմամք է տուն», և քանի դեռ չեն չորացել մեր ծառի արմատները, չեն բանդվել մեր տան իիմբերը, մենք կարող ենք ակնկալել ծառի վերընճյուղումք և իիմբի վրայ նոր պատեր բարձրացնենք: Մեր ծառի հզօր արմատներից մեկը հենց թերողահայրն է Խորենացին, որն ինքը «մահկանացու գոյնվ՝ անմահ զիրն երող յիշատակ»:

Խորիմյանն իր թերեցողուներին ծանորացնում է Խորենացու կյանքի գանազան փաստերին. Մեսրոպի նման նա ևս Տարոնցի է, բայց այլ զյուղից, Մաշտոցի ազգական: Հողվածում տրված են Խորենացու կյանքի տարրեր դրվագները. մանկությունը, ուսումնառությունը: Ապա դրանց հետևում են Խորիմյանի զնահատականները. քաջ պատմազիր, վկայ՝ «Հայոց պատմութիւնը», «հայր բանաստեղծից». վկամ՝ նրա զարմանալի շարականները, «երեւելի ճարտասան», արդինքը՝ «Հոփիսիմեանց հրաշագործ ճառը», «հմուտ աշխարհագիր», զարմացրել է նոյնիսկ եկլուպացի աշխարհագետներին իր հայտնած ճշգրիտ տեղեկությունների համար, քաջ երաժիշտ, անզուգական բարգմանիչ, մարգարե՝ «ընտրելագոյն մարգարելց»: Գուցէ այս զնահատականների հետ չհամաձայնվի այսօրվա ուսումնասիրողը, սակայն 1858-ին տրված այս արժեքավորումները Խորիմյանի խորը հարգանքի տուրքն է Հայոց պատմությանը և նրա նվիրյալներին, դրանց շարքում նաև Սահակ Բագրատոսունն և Սահակ Արծունուն, որոնք «յորդորանօք զրեաց զիրաշալին զայն պատմագրութիւն ցեղապետութեան հայոց, սկսեալ յարմատոյն մերոյ և հասոյց մինչեւ ցիր ժամանակն»⁶: Այս զնահատականները Խորիմյանը նրբորեն շաղաղված՝ են Խորենացու կյանքի գանազան իիշարժան փաստերով, իսկ հոդվածը վերջանում է իր ժամանակի հոգեորականներին ուղղված կոչով. «Ո՞հ, պաշտօնեայք Հայաստանեայց Սուրբ Եկեղեցւոյ, աղերս պաղատանաց արկանի ձեր առաջի՝ նմանող լինել զարմանալի վարուց Խորենան սուրբ՝ կրօնաւեր և ազգաւեր հօրս և մի սակս փոքր ընդդիմութեան բարձի թողի արարեալ կասեցուցանեք զբա-

⁶ «Արծոի Վասպուրական», 1858 թ., № 9, էջ 228:

նաւոր և զգրատոր սյաշտոն ձեր, որ ի պէտք շինութեան և հաստատութեան նկեղեցոյ Աստծուն է¹:»

Դավիթ Անհաղին նվիրված հոդվածն² սկսվում է Հայաստան երկրին նվիրված ձռնով և օրինությամբ, երկիր, որը սնել և զորացրել է այնպիսի դեմքերի, որոնք Անհաղ կոչում են ստացել հայրենիքից դուրս: Քացայատելով այդ կոշմանն արժանանալու շարժադիրը, հեղինակը դարձյալ տալիս է իր գնահատականը. «Հեղինարանութեան մէջ քաջ էր, ինչպէս որ յայտնի է, իսկ հայկաբանութեան մասին՝ առաւել. մանաւանդ Խաչի բարձրացուցէք իրաշախի ճառին մէջ, որն որ Գիտ կաքոյիկոսի խնդրանորը շարադրեց»³: Դավիթ Անհաղը մեծարվում է այն քանի համար, որ Հոնաստանում մեծ հարգանք ու փառք վայելելով, «զավ զիտցաւ յարգել իր սիրելի ազգն ու հայրենին... անոր համար չինուացաւ քնաւ անոր սիրուն հոդերէն և նորա լուսադրութեան համար անխոնց աշխատելեն և այն հայրենին հոդոյն վրայ իր մահկանացու կեանքը լրացունելով բարի մահուամբ առ հանուր երջանկացելոց պատկանիրն զնաց»⁴: Դավիթ Անհաղին վերաբերող այս խոսքերը մեծ հնչելություն ունեին և Խրիմյանի ժամանակ, և մանավանդ մեր օրենում: Դավիթ Անհաղի օրինակով Խրիմյանը հորդորում է իր ժամանակակիցներին, նաև հետնորդներին՝ չինուանալ Հայաստանից, ապրել և արարել այստեղ, մարառել նրա զորության համար և նրանով զորանալ, հայացը չինուացնել Արարատի «Չողջողուն կատարից», աստվածաշնչական լեռից, որ մեր ժողովրդի ու մեր երկրի խորհրդանիշն է: Խրիմյանի այդ շարքի բոլոր հոդվածները հետապնդում են մի նպատակ՝ վերականգնել հայոց մշակույթի ոսկենարի ավանդույթները, համառ և քրտնաշան աշխատանքով աճեցնել Նոր Դավիթներ: Դեսի ճառի արմատները և տաճ հիմքերը գնալու կոչով նա ցանկանում էր կամար կապել հայ Ոսկենարի և 19-րդ դարի գիտական մտքի միջև: Նա երազում էր տեսնել հայ «Հերշելներին և Լամարքիներին», հայ աշխարհական մտածողների ու գիտնականների: Վաղվա օրվա համար նա չէր խնայում իր ջանքն ու

եռանդը, վկան՝ նրա «Ժառանգաւորացը», իրատարակած «Արծիվ», նրա հոգու և մտքի արգասիք «արծովիկները»: Եվ երե այսօր, այդ հոդվածների լույս բննդայումից 150 տարի անց, մեսրոպյան ընթերցումների այս շարքում մեր սրտում ու հոգում արձագանք է տալիս նրա պատգանը, նշանակում է՝ Խրիմյանը հասել է իր նպատակին:

Հարագ տարեգիրք, 2002, էջ 3-11:

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՀՐԱՆՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

(Ծննդյան 75-ամյակի առթիվ)

Լրացավ ՀՀ ԳԱԱ իսկական անդամ, վաստակաշատ պատմաբան, պատմ. գիտ. դրկտոր, պրոֆեսոր, ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն Հրանտ Ավետիսյանի ծննդյան 75 և աշխատանքային-համարակական գործունեության 55 տարին:

Հ. Ավետիսյանը ծնվել է 1927 թ. մարտի 10-ին նախկին Ղարաբիլիսյանում (այժմ Վանաձոր) Կարսից գաղրած ավանդական հայ ընտանիքում:

1944-ին միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո նույն տարին էլ ընդունվեց Երևանի պետական Համալսարանի պատմության ֆակուլտետ, իր ապագա մասնագիտությունն ընտրելով հարազատ ժողովրդի պատմությունը: 1949-ին համալսարանն ավարտելուց հետո սկզբից անցավ կոմերիտական, ապա 1952-ից՝ կուսակցական աշխատանքի: Սակայն նրա հիմնական աշխատավայրը Գիտությունների ազգային ակադեմիան էր, որի հետ կապեց նա իր ողջ գիտակցական կյանքը: 1954-ից մինչև օրս, սկզբում տարբեր պաշտոններ վարելով ԳԱԱ նախագահության համակարգում, իսկ 1979-ից ստանձնելով ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրենի պատասխանատու գործը:

Գիտության մեջ նոր ուոր դրած Երիտասարդը հետազոտության թեմա դարձրեց 1918-1920 թվականները՝ մեր ժողովրդի պատմության բախտության տարիները: 1918-ին էր XX դ. մեր Ավարայրը, մեր ժողովրդի

¹ Նոյն տեղում, № 10, էջ 251-257:

² Նոյն տեղում:

³ Նոյն տեղում:

⁴ «Արծով Վասպուրական», 1858 թ., № 12, էջ 312:

գոյամարտը՝ Սարդարապատի, Ավարանի և Ղարաբիլիսայի հերոսամարտերը: Նոյեմբերի 1918-ին էր մեր ժողովրդի դարավոր իշխանացումը՝ հայ պետականության վերականգնումը, Առաջին Հանրապետության ծննդը: Հ. Ավետիսյանի թեկնածուական (1960 թ.) և դոկտորական (1966 թ.) ատենախոսությունները վերաբերում էին հենց այդ շրջանի Անդրկովկասի և Հայաստանի երիտասարդության պատմության ուսումնասիրությանը: Հայերեն և ոռուերեն հրատարակված մի շարք մենագրություններում, շրջանառության մեջ մտցնելով պատկառելի քանակի արխիվային փառքերազրեր, Ավետիսյանն ստեղծեց Անդրկովկասի երիտասարդական կազմակերպությունների կազմավորման լիակատար պատկերը, մոռացության մշուշից հանելով և ընթերցող լայն հասարակությանը ծանրացնելով հայրենանվեր գործիչների մի հոյակապ աստղարույի գործունեության մանրամասներին: ՈՒշագրավ է, որ այդ աշխատություններում հեղինակն օգտագործում է նաև Կոմինտերնի նյութերը:

Անցնում էին տարիները, իրենց հետ բերում խոհականություն, հավասարակշռված շափանիշներ, սակայն անփոխիս էր մնում հեղինակի հետաքրքրությունների և հետազոտությունների շրջանը: Ղարաբայյան շարժումը և դրան հաջորդող անցումային շրջանը Հ. Ավետիսյանին պարտադրեցին իրենց հրամայականը՝ սրափ հայացք մոտակա անցյալի պատմական դեպքերին և իրադարձություններին: Իրար էին հաջորդում զիտական պարբերականներում լույս տեսնող հոդվածները Մայիսյան հերոսամարտերի և դրանց մոռացված հերոսների, Լեռնային Ղարաբաղը Աղդրեցանին բռնակցելու և մեծ հետաքրքրություններ ներկայացնող այլ իրադարձությունների մասին: Սակայն զիտական հոդվածները նրան չբավարարեցին: 1993-ին ոռուերեն լույս տեսավ «Քրեստ-Լիտովսկ» ինչպես բռնակցվեցին Թուրքիային Կարսը, Արդահանը, Բարտմը» աշխատությունը: Արխիվային փաստառատ հենքի վրա ստեղծված այդ աշխատությունը մեր պատմության մոտակա անցյալի մշուշում խնամքով քողարկված «ասիտակ թերից» մեկի հմուտ լուսաբանումն է: Ժամանակի իրադարձությունների ֆոնի վրա վերակենդանանում է խորհրդային պատվիրակության անդամների դիվանագիտական անկարողությունը, երբ առաջին աշխարհամարտում պարտված թուրքիան իր

պահանջներն էր առաջարկում Խորհրդային Ռուսաստանի պատվիրակությանը: Խորհրդային պատմաբանները բազմիցս անդրադարձել էին Քրեստ-Լիտովսկի բանակցություններին, դրանց ընթացքը լուսաբանելու առ օր, ժամ առ ժամ, բայց երբեք չէին անդրադարձել մեր ժողովրդի համար այդքան ողբերգական և օրիսասական սյամանազրի հոդվածներին: Հրանտ Ավետիսյանն իր առաջ դրեց հենց այդ խնդիրը և կատարեց զերազանց: Քրեստ-Լիտովսկի բանակցությունների ուսումնափրությունը հեղինակի առաջ բացեց նոր հորիզոններ, ընդլայնվեցին նոր հետազոտության շառավիլիները: Գիտնականն ձեռնամուխ եղավ նոր աշխատության ստեղծման՝ «Հայկական հարցը 1918թ.» խորագրով, որը վերը նշված մենագրությունը դարձավ նոր հետազոտության մեկ գլուխը: Այս աշխատության մեջ Հայկական հարցը քննարկվեց ոչ միայն Քրեստ-Լիտովսկի, այլև Տրավիզոնի և Բարտմի բանակցություններում, բացահայտվեց Հայոց Ազգային խորհրդի և ՀՀ պատվիրակության գործունեությունը Քեռվիմում, Կ. Պոլսում, Վիեննայում և այդ հենոնայտքի վրա զնահատվեց Ռուսաստանի, Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի կառուվարությունների դիրքորոշումը Հայկական հարցի նկատմամբ: Աշխատության մեջ օգտագործված են Հայաստանի, Մոսկվայի, Վիեննայի և Բուլղարիայի արխիվների մեծ բանակությամբ նորահայտ և առաջին անգամ հեղինակի կողմից շրջանառության մեջ դրված փակերազրերը: Երկու աշխատություններն էլ արժանացան զիտական հասարակացնության բարձր գնահատականին: Բայց Ավետիսյանը չհանգստացավ: Նա զգում էր, որ պարտը ուներ կատարելու հարազատ ժողովրդի առաջ: 1998-ին լույս տեսավ մի նոր աշխատություն՝ «Հայոց ազգային միասնության հաղթանակը» խորագրով: Թվում էր, կարճ ժամանակ էր անցել նախորդ մենագրությունից և հենարափոր չէր զրել նոր աշխատություն: Բայց անգամ թուցիկ ծանրությունը ցույց է տալիս, որ հեղինակը դրա վրա աշխատել է շատ երկար: Երբեք ներածություն աշխատության մեջ ներկայացված է մի հետաքրքիր բաժին, որը ներկայացված է ուսական բանակում ծառայած հայ բարձրաստիճան զինվորականների մի հոյակապ փաղանգ: Նրանց թիվը բավական պատկառելի է: Շատերի անունները առաջին անգամ են հայտնի դառնում ոչ միայն ընթերցողին, այլև զիտական շրջանակներին: Գիրքը հայրենասիրության մի յուրահատուկ

դաս է մեր երիտասարդ սերնդին, հայկական քանակի կազմավորման գործընթացի քննարկումը՝ հայկական առանձին կորպուսից սկսած, մինչև մայիսյան հերոսամարտերը, հայոց ազգային քանակի և Առաջին Հանրապետուրյան ծնունդը:

Չընդիատվող աշխատանքը տարբեր արխիվներում, նոր փակերագրերի հայտնաբերումը, նոր մտահղացումների և հետազոտությունների սկիզբ դարձան: Պատմաբանը աշխատանքներ է սկսել նոր մենագրություն ստեղծելու ուղղությամբ: Ամենայն հավանականությամբ այն կլինի «Հայկական Հարցը 1919 թվին»:

Վաստակաշատ հորեցարը մենագրություններից բացի վերջին տարիներին հրատարակել է գիտական բազմաթիվ հոդվածներ, ուշագրավ և հետարքիր գեկուցումներով հանդես եկել միջազգային մի շարք գիտաժողովներում, աշխարհի գիտական հասարակության ուշադրությունը հրավիրել մեր ժողովրդի պատմության կնճոռու հիմնահարցերի վրա: Մայնի-Ֆրանկուրտում, Մադրիդում, Կալիֆոռնիայում, Տորինում, Սուլվայում, Թրիխիստում հնչել են Հրանտ Ավետիսյանի հետաքրքիր գեկուցումները հայ-գերմանական, հայ-խոսական, հայ-հունգարական, հայ-ռուսական, հայ-վրացական հարաբերությունների մասին՝ աշխույժ քննարկումներ և դրական արձագանքներ առաջացնելով: Այդ գեկուցումները և խիստ ուշագրավ հոդվածները («Կովկասյան տուն և համարքության նկրույնների հարցի շորջը», «Կովկասյան հանրապետությունների կոնֆելերացիայի գաղափարը 1918–1920 թթ.») լույս են տեսել առանձին ժողովածումներում. 1997-ին Սուլվայում, ուստերեն, 1998-ին Լոնդոնում, անգլերեն, Թրիխիստում և Բուլղարիայում դարձյալ ուստերեն: Այդ հոդվածները գիտնական-քաղաքացի Հրանտ Ավետիսյանին բնորոշ երևոյթներ են: Ամենուրեք, միջազգային գիտական բարձր ամրիոններում նա պաշտպանում է իր ժողովրդի դատը, շեշտում պատմական ճշմարտությունը:

Գիտահետազոտական աշխատանքին գուգահեռ Հրանտ Ավետիսյանը կատարում է եռանդուն մանկավարժական աշխատանք հանրապետության տարրեր բուհերում: Երկար տարիներ նա հայ ժողովրդի պատմություն է դասավանդել և շարունակում է իր հայրենանվեր առաքելությունը Երևանի պետական համալսարանում ու Հրաշյա Աճառյանի

անվան համալսարանում: Հանրապետության ակնառու պատմաբաններից շատերը նրան համարում են իրենց ուսուցիչը, բարձր գնահատում նրա հոգատար հայրական վերաբերմունքը երիտասարդ ուսանողների, նաև հայ ժողովրդի պատմությունը իրենց մասնագիտությունը դարձրած, գիտության մեջ առաջին բայլերն անող ասպիրանտների նկատմամբ:

Խիստ թերի կլիներ Հրանտ Ավետիսյանի՝ բաղաքացու և գիտնականի դիմապատկերը, եթե գեր հպանցիկ չնշվեր այն պատկառելի աշխատանքը, որ կատարել և շարունակում է կատարել նա 1979-ից ի վեր մինչև օրս իրը ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն: Անցումային այս ծանր շրջանում, երբ ակադեմիական համակարգի ինստիտուտներից շատերը ճգնաժամ են ապրում, իր տնօրենի գործադրած անդուլ ջանքերի շնորհիվ պատմության ինստիտուտն ապրում է խաղաղ ստեղծագործական կյանքով, համարվում երիտասարդ գիտաշխատողներով: Ինստիտուտի գիտաշխատողների հեղինակությամբ հրատարակվում են բազմաթիվ ուսումնասիրություններ: Այսօր ինստիտուտում աշխատում են ԳԱԱ 8 խիստական անդամ, պատմագիտության 34 դրկտոր և 49 թեկնածու: Ինստիտուտի կողեւութիւնը մեծ ներդրում ունեցավ հայ ժողովրդի պատմության դպրոցական դասագրքի 4 ճասերի ստեղծման գործում: Ինստիտուտի բազմաթիվ գիտաշխատողներ եռանդուն մասնակցեցին Զքիստուներթյունը Հայաստանում պետական կրոն հոչակելու 1700-ամյակին նվիրված միջազգային և հայաստանյան գիտաժողովներին: Շատ գիտաշխատողներ շարունակում են աջակցել և մասնակցել Օշականի դպրատանն անցկացվող ամենամյա Մաշտոցյան ընթերցումներին: Տնօրենի համար և հետևողական աշխատանքի շնորհիվ ինստիտուտում տիրում է ստեղծագործական մրնուրտ: Չնայած 75-ամյա տարիքին, Հրանտ Ավետիսյանը լի է եռանդուկ և իր օրինակով վարակում է բոլորին: Նրա մեջ միահյուսվել են Մարդը, տաղանդավոր գիտականը, գիտության հմուտ կազմակերպիչը և բաղաքացին: Նրա բնափորության մեջ խիստ ներդաշնակությամբ համատեղվում են ծնողներից ժառանգած կարսեցու խառությունը, համառությունը և պահանջկուտությունը՝ լունցու անհուն բարության և լիրիկական հոգու հետ: Նա մի պատկառելի գիտական կողեւութիւնը նահապեսն է, դեկան և պատասխանատվության մեծ զգացումով՝ օրինակ բոլորի համար:

Հանկանք մեր հոբելյարին երկար տարիների կյանք, առողջություն, կանաչ ճանապարհ և անամայ երկինք, բեղուն գրիչ, նոր աշխատություններ և հողվածներ ի փառ մեր ժողովրդի:

Պատմա-քանասիրական հանդես, 2002, № 1, էջ 286–290:

ՄԱՐԳՈՒ ՍԻՒԹԱՐՅԱՆ. ԽՈՐԵՆ ԱՏԵՓԱՆԵՒԻ «ՀԱՅԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ» ԱՍՍԱԳԻՐԸ

Հայ ժողովրդի և մամուլի պատմության XIX դ. ուսումնասիրողները և ընթերցող հասարակայնությունը լավ նվեր ստացան: Հրատարակվել է մամուլի սլատմության հմուտ գիտակ, պատմաբան-քանասեր Մարգու Մխիթարյանի (1920–2001) աշխատությունը՝ նվիրված Խորեն Ստեփանեի «Հայկական աշխարհ» ամսագրի պատմությանը: Լուսաբանվեց հայ մամուլի պատմության ևս մի սպիտակ բիծ: Մասնագետների, առավել ևս սակավարիվ ընթերցողների է հայտնի Ստեփանեի անունը և նրա բողած ավանդը հայ մամուլի պատմության մեջ: Մ. Մխիթարյանի փոքրածավալ գիրքն ընթերցողին փոխադրում է պատմական մի ժամանակաշրջան, երբ ժողովրդի և ազգի նվիրյալները սակավ էին (ինչպես բոլոր ժամանակներում), իսկ խոսան դաշտն սպասում էր իր հերկողներին:

Հետինակն օգտագործել է մեծաքանակ գիտական գրականություն, բազմարիվ արխիվային փակերագրեր (Մատենադարանի արխիվի Կարողիկոսական դիվանի տարբեր թղթապանակների գանազան փաստաթրեր, գրականության և արվեստի քանօպարանի Ստեփանեի ֆոնդն ամբողջությամբ, Վրացական պետական պատմական արխիվի փաստաթրեր), ժամանակի հարուստ մամուլը և ստեղծել է մի աշխատություն, որն ընթերցվում է մեծ հետաքրքրությամբ: Իրեն հատուկ գիտական զգացումով Մ. Մխիթարյանը բննարկում է իր առաջ դրված խնդիրը:

Փորրածավալ այս գիրքը բաղկացած է ներածությունից. չորս գլուխներից և անձնանունների ցանկից:

Առաջին գլուխը նվիրված է Ստեփանեի կյանքի և լրագրային գործունեության լուսաբանմանը: Ալիքարյանին բնորոշ է հարցը բննարկել ժամանակի դեպքերի և դեմքերի լայն հենքի վրա: Տրված է Ստեփանեի միջավայրը և Մուկվայում ուսանելու տարրիներին, և Թիֆլիսում, աշխատանքային գործունեության սկզբին, ապա Շուշլում, Էջմիածնում և այլ վայրերում:

Արեմտահայ արմատներով (պասլր Կոստանդնուպոլիսից էր), 1840 թ. Թիֆլիսում ծնված Ստեփանեն նախնական կրթությունը Ներսիսյան դպրոցում ստանալուց հետո տեղափոխվում է Մոսկվա, որտեղ 1858 թ. ավարտում է Լազարյան ճեմարանի դասարանական բաժինը: Դրան հաջորդում է Մոսկվայի համալսարանի պատմա-լեզվական ֆակուլտետը: Մխիթարյանը սպասությունում է տվել Մոսկվայում սովորող հայ ուսանող երիտասարդության կաղմակերպած ժողովներին, որտեղ նրանք վիճաբանում էին ազգային որորտներին վերաբերող տարրեր հարցերի շուրջ: Այդ ժամանակ էլ հենց դրանուրվում են երիտասարդ Ստեփանեի գրական հակումները. այդ ժողովների ընթացքում նա կարդում է իր բանաստեղծությունները իշխան Բագրատունի ստորագրությամբ: Նրա շրջապատը և անձամբ ինքը կապված էին «Հյուսիսավայրի» առանձնապես դրա խմբագրի հետ, գտնվում էին նրա գաղափարական ազդեցության տակ: Ստեփանեն 60-ականների սերնդից էր՝ ազգին ծառայելու իր գաղափարներով և գործունեության ծրագրերով:

Մուսկակացումներն իրականացնելու ջերմ ցանկությամբ, 1862-ին նա վերադառնում է Թիֆլիս, մշակութային այդ կենտրոնում, կրթության իր առաջին օրբանում՝ Ներսիսյան դպրոցում աշխատելու ջերմ փափագով: Մակայն դրա նրան չի հաջողվում: Ակավում է Ստեփանեի մանկավարժական գործունեությունը տարբեր դպրոցներում. Թիֆլիսի արական գիմնազիա, Ար. Նունեի օրինրդաց ինստիտուտ, ուղղմական դպրոց:

Ուսուցչական ասպարեզում դրսուրած առաջադիմական գաղափարների համար նա հեռացվում է պետական ծառայությունից: Ժողովրդի լուսավորության գործին ծառայելու անհագուրդ գգոտումը նրան ստիպում է սեփական ոժերով իրականացնել իր ծրագիրը: Իր տանը նա

հիմնում է գիշերօրիկ դպրոց, ապա Մարիամյան օրիորդաց դպրոցը (1868 թ.), մեկ տարի անց՝ նրա մասնաճյուղը, Հավլարարի առաջին երկու վարժարանը: Նշված դպրոցներում նաև կատարում էր տեսչի պարտականությունները: Սակայն սուկ մանկավարժությունը չէր բավարարում Ստեփանեին: Ըստ նրա, իր գործունեության լայն ծրագիրը կարող էր իրականանալ միայն ամսագրի հրատարակությամբ: Քանի որ շատ դժվար էր հրատարակության բույլսկություն ստանալը, Ստեփանեն համաձայնության եկավ Մարկոս Աղաքելյանի արդեն դադարած «Կոռունկ հայոց աշխարհի» ամսագրի հրատարակիչ Համբարձում Ենթաճյանի հետ՝ պարբերականը նոր ծրագրով հրատարակելու համար: 1865 թ. լույս է տեսնում նոր «Հայկական աշխարհի կոռնկը»: Ստեփանեն իր հիմնական նպատակը համարում էր զիտուրյան լույսը ժողովրդի մեջ տարածելը, այն համարելով «ազգովիճ նորոգվելու միակ միջոցը»: Ելեւով այդ դրույթից նա ցանկանում էր ամսագիրը հրատարակել 5 բաժնով. գրականություն, մանկավարժություն, քննադատություն և մատենագիտություն, հասարակական լյաճը, մանրապուրերը: Բաժինների խորագրերի անվանումն արդեն բացահայտում է խմբագրի գործունեության լայն ընդգրկումը: Ամսագրի և խմբագրի համար կարեոր էր, որ հաջողվում է ստանալ բույլսկություն և հրատարակել ամսագիրը «Հայկական աշխարհ» անվանումով: Տարբեր պատճառներով փոխվում է ամսագրի հրատարակության վայրը. Թիֆլիս, Շուշի, Գանձակ, Էջմիածին, Բարձ:

Սլսիրարյանը հանգամանալից քննության է ենթարկում այն պատճառները, որոնք ստիպում են հայրենանվեր մտավորականին գործել պայմաններում: Զարմացնում է խմբագրի ծանր և հասրերատար աշխատանքը Շուշիում, որտեղից նա Թիֆլիսի գրաքննական կոմիտեին էր ուղարկում պատրաստի ամսագիրը, սպասում հրատարակության բույլսկություն ստանալուն, ապա ետ ուղարկած տպում կամ Շուշիում,

1871 թ. Ստեփանեն ընդունում է հոգեոր կոչում, ձեռնադրվում սկզբում սարկավագ, ապա՝ վարդապետ: Նրա համոզմութով ազգի փրկությունը կապված էր երկու կարեոր գործուների՝ դայրոցի և եկեղեցու հետ: Եվ իր կարճատև կյանքի ընթացքում նա հավատով փարզեց այդ գաղափարին, անվարան ծառայեց այդ երկու հաստատություններին:

Նրա սկզբունքային և ուղղամիտ պահիվածքը, անկաշատ և քննադատական վերաբերմունքը հասարակական, մշակուրային և նույնիսկ հոգեոր գործիների նկատմամբ, իր դեմ հարուցեցին տարրեր անձնափրությունների անվատահությունը: Սլսիրարյանը փաստերով ցույց է տալիս, թե ինչպես, գործունեության դեռ առաջին տարիներից, նրա շորջն ստեղծվել է լարված մքնորորտ և փոխարքայությունն ի դեմս Ստեփանեի, տեսնում է առաջադիմական գաղափարների տեր մի վտանգավոր գործը:

1880-ին Ստեփանեն գործուղվում է արտասահման՝ Գերմանիա, Ավստրիա, Ֆրանսիա՝ Գերմանիան ճեմարանում մանկավարժություն դասավանդելու պատրաստվածություն ստանալու նպատակով: 14 ամիս Եվրոպայում մանկավարժություն ուսումնասիրելուց հետո, երբ վերադարձնում է Էջմիածին, հակառակ տրամարանության, նրան ուղարկում, ավելի շուտ արտորում են Նոր-Նախիջևանի մոտ գտնվող Սուրբ Խաչ վանքը: Աստրախան, Վլայլիկավիլազ, Ախարքալար ու Ախացխա, ապա Մոսկվա ու Պետերբուրգ, բոլոր վայրերում նվիրյալ մանկավարժ և կազմակերպիչ, սակայն Ներքին գործերի նախարարության անվատահությանն արժանացած մի գործից, որին հաստոկ հրահանգով կանչում են Էջմիածին և դարձյալ մեկուսացնում Սուրբ Խաչում: Հայ մտավորականներն ուղիներ են որոնում նրան վերտին մանկավարժական գործունեության վերադարձելու համար: Գործառնական քայլեր են կատարում նոյնիսկ արևմտահայ մտավորականները: Վերջապես 1893-ին նորընտիր կարողիկոս Ակրտիչ Խրիմյանն Էջմիածին ուղևորվելու ճանապարհին հանդիպում է Ստեփանեին և նրան իր հետ տանում Սայր Արոն, որտեղ 1894-ին ձեռնադրում է եպիսկոպոս, իսկ 1895 թ. նշանակում Աստրախանի թեմի առաջնորդական փոխանորդ:

Դեռ նոր էր սկսել իր բեղմնավոր մանկավարժական գործունեությունը, երբ դարձյալ միջամտում է Ներքին գործերի նախարարությունը, արգելելով վեհափառ հայրավետին Ստեփանեին հաստատել թեմի հոգեոր առաջնորդ: Նա դարձյալ մեկուսանում է Սուրբ Խաչ վանքում: Կարողիկոսը հույս ուներ նրան ուղարկել Անգլիա կամ ԱՄՆ, որպես հոգեոր առաջնորդ, ինչը փափագում էին այդ գաղթօջախների հայ համայնքները: Դարավերջին, երբ ցարական կառավարությունը փակել էր

հայկական դպրոցները, նրան թույլատրում են վերադառնալ Էջմիածին։ Քայլ ճանապարհին, Թիֆլիսում, 1900 թ. Նոյեմբերի 14-ին, իր մահկանացուն է կնքում Ստեփանեն և քաղվում այդտեղ։ Իր ողջ խնայողությունները նա կտակել էր ազգի լուսավորության սուրբ գործին, ինչին անմնացորդ նվիրեց իր կյանքը։

Աշխատության երկրորդ գլուխը ժամանակաշրջանի հասարակական-քաղաքական կյանքի իրադարձությունների հենքի վրա քննարկվում է «Հայկական աշխարհ» ամսագրի կատարած դերը, բացահայտվում նրա կապը «Հյուսիսավայրի» նազարյանական թիվ հետ, նալբանդյանական հայացքները չընդունելը, որոշակի շրջադարձը դեպի ազգային-պահպանողականները, մանավանդ դեպի Գարրիել Այվազովսկին։ Բացահայտված և վերլուծված է Ստեփանենի վարած երկդիմի քաղաքականությունը, որի պատճառով նրան հարվածում էին երկու կողմից. ցառական կառավարությունը նրա մեջ նկատում էր ըմբռաստության նկարագիր ունեցող մարդու, իսկ բարձր հոգեորականությունը նրա գործունեության մեջ՝ դրական ազդեցությունը։ Վերջինս Եվրոպայում ուսանելու տարիներին ամսագրին ուղարկած 35 հոդվածներում և թղթակցություններում քննարկում է հայ իրականության համար կենսական նշանակություն ունեցող հարցեր։ Իրավացի է Սլիքարյանը, երբ մինչև «Մշակ» իրատարակությունը «Հայկական աշխարհ» համարում է նշանակալից երևոյթ և կովկասահայ իրականության հավաստի սկզբնաղյուր։

Երրորդ գլուխը ներկայացնում է «Հայկական աշխարհն» իրեն մանկավարժական օրգան։ Եվ քանի որ մանկավարժական հոդվածների մեծ մասը գրել է խմբագիրը, հեղինակը փաստորեն քննարկում է նրա մանկավարժական հայացքներն ու գործունեությունը։ Դրանց մեջ ընդգծվում է երևոյթների պատճառները մեկնարաններու կարողությունը, ինչ դպրոցների հակամանկավարժական մերողներին հակադրվելը։ Ստեփանեն հենվում է առաջադեմ մանկավարժներ Լայրնիցի, Ռուսյի, Բելինսկու, Դորրոլյուրովի, Պիսարևի մանկավարժական հայացքների վրա և դրանցով նա միաժամանակ ներկայացնում է առաջադեմ մանկավարժական միտքը։

Չորրորդ գլուխը նվիրված է «Հայկական աշխարհում» լույս տեսած գեղարվեստական գրականության քննարկմանը։ Ընդգծելով ազգային

գրականություն ստեղծելու անհրաժեշտությունը, Ստեփանեն դրա ակնառու օրինակներից է համարում «Վերը Հայաստանին» և «Սոս ու Վարդիթերը» և գտնում, որ դրանց մեջ զգացվում է «ազգային և մարդկային շնչառությունը»։ Խմբագիրը քննարկում է նաև ժամանակի գրական լեզվի առանձնահատկությունները և բացահայտում նրա կապը հասարակական կյանքի հետ։ Ժողովրդի գրական ճաշակը բարձրացնելու նկատառումով խմբագիրն իր ընթերցողներին ծանոթացնում է համաշխարհային գրականության արժեքների հետ, ապա լույս ընծայում ժամանակի գրողների տարրեր ստեղծագործություններ։ Սլիքարյանը քննարկում է դրանք, զնահատում և բացահայտում խմբագրի՝ այդ ստեղծագործությունները իրատարակելու նպատակները, բացատրում խմբագրի սկզբունքայնությամբ, ժողովրդի լուսավորության և երջանկության գործին անվերապահորեն ծառայելու հաստատակամությամբ։ Հեղինակը բարձր է զնահատում Ստեփանենի անգնահատելի՝ գործը՝ Խորենացու «Հայոց պատմություն» աշխատության աշխարհաբար թարգմանությունը կատարելը և իրատարակության դժվարին գործն իրականացնելը։ Սլիքարյանն արժեորում է «Հայկական աշխարհ» ամսագրի և դրա անդադարում խմբագիր Խորեն Ստեփանենի կատարած շնորհակալ աշխատանքը, այն համարում հայ մամուլի պատմության ընդհանուր շղթայի օդակներից մեկը, որն ապահովել է նրա զարգացման ընթացքը։

Աշխատությունը կարդացվում է մեծ հետաքրքրությամբ։ Ընթերցողներն ըստ արժանակույն կգնահատեն այս գիրքը, որն արժեորելու և ներկայացնելու փորձ է այս գրախոսությունը։ Ընդրիականությամբ ընզգգծում ենք գիտմականի որդու՝ Վարուժան Պողոսյանի՝ մորք վայել մանրակրթելիտ, թավանողիր և պատասխանատվության բարձր զգացումով կատարած աշխատանքը՝ գիրքը խմբագրելու և իրատարակության պատրատելու ուղղությամբ։

Պատմա-քանասիրական հանդես 2003, № 2, էջ 302–306։

**1903 թ. ՀՈՒՆԻՍԻ 12-Ի ՑԱՐԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ՝
ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԾԱՐԺԱԿԱՆ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ
ԲՈՆԱԳՐԱՎԱՍՆ ՕՐԵՆՔԸ ԵՎ
ՀԱՍԱԺՈՂՎՐԴԱԿԱՆ ԸՆԴՎՉՈՒՄԸ**

2003 թ. հունիսին լրացավ ցարական կառավարության կողմից բնակչության շարժական և անշարժ գույքի բռնագրավման օրենքի հարյուր տարին: Հայոց եկեղեցուն, առավելապես հայ ճշակոյթին հասցված այդ հարվածն ուներ իր նախապատմությունը: Հայ ժողովունիքի ազգային-ազատագրական շարժումներն անհանգստություն էին առաջացնում ոչ միայն սուլթանական թուրքիայի պետական գործիչների, այլև ցարական բարձրաստիճան պաշտոնյաների մոտ: 1890-ականների վերջին առավել ընդգծվեց ցարիզի հակահայկական բաղարականությունը: Շարունակում է Մակար կարողիկոսի օրոք սկսված պետական հալածանքը հայկական դպրոցների նկատմամբ: Ցարական բյուջեատիվային խիստ անհանգստացնում էր, որ հայ եկեղեցական ծխական դպրոցները ազգային գիտակցության արմատավորողներն են, հայկական «սեփարատիզմի և հեղափոխության» օջախները:

Անհրաժեշտ էր կասեցնել հայկական դպրոցների գործունեությունը: Միջոցառումը ծագեց Կովկասի բաղարացիական մասի կառավարական Շերեմետևը, որը 1895 թ. առաջարկություններ ներկայացրեց արքունիքին՝ հայկական դպրոցները Էջմիածնի (իմա՝ Հայ Եկեղեցու) ենթակայությունից հանելու և Կովկասի ուսումնական վարչության տնօրինությանը հանձնելու մասին¹: Շերեմետևի առաջարկությունն ընդունվեց Վերապահությամբ. այն հայկական դպրոցները, որոնք պահպան եկեղեցու ծախսերով, հանձնել Կովկասի ուսումնական մասի վարչությանը: Կառավարչապետի օգնական Տատիչչեր տեղեկացրեց կարտիկոսին, որ ըստ իրենց տեղեկությունների «... Հայկական դպրոցների մեծամասնությունը պահպան են... հասարակական հանգանակությունների, բարեգործական ընկերությունների նպաստների և այլ

¹ Վ. Երկանյան, Պայքար հայկական նոր դպրոցի համար Անդրկովկասում, Երևան, 1970, էջ 198:

աղբյուրների հաշվին²: «Արարատ» ամսագիրը հաղորդում էր ընթերցողներին, թե ոստիկանության հավաքած տեղեկությունների համաձայն նորին վեհավիառության առաջարկել են 168 դպրոց հանձնել Կովկասյան ուսումնական վարչությանը: Այդ ցուցակի մեջ էին նոցվում նաև այնպիսի դպրոցներ, որոնք պահպան էին բացառապես եկեղեցու միջոցներով, նույնիսկ Վաղարշապատի ծխական դպրոցը³: Քանի որ այդ բոլոր դպրոցները գտնվում էին հայ եկեղեցուն պատկանող շենքերում, Խրիմյանը դրանք համարում էր եկեղեցական դպրոցներ և դիմումներ էր հոդում ներքին գործերի նախարար Գորեմիկինին⁴: Մինչ կստացվեր կաթողիկոսի դիմումների պատասխանը, տեղերի ոստիկանական վարչությունները Փակում էին բաղմարիվ այլ դպրոցներ: Երբեք պատասխան բայց կարողիկոսը պատվիրում է թեմերին ոչ մի դպրոց չհանձնել ուսումնական վարչությանը և ճշգրիտ տվյալներ հավաքել փակված դպրոցներին պատկանող գույքերի ու այլ դպրոցների գոյության միջոցների մասին:

Կարողիկոսի բանակցությունները օտար դավանությունների դեպքարտամենտի ղիբեկտոր Մոսարմի հետ արդյունք չտվին. փակված դպրոցները նոր ուսումնական տարրում չքացվեցին: Հակահայկական հալածանքներն առավելապես խստացան, երբ Կովկասի կառավարչապետ դարձավ իշխան Գոյիցինը: 1897 թ. սեպտեմբերից գրաբնության գալաջապիկի մեջ հայտնվեց կարողիկոսի պաշտոնական օրգան «Արարատ» ամսագիրը⁵, որի էջերից անհետացան արևմտահայության ողբերգական կացության, ինքնապաշտպանական մարտերի վերաբերյալ հոդվածները:

1897 թ. հունիսի 2-ին Նիկոլայ Ա-ր հաստատեց Պետական խորհրդի որոշումը՝ հայկական եկեղեցական դպրոցները ժողովրդական լուսավորության նախարարության տնօրինությանը հանձնելու մասին⁶: Դրանով հայկական դպրոցները կորցնում էին իրենց ազգային դիմագիծը,

¹ՀՀԿԹՊԱ, ֆ. 56, գ. 3, գ. 1999, թ. 14:

²Արարատ, 1896, № 1, էջ 39-40:

³Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. գ, Երևանդ 1927, էջ 5157:

⁴Ե. Կոստանդյան, Ալյոսի Խրիմյան. հասարակական-բաղարական գործունեություն, Երևան, 2000, էջ 397:

⁵Վ. Երկանյան, նշվ. աշխ., էջ 207, Մ. Օրմանյան, նշվ. աշխ., էջ 5156:

որովհետև հայերն էին դասավանդվելու միայն կրոնն ու հայոց լեզուն, իսկ մնացած առարկաները դասավանդվելու էին ոուսերեն: Կարողիկոսը ոչ մի կարգադրություն չարեց այդ ուղղությամբ, տեղերի հայկական դպրոցների դեկաֆարները տվին խոսափողական պատասխան: Մինչ շարունակվում էին բանակցությունները, դեռ տարին շրացած Գոյիցինը դիմեց ներքին գործերի նախարարին՝ բույլտվորյուն ստանալու հայկական դպրոցների գույքը գրավելու համար: 1898 թ. մարտի 17-ին Սինհատրների Կոմիտեն քննարկեց հարցը և դրական որոշումով ներկայացրեց ցարին, նրա հավանությունն ստանալու համար: Նիկոլայ Ա-ը մարտի 26-ին հաստատեց այդ առաջարկությունը՝ հայկական դպրոցների գույքը Կովկասի ուսումնական վարչության տնօրինությանը հանձնելու մասին: Այդ որոշումով ցարիզմը ուսնագործություն կատարեց իր կողմից սրբազրծված մասնավոր սեփականության անձեռնմխելիության օրենքի դեմ: Սակայն գործը դրանով չափարտվեց. ուսումնական վարչությունը կարողիկոսից պահանջեց նոր կանոնադրություն մշակել հոգևորականներ պատրաստելու համար բաց մնացած հայկական դպրոցների՝ Սայր Աքորի ճեմարանի և Ներսիսյան հոգևոր դպրոցի համար: Իր մշակած նոր նախագծում Խրիմյանն ապացուցում էր հայոց պատմության դասավանդման անհրաժեշտությունը բոլոր տիպի դպրոցներում: Ըստ կարողիկոսի՝ պատմության դասերով հայ աշակերտները և ուսանողները կոնենան զիտակցված ուսուական կողմնորոշում, քանի որ հենց Ուսաստանն է վերջ դրել «հայերի դարավոր տաճաճներին, որոնց մասին գրույցները կազմում են Հայաստանի ամբողջ պատմությունը»¹:

Դպրոցական գույքի գրավումը ոստիկանական տեղական պաշտոնյաներին հեշտությամբ չհաջողվեց: Հուսահատված կարողիկոսն ու մի շարք նվիրյալ հոգևորականներ աստիճանաբար շտկեցին իրենց ողնաշարը. նկեղեցիներն սկսեցին հրաժարվել իրենց իրավասությունից դրուս եկած դպրոցներին ֆինանսավորելուց: Կարողիկոսի հրամանով տեղական դպրոցների հոգարարձուները հրաժարվում էին իրենց գույքը հանձնել Կովկասի ուսումնական վարչությանը: Նրանք վարձում էին հմուտ իրավաբաններ, հայց էին ներկայացնում Կովկասի ուսումնական

վարչությանը և պաշտպանում սեփականության իրենց իրավունքը: Սկսված ձգձգվող դատավարությունների բնրացրում շահում էր մեծ մասամբ Հայ եկեղեցին²: Փաստորեն, 1898 թ. մարտի 26-ի որոշումը ցարական բյուրոկրատիստային շիասցրեց որևէ դրական արդյունքի: Ցարական պետական ապարատը գտավ ելքը:

1899-ի մարտին նոյեմբեր Գոյիցինը գաղտնի գեկուցագիր ներկայացրեց կառավարությանը Հայ եկեղեցու ողջ ունեցվածքը բռնազրավելու մասին. դրան կցված էր նաև նախագիծը: Սինհատրներից ումանք՝ Ֆինանսների մինիստր Վիտտեն և արտարին գործոց նախարար Մուրավյովը տվեցին բացասական պատասխան: Վիտտեն գտնում էր, որ ուսնագործությունը Հայ եկեղեցու շարժական և անշարժ գույքի նկատմամբ անհարկի հոգումներ կառաջացնի ողջ աշխարհի հայության մեջ: Իսկ Մուրավյովը երկու նամակներով ապացուցեց նման ձեռնարկի անպատճենությունը³:

1900 թ. մայիսին կայացած հասուկ կրոմիտեի նիստում բննարկվեց Հայ եկեղեցու ունեցվածքի բռնազրավման հարցը: Հաշվի առնելով թերու ու դեմ կարծիքները հասուկ կրոմիտեն անժամանակ համարեց Հայ եկեղեցու գույքի բռնազրավումը, հետաձգելով այն պատեհ առիթի³: Ցարական բյուրոկրատիստային խիստ գաղտնապահությունը չխանգարեց, որ Հայ եկեղեցու դեմ նախապատրիաստվող հարվածի մասին հայտնի դառնա ողջ հանրությանը:

Գոյիցինը ցանկանում էր արագացնել որոշման ընդունումը, որպեսզի հայ ժողովուրդն ու եկեղեցին անպատրաստ լինեն դիմադրությանը: Խրիմյանը ձեռնարկեց մի շարք միջոցառումներ վերահս վտանգից խուսափելու համար: Նա ստեղծեց հասուկ հանձնաժողով ծխական կանոնադրություն կազմելու նախառակով: Հանձնաժողովն օգտագործեց տարբեր կանոնադրություններ՝ «Պոլոժենիե»-ն, թեմական և ծխական ուսումնարանների կանոնադրությունը, Պետերբուրգի և Մոսկվայի եկեղեցապատկան ունեցվածքների կառավարման կանոնադրությունը և մշակեց մի նոր կանոնադրություն, որը «արձանագրում է տիրող կար-

¹ «Արարատ», 1902 թ., № Գ-Դ, էջ 249:

² Հ. Կոսահանյան, նշվ. աշխ., էջ 404:

³ Նոյյն տեղում:

¹ Վ. Երկանյան, նշվ. աշխ., էջ 211:

գերի և զոռուած ամենայն հաւատարիմ ոգույ նախնաւանդ կարգաց և կանոնաց Սուրբ Եկեղեցոյ մերոյ, որ ժողովրդականութեան ողին է»: (Մ. Խրիմյանի կոնդակի խօսքերը):

1902 թ. մարտ-ապրիլ ամիսներին իրատարակվեց նոր կանոնադրության նախագիծը¹, որը քննարկվելուց և վերամշակվելուց հետո պիտք է ներկայացվեր կարողիկոսի հաստատությանը: Այդ իրատարակությունների ընթացքը: Գոյիցինն ահազանգեց մայրաքաղաք, բողոքելով, որ նախագիծը շրջանցում է բարձրագույն կանոնադրությունը և հայ ժողովրդի տարրական կրթության գործը հանձնում հոգերականությանն ու մտավորականությանը: Ներքին գործերի նախարար Պլեվեն սատարեց Գոյիցինին և երկոսի սաղրանքով 1903 թ. հունիսի 12-ին Նիկոլյա Ա-ն ստորագրեց նոր օրենքը հայ եկեղեցու ողջ գույքի բռնազրակինան մասին: Այդ օրենքն ամբողջությամբ ուղղված էր հայ ժողովրդի և նրա մշակույթի դեմ: Դա մի արտակարգ պատմամիջոց էր մի ժողովրդի նկատմամբ, որի միակ պաշտոնական ներկայացուցիչը փաստորեն եկեղեցին էր. եթե վերջինն հնազանդվեր ու դառնար կամակատար, ապա ցարական բյուրոկրատիայի կարծիքով ժողովուրդը կրիմազրկվեր և ոչինչ անել այլև չէր կարող: Գոյավելով եկեղեցու ունեցվածքը և դրա փոխարեն հոգերականությանը տալով նյութական փոխառուցում, ցարիզմը նրան ցանկանում էր դնել «ավտական նպաստ ստացող պաշտոնեաւթյան վիճակում»²: Կարողիկոսի կարգադրությամբ այդ իրամանը շիրապարակվեց հայ մամուլում: Միայն պաշտոնական «Կավկազ»-ը տպեց բարձրագույն իրամանը: Հայոց Հայրապետը իր կարգադրությունը բացատրեց ցարին հանդիպելու և նրա հետ այդ հարցերը քննարկելու միտումով: Պլեվեն հեռագրեց Խրիմյանին, որ իրամանի իրազործման հապաղումը ցարի կողմից կրիտիկ իրքը անհնազանդություն: «Արարատ»-ի օգոստոս-սեպտեմբեր 12-ի օրենքը հայերեն և ռուսերեն³: Դրա հետ միասին 1903 թ. հունիսի 30-ի ամսարկով լոյս տեսալ Պլեվենի իրամանը «Կանոններ Հայ Լուսա-

փորչական Եկեղեցու կալվածքները և դրամագուխները պատշաճավոր մինխատրությունների տեսչությանը հսկնելու կարգի մասին»: Օգոստոս և սեպտեմբեր ամիսներին Պլեվեն երկու անգամ հատուկ գրությամբ դիմեց կարողիկոսին, պահանջելով օրենքի անհապաղ գործադրությունը և մերժելով իր միջնորդությունը ցարի մոտ կարողիկոսի հանդիպման համար⁴: Այդ ընթացքում լոյս չտևան կարողիկոսական պաշտոնական օրգանի՝ «Արարատ»-ի հոկտեմբեր, նոյեմբեր, դեկտեմբեր ամիսների համարները:

Օրենքը հանրությանը հայտնի դառնալուց հետո հայ հասարակության մեջ սկսվեց ընդվզումների և հուգումների երկարատև ընթացք: Տարեային ժողովրդական շարժումը ովելուց հայ հոգերականությանն ու նրա հայրապետին: Աշխարհի տարբեր վայրերից Մայր Արո կին հասնում մեծաքանակ ստորագրություններով բազմաթիվ հանրագրեր: Բոլորը պահանջում էին կարողիկոսից չենքարկվել կայսերական իրամանին:

Առաջին ազգանշանը տվեց Ալեքսանդրապոլը. հունիսի 29-ին, եթե ծերունազարդ հովվապետը Գոյիցինի հետ բանակցելուց հետո Թիֆլիսից Ալեքսանդրապոլի վրայով վերադառնում էր Էջմիածին, հնչեցին քաղաքի եկեղեցիների գանգերը, փակլեցին բոլոր խանութները. առաջնորդարանի դրանք հավաքված բազմահազար ժողովուրդը, որ սպասում էր կարողիկոսի դուրս գալուն, նրան տեսնելուն պես իրարանցման մեջ ընկալվ: Բոլորը գոչում էին. «Հայրիկ, մի հանձնիր կալվածքները, մերժիր, բոլորիր, մի փատուիր, մենք քեզ հետ ենք...»: Կարողիկոսական կառը շրջապատած ամբոխը ուղեցւեց նրան մինչև կայարան, անընդհատ վանկարկելով՝ բողոքիր, բողոքիր: ճանապարհին զավառապետի օգնականը փորձեց բարձրանալ հայրապետի կառը, ժողովուրդը նրան բույլ չտվեց՝ «աղտոտներուն տեղը չէ»: Գրգուած ամբոխը կայարանում քանի նետուց ժամանակների վրա»⁵:

Ցոյցի լուրը տարածվեց ողջ Երկրու մեկ: Այդ տարերային շարժումը կազմակերպված կերպարանը սուացավ, եթե ժողովրդին ովելուցին ազգային կուսակցությունների ներկայացուցիչները: Առանձնապես պետք է ընդգծել ՀՅՇ-ի մասնակցությունը և շարժմանը ուղղությունը տա-

¹ «Արարատ», 1902 թ., № գ-Դ, էջ 209-215:

² Ա. Երկանյան, նշվ. աշխ., էջ 239-240:

³ «Արարատ», 1903 թ., № Ը-Ձ, էջ 678-687:

⁴ ՀՀԿՊՊ, ֆ. 57, գ. 256, թ. 12-14:

⁵ Մ. Վարանյան, ՀՅ. Դաշնակցության պատմություն, Երևան, 1992, 277-278:

լու փաստը: Յարական իրամանը հանրությանը հայտնի դառնալու առաջին օրերին հոգևորականությունը շփոքված էր և դա զարմանալի չէր. հայն ուներ երկուհարյուրամյա ոուսական կողմնորոշում և ոչ մի անգամ չէր ընդվզել ոուսական պետության դեմ: Այդ ժամը պահին ՀՅԴ-ն ստեղծեց «ինքնապաշտպանության կոմիտե»: Սի գիշեր նրա գլխավոր անդամը գաղտնի մտավ Վեհարան, խորհրդակցեց Վեհափառի հետ, հորդորեց, ոգի տվեց, խոստացավ կուսակցական օժանդակությունը և հեռացավ. Ուստումն էր՝ ՀՅԴ-ի հիմնադիր անդամներից մեկը: Նրա հեռանալուց հետո կաթողիկոսը հրատարակեց իր կոնդակ-մերժումը՝ ցարական օրենքի դեմ կաթողիկոսի պատասխանը¹:

Կաթողիկոսի մերժումից հետո սկսվեցին ժողովրդական ցույցերը, մանավանդ առաջին ազդանշանը տվեց Ալեքսանդրապոլի: Ոգևորված 84-ամյա կաթողիկոսը հիշեց իին հերոսական օրերը. Վարանդյանի պատկերավոր արտահանությանը՝ «Օսման Առաջնական կաթողիկոս» անունու համար առաջարկեց առաջնական կաթողիկոսի պատկերավոր արտահանությանը՝ «Օսման Առաջնական կաթողիկոս» անունու համար:

լու փաստը: Յարական իրամանը հանրությանը հայտնի դառնալու առաջին օրերին հոգևորականությունը շփորված էր և դա զարմանալի չէր. հայն ուներ երկուհարյուրամյա ոռուական կողմնորոշում և ոչ մի անգամ չէր ընդգել ոռուական պետության դեմ: Այդ ժամը պահին ՀՅԴ-ն ստեղծեց «ինքնապաշտպանության կոմիտե»: Մի գիշեր նրա գլխավոր անդամը զարտնի մտավ Վեհարան, խորհրդակցեց Վեհավառի հետ, հորդրեց, ոգի տվեց, խոստացավ կուսակցական օժանդակությունը և հեռացավ. Ոռուուն էր՝ ՀՅԴ-ի հիմնադիր անդամներից մեկը: Նրա հեռանալուց հետո կարողիկուր իրատարակեց իր կրնակ-մերժումը՝ ցարական օրենքի դեմ կարողիկոսի այստասխանը¹:

Կարողիկոսի մերժումից հետո սկսվեցին ժողովրդական ցույցերը, մանավանդ առաջին ազդանշանը տվեց Ալեքսանդրապոլի: Ոգերված 84-ամյա կարողիկուր իշխեց իին հերոսական օրերը. Վարանյանի պատկերավոր արտահայտությամբ «Չքացավ Ամենայն Հայոց խոնարի հնագանդ հայրապետը և բևմ նետվեցավ Ամենայն Հայոց Հայրիկը, հինավորց հեղափախականը, Վասպորականի արծվաքն մարտնչողը»²: Կարողիկոսը և ինքնապաշտպանական կոմիտեն սկսեցին միասնական գործունեությունը: Ալեքսանդրապոլի ցույցին հետևեցին հումկու ժողովրդական երրոյթներ Անդրկովկասի համարյա բոլոր հայաբնակ վայրերում: Ժողովրդի և կազմակերի գորախսմքի ընդհարման հետևանքով Գանձակում եղան զոհեր և վիրափորներ երկու կողմից, բայց ավելի շատ՝ հայերից: Օգոստոսի 29-ից սկսած Գանձակի առաջնորդական փոխանորդ Բենիկ Վարդապետը մի քանի օր անընդմեջ տեղեկություններ է հաղորդում ժողովրդական հուզումների, փոխահանգապետի՝ իրեն տված սպառնալիքների, ծանր վիրափորների և զոհերի մասին³:

Արխիվային փաստարդերը հաղորդում են, թե ինչպես տեղի փոխահանգապետն այցելել է գոհվածներին հայկական ծեսով հողին հանձնելու արարությանը: Բենիկ Վարդապետը հավաստիացնում է Հայոց Հայրապետին, որ կատարել են նրա իրամանը և շեն մասնակցել Հայ եկեղեցու գոյրքի և կալվածքների ցուցակագրմանը, շեն ստորագրել ոչ մի

փաստարդուղի⁴: Արխիվներում պահպանվել են հետաքրքիր փաստարդների հայաբնակ համարյա բոլոր վայրերի ժողովրդական հուզումների վերաբերյալ, որտեղ ոտք են դրել ոստիկանական պաշտոնյաները իրենց վրա դրված պարտականությունը կատարելու համար: Շատ հետաքրքիր են Արարատյան դաշտի գյուղերի, մասնավորապես Օշական, Սուլնի, Աշտարակ, Եղվարդ գյուղերի հայ եկեղեցուն պատկանող գոյրքերի ցուցակագրման ժամանակ նշված վայրերի հայության բողոքի և ցույցի նկարագրությունները:

Սեպտեմբերի 11-ին Օշական է մտել Երևանի փոխահանգապետ Նալաշյանի կազմական ջոկատի ուղեկցությամբ: Ժողովրդի ընդլայնմը հանդարտեցնելու համար նա դիմել է բացահայտ կեղծիքի, հայտարարելով. «Գոյրքերի սեփականության իրավունքը մնում է եկեղեցուն, փոխավոր է միայն կառավարման ձևը»⁵: Նման կեղծիքին և անհամոզիչ խոսքերին չհավատացող ոչ մի գյուղացի և հոգևորական շեն մասնակցում հաշվառմանը և հրաժարվում են ստորագրել որևէ փաստարդուղի: Սեպտեմբերի 12-ին Նալաշյան Սուլնիում էր⁶: Նույն գործելավերաբը և նոյնի արդյունքը: Սեպտեմբերի 16-ին Երևանի փոխահանգապետն Աշտարակում էր, որը պատկանում էր Մայր տաճարին մուլքադրական իրավունքով: Վաճրը ներկայացուցիչ չէր ուղարկել. չնայած Նալաշյանի սպառնալիքներին, գյուղացիներից ոչ մեկը իր ստորագրությունը շղթեց այդ փաստարդի տակ: Ազգային արխիվի Կարողիկոսական դիվանի և Սինոդի օրագրությունների № 56 և 57 ֆոնները լի են նման փաստարդերով և համանման նկարագրություններով՝ Նոյսի, Շուշի, Ղարաբաղի տարբեր գյուղեր, Ղարաբիլսա: Ուշագրավ է Երևանի ցույցը. բազմահազար երևանցիներ բողոքի երբ են կազմակերպում դեպի Էջմիածին՝ Մայր տաճար: Շամապարիի կեսին ցուցարարների ուղին փակվում է կազմական ջոկատի կողմից, սակայն երևանցիները կարողանում են հաղթահարել բոլոր խոշնդրությունները: Հետաքրքիր են բոլոր վայրերի ընդուստացման նկարագրությունները: Սակայն, ըստ երևային, ամենաուժեղ րմբուստացումը Լոռու Մարց գյուղի գյուղացիների դիմակայությունն

¹ Նոյն տեղում, էջ 378–379:

² Նոյն տեղում, էջ 378:

³ ՀՀԿԹՊԱ, ֆ. 56, գ. 16, զ. 349, թ. 44, 50:

⁴ Նույն տեղում, թ. 43, 49:

⁵ Նոյն տեղում, թ. 101, գ. 1, զ. 61, թ. 222:

⁶ Նոյն տեղում, թ. 66, թ. 223–224:

Եր, որը տևեց մինչև հոկտեմբերի վերջերը: Շարժման ուժնությունն է փաստում այն հանգամանքը, որ զյուղացիներին արգելափակում են Սնտեփի բանտում: Այդ շարժումն, իրոք, ուներ համահայկական երան: Ավելուծելի էր ողջ աշխարհի հայությունը, ոտքի եկել պաշտպանելու իր ժողովրդի, նրա եկեղեցու ուսնահարված շահերը: Եվ դրա մեջ իր պատկառելի տեղն ուներ Ամենայն Հայոց Հայրիկը: Առաջին անգամ Հայոց կարողիկոսը հանդառն էր մերժել ուսական ցարին: Հնազանդության արտաքին քողի տակ Վեհափառը նամակ խնդրանքեր է իրում Նիկոլայ Ա-ին, բացատրելով, որ ինքը ցարից առաջ հավատարմության երդում է տվել իր ժողովրդին և իրավունք չունի տնօրինել հայ եկեղեցու ունեցվածքը, որովհետև ոչ թե նրա տերն է, այլ սուկ ավանդապահը, և ցարական կառավարությունն իրավունք չունի բռնագրավել այդ ունեցվածքը, որովհետև այն առաջացել է ոչ միայն ուսահայերի, այլ ողջ աշխարհում սփոփած հայության նվիրատվություններից¹: Մի այլ նամակում Խրիմյանը, մի կողմ քողներով դիմանագիտությունը, ցարին քողուում է Կովկասի կառավարչապետ Գ-ովիցինի հակահայկական գործությունից և բացահայտ նշում, որ դրան նպաստել է ինքը՝ ցարը. «Զերդ Սեծության գահ բարձրանալու օրից կարծես թե հայ ազգի և եկեղեցու ճակատագիրը հեղաշրջվեց դեպի վատը»²: Զրպարտությունների և հակահայկական գործելակերպի գոհը դարձան Քարեզործական ընկերությունը իր մասնաճյուղերով, մի ընկերություն, որ «որբին հաց էր մաստակարում, քշվառին՝ ապրուստ և պատսպարան», նաև Հրատարական ընկերությունը, որը, ըստ Խրիմյանի, «մտավոր բարոյական լույս էր տարածում մեր ասիական խափար մքնուրսում ապրու հասարակության մեջ»: Ամենից ուշագրավը ցարական իրամանից վեց ամիս անց՝ դեկտեմբերի 12-ին Հայոց ծայրագույն պատրիարքի դիմումն է³: Ուսական ցարին ուղղված վերջին փաստարությն է սա, մի ծավալուն գործ, շարադրված հայերեն և ուստերեն, որտեղ Խրիմյանը ամփոփելով իր խնդրագիր-դիմումները, բողոքները, վերջին անգամ փորձում է համոզել ցարին չեղյալ հայտարարել հունիսի 12-ի օրենքը: Մանրամասն հա-

մեմասությունն է կատարվում այդ օրենքի և 1836 թ. ընդունած «Պոլոտինիա»-ի հոդվածների միջև: Եզրակացությունը մեկն է. այդ օրենքը անհարիք է կանոնադրության տառին և ողուն. «Այս եղանակ գործողութեանց իշխանութեան երկրիս չէ, համեմատ օրինաց, որժել սկզբունս նուիրապետութեան, խախտ գիրաւունս իմ որպէս պատասխանառու պէտի եկեղեցը և խանգարէ գլարգապահութիւն»⁴: Խրիմյանը բոլորում է անցյալ դարի 80-ական թթ.-ից սկսած Հայ եկեղեցու, դպրոցի, մշակույթի նկատմամբ ծավալս հալածանքների համար: Պաշտպանելով ժողովրդի, եկեղեցու և իր պատիկը Հայոց կարողիկոսը հերքում է բոլոր ամրաստանությունները Հայ եկեղեցու հակապետական գործութեարյան վերաբերյալ: Սակայն այս գրությունը ևս ցարի կողմից մնաց անպատասխան: Հայոց Հայրապետուն զգաց, որ զոր են ակնկալիքները և դիմեց աշխարհասփյուն հայությանը: Տարբեր վայրերից բազմաթիվ հասարակական գործիչներ արձագանքեցին դրան, պատրաստակամություն հայտնելով օգնել կարողիկոսին: Կ. Պոլսի Հայոց Պատրիարք Մաղաքիա Օրմանյանը կազմակերպեց արևմտահայ եպիսկոպոսների, կրոնական ժողովի անդամների մի քանի նամակների առարումը ոչ միայն Հայոց Վեհափառին, այլև ուսական ցարին⁵, բացատրելով, որ ցարական արրուները իրավունք չունի տնօրինել Հայ եկեղեցու ունեցվածքը, որովհետև այն պատկանում է ոչ թե Էջմիածնին, այլ ողջ աշխարհում սփոփած հայությանը: Միևնույն ժամանակ Օրմանյանը չհամաձայնվեց Խրիմյանի՝ ցարին ուղարկված նամակում արտահայտված այն մտքի հետ, որտեղ կարողիկոսը, վիտոված ցարական ուսնձգությունից, դիմում է ցարին կարողիկոսական նատավայրը Էջմիածնից (իմա՝ ուսահալատակ վայրից) այլ երկիր փոխադրելու համար: Օրմանյանը պահանջում է մնալ հինավորց կարողիկոսական նատավայրում, պայքարել և հաղթել:

Հողվածի սկզբին քուցիկ անդրադարձանք ազգային կուսակցութիւններից ՀՅԴ-ի դերին, նրա ծավալած գործութեարյանն այդ ասպարեզում: Սակայն ամրողութիւն ՀՅԴ-ի գործութեարյունը լուսաբնելը մի մեծ հողվածի նյութ է: Հայացիկ ուզում եմ նշել նաև մյուս կուսակցությունների մասնակցության մասին. Հնչակյանները կազմակերպեցին

¹ Գ.Աթ, Խրիմյանի, ֆ. 57, 1 թ, գ. 164, նաև, «Եջմիածնի», 1986 թ., № գ-Դ, էջ 54-56:

² ՀՀԿՊՊ, ֆ. 57, գ. 299, թ. 8:

³ Նույն տեղում, ֆ. 57, գ. 299, թ. 8:

Կովկասի կառավարչապետ հայատյաց Գոլիցինի ահարեկշուրջունը: Չնայած Գոլիցինը չսպանվեց, բայց կխախտելագար հեռացավ Կովկասից: Շարժմանն իր մասնակցությունն ունեցավ նաև Սոցիալ դեմոկրատիան: Լենինյան «Ակրա»-յում տպվեց ականավոր բոլշևիկ Բողդան Կոնոյանցի «Նոր կողմանու» հոդվածը: Կովկասի սոցիալ-դեմոկրատները կոչով դիմեցին ողջ Կովկասի աշխատավորությանը: «Դիմակը պատռված է», «Գազանը վիրավորված է» խորագրերը¹ խոսուն վկայություն են նրանց մտածելակերպի: Մի բան պարզ էր. Կովկասի սոցիալ-դեմոկրատիան հայ ժողովրդական այս շարժումը ուզում էր միահյուսել լայնածավալ Ռուսաստանում սկսված սոցիալական հոգումներին: Այս փաստերն ապացուցում են, որ 1903 թ. հունիսի 12-ի օրենքի դեմ սկսված շարժումը համահայկական, համաժողովրդական, ազգային-ազատագրական պայքարի յուրատեսակ դրսնորումն էր, որտեղ իրենց մասնակցությունը բերին հայ ժողովրդի բոլոր խավերը և բոլոր հատվածները՝ առանց բացառության: Յարական բյուրոկրատիան շխասավ իր նպատակին, ճախտվեց նրա պլանը: Երկրում սկսված ներքին հոգումները և արտաքին ճախտումները, համառուսաստանյան առաջին հեղափոխության ալիքը, ռուս-ճապոնական պատերազմում կրած պարտությունը ստիպեցին արքունիքին որդեգրել այլ գործելակերպ: Գոլիցինը հեռացվեց պաշտոնից, Կովկասում վերականգնվեց փոխարքայությունը, և փոխարքա Եշանակվեց հմուտ դիվանագետ Սիխայիլ Իլլարիանովիչ Վորոնցով-Դաշկովը, որի միջնորդությամբ 1905 թ. օգոստոսի 1-ին ցարը չեղյալ հայտարարեց 1903 թ. հունիսի 12-ի օրենքը: Նորընտիր փոխարքան իր կարծիքն արտահայտեց այդ օրենքի մասին. «Չի կարելի ծովել մի ժողովրդի, որն ունի երկու հազար տարվա մշակույթ, գիր, գրականություն, բերքեր, քատրոն»: Կովկասի փոխարքան ճիշտ էր հասկացել ցարական օրենքի էռյունը. Եկեղեցու ունեցվածքի բռնագործման արտաքին շղարչի տակ քողարկվում էր հայության, ինչպես նաև կայսրության տարածքում ապրող փոքր ժողովրդների ոռուսացում հունիսի 12-ի օրենքի էռյունը նաև ոռու հետազոտող Ստանիլավ

¹ Ուսուցիչներ կոչեր և բույներ, Երևան, 1960, էջ 62-65:

Լյուբոչը¹, ընդգծելով, որ «ողջ բարեգործությունը, ազգային մշակույթի և լուսավորության զարգացումը սերտորեն կապված է Հայ եկեղեցու հետ»: Նույն կարծիքն ուներ նաև Ս. Վարանյանը: Կայսրության հսկաութիւնը դիմի դեմ ծառացած համաժողովրդական ազատագրական շարժումն ունեցավ իր դրական արդյունքը. հայն ապացուցեց իրեն ուրույն ժողովուրդ ապրելու իր անկապտելի իրավունքը:

Վարագ տարեգիրը, 2003, էջ 60-68:

ԳԱՐԵԳԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՐՈՒԱՆՃՏՅԱՆՑ ԵՎ ՎԱՂ ՄԻՋԱՎԱՐԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՍՈՒԹԵԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ²

Հայ բանահիւսուրեան ու բանագիտուրեան, ազգագրութեան, հնագիտութեան և հայրենագիտութեան մեծ երախտաւոր Գարեգին Սրուանճտեանցը անցեալ դարին քառորդին իր գործունեութեամբ բացեց մի արահետ, որը հետազայում դարձավ լայնահում պողոտայ: 1874 րուին հրատարակած «Գրոց ու բրոց» և «Հնոց-նորոց» ժողովածուները եղան այդ գործի նախաշախիղը, իսկ հաստատում դասընթացները՝ «Մանանա», «Համով-հոտով» ժողովածուները և «Ժորոս աղբար ճամբորդ Հայաստանի» ուղեգործութեան երկու հասորները: Այդ աշխատութեան էին, որ ազգակ եղան արեւելահայ և արեւմտահայ գործիչների համար հետաքրքրութեար, որոնելու և լոյս աշխարհ հանելու մեր ժողովրդի մէջ ամբարուած անզին գանձերը: Ժամանակի մանկավարժ Սեղրակ Սանդոհնեանի պատկերատը արտայայտութեամբ, «Սրուանճտեանցի ծառայութիւնը... հետու նորանուն է, որ մի հարուածով անհաւատներին հասատքի բերեց: ...Նորա ժողովածուն բոլորովին ազգային ոգու շնչով է

¹ Լիօնով Ս., Պօսլեցու Ռոմանով, Լենինգրադ-Մոսկվա, 1924, ստր. 198-199:

² Զեկուցում՝ կարգացված գիտավողովուն: Առաջին անգամ լոյս է տեսել Վասպուհանի Հայրենական միուրյան «Վարագ» պարերաբերում, 2003, № 50, Լուսականի էջ 13-19:

շնչում, որտեղ և՛ ճաշակ կայ, և՛ իմաստ, և՛ հանճար, և՛ բարոյականութիւն, և այս բոլորը մերն է, մեր հայկականը և ոչ օտարինը: Դոքա անհերթելի ապացոյց են, թէ ժողովրդական բանաստեղծութեան անփոխարինելի ազդեցութիւնը որքան կախուած է հաւաքոյի շնորհից, որ իր նորքը ու հանճարեղ ճաշակով գիտէ ընտիրն անպէտրից ջոկել, բուն ազգայինը՝ բարարացած բանդագուշանքից»¹:

1867-ին վարդապետ ձեռնադրուած Սրուանձտեանցը, որ գտնուում էր իր ժամանակի արեւմտահայ հասարակական կեանքի յործանուում և կիզակետում, հանգանանքների բերուով, տարրեր յանձնարարութիւններ կատարելու համար շրջագայում է Արեւմտեան Հայաստանի համարեա ողջ տարածքում, ժողովրդի, մանաւանդ Բարձր Հայրի և Զարսանչակի հայութեանը իր խօսքի մոգական ուժով յետ պահում արտագաղթից, իրաւացիորեն հաւաստելով, որ «ժողովրդեան մը ու ազգի մը կեանքը հոգեկան կապեր ունի իր ծնած հողին ու արեւին հետ, իր հօրն ու մօրը գերեզմանին հետ,...վաճրին ու սուրբին հետ...«Ո՞ տայր ինձ զծուս ծխանի, զառաւուն Նաւասարդի»: Ահա թեզ բազաւորի մը հոգեկան կարօւու»²: Սրուանձտեանցի կարծիքով, հայ մարդը հեռանալով իր հայրենի հողից, աստիճանաբար կորցնում է ազգային յատկանիշները և բռնում ուժացման ուղին: Նա գտնում էր, որ ժողովրդին իր երկրի հետ կապելու համար, հայրենի հողում պահելու համար սոցիալ-տնտեսական պայմանների բարեկաման հետ մէկտեղ, նոյնիսկ դրանից առաջ խիստ անհրաժեշտ է նրան ծանոքացնել իր պատմութեանը, իր ծագմանը, հայրենիքը պեղել «զքչով ու բքչով»: «Հայր...փրկելու համար իրենց ճանչնել տալ պէտք է զիրենք»... և «հանդերձի ու հացի պէս» տարածել ազգի պատմութիւնը, պայքարի, մշակոյրի պատմութիւնը: Հենց այդ գործին է նա նուիրաբերում իր ողջ գիտակցական կեանքը և յայտարարում. «Այս, որդիք եմք մեր Սեսրովքայ, Խորենացոյ, Դափր Անյաղին և այլոց: Եւ մենք ենք, որ գարէ հաց ուտելով, չուանէ զօտի կապելով, տրեխս հազնելով, մերկ մնալով, զրպարտուելով, հալածուելով ալ պիտի յօժարինը մեր սուրբ նախնեաց օրինակով՝ Հայաստանին ծա-

¹ Գ. Սրուանձտեանց, Երկեր, Երևան, 1978, հ. I, էջ 631–632:

² Գ. Սրուանձտեանց, Երկեր, հ. II, Երևան, 1982, էջ 333:

ոայել»¹: Այդ խօսքերը յաւոր պատշաճի չին ասուել, այլ հիշել էին իրեն երդում, որն անպայման ենթադրում է նաև կատարում, իրավործում: Նրա բողած ժառանգութիւնը պատի է թերու ոչ թէ մի անհատի, այլ ողջ ժամանակաշրջանին և ողջ սերմոյին: Վարագայ «Ժառանգաւրացում» ընդամենը երեք տարի վանական կրթութիւն ստացած երիտասարդը այնպիսի գործեր ստեղծեց, որ ժամանակակիցներից մէկը իրաւամբ գրեց. «Այդ վարդապետը գրեթե դպրոց չէր տեսած և սակայն գտնուեցան հնայտուններ, որը տեղեկանալով անոր գրեթերու պարունակութեանը, կարծեցին, թէ զիտէ քանի մը իին ու նոր լեզուններ, որոց առաջնորդութեամբ զիտուն է եղած...»²: Ի՞նչն էր, որ այդպիս զարմացրել էր ժամանակակիցներին: Սրուանձտեանցի արտայայտած մտքերը հայ ժողովրդի վաղնջական պատմութեան, հայերի հարեանների մասին: Մատնանշենք դրանցից մի քանիսը:

Քննարկելով զրաբարի և ժողովրդական խօսակցական լեզուի յարաբերութեան հարցը, Սրուանձտեանցն ուզում էր պարզել իր ժամանակի համար (զուցէ նաև մեր ժամանակների համար) դժուար լուծելի և խիստ կարևորութիւն ներկայացնող մի հարց. մինչև Սևարով Մաշտոցն ու զրաբարը հայ ժողովուրդն ունեցե՞լ է արդեօք զիր և գրականութիւն: Այդ հարցին նա տախս է դրական պատասխան, թէ և որոշակիորեն չի նշում, թէ ո՞րն է եղել այդ զիրը: Նրա ուշադրութիւնն են զրատում Հայաստանի բաց երկնքի տակ սփոռուած սեպազիր կամ թեսուազիր արձանագրութիւնները, որոնք մեր ժողովրդի նախամերտպեան զրի լուռ վկայութիւններն են: «Որովհետեւ մեր ժողովուրդն աւելի իին է, քան մեր զրաբարն է, որեմն ժողովրդեան խօսած լեզուն աւելի մօտ լինելու է թեւողազրի լեզուին»: Գիտնական լեզուարանների ուշադրութիւնը նա իրախում է թեւողազրերը վերծանելու խնդրի վրայ, որպէսզի «զուսաւրութեան սեղանին վրայ դրուած տեսնեմ Հայաստանի իին զրականութեան կնքեալ ու փակեալ փառաց մատեանը, յորում ազգային և ընդհանուր հնութեան ու պատմութեան գանձեր կան ծածկեալ և զորս հայերը բանալու միայն կարող են»³: Գնահատերով երուպական զիտնականների

¹ Նոյն տեղում, էջ 83:

² Հայրենիք, Կ. Պոլիս, 1892, № 306:

³ Գ. Սրուանձտեանց, Անմանայ, Կ. Պոլիս, 1876, էջ 144:

այդ ուղղութեամբ կատարած աշխատանքը, Սրուանձտեանցը նրանց թերութիւնը բացատրում է Հայաստանից հեռու լինելով և բուն ժողովրդական լեզուն ջիմանալով: Այս հարցը Սրուանձտեանցի համար ուներ ոչ միայն տեսական, այլև գործնական նշանակութիւն, որովհետև, նրա կարծիքով, սեպագրերի վերծանումը հնարատորթիւն է տալու «յախտեական մոխիրները և մքութեն: սրբել մեր հայկական ազգի պատմութիւնը»: Այդ ժամանակաշրջանի համար ազգի պատմութիւնը և նրա անցեալի բաշխմացութիւնը օգտագործուելու էր իբրեւ ազգային ինքնութեան և գոյութեան իրաւունքի կորուան:

Հայ ժողովրդի վաղնջական պատմութիւնից Սրուանձտեանցի ուշադրութիւնը առաւել շափով գրաւել է մեր ժողովրդի նախահայրը՝ Հայկը իր ազատաւոնչ ոգով,իր հոյակապ յաղթանակով: Տարբեր անգամներ նա մանրամասն նկարագրում է նահապետի ճակատանարտի վայրը, Բէլի և նրա զինուրների զինուելու վայրը, Հայոց ծորը, Հայկավանը: Սրտայոյդ է Հայոց ծորի նկարագրութիւնը, Հայկի յաղթանակի տեսարանը. «Խայտակն և քաջազնզուր Հայկն, իսր երեք հարիս աղեղնատորը, Բէլն և իսր խոլ բիրատորը: (Ուշադրութեան արժանի է բուական համենատութիւնը՝ 300 և 10.000-ներ – Է. Կ): Այս հովտին մ.շ, այս հողին վրայ, այս երկնից տակ կանգուն ... աշկունք այս հոյակապ աստղակամար կապոյտին համբառնարով կը խօսէր համայն մարդկանց առաջինն՝ առաջին ճառն ընդդէմ անիրաւողին, բռնատորին և ստրկացնողին...»: Ճառի ներգործութիւնն ամենից ցնցողն է. «Այո, այս ճառն հոգի տուաւ սակաւատրաց, հոգին առաւ երկարակուու ուժատրաց, հսկայից, քաջաց բիրատրաց: Այն օր ասող մի պայծառ այս ծովէն ու ծորէն ցոլացաւ յաստեղատուն՝ Հայկին պատկերով, Հայկին անունվ, զոր զետեղեց յախտեականին մատն արևուն դարպասը»¹: Այդպէս է բացատրում Գարեգին Սրուանձտեանցը Հայկ կամ Օրիոն համաստեղորեան գոյութիւնը. իր ժողովրդի ազատութեան համար պայքարողին Աստուած անմահութիւն է պարզեւում երկնային համաստեղորեան կերպարանքով:

Մի այլ տեղ անդրադառնալով Մովսէս Խորենացու պատմութեանը, Սրուանձտեանցը նկատում է, որ պատմահայրը Բիրասպեանց Աժդա-

հակին համարում է առասպեկտական կերպար: Չհամաձայնելով այդ կարծիքի հետ, գրում է. «Ըիրասպեանց վեպն բացարձակ առասպեկտական լեզուանէ Խորենացի հայրն և անոր մէկ բանի մասերը մէջ կը թերէ: Այսպիսի առասպեկտ մէջէն ծագած են և ի նոյն մնացած ամէն իին ազգաց նախնականութիւնը»²: Այդ համառուս բնորոշումը յետագայուն գրաւել է Ներսէս Ակինեանի (Ալիքարեան միարանութեան անդամ), ասպա մեր ժամանակակից հետազոտող Բարգևն Շուզարգեանի ուշադրութիւնը, երբ բննարկել են թերրողահօր դիտողութիւնները և հայ-իրանական առնչութիւնները: Այժմ արդեն պարզուել է, որ Աժդահակը Սարաստանի վերջին արքան էր, որի կտորավարումն ընդիաստուեց Արևմենան Իրանի ապստամբութեամբ: Թուում է՝ աննշան մի վորքիկ փաստ եւ նոյնքան աննշան մի դիտողութիւն: Բայց երբ հաշուի ենք առնում, որ այդ կարծիքն արտայայտուել է մօտաւրապէս 150 տարի առաջ, ակնյայտ է դառնում Սրուանձտեանցի գիտական խորաքափանցութիւնը:

Հետաքրքիր հարցադրում է անում Սրուանձտեանցը Եկեղեաց աշխարհ արտայայտութեան մասին: Նա ցանկանում է պարզել, թէ ի՞նչ կազմութիւն ունի «Եկեղեաց» բառը եւ մտորում է. «Երէ Եկեղէ բառը առանձին նշանակութիւն մը չունի, արդարէ Եկեղեցեաց գաւառ ըսուելու յարմար է, բայց միրէ «Եկեղեցին» հայերէն էր բրիստունելունեւն յառաջ եւ միրէ գաւառիս մերձակայ «Աերին Կեղի», «Ներքին Կեղի» անունվ գաւառնե՞րն ալ Եկեղեց կամ Եկեղեցեաց գաւառ կը նշանակեն»²: Հետաքրքիր հարցադրում է սա, որին արժէ վերջնական պատասխան տալ. Եկեղեցին ընդունել իբրեւ յունական բառ, թէ՝ բուն հայկական:

Ծրջելով Արևմտեան Հայաստանի նուիրական վայրերը, ուր իրար են խառնուել մեր հերանոս աստուածները քրիստոնեայ սուրբերի հետ, Սրուանձտեանցը կրկնակի երկխողածութեամբ նկարագրում է այդ սորութիւնները և անում իեաարքքիր դիտողութիւններ: «Դրանցից ուշագրաւ է Կարմրոր վանքի բացատրութիւնը: Զորավանքին մօտիկ գտնուում է Կարմրոր Ս. Աստուածածնի վանքը: «Կարմրոր. ինչ սիրու բառ...: Այս առքին ներկի՞ է կարծել, թէ հայոց իին աստուծոց եւ աստուածուիեաց, Արամազդներու եւ Անահիտներու համար երգուած դիցարա-

¹ Նոյն տեղում, էջ 180:

² Նոյն տեղում, էջ. II, էջ 345:

նորեան փշրեալ ոսկեղէն երգոց բեկորներէն՝ ժողված լինին մեր բարգմանիք շատ մը բանկազին գոհարներ եւ անոնցով շարայօրինած լինին այնքան վսեմ շարականներ տէրունական, մանաւանդ՝ ի գովիստ Ա. Աստուածածնին... մանաւանդ, երբ գիտենք աստից մեծ մասն յօրիներ է Խորենացին. նա, որ ճաշակ ունէր հնորեանց եւ հնախօսութեանց, որ մեծ խնամօր գտաւ եւ աւանդեց մեզ Գոլդենաց երգերն. ...Այս, մեր շարականաց մեծ մասն Աստուածաշնչով բանաստեղծեալ են, իսկ մաս մը՝ ազգային շնչով ու լեզուով, որ չէր անհետացած մինչև այն օրերը¹: Իմ կարծիքով, արտակարգ հետաքրքիր պարզաբանում է դա, որ նրբութեամբ եւ խորքով բացատրում է մեր եկեղեցու խկապէս ազգային արմատները: Նման մի դիտարկում է նաև Եկեղեցաց գաւառի Երեզն աւանի Սատաղ լեռը, որ իրար են խառնուել մեր հերանոս աստուածներն ու քրիստոնեայ սուրբերը: Սրուանձտեանցի Ենրադրութեամբ, Սատաղ լեռան վրայ պէտք է լինէր Անահիտի մեհեանն ու արձանը, բայց հետազայում այն դարձաւ Գրիգոր Լուսաւորչի եւ Տրդատ բազաւորի պայքարի վայրը: Կանգնած են երկու հզօր ուժերն իրար դէմ, Գրիգորը՝ Տրդատի ծառան, բայց ամենից առաջ՝ Քրիստոսի ծառան, որ խաչի լոյսով ճառագյուտ է, պայքարի ասպարեզ նետում: Սիւար՝ Տրդատն է իր ահեղ բանկով ու նախարարներով: Գրիգորը «միայնակ կը նահատակի, արինե արին, մահէ մահ, երկարէ երկար, վիրապէ վիրապ փոխուելով կ'ուժովնայ, կը փայլի, կը զօրանայ, կը յաղըն»: Զարշարանքով ու տառապանքով հասնել յաղութեամ՝ Գրիգորի պայքարի արդինքը: Տեսարանը փոխառում է. «Աղիւն Տրդատ Աստուծոյ գառն կը դարձունէ. Անահտայ դաշտն՝ Եկեղեցոյ հովիտ, լեռներ ու բլուրներ խաչին պսակով կը զարդարէ»²: Այդ գեղեցիկ աւանդութիւնը վերաբերում է Եկեղեցաց գաւառի Սեպուհ լեռանը, որ հոյակապ միախառնուած են մեր հերանոսականն ու քրիստոնեականը:

Շարունակելով իր ճանապարհը մեր սուրբ վայրերում, Սրուանձտեանցը նկարագրում է Թաղէոս Առաքեալի վանքը և Գրիգոր Լուսաւորչի Անապատը: Նա բացատրում է, որ այդ խոր եւ անտես ձորի մէջ Թաղէոս Առաքեալը Եկեղեցի է հիմնել այն ժամանակ, երբ հալածում էր

¹ Գ. Սրուանձտեանց, Երկեր, հ. I, էջ 388:
² Նոյն տեղում, Երկեր, հ. II, էջ 344–345:

քրիստոնեութիւնը: Անապատականների ու ճգնաւորների համար Սեպուհ լեռն ուներ բարայրներ, խոռոչներ եւ ծածուկ ձորեր: Այստեղ է գտնում նաև Մանեայ այրը, որ յետազայում ապաստանեց Գրիգոր Լուսավորչը՝ այդ լեռն ընտրելով իրեն աղօրարան եւ ճգնարան: Սեպուհ լեռան վրայ է նաև «Գոհանամբ»-ը, Սերովիլից վանքը: Այդ լեռան հետ կապուած է նաև ազգային մի սրբազն աւանդութիւն, ըստ որի Տրդատ Մեծը հետեւելով «ողջ հայութեան վարդապետին», իր վերջին օրերը նոխրել է ճգնարյան հենց այդ վայրերում: Այդ օրերին նա իր մէջքից հանել է յաղրական սուրբ, այն սուրբը, որ ծառայել էր Արարատեան երկրի քշնամիներին յաղրելու, ծառայել էր ողի բանալու Քրիստոսի Աւետարանին և բարձրացնելու յաղրական նշան Ս. Խաչին» և Ս. Լուսաւորչի ձեռքով ձգել այս լեռների մէջ: Այդ սուրբ գետին չի ընկել, այլ խաչի ձևով օդի մէջ կախուած է մնացել, որա շուրջը շրջանակով շող է փայլում՝ Լուսաւորչի մշտավառ կանքելի լոյսը: Սրտի ավինուվ ու տրոփիւնով. մեծ ներշնչանքով գրուած նման նկարագրութիւնը յուզում է կարլացոլներին, ինչպէս հեղինակին: Այդ նկարագրութիւնները ընթերցողի սիրտը լցնում են աստուածային սիրով, վեհութեամբ ու մարքութեամբ: Երիցս իրաւացի է Սրուանձտեանցը, երբ զրում է. «Տեղ կայ, որ մարդու սիրտն ու քնար քար կը դառնայ. քար կայ, որ քար կտրած սիրտեր և խորտակեալ քնարներ կը շարժէ»: Ի գործ չէր, որ Սրուանձտեանցի ուսուցիչը՝ Ամենայն Հայոց Հայրիկը յաճախ նրան անուանում է Յովհաննես Պլուզ, զուգահեռ անցկացնելով երկու Յովհաննեսների միջև:

Գարեգին Սրուանձտեանցը՝ Արևմտեան Հայաստանի անխոնջ «Ճամբորով» իր աշխատութիւններում սերունդների յիշողութեանն է ընծայել նրա տարբեր վայրերի նկարագրութիւնները, դրանցով փրկելով մեր անցեալի պատմութեան պատառիկները եւ իրաւացի էր, երբ զրում էր. «Գեղեց ու վայրեր կան, որոց կոչումն ու անունը մէկ մէկ պատմութիւն են նախնեաց գործոց: Տաճարներուն և բերդերուն անբակները, իին Եկեղեցիները, որոց մէջ նախնեաց անուն կամ նշան կը տեսնուի»: Յիշարի, մեր պատմութեան լուս վկաններն են աւերտած պալատներն ու վանքերը, որոց հավաստի տեղագրութիւնն է կատարել Սրուանձտեանցը: Դրանք մեզ համար առաւել քանի են, որովհետև մնացել են սահմանից այն կողմ, դարձել քուրքական պետութեան հայաջինջ քաղաքակա-

նորեան լուս վկաները, աստիճանաբար անհետանում են, աներում, ջնջելով իրենց ստեղծող ու շինարար ժողովրդի ձեռքերի հետքերը:

Հայկ Նահապետի, Գրիգոր Լուսավորչի ու Տրդատի ուսնահետքերից յետոյ, գուցէ և բոլորից առաջ Սրբանաձտեանցն անդրադանում է Սեպով Մաշտոցի անուան հետ կապուած վայրերին: Ահա Ս. Սեպովի ճգնարանը, որը, ըստ ժողովրդական վկայութեան գտնում է Բարու քաղաքի մօտակայրում: Ժողովրդի կողմից Գրման քար անուանած սուրբ վայրերի մօտ գտնում է այն ճգնարանը, որ տրնել է Սեծն Մաշտոցը, աղօրել, տառապել եւ աշխատել «հայ ժողովրդին եւ Հայաստանեաց եկեղեցւոյն լոյս ու կեանք ճարելու ճգնութեամբ»: Ժողովուրդը այդ այրը կոչել է «Սուրբ Սեպովայ դպրոց» եւ հիւսել է աւանդութիւն, թէ այդ ճգնարանում էր, որ աստուածային յայտնութեամբ գրատախտակի նմանող քարի վրայ Սուրբ Թարը զբեց մեր զարմանահրաշ տառերը՝ Ա, Բ, Գ: Սակայն Սրբանաձտեանցը, չնայած վարդապետ, քարձը է ճգնահատում գիտնական Սեպովին: Նա անձամբ եղել է այդ ճգնարանում, մանրամասն նկարագրել նրա բոլոր պատերը, որոնց վրայ գտնուող քենազերը ստիպում են նրան եզրակացնել, որ այն աւելի հին է, քան Սեպովի յայտնազործութիւնը: Ուրեմն, աւելի քարձը է Մաշտոցի կատարած գիտական գործի արժեքը: Սեպովի հետ միասին ըստ արժանույն ճնահատում է Վոաճապոր՝ Սեծ Հացեկացւոյն օգնելու համար. «մէկից միտք, միսից ջանք, մէկից զանձ, միայն վաստակ», այդ միասնութեամբ կատարուեց Սեծ Հրաշը, ստեղծուեց մեր մեծ զօրաքանակը, մեր 36 մատեան գունդը, յետագայ դարերում մեր երրը շարտնակելու համար: Վոաճապորի օժանդակութեամբ Սեպովի կատարած այդ «մէծ յայտնութեան» հետ Սրբանաձտեանցը համեմատում է մի այլ մեծ գործ՝ Սահակ Բագրատունու օգնութեամբ և մեկենասութեամբ «Խորենեան ծերունու» կատարած գործի հետ: Երկու դեպքում էլ Սիացեալ ջանքերով «ծաղկեցուցին Հայկազանց դաշտերն ու հովիտները, արծակեցին սրտի և խորիրոց կապանքները, լեզու, պատմութիւն, կրօնը, երգեր աւանդեցին մեզ, որոնցմով ապրեցանք եւ կապրինք իբրև ազգ և իբրև ժողովուրդ»¹:

¹ Գ. Սրբանաձտեանց, Երկեր, հ. I, էջ 625:

Ինչո՞ւ Իր Խորենացու կատարած գործը համեմատվում Մաշտոցի կատարած գործի հետ: Սրբանաձտեանցը տախի է այդ հարցի պատասխանը, բարձր գնահատելով Խորենացու «Հայոց պատմութիւնը», գործ, որն ամբողջացրեց մեր ժողովրդի վաղնջական պատմութիւնը՝ ցոյց տուեց մեզ մեր արմատները եւ մենք հաստատուն տեղ գրաւեցինք ազգերի մէջ: Սրբանաձտեանցի կարծիքով առանց Խորենացու պատմութեան, «ազգային լեզուով լոյս հանած այս մագաղաքներու», «աննշան և անգոյ ազգ մը կը ծևանայինք անշուշտ առանց նախնեաց. անարմատ ծառ, ուստի և անհաստատա»¹:

Կարելի է երկար շարունակել Սրբանաձտեանցի տարբեր կրահումները, գիտականորեն բացատրել, զնահատել տարբեր մեծութիւնները: Նրա գոշի հերոսներն են սուրբ Առաքեալներն ու քարգմանիչները՝ Սեպով, Խորենացի, Եղիշէ, Նարեկացի եւ Ներսէս Շնորհալի: Նրա նկարագրութիւններն ու համեմատութիւնները չի կարելի շփորչել որևէ այլ աւելիծագործողի գրածի հետ: Նրա խօսքը սրտի և մորի արտակարգ միասնութեան արտայատութիւն է: Բայց դա քատական չէ: Դրան միանում է նաև գործը: Խորը, անշափելի յարգանքը Եղիշէի նկատմամբ հասնում է այն աստիճանի, որ 52 ամեայ Սրբանաձտեանցը մահուանից յետոյ քոյած կտակում պատուիրում է իր խնայած գումարից տապանաքար դանել ու դեռևս տասնեօրամեայ պատասու սրտում, երբ լնդունուելով Վարագոյ Ժառանգաւրացը Սանդենց Յովիաննելսը, ազդուած Եղիշէի «աղու մրմունջներից», նրա պատմութեան հերոսներից մէկի անունը իրեն վերանուանեց Գարեգին Սրբանաձտեանց, երկրորդ անգամ աւելի մեծ անմահութիւն պարզեցրվ այդ անուանը:

Վարագ, տարեգիրք, Լու-Անջելես, 2003, էջ 13-19:

¹ Գ. Սրբանաձտեանց, Երկեր, հ. II, էջ 27:

ԴԵՐԵՆԻԿ ԴԵՄԻՐՃՅԱՆԸ ԵՎ ՎԱՐԴԱՌԱՅՑ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Վարդանանց պատերազմը համազային, համաժողովրդական և համահայկական նշանակությամբ արդեն քանի դար դարձել է հայ պատմիչների, պատմաբան-գիտնականների, գրողների, արվեստագետների ուշադրության առարկան: Հիմք ընդունելով այդ ժամանակաշրջանի եզակի սկզբնաղբյուրները՝ Եղիշեի և Փարավեցու պատմությունները, դեռևս ուշ միջնադարի պատմիչները, ապա 19 և 20-րդ դարերի հետագուողները քննարկում են 451ր., նրան նախորդող և հաջորդող տարիների հայ ժողովրդի համար վճռորոշ ժամանակաշրջանի իրադարձությունները և հաճախ հայտնում իրարամերժ կարծիքներ ու տեսակետներ: Այդ ժամանակահատվածն իր վրա է բեկող նաև հայ գրողների, բանաստեղծների, արվեստագետների սկզբունք հայացքը: Ստեղծվել են բանաստեղծություններ, վեպեր, գեղարվեստական մեծ ընդհանրացումներով լի կոտավներ: Այդ շարքում եզակի և ուրույն տեղ ունի Դերենիկ Դեմիրճյան՝ հայ գրականության անվանի դասականը: Գրական գործունության արշալույսին՝ 1912 թ., ականավոր պատմաբան Նիկողայոս Ալբոցի «Մարզուն Վասակ ուղարկություն»¹ աշխատության ազդեցության տակ նա գրեց «Կասակ» դրաման, որը թեմայրվեց 1914-ին: Ինչպես ցույց է տալիս խորագիրը, դրամայի կենտրոնական հերոսը Վասակն է, որի գործունության միջոցով հեղինակն ընդգծում է «հայրենիքին ինքնական նվիրաբերած բարյական մահը»², կարծես ցանկանալով փիլիստիկայական մտորումներով և փնտրություններով արդարացում գտնել հերոսի համար: Ժամանակի պարբերականները նշում են, որ ըստ այդ պիեսի, «Կասակը ներկայացնում է հայի բաղարական միտքն ու զգուշությունը, իսկ Վարդանը հայի ուղամտությունը»³: Անցան տարիներ, սակայն չնվազեց Դեմիրճյանի հետաքրքրությունը V դարակեսի այդ իրադարձությունների նկատմամբ: Նա շարունակում էր պրայտել, խորա-

¹ Заметки Восточного отделения императорского археологического общества, XV, С. Петербург, 1904 г.

² «Հորիզոն», 1914 թ., № 34:

³ Նոյն տեղում:

նաև փաստերի, դեպքերի և դեմքերի հետազոտության մեջ: Ժամանակի հետ փոխվեց Դեմիրճյանի տեսակետը 451 թ. պատմագրական շարժումների գլխավոր դերակատարների և շարժիչ ուժերի վերաբերյալ: Դրան նպաստում էր գրողի ապրած ժամանակաշրջանը: 1941-ին սկսվել էր Հայրենական մեծ պատերազմը: Ոտքի էր կանգնել նաև հայ ժողովորդը, որովհետև ֆաշիզմի հաղթանակի դեպքում հայ ժողովրդին սպառնում էր 1915 թ. ոլքերգության կրկնությունը, այս անգամ Արևելյան Հայաստանում: Տարիների լարված աշխատանքն ընդունեց տեսնդազին ընույթը: Դեմիրճյանն աշխատում էր երկու ուղղությամբ. պատմաբանին վայել բախսնդությամբ նա ուսումնասիրում էր ոչ միայն Եղիշեին ու Փարավեցուն, այլև ուշ շրջանի պատմիչներ Սեբեսին ու Հովհաննես Դրասիանակերտցուն, Թովմա Արծրունուն ու Մովսես Կաղանկատվացուն, Ստեփանոս Տարոնեցուն և Կիրակոս Գանձակեցուն, վերջապես Վարդան Բարձրաբերդցուն ու Ստեփանոս Օրբելյանին, այսինքն՝ այն բոլոր պատմիչներին, որոնք ինչ-որ չափով անդրադարձել են Վարդանանց պատերազմին և իրենց վերաբերմունքն արտահայտել: Պատասխանատվության մեծ զգացումով Դեմիրճյանը բրինձ է հանձնել իր ուսումնասիրության արդյունքը «Վարդանանց պատերազմը»⁴ խորացուվ, որը լույս տեսավ 1943-ին «Սովետական գրականություն» ամսագրի մարտ և ապրիլ-մայիս միացյալ համարներում: Հենց նարտի համարում ամսագրի խմբագրությունը տեղեկացնում է ընթերցողներին, որ ապրիլ-մայիս միացյալ համարից սկսած շարունակաբար լույս է տեսնելու «Վարդանանը» պատմավեպը: Գրողի ստեղծագործական բորայում առաջինն ստեղծվել է պատմագիտական աշխատությունը, որի թեզերի գեղարվեստական ապացույցը դարձել է պատմավեպը: Սեր Խնդրից դուրս է քննարկել վեպը, վերհանել նրա արժանիքներն ու թերարյունները: Այսօր անդրադանալու ենք միայն գրողի պատմագիտական աշխատությանը, որը թեև ծավալով փոքր է, ընդամենը 53 էջ, սակայն խիստ տարրունակ՝ բարձրացրած հայցերի, քննարկված խնդիրների իրատապարյամբ և այժմեականությամբ: Նրա լույս տեսնելու օրվանից մինչև օրս մեզ քաֆանում է ավելի քան կեսարյա մի ժամանակահատ-

⁴ Դ. Դեմիրճյան, Վարդանանց պատերազմը, տես ԵԼԺ, հ. 12, էջ 298–351:

ված, սակայն ի պատիվ հեղինակի այն համապատասխանում է և համարուն է նաև այսօրվա գիտական պահանջներին ու չափանիշներին, որովհետո նա առաջնորդվել է միայն պատմական ճշմարտությամբ, գրողին ու գիտնականին վայել պատմական ճշմարտությամբ, գրողին ու գիտնականին վայել հայրենասիրությամբ:

Աշխատության սկզբում Եղիշեի և Փարպեցու հաղորդած տեղեկությունների համեմատական քննությամբ Դեմիրճյանը համառու շարադրում է դեպքերի զարգացման ընթացքը: Չնայած շատերին բվում է, թե պատմագրությունն ու բանասիրություննը տվել են վերջնական մեկնաբանությունները և նոր բան ասելու տեղ չի մնացել, հեղինակն իր խնդիրն է համարում Վարդանի կերպարի ամբողջացման միջոցով մշակել իր տեսակետը Վարդանանց պատերազմի հանգուցային հիմնախնդիրների նկատմամբ: Դրանք են՝ հայոց պետականության, հայ նախարարական տների կողմնորոշման, պատերազմի ծագման ու վախճանի հետ կապված խնդիրները: Այդ հարցերի պարզաբանման ժամանակ նա քննարկում է այլ պատմաբանների մեկնություններն ու գնահատականները, որ նրանք արտահայտել են երկու հիմնական սկզբնադրյութերի՝ Եղիշեի ու Փարպեցու նկատմամբ: Զննադատվում է Գարագաշյանը¹, որի Եղիշեին չի ընդունում իրեն հավաստի աղբյուր և Վարդանի ժամանակակից: Վերջինս արժեգրկում է Եղիշեին իրեն պատմագիր, նրա բույլ կողմը համարում է «վիպասանական նկարագրություններն ու լիրիկական գեղումները»: Դեմիրճյանը չի համաձայնվում նաև Ավինյանի և Կյուլեսերյանի հետ², որոնք Եղիշեին համարում են Փարպեցու հետո ընկած ժամանակահատվածի հեղինակ: Դեմիրճյանն առաջարկում է Եղիշեին ուսումնասիրել անմիջականորեն Եղիշեի միջոցով, հաշվի առնել հայոց պատմությանը բնորոշ գիծը՝ վկայաբանությունը: Հայ պատմիչների աշխատությունները գնահատելով իրեն վկայաբանություն՝ Դեմիրճյանն իրավացիորեն Եղիշեի բանաստեղծական նկարագրությունները համարում է իրականության ճշգրիտ արտացոլում, իսկ նրա ոճի վրա տեսնում

¹ Ա. Մ. Գարագաշեան, Քննական պատմութիւն հայոց, մաս Դ., 1895, թիվիս, էջ 111–168:

² Ա. Ակիմեան, Եղիշե վարդապետ և իր պատմութիւնն, հ. Ա. Վիեննա, 1932, հ. Բ, 1937: Բ. Կիլսենեան, Եղիշե, Քննական ուսումնասիրութիւն, Վիեննա, 1909:

է ժամանակի գրական բարձր ոճի, առանձնապես Աստվածաշնչի ազդեցությունը: Ինչ վերաբերում է Եղիշեի Վարդանին ժամանակակից լինելու հարցին, նա բազմարիվ համոզիլ փաստերով (Սիրիներսեի նամակի շարադրանքը, Վարդանի ճակատամարտից առաջ արտասահմած ճառը, ճակատամարտի ժամանակ ընկած իշխանների և նրանց տոհմակիցների ճշգրիտ բիպը), Դեմիրճյանը հավաստում է, որ Եղիշեն, խկապես, Վարդանի ժամանակակիցն է, դեպքերի անմիջական մասնակիցն ու ականատեսը: Հնարավոր չէ, որ Եղիշեն օգտվեր Փարպեցու կամ լիներ նրանից հետո հենց միայն այն փաստով, որ Փարպեցին ընկած հերոսների մասին հաղորդում է ոչ թե կոնկրետ, այլ ընդհանրացված արտահայտություններ, իսկ Եղիշեն մեկ առ մեկ բարկում է «յազգէն Մամիկոնիցից բազն Վարդան հարիու երեսուն և երեք արամբը, յազգէն Խորիսություննեաց Խորինն կորովի ինն և տասն արամբը»¹ և այդպէս շարունակ: Այս բվերն ու փաստերը չեն կարող լինել բանաստեղծական երևակայության արդյունք: Տարբեր փաստեր համադրելուց հետո Դեմիրճյանն արձակում է իր արդար դատավճիւրը: «Այս գիրքը (խորը Եղիշեի գրքի մասին է) գրված է սրտի արյունով և խղճի մաքրությամբ: Սրա մեջ ճշմարտության և արյարության բրդին է ջերմանում: ...Գեղեցիկ ձևի տակ բրդում է կենդանի փաստը»²: Ժխտելով նշված գիտնականների կարծիքները Եղիշեի ժամանակի և պատմության հավաստիության վերաբերյալ՝ Դեմիրճյանը, մեր կարծիքով, կատարում է ճիշտ ընդհանրացում. հետազոտողները՝ պատմաբաններն ու բանասերները, ցանկացած պատմիչի քննարկում և արժեքավորում են ընդամենը տասնամյակների լինթացություն: Ժղովուրդը նրանց ընթացքում է ենթարկում դարերի ընթացքում: Ժղովի պատմության երկու ստեղծողները ժղովուրդը ու ժամանակը, տվել են իրենց դատավճիւրը Եղիշեի և նրա պատմության վերաբերյալ, հաստատելով նրա պատմության, վավերականությունը: Ժամանակի ընթացքում ժղովուրդը իր ուղղումներն է մտցրել Եղիշեի մասին եղած գնահատումների մեջ: Դեմիրճյանի նման մտածողների ճշմարտացիությունը փաստում է նաև այս գիտաժողովը:

¹ Եղիշե, Վասն Վարդանանց և հայոց պատերազմին, Երևան, 1957, էջ 119:

² Դ. Դեմիրճյան, ԵԼԺ, հ. 12, էջ 321–322:

Աշխատության հիմնահարցերից մեկը Վարդանի, Վասակի և նախարարական մյուս տների կողմնորոշման խնդիրն է: Վասակի կողմնորոշումը որոշելով համեմատաբար հետ է. չնայած դեռ երիտասարդ նա օգնել էր անգամ Մերուպ Մաշտոցին՝ Սյունյաց աշխարհում դարձոցներ բացելով և քրիստոնեությունը ամրապնդելով գործում, հասուն տարիքում նրա ընդգծված փառասիրությունը, սին տեսների իրականացումը կասպում էին պարսից արքունիքի հետ: Թերևս կարող է տարակուասնը հարուցել այն փաստը, որ բյուզանդական կայսեր ուղղած դիմումին մասնակցել էր նաև մարզպանը, բայց գոյք դա դիվանագիտական բայլ էր: Ուրեմն, Վասակն ուներ պարսկական կողմնորոշում: Առավել դժվար էր Վարդանի կողմնորոշման հարցը: Հայոց սպարապետը երկար տարիներ հավատարմությամբ ծառայել էր պարսից պետությանը, դեկապարել հայ զինական ուժը նրանց քշնամիների՝ հոների և քուշաների դեմ մղված ճակատամարտերում, տարել փառավոր հաղթանակներ և արժանացել Հազկերտի պարզեներին: Այդ ժամանակ Սասանյան պատության կազմում Հայաստանը սկավառակում էր իր ներքին ինքնավարությունը և փաստորեն ուներ կիսանկախ պետականություն: Բայց փախվեց նրանց վերաբերմունքը. սպառնալիքը կախված էր ոչ միայն քրիստոնեական հավատի, այլև հայ ժողովրդի ազգային ավանդությունների վրա: Վարդանը դիմադարձ կանգնեց Սասանյաններին, նոյնիսկ կազմերս նախարարական տների դիմակայությունը: Արդյո՞ք այն պատճառով, որ նա ուներ բյուզանդական կողմնորոշում, մանավանդ Տիգրոնից վերադառնարուց հետո նա պատրաստվում էր մեկնել Բյուզանդիա, կամ Հայաստանի Արևմտյան տարածքը (ինչպես մեկնարանում են ուստինափառությունը ունանք): Բայց թե առողջ կայսեր մահից հետո Մարկիանոսի տված մերժողական պատասխանը կասկած չի թողնում, որ Վարդանը չուներ բյուզանդական կողմնորոշում: Եթե դաշինքով կամ դաշնակցային պարտականություններով բացատրենք կողմնորոշման խնդիրը, ապա կարող ենք Վարդանին համարել քուշաների և հոների կողմնորոշում ունեցողը: Բայց դա ճիշտ չէ լին: Ուրեմն ո՞րն է Վարդանի կողմնորոշումը: Սասանյանների պահանջը՝ ոչնչացնել քրիստոնեական կրոնը, մոգերի միջոցով մոտք գործել հայ ընտանիք, շարունակում էր ոչնչացնել ազգային բարերը, առանձնահատկությունները,

լեզուն, մի հիմնահարց, որի հետ չէր կարող հաշտվել Վարդանը: Պաշտպանելով քրիստոնեությունը Վարդանը դառնում էր ոչ թե հավատակից Բյուզանդիայի կողմնորոշում ունեցող գործիչ, այլ հաշվի առնելով եկեղեցական դասի պահանջը, եկեղեցու պաշտպանության միջոցով պաշտպանում էր հայ պետականությունը: Այդ քայլով նա ապացուցում էր, որ ոչ միայն սպարապետ է, այլև խոշոր քաղաքական-պետական գործիչ: Ուրեմն Վարդանի պայքարը հետապնդում էր թեկունք կիսանկախ պետականությունը, ազգային ինքնուրույնությունը և մշակույթը պաշտպանելու նպատակ: Հետևաբար, ճիշտ կիմնի Վարդանի կողմնորոշումը համարել ժողովրդի կողմնորոշում, ոչ բյուզանդական, ոչ պարսկական, այլ ժողովրդական:

Մյուս կարենու հիմնախնդիրը վերաբերում է Վարդանանց պատերազմի բովանդակությանը: Ի՞նչ էր Վարդանանց պատերազմը. դարեր շարունակ այն համարվել է կրոնական պատերազմ, այսինքն քրիստոնեությունը կրակապաշտությունից պաշտպանելու պատերազմ: Դա թեև ճիշտ, սակայն կիսատ բնուրագում է: Հավատափոխությանն առաջինն ընդդիմացավ հայ հոգևորա-կանությունը, բայց ոչ մենակ, այլ նախարարական դասի մեծ մասի օժանդակությամբ: Բայց դա դեռ թիշ էր պատերազմի բնույթը պարզելու համար: Այդ պատերազմին եռանդում մասնակցություն ցուցաբերեց ժողովուրդը՝ ինքնարուխ, առանց հրամանների, որովհետեւ առերև ուրացած հայ նախարարների հետ պարսից արքայի հրամանով Հայաստան եկած 700 մոգերը պետք է մտնեին հայ ընտանիքը պարսկացման գործը ի կատար ածելու համար: Ուրեմն, դա ժողովրդական պատերազմ էր: Կարող է հարց առաջանալ, հայ հոգևորականությունը և նախարարական դասի մեծ մասը երև պաշտպանում էր քրիստոնեությունը, ուրեմն կիսակե՞՞ր դեպի հավատակից պետությունը, դեպի Բյուզանդիան. գոյք այսուհետեւ բայց դարձյալ մի պայմանով՝ հայության ինքնուրույնությունը պաշտպանելու և ոչ մի դեպքում չձուլվելու պայմանով: Ուրեմն խնդիրը միայն քրիստոնեությունը չէ, այլ հայությունը, ազգային առանձնահատկությունները: Ապացույց՝ նոյն 451-ին Քաղկեդոնի ընդունած որոշումը և հայ հոգևորականության հրամանը այդ որոշումն ընդունելուց 451-ին: Հետևությունը մեկն է. դարձյալ շեշտվում է ազգային ինքնուրյան գաղափարը: Ժողովրդի ինքնարուխ մաս-

նակցությունը այդ պատերազմին ստիպում է Դեմիրճյանին այն որակել նախ իբրև ժողովրդական, ապա ընդգծվում և շեշտվում է Հայրենական պատերազմ արտահայտությունը: Գուցե դա մեծ զրոյի տուրքն է իր ապրած ժամանակաշրջանին, բայց չենք կարող շիամածայնել նրա հետ, որ «առանց հայ ժողովրդի ըմբուտացման ոչ հայ հոգեորականությունը, ոչ էլ իշխանական դասը կարող էին Հայրենական պատերազմ սկսել պարսից դեմ»:

Աշխատության կարևոր հիմնահարցերից է Վարդանի ուազմական ունակությունների, նրա զորավարական տաղանդի բնութագրման քննարկումները: Դեմիրճյանն առաջ է քաշում հայ ուազմագիտության ուսումնասիրության հատուկ ծրագիրը: Ի՞նչ պատերազմներ է մղել մեր ժողովուրդը և ինչպես: Ծիշտ է մի բան. ի բաց առյալ Տիգրան Ռ-ի մղած պատերազմները, հայ ժողովրդի բազմադարյան գրյուրյան լճացրում մղվել են միայն պաշտպանական մարտեր: Քանի որ Հայաստանի աշխարհագրական դիրքը և ռելիեֆը բազմարիվ լեռնահովիտների, միջանցքների և լեռնանցքների մի բավիր է ներկայացնում, խոշոր և տևական ճակատամարտերը համարյա անհնարին էին: Ընդունված էր մեծ ընդհարման ժամանակ արագ և ուժգին հարված, իսկ շարունակությունը՝ մանր, անակնկալ և արագ հարձակումներ: Հայկական բանակի ամենավճռական ուժը այրումին էր՝ ի սկզբանե անտի հայտնի հանդուգն և կայծակնային հարվածներով, հեռափոր, երկարօրյա երթերով: Հմուտ ուազմական գործին վայել բովանդակությամբ են քննարկված Վարդանի մղած ճակատամարտերի ուազմավարությունն ու մարտավարությունը: Դեմիրճյանը համենատում է Վարդանի, նրա նախորդների ու հետնորդների մղած ճակատամարտերը և հանգում այն եզրակացության, որ տարբեր ժամանակների հայ զորավարները՝ Մամիկոնյանները, Թեոդորոս Ռշտունին, Բագրատունինները, Գևորգ Մարզպետունին, Վահրամ Պահլավունին, անգամ Դավիթ Բեկը վարում էին նույն տակտիկան: Փոքր ժողովուրդները մեծարանակ քշնամու դեմ վարում են հանկարծակի հարվածի մարտավարությունը: Դեմիրճյանի բացատրությունները համոզիչ են և տրամաբանական: Նա չի համածայնվում պատմիչների հետ, թե Վարդանը գնում էր նահատակվելու, կամ հուսահատ կովի բռնվեց պարսիկների դեմ: Վերլուծելով Ավարայրի ճակատամարտի բո-

լր մանրամասները, նա հանգում է այն եզրակացության, որ Վարդանն ընդունել էր ակտիվ պաշտպանության ուազմավարությունը, որն իրականացնելու էր հարձակման միջոցով:

Դեմիրճյան քննախույզ պատմաբանն առավել ընդգծվում է վճական ճակատամարտի վայրը որոշելիս: Ո՞րն է Տղմուտ գետը, Ավարայրի դաշտը: Քննարկելով Հակոբ Մանանդյանի ճշտած Պևտինգերյան քարտեզի վրա նշված վայրերը նա չի համածայնվում ակադեմիկոսի տեղադրած Տղմուտի վայրին, որը հյուսիսից հարավ ձգվող Կարասու գետն է: Այդ դեպքում զորքերը պետք է կանգնենին գետի արևելյան ու արևմտյան ափերին, մինչդեռ դա հնարավոր չէր, որովհետև ոչ հայերը, ոչ էլ պարսիկները իրենց շին դնի բնական քանաքի վտանգի տակ: Դա պետք է լիներ այնպիսի մի գետ, որը հոսեր արևմտության արևելք, որպես զորքերը կանգնենին. հայերը՝ հյուսիսային, պարսիկները՝ հարավային ափերին: Դեմիրճյանը գտնում է, որ այդ գետն Ակ-սուն է, համաձայնվելով Գ-պուտս Շերմագանյանի հետ, որն անձամբ եղել էր այդ վայրերում և ուսումնասիրել տեղանքը: Տարիներ անց այդ վաստի ապացուցեց ակադեմիկոս Սուրեն Երեմյանը: Դեմիրճյանի աշխատությունը կարելի է քննարկել ավելի մանրամասներով, բայց բերված վաստերն էլ ծանրակշիռ ապացույց են այն բանի, թե պատմաբան Դեմիրճյանը ինչ մեծ պատասխանատվությամբ է լուծել իր առաջ դրված խնդիրները և գեղազետ Դեմիրճյանը գերազանցությամբ իրականացրել է դրանք «Վարդաններ» պատմավեպում:

Ավարայրի խորհուրդը, Գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2003, էջ 77-82:

ՍԱՂԱՋԻՍ ՕՐՄԱՆՅԱՆԻ ՊԱՏՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ

Հայ եկեղեցու պատմության մեջ հազվադեպ են այն անձնավորությունները, որոնք իրենց մեջ միավորում են հոգևորականի աշխատանքային և տեսական գործունեությունը: Մաղաքիա Օրմանյանը՝ XIX դարի վերջի և XX դարի սկզբի հայ եկեղեցու և հասարակական-քաղաքական կյանքի ականավոր ներկայացուցիչներից մեկը, այդ եզակի դեմքերից է: 1841թ. Կ. Պոլսի հոռոմեադապան ընտանիքում ծնված, Հռոմի ուսումնական հաստատություններն ավարտած, իմաստափրության, աստվածաբանության, եկեղեցական իրավագիտության մագիստրոսի կոչում ստացած, Հռոմի աստվածաբանական կաճախի անդամ ընտրված Օրմանյանը դիմագրավում է հոռոմեադապան հայությանը կարողիկության մեջ լուծելու քաղաքականությանը, իր վրա գրում հոռոմեական կղերի հայածները, հստակ գիտակցությամբ ցանկանալով պաշտպանել հայության ազգային դիմագիծը՝ վերապանում է հայ առաքելական եկեղեցու գիրքը: «Հռոմեադապանութենէ հեռանալու միտքը իմ վրա ոչ կիրքի մը վայրկենական որոշում և ոչ շահախիտութեան կեղծիք էր, այլ երկար ատեն խորհուած և կշռուած, և խոհական քայլերով յառաջացած գործ մը եղած է»¹: Հռոմեադապան եկեղեցում վարդապետի աստիճան ընդունած Օրմանյանը հայ առաքելական եկեղեցու գրկում ստանում է ծայրագոյն վարդապետություն, եականական առաջնորդություն, արքեպիսկոպոսություն. Իովելոր առաջնորդի պաշտոն է վարում Կարինում, կատարում է Կ. Պոլսի պատրիարքի, ապա Ամենայն հայոց կարողիկություն տարրեր հանձնարարությունները, աստվածաբանություն է դասավանդում Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, դառնում Արմաշի վանահայրը և դպրանոցի հիմնադիրը, 12 տարի անընդմեջ՝ 1896–1908 թթ. համիլյան «գուլումի» տարիներին, վարում է Կ. Պոլսի պատրիարքի պաշտոնը: Գործնական հոգևոր այդ աշխատանքներին զուգահեռ Օրմանյանը աշխատություններ է գրում. սկզբում, երբ դեռ կարողիք էր, իտալերեն լոյս է ընծայում «Հայ արևելեան կարողիկեայր», «Ռեվերտուս կամ Թուր-

¹ Մաղաքիա Օրմանյան, Խոհե և Խոսր, Երևանին, 1929, էջ 6:

թիս և պապություն», ապա ֆրանսերեն՝ «Արևելեան կարողիկաց կրոնական ազատությունը և քաղաքական իրավունքները», «Հատիկան և Հայր»: Հայ եկեղեցու դավանանքը պաշտպանելու նպատակով, Օրմանյանը գրում է «Հայոց եկեղեցին և իր պատմութիւնը, վարդապետութիւնը, վարչութիւնը, բարեկարգութիւնը, արարողութիւնը, գրականութիւնը և ներկա կացութիւնը» աշխատությունը, որը լոյս է տեսնում սկզբում ֆրանսերեն, ապա հայերեն, անգլերեն, ռուսերեն: Գլորին արագությամբ սպառվում է: Նրա անհրաժեշտության և կարևորության մասին է վկայում նշված բոլոր լեզուներով մի բանի անգամ իրատարակվելու փաստը:

Օրմանյան պատմաբան գիտնականի մեծությունը, նրա կատարած անշափելի աշխատանքն ընդգծվում է «Ազգապատում» երեք հասորանոց աշխատության մեջ: Նրա լրիվ վերնագիրն է՝ «Ազգապատում. հայ ուղղափառ եկեղեցոյ անցրերը սկիզբէն մինչև մեր օրերը յարակից ազգային պարագաներով պատմուած»: Կորողային այս ուսումնասիրությունն իրականում իր մեջ անփոփում է հայ ժողովով երկիազարանյա պատմությունը՝ Թադէոս Առաքյալից սկսած մինչև XIX դարի առաջին տասնամյակը՝ Մատրես Բ Կոստանդնուպոլսեցին: Այդ գրքի մեջ անքակտելիորեն իրար են միականակած հայ ժողովուրդն ու իր եկեղեցին իրեւ անբաժան, մեկը մյուսով պայմանավորված էությունները: Դարեր ի վեր պետականությունից գորկ հայ ժողովովի համար եկեղեցին իրականացրել է ոչ միայն հոգևոր, այլև քաղաքական-պետական իրավասություններ, իր մեծ ավանդն է ներդրել հայապահապատճեան, ժողովովի հավաքականությունն ու միասնությունն ամրապնդելու դժվարին գործում: Այդ պատճառով «Ազգապատում» երեք հասորերն իրականում հայ ժողովովի ինքնատիպ պատմությունն են՝ գրված մեկ անձի կրոմից: Անգամ թերևսակի ծանորությունը աշխատության հետ զարմանանում է ուսումնասիրություններին հեղինակի տրնաջան աշխատանքով, անափ աշխատայիրությամբ, գործի ընդգրկման լայնքով և խորությամբ:

Քանի որ ես հայ ժողովովի պատմության XIX դարի մասնագետ եմ, ապա այստեղ քննարկելու եմ «Ազգապատում» միայն Գ. հասորում արտահայտված պատմագիտական հայացքները: Գ. հասորն ընդգրկում է 1809–ից 1908 թթ. ընկած ժամանակահատվածը: Թե ինչ մեծ նշանակություն է տալիս հեղինակն այդ ժամանակաշրջանին, երևում է հա-

տորների բովանդակության համեմատությունից: Ա և Բ հատորներն ընդգրկում են մեր բարձրության I դարից մինչև XIX դարն ընկած ժամանակաշրջանը, իսկ Գ հատորը՝ միայն XIX դարը և XX դարի առաջին տասնամյակը: Երկու հատորների պատմությունը Օրմանյանը շարադրում է պատմիչների, իրենից առաջ գրված աշխատությունների հիման վրա՝ այն դեկով և քննարկելով պատմաբանի իր պրիզմայով անցկացնելով, իսկ Գ հատորի իրադարձությունների մեջ մասի ականատեսը և մասնակիցն է եղել հեղինակը: Այդ հանգամանքը յուրօրինակ ձևով և հեշտացնում, և դժվարացնում էր Օրմանյանի գործը: «Պատմագրին դեռ»¹ խորագիրն ունեցող հատվածում Օրմանյանը գրում է, թե ուստինասիրողներից ոմանք անպատշաճ են համարում ժամանակակից պատմություն գրելը՝ բողնելով այն հետաքա սերունդներին, որ «անկողմնակալ կերպով և առանց կիրքի, առանց անձնական տեսութեանց եղելութիւնները կշռեն և պատմեն»²: Նա չի ցանկանում հետևել այդ ընթացքին՝ գտնելով, որ «պատմական եղելութիւնները պետք է ժամանակակիցներէ, իմա՝ գիտակից և մասնակից անձերէ վկայվին, որպեսզի տրամարանական և իրավագիտական տեսակետով ալ ստուգութեան հավաստիք կրեն և իրոք ալ մեր հետազոտութեանց մէջ միշտ ժամանակակիցներու, գոնք մերձակիցներու վկայութեանց և գրութեանց կը դիմենք ստուգութեան փաստ գտնելու համար»³: Մյուս կողմից Օրմանյանն զգուշացնում է պատմաբան գիտնականներին, որ «անձնական կիրքերը և անհատական կարծիքները շնատուցվեն իրեն պատմութիւն», ուստի դրա համար անհրաժեշտ է շափակոր լինել գնահատականների և քննադատության մէջ, շուայլել ոչ գովեստներ, ոչ պարսավանքներ: Իր գործի դժվարությունը նա բացատրում է ճրանով, որ «ազգային ժամանակակից պատմութիւնը տակավին իր պատմաբանը ունեցած չէ և կերպով մը այդ դատարկը լեցնելու կոչված կը գտնիլիք»⁴:

Քննենք, թե ինչպես է կատարում իր խոստումները ժամանակի ան-խոյն հետազոտողն ու պատմագիրը: XIX դարի ուսումնակրությունը

¹ Ա. Օրմանյան, Ազգապատում, հ. Գ, Ս. Էջմիածին, 2001, էջ 4579-4582:

² Նոյն տեղում, էջ 4580:

³ Նոյն տեղում:

⁴ Նոյն տեղում, էջ 4581:

Օրմանյանն սկսում է Եփիեմ Զորագեղցու կարողիկոսական շրջանից, այսինքն՝ XIX դարի սկզբից, երբ Ուստաստանը, վերջացնելով Պետրոս Սեծի ժամանակից սկսած հետախուզական գործողությունները, նպատակամղվում է աստիճանաբար իր տիրապետությունը հաստատել Անդրկովկասում: Դարասկզբի ոուս-պարսկական և ոուս-քուրքական պատերազմների ուազմական գործողությունների նկարագրությունից անզամ մնաք զգում ենք Օրմանյան պատմագրի ոուսամնաւ ուղղվածությունը: Ինչքան էլ նա անկողմնակալ դիրք գրավելով մեծարանքի խոսքեր է գրում Աքքաս Սիրովայի մասին, այնուամենայնիվ, անբարույց նշում է արեւելահայերի, ինպէս նաև արևմտահայերի ոուսական կողմնորոշման մասին, «ոուսաց հանդէաւ հայերուն ունեցած մեծ վստահութեան և մեծ համակրութեան մասին»¹, շեշտում պարսկական «անկանոն և բռնական տիրապետութեան նեղութիւնները», որոնց պատճառով «Ուսիսա իրքների ազատաբար կողջունուէր և անոր գալուստը կը բաղձացուէր»: Օրմանյանը գովեստով է արտահայտվում ոուս-պարսկական պատերազմին մասնակցած հայ կամավորների մասին, շեշտում այդ գործում Ներսէս Աշտարակեցու մնաք ներդրումը, ի վերջո՞ Արևելյան Հայաստանի ոուսական տիրապետության տակ անցնելը: Այս իրադարձությունների բացատրության ժամանակ պատմաբանն անդրադասնում է Ներսէս Աշտարակեցի և Երմոլով, Աշտարակեցի և Պասկվիչ, Աշտարակեցի և Կարրեցի փոխհարաբերություններին և աներկրայորեն մեղադրում Պասկվիչին ու Կարրեցուն, զովարենում Ներսէս Աշտարակեցուն, նշում նրա մեծագործությունները բոլոր ասպարեզներուն: Փաստորեն Օրմանյանը տարբերակված մոտեցում է ցուցաբերում Ուստական կայսրության նկատմամբ: Դրական գնահատական տաղով Արևելյան Հայաստանի Ուստաստանին միացնանք, նա բացասական դիրքորոշում է ընդունում Ուստաստանի՝ Հայաստանում վարած գաղտրային քաղաքականության նկատմամբ, որն արտահայտվում է Ուստաստանի կողմից հայկական մարզ ստեղծելու, ապա վերացնելու և հայ եկեղեցու կանոնադրությունն ընդունելու մէջ²: Խիստ քննադատության են արժանանում «Պոլոշություն»-ի հեղինակները, որոնց հաստատել էր ցարական կառավարությունը:

¹ Նոյն տեղում, էջ 3898:

² Նոյն տեղում, էջ 4250-4250:

նը, և բոլորվին անտարքեր էր զոմվել ժամանակի կարողիկոս Հովհաննես Կարբեցին: Դրանք Սերովք Արարատյանը և Շահան Ջրախոյանն էին, մեկը՝ կարողիկ հոգեորական, մյուսը՝ կարողիկ աշխարհական, իայոց լեզվի ուսուցիչ Փարիզում, որոնք անհաղորդ էին ազգային եկեղեցու ավանդություններին և եկեղեցական կանոնակարգին, նրանք «ոչ հայոց գիրը գիտին և ոչ պատմութիւնը, ոչ եկեղեցական օրէնքները և ոչ ծէսեր»¹: Քանի որ ոռոսական պետության սկզբունքը եկեղեցական իշխանությունը պետական իշխանությանը ենթակելն էր, եկեղեցի և պետությունի մեջ գերազունքը պետությունն էր, ապա այդ պատճառվ Ռուսական կայսրությունը ցանկանում էր այդ սկզբունքները տարածել իր իրավասության տակ գտնվող բոլոր եկեղեցիների վրա: Օրմանյանը սուր քննադատության է ենթարկում «Պոլոյենիու»-ն, մեկ առ մեկ քննարկում նրա 141 հոդվածները, որոնք վերաբերում էին հայ եկեղեցու ընդիհանրական իրավունքներին և արտոնություններին, կարողիկոսին, Սինոդին, պրոկոռորին, քննակալ առաջնորդներին, հոգևոր դպրոցներին, եկեղեցու և հոգեորականների եկամուտներին և այլն: Օրմանյանին ամենից շատ վրյուղեցնում էր այն փաստը, որ «Պոլոյենիու» աշխարհականներին հեռացնում էր եկեղեցու գործերին միջամտելուց, մինչդեռ դա ամբողջովին հակասում էր հայ եկեղեցու ազգային քնոյթին: Մյուսը՝ Սինոդի և պրոկոռորի ստեղծումն էր, իսկ ամենաբացասականը՝ պետական իշխանության միջամտությունն էր եկեղեցու գործերին: Այնուհանդեք, Օրմանյանը միանգամայն անաշառ զնահատական է տախու «Պոլոյենիու»-ին, նշելով նրա առավելությունը արևմտահայոց Ազգային սահմանադրության նկատմամբ. «Եկեղեցական բարեկարգութան համար աւելի ազդեցիկ եղած է Պոլոյենիին ռուսահայոց համար, քանի սահմանադրութիւնը տաճկահայոց համար»²: Օրմանյանը քննադատական վերաբերմունք է դրսերում նաև ցարական կառավարության 1903 թ. հունիսի 12-ին ընդունած հայ եկեղեցու կալվածքները և ողջ ունեցվածքը պետականացնելու (քննագրավելու) օրենքի նկատմամբ: Ծեշտելով, որ հայ եկեղեցու ունեցվածքը ստեղծվել է ողջ աշխարհի հայության նվիրատվություններից, նա իբրև արևմտահայոց պատ-

¹Նոյն տեղում, էջ 4152:

²Նոյն տեղում, էջ 4267:

թարք իր բողոքն է արտահայտում Կ. Պոլսի Կրոնական ժողովի անդամ հոգեորականների անունով և ստորագրություններով բողոքի դիմումներ է հղում ցարական արքունիքին: Այդ իրավաբաժությունների մասնամասն նկարագիրն իր արտացոլումն է գտնել «Ազգապատում» Գ. հատորում¹: Չնորդելով ցարիզմի քաղաքականության հակահայկական ուղղվածությունը, Օրմանյանը աշառու վերաբերմունք է դրսերում ազգային կրոսակցությունների գործունեության նկատմամբ, ողջ մեղքը բարդում է նրանց վրա, ճիշտ շրմբունելով (գուցե և շցանկանալով տեսնել) պատճառահետևանքային կապը:

Օրմանյանի պատճազիտական հայացքներից հետաքրքիր է նրա վերաբերմունքը արևմտահայերի Ազգային սահմանադրության նախագծի նկատմամբ, անդրադատնայով ժողովրդական ցոյցերին, սահմանադրության հեղինակներին, ասպա կառավարության կողմից նրա հաստատմանը: Նշելով, որ Սահմանադրության նախնական տարրերակն ունեցել է 150 հոդված, իսկ պետության կողմից հաստատվածը՝ քննամենը 99-ը, շնայած այն հանգամանքին, որ ավելացել են նոր գլուխներ, նաև մեկ առ մեկ քննարկում է, և ցոյց տալիս, որ նախնական տարրերակն ավելի առաջադիմական էր և օգտակար ազգի համար, քան պետության կողմից հաստատվածը: «Ո՞վ կարող է լինել Կ. Պոլսի պատրիարք» հարցին Սահմանադրության նախնական տարրերակը փաստում էր, որ պատրիարքը պետք է լինի էջմիածնի կարողիկոսի կողմից ձեռնարկված եպիսկոպոս: «Պետության կողմից հաստատված տարրերակում զնշվում է էջմիածնի կարողիկոսի հիշատակությունը և հաստատվում «զոնեն ի հորմէ սկսեալ օսմանեան հպատակ»-ը, որի պարտականությունն է «հաւատարիմ մնալ տերութեան և ազգին»: Քննարկելով սահմանադրության տարրերակի՝ պետության կողմից զնշված և ավելացված հոդվածները՝ Օրմանյանն իր առաջ խնդիր է դնում «իբրև անաշառ պատճազիր և անկաշկան քննասելք» իրականության պարագաները շնածկել իր ընթերցողներից: Իսկ որո՞նք են այդ պարագաները: Արձանագրելով, որ Սահմանադրության հաստատումից հետո 1860 թ. սկսած անցած կես դարը (այսինքն՝ մինչ աշխատությունը գրելու ժամանակահատվածը) եղել է

¹Նոյն տեղում, էջ 5560–5592:

ազգային զարգացման և հառաջադիմության շրջան, նա գտնում է, որ ճիշտ չեր լինի այդ ամենը վերագրել արևմտահայերի Սահմանադրությանը, որ դա դարձ պահանջն էր, միջազգային շփումների արդյունքը, մասնավանդ՝ «պետք չէ մոռնալ, որ ոռուահայեր առանց տաճկահայոց Սահմանադրութեան անոնցմ» աւելի յառաջացած և զարգացած կը գտնին այսօր»¹: Օրմանյանն իրավացիորեն արևմտահայերի սահմանադրությունը համարում է «զաղղիական երկրին ու մքնոլորտին ազդեցութիւններէն առաջնորդուած» մի կանոնադրություն, ակնարկելով, որ նրա հեղինակներն իրենց կրությունը ստացել են Ֆրանսիայում և սահմանադրությունը գրել են ըստ այդ երկրի պահանջների. նրա մեջ խախտված է հոգևորականների և աշխարհականների բվական հարաբերությունը, և Օսմանյան պետությունը նրանից հանեց ժողովրդական հոդվածները և հաստատեց իրեն հարմար տարրերակը (Մ. Նալբանդյանի բնորոշումով «քրիստոված սահմանադրությունը»), որի հաստատողն ինքը՝ բուրքական եպարքոսը, հայոց Սահմանադրությունն անվանեց «քառակուսի անիվ մը, որ զայն դարձնել ուղղողներուն փորձանք պիտի ըլլա»: Այս բոլորը բացահայտելոց հետո Օրմանյանն ավելացնում է. «պատմազիրի անհրաժեշտ առնչութենէն շխուսափելու տեսակետէն այդ տողերուն շարժադիրը»²: Իսկ մենք կավելացնենք, որ հարգանքի արժանի է հեղինակի խոստովանությունը, եթե հաշվի ենք առնում ով է հեղինակը և երբ է գրվել աշխատությունը:

Առանձնահատուկ է Օրմանյանի հայացքը «հայկական խնդրի» (կամ հարցի) առաջացման նկատմամբ: Մանրամասն քննարկելով 1877–78 թթ. ռուս-բուրքական պատերազմի պատճառները, ընթացքը և հետևանքները՝ Տերրիայի և Զետնողորիայի անկախությունը, ազատ Բուլղարիան, Բունիան և Հերցեգովինան Ավստրիային հանձնելը, նա գրում է. «Հայն ալ նեղուած ու հարստահարուած տարր մըն էր Թուրքիոյ մեջ... զի Ասիոյ խորքերը անտեր ու անտերունչ մնացած էր... անզուսպ ցեղերէ շրջապատեալ և ոչ ընտրելագոյն պաշտոննեաներով կառավարուած»: Արևմտահայության վիճակի նկարագրությունից նա անցնում է Ն. Վարժապետյանի գործունեության գնահատականին՝

նրան վերագրելով հայկական խնդրի արծարծման հեղինակությունը: Իրականությանը շիմապատասխանող մի փաստ է դա, որը նշվում է ժամանակի մի շարք գործիչների և հեղինակների աշխատություններում, ես դրան հանգանանորեն անդրադարձել եմ Մկրտիչ Խորիմյանին նվիրված իմ աշխատության մեջ:

Ճիշտ է գնահատված մեծ տերությունների դիրքորոշումը Ռուսաստանի հայրանակի պտուղները սեփականելու և Թուրքիայի status quo-ն ապահովելու գործում: Ճիշտ է, համարյա այժմնական Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ և Բեռլինի վեհաժողովի 61-րդ հոդվածների համեմատությունը և արդյունքների գնահատումը: «Հայաստան բառը վերցուեցաւ և միայն հայաբնակ զավաներ յիշուեցան, ուսական խնամակալութեան տեղ վեց տերութեանց հսկողութիւնը դրուեցավ, ուսական գոնոյերու երաշխատոր ներկայութեան տեղ ժամանակ առ ժամանակ օսմանեան կառավարութենէ տրուելիք ծանօթութիւնը փոխանակուեցաւ: Սան-Ստեֆանոյի մեջ խոստանայ ըստածը՝ Պետին լոկ յանձն կառնի եղաւ»¹: Հետաքրքիր է Օրմանյանի վերաբերմունքը հայկական խնդիր հարուցելուց հետո սկսված ազգային-ազատագրական շարժումների նկատմամբ: Պատմաբանները սովորաբար արձանագրում են Օրմանյանի պահպանողական կեցվածքը և ազատագրական շարժումների նկատմամբ ունեցած նրա բացասական դիրքորոշումը: Մեզ բվում է, որ հանգանանալից և մանրակրկիտ հետազոտությունը կփոխի այդ կարծիքը: Պատերազմից անմիջապես հետո Սան-Ստեֆանոյի պայմանագրի և Բեռլինի վեհաժողովի հիմնական արդյունքը Օրմանյանը գտնում է նրանում, որ Եվրոպական Թուրքիայում ապստամբած տարրերի վիճակը բարփորվեց: Հայ ժողովուրդը ևս գտնվում էր ծանր վիճակում և մեծ տերություններից ակնկալում էր «քարեբաստիկ որոշում»: Բայց հայը «ոչ ապստամբութիւն փորձած է, ոչ կառավարութեան դէմ շարժում որած է և ոչ բռնադատական միջոցներու դիմած է»: Նա իր կացության մասին հայտնել էր կառավարությանը (որը դա շատ լավ գիտեր) և ջանում էր մեծ տերությունների գործը շարժել: (Հիշենք Խորիմյանին՝ ես պիտի լամ): Օրմանյանը գտնում է. «Սակայն

¹ Նոյն տեղում, էջ 4689:

² Նոյն տեղում, էջ 4691:

¹ Նոյն տեղում, էջ 4993:

իր նախընտրած ոճը ապարդիս էր դարձած, և Պետյինի դաշնագիրը գիրենք աւելի բախտառորած չէր և իրը պատճառ կը ցուցուէր իրեն գործած միջոցին տկարութիւնը»¹: Այդ պատճառով Բեռլինից վերադած Խրմանյանը երկարէ շերեփի կոչն էր անում:

Օրմանյանը գտնում էր, որ հայկական խնդիրը՝ բարեկարգությունների խնդիրը, չի իրազորդվել: 1880 թ. մեծ տերությունների համիմաստ և հավաքական վերջնագրերին թուրքիան տվեց մերժողական պատասխան՝ համարելով միջամտություն իր ներքին գործերին, և այդ բոլոր ստիպեցին հայ հասարակական գործիչներին դիմելու գործնական բայլերի: Օրմանյանը հայտարարում է, որ դա էին հուշում նույնիսկ օսմանյան մայրաքաղաքի օտարերկրյա դեսպանները, որոնք գտնում էին. «Երէ հայերը իրավուն բան մը ձեռք ձգել կուզեն, պէտք է իրենք առջև անցնին և հաստատուն կամքերնին գործնականապէս ցուցնեն և շոշափելի կերպով հաւաստեն, թէ իրենք են երկրին բնիկներն ու տերերը և ոչ քիրոյերը. զի զինեալն է, որ երկրի մը տէրը կը ճանչցուի և ոչ անգենը, իսկ արգահատաճք շարժելու համար մորացիկ հայեցուածներ բավական չեն արդիւնք պատրաստեք»²: Ըստ հեղինակի հենց այդ մտայնությունն էր, որ հայության մեջ փոփոխություն առաջ բերեց. «Անաշառ կշռադատող կը տեսնէ, որ օսմանեան կառավարութիւնն էր փոփոխութեան պատճառ տուողը, երբ հանդարտ աղերսարկուն կանարգեր և խռովար պահանջողը կզոհացնէր»: Այս խոսքերը պատմագրի գրչի տակ հնչում են իրք դատավճրու և ազատագրական շարժման առաջացման փայլուն բացատրություն: Նոյնիսկ Զեյրունի 1862 թ. ապստամբությունը (իր խոսքերով՝ խլոտումները), 1895-ի ապստամբությունը, Վանի, Կարինի հարտահարված նահանգներում սկսված հոգումները նրանից ստանում են այդ բացատրությունը: (Չէ՞ որ նա Կարինի «Պաշտպան հայրենեացի» գաղտնի դեկավարներից էր): Այլ է հարցը, երբ խոսքը վերաբերում է կոտակցություններին և նրանց գործիչներին: Նրանց նկատմամբ Օրմանյանն ունի առավելապես բացասական դիրքորոշում: Նա կողմնակից է իր խոսքերով «խաղաղ շարժմանը», իհարկե, ինքն էլ չի

¹ Նոյն տեղում, էջ 5017:

² Նոյն տեղում, էջ 5060:

պատկերացնում կամ չի կարողանում բացատրել, թէ ո՞րն է խաղաղ շարժումը:

Հետաքրքիր են Օրմանյանի հայացքները հայ եկեղեցու նվիրապետությունների նկատմամբ: «Ազգապատումի» բոլոր հատորներն անդրադառնում են Կ. Պոլսի և Երուսաղեմի հայկական պատրիարքությունների, Աղքամարի և Կիլիկիայի կարողիկոսությունների՝ Ամենայն հայոց կարողիկոսության հետ ունեցած հարաբերությունների հարցերին: Մանրամասն տալով ազգային հոգեսր այդ հաստատությունների պատմությունները, տագնապները, պատրիարքների և կարողիկոսների գործունեության ողջ բնագավառը, Օրմանյանը հանդէս է բերում, մեր կարծիքով, միանգամայն ճիշտ մոտեցում. բոլոր այդ նվիրապետությունները Ամենայն հայոց կարողիկոսությունը պէտք է համարեն գերակա իրենց նկատմամբ, ոչ մի րոպէ շնուածեն հակարոս լինելու մասին: «Պատահական չէ, որ նա ընդգծում է. «Էջմիածինը հայ ազգին հոգին է, հայ ազգին սիրուն է, նա ամբողջ ազգինն է, նա բոլոր եկեղեցեաց մայրն է»: Ճիշտ է վարվում պատմաբանը նման մոտեցում պահանջելով նաև Ամենայն հայոց կարողիկոսից, որը պարտավոր է ընդունել այդ նվիրապետությունների գոյության իրավունքը և իրեւ հայր հոգալ իր զավակների համար: Այդ հողի վրա էլ նա ըննադատում է Գերզ Դ Կոստանդնուպոլսնեցուն, որն ամեն կերպ ջանում էր ոչնչացնել Կիլիկիայի և Աղքամարի կարողիկոսությունները: Կարեկի է և համաձայնվել, և վիճել ամեն մի կարողիկոսի կամ հոգեսրականի՝ Օրմանյանի տված գնահատականի հետ, բայց որ գործ ունենք պատկանելի գիտնական պատմաբանի հետ, որի աշխատության արժեքը գնալով պէտի է մեծանում սերունդների աշքին, կասկածից դուրս է: Եվ միանգամայն համաձայն ենք Բարեկեն եաւ. Կյովեսերյանի արտահայտած կալծիքի հետ. «Այս գործը (Ազգապատումը) հասունցած և հանդարտած Օրմանեանին գրուս-գործոցն է... Ազգային եկեղեցական պատմութեան մեջ այնքան խորը կերպով դիտած և ըմբռնած է դէպերուն տրամարանական ծագուն և յառաջատութիւնը, որ կարծէս իր ձեռքով կը շոշափէ իրողութիւնները և կը խօսի պատմական դէմքերու հետ: Օրմանյանի Ազգապատումը իր ծրագրով, իր ծաւալով, իր նպատակով բոլորովին նորոգ բան մըն է և իր հեղինակը իրական հեղինակ

մըն է, տէրը և դատաւորը իր նիւթին, ոչ թէ պարզապէս հաւաքող մը կամ հետևող մը: Օրմանեանը ինչպէս իր նախայիշեալ գործերուն, նոյնպէս իր «Ազգապատումի» մէջ կրիւրեղանայ ոչ միայն իր մտաւոր կարողութիւններով, այլ նաև իր փորձառնորդիւններով, իր նկարագրով»¹:

Հայագիտության արդի վիճակը և զարգացման հեռանկարները, Խողածների ժողովածու, 2004, էջ 573–578:

ՊԱՏՍԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷԶ

*Հարցազրոյց դոկտ. Էմմա Կոստանդնեանի հետ
Հարցազրոյցը վարեց Գրիգոր Շարիսանեանը*

«ԱՍՊԱՐԵՉ»- Վերջերս կարճատև այցելութեամբ շրջանս կը գտնուէր Հայաստանի Գիտութիւններու ազգային ակադեմիայի Պատմութեան իիմնարկի Հայ ժողովուրդի նոր պատմութեան բաժինի վարիչ՝ պատմական գիտութիւններու դոկտ. Էմմա Կոստանդնեան:

Օգոտուելով այս պատեհ առիրէն, «Ասպարեզ» հարցազրոյց ունեցաւ տիկին Կոստանդնեանին հետ:

ՀԱՅՅ - Տիկին Կոստանդնեան, ներկայուցուցք դուք ձեզ ձեր մասնագիտական ասպարեզին մէջ:

ՊԱՏՍԱԽԱՆ - Ես հայ ժողովուրդի պատմութեան մասնագէտ եմ: Այդ մասնագիտութիւնը ընտրել եմ 1964 թուականին, երբ ընդունուեցի Գիտութիւնների ազգային ակադեմիայի Պատմութեան իիմնարկի նոր պատմութեան բաժնի ասպիքանուուրա: Զնայած իմ կրութիւնը բանասիրական է, բայց ես նախընտրեցի փոխել մասնագիտութիւնս, և դառնալ հայ ժողովուրդի պատմութեան մասնագէտս: Հայ ժողովուրդի պատմութեան ուսումնասիրութիւնը իմ ողջ կեանքի ամենասրբազն գործն է եղել: Գիտական առաջին քայլերը կատարելու ժամանակ, ես վերցրեցի

¹ Մ. Օրմանեան, Ազգապատում, Հ. Գ. Երուսաղեմ, 1927, էջ Ժ-Գ:

այնպիսի մի թեմա, որը շատ սակավ էր ուսմնասիրուած. Գարեգին Սրբանձութեանցի հասարակական-քաղաքական գործունեութիւնը: Նա Վարազայ «Ժառանգաւորաց» վարժարանի շրջանարտներից է, Ալրտիշ Խորիմնանի լաւագույն եւ աւագ սաներից. Ես չեմ ուզում ասել, թէ ով էր Գարեգին Սրբանձութեանցը: Նրա ծառայութիւնները հայ մշակույթին, հայ ազգագրութեանը, ժողովրդագրութեանը, բանագիտութեանը այնքան մեծ են, որ նրա մասին խօսելը կամ ծանօթացնելը կարծես թէ յանցագործութիւն է: Մի երկու բառով ասեմ, թէ նա մեր ժողովրդին պարզեւել է ժողովրդական էպոսներից լաւագոյնը՝ «Սատունցի Դափիք»-ը: Եթէ համենատում ենք տարբեր ժողովուրդների էպոսները՝ իսպանականը, իռլանտականը, անգլիականը, ռուսականը և հայկականը, միայն այն ժամանակ զգում ենք հայկականի առաւելութիւնը: Ուստական «Ասք Իկորի զնոյի մասին» լապսի հերոսը, գերի ընկած ասում էր. «Տուէր ինձ ազատութիւն եւ ես իմ խայտառակութիւնը կը կարողանամ վերացնել»: Սաստիցի Դափիքը չի ասում՝ տուէր ազատութիւն, նա ընդհակառակը, այն ազնի մարդն էր, որ իր հօր Խաչ Պատարազին, Քուուկի Զալապին վերցրած հօրենքորից, զախս է Մսրայ Սելիքի զօրքերի վրայ եւ ասում. «Ով քնած է, արքուն կացէր, ով արքուն է, ելքը կեցէր, թէ չէ շասէր, թէ մենք քնած՝ Դափիք զոռ-զոռ եկաւ զնաց»: Այսինքն, նա ոչ մի նենց գործ չէր կատարում, ահա դա էր մեր Սաստիցի Դափիքը: Այդ էպուսի առաջին պատումը մեր ժողովրդի համար յայտնաբերեց, անելի ճիշտ ժողովրդից վերցրեց եւ ժողովրդին վերաբարեց Գարեգին Սրբանձութեանցը: 1873-ին նա Սշոյ Առնիստ զիսդի երեսփոխան Կրպէից լսեց նրա պատմածը, զրին յանձնեց եւ լոյս ընձայեց 1874ին, նրան կցելով զիտական զնահատական: Եւ այսօր, երբ յայտնաբերուել է էպոսի անելի բան 200 տարբերակ, Սրբանձութեանցի յայտնաբերածը աշքի է ընկնում իր ողջ հարազատութեամբ եւ մասնաւու Սրբանձութեանցի՝ էպոսին սրբուած զնահատականը մինչեւ այսօր էլ բարմ է եւ չի կորցրել իր նշանակութիւնը:

Չեմ կարող շխոսել նաև Սրբանձութեանցի «Թորոս Աղբար, ճամբրոյ Հայաստանի» աշխատութեան մասին: Այդ աշխատութիւնը բանի է բոլոր սերունդների համար, այն Արևուտեան Հայաստանի՝ բռնակալի կողմից մեզնից բռնագրաւուած հարենիքի ճշգրիտ նկարագրութիւնն է:

Ոտքով կամ ջորու կոնակին նա շրջել է ամբողջ Արևմտեան Հայաստանով եւ նկարագրել համարեա բոլոր նահանգները. որ նահանգի որ զիողը ինչ ուստιմնարան ունի, ինչքան աշակերտ ունի, ինչքան հայորին, ինչքան այլազգի բնակչութիւն: Այդպիսի տեղենկուրիները այսօր աւելի քան անհրաժեշտ են մեզ: Մենք երէ գրում ենք ժողովրդագրութեան նասին, ապա պէտք է համեմատենք 1878 քուականին Սրուանձտեանցի բերած այդ տուեալները: Գ. Սրուանձտեանցի կատարած մեծ գործը բարձր գնահատուեց ուստական կայսերական ակադեմիայի կողմից, նա ստացաւ ակադեմիայի պատուատը անդամի կոչում: Մինչդեռ նա երբեք չէր եղել Ռուսաստանում:

Իմ թեկնածուական թեզը ես պաշտպանեցի 1970-ին, քայց այն լոյս տեսաւ միայն 1979 քուին, որովհետև բոլորդ զիտէք, խորհրդային շրջանում վարդապետի մասին զիրք գրելը, հրատարակելը շատ մեծ դժուարութիւն էր: Նոյնիսկ չէր ընդունվում «քարոզ» քառը, ասում էին՝ պէտք է գրենք Սրուանձտեանցի ելոյքը եւ ոչ թէ քարոզը, քայց կարողացանք այդ բոլորը յադրահարել եւ 1979-ին լոյս տեսաւ իմ անդրանիկ զիտական աշխատութիւնը՝ «Գարեգին Սրուանձտեանց. կեանքը եւ գործունեութիւնը»:

Արդէն աշակերտի մասին գրել էի, որեմն իմ առաջ կանգնած էր աւելի մեծ մի խնդիր՝ գրել ուսուցչի մասին, եւ իմ հետագայ ուսումնասիրության թեման դարձաւ Գարեգին Սրուանձտեանցի ուսուցիչը՝ Մկրտիչ Խրիմեանը, որը դեռ տակաւին 40 տարեկանում Մշոյ առաջնորդական փոխանորդ եղած ժամանակ Տարօնի հայութեան կողմից արժանացաւ «Հայրիկ» կոչման: Այդ «Հայրիկ» կոչումը, պատուանունը ուղեկցեց նրան ողջ կեանքում եւ նա դարձաւ ամբողջ հայութեան ամենայն հայոց «Հայրիկը», հետագայում Ամենայն հայոց կարողիկոս Մկրտիչ Խրիմեանը: Նրան նուիրուած աշխատութիւնը բաղկացած է 450 էջից: Այն ես սյաշտպանեցի որպէս դրվորական ատենախոսութիւն: Ժամանակակիցների կողմից մեծ ընդունելութիւն գտավ զիրքը. 6-7 գրախօսական լոյս տեսաւ դրա մասին հանրապետութեան զիտական պարբերականներում: Խրիմեանի մասին Սփիտքում գրուել են բազմարի աշխատութիւններ: Ի՞նչն էր իմ աշխատութեան նորույքը. արխիտային փաստարդերը, այն, ինչից Սփիտքի զիտականները գորկ էին: Միայն մի անգամ Քիրտեանը հրատարակել էր մի զիրք՝ Խրիմեանի պատրիարքական

շրջանի փաստարդերը...: Հայաստանի Չարենցի անուան գրականութեան եւ արուեստի թանգարանում գտնում է Սրուանձտեանցի ֆոնտը՝ որտեղ կան Խրիմեանի ձեռքով գրուած 360 նամակներ: Այնտեղ է նաև Խրիմեանի ֆոնտը, որը կան նամակներ, գրուած կամ Խրիմեանին կամ նրա կողմից: Մատենադարանի արխիտում են կայ Խրիմեանի ֆոնտը. այդ երեք արխիտները, որան գումարած Հայաստանի պետական պատմական արխիվի նիստերը, որտեղ կարողիկոս Խրիմեանի ձեռագրով բազմաթիւ նամակներ կան: Սակայն ամենից կարենուք եւ ամենից անյտք ըներցողների համար Ռուսաստանի արտաքին քաղաքականութեան արխիտում պահպանվող բազմաթիւ փաստարդերն են ուսու գործակալների, ինչպատուների, դեսպանների գեկուցագրերը Խրիմեանի, միևնույն կամ մասին, եւ դրանք ես օգտագործել եմ ամբողջովով: Անս իմ աշխատութեան նորույքը այդ արխիվային հենքն էր, որ հարատացրեց պատմագիտութիւնը եւ նոր խօսք ասուեց Մկրտիչ Խրիմեան կարողիկոսի մասին:

Այժմ ես ձեռնամուխ եմ եղել մի նոր աշխատութեան, դարձեալ հոգետրականի մասին: Հետարքիք է, որ աւելի շատ ինձ գրաւում են հայոց եկեղեցին եւ հայ հոգետրականները, որովհետև պետականութիւնից զորկ հայ ժողովրդի համար մեր եկեղեցին կատարել է նաև պետական քաղաքական իրաւասութիւններ: Իմ հետագայ միևնույնամսիրութեան թեման Սաղարիա Օրմանեանի կեանքն ու զիտական բաղադրական գործունեութիւնն է: Ես չեմ ուզում ասել, թէ Սաղարիա Օրմանեանը ինչ մեծ գործ է կատարել, նա 1896-ից մինչև 1908 քուականը սուլթան Համիտի իշխանութեան տարիներին եղել է Պոլսոյ Հայոց պատրիարքը: Ինը շատ լաւ է բնութագրում, որ համիտեան տարիներին կատարել է «զագանազուայի եւ լարախաղացի» դեր, իսկապէս, նա ստիպուած էր կատարել այդ երկու դերերը: Մեր ազգային կուսակցութիւնները երկար ժամանակ, սկզբից ոգեւորակելով Սաղարիա Օրմանեանի երիտասարդական տարիներին ազգային ազատագրական ամենակարևորուն խմբակի՝ Կարինի «Պաշտպան հայրենեաց»-ի հետ ունեցած սերտ կապերով, յոյս ունեին, որ նա պէտք է մասնակցի հայ ազատագրական շարժումներին: Սակայն պատրիարք Սաղարիա Օրմանեանը բռնեց պահպանողական դիրքորոշում եւ ազգային կուսակցութիւնները նրա

նկատմամբ երկու-երեք անգամ մահափորձ ձեռնարկեցին: Այդ բոլորը ես պիտք է գրեմ եւ ներկայացնեմ իրավանորդինք: Բայց նա մեր ժողովրդին պարզեւել է երեք հասորանոց «Ազգապատում» կորողային աշխատութիւնը, որտեղ հայ եկեղեցու անցրերն են եւ դրան գուգահեռ հայ ժողովրդի պատմութեան կարենոր անցրերը: Եթէ Աստուած ինձ յաջողութիւն տայ, ես կը կարողանամ աւարտել նաեւ այդ աշխատութիւնը: Դրանից բացի, ես լոյս եմ ընծայել նաեւ մամուլի պատմութեան՝ Կոստանդնոպոլսի «Արեւելք» օրաբերքի մասին փոքրիկ մենագրութիւն, իսկ այժմ աշխատում եմ երկար տարիներ առաջ գրուած «1880-ական քուականների արեւմտահայ մշակութային կեանքի եւ հասարակական-քաղաքական կազմակերպութիւնների եւ ընկերութիւնների մասին» մի աշխատութեան վրայ, որը շուտով լոյս կը նծայեմ:

Իմ գիտական աշխատութիւնների մէջ, ուշադրութեանս բեւեռում եղել է մեծ մասամբ Արեւմտեան Հայաստանը, 19-րդ դարի 2-րդ կեսը. իմ հետարքութիւնների կենտրոնում է եւ հայուկային, ազգային ազատագրական շարժումները, հայ եկեղեցու անուանի գործիչները, նրանց կապը ազատագրական շարժումների հետ, Հայոց Եկեղեցին եւ քաղմազան այլ հարցեր՝ կապուած Արեւմտեան Հայաստանի, Հայկական հարցի առաջացման եւ այլ իիմնախնդիրների հետ:

ՀԱՅՑ - Տիկին Կոստանդնեան, ներկայացուցէք Հայաստանի ազգային ակադեմիայի Պատմութեան իիմնարկը:

ՊԱՏԱՄԽԱՆ - Ակադեմիայի Պատմութեան իիմնարկը յետխորհրդային դժուար տարիներին կարողացաւ մաքառելով պահպանել իր գոյութիւնը: Սենք գիտական առումով ոչ մի կորուստ չունեցանք, չի կարելի համեմատել մեր հաստատութիւնը ուրիշ հաստատութիւնների հետ. մենք համարեա այշտապանեցինք մեր գիտական ներուժը եւ դրա մէջ մեծ դեր ունեն մեր նախկին տնօրէն Հրանդ Աւետիսեանը եւ այժմնան տնօրէն Աշոտ Սելյոնեանը, երկուսն էլ ամբողջ ուժով աշխատել են մեր հաստատութեան գիտական ներուժը պահպանելու համար:

- Հիմնարկը ունի մի քանի բաժիններ.
- Հայոց հիմ պատմութեան բաժին.
- Հայոց միջնադարեան պատմութեան բաժին.
- Նոր պատմաբեան բաժին.

- Խորիրդային պատմութեան բաժին.

- Հայկական հարցի և ցեղասպանութեան բաժին.

- Գաղութների պատմութեան բաժին:

Բաժինները իրենց կարգին բաժանում են ենթաթիվների, օրինակ՝ Հայոց նոր պատմութեան շրջանը ունի երեք ենթաթիվն:

Ա. - Հայաստանի հասարակական-քաղաքական կեանքը, 1800-ից 1917 քուականներ.

Բ. - Հայ ժողովրդի ժողովրդագրութիւնը.

Գ. - Հայ ազգային եւ սոցիալ դեմոկրատական կուսակցութիւնների պատմութիւն:

Խորիրդային շրջանի բաժնում կան առաջին համբավնութեան, խորիրդային իշխանութեան հաստատման, Հայրենական պատերազմի, յետպատերազմեան շրջանի պատմութեան ենթաթիվները:

Նոր պատմութեան բաժնի գծով իրատարակուել են բազմարի նոր աշխատութիւններ. դրանց շարքում արժէ յիշել Ա. Սելյոնեանի «Զաւախը», «Հայ ազգային կուսակցութիւնների պատմութիւնը», Գ. Առաքելեանի «Գանձակ - Ելիզաւետպոլի նահանգ» եւ այլ աշխատութիւններ:

Բաժինները կատարում են մեծ գործ Հայաստանի եւ Հայ ժողովրդի պատմութեան ուսումնասիրութեան մէջ:

Գաղութների պատմութեան գծով լոյս է տեսել երկու հասոր:

«Նոր Նախիջենանի գաղութը», հեղինակութեամբ ակադեմիկոս Վաղոյինիր Բարխուդարեանի, «Խրիմի հայ գաղութը», հեղինակութեամբ ակադեմիկոս Վարդգես Սիրայլեանի:

Ուսումնասիրուել են Հիւսիսային Կովկասի հայկական գաղութները, Ամերիկայի հայ գաղութը, Պոլսոյ հայ գաղութը, Իզմիրի հայ գաղութը եւ ուշիներ....:

- Հայ պարբերական մամուլի պատմութեան բաժին:

1794 քուականին Հնդկաստանի Մատրաս քաղաքում Յարութին քահանայ Շմատունեանի կողմից լոյս տեսած «Աղդարար»-ով սկիզբ որուեց հայ մամուլին, եւ միշտ օրս ամէն վայրու մ, ուր բնակութիւն է հաստատում հայը, այնտեղ եկեղեցու եւ դպրոցի հետ միասին իրատարակում է պարբերական մամուլ:

Արդեն պատրաստ է պարբերական մամուլի պատմութեան առաջին հասորը, իրատարակութեան ընթացքում է, բայականին մեծ հասոր է, ուր ես իմ մասնակցութիւնն եմ քերել գրելով գաւառահայ մամուլի սկզբնաւրումը եւ Կոստանդնուպոլսոյ «Արեւելք» օրաբերքի պատմութիւնը:

Հիմա պատրաստուելու ընթացքում է մամուլի պատմութեան երկրորդ հասորը: Մեծ գործ է կատարում հայ ժողովորդի պատմութեան բոլոր դարաշրջանների, բոլոր հարցերի ուսումնասիրութեան ուղղութեամբ: Բոլոր բաժինների գծով այս ծանր տարիներին լոյս են տեսել բազմարի գիտական աշխատութիւններ: Բոլորը բուարկելը դժուար է: Դուք գիտեք, որ խորհրդային շրջանում իրատարակուեց հայ ժողովորդի պատմութեան 8 հասորները: Պետք է նշել, որ շնայած կոմունիստական գաղափարախօսութեան, իսկ պատմութիւնը գաղափարախօսական, քաղաքականասիք յագեցուած գիտություն է, այդ հասորնեակների մէջ կան շատ արժեքաւոր հասորներ, օրինակ՝ առաջին, երկրորդ, ինքնուրոյ, վեցերորդ հասորները, կան, անշուշտ, փոփոխելու ննջակայ բաժիններ, լրի փոփոխման ենթակայ են եօթերորդ և ուրերորդ հասորները, որոնք վերաբերվում են խորհրդային շրջանին եւ իմաս պէտք է գրուի յետխորհրդային պատմութիւնը: Դրա համար հասուատութեան տնօրենութիւնը ձեռնամուխ եղաւ հայ ժողովորդի պատմութեան քառահատուեակ ստեղծելու գործին: Ամենց դժուարը քառահատորնեակի նախազիծը ստեղծելն էր. ինչպիսին պէտք է լինի, որ չկրկնուի խորհրդային շրջանի գրուածը եւ լիովին նորովի մեկնարանուի հայ ժողովորդի պատմութեան մանաւանդ 19-րդ և 20-րդ դարի ժամանակաշրջանը: Ահա դրանք բոլորը յաղքահարուած են և սկսել ենք շարապեկու գործընթացը: Երկու տարուայ ընթացքում այդ գործը կարուի. լոյս կը տեսնի շորս հասոր հայ ժողովորդի պատմութեան՝ հայերէն ու ուստերէն լեզուներով, ապա լոյս կը տեսնի անզերէն լեզուով ես:

ՀԱՐՅ - Տիկին Կոստանդնեան, հայոց պատմութեան ո՞ր ժամակաշրջանին կը ննանի այսօրուան իրադրութիւնը, եւ հայոց պատմութեան ի՞նչ դասեր պէտք է քաղենք այսօր:

ՊԱՏԱՍԽԱՆԱԿ - Ընդհանրապէս դժուար է համեմատութիւններ կատարել, բայց բոլոր դէպքերում կարելի է ինչ-որ եզրեր անցկացնել մեր

ժողովորդի պատմութեան 20-րդ դարաշրջանի սկզբի ժամանակաշրջանի հետ, աւելի ճիշդ առաջին հանրապետութեան ստեղծման և երրորդ հանրապետութեան ստեղծման տարիները ինչ-որ իմաստով ննան են իրար:

Ե՛տ առաջին, ե՛ երկրորդ հանրապետութիւնները ստեղծուեցին քայլանին ծանր պայմաններում:

Առաջին հանրապետութեան շրջանը բայականին ննան է երրորդ հանրապետութեան շրջանին՝ իրավիճակով, արտաքին իրադրութեամբ եւ ներքաղաքական կացութեամբ. այն ժամանակ էլ Հայաստանի հանրապետութիւնը շրջապատճառ էր ահաւոր հարեւաններով. Թուրքիան, որժենով ամէն ինչ, անցաւ յարձակման, եւ 1920 թ. սեպտեմբերին սկսվեց բրբական երկրորդ արշաւանքը: Ասրագէճանը անընդհատ մտածում էր պատասներ խել մեր ժողովրդից, տիրանալ Հայաստանի տարածքներին: Իսկ 1920 թ. մայիսեան խոռվութիւնը ապակայունացրեց երկրի ներքաղաքական կեանքը: Հայաստանի առաջին հանրապետութեան անկումը թոյլ տուեց, որ Ո-ՍԴ-Բ Կովկասյան բիւրոն որոշում ընդունի 1921 թ. յուլիսի 4-ին սկզբում հայերի օգուին, որ Լեռնային Ղարաբաղը պատկանում է հայութեան, յետոյ ընդունի մի ահաւոր սխալ որոշում: Նարիմանովը սպառնացել էր իրաժարականով: Ինչո՞ւ Նարիմանովը կարող էր սպառնալ իրաժարականով, իսկ իսկական կոմունիստ Մեասնիկեանը, որի նկատմամբ խար յարգանք եմ տածում, չեր կարող այդպիսի իրաժարականով սպառնալ: Եթե նա վերադարձաւ այդ նիստից, ժողովում գեկուցելու ժամանակ յայտարարեց. «Ես այնուեղ որևէ կոմունիստ չտեսայ, ես այնուեղ տեսայ մուսաւարականներ, այսինքն՝ ասրագէճանցիններ...»: Ինչո՞ւ այդքան ազնութեան, մի՞թե հայերը պէտք է միշտ ազնութեան ցոյց տան, եթե որ իրենց դիմաց կանգնած են այդպիսի մարդիկ: Այն ժամանակաւայ սխալն էր, որ հետագայում 1988-ին պայքեց դարաբաղեան շարժումը:

Տեսէք, թէ պատմական սխալները հետազայում ինչի են հասցնում: Նոյն այդ ժամանակ մի հարուածով Ալիսլրալարը, այսինքն պատմական Զատախը, անցաւ Վրաստանին. հայ-վրացական կարճատես պատերազմի ժամանակ յաղքեցին հայերը, առաջին հանրապետութեան գործերը Դրոյի դեկավայութեամբ համարեան Թիֆլիս էին մտնում եւ

որա համար նրանք զինադադար յայտարարեցին: Բայց եթք Հայաստանը խորիրդայնացաւ, այս անգամ էլ նրա պատմական Զատախը յանձնեցին Վրաստանին, այնպէս որ, տեսէք, ինչ նման ժամանակաշրջաններ են: Դրանք պէտք է դաս լինեն այսօր եւ մեր ժողովուրդին, եւ մեր քաղաքական այրերին՝ բոյլ շտալ այն ժամանակուայ սխալները, այսօր այդրան պատակտուած ջգործել: Խշխանափոխութիւն խորհուրդ տուողները պէտք է նայեն, թէ մեր ժողովուրդը այսօր ինչ արտաքին իրավիճակի մէջ է գտնուում, Ղարաբաղեան իիմնախնդիր ունեցող ժողովուրդը մի՞թէ իրաւոնք ունի նման գործեակերպի: Սենք դժողովուրդիններ շատ ունենք, եւ ընկերային-տնտեսական շատ հարցեր կան, բայց դրանք պէտք է լուծուն ոչ թէ առճակատման միջոցով, այլ խևապէս երկխօսութեան: Եթէ հայրենիք են սիրում, ժողովուրդին են սիրում, ոչ թէ տենչում են խշխանափոխութեան միջոցով իրենց տեսնել դեկավար դիրքերում: Դև արդէն ժողովուրդին սիրել չեն. նրանք մոռանում են մեր ժողովուրդի այսօրուայ խնդիրները, չպէտք է մոռանան: Ես կուգենայի մեր այսօրուայ գործիները եւենելին մեր անցեայի գործիչներին՝ յիշեն Ռուսումին, յիշեն Արամ Մանուկեանին, մեր բոլոր նուիրեալներին:

Այնպէս որ, մենք պէտք է այսօր, առաւել քան երես է, լինենք համախմբուած եւ ազգային մեր քաղաքական խնդիրները վճռենք միասին. ոչ թէ ուրիշների միջոցով, ո՛չ, ուրիշները մեր գործը չեն անելու, դրանք մի գործ անելու համար մեզանից մի պատառ են պահանջելու, իսկ մենք իրաւոնք չունենք աւելի փոքրանալու, մենք յաղքած ժողովուրդ ենք, պէտք է պաշտպանենք ձեռք բերուածը:

ՀԱՅՑ - Ի՞նչ կըսէիք Հայաստանի եւ Սփիտրի մէջ վերջերս աղմուկ քարձրացուցած Արմէն Այվազեանի դոկտորական ատենախօսութեան մասին:

ՊԱՏԱՍԽԱՆ - Խօսքը վերաբերվում է անցեալ տարի հայ ժողովուրդի պատմութեան գծով դոկտորական պաշտպանության գիտական խորհրդին իրապարակային պաշտպանութեան ներկայացուած Արմէն Այվազեանի «Հայոց Եկեղեցին 18-րդ դարի ազատագրական պայքարի քառողիներում» ատենախօսութեանը:

Մինչ իրապարակային պաշտպանութիւնը, ատենախօսութիւնը քննարկուել էր պէտական համալսարանի Հայ ժողովուրդի պատմութեան

ամբիոնում, ապա նաև ԳԱԱ Պատմութեան իիմնարկի միջին դարերի պատմութեան բաժնում: Երկու հաստատութիւններն էլ տուել են բացասական կարծիք: ԳԱԱ Պատմութեան իիմնարկի տնօրինը հեղինակին խորհուրդ էր տուել ես վերցնել ատենախօսութիւնը, վերացնել նշուած թերութիւնները, ապա միայն ներկայացնել իրապարակային պաշտպանութեան: Պրմ. Այվազեանը կորականապէս հրաժարուել էր:

Հրապարակային պաշտպանութիւնը անցել է շատ բուռն եւ ատենախօսի ցանկութեամբ վերածուել show-ի: (Հիւանդութեան պատճառով ես ներկայ չեի, այդ մասին ինձ պատմեցին գործընկերներս): Ատենախօսը իր հետ բերել էր լրագրողների եւ ուսանողների մի մեծ խումբ, որոնք խանգարել են գիտխորհիրդի նիստը իրենց անտեղի միջամտութիւններով, ծափերով եւ աղմուկով: Փակ և զադունի քուերկութեամբ, ատենախօսութիւնը դրական գնահատական չեր ստացել: Ես անձամբ կարդացել եմ ատենախօսութիւնը եւ լիովին համաձայն եմ գիտխորհիրդի տեսակետին: Իմ գրաւոր կարծիքը ես ուղարկել եմ, որը պրմ. Այվազեանը բոյլ չեր տուել ընթերցել: Այդուղի ես նշում էի, որ ներկայացուած աշխատութիւնը չի համապատասխանում դոկտորական ատենախօսութեան պահանջներին: Նախ վերնագիրը ոչ մի առնչութիւն չունի բովանդակութեան հետ: 18-րդ դարի հայ ազատագրական շարժումների եւ Հայ Եկեղեցու կապը ներկայացնելու վայսարեն, հեղինակը 161 էջանց գործի մէջ բացահայտում է, թէ որ վաճքերի վանահայր եպիսկոպոսները պէտք է անպայման մասնակցէին Հայոց կարողիկոսի ընտրութիւններին (Ա. գլուխ) և այդ առիրով կատարում է իր կարծիքը որոշ ճշումներ, չհամաձայնելով Հայ Եկեղեցու պատմութեան հմուտ մասնագէտ Մաղարիս Օրմանեանի հետ: Այնուհետև հեղինակը մանրամասն շարադրում է, թէ երբ է հիմնուել էջմիածնի նուիրակութիւնը, ով է եղել առաջին և վլխաւոր նուիրակը, ինչ գործունեութիւն է ծառալել նա Աստուծառու Համադանցու ժամանակ, ապա՝ երբ է Ղազար Զահկեցին ընտրուել ամենայն հայոց կարողիկոս: Աշխատութեան ծանրակշիռ մասը մէջընումներ են(համարեա 2/3-ը), ամէն մի մէջքերման հետևում է հեղինակի 2-3 տողանոց դիտութիւնը կամ եզրակացութիւր:

Աշխատութեանը կցուած է նաև յաւելուած, որի առաջին փաստարդում մանրամասն քննարկում է, բն ինչ զգեստներ պէտք է կրէին հոգեւորականները:

Ինչպէս տեսնում ենք, աշխատութեան մէջ ոչ մի խօսք չկայ հայ ազգային ազատագրական շարժման մասին: Եսկ 18-րդ դարի ազատագրական շարժումը կապուած է առանձնապէս Գանձասարի կարողիկութեան, մանաւանդ Եսայի-Հասան-Զալալեանի հետ, որի մասին գրուել է ընդամենը կէս էջ:

Կարելի է երկար խօսել ատենախօսութեան թերութիւնների մասին: Բայց Երեւանում ատենախօսի ցանկութեամբ հարցը քաղաքականացուեց, լրատուութեան բոլոր միջոցները, մանաւանդ մամուլը սկսեցին գրել իր մասին:

Այդ ոչնչից շատ աղմուկը երեւի ձեռնուու էր պրն. Այվագեանին: Միայն ցաւալի է, որ նրա «ցանց» ընկան մի քանի յարգելի մտաւրականներ (գրողներ, հրապարակախօսներ, քատերական գործիչներ), որոնք, անտեղեակ լինելով խնդրի բուն էութեանը, մեղադրանքներ շարտեցին զիտխորհոյի նախազահ պարոն Բարխուդարեանի, Պատմութեան հիմնարկի տնօրենութեան և ողջ զիտնականների հասցեին՝ աւելացներավ, թէ պատմազիտութիւնը գտնուու է անյուսակի ձեռքերում: Հետազայում պարզուեց, որ նրանք ընդամենը ստորագրողի դերում էին:

Ի՞նչ է ուզում դրանով ապացուել պարոն Այվագեանը՝ զգիտեմ: Միայն կարող եմ աւելացնել, որ պատմազիտութեան զարգացումը Հայաստանի մէջ գտնուու է յուսալի ձեռքերում և ինչքան էլ պարոն Այվագեանը ցանկանայ ցեխ շպրտել ակադեմիայի Պատմութեան հիմնարկի տնօրենութեան և դեկանապարտեան հասցեին, նրան չի յաջողութիւնուարկել և երիտասարդ մտաւրականների նուիրեալ հոյլին, որոնք շատ ծանր պայմաններում կատարում են իրենց պարտականութիւնները:

«Ասպարեզ» օրաթերթ, 5 յունիս, Լուս-Անշներ, 2004, էջ 11-13:

ԱՐԵՎԱՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ
ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ 19-ՐԴ ԴԱՐԻ 70-80-ԱԿԱՆ ԹԹ.
ԸՍ ԳԱՐԵԳԻՆ ՄՐՎԱՆԶՅԱՆՑԻ

1877-78 թթ. ոռու-թուրքական պատերազմից հետո Կ. Պոլսի հայոց պատրիարք Ներսէս Վարժապետյանը երեք վարդապետների՝ Գարեգին Արփանձտյանցին, Վահան Տեր-Մինասյանին (Պարտիզակցի) և Արիստակես Տեր-Սարգսյանին (Տեվլիանց) հանձնարարեց ուղևորվել Արևմտյան Հայաստան: Տարբեր ուղրություններով մեկնած վարդապետները հրահանգ էին ստացել կազմել Արևմտյան Հայաստանի տարբեր նահանգների բնակչության, եկեղեցիների, դպրոցների, հողային կալվածքների վիճակագրությունը, նկարագրել ժողովրդի կացորյունը, ամոքել նրա վշտերը: Արփանձտյանցի գործն առավել դժվար էր. նրան հանձնարարվեց Երկրորդ անգամ և ուղևորվել Արևմտյան Հայաստան: Առաջին ուղևորությունն սկսվեց 1878 թ. ապրիլի 30-ին: Նոր էր վերջացել ոռու-թուրքական պատերազմը, ոյլ դեռևս լի էր պատերազմական արհավիրքներով, պետական վերահսկողությունից դուրս ճանապարհներին վիստում էին զինված ավագակախմբերը: Ուրով կամ ջորու կրնակին, խատաշունչ ցրտին և ամառվա տապին ու խորշակին, նա շրջում էր հայկական նահանգներում, կատարում պատրիարքի հանձնարարությունը, Կ. Պոլսի ուղարկում իր կազմած վիճակագրություններն ու հաշվետվությունները: Խանդակառական զենքի հաղթանակով, Արփանձտյանցը մեծ հույսեր էր կապում հայկական խնդրի քարենաջող լուծման հետ: Կ. Պոլսի Ազգային ժողովի և Վարչության անդամներին անհրաժեշտ էին ստույգ տեղեկություններ Արևմտյան Հայաստանի իրավիճակի վերաբերյալ: Ես հայրենասեր գործիչը կատարում էր իր առաքելությունը. «Երբեր պատճառ չունիմ դժգոհելու, վասնզի յոժարութեամբ գնացի, յոժարութեամբ շրջեցա, յոժարութեամբ գործեցի: Ոչ երկրին անիշխանութեան օրերը, ...ոչ արեւն ու անհանգիստ ուղիմելով և այլն, չկրցան վշտացնել զիս ... ասիական ուղեարի մը կրելիք ամենն ալ կրեցի, բայց երբեր ցավ զգացի, վասնզի սիրով գնացի...: Հայ եղողը Հայաստանի

հողոյն վրա ինքզինքը կ'ճանաչե, ինքնզինքը վեհ ու կենդանի կ'գտնե, փորձեցեք և տեսեք»¹:

Սրբանձույանցի առաջին ուղևորության արդյունքը եղավ «Թորոս աղբար Հայաստանի ճամբոր» աշխատության առաջին հատորը, որը ուղեգործության, հուշագրության, վիճակագրության և ժողովրդագրության ինքնատիպ համաձուլվածք է, Արևմտյան Հայաստանի այդ ժամանակաշրջանի հավաստի նկարագիրը, այդ պատճառով ունի եզակի արժեք: Առաջին հատորն ընդգրկում է Սամսոն, Պաֆրա, Սինոս, Ամասիա, Զիլե, Թորատ, Աևաստ (Սեբաստիա), Տյորիկ, Գասման և Բենկա, Ակս, Արարկիր և Մալարիա քաղաքների, առաջնորդական թեմերի, հայաբնակ գյուղերի ժողովրդագրությունը, հայ և օտարազգի բնակչության թվաքանակը: Հայերինը տրվում է և ծովածերի քանակով (տունը հայոց) և բնակչության քվով: Դա մեզ հնարավորություն է տայիս որոշել յուրաքանչյուր ընտանիքի անդամների մոտավոր թիվը՝ 5-ից քարձր թիվ, տատանվում է 8-10-ի միջև: Որպես կանոն քաղաքների բնակչության մեծամասնությունը բուրքեր էին, որովհետև այնտեղ էին կենտրոնացված զորքը, ոստիկանությունը և պաշտոնեությունը: Գյուղերում գերակշռում էին հայերը՝ երկրագործները և արհեստավորները: Սամսոն քաղաքը Տրավիզնի վիլայերի միութեարիթուրյուն էր, ուներ 760 շունչ հայ (640 առարեական, 111 կարողիկ և բողոքական), 342 հույս և 3670 բուրք բնակիչ:² Փոքր Հայրում՝ Սինոս, Մարզպան, Ամասիա, Զիլե քաղաքներում բուրք բնակչությունն էր, իսկ գյուղերում՝ հայությունը: Մարզպանում կար 6496 հայ, 6874 բուրք,³ չնայած տարբերությունը մեծ չէր, սակայն հայաքավիման գործընթացն սկսվել էր: Ամասիայում տարբերությունն ավելի մեծ էր՝ 5700 հայի դիմաց 9823 բուրք,⁴ իսկ Զիլեն դարձել էր բուրքական քաղաք, որտեղ 16688 բուրքի դիմաց կար ընդամենը 2012 հայ, որոնք կանգնած էին ձուլվելու վտանգի դիմաց:

Սեբաստիայի վիլայերի Թորատ քաղաքում կար 8819 հայ, 2600 հույս և հայ-հոռոմներ (այդպես էին կոչվում քաղկեդոնական հայերը),

¹ Գ. Սրբանձույանց, Երկեր, հ. II, Երևան, 1982, էջ 186-187:

² Գ. Սրբանձույանց, Երկեր, հ. II, էջ 189:

³ Նոյն տեղում, էջ 199:

⁴ Նոյն տեղում, էջ 216:

906 հրեա և 10.500 բուրք¹: Խոկ 19 գյուղերում կային 4093 հայ, գյուղեր կային, որ լրիվ հայաբնակ էին, 5 գյուղում բուրքերի թիվը կազմում էր 1025: Ստացվում էր, որ հայերի ընդհանուր թիվը կազմում էր 15.512 (հայ-հոռոմների հետ միասին), խոկ բուրքերինը՝ 11.525: Վիլայերության կենտրոն Սեբաստիա քաղաքում 13.200 հայի դիմաց կար 18437 բուրք, գավառի 35 գյուղերում 13516 հայ և ընդամենը 4183 բուրք. կլորացված հաշվով 3:1 հարաբերություն հօգուտ հայերի..² Նոյնիսկ եքք գումարում ենք վիլայերի կենտրոնի բնակչության թվի հետ ($13.200 + 13.516 = 26716$ հայ) և $18437 + 4185 = 22620$ բուրք, հայ բնակչությունը 4000-ով շատ էր բուրքերից: Հետաքրքիր մի հանգամանք. Մալարիայի մյութեարիթուրյան մասին «Թորոս Աղբարի» I հատորում չի նշվում որևէ թիվ. միայն նկարագրություններ, հայաբնակ գյուղերի թվաքում, դարձյալ առանց բնակչության թվաքանակի: Գրականության և Արվեստի բանագարանի Թորոս Ազատյանի ֆոնդում են գտնվում Գ. Սրբանձույանցի ձեռքով գրված բնդարձակ հաշվետվությունները, որոնք մեծ տարբերություն ունեն «Թորոս Աղբարի» I հատորից: Մյութեարիթուրյան մեջ Սրբանձույանցը թվաքում է 5 վիճակ: Մալարիտ վիճակը, քաղաք ուներ 28.000 բնակիչ, որից 20.000-ը՝ բուրք, 8.000-ը՝ հայ, 75 գյուղերն ունեին 15000 բնակիչ, որից 10.000-ը բուրք, 5000-ը՝ բուրք: Միակ վայրն է, որտեղ գյուղական բնակչության մեջ ընդհանրապես հայ չկա: Աղճառություն վիճակը. քաղաք չունի, 125 գյուղերի 25000 բնակիչներից 20.000-ը բուրդ են, 4000-ը՝ բուրք և 7 գյուղերի մեջ ընդամենը կար 1000 հայ: Թեհեսնիյություն վիճակը. նոյնանուն քաղաքն ուներ 15.000 բնակիչ, որից 13.000-ը բուրք, 2000-ը՝ հայ: Վիճակի 160 գյուղն ուներ 35000 բնակիչ, որից 30.000-ը բուրդ, 4.800-ը՝ բուրք և 5 գյուղերի մեջ միայն 200-ը՝ հայ: Քախսիրեյություն վիճակը. քաղաք չունի, 180 գյուղն ունի 40000 բնակիչ, որից 30000-ը բուրդ, 7000-ը՝ բուրք և 3000-ը՝ հայ: Հայերն ապրում են 15 գյուղերի մեջ և ընդամենը մեկ եկեղեցի ունեն: Ընդգծելով այդ փաստը, Սրբանձույանցը շեշտում է. որտեղ գործող եկեղեցի կա, նրա շորջն ապրոյ ժողովուրդը պաշտպանում իր հայությունը, իսկ քացական վայրերում կորցնում: Շեշտվում է նաև մի այլ հանգամանք. նախկինում հայաբնակ

¹ Նոյն տեղում, էջ 229:

² Նոյն տեղում, էջ 259-261:

բոլորն վայրերն ել ունեցել են իրենց եկեղեցիներն ու վաճրերը, որոնք կամ ավերվել են կամ վերածվել մզկիրի: Աղյասմանի միջնակը, բուն քաղաքի 10.000 բնակչից 7.000-ը բուրք է, 2500-ը՝ հայ և 500-ը՝ ասորի: Վիճակում գտնվող 110 գյուղերն ունեին 35.000 բնակիչ, որից 30000-ը՝ բուրք, 4.500-ը՝ բուրք, 500-ը՝ հայ, առանց «եկեղեցու և վարժարանի»:

Դրույթունը նոյնին է նաև Սերաստիայի վիլայերի Տյուրիկ գայմագամուրյունում. «Թորոս աղբարի» Ի հատորում դարձյալ չի նշվում որևէ տվյալ: Տեղագրված են 13 հայաբնակ գյուղեր, գործող եկեղեցիների, վարժարանների և ուսանողների թվով (դա նշված է միայն 6 գյուղում): Գասման, Զմարա, Բենկա հայաբնակ մեծ գյուղերը ներկայացված են ավելի ճոխ, քան գայմագամուրյան կենտրոն Տյուրիկը (Տիփրիկ): Բենկան մեկնարանվում է իրեն Սենեքերիմ արքայի իշխան Բենիկի կառուցած և նորոգած վայր, այդ պատճառով կրում է նրա անունը: Հայաբնակ այդ գյուղն ուներ երեք գործող եկեղեցի, երկու վարժարան՝ 180 աշակերտ-աշակերտուիններով: Բենկայի մոտակայքում կային ինքն ավելի ված եկեղեցիներ: Սակայն չի նշված բնակչության թվաքանակը: Նոյն վաստոր բացակայում է նաև Ակն քաղաքին վերաբերող հոդվածում, որ դրա փոխարեն տրված է քաղաքի, նրա մերձակա Ասլուշիս և Կամրկապ գյուղ-արվարձանների, եկեղեցիների ու վաճրերի շրեղ նկարագրությունները: Կամրկապին մոտ է Կաշո գյուղը, որի բնակիչները հարյուր տարի առաջ «տաճկացեալ հայր» են, որոնց տոհմերը կրում են հայ անուն և տաճկացել են «քրքաց բռնութեննեան ազատվելու համար»¹: Թուրքեր կան նաև հայկական բոլոր գյուղերում: Դրանց հայ բնակչությունն ապրում է պանդստուրյամբ հայրայրած միջոցներով: Սրբանձույանցը նկարագրում է այդ գյուղերի և Ակնի հայկական տները, որ նոյն սենյակում գրեթեի՛ Սաղմոս և Նարեկ, հետ պահպում են վառող և գնդակ, «ոռնական անոք և զարդուց զգեստ, իրացան և սուր միևնույն պատեն կախսված»²: Սրբանձույանցը նկատում է, որ քաղաքի և նրա շրջակա 4 գյուղերի աշակերտուների թիվն է 762 տղա և 162 աղջիկ: (Զնայած այսօր մեր գյուղերն ավելի փոքրարիկ աշակերտություն ունեն): և քանի որ, ըստ Սրբանձույանցի, աշակերտուներն էին որոշում բնակչության դիմա-

¹ Գ. Արվանձտյանց, Երկեր, հ. II. էջ 279:

² Նոյն տեղում, էջ 280:

գիծը, ապա սկսվել է հայության դիմախսեղման գործընթացը: Ակնի շրջակայրում կային 4 գյուղեր՝ Զորակ, Մոշեղկա, Վանք, Ծրգու, որոնց բնակիչները հայ-հոռոմներ եին՝ «քաղկեդոնիկուրյան ավարձները» (Սրբանձույանցի դիմակու արտահայտությունն է) որոնց «ընտանեկան և վարժարանի լեզուն հայերենն է», քահանաներն անգամ հունարեն չգիտեն, ուղղակի օտարները պառակտեն են հայ եկեղեցին, որի մի մասում առաջելական հայերն են իրենց ծեսերը կատարում, մյուս մասում՝ քաղկեդոնականները: Ակնի շրջակայրում թվարկվում է 21 գյուղերի հայկական անուններ, որոնց բնակիչները «տաճկացեալ հայր» լիներով պահպանել են հայկական անվանումներ՝ Փակեր, Արգու, Ազրակ, Ապրանք, Աղվորիկ, Սերկելի, Հողդար, Արտոս, Բազմաշեն, Փշատի և այլն:

Թվական տվյալներ չկան նաև Արաքիլիի և նրա շրջակա 15 հայկական գյուղերի մասին: Թվերը վերաբերում են միայն քաղաքում և գյուղերում գործող հայկական եկեղեցիներին, վարժարաններին, տփորդ երեխաններին՝ «մանկունք և աղջկունք»: Այդ թվերի հետ միասին նշվում է, որ չնայած դրանք Արաքիլիի առաջնորդության թեմն են, սակայն նրանցից տասը ենթակա է Ակնի գայմագամուրյան, որտեղ էլ նստում է մյուղիրը: Փաստելով, որ այդ գյուղերը 5-6 ժամ հեռու են Արաքիլից, Սրբանձույանցը նկատում է, որ այդ հանգամանքը հոգեսոր առաջնորդի համար ստեղծում է մեծ դժվարություններ և առաջարկում է վարչական բաժանումներին համապատասխան ստեղծել հոգեսոր վիճակները: Դրանով ավարտվում է «Թորոս աղբարի» Ի հատորը, առաջին ուղևորյան հաշվետվությունները:

1879 թ. ապրիլի 26-ին սկսվում է Սրբանձույանցի երկորդ ուղևորությունը, որը հետապնդում էր մի քանի նպատակներ: 1878 թ հունիսին կայացած Բեռլինի վեհաժողովը պարզություն մտցրեց բազմարիվ հարցերում: Ուստաստանի կողմից ազատազրկած տարածքների մեծ մասը վերադարձվեց պարտված ժորժիային: Դրանց մեջ ամենակարևորը Բարձր Հայրի կենտրոնն էր: Կարճ նահանգի կամ Էլզերումի վիլայերի հայության հոծ զանգվածը ուժի կանգնեց Արևելյան Հայաստան գաղթելու համար: Այդ հանգամանքն ուներ փոքր ինչ դրական, բայց մեծ շափով բացասական կողմներ. դրական էր, որ Արևելյան Հայաստանը դառնում էր հայության կոնսոլիդացման վայրը, առավել բացասական էր,

որովհետև հայաբախ էր լինելու Արևմտյան Հայաստանի ամենահոծ հայաբնակ նահանգը, որը հաճախ անվանում էին Երմենիստան վիլայեթ: Նահանգի հայության գաղքը կանխելու և արգելակելու համար պատրիարք Ն. Վարժապետյանը այնտեղ ուղարկեց դեռ 60-ականներից տեղում մեծ ժողովրդականություն վայելող Գարեգին Սրբանձտյանցին, որի խոսքի ուժն ու ազդեցությունը մեծ էր Կարճ հայության վրա: Դրանից բացի, Բեռլինի վեհաժողովի 61-րդ հոդվածն իրը գործադրելու նպատակով սուրանական կառավարությունը որոշել էր կոմիսերներ ուղարկել հայաբնակ վայրերը՝ հայության իրական կացությունը պարզելու և նրանց «չերքեզներից ու քրդերից» պաշտպանելու համար: Կոմիսերներն էին Յոստովի փաշան և Արենին քեյը. ամեն մի կոմիսերի ուղեկցում էր մի հայ՝ Ազգային ժողովի անդամներ Աղարելյան Արգիս Էֆենդին և Խորաճանյան Դանիել Էֆենդին: Վերջինիս հետ շրջազգում էր պատրիարքի փատահությունը վայելող Սրբանձտյանցը, որին հատուկ կոնդակ էր տրվել, որ ուղարկվում էր «հայրենիքնին քողնելու դիտումներ» ունեցողներին այդ «նպատակներ և կեցնելու և իրենց Հայրենեաց մեջ մնալու համար խրատելու և հորդորելու պաշտոնով»¹: Արևմտյան Հայաստանի այդ գավառների և նահանգների նկարագրությունն ու ժողովրդագրությունը կազմում են «Ժորոս աղբարի» II հատորի նյութերը: II հատորը լույս տեսավ 1884 թ., ճանապարհորդությունից հինգ տարի անց, որի համար հեղինակը ներում է հայցում, մատնանշելով, որ «ուրեք ուրեք խոտորել է իր ընթացքը և ժորոս աղբոր երգերն ալ իրենց եղանակը փոխած լինին»²: Դա բափանցիկ ակնարկ էր այն մասին, որ հեղինակը ենթարկել է գրաքննության և հաճախ կարող է խոսել լոկ ակնարկներով: Սրբանձտյանցի ճանապարհը Տրավիզոնից անցնելու էր Կյունիշհանե, Երզնկա, Կամախ, ապա Խարբերդ: Վերը նշված վայրերը նա սուկ նկարագրում է, իսկ իմնական նպատակակետը Խարբերդի վիլայեթն էր և նրա առաջնորդության թեմերը: II հատորի ցուցակներում հեղինակը ոչ մի վայրի հայերի բվարանակ չի նշում, այլ բավարարվում է հայ ընտանիքների բվով՝ տունը հայոց: Այս հատորում Սրբանձտյանցը նշում է հայության դիմախեղման մի երեսոյք՝ եկրոպական երկրների

գործակալների «շնորհիվ» տեղի հայերը «եղած կան Բողոքական, Կարողիկ, Լատին, դարձյալ Հայ. Հայ և վերատին բողոքական: ...Լատինը ունին Փաքերաներ, Կաքոյիկն ունի Գերապայծառ, Բողոքականը ունին Միսիոնարներ: Այս վերջինները շատ են և գորավոր»³: Այդ բոլորի համար Սրբանձտյանցը մեղադրանքի իր խոսքն է ուղղում իովելոր այն առաջնորդներին, որոնք «ճախսատինը են հայ կերպականության»: Հյուսենիկ գյուղից սկսվում է հայերի ծովակումը. գյուղ, որին ուներ 418 հայկական օջախ: Խարբերդի 62 հայաբնակ գյուղերում կային 5052 հայ ընտանիքներ: Երես դա բազմապատկենք ամենափոքր բվարանակով՝ 8-ով կատացվի 40000-ից ավելի հայ: Այդ 62 գյուղերից միայն Սինանը, Վարի Խոխը, Վարդենիքը և Ղորքար մեզրեն շունեին եկեղեցի², մնացածն ունեին գործող եկեղեցիներ, որոնց շուրջը համախմբված էր ժողովուրդը: Խարբերդից հեղինակն անցնում է Զնշկածազ, որի տվյալները ևս բավարարվում են հայկական ընտանիքների բվարանակով: Սակայն Գ.Ա.Ձ.-ի ժորոս Ազատյանի փոնդի իմ հայտնաբերած նյութերի մեջ գտնվում է մանրանասն վիճակագրություն: Հաշվարկներ կատարելուց հետո պատկերը հետևյալն էր. քաղաքում գերակշռողը բորբական տարրն էր. 1728 հայի դիմաց (առաքելական և բողոքական) կար 4800 բորբ: Խակ 24 գյուղերում 4958 հայի դիմաց՝ ինդաններ 1327 բորբ³: Երբ գումարում ենք քաղաքի և գյուղերի բնակչության բիվն ըստ ազգերի, գերակշռություն են հայերը ($4800+1327=6127$ բորբ, $1728+4958=6686$ հայ): Զարսանջակը Խարբերդի նահանգի գայգանությունն էր, կենտրոն՝ Փերին գյուղաբաղար, առաջին դեպքն էր, երբ կենտրոնում գերակշռություն ունեիրի քանակը, 2565 հայի դիմաց տեղում ապրում էին 306 բորբ: Սակայն Զարսանջակի պեյները այնպիսի ծանր կացություն էին ստեղծել տեղի հայության համար, որ նրանք դատի էին տվել պեյներին: Ժորորական դատարանի բաշխությունը կատարված էր կայսերին էլեւ հասցըել տեղի հայությանը և նրանք Կ. Պալսի պատրիարքարանին ու Ազգային վարչությանն սպառնում էին անհրաժեշտ միջոցառումներ չձեռնարկելու դեպքում գաղթել ողջ համայնքով. «Այժմ տասնակատիկ ծանրացած է

¹ Նոյն տեղում, էջ 357:

² Նոյն տեղում, էջ 373-374:

³ Նոյն տեղում, էջ 525-526:

¹ Գ. Սրբանձտյանց, Երկեր, հ. II, էջ 336:

² Նոյն տեղում, էջ 324:

մեր դատն ու զրկանքն, մեր կնիկներն ու աղջիկները մերը չեն, Էմլարի տուրքը մենք կուտանք, կալվածքն աղայինն է, հողային տուրքը մենք կուտանք, հողն աղայինն է. Եզն ու քրտինքը մեր՝ արդինքն աղայինն է: Աշխարհիս երեսը բռչունն ու մրջինն իրենց բոյն մը ունին, Զարսանացակցի ժողովուրդն տուն ու հող չունի... Ալ մեր ինչուն համար է պատրիարք, ինչո՞ւ առաջնորդ, ինչո՞ւ համար էկեր ես դու հոս...»¹: Սրբաճանացին մեծ դժվարությամբ հաջողվում է ժողովուրդին ետ կանգնեցնել գաղթելու գաղափարից և ինչ-որ քայլեր ձեռնարկել նրանց գործին ի նպաստ: «Ժորոս աղբարտում» Զարսանացակին նվիրված հատվածում վիճակագրության մեջ բացակայում է բնակչության բվաքանակը և համեմատուրյունը այլ ազգերի հետ: Զգացվում է զրաքննության ձեռքը: Սակայն Գ-ԱԹ-ի ժորոս Ազատյանի ֆոնդի III բաժնի գործերի մեջ ես հայտնաբերեցի և հրատարակեցի պատրիարքարանին ուղղված Սրբաճանացի տեղեկագրերը, որոնք անհամենատ ընդարձակ են. նշված է ոչ միայն տունք հայոց, այլև թիվ հայոց, թիվ այլ ազգաց: Ժեմ Ա-ում նշված Փերին զյուղաբարից բացի 46 զյուղերում կային 8961 հայեր, ընդամենը 814 բուրք, 224 զգուշակ և 10 ասորի, ըստ որում, կային զյուղեր, որտեղ հայ ընտանիքների անդամների թիվը անցնում էր 10-ից: Այսպես, Պատու զյուղն ուներ 25 հայկական տուն, իսկ անդամների կամ շնչերի քանակը 280 էր, Կյոնքեփե զյուղի հայ տների թիվը 40 էր, իսկ շնչերի քանակը 520. բազմարիվ էին նման զյուղերը: Զարսանչակի Բ և Գ թեմերը (II և III) Սեծկերտի և Խոզարի գայնազամուրյուններն էին Երգնկայի մյուրեարիֆուրյան ներքո, որը պատկանում էր Երգումի վիլայերին: Այդ հանգամանքը դժվարություններ էր ստեղծում տեղի հոգևոր առաջնորդի համար, որը բուրք պաշտոններյան հետ հարաբերյուն հաստատելու համար գտնվում էր անելանելի վիճակում: Նման թնջուկները շատ էին, այդ պատճառով էլ Սրբաճանացը համայստախան առաջարկություններ էր անում պատրիարքարանին, գտնելով, որ հոգևոր կենտրոնները պետք է համընկնեն պետական վարչական կենտրոնների հետ, որպեսզի տեղերի հոգևոր առաջնորդները կարողանային ժողովրդին հուզող հարցերը լուծելու համար հեշտությամբ հանդի-

պել բուրք պաշտոնյաների հետ: Սեծկերտի բնմի՝ պահանի և 13 զյուղերի հայության բվաքանակն էր 1944, բուրքերինը՝ 270, գրգռվածներինը՝ 576: Խոկ Խոզարի բեմում գերակշռող գրգռվածներն էին: Ավանում և 10 զյուղերում ապրում էին 835 հայ և 1019 զգուշակ, բուրքեր չկային:

Խարբերդի վիլայերի Արդնի Մատենի մյուրեարիֆուրյան ներքո էր Բալու քաղաքը, որի վիճակագրությունը ևս «Ժորոս աղբարտի» II-ում տրված է շատ համառոտ, ընդարձակ տարրերակը պահպանվում է դարձյալ Գ-ԱԹ-ի մը. Ազատյանի ֆոնդում, որը մենք գտնելեցինք Սրբաճանացի Երկերի II հասորի ծանոթագրություններում: 3509 հայի դիմաց Բայրութ ապրում էին 3564 բուրք, սակայն թեմի 45 զյուղերում ապրում էին 12715 հայ, 86 բուրք աղա, 212 բուրդ, զազա՝ 291 (212+291=503): Զնայած իրենց փոքր բվին, բուրք աղաներն ու բուրդ պյեները բավուով սեփականել էին ամբողջ վիճակի հողերը. «Հարյուրն մեկը հազիվ կա հայոց ծեռքը, զորս կտոր կտոր զնած են: Գեղացի ժողովուրդը աղաներու և պեյներու մարապաններ են. Բալրաս մարապայութեան պայմանն է՝ եզ, գործիք, սերմ, աշխատուրինը ժողովրդնեն, միայն հողը աղայինն է. թերքի տասանորդը (կառավարութեանը) տալեն ետքը մնացյալեն հինգեն մեկը աղան կառնու»: Ահա ինչ վիճակի մեջ է մեծամասնություն կազմող հայությունը: Սրբաճանացի պարտականությունն էր տալ նաև Տիգրանակերտի վիլայերի վիճակագրությունը: Հետաքրքիր է բազմադարյան այդ քաղաքի ժողովրդագրական պատկերը: «Զարմանալի քաղաք է Տիգրանակերտը, որը կտեսնուին ասխական զանազան ցեղեր և քարբաններ. բուրք, աղաք, ասորի, բուրդ, եզրի, զազա, հույն, հայ, քիլտանի. բազմազան են նաև ի կրօնս. մահմեղականութիւն իր քաժանամք և քիլտաններին իր տեսակներով: Հայր ըստ Հայաստանայց եկեղեցվո, հայր՝ պատկան և պատկանը՝ հասունան և անտի հասունեան՝ լատինականք. հայր բողոքական և բողոքականը՝ երիցական և եալիսկոպոսական, հայ-հոռոմք: Ասորիք՝ ըստ նախնի եկեղեցվո, ասորիք՝ պատկան և բողոքական, բոլորը թնիկ են և ունեն առանձին եկեղեցականներ և եկեղեցիներ... բայց հայոց առաջնորդն ամեննեն քարձը և գործոն դիրքն ունի իրեւ առավելագուն ժողովուրդ ունեցող: ...Բոլոր քիլտանյատ տարրը հայերն կը խսիին և զիրենը

¹ Նույն տեղում, էջ 387:

հայ կանգանեն ... ասորի հայ, բիլտանի հայ, էրմանի հայ և այլն»¹: Տիգրանակերտի վիխայերի կարեռը մյութեարիի փոքրյունն է, համարվում Սղերդը, որին «պատկանում էր պատճական Սասունը և զրեքն այն լեռնազավառաց մեծ մասն»: Հետազայում, նոր վարչական բաժանմամբ այդ վայրերն անցան Բաղեջի կամ Բիրլիխի վիխայերին: Տիգրանակերտի առաջնորդական վիճակը բաղկացած էր 10 գավառից և զավառակներից և ինչպես վիխայերի կենտրոնում, բեմերում ևս ապրում էին տարբեր ցեղեր ու ժողովրդներ. բվով գերակշռող հայերի հետ անընդհատ նշվում է քորր, քորդ և ասորի: Միայն Լըճե զավառում հայերից առաջ նշվում է քորր, քորդ, ասորի, նոր միայն հայ: Տիգրանակերտի 10 հայկական թեմերի հայ տների քանակը մոտավոր հաշիվներով նշվում է «5000 տունք հայոց»: Այլազգիների թվի նշում չկա համեմատություն անցկացնելու և հարաբերությունը ճշտելու համար:

Հետաքրքիր է մի հանգանանք. շնայած Սրբանձոյանցը հասուկ հանձնարարությամբ էր մեկնել Կարին, բայց «Թորոս ադրաբի» ոչ մի հասորում չկա այդ հայահոծ նահանգի մասին ոչ մի տող: Որոնումները մեզ դարձյալ արխիվ տարան: 1973 թ. Գրականության և Արվեստի թանգարանը համարվեց Կ. Պոլսից ուղարկված նոր նյութերով, որոնց մեծ մասը Սրբանձոյանցի ձեռագրերներն էին և մեր որոնած՝ Կարինի նահանգի ժողովրդագրական պատկերը: Այստեղ առանձին նշված են Բասենի, Դերջանի, Ջեմախի, Բայազետի և Աղաշկերտի, Սպերի և Կիսկինի, ապա Էրգրումի և թեմի վիճակագրությունները: Մը առանձին գեկուցման թեմա կարող է լինել, եթե մենք փորձենք համեմատել Աշոտ Սելրոնյանի «Էրգրում» աշխատության ժողովրդագրական փաստերը, որոնք վերաբերում են 19-րդ դարի 20-30-ական թվականներին, Գարեգին Սրբանձոյանցի՝ 1878 թ. պատրիարքարան ուղարկած տվյալների հետ: Նախ՝ Էրգրում քաղաքի և նրա զավառի բնակչության թվաքանակը. Սելրոնյանը վկայակոչում է տարբեր օտար աղբյուրներ, բազմաթիվ թվեր համարում իրար և կանգնում 110.000-ի վրա²: Սրբանձոյանցի նշած թիվը անհամեմատ տարբեր է. 20.000 քորր, 14.000 հայ, 350 հոյն և 100

պարսիկ, այսինքն՝ 34.500 մարդ³: Ես չեմ կարող կասկածել Սրբանձոյանցի հալորդած տվյալների վրա, որովհետև Էրգրում-Կարինում նա գործունեություն էր ծավալել դեռևս 1860-ական թվականներին. ի՞նչն էր պատճառը. ուստի բարեական պատերազմից հետո սկսված մեծ զա՞ղը, այդ առեղծվածն արծեն պարզել: Էրգրումի լիվայի գյուղերի մասին խոսելիս, Ա. Սելրոնյանը նշում է երկու խոշոր նահիները (գյուղամբեր), որոնցից մեկի վարչական կենտրոնը Եղիշա, մյուսինը Աշկալա նշանավոր գյուղերն էին²: Սրբանձոյանցի ցուցակով դրանք արդեն վարչական կենտրոններ չեն և ունեն խիստ նվազ հայ բնակչություն: Եղիշան ուներ 40 հայ տուն կամ երդ՝ 380 շնչով, 140 քորր: Իսկ Աշկալան (Աշխալա) նվազել էր, ուներ 8 հայ տուն 70 շնչով և 900 քորր բնակիչ: Քորրացման գործընթացն ակնհայտ է: Բայց կան նաև ափոփիչ տվյալներ. Եղիշայի նահինեի խոշոր լուսն գյուղը Սրբանձոյանցի տվյալներով ևս պահպանվել էր, միայն եթե Սելրոնյանի մոտ (20-30-ական թթ.) գյուղում կար 2500 հայ բնակիչ, ապա Սրբանձոյանցի մոտ նշվում էր 2060-ը և լիվայի այն եզակի գյուղերից էր, որ չուներ ոչ մի քորր բնակիչ: Կանից հյուսիս բնկած հայկական Սովոր Ձերմուկ (Սառը Ձերմուկ), Ծինոց, Մուտտորկս գյուղերը, 19-րդ դարի առաջին երեսնամյակին նշվում էին առհասարակ «յազգես հայոց»³, իսկ Սրբանձոյանցի տվյալներով համապատասխանաբար 400, 300 և 700 հայ բնակիչներ ունեին, որտեղ արդեն մուտք էին գործել քորքերը՝ 70, 300 և 30 թվաքանակով: Կոճկոնց գյուղը առաջին երեսնամյակում, իսկ Գոյայանի «Բարձր Հայք» աշխատության տվյալներով նաև 80-ականներին ուներ 150 տուն հայ, մինչդեռ Սրբանձոյանցը նշում է 18 տուն - 210 հայ և 49 քորր: Սելրոնյանի աշխատության մեջ թվարկած համարյա քորր գյուղերը կամ Սրբանձոյանցի մոտ՝ Գեղախոտ, Գրիշը, Ռոմուս, Երկիխստ, Խաչկավանք, Պատիշեն, Օձնի կամ Ռզնի և բազմաթիվ այլ գյուղեր, բվով 47. շնայած ժամանակի մեծ տարբերությանը (առնվազն կես դար) Էրգրում քաղաքից բացի, գյուղական հայ բնակչությունը գերազանցում է քորքերին: Նման համեմատություն կարող ենք անցկացնել Դերջանի զավառի բոլոր գյու-

¹ Նոյն տեղում, էջ 431:

² Սելրոնյան Ա., Էրգրում, ազգային կազմը, հայերի տեղաբաշխումը, մեծ զարդը, Երևան, 1994, էջ 40:

¹ Գ. Սրբանձոյանց, Երկեր, հ. 2, էջ 510:

² Սելրոնյան Ա., նշվ. աշխ., էջ 46-47:

³ Նոյն տեղում, էջ 45:

դերի՝ երկու հեղինակների քերած տվյալների միջև¹: Արվանձտյանցը գրում է, որ զավառի ամենամեծ գյուղը Բեգենիճն է, որի 100 տունն ունի 1050 հայ բնակիչ, բայց գգալի է նաև բուրքերի թիվը՝ 600: Սելրոնյանի տվյալներով ամենախիստ հայկական բնակչություն ունեցող Կարագուլակ կամ Քարագուլակ գյուղը Արվանձտյանցի տվյալներով նշվում է իրեն 17 տուն - 200 հայ և 700 բուրք բնակիչ ունեցող գյուղ: Նշելով գավառի բուրքաբնակ գյուղերը, Արվանձտյանցը նրանց ընդհանուր թվաքանակը նշում է 12.000 հայ և նույնքան բուրք, 6000 բուրդ, 400 հույն: Մեծ տարրերություններ կան նաև Սալեր և Կիսկիս գավառների երկու հեղինակների քերած տվյալների միջև: Եթե առաջին երեսնամյակին Սպերն ուներ 900 տուն հայ կամ մոտ 5000-6000 շունչ, ապա 70-ականների վերջին մնացել էր 25 տուն՝ 230 շունչ հայ և 300 բուրք: Առաջին երեսնամյակին ամենամեծ գյուղը Հունուտն էր, ապա 80-ականների սկզբին ամենամեծ գյուղը Կարմիրըն էր՝ 1200 շունչ հայերավ և ոչ մի բուրք: Գավառի բնակչությունը բաղկացած էր. Սպերնում՝ 10.000 բուրք, 2000 լազ, 3000 հայ, Կիսկինում՝ 5000 բուրք, 8350 հայ, 90 հույն²: Բայազետի և Ալաշկերտի ընդհանուր թվաքանակը իր խոշոր հայկական գյուղերով դարձակցին ուներ խիստ ընդգծված հայկական դիմագիծ, իսկ 80-ականների սկզբին լիովին փոխվել էր ժողովրդագրական պատկերը: Երկու գավառների հայերի թվաքանակը Արվանձտյանցը նշում է. 13.000 հայ, 20.000 բուրդ, 30.000 եղիղի, 1000 բուրք³: Այդ երկու գավառներում կային ավերված 137 եկեղեցի: Ահա թե որն էր ազգային դիմախւելման պատճառը: Բասենի գավառի Հասան-Կալա քաղաքատիպ ամրոցը դարձակցին ուներ 10-11.000 շունչ, գերակշռողը հայ բնակչությունն էր, իսկ 70-ականների վերջին 130 հայի դիմաց կար 2000 բուրք: Փաստորեն պակասել էր ողջ բնակչության թիվը, որը ոչ թե ազգային գործոնի արտահայտություն էր, այլ նաև տնտեսական: Սակայն ողջ գավառի համեմատությունն ամսամատ ցույց է տալիս հայերի մեծ թվաքանակ. 10.000 բուրք, 6000 բուրդ, 1000 շերքեզ, դրանց դիմաց 18.000 հայ և 200 հույն, նույնիսկ բոլոր մահմեղականներին գումարելու դեպքում, գավառում գե-

¹ Սելրոնյան Ա., նշվ. աշխ., էջ 51, գ. Արվանձտյանց, Երկեր, հ. 2, էջ 485-487:

² գ. Արվանձտյանց, Երկեր, հ. 2, էջ 509:

³ Նույն տեղում, էջ 503:

րակշռում են հայերը: Եթե այդպէս մանրամասն թվարկենք Երգրումի գավառները, կտևնենք, որ Արվանձտյանցի տվյալներով, ամսամ 80-ականների սկզբին ողջ նահանգում հարաբերական մնձամասնությունը կազմում էին հայերը:

Հայոց պատմության հարցեր, Գիտական հոդվածների
ժողովածու, հ. 5, 2005, էջ 77-87:

XX ԴԱՐԻ ՀԱՅ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԸ ԵՎ ԳՐԵՐԻ ԳՅՈՒՏԸ

Գրերի գյուտը հայ ժողովրդի ազգային ինքնության պահպանման եզակի երևոյթն է: Այդ պատճառով հետագա դարերի համարյա բոլոր պատմիչները, և նոր շրջանի այն պատմաբաններն ու բանասէրներ, ովքեր ձեռնամուխ են եղել հայ ժողովրդի ու հայոց եկեղեցու հին շրջանի պատմության, նրա հարուստ դպրության ու մշակույթի ուսումնափրության ու գնահատությանը, անդրսադարձել են գրերի գյուտին, տվել գիտական արժենորում: Գրերի գյուտի տառմնափրությունն առնաձնապես մեծ բափ ստացավ XIX դարից սկսած. Մյութարյան հայրերը և նոր շրջանի բազմարիվ գիտնականներ, ոչ միայն հայ, այլև օտար (Մ. Չամչյան, Ղ. Ինճիճյան, Հ. Գարբրյան, Գ. Խոլաբրյանց, Ն. Բյուզանդացի, Է. Դյուլորիե, Հ. Հյուրշման, Նոլդերե, մեծ հետաքրքրություն էին ցուցաբերում հայոց այրութենի նկատմամբ, որը մեկ ու կես հազարամյակի ընթացքում կատարել էր իր պատմական առաքելությունը, հաղրահարել ժամանակի անողոր պատմնեշները, հասել XIX դար, աշքի ընկեննուվ իր կատարելությամբ, հայերենի հարուստ հնյունարանությունն արտահայտելու հարազատությամբ: Հետաքրքրությունը գրերի գյուտի նկատմամբ ավելի ուժգնացավ XX դարասկզբին: Տարբեր գիտնականներ հեմվելով մեզ հասած ամենազիստավոր աղբյուրների՝ Կորյունի, Ղազար Փարպեցու և Մովսես Խորենացու վկայությունների վրա, իրենց կարծիքով ճշտումներ կատարելով, գրերի գյուտի տարերիվն ընդունեցին 412

թ.: 1912 թ. պետականուրյունից գորկ հայ ժողովուրյուր մեծ հանդիսավորությամբ, իրք իր գոյուրյան առհավատչյա և անպարտելի գենը, նշեց զբերի գյուտի 1500 ամյակը: Այդ մեծ հանդիսավորյունից 50 տարի անց, 1960 թ., ԽՍՀՄ հանրապետուրյունների շարքում մշակութային արժեքներ ստեղծած հայ ժողովուրյուր, իրք յուրահատուկ ինքնահաստատում, նշեց զբերի գյուտի հանձարեղ հեղինակ Սեպով Մաշտոցի ծննդյան 1500-ամյակը: Չնայած երբեք չէր մարել հետաքրքրությունը հայկական զբերի և նրա հանձարեղ ստեղծողի նկատմամբ, բայց այդ երկու հորելյաններն իւ առիք դարձան նոր աշխատուրյունների և հոդվածների ստեղծման: Թեևուզ դրանք շատ են, բայց հետաքրքրությունը Մաշտոցի և նրա գիտական սիրանի նկատմամբ երբեք չի մարելու: Ծիշտ է նկատում գիտնականներից մեկը. «Յուրաքանչյուր դարաշրջան անմիջական կապի մեջ է Մաշտոցի հետ..., յուրօվի է ընկալում Մաշտոցին, և բոլոր դարաշրջանները նրա հետ կիսում են միևնույն խորհրդը»¹: Խորն է Մաշտոցի նկատմամբ տածած հարգանքը, պատկառանքը: Օստարազգի գիտնականներն անգամ շատ բարձր են գնահատում Մաշտոցի գիտական սիրանիքը: Այսպէս, Յ. Մարկվարտը, գերմանական զբերի ստեղծող Ֆրանկ Պիպինին և նրա գիտակից Վիճվիդիլին համեմատելով Մաշտոցի և Սահակի հետ համարում է՝ «ողորմելի քողովներ մորի այդ երկու հոկաների հանդեպ»²:

20-րդ դարասկզբի հեղինակներից պետք է առանձնացնել Գ. Տեր-Սկրտչյանի, Մ. Օրմանյանի, Ն. Աղոնցի, Հ. Աճառյանի, Լեոյի, Ս. Մալխասյանի, 40–50-ական թվականներին՝ Հ. Մանանյանի, Մ. Արելյանի, 80-ականներին այդ բոլոր հարցերն ամփոփող և կարծես լիովին սպառչ պատասխան տվող Ա. Մարտիրոսյանի ուսումնասիրությունները: Նշվածներից ամենը զատ-զատ արժանի են առանձնահատուկ վերաբերմունքի և ուսումնասիրության: Սենք հարմար ենք գտնում ուսումնասիրության բնարկելի բառ բարձրացրած հարցերի:

Գիտնականների ծանրակշիռ մասը բնարկած հարցերի մեջ ամենակարևոր համարում են զբերի գյուտի ժամանակաշրջանի հարցը: Եվ

ամենից շատ տարակարծություններ ծագել են այդ խնդրի լուծման ժամանակ: Ուսումնասիրությունների ամենահավասար աղյուրը Կորյունն է, իրք Մաշտոցի աշակերտ և կենսագիր, երկրորդ՝ Ղազար Փարավեցին է, որն ասպել է այդ իրադարձություններից կես դարից ավելի, մեկ դարից պակաս ժամանակահատվածում: Երրորդ Մովսես Խորենացին է: Վերջին երկուսը անընդատ վկայակոչում են Կորյունին: Տարեվերը որոշելու համար այն ժամանակ կիրառվում էր տվյալ երկրի տիրակալի թագավորության տարին (այսպէս, պարտիկների մոտ՝ Վռամ Դ Կրման, Հաղկերտ Ա, Վռամ Ե, Հաղկերտ Բ...): ինչ իրադարձություններ են կատարվել նրանց թագավորության որևէ տարրում: Բոլորն օգտվում են ֆրանչացի գիտնական է. Դյուլորիեի ժամանակագրությունից, սակայն տալիս են տարրեր մեկնարանուրյուններ: Այդ հարցին երեք անգամ անընդադրած է Հ. Մանանյանը: Խորիրդային Հայաստանի 20 ամյակին նվիրված ԽՍՀՄ ԳԱ Հայկական մասնաճյուղի հորելյանական գիտաժողովում, 1940 թ. նոյեմբերի 10-ին նա գեկուցեց «Սեպով Մաշտոցը և հայ ժողովրդի պայքարը մշակութային ինքնույթունության համար» թեմայով (որուսերեն): Հետագայում այդ ուսումնասիրությունը որոշ կրծասումներով և գիտական փոփոխություններով մտավ հեղինակի «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության Բ հատորի մեջ (1957 թ.): 1951 թ. Հիսլապոլիտոսի ժամանակագրության հարցը պարզերու նպատակով Հ. Մանանյանը ծանրութացավ Մատենադարանի ձեռագրերից արտագրելով վածական տոմարագիտուկան մի քանի հատվածների հետ և նորից անընդադրած այդ թեմային «Հայ զբերի գյուտի տարերվի հարցի շուրջը» խորագրով աշխատությամբ: Հետաքրքիր է հարցի բննարկման ընթացքը: Հենվելով Կորյունի վրա, որը հայ դպրության սկիզբը համարում է Հաղկերտ Ա-ի (399–419/20 թթ.) բազավորության ութերորդ տարին, Մաշտոցի մահից 35 տարի առաջ, Հ. Դյուլորիեի ճշտած ժամանակագրությամբ, Հ. Մանանյանն սկզբում հավանություն է տալիս 406 թվին (տարբեր ուսումնասիրություններ գրում են 404, 405 կամ 406 թվերը): Սակայն, ուսումնասիրության ընթացքում ծանրացրու գ. Տեր-Սկրտչյանի և Ն. Աղոնցի աշխատություններին¹, հակասություն է տեսնում Կորյունի թերած փաս-

¹ Ա. Մարտիրոսյան, Մաշտոց, Երևան, 1982, էջ 6:

² Սեպով Մաշտոց (հոդվածների ժողովածու), Երևան, 1962, էջ 125 (Մարկվարտի «Հայոց այբուբենի ծագումը և Մ. Մաշտոցի կենսագրությունը» հոդվածը):

տերի մեջ: Վերջինս իր «Վարք»-ում նշում է, որ Ամիդում և Եղեսչայում Մաշտոցին մեծարանը պահպանություն է և Ակալիոս և Բարիլաս եպիսկոպոսները: Սակայն հայտնի է, որ Ակալիոսը Ամիդի եպիսկոպոսն էր 419–20 թվերից սկսած, իսկ Բարիլասը կամ Շարուլասը՝ 412–435 թթ.: Այդ փաստերից Հ. Մանանյանը եղակացնում է, որ Մաշտոցի գյուտը կատարվել է 412 թ., կամ՝ 419–20 թթ: Այդ բոլորը նշերու հետո Մանանյանն սկսում է նոր բննարկում: Եթան ավելի հավանական և ճիշտ է բխում Ն. Աղոնցի կարկածը, ըստ որի Կորյունն այդ անունները տվել է դիվանագիտական նկատառումներով: Ն. Աղոնցը գրում է. «Կորյունը հասարակ կենսագիր չէ, նա և եկեղեցական գործիչ է, և իրը այդպիսին պետք է իր գլուխ հաճակերպեր հետեւինույան տրամադրության հետո»¹ և որ պեսզի քարցնի, թե Մաշտոցը մտերիմ է եղել Նեստորի ուսուցիչ Թեոդորոս Մովսուսատցու հետ և հենց նա է օգնել ու աջակցել Մաշտոցին գրերի գյուտի տաժանելի աշխատանքի ժամանակ, չի խոսում նրա մասին, այլ իր «Վարքի» մեջ նշում է Ակալիոսի և Շարուլասի անունները: Այդ փաստերը Հ. Մանանյանը և Ն. Աղոնցը մեկնարանում են իրեն ավելի ուշ շրջանում այդ աշխատության վերամշակման, նաև հենց Կորյունի դավանական նկատառումներով, որը դեպքերը նկարագրել է «կրոնական փոփոխված տրամադրություններին համապատասխան Վ դարի II քառորդում»²: Ն. Աղոնցը և նրա վրա հենվելով նաև Հ. Մանանյանը հավանական են համարում, որ հայկական այրութենող Մաշտոցն ստեղծել է IV դարի վերջին, մոտավորապես 383–392 թթ. ընթացքում, թեոդորոս Մովսուսատցու և նրա աշակերտ Ռուփինոսի աջակցությամբ, որը Կորյունի աշխատության ընդարձակ խմբագրության մեջ անվանված է Հռովհանոս: Փաստորեն, առաջին հոդվածում Հ. Մանանյանը, վկայակոչելով Ն. Աղոնցին, կասկած է հայտնում մինչ այդ եղած ուսումնասիրությունների վրա և գտնում է, որ «լուրջ հիմքեր կան այդ դարաշրջանի ժամանակագրության վերանայման համար, որը գիտական գրականության մեջ սխալ է «զնդունված»³: «Հայ գրերի գյուտի տարերի հարցի շուջը» խորագրով ուսումնասիրության մեջ Հ. Մանանյանը

ամենայն վստահությամբ նշում է, որ գրերի գյուտի տարերիվ որոշելու համար պետք է հենվել ոչ թե Կորյունի «Վարքի» վերջարանի վրա, որը անտեսում են ոչ շրջանի հայ մատենագիրները, այլ «Կորյունի և Ղազար Փարպեցու երկերի բուն բնագրերում նշված ցուցումների»⁴, նաև Մատենադարանում գտնված ձեռագրերի տոմարական հաշիվների վրա, որտեղ պարզ գրված են Վոամշապուհի քազավորության (387/8–413/4) հինգերորդ կամ վեցերորդ տարում, այսինքն 391–92 թվականին, որը համբնկնում է նաև Վոամ Դ. Կրմանի (388/9–398/9) չորրորդ տարում, այսինքն՝ դարձյալ 391–92 թթ.⁵

Յ. Մարկվարտը գրերի գյուտին նվիրված «Հայոց այրութենի ծագումը և Մաշտոցի կենսագրությունը» հոդվածում (կարդացել է 1902 թ. Համբուրգի միջազգային Արևելագիտական գիտաժողովում, 1905 թ., արժանացել Մուսկվայի Արևելյան Լեզուների Լազարյան ճեմարանի մրցանակին, լրացնելու և վերամշակելու հետո լույս է տեսել «Հանդիս ամսորեա»-յում 1911–1912 թթ.) քննարկում է քազմարիվ հարցեր, գտնելով, որ «գրերի գյուտի պատմությունը դեռ լուսաբանված չէ և մանավանդ հայկական այրութենի հիմքը շարտնակում է մնալ մրության մեջ»⁶: Գրեթի գյուտի ժամանակի հարցը Յ. Մարկվարտը քննարկում է այլ կերպ: Նա գտնում է, որ Կորյունի բնագիրը գերծ չէ թերություններից, հակառակ յունական են նկատվում նրա վերջարանի և բուն տեքստի հադրդած թվերի միջև: Ավելի հավաստի համարելով Ղազար Փարպեցու, ոչ թե Կորյունի տեքստերը, Յ. Մարկվարտն ընդունում է երկուսի կողմից էլ նշված մի փաստ, որ գրերի գյուտը կատարվել է Վոամշապուհի քազավորության հինգերորդ տարում: Բայց, ի տարբերություն Հ. Մանանյանի և Ն. Աղոնցի, նա Վոամշապուհի քազավորության ժամանակի ընդունում է 398/9 թվերը, որին գրանարած 5 կատացի 402/3 թվականները: Յ. Մարկվարտի հոդվածն արժեքավոր է ոչ այնքան այդ տարերվերի, իր կարծիքով, սխալների ճշտման, առավել ևս ոչ Մովսես Խորենացու մասին արտահայտած սխալ բնորդությունը («կեղծ Մովսես Խորենացի»), այլ Մաշտոցի կատարած գործի խիստ բարձր գնահատականով:

¹ Նոյն տեղում, էջ 227:

² Նոյն տեղում, էջ 53:

³ Նոյն տեղում, էջ 56:

⁴ Նոյն տեղում, էջ 95:

⁵ Նոյն տեղում, էջ 110:

⁶ Նոյն տեղում, էջ 127:

1912-ին, գրերի գյուտի 1500-ամյակի առիրով հոդված է գրել նաև Գ. Տեր-Սկրտչյանը «Հայ գրերի գյուտի 1500 ամյակի առջիփ» խորագրով: Հոդվածը գրված է Լեոյի պնդումների հետևանքով: Վերջինս գրերի գյուտի ժամանակն անվերապահորեն, առանց ապացույցների համարում է 404 թ.: Գ. Տեր-Սկրտչյանը գյուտի ժամանակը որոշելու միակ հեղինակավոր աղբյուրը համարում է Կորյունին: Գնահատելով այդ խնդրով գրադիր տարբեր գիտնականների կատարած գործը, առավելապես ընդգծելով Ն. Բյուզանդացու աշխատանքները, Գ. Տեր-Սկրտչյանը փաստում է, որ Վերջինս Սահակի և Սեսրոպի մահվան թվերը ճշտելու համար օգտվում է գերմանացի գիտնական Նեոլյեբեկի հաշվարկներից, որը տվել է Սասանյանների գահակալության ժամանակագրությունը: Այստեղ Գ. Սկրտչյանն ապացույցում է, որ քանդկում է Ն. Բյուզանդացու «խնամքով կառուցված շենքը», որովհետև նա օգտագործել է գերմանացի գիտնականի ոչ թե գերմաններեն տեքստը, այլ քարգմանությունը, և թերված թվերը ցույց են տային ոչ թե Սասանյանների գահակալության տարիները, այլ շարժական տոմարի Նավասարդի օրերը¹: Գ. Տեր-Սկրտչյանը Սահակի մահվան թվականը ընդունում է 439 թ., իսկ Մաշտոցինը՝ 440 թ., և դրանք համարում է միակ ճիշտ թվերը, որոնք ընդունում են բոլոր տոմարագետները՝ Ն. Ալիշանը, Նեոլյեբեկն, Է. Դյուլորիեն: Քանի որ Կորյունը հաստատ նշում է, որ գրերի գյուտից մինչև Մաշտոցի մահվան օրը անցել է 35 տարի, ապա ընդգծելով տառացի բառը, հետևողություն է անում, որ գրերի գյուտի տառացի թվականն է 405 թ. Գետրվարի 25-ը, ճիշտ համարելով նաև Ս. Մալխասյանի², Մ. Օրմանիանի³ և մյուսների հայտնած կարծիքը 404-ից 406 թվերն ընդունողներին: Դարձայ ընդգծում ենք, որ նա գրում է տառացի և դրանից հետո իր կարծիքը տալիս է ճիշտ ապացույցը: Համաձայն ենք նրա մի կարծիքի հետ, այն, որ «Գրերի գյուտի պատմությունը տևական գործողություն է»⁴: Այդ մտքից հետո Գ. Տեր-Սկրտչյանը տալիս է իր Վերջնական ապացույցը, որ 405 թ. «Դանիելյան տառերի Վաղարշապատ թերելու

¹ Նոյն տեղում, էջ 183–184:

² Ս. Մալխասյանց, Հայոց գիրը, Տարագ, 1893, № 3:

³ Մ. Օրմանյան, Ազգակառում, հ. Ա, Ս. Էջմիածին, 2001, էջ 315:

⁴ Սեսրոպ Մաշտոց (հոդվածների ժողովածու), էջ 188:

տարիներին էին», քանի որ Ղազար Փարավեցին գրերի գյուտ ասելով հասկանում է Դանիելյան գրերի Վաղարշապատ թերելը: Շարունակելով իր բացատրությունը, նա նշում է Ակակիոս և Մարտիան եպիսկոպոսների գործունեության ժամանակի մասին և վերջնական նգրակացույան հանգում, որ Մաշտոցյան տառերի գյուտի և կատարելագործման ժամանակը պետք է ընդունել 412–416 թք.: Սեր կարծիքով նա շատ երկար ժամանակ է հատկացրել այդ գործընթացին: Որ այն տևական է եղել, ոչ ոք չի կասկածում, բայց ճիշտ չէ նաև այն, որ Սեսրոպը տառ տարի կարող էր լինել Եղեսիա, Ամիր և Սամոսատ քաղաքներում:

Գրերի գյուտաի մասին աշխատություն է գրել նաև Մ. Աբելյանը, որը լույս է տեսել 1941-ին «Սեսրոպ Մաշտոցը և հայ գրի ու գրականության սկիզբը» խորագրով. այն նվիրված է Մաշտոցի մահվան 1500 ամյակին: Աշխատության մեջ գիտական բարձր մակարդակով քննարկված են բազմաթիվ հարցեր, սակայն հեղինակը գրերի գյուտի ժամանակի հարցը չի դրել իր պարզաբանման խնդիրների շարքում, այլ քավարարվել է նշելով, որ ուսումնասիրությունը այդ ժամանակը համարում էն 403–404 կամ 404–405 թվերը: Այդ հարցը առավել հաճախանակի քննարկվել է Հ. Աճառյանի «Հայոց գրերը»¹ աշխատության մեջ: Ողջ գիտական գործունեության ընթացքում տարբեր առիրներով պատկառելի գիտնականը իր ուսումնասիրության նյութը է դարձել մեր ժողովրդի համար անգնահատելի արժեք ունեցող այդ երևույթը: Դեռ 1903 թ. Մոսկվայի Լազարյան մեմարանի կողմից մրցանակի է ներկայացվում Աճառյանի «Սեսրոպ Մաշտոցի կենսագրությունը և հայոց գրերի գյուտի պատմությունը» ուսումնասիրությունը: Մրցանակարաշխությունը կայանում է 1905 թ.: Աճառյանն արժանանում է առաջին կարգի մրցանակին: Այդ աշխատությունը բաղկացած էր 3 մասից. առաջինը կոչվում էր «Սուրբ Սեսրոպի գրերու գյուտի պատմության աղբյուրներն ու անոնց քննությունը»: 1907 թ. այն տպվեց Փարիզում. Ազգություն «Բանասեր» հանդեսում, ապա առանձին գրքով: Երկրորդ մասը՝ «Սեսրոպ Մաշտոցի կենսագրությունը», մնաց անտիպա, իսկ երրորդ մասը, որ սկզբում կրում էր «Սեսրոպյան գրերի գյուտը» խորագիրը, 1909 թ. սկսեց իրատարակվել «Հանդես ամ-

¹ Հ. Աճառյան, Հայոց գրերը, 1968:

սօրեա»-ի էջերում, 1928 թ. Վիեննայում լոյս տեսավ առանձին հատորով «Հայոց գիրը» վերնագրով: Հեղինակի մահից հետո, 1968 թ. Է. Աբայանի «Երկու խոսքով» լոյս տեսավ Հ. Աճառյանի «Հայոց գրերը» աշխատությունը, որ առաջին անգամ միավորվեցին վերը նշած երեք մասերը: Գրքի հետ հայնացիկ ծանրությունն անգամ ապշեցնում է ընթերցողին հեղինակի քննարկած հարցերի արտակարգ խորությամբ և զիտական բարձր մակարդակով: Մինչ Հ. Աճառյանը ոչ մի հեղինակ նման մոտեցում ցույց չի տվել այդ հարցին: Աշխատության երրորդ մասի ԺԶ գլուխը նվիրված է Սահակի Պարքեի և Սեսրու Մաշտոցի ժամանակագրությանը: Այդուղ հեղինակի ամենայն բժախնդրությամբ քննարկում է Կորյունի, Ղազար Փարպեցու, Մովսես Խորենացու, Մովսես Կաղանկատվացու, Փոքր Կորյունի, Անանունի, Հովհաննես կարողիկոսի, Ստեփանոս Առողիկի, Ներսես Շնորհալու, Սամվել Անեցու, Սլսիքար Անեցու, Վարդանի, Կիրակոս Գանձակեցու, Սլսիքար Այրիվանցու, Հայսմավորքների, Մագիստրոսի տեսակետները Սեսրու Մաշտոցի և գրերի գյուտի ժամանակագրության վերաբերյալ: Համենատելով պարսից և հունաց թագավորների ժամանակագրական ցուցակը և բոլոր ձեռագիր աղբյուրները, Հ. Աճառյանը վերջնականորեն ճշտում է Մ. Մաշտոցի գործունեության ամենակարևոր և ստուգած թվականները. 394 թ. Սեսրոսի ձեռնադրությունը, 404 թ. գրերի գյուտը, 438 թ. սեպտ. 7-ին Սահակ Պարքեի մահը, 439 թ. փետրվարի 17-ին Սեսրու Մաշտոցի մահը: Մ. Օրմանյանը «Ազգապատում» Ա հատորում այլ թվականներ է նշում: 404 թ. նա համարում է դանիելյան նշանագրերը Հայաստան քերելու թիվը, 406-ը՝ մեսրոպյան գրերի գյուտի թիվը: Հ. Աճառյանը մերժում է Մ. Օրմանյանի այս ապացույցները, գտնելով, որ նա սխալ հաշվարկ է կատարել: Մեր կարծիքով առավել հավանականը Հ. Աճառյան - Մ. Օրմանյան հաշվարկի միջինն է, ինչ այժմ ընդունել ենք մենք՝ 405 թ.: Հազարամյակների մեջ մեկ կամ երկու տարին առաջ կամ հետ վեճ չպետք է առաջանի, այլ է 12–14 տարի ետ կամ առաջ տասնելք (392/3 թվերը ըստ Ն. Աղոնցի և Հ. Մանանյանի, 412–416 թվերը ըստ Գ. Տեր-Սլյուշյանի):

Հ. Աճառյանի խիստ արժեքավոր աշխատությունից հետո թվում է նոր խոսք ասելը դժվար էր: 1982 թ. լոյս տեսավ Ա. Մարտիրոսյանի

«Մաշտոց» աշխատությունը: Ծավալով, լայնով, խորությամբ արժանիքներով այն կարող է մրցել Հ. Աճառյանի աշխատության հետ: Սակայն սա բոլորովին կրկնություն չէ: Ա. Մարտիրոսյանը նոր խոսք է ասում այս հարցի քննարկմանը, լուսաբանվում են մինչմաշտոցյան գրերը՝ մեհենական դպրություն, արեմենյան գիր, հմայական նշաններ, մինչմաշտոցյան գրականություն և բազմաթիվ այլ հարցեր: Երեք մասից բաղկացած այս աշխատության երկրորդ մասի մի ենթագլուխ վերնագրված է՝ «Գյուտի թվականը»: Դարձյալ օգտագործելով նոյն աղբյուրագիտական հենքը Ա. Մարտիրոսյանն ավելի համոզի ապացույցներով գրերի գյուտի թվականը համարում է 405 թ.:

Գրերի գյուտի ժամանակագրությունից բացի ուսումնասիրողները քննարկում են բազմաթիվ հարցեր, բոլոր թվարկել և քննարկել հնարավոր չեն: Համառոտ ներկայացնենք մի քանիսը: Հարցերի կենտրոնը Մեսրոպ Մաշտոցի անձնն է: Ո՞վ էր Մաշտոցը, ինչ ծագում ուներ նա: Առաջին աղբյուրը դարձյալ Կորյունն է, ըստ որի Մաշտոցը Տարոն գավառի Հացեկաց գյուտից էր, Վարդանի որդին: Սլյուտիչ Էմինը գտնում է¹, որ Տարոնը Մամիկոնյանների սեփականությունն էր և Վարդան անունն էլ տրվում էր Մամիկոնյաններին, ուրեմն, Մաշտոցի ուներ ազնվական ծագում: Չընդունելով անվան պատճառաբանությունը, այլ թացատրությամբ նոյն կարծիքն է արտահայտում Ի. Հարությունյանը²: Ըստ նրա, Մաշտոցն անպայման ազնվական ընտանիքից էր, որպիսին այն ժամանակ միայն ազնվականների զավակներն էին կրթություն ստանում, իսկ արքայական պալատի պաշտոնյանները ևս պետք է ազնվականներ լինեին: Հարցին նոյն մեկնաբանությունն է տալիս նաև Մ. Օրմանյանը, գտնելով, որ «արքունիքի մեջ պաշտօնավարութեամբը ուամիկ դատակարդէ շինելն ալ կը վկայուի»³: Այդ տեսակետի կողմնակից են և Ա. Արենյանը⁴, Հ. Աճառյանը⁵, նաև Ա. Մարտիրոսյանը⁶, շեշտելով քե որ

¹ Иисследования и статьи И. О. Эмина, Москва, 1896, стр. 206:

² Իս. Հարությունյան, Հայոց գիրը. Թիֆլիս, 1892 թ., էջ 388–389:

³ Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. Ա, էջ 303:

⁴ Մ. Արենյան, Սեսրու Մաշտոց և գրի ու գրականության սկիզբը, (Խոդվածների ժողովածու), էջ 242–305:

⁵ Հ. Աճառյան, Հայոց գրերը, էջ 70–73:

⁶ Ա. Մարտիրոսյան, Մաշտոց, Երևան, 1982:

տոհմից էլ լիներ նա՝ Սամիկոնյան, Արշակունի, Վահոնի և այլն, նա «չեր կարող հասարակ ծագում ունենալ»¹: Առանց հիմնավորելու այլ տեսակետ է արտահայտել Լեռն² 1904 թ. գրքած «Մերոպ Մաշտոց» աշխատության մեջ, Մաշտոցին վերագրելով հասարակ զյուղացու ծագում, նրան հետևել են Ն. Ակինյանը³ և Ստ. Մայլսայանը⁴:

Ի՞նչ էր նշանակում Մաշրոց - ինչպես նրան անվանում են Կորյունը և Ղազար Փարպեցին: Միայն Մովսես Խորենացուց սկսած Մաշրոցին ավելանում է նաև Մերոպ անունը: Մեր կարծիքով այդ հարցի առավել սպառիչ պատասխան է տալիս Ս. Օրմանյանը. նա Մաշտոցը համարում է նրա ծննդյան անունը, իսկ Մերոպը այն անունն է, որ ընդունեց Մաշտոցը, եկեղեցական ծեռնադրության մեջ: Մերոպ անունը Օրմանյանը մեկնաբանում է իրեն Մար Մերոպ կամ Տեր Մերովին⁵: Իսկ «Ազգապատումի» Լիքանանյան հրատարակարքյան ծանոթագրով դա մեկնաբանում է իրեն Մերովին կամ Մերովեատես⁶: Ավելի հավանական է Ա. Գարագաշյանը, որ Մերոպ անունի արմատը համարում է Մյուշրիֆ քառը, որը նշանակում է քարտուղար կամ դպիր: Մաշտոց անունը Ն. Արդնցը մեկնաբանում է բխեցնելով այն իրանական "Mazd-ak" անունից հայերեն ոց վերջածանցի հավելումով⁷: Նույն տեսակետին է նաև Ն. Ակինյանը⁸: Դ. Ալիշանը 1873 թ. Մաշտոց քանի արմատը համարում էր Մաշտոց, գտնելով, որ այն «սրբազն նշանակություն մը պիտի ունենա»⁹: Ա. Մարտիրոսյանը Մազդ արմատից է բխեցնում նաև Արամազդ անունը, հավելելով, որ Պրոկոփի թղթում օգտագործված է Մաժդոց ձեր¹⁰: Հակասական կարծիք է արտահայտում Լեռն, կարծես բողոքելով Կորյունից, որ նա «իր ուսուցչին ամեն տեղ անվանում է Մաշտոց, մինչդեռ Մովսես Խորենացու պատմության մեջ նա անվանված է Մերոպ»: Բացատ-

րություն տալու փոխարեն Լեռն ընդգում է. «Այս անուններից ո՞րն է խականը, չգիտենք: Եվ սա էլ մի փաստ է, որ ցույց է տալիս, թե մեր մեծ հերոսի կյանքը լավ հայտնի չէ, մեզ»¹¹: Իմ կարծիքով այս հարցում ճիշտը Ս. Օրմանյանն է:

Առանձին բննարկման նյութ է դարձել Դանիելյան նշանագրերի շուրջ արտահայտած մտքերը: Ի՞նչ էին իրենցից ներկայացնում այդ նշանագրերը: Աղբյուրը դարձյալ Կորյունի, Ղազար Փարպեցու, Մովսես Խորենացու գործերն են, քայլ մեկնաբանությունները տարբեր են: Հ. Մանանյանը գտնում է, որ այդ նշանագրերի հիմքը ասորերենն է, որոնց օգնությամբ ասորի քարոզիչները ստեղծել էին դանիելյան նշանագրերը, հարմարեցրել հայերենին², որը խիստ թերի էր: Հարցը մասնամասն բննության է ենրարկվում Ս. Արելյանի կողմից. մեծ բժախընդուրյամբ վերլուծելով Կորյունի, Ղազար Փարպեցու և Խորենացու պատմությունները, նա ժխտում է այն կարծիքը, որ Մաշտոցը սուկ քարելավեց Դանիելյան նշանագրերը և հավասարում, որ նա ստեղծեց նոր և կատարյալ այբուբեն: Գ. Սևակը գտնում է, որ Դանիելի մոտ եղած «ասորական, հունական կամ գուցե նաև պարսկական գրերից քաղված նշանագրեր էին, առանց ձայնավորների, դրանք ավելի վաղ, նախարիստուննեական շրջանում են եղել գործածության մեջ, պատահաքար մնացել են որևէ ձեռագրում, նույնքան էլ պատահաքար հայտնվել Դանիելի մոտ»³: Սևակ տարի հետո նա փոխում է իր կարծիքը և նոր վարկած է առաջ քաշում, քան որի Դանիելյան նշանագրերի հիմքը ոչ ասորական է, ոչ հունականը, ոչ պարսկականը, այլ դրանք հարավ-սեմական գրեր էին: Ինձ համար ավելի հավանական և համոզիշը Ի. Հարությունյանի ավելի վաղ հայտնած տեսակետն է: 1892 թ. «Հայոց գիրը» աշխատության մեջ նա գրում է. «Սեր նախնիքն արդեն յուրյանց կրապաշտութեան ժամանակ ունեցել են առանձին այբուբեն, սակայն քրիստոնեութիւնը մնութք գործելով Հայաստան՝ նորա եռանդուն պաշտոննեաները... ոչնչացնում էին քրմական գրականությունը և արգելում էին իր հին այբուբենի

¹ Ա. Մարտիրոսյան, նշվ. աշխ., էջ 147:

² Լեռ, Մերոպ Մաշտոց, Երևան, 1962, էջ 48:

³ Ն. Ակինյան, Ս. Մաշտոց վարդապետ, «Վիեննա», 1949:

⁴ Ստ. Մալմասյան, Հայոց գիրը. Տարագ, 1893, № 3:

⁵ Ս. Օրմանյան, Ազգապատում, հ. Ա, էջ 305:

⁶ Ս. Օրմանյան, Ազգապատում, հ. Դ, էջ 121–122:

⁷ Ն. Ալոնց, (տե՛ս հոդվածների ժողովածու), էջ 203:

⁸ Ն. Ակինյան, (Հանդես Ամսօրեայ, 1935, էջ 505):

⁹ Դ. Ալիշան, Ծնորրափ և պարագայ իր, Վենետիկ, 1873, էջ 451:

¹⁰ Ա. Մարտիրոսյան, նշվ. աշխ., էջ 47:

գործածութիւնը: ... Ահա այս հին այրութենն է, որ համարյա մեկ դար անցնելուց հետո երևան է զայխ մի ասորի եալիսկոպոսի մոտ, որի անունը Դանիել է լինում, ուստի և մեր մատենագիրները այդ այրութենը կոչում են Դանիելյան»¹: Այդ տեսակետին համաձայն են եղել Դ. Ինճիծյանը, Մ. Էմինը, Ք. Պատկանյանը: Մ. Արեւանը համոզիչ չի համարում այդ տեսակետը և մեջքերում է կատարում Կորյունից, որն այդ նշանագրերի մասին գրում էր. «այլոց դարութեանց բաղեալ և յարուցեալ դիսեցն», այսինքն դրանք բաղված օտար գրեր էին, որ գտնվեցին: Սիենույն ժամանակ նա չի մերժում այն տեսակետը, որ Սեպուայն գրերից առաջ գրեին հայերեն այլ լեզուների նշանագիրներով²:

Մ. Օրմանյանը թվարկում է այս բազմաթիվ կարծիքները և փաստում, որ «չկան վերջնական հաստատուն կրուանի մը վրայ հանգչելու փաստեր»: «Ունանց համար հին հայ տառեր էին, որը մոռացութեան մատնուած էին, որիշներուն համար հին փինիկեան տառեր էին, գործածութենն ընկած, ըստ այլոց Դանիելէ յարմարցուած նորահնար ձեւեր էին ասորերենի հետեւութեամբ»³: Պատմաբան Մ. Օրմանյանը այլ հարցի վերջնական լուծումը թողնում է բանասերներին, իսկ ինքը փաստում է. «Դանիելյան նշանագիրները հայ դպրութեան սկզբնատրութիւնը նուիրադրեցին»⁴:

Ըննարկման առարկա է դառնում նաև մի այլ հարց. ինչքան ժամանակում պարզվեց, որ այդ նշանագրերը հարմար չեն հայոց լեզվի համար: Բոլորը դարձյալ դիմում են Կորյունին, սակայն տայխու տարրեր բացատրություններ: Կորյունը գրում է, որ Դանիելյան նշանագրերը Հայաստան են թերվել Վոամշապուիի բազավորության հինգերորդ տարում և երկու, տարի հետո պարզվում է, որ դրանք անբավարար են հայոց լեզվի կապերը և հնչյուններն արտահատելու համար: Կորյունի մոտ այնպես է գրված, որ դարձյալ Վոամշապուի հինգերորդ տարում Մաշտոցը մեկնում է Սիրակետը և վերադառնում Վոամշապուի վեցերորդ տարում: Ստացվում է այնպես, որ Վոամշապահի հինգերորդ տարում Դա-

նիելյան նշանագրերը բերեցին Հայաստան, անցավ երկու տարի, բայց դարձյալ Վոամշապուի հինգերորդ տարում Մաշտոցը մեկնեց և գրերի գյուտը արած արդեն Վոամշապուի վեցերորդ տարում վերադարձավ Հայաստան: Տարբեր գիտնականներ այդ անհամապատասխանությունը վերացնելու համար առաջարկում են տարրեր միջոցներ: Իս. Հարուրյունյանը «ամս երկու»-ն կարդում է «ամիս երկու», գտնելով, որ հետագա շրջանի գրիչները բաց են բողել այդ մի վանկը¹: Յ. Մարկիվարով, Ն. Ավինյանը, Մ. Օրմանյանը համաձայն են դրա հետ, որ խևապիս երկու ամիսը բավականին ժամանակ էր Դանիելյան նշանագրերի անհամապատասխանությունը մեր լեզվին գլուխացելու համար: Տարբեր կարծիք են արտահայտել Ս. Մալխասյանը և Հ. Աճառյանը: Ստ. Մալխասյանը առաջին հինգերորդը դարձնում է երրորդ (Ե-ն դարձնում է Գ-) և ամեն ինչ ընկնում է իր տեղը: Հ. Աճառյանը գտնում է, որ ամբողջ բյուրիմացությունն առաջացել է հետագա շրջանի գրիչների անփորության պատճառով: Նա ճիշտ է համարում երկու տարին, գտնելով, որ երկու տարվա փորձը ոչ բե ստվեր է ձգում Սեպուախ վրա, այլ «մեծ պատիվ է իրեն»², քանի որ պարսիկներն ու բորբերը հազարամյա գործածությունից հետո միայն հասկացան իրենց այրութենի պակասավորությունը և դարմանելու կարիքը: Դարի սկզբին՝ Մ. Օրմանյանը (1912 թ.), դարի վերջին քառորդում Ա. Մարտիրոսյանը (1982 թ.) այդ հարցի վերաբերյալ հանգում են, մեր կարծիքով, ճիշտ եզրակացության երկու ամիսը բավարար էր դանիելյան նշանագրերի անկատարության մեջ համոզվելու, համար³:

Հարցերի հարցը, ի վերջո, այն է, թե ի՞նչ կամ քանի տառ ստեղծեց Մաշտոցը: Դարձյալ արտահայտվում են տարրեր կարծիքներ: Գիտնականների մի մասը նոյնիսկ կրնկրեա նշում են դանիելյան նշանագրերի բանակը: Օրինակ, Մ. Էմինը հենվելով XIII դ. պատմիչ Վարդամի հայորդած փաստերի վրա, նշում է, որ Դանիել Ասորու մոտ կար 22 տառ, իսկ Սեպուախ ավելացրել է 14-ը:

¹ Իս. Հարուրյունյան, Հայոց գիրը, էջ 282:

² Սեպուախ Մաշտոց (հողվածների ժողովածու), էջ 256:

³ Ազգապատում, հ. Ա, էջ 310:

⁴ Նոյն տեղում:

Այդ հարցերով գրաղվել է նաև Ա. Արքահամյանը, որը 3 անգամ՝ 1959, 1963 և 1973 թ. տարբեր կարծիքներ է արտահայտել դանիելյան նշանագրերի մասին: Առաջին անգամ հենվելով Դավիթ Անհաղի վրա, նա գտնում է, որ դանիելյան նշանագրերը թվով 24-ն էին. իսկ 12-ը ստեղծել է Մաշտոց¹: Երկրորդ դեպքում նա այդ նշանագրերը համարում է հունարենի վրա ձևած 21 տառ, որի հեղինակը Դանիելը չէ²: Երրորդ դեպքում նա գտնում է, որ Մաշտոցն իր տառերը ստեղծելու համար հենվել է ոչ միայն հունական, այլև հյուսիս-միջազգետրյան, ասորական այբուբենի վրա³:

Ա. Օրմանյանը հենվելով Մ. Խորենացու վրա նշում է, որը սուրբ աջը գրել է 7 ձայնավորներ՝ Ա, Ե, Է, Ը, Ի, Ո, ՈՒ, քանի որ ասորական ծագում ունեցող դանիելյան նշանագրերը անձայնավոր գրություն ունեին, Մաշտոցը դրանք հիմնովին փոխեց, «որ կարգաւորութիւն ստացան յունական ալփարեսին հետևողութեամբ», քայլ դա էլ, չքավարարեց Մաշտոցին. հայերենն ավելի շատ հնչյուններ ուներ, քան հունարենը: Ուրեմն, ոչ ասորերենը և ոչ հունարենը շլարձան Սեսրույան այբուբենի հիմքը, այլ հայոց բանավոր լեզվի հարատորյունը: Սեսրով ստեղծեց ամենի մի հնչյունի համար մի տառ: Փաստորեն, մենք ընդունում ենք հայոց գրի հեղինակային բնույթը՝ Մաշտոցյան այրութեն. չնայած նրա ստեղծման գործում իրենց մեծ ներդրումն ունեցան Սահակ Պարքե կարողիկոսը և Վոամշապոն արքան՝ մեր Սուրբ Երրորդությունը:

Բազմարիվ են գրերի գյուտի հետ կապված քննարկելու արժանի հարցերը: Դանք չեն կարող պարփակվել մեկ հորվածում: Ամենակարևոր մի հարց է. ինչո՞ւ հայ գրերի անհրաժեշտությունն զգացվեց հենց IV դարի վերջում և V դարի սկզբում: Ուսումնասիրողների մեծ մասը դա բացատրում է իրեն քրիստոնեությունը ժողովրդի մեջ տարածելու, Սուրբ Գիրքը և քրիստոնեության եռյունը ժողովրդական լայն զանգվածներին հասկանալի դարձնելու նպատակ: Քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն ընդունվեց 301 թ. վերևից՝ արքունիքի հրահանգով, իսկ ժողովրդի մեջ իշխողը նրա բազմադարյան հերանու աստ-

վածների պաշտամունքն էր: Արդեն մեկ դար էր անցել, ինչո՞ւ Գրիգոր Լուսավորիչը կամ նրա հետնորդները չեին բարձրացրել այդ հարցը: Կամ ինչու հայոց պետականության ամենահզորության ժամանակաշրջանում Արտաշեսյանների օրոք չեր դրվում հայ դպրության հարցը և Արտավագոյքը իր ողբերգությունները գրում էր հունարեն. պալատական լեզուն արամեններներ կամ պարսկերնեն էր: Փաստորեն, հարցը ոչ թե կրթնական էր, այլ բաղարական: Հզոր պետականության ժամանակ չեր դրվում այդ հարցը: Վտանգ չկար հայ ժողովրդի ծովածան համար: Այլ էր իրադրությունը 387 թ., երբ Հայաստանը բաժանվեց երկու աշխարհակալ պետությունների՝ Հռոմեական կայսրության և Պարսկաստանի միջև: Արևմտյան մասում հայ վերնախավի պետական խոսակցական լեզուն դառնում էր հունարենը, արևելյում պարսկերնենը: Հայության երկու տարբեր հատվածներ հեռանում էին իրարից. ակնհայտ էր ծովածան վտանգը: Ժողովրդի ազգային ինքնության կովանը կարող էր լինել հայ եկեղեցին միայն այն դեպքում, երբ հենվեր սեփական գրի, դպրության, գրականության և մշակույթի վրա: Եվ պատահական չէ, որ Սուրբ Գրքի և հունական փիլիսոփանների երկերի բարզմանությունից հետո ստեղծվեց հայոց հարուստ պատմագրությունը, հայ եկեղեցական, աստվածաբանական, ծիսական գրականությունը: Հայ եկեղեցին ուներ իր սեփական գիրը և համարձակ կարող էր զատվել հունական և ասորական եկեղեցիներից, կատարել իր ազգապահպան մեծ առաքելությունը: Եվ նրա ամենամեծ զենքը եղավ Մաշտոցյան գիրը, մեր անխորտակ, անպարտելի 36 մատյան գնդերը, որոնք դիմադրեցին դարերի արևավիրքներին: Երիցս իրավացի էր Ս. Օրմանյանը, երբ գրում էր. «Գիրճ ու գիրքը եկեղեցիով, եկեղեցին ալ գիրով ու գիրքով, իրարու անքաժան փարքուած, դարերու փորձանքներուն, Հայուն անընու տազնապնդերուն, հայութեան անընթերելու վտանգներուն լեմ անվկանդ ոյժ մը կադմեցին: Տասնինգ դարերու վտանգներուն լեմ անվկանդ ոյժ մը կադմեցին: Տասնինգ դարերու (մենք կավելացնենք 16) մարտիրոսական նեղորիւններէ ենոքը, եթե այսօր տակախին Հայ կայ և հայութին կայ, եթե մտաւորական կենաց յաջողակ և բաղարական կենաց ընդունակ սերունդ մը՝ ազգ մը՝ ընդհանուր աշխարհի զարմանքը կը գրաւե, զայն պետք է իրաւամք Մա-

¹ Ա. Արքահամյան, Հայ գրի և գրչության պատմություն, Եր., 1959, էջ 42:

² Ա. Արքահամյան, ՊԲՀ, 1963, № 4:

³ Ա. Արքահամյան, Հայոց գիր և գրչություն, Եր., 1973:

հակի և Սեպուայի անմահական գործին արդիւնքը ճանչնալ և խոստովանիլ¹: Հոգևորական Մ. Օրմանյանը առավել բարձր է զնահատում ժամանակի կարողիկոսին՝ Սահակ Պարթևին, մենք՝ նշում ենք Սեպուա Մաշտոցին, որպես մեծ գործի անմիջական նախաձեռնող և հեղինակ կատարող:

*Հայոց պատմության հարցեր, Գիտական հոդվածների
ժողովածու, 2005, հ. 6, էջ 292–307:*

ԻՍԿ ՎԱՂԸ ԵՂԵՇՈՆ ԷՐ ...

ԻՆՉ ԷՐ ՆԱԽՈՐԴԵԼ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆԸ

(Հարցագրույց Պատմական գիտությունների
դոկտոր Էնմա Կոստանդյանի հետ)

- Ինչպես կարելի է ձևակերպել Հայկական հարցի բովանդակությունը:

- Հայկական հարցը օտարների լծից ազատազրման, Հայկական քնաշխարհում հայկական պետականության վերստեղծման համար մղված ազգային-ազատազրական պայքարի հիմնահարցերի մի ամբողջություն է:

- Ե՞րբ և ի նշ պայմաններում առաջացավ Հայկական հարցը:

- Հայկական հարցի սկզբնավորումն ունի իր ներքին և արտաքին բովանդակությունը: Արտաքինը՝ բուրքերի հայրենիք ստեղծելու մտադրությունն էր, եվրոպական պետությունների միջամտությունը, միջազգային դիվանագիտությունը: Հիշենք, որ բուրք-սեղուկները անհայրենիք բոշվոր ցեղեր էին, որ ասպատակելով և ավերելով ճամասպարհին եղածը, եկել էին Զինաստանի հյուսիսից, և 1299 թ. Փոքր Ասիայում ստեղծել օսմանյան պետությունը: Այսուհետեւ օգտվելով եվրոպական պետությունների պառակտումից, գրավել Հունաստանը, Բալկանները, հասել մինչև

Վիեննայի դարպանները: Կոտորածներով և ավերներով՝ անհայրենիք բուրքերը ստեղծեցին մի հսկս կայսրության:

Հարցի ներքին կողմը հայերի ազատազրության խնդիրն էր, արևմտահայերի՝ մարդկային արժանապատվությամբ ապրելու պահանջը, ինչը բուրքական բռնապետության պայմաններում անհնար էր: Տեղի տալով միջազգային հանրության պահանջներին, 1839 և 1856 թթ. Թուրքիան ընդունեց բարենորոգնմների ծրագիր (Թանգիմար), և դրա շրջանակներում բուրքական կառավարությունը բուլլատրեց հայերին կազմել սեփական Ազգային ժողով: Հայերի սահմանադրական շարժումը պասակեց հաջորդությամբ: 1860 թվականին Կ. Պոլսի Ազգային ժողովի կողմից ընդունված սահմանադրությունը սուլթանը հաստատեց միայն 1863 թ.: Նալբանդյանի արտահայտությամբ՝ «Քլպատելուց» հետո: Դա ավելի շուտ կանոնադրությունն էր, թե ինչպես պետք է արևմտահայերը վարեին իրենց ներքին գործերը: Կ. Պոլսից դուրս ավելի ծանր էր հայերի վիճակը՝ անօրինական հարկահանություն, բռնի կրտնափոխում, սպանություններ...

Սակայն Հայկական հարցի առաջացումը կապում ենք 19-րդ դարի ոուս-բուրքական պատերազմների հետ: 19-րդ դարի առաջին կեսին, քասանյան պայքարի արդյունքում Հունաստանը ազատվեց բուրքական լծից: Հունաստանից հետո իրենց ազատազրական շարժումներն սկսեցին սլավոնական ցեղերը՝ սերբերը, խորվածները, չեռնոգորյանները... Վերջում, 1876-ին ապստամբեց Բուլղարիան, որը «խնդրվեց արյան բաղնիքում»: Ի վերջո, բուրքերը լիկվ արտաքիսեցին Եվրոպայից: Եվրոպական պետությունները Թուրքիային համեմատում էին մահամերձ հիւմանդի հետ, որի ժառանգության վրա աչք էին դրել բոլորը:

- Ինչո՞ւ է Հայկական հարցի առաջացումը կապվում ոուս-բուրքական պատերազմների հետ:

- Դեռևս 1856-ին, Ղրիմի պատերազմի ավարտին, եվրոպական երկրների ճնշմամբ Ո-ուսաստանը Թուրքիայի հետ կնքել էր Փարփղի հաշտության ամորալի պայմանագիրը, որով նրա բոլոր նվաճումներն ի դերս էին ելնում: Եվ 1877-ին սլավոնական ազգերի ապստամբությունները Ո-ուսաստանի համար ուսանշի հնարավորության ստեղծեցին: Զնայած պատերազմի նվաճողական բռնյակին, այն ներկայացվեց իրեն

¹ Մ.Օրմանյան, Ազգապատում, հ. Ա, էջ 325:

քրիստոնյաների ազատազրության նպատակ հետապնդող: Ավելասնը Երկրորդը, Եվրոպական սլավոններին օգնելու պատրվակով, սկսեց 1877-78 թթ. ռուս-թուրքական պատերազմը: Ռուսական բանակի շարքում ծառայում էին հայազգի գեներալներ, բարձրաստիճան սպաներ: Լորիս-Մելիքովը կովկասյան ռազմաճակատի հասողությունը 60.000-ամոց գործի երամանատարն էր: Պատերազմն ընթանում էր Երկու ճակատներով՝ բալկանյան ու կովկասյան: Բալկանյանը գիշավորում էր ցարի եղբայրը՝ Նիկոլայ Նիկոլաևիչը, իսկ կովկասյանը՝ ցարի մյուս եղբայրը՝ Միխայիլ Ռոմանովը: Ռուսական գործերը 1878-ին մտան Սոֆիա, ապա Աղրիանապոլիս, որը Պոլսի մատուցներում էր: Կովկասում գրավեցին Կարսը, Բայազետը, իսկ Էրզրումը գինադադարից հետո առանց դիմադրության հանձնվեց: Սուլթանը ստիպված հաշտություն խնդրեց: Զինադադար կնքվեց Աղրիանապոլսամ:

- *Այդ ժամանակ հայերի դրույթունն իմշայի՞ն էր:*

- Թուրքերը պատերազմը առիթ դարձին և շատ մեծ կոտորածենք կազմակերպեցին: Մինչ պատերազմը՝ Վանի վաճառական շուկան էր հրդեհվել: Պատերազմական գործողություններն օգտագործելով, Սուլթան Համբիլը շեյխ Ջալալեդինի հրոսակների ձեռքով կոտորել տվեց Ալաշկերտի հովտի 23 հայկական գյուղերի բնակիչների: Եթզ Ներսէս Վարժապետյանը՝ Պոլսի պատրիարքը, բողոքեց Սուլթան Համբիլն, նա կեղծ ցավակցություն հայտնեց և կատարվածը բացատրեց պատերազմական իրադրությամբ: Եվ որպեսզի լուցնի պատրիարքին, նրա պարանոցը գցեց Օսմանին առաջին կարգի շքանշանը: Նույն բոպեին հնչեց Խրիմյանի սրափեցնող կանչը. «Ոչխարների ոսկորներից մանյակ հյուսեցին և զցեցին հովվի վիզը»: Ոչխարները՝ Ալաշկերտի գյուղերի անմեղ գոհերն էին, հովվակետը՝ Վարժապետյանը:

- *Այդինապոսի գինադադարը հայերի համար նպաստավո՞ր էր:*

- Զինադադարին պետք է հաջորդեր հաշտության պայմանագիրը, որը կնքվելու էր Պոլսի մերձակա Սան-Ստեֆանո ավանում: Հայերը դիմեցին ուսւ դիվանագետներին՝ խնդրելով իրենց հարցը ևս բարձրացնել: Ռուսները, ինչպես միայն խոստանում էին: Նրանք ուզում էին ոչ քեզ ինքնավարության տալ, այլ միացնել իրենց: Չե՞ որ Արևելահայատանը միացնելու ժամանակ էլ էին խոստացել պետականությունը վերա-

կանգնել, բայց այդ խոստումը չէին կատարել: Աղրիանապոլսի զինադադարը կնքվեց 1878 թ. հունվարին, իսկ մեկ ամիս անց կնքվեց Սան-Ստեֆանոյի հաշտության պայմանագիրը, որի 16-րդ հոդվածը նվիրված էր Արևմտյան Հայաստանին: Սան-Ստեֆանոյում հարցանակած ռուսներն իրենց պայմանները թելադրեցին պարտված ժուրքիային, որով Արևմտահայաստանի մի մեծ տարածք անցնում էր Ռուսաստանին՝ Կարսը, Բայազետը, Ալաշկերտը, Արդահանը և այլն: Պայմանագրի 16-րդ կետը վերաբերում էր հայերին: Այդ փաստարդում առաջին անգամ միջազգային դիվանագիտության մեջ արձանագրվեց Հայաստան բարը: Ու քեզ փաստարդը հայերին չէր բավարարում, բայց նրանում խոսվում էր Հայաստանում բարենորդումներ և բարվորումներ անցկացնելու, հայերի անվտանգությունը քրդերից ու չերքեզներից պաշտպանելու մասին:

- *Առաջին անգամ Սան-Ստեֆանոյում բարցրացվեց Հայկական հայրը:*

- Այո, այդպես է: Սակայն Եվրոպան ամեննին գոհ չէր Սան-Ստեֆանոյի պայմանագրից: Հատկապես՝ Անգլիան, որի շահերին հակասում էր Ռուսաստանի դիրքերի ուժեղացումը տարածաշրջանում: Սիր բանի ամսից իրավիրվեց Բեղլինի վեհաժողովը, որը պետք է բնարկեր Սան-Ստեֆանոյի պայմանագիրից: Հայերն էլ որախացան. չենք բավարպի Սան-Ստեֆանոյվ, կապահնջենք Հայաստանի ինքնավարությունը: Կազմակերպվեց պատվիրակություն, որը պիտի գնար Բեղլին և Պետերբուրգ, որպեսզի համոզեր մեծ տերություններին՝ հայերին ինքնավարություն տալ: Սիամիտ հայերը կարծում էին, թե դա անում են բուրքական կառավարությունից գաղտնի, այն ինչ այդ ամենը արվում էր ոչ միայն բորբերի գիտությամբ, այլև՝ ուղղորդմամբ: Քանիզի բորբերին և նրանց բիկունում կանգնած Անգլիային սետը էր մեծ Բուրգարիայի ստեղծմանը խանգարել, բուրգարական հարցին հայկադրել հայկականը և ավելի ծեռնոտ էր հայերին ինքնավարություն ստանալու հույսեր տալը:

- *Ո՞վ մեկնեց Բեղլին:*

- Պատվիրակության կազմում էր Սկրտիչ Խրիմյանը, որը իրաշալի գլուխ Արևմտյան Հայաստանի ամբողջ ցավերը, սակայն շատ հեռու էր դիվանագիտությունից: Եթզ Խրիմյանին հարցրին՝ Հայրիկ, ոչ մի եվր-

պական լեզվի չես տիրապետում, ինչպես պիտի խոսես նրանց հետ, ասաց՝ «Ես նրանց հետ պիտի խոսեմ լեզու մը, որ հաճախարդկային է: Ես պիտի լամ»: Հիմա արդեն հեղճանք և կարենցանք է առաջացնում այդ միանտուքյունը: Խրիմյանի այդ պատրանքը մի քանի ամիս տևեց, և Բեռլինից վերադառնալով՝ նա արդեն լիրվ փոխել էր իր նույնությունը:

- *Ի՞նչ կատարվեց Բեռլինում:*

- Բեռլինում հավաքվել էին վեց մեծ պետություններ՝ Բնույթան, Ֆրանսիան, Անգլիան, Ավստրո-Հունգարիան, Գերմանիան և Ռուսաստանը: Ռուսաստանից ուզում էին կորզել հաղթանակի արդյունքները: Ապստամբած ժողովուրդներին թույլատրվեց մասնակցել իրենց հարցերի քննարկմանը՝ բուլղարներին, սերբերին, չեռնոգորցիներին և այլն, իսկ հայերին թույլ շտվեցին: Վեհաժողովում պարզվեց անգլո-բուրքական գաղտնի պայմանագիր կնքելու փաստը, որով Անգլիան ժուրդիայից վերցրել էր Կիպրոս կղզին՝ խոստանալով իր պաշտպանությունը Ռուսաստանի դեմ: Իմանալով այդ մասին, Ֆրանսիան որոշեց իր զորքերը ուղարկել Կիպրոս, բայց արդեն ոչ էր. այնտեղ կանգնած էր անգլիական մեծ նավատորմը: Գերմանիայի կանցելով Բիսմարկը Ֆրանսիային դրդեց, որ նա էլ իր նավատորմն ուղարկի և գրավի ժունիսը, Մարտկոն: Նույն խորհուրդն է տախս նաև Բնույթային, որպեսզի Ֆրանսիան և Բնույթան իրար հետ կունեն և Ֆրանսիայի պահանջը՝ Գերմանիայից ետ ստանալ Էլզաս ու Լորարինգիան, մոռացվի: Այդպիսի պայմանների մեջ հայերն զգացին, որ իրենք ոչ մեկին չեն հետաքրքրում: Եվ ամենավերջիներից մեկը քննարկվեց Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածը:

- Բեռլինի պայմանագիրն էր ավելի ճապաստավոր մեզ համար, քե՞զ Սան-Ստեֆանոյինը:

- ճակատագրի հեգնանքով Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16 հոդվածը Բեռլինում փոխակերպվեց 61-րդի, որն ավելի վատն էր: Այնտեղ ասվում էր, թե հայարձակ շրջանների բարենորոգումների մասին բուրքական կառավարությունը պետք է տեղյակ ալահի վեցնյակին, իսկ Սան-Ստեֆանոյի պայմանագրում նշված էր, որ այդ բարեփոխումները պետք է կատարվեն մինչև ոտական զորքերի դուրս բերումը այդ տարածքներից: 61-րդ հոդվածից դուրս թռավ Հայաստան անվանումը: Իսկ Հայաստանի անվտանգությունը քրդերից և չերքեզներից պահպանելու

բուրքական խոստումը խորամանել քայլ էր՝ նրանց հայերի դեմ լարելու համար: Ականավոր գործիչ Գրիգոր Օսյանը շուտ հասկացավ Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածի եռթյանը: Նա ասաց. «61-րդ հոդված մը շահեցանք, իցի՞ւ թե կարողանայինք ջնջել զայն»: Այնինչ՝ Խրիմյանի հետ Բեռլինի մեկնած անփորձ երիտասարդ Սիմաս Շերազը գրում է. «Պեղյինի կոնցրեսեն ուկե հանք մը շահեցանք, մեզ անկե խիզախի և այդ ուկին հանիլք»: Իսկ Խրիմյանը Բեռլինից վերադառնալուց հետո Պոլսի եկեղեցիներում քարոզում էր. «Բեռլինում մեծ կարսայով հարիսա էին եփում: Այն ազգերը, որոնք ապստամբել էին, եկան, իրենց երկարեւեփով հարիսան առան, զնացին: Մենք աղերսազրով ու քրով էինք զնացել, այդ բուրքը խրեցինք, մնաց ամանում, բերաններս քան չմտավ: Սիրելի եւ օրինյալ հայաստանցիներ, զավառացիներ, երբ Հայաստան վերադառնալու լինեք, ձեր հարազատներին տարեք մի-մի հրացան: Ձենք առեք և դարձյալ զենքը: Ժողովուրդ, ամեննեն առաջ քո ազատության հույսը քո վրա դիր, քո խելքին և քո բազկին ուժ տուր, մարդ ինքնիրմեն պիտի աշխատի, որ փրկվի: Ազատությունը առանց արյունի չի լինում»: Այդ խոսքերը դարձան հետագա սերունդների գործելակերպի լրույրները: Այդ ժամանակ էր, որ ստեղծվեցին հայկական գաղտնի կազմակերպությունները՝ Վասպորականում «Ան խաչը», Էրգումում «Պաշտպան հայրենյացը», Փոքր Հայրի կազմակերպությունները, առաջացավ Ֆիդայական շարժումը, ապա ստեղծվեցին հայ ազգային դասական կոստակցությունները, որոնք գտան, որ միայն զենքով է ժողովրդի փրկությունը:

Առավելագույն հայությունը կազմակերպությունների մեջ առաջատար է Սան-Ստեֆանոյի պայմանագրում:

ՍԵՄՐՈՊ ՍԱՇՏՈՅՆ ՈՒ ԳՐԵՐԻ ԳՅՈՒՏԸ

ՍՍՂԱՋԻԱ ՕՐՍԱՆՅԱՆԻ ԳՆԱՀԱՏՈՒԹՅԱՆՔ

(Գրերի գյուտի 1600-ամյակին)

Մաղաքիա Օրմանյանը ծնվել է 1841 թ. Կ. Պոլսում հռոմեադավան ընտանիքում: 11 տարեկանից ուղարկվել է Հռոմ, ստացել է փայտուն կրթություն, արժանացել իմաստասիրության, աստվածաբնության և եկեղեցական իրավագիտության մագիստրոսի կոչման, ապա ընտրվել է Հռոմի աստվածաբանական կաճառի (ակադեմիայի) անդամ: Երիտասարդ Մ. Օրմանյանը զայրույրով է ընդունում պապականության ձգտումները՝ հռոմեադավան հայերին իրենց ազգային արմատներից կտրելու և հեռացնելու ուղղությամբ: Այս տրամադրություններն են արտահայտում 1870-ին և 1872-ին լոյս ընծայված՝ նրա «Հայ արեւելեան կարողիկեայր» և «Ուկերսուրոս կամ Թիրքիա և պապականությին» խոալերեն աշխատությունները: Նոյն 1872-ին, ապա 1873-ին, այս անգամ ֆրանսերեն, լոյս են տեսնում Մ. Օրմանյանի «Արևելյան կարողիկեաց կրոնական ազատությինը և քաղաքական իրավունքները» ու «Վատիկան և Հայք» աշխատությունները: Կարողիկ հոգևորականի համար մեծ հանդգնություն էր այդ աշխատությունների լոյս ընծայումը, քանի որ դրանք հետամուտ էին հայ ազգության պաշտպանությանը պապականության հարձակումներից: Ուստի, պատահական չեն, որ այդ շորս աշխատություններն են դասվեցին պապական ատյանի արգելած գրերի շարքը: Այդ պայքարը Մ. Օրմանյանի համար ունեցավ հադրական ավարտ: 1879 թ. նա հոգեկան և քարոյական մեծ համոզմունքով վերադարձավ հայ եկեղեցու գիրկը՝ իր հետ քերելով 75 հռոմեադավանի: Հռոմից Կ. Պոլիս վերադարձած Մ. Օրմանյանը ժամանակի հայոց պատրիարք Ներսէս Վարժապետյանից ստացավ ծայրագույն փարդապետության աստիճան և իր ջանքերը ներդրեց այդ ժամանակ հայ ժողովրդին հուզող խնդիրների լուծման մեջ: Մ. Օրմանյանը հայ եկեղեցու այն սակավաթիվ գործիքներից է, որ կատարել է հոգևորականի ամենօրյա աշխատանքները (Էքքրումի հոգևոր առաջնորդ, Էջմիածնի հոգևոր ճեմարանի դասախոս, Արմաշի դպրեվանի հիմնադիր, համիլյան գու-

լումի տարիներին 12 տարի անընդմեջ (1896-1908 թթ.) Կ. Պոլսի հայոց պատրիարք) և դրա հետ միասին բողել է մեծ ու անգնահատելի գիտական ժառանգություն: Սակայն երիտրուրքերի հեղաշրջումից առաջ նրա պատրիարքական շրջանում վարած գգուշավոր քաղաքականությունը (իր խորերով «զազանագուսակն ու լարախաղացք») գնահատվեց իբրև դավաճանություն ազգի շահերին և նրան ստիպեցին պատրիարքությունից հրաժարական տալ: Իր դեմ եղած ամբաստանությունները հերքելու նյատակով 1910 թ. Մ. Օրմանյանը գրեց «Ձիշատակարան երկուտասան պատրիարքութեան» աշխատությունը, իսկ 1911 թ. պարտեց «Համապատումի» (շորս ավետարանների համեմատուական միացյալ տերսութը) տպագրությունը, որ աստվածաբանական ուսումնական հաստատությունների դասագիրը էր լինելու: 1911 թ. սկզբում ֆրանսերեն, ապա հայերեն լոյս տեսավ Մ. Օրմանյանի՝ հայ եկեղեցու պատմությանը, փարդապետության ու կառուցվածքին նվիրված աշխատությունը, որը նյատակամդված էր եվրոպական ազգերին ծանրացնելու հայ եկեղեցուն և հերքելու նրա մասին տարածված քյոր պատկերացումները: Այդ գրի մեծ նշանակության և կարևորության մասին է խոսում 1912-ին անգլերեն, իսկ 1913-ին՝ ուսուերեն իրատարակվելը: Գրի գնահատականը տվեց Բերտրան Բարեյլը՝ նշերով եկեղենակի ուղղամտությունը, համոզմունքը, «այլև միտքի այնպիսի անկախությին մը, որ զարմանք կապանառէ Եւրոպայի ընթերցողներու, որոնք փարժ չեն այսպիսի ազատութեամբ գրող եկեղեցականներու հանդիպիլ»¹: Մ. Օրմանյանը 1917-ին պարտում է «Խոնիք և խոսք» ինքնատիպ հուշագրությունը: Նշված գործերի արժեքը մեծ է և անշափ կարևոր, սակայն դրանցից ոչ մեկը չի կարող համեմատվել կորողային «Ազգապատումի» երեք հասորներից որևէ մեկի հետ: «Ազգապատումի» Ա և Բ հասորները լոյս տեսան 1912-ին, իսկ Գ հասորը՝ հետմահու, 1927-ին: Հատորներին նոյնիսկ քուցիկ ծանրությունն ընթերցողին ապշեցնում է բովանդակության հարատույամբ, խորքով ու լայնքով: Մեր եկեղեցու և ժողովրդի երկու հազարամյա պատմությունն է դա, որ մեր օրերին կարող էր կատարել մի մեծ գիտա-

¹ Օրմանյան Մ., Հայոց եկեղեցին եւ իր պատմութիւնը, փարդապետութիւնը, փարզութիւնը, քաղաքականության հարատույամբ, լուսակացնութիւնը, գրականութիւնը ու ներկայ կացութիւնը, Կ. Պոլիս, 1911, էջ 10:

կան հաստատություն: Հենվերդ հայ պատմիչների, ապա զիտնականների՝ իր ժամանակ հայունի աշխատությունների վրա, նա մեր բազմադարյան պատմության ամեն մի ակնառու երեսուրի տալիս է սեփական գնահատականը: Ա հատորի հետաքրքիր էջերից է Սեսրու Մաշտոցի և հայ գրերի գյուտի ստեղծման պատմությունը: Հիմք ընդունելով այդ հարցի առաջնային սկզբնադրյունները՝ Կորյուն, Ղազար Փարպեցի և Մովսես Խորենացի, նա քննում է մեր ժողովրդի պատմության մեջ ծանրակշիռ այդ խնդիրը և հայտնում իր կարծիքը, որույն տեսակետը: Մինչև կոնկրետ թեմային անցնելը Մ. Օրմանյանն անդրադառնում է ժամանակի հայոց կարողիկոսի և բազավորի՝ Սահակ Պարքեի և Վուամշապուի գործունեության ժամանակաշրջանին: Այդ երկու պատմական անձնավորություններն էլ արժանանում են Մ. Օրմանյանի բարձր գնահատականին: Նա համաձայնվում է Փարպեցու ներկայացրած փաստի հետ՝ մեկնարանելով Վուամշապուի անոնը. պարսից բազավոր Վուան Կրմանն իր անվանը կցում է հոր՝ Շապուի անոնը և իր կողմից բանտարկված հայոց Խոսրով բազավորի եղբորը՝ Վաղարշ Պահլավիկին, վերանվանում Վուամշապուի, հոչակում հայոց բազավոր: Որովհետև Սահակը կարողիկոս էր օծվել Խոսրովի ժամանակ, քվում է, նա անօրինական պետք է համարվեր պարսից արքայի կողմից: Սակայն, երբ Սահակը մեկնեց Տիգրոն, պարսից արքայի վրա մեծ ազդեցություն գործեց նրա «խոհական ընթացքը» և Վուանի «այնուական վաներացմամբ ճանշցուեցավ նորա կարողիկոսական պաշտօնը»¹: Սահակի շնորհիվ Վուամշապուին բույլատրվեց անել այն, ինչ արգելվում էր Խոսրովին: Այդ երկու պետական-քաղաքական և հոգևորական ականավոր այրերի գործունեությունը Մ. Օրմանյանը հասցնում է մինչև 404 թ., իր կարծիքով գրերի գյուտի թվականը: 389 թ. համարելով Վուամշապուի բազավորության առաջին տարին՝ նա գտնում է, որ այդ երկար ժամանակահատվածը՝ 15 տարին, «առանց պատմութեան կը մնայ», որովհետև պատմիչները լուս են այդ տարիների մասին: Այդ լուսությունը Մ. Օրմանյանը համարում է «գերազանց պատմութիւն», երբ շարունակական պատերազմների, կործանման ու քայլայման եզրին կազմած երկին և

«ազգին շունչ առնելու միջոց մը շնորհվեց»²: Հայաստանի բազավորն ու կարողիկոսը «ձեռք ձեռքի տուած կրցան երկրին բարգաւաճման և զարգացման աշխատիլ»: Հենց նրանք էին, որ նպաստեցին և «պատրաստեցին ազգը այնպիսի մի մեծ հաջողութեան, որը նորա ապագային երաշխավորութիւնը պիտի ըլլար Հայ դպրութեան սկզբնաւորութեամբ»³: Այդ երկուսի կյանքի անհրաժեշտ տարեքվերը պարզելուց հետո Մ. Օրմանյանն անդրադառնում է երրորդ և ամենակարևոր անձ Սեսրու Մաշտոցին: «Սահակի անքածան ընկերակցին և հարազատ ամողակցին»:

Մ. Օրմանյանը նրա առաջին անոնը համարում է Մաշրուը, ծննդավայրը՝ Տարոնի Հացիկ գյուղը, ծագումը՝ Մամիկոնյան ազգի կամ ցեղի շառավիղ, այսինքն՝ նրան վերագրում է ազնվական ծագում և հավելում. «քանի որ արքունիքի մէջ սպասունավարութեամբ ուսմիկ դասակարգ չլինելու ալ կը վկայուի»⁴: Այս մասում Մ. Օրմանյանի պատմողական ոճը վերածվում է ակնհայտ վիճաբանականի: Ծանոթանում ենք մինչ այդ Մաշտոցի մասին հայ զիտնականների հայտնած տարբեր կարծիքներին և համոզվում դրա մեջ: 1904 թ. Լեռն հրատարակեց «Սեսրու Մաշտոց» աշխատությունը, որտեղ նշվում էր Մաշտոցի՝ գյուղացու որդի լինելը: Ըստ Լեոյի, Խոսրովի ժամանակ հայոց արքունիքում որպես դպիր կամ դպրապետ ծառայում էր մի հասարակ գյուղացու որդի, մի հայ, որը Տարոն գավառի Հացիկ կամ Հացեկաց գյուղից էր⁵: Այդ վարկածը, առանց որևէ փաստարկի, պաշտպանել են նաև Ակինյանը⁶ և Մալիսայանը⁷: Հակառակ դրանց Աճառյանը⁷ Մ. Օրմանյանի օրինակով նշում է, որ Հացիկ գյուղը մասն կամ երկրորդական ազնվականների կենտրոն էր: Մենք համաձայնվում ենք Մ. Օրմանյանի և Հ. Աճառյանի հետ: Մաշտոցը չէր կարող հասարակ գյուղացի լինել:

¹ Նոյն տեղում, էջ 302:

² Նոյն տեղում, էջ 302–303:

³ Օրմանյան Մ., Ազգապատում, հ. Ա, էջ 303:

⁴ Լեռ, Սեսրու Մաշտոց, Եր., 1962, էջ 48:

⁵ Ակինյան Ն., Մ. Մաշտոց վարդապետ, Վիեննա, 1949:

⁶ Մալիսայան Ստ., Հայոց գիրը (Տարագ, № 3, 1893):

⁷ Աճառյան Հ., Հայոց գիրը, Եր., 1968:

¹ Օրմանյան Մ., Ազգապատում, հ. Ա, Եջմիածին, 2001, էջ 301:

Ս. Օրմանյանը Մաշտոցի ծննդյան թիվն ընդունում է 353 թ.՝ 5 տարի փոքր Սահակ Պարքեից: Ինչպես գիտենք, այսօր բնդրում ված է 361 թվական:

Քանի որ Սահակ Պարքեն էլ Տարոնից էր, Ս. Օրմանյանը նրանց համարում է «մանկութիւնին միասին աճցուցած» ին ծանրներ: Նա Մաշտոցին համարում է «Ներսեսի հաւատարիմ աշակերտներէն»: Այդ վարկածը ժխտում են և Հ. Աճառյանը, և Լեռն՝ բերելով համոզիչ փաստարկներ: Ս. Օրմանյանը 394 թ. համարում է Մեսրոպին արքունի դպրի ծառայությունից հետո հոգևորական դառնալու տարին, եթե նա իր հաշվով 40 տարեկան հասունացած այր էր և «ոգեւորութեան բուն բախով մը իր նոր կոշումին կը նոյիրուեր»¹: Լեռն ըննադասում է Կորյունին, որ իր «Վարք Մաշտոցի» աշխատության մեջ հայ ժողովրդի հանճարեղ զավակին անընդհատ անվանում է Մաշտոց, իսկ ինքը ավելի հավատ է ընծայում Մովսես Խորենացուն, որը գրում է Մեսրոպ: Առանց ստուգարանուներ կատարելու՝ Լեռն ճշմարիտը համարում է Խորենացուն: Այլ մոտեցում է հանդես քերում Ս. Օրմանյանը: Նա Մաշտոցը համարում է նրա ծննդյան անունը, իսկ Մեսրոպն այն անունն է, որ ընդունեց «Եկեղեցական ձեռնադրութեան մեջ»²: Մեսրոպ անունը Ս. Օրմանյանը մեկնարանում է իրեն Մար Սերոք կամ Տեր Սերոքը: «Ազգապատումի» բեյրության հրատարակության ծանրագրողը Տեր Սերոքը կամ Մար Սերոքը մեկնարանում է իրեն սերովին կամ սրբովնատես քառերով: Այդ հետազոտողը բացատրում է նաև Մաշտոց անվանումը՝ համաձայնվելով Ա. Գարագաշյանի հետ, որը Մաշտոցը համարում է «Մաստոց» բայց առաջացած, որը «կը նշանակի բարձրութիւն իրեն Եկեղեցական տիտղոս»³: Այսուել բախվում են երկու տեսակներ. ո՞րն է անունը, ո՞րը Եկեղեցական վերանվանումը. մենք համաձայնվում ենք Կորյունի և Ս. Օրմանյանի կարծիքներին. Մաշտոցը՝ անունը, Մեսրոպը՝ Եկեղեցական վերանվանումը:

Անունների բացատրությունից հետո Ս. Օրմանյանն անցնում է Մեսրոպ Մաշտոցի Եկեղեցական գործունեության վերհանմանը: Նա չի

համաձայնվում Կորյունի այն վկայության հետ, ըստ որի, բրիսոսոնեական կրոնը տարածելու համար Մաշտոցը մեկնեց «Գողքն զավառ, յանկարգ և յանդարձան տեղիս, ուր կար տակաւին զօղեալ աղանդն հերանուական, անդստին Տրդատի օրերէն անմասոյց լեռներու մէջ պահութած»¹, զրելով հետևյալը. «յարմարագոյն կը կարծենք Բորբոքիսոն աղանդատրներու վրայ իմանար»²: Այդ բացատրությունը, մեր կարծիքով, ճիշտ չէ: Գողքնը այն զավառն էր, ուր խորոնի արմատներ էր ձգել հայ հերանուատրյունը, և պահպանվել և խորենացուն ին հասել հերանուական շրջանի ժողովրդական ասքերն ու ավանդությունները:

Ս. Օրմանյանը միանգամայն ճիշտ է բացատրում Սուրբ Գիրքը և քրիստոնեության էությունը ժողովրդական լայն զանգվածներին հասկանալի դարձնելու դժվարությունը: Սուրբ Գիրքը մեկնողներն ու վերծանողները պետք է այն ասորերեն կամ հունարեն կարդային ու նոր միայն բացատրենի հայերին: Այն, ինչ փորձով զգում էր Մեսրոպը, նորություն չկը: Դեռևս շուրջ 100 տարի առաջ՝ քրիստոնեությունն ընդունելուց ի վեր, այդ դժվարությունը զգում էր նաև Գրիգոր Լուսավորիչը: Արքունի քարտուղարից հոգեար պաշտոնյա դարձած Մեսրոպը տառապում էր, թե ինչու «հինար պիտի շուլայ ինքեան ձայնի և ոչ մուրացածոյ բարբառով, մայրենի լեզուով և ոչ օստարի լեզուով շահիլ զոգիս արանց և կանանց առհասարակ յամենայն եկեղեցին»³: Մեջքերելով Ղազար Փարպեցու Վերոհիշյալ խոսքերը՝ Ս. Օրմանյանը հանգում է քոլորի կողմից ընդունված եզրակացության. «Ահաւասիկ Հայ զիրի զիստին և Հայ դպրութեան սկսելուն բուն և ներքին շարժառիթը»⁴: Այդ ապրումների, տարակույսների և տագնապների ժամանակ Մաշտոցը լսում է, որ կան հայոց լեզվի նշանագրեր: Լորի ստուգությունը ճշտելու համար նա գնում է կարողիկոսի մոտ: Քանի որ Սահակ Պարքեին էլ էին համակել նոյն ապրումները, Մեսրոպի լորքը «փրբե յուսոյ դրու» ընդունելով, միասին դիմում են Վրանշապուհին: նրան փոխանցելով իրենց մոռրումները, հայոց նշա-

¹ Նոյն տեղում, հ. Ա, էջ 305:

² Նոյն տեղում:

³ Ղազար Փարպեցու պատմութիւն հայոց, Տիգիս, 1904, էջ 14, նաև Ազգապատում, հ. Ա, էջ 306:

⁴ Օրմանյան Ս., Ազգապատում, հ. Ա, էջ 306:

¹ Օրմանյան Ս., Ազգապատում, հ. Ա, էջ 304:

² Նոյն տեղում, էջ 305:

³ Նոյն տեղում, հ. Դ, էր, 2002, էջ 122:

նազրերի հայտնաբերումը համարելով ավելի մեծ գործ, քան ողջ «զիշխանութիւն բազալդուրեամից»¹: Ընդգծելով Ղ. Փարպեցու այդ խոսքերը, Մ. Օրմանյանը ցույց է տալիս, որ հայոց բազավորը, կարողիկոսն ու Սաշոնցը հավասարապես համոզված էին «հայ գիրի մը անհրաժեշտ հարկին վրայ»²:

Վոամշապուիը լսել էր, որ Ղանիել Ասորու մոտ կան հայկական նշանագրեր: Դա այն ժամանակ էր, երբ ինքը պարսից բազավոր Վոամի հրամանով մեկնել էր Սիջագետը՝ հունական և պարսից գորբերի միջև եղած քննարկությունները խաղաղեցնելու նպատակով: Վոամշապուիը Սիջագետըից վերադարձավ 402 և 403 թվերի միջև ընկած ընթացքում, այդ ժամանակ էլ իր մոտ եկան Սահակն ու Սեսրովը՝ իրենց մտահոգությունները փոխանցելով հայոց բազավորին: Վերջինս, ընդառաջելով նրանց, հայոց նշանագրերը Ղանիելի մոտից բերելու համար Սիջագետը ուղարկեց Վահրիճ անունով մի անճնավորության: Ո՞վ էր Վահրիճը: Ըստ Մ. Օրմանյանի՝ նա Սահակի կամ Սեսրովի աշակերտներից չէր, որովհետև չկար այդ անունների շարքում, հետևարար՝ «քազատրական դիանի պաշտոնեայններէն զիխավոր մը, օտար լեզուաց ալ հմտու»³: Սինչ նա Սիջագետը կհասներ, Սահակն ու Սեսրովը հավաքեցին բոլոր եպիսկոպոսներին, որպեսզի «նոր գիրին և ազգային դպրութեան տարածման համար միջոցներ» կարգադրեն: Այդ ընթացքում Վահրիճը հսսավ Սիջագետը, գտավ Հարել քահանային և միասն դիմեցին Ղանիելին: Մ. Օրմանյանը գրում է, որ աղբյուրները չեն ասում, թե որ քաղաքում էր ապրում Ղանիել եպիսկոպոսը և դրա հետ ընդգծում, թե ինչպես այդ գործում ներգրավեցին Ղանիելին: «ով զիտէ՝ ինչ պայմաններով, որպէսզի իր մոտ գտնուող ծածկեալ զանձը երեւան համէ և իրենց հաղորդը ու սորվեցնէ այդ անկատար գիրերուն ձեւն ու ձայնը ու կիրառութիւնը»⁴: Վահրիճի Հայաստան վերադարձ Սահակն ու Սեսրովն ընդունեցին մեծ ցնծորյամբ: Ըստ Մ. Օրմանյանի՝ Ղանիելյան նշանագրերը Հայաստան են մոտք գործել 404 թ.: Նա ավելացնում է, որ զիխականներն

այդ թիվն են համարում հայոց գրերի գյուտի ժամանակը՝ շնայած դա «հայ այրութենին կատարեալ կազմութիւնը չեր»¹: Ի՞նչ էին այդ նշանագրերը. Մ. Օրմանյանը բվարկում է բազմաթիվ կարծիքներ՝ առաջին շարքում դնելով Մ. Խորենացու և Ղ. Փարպեցու մտքերը և հենվելով դրանց վրա, գրում է, թե «կային անգործածական թողնուած տատեր, գորս Աւարուական ալփարետի առաջնորդութեամբ կարգի կանոնի վերածեց»²: Այդ կարծիքների բվարկումը համարելով բանափրական պլաստումներ՝ պատմագիր Մ. Օրմանյանն արձանագրում է. «քանիելյան նշանագիրները հայ դպրութեան սկզբնավորութիւնը նովիրագործեցին»: Այդ կարծիքն այնքան էլ ճիշտ չէ: Դպրոցներում Ղանիելյան նշանագրերի ուսուցման ընթացքում պարզվում է դրանց պակասությունը և անհամապատասխանությունը հայերենի հնչյունական համակարգին: Ինչքա՞ն ժամանակ պահանջվեց այդ կարծիքին հանգելու համար: Հետազոտողները գտնում են, որ «ամս երկու» բառերը նշանակում են ոչ թե երկու տարի, այլ գրիչները սխալ են բույլ տվել մի վանկ՝ իս-դ բաց բողել, որի դեպքում կիմներ «ամսս երկու», ոչ թե երկու տարի: Սեզ թվում է, կարելի է համաձայնել այդ ենթադրությանը, որովհետև երկու տարին մեծ ժամանակ էր այդ իրողությունը հասկանալու համար: Վոամշապուին ու Սահակն այդ մասին իմանալուց հետո որոշում են, որ «նորագիտ նշանագիրները կատարելագործելու և ըստ ամենայնի հայերեն բառերու հնչյուններուն համարեցնելու համար»³ Սեսրովն ինքը մեկնի Սիջագետը, հանդիպումներ ունենա Ղանիել Ասորացու, Պատոսն Եղեսացու և Եպիփան Սամուատցու ժամանակի նշանավոր գիտնականների հետ և նրանց օգնությամբ «վերջնական և կատարելագործեալ նշանագիրներ պատրաստե»⁴: Սեսրովն իր հետ է վերցնում իր լավագույն աշակերտներին. իշխանական և շորս անուն՝ Հովհան Եկեղեցացի, Հովսեփ Պաղնացի, Տիրայր Խորձենացի և Մուշե Տարոնեցի: Սիջագետը Ղանիելի և Պատոսնի խորհուրդները Մաշտոցին չեն օգնում «գույս մը շեն ստանար»: Բարիլասի օգնությամբ Սեսրովը գալիս է Սամոսատ, որտեղ

¹ Ղազար Փարպեցի, նշվ. աշխ., էջ 14:

² Օրմանյան Մ., Ազգապատում, հ. Ա., էջ 307:

³ Նոյն տեղում, էջ 309:

⁴ Նոյն տեղում, էջ 310:

¹ Նոյն տեղում:

² Նոյն տեղում:

³ Նոյն տեղում, էջ 311:

⁴ Նոյն տեղում:

իմանում է, որ Եպիփանը վախճանվել է: Որևէ արդյունք չի տալիս նաև Հոռիանոսի հետ խորիրդակցելը: Այստեղ Ս. Օրմանյանը մեջբերում է կատարում Ս. Խորենացու և Կորյունից, որ Սեսրովն ապավինեց աղոթքին և ոչ քուն, ոչ արքուն տեսնում է, թե ինչպես «քաք ձեռին աջոյ, զրելով ի վերայ վիմի Ա, Ե, Է, Ը, Ի, Ո, Ու»¹, յոր ծայնավորներ, որոնք դաշնիելյան նշանագրերի հետ լրացրին հայերենի այրութենք: Ս. Օրմանյանն այս հարցը քննելիս գրում է, որ Դ. Փարավեցին զանց է առնում և Սեսրովի շրջագայությունը, և աստվածային տեսիլքը, մինչդեռ Կորյունը, որ Դ. Փարավեցու աղբյուրն է, շեշտում է և շրջագայությունները, և «Աստուծոյ սրանչելի սուրբ աջը»: Հետաքրքիր է Ս. Օրմանյանի կարծիքն այս հարցում. աստվածային տեսիլքին նա տալիս է միանգամայն բանական պատասխան. մեր սուրբ հայերեր առանց աղոթքի ոչ մի գործի ձեռնամուխ չէին իմուն և ամեն հաջողորդյուն վերագրում էին աստվածային աջին: Այսինքն՝ նա գտնում է, որ կատարվածի անմիջական հեղինակը Սեսրովն է: Սակայն այստեղ էլ Ս. Օրմանյանի առաջ կանգնում էն հարցականները. ի՞նչն էր Սեսրովի զյուտը. արդյո՞ք միայն ծայնավորները: Այս նա սկսում է բացատրել, որ Դանիելյան նշանագրերը ասորական կամ սեմական հիմք ունեին: Սահակն ու Սեսրովը՝ հունական դպրության հմուտ անձինք, հետամտում էին ստեղծել հունակատին այրութենի նման ծայնավորներով գրեթե, ուրեմն Ս. Օրմանյանը հաստատում է, որ Մաշտոցի զյուտը եղել են 7 ծայնավորները: Հոռիփանոսի օգնությամբ տառերին գեղագրական ձև տալուց հետ Սեսրովը վերադառնում է Հայաստան: Դ. Փարավեցու հետևողությամբ Ս. Օրմանյանը գրեթի կատարելության հասցեները վերագրում է Սահակին: Ըստ նրա՝ Սեսրովը շրջագայության ժամանակվա բոլոր հաջողորդյունները՝ «ամենքն ալ ժողուեց թերաւ եւ Սահակի գերազոյն դատաստանին ենթարկեց. եւ Սահակի ցուցուցած ուղղություններով եւ տուած կատարելագործություններովն է, որ հայերեն այրութենք իր վերջնական թիւն ու կարգը, ձեւն ու հեգենան ստացափ»²: Դրան համաձայնել չենք կարող: Այդ հարցում պետք է հետևել Կորյունին և ոչ թե Դ. Փարավեցուն, մանավանդ որ իր գործի հաջողորդյունը Սեսրովը հավաստեց դեռ Միջագետքում, երբ ձեռնամուխը

¹ Նոյն տեղում, էջ 312:

² Օրմանյան Ս., Ազգապատում, հ. Ա, էջ 314:

եղավ Աստվածաշնչի բարգմանությանը: Այն հանգամանքը, որ Սեսրովի զյուտը լրիվ համապատասխանում էր հայերենի հնչյուններին՝ ամեն տառին մի հնչյուն, հավաստում է Ս. Օրմանյանը. «հայերենի հնչյունները շատ ավելի ձայներ ունեին, որոնք յունարէնի մեջ չին գտնուեր, մանաւանդ բաղաձայներու շարքին»: Որ Սահակը շատ է օգնել Սեսրովին, դրա մեջ տարակույս չկա, բայց որ զյուտը լրիվ Սեսրովինն է, այդ հարցում ևս այժմ ոչ մի կասկած լինել չի կարող:

Դրանից հետո Ս. Օրմանյանն անցնում է ազգային դպրոցներ բացելու և հայոց գրերը հայ մանուկներին ուսուցանելու պատմությանը: Սեսրովը հավաքում է 40 աշակերտներ, «ուրք առհասարակ մարգմանիչ անունով ճանչցուած էին և եկեղեցական բարգմանուրեանց պաշտօն կը փարէին»¹: Այն ժամանակ գրեթի զյուտի առաջնին և զիսավոր նպատակը համարվում էր Սուրբ գրքի հայերեն բարգմանությունը: Այդ իսկ պատճառով դեռ Միջագետքում Մաշտոցը ձեռնամուխ եղավ դրա բարգմանությանը՝ իր աշակերտներ Հովհանն Եկեղեցացու և Հովսեփ Պաղճացու օգնությամբ: Ս. Օրմանյանը հավելում է, որ միջագետքյան բարգմանությունն այնքան էլ կատարյալ չէ, որպիսիւ բարգմանված էր ասորական Սուրբ Գրքից, իսկ Հայաստանում Սահակը սկսեց բարգմանել հունական տարբերակից: Երկուսի միասնական ջանքերով ստացվեց Սուրբ Գրքի կատարյալ բարգմանությունը, որը Ս. Օրմանյանն այս անգամ ևս վերագրում է Սահակին: Հոգևորական Ս. Օրմանյանը մանրամասն թվարկում է, թե ինչ ծիսական գրքեր բարգմանվեցին Սեսրովի և Սահակի կողմից. պատարագանատույցը, ձեռնադպրությանց կանոնները, աշխարհաբաղը, սերմնօրինները, ապս՝ մկրտության, նշանի ու պասկի, բաղրմանների ծեսերի կանոնները: Քանի որ այդ կանոնները պարունակող ծիսարանը կոչվում էր Մաշտոց, Ս. Օրմանյանը եզրակացնում է, որ դրա բարգմանիշը եղել է Սեսրով Մաշտոցը, հաղորդելով, որ որոշ ուսումնասիրողներ այդ գործը վերագրել են Մաշտոց Եղիվարդեցի կաթողիկոսին: Ս. Օրմանյանը բարձր է գնահատում Սահակի և Սեսրովի մտքի բոլիչը՝ «մտաց լնդարձակութիւնը և գործին մեծութիւնը», որ նրանց օրոր և եռանդուն մասնակցությամբ հայերեն բարգմանվեցին

¹ Նոյն տեղում, էջ 316:

Բարսեղ Կեսարացին ու Հովհան Ոսկեբերանը, Եփրեմ Ասորին և Գրիգոր Սքանչելազնործը, Գրիգոր Աստվածաբանն ու Գրիգոր Նյուսացին և «առաջին դարերու ընտիր գրողներ»¹: Ի պատիվ հոգևորական Մ. Օրմանյանի՝ ասենք, որ նա առավել բարձր է գնահատում փիլիսոփայական և պատմագիտական բարձրաթեր աշխատությունների բարգմանությունը, որի շնորհիվ Արխտուուելը, Պլատոնը, Փիլոնն ու Թորփյուրը, ինչպես նաև Եվսեբիոս Կեսարացու պատմությունն ու քրոնիկոնը մատչելի դարձան հայությանը:

«Ազգապատումի» բեյրության իրատարակության ծանոթագրությունների հեղինակը մեծ գործ է կատարել՝ պարզաբանելով Մ. Օրմանյանի մոտեցումները գրերի գյուտին վերաբերող տարբեր հարցերին. Մաշտոցի ծննդավայրը, նրա ազնվական ծագումը, ով էր Գողթնի իշխան Շարարը, ո՞վ Եղեսիո Բարիլաս եպիսկոպոսը, ինչպիսի՞ն է Հռովհանոսի դերը հայ գրերի հորինման մեջ և բազմարիվ այլ հարցեր: Դրանք ոչ թե սուկ ծանոթագրություններ են, այլ ինքնատիպ գիտական աշխատանք: Յավոր, չի նշված ծանոթագրության հեղինակի ինքնուրյունը: Վերև ասվածն ավարտենք գրերի գյուտի կարելության շուրջ Մ. Օրմանյանի խորիրածությունների գնահատությամբ: Նա ընդգծում է, որ գրերի գյուտն անգնահատելի ծառայություն մատուցեց մեր ազգին և Եկեղեցուն՝ նրա հարատեսության գործում: Եթե չիներ հայոց գիրը, մեր Եկեղեցին չը պահպանի իր ինքնուրյունը և կծովվեր քիսուոնյա այլ Եկեղեցիներին: Սակայն ամենակարևորը հայապահպանության հարցն էր: Իր «քաղաքական կացորեան գորութիւնը», այսինքն՝ պետականությունը կորցրած հայն առանց այդ գրի կանհետանար պատմության բատերեմից, ինչպես մարերն ու պարելները, ասորեստանցիներն ու բարելացիները: «Գիրն ու գիրը Եկեղեցիով, Եկեղեցին ալ գիրով ու գիրով, իրարու անբաժան փարրուած, դարերու փորձանքներուն, հայուն անլուր տագնապներուն, հայութեան անընքերելու վտանգներուն դիմ անվկանդ ուժ մը կազմեցին», - գրում է Մ. Օրմանյանը, - «Եթէ տակախն հայ կայ և հայութին կայ, եթե մտատրական կենաց յաջողակ և քաղաքական կենաց ընդունակ սերունդ մը, ազգ մը՝ ընդհանուր աշխարիի զար-

մանքը կը զրավէ, զայն պէտք է իրաւամբ Սահակի և Մեսրոպի անմահական գործին արդինքը ճանշնալ և խոստովանիլ»¹: Մենք էլ Մ. Օրմանյանի և մյուս բոլոր սերունդների նման խոնարիվում ենք նրանց խնկելի հիշատակի առջև, մի վտօրիկ վերապահությամբ՝ առաջինը շեշտելով Մեսրոպի անունը: Չիներ Մեսրոպը, ինչքան էլ օժանդակեր Սահակը, չեր լինի այս գյուտը: Համաձայն ենք Մ. Օրմանյանի հետ, որ այս գործը հայոց եկեղեցու բազն ու պատկն է: Մենք էլ կիավելենք՝ ողջ հայ ժողովրդի:

Լրաբեր հասարակական գիտությունների, 2005, № 2, էջ 109–117:

1918 թ. ՍԱՅԻՍՅԱՆ ՀԵՐՈՍԱՍՏԵՐԻ ԱՐՏԱՑՈՒԼՈՒՄԸ ԽՈՐՀՐԴԱՀԱՅ ԳԵՂԱՐՎԵՍԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԶ

1918 թ. հայ ժողովրդի մղած Մայիսյան գրյամարտ - հերոսամարտը կարևոր տեղ ունի մեր ժողովրդի պատմության մեջ: Առանց շափազանցության, այն համարվում է 20-րդ դարի հայոց Ավարայրը, երբ մեր ժողովուրդը հավաստեց ապրելու և հարատելու անկուտրում կամքը և մեծ գոհերի ու տարած հաղթամակների շնորհիվ նվաճեց իր լինելիության իրավունքը: Մենք գիտակցարար խուսափում ենք օգտագործել առանձին ճակատանարտերի՝ Սարդարապատի, Ղարաբիլիսայի և Բաշ-Ապարամի անունները, միավորելով դրանք մեկ միասնական՝ մայիսյան հերոսամարտ-գոյամարտ անվամբ, քանի որ, խկազես, դրանք ընդհանուր, միասնական ճակատի տարբեր մասեր էին: Տեղագրական իմաստով Բաշ-Ապարամն այդ միասնական, ընդհանուր ուղղմանակատի կենտրոնն էր, Սարդարապատը՝ ձախ, Ղարաբիլիսան՝ աջ քեերը: Ինքնարերար, ժողովրդի մշտարքուն բնազդով կազմված այդ ուղղմանակատը ժամանակի հրամայականով ստեղծեց իր կազմակերպիչ դեկանակարներին՝ նախկին ցարական բանակի հայազգի բարձրաստիճան

¹ Նոյն տեղում:

¹ Նոյն տեղում:

սպաների մի արժանավոր կուրքտայի: Այդ աստղաբույր մշակեց ուզմական գործուրյունների միահանական ծրագիր՝ դիմագրավելու երեք տարրեր ուղղությամբ Հայաստան արշավող թուրքական զորքերին: Պատմական Հայաստանի տարածքից հեռացած 200.000-անոց ուսական ընտիր զորքին փոխարինեց մոտ 100.000 հայ, վրացի, ուստի զինվորներից ու սպաներից բաղկացած բանակը: Նրանցից մոտ 35 հազարը թուրքերի դեմ միջև վերջ մարտնչելու համար պատրաստ հայեր էին, որոնց ուժերով, Ստեփան Շահումյանի խոսքերով ասած, «Իրաշըներ կարելի էր գործել»: Նրանց հետ էր հայ զյուղացիության հսկայական զինված զանգվածը, որ «մենակ կարող էր հաշիվ տեսնել» թուրքերի հետ: Սակայն այդ ուժերն Անդրկովկասի կառավարողները չօգտագործեցին¹:

Հերոսամարտերի, պատմական իրադարձությունների ընթացքին անդրադառնալը դուրս է մեր խնդիրից: Հայ պատմաբաններն իրենց հետազոտություններում, մասնավանդ վերջին տարիներին, հանգամանութեն ու սպառչ լուսաբանել են հերոսամարտերը և տվել արժանի զնահատական²: Մեր խնդիրն է պարզաբանել, թե ինչպես է անդրադառն խորհրդահայ գրականությունը հայ ժողովրդի համար այդքան ճակատագրական նշանակություն ունեցող Մայիսյան հերոսամարտերին: Մինչև 1965 թ. մեր ժողովրդի ազգային զարքոնքը, պատմական այդ ժամանակաշրջանը, առավելապես Հայաստանի Առաջին Հանրապետության հետ առնչվող նյութերը, մեր գրողների համար արգելված թենաներ էին, քանի որ պաշտոնական զաղափարախոսությունն ուսուցանում էր, թե «գաշնակցական կուսակցությունը՝ լծված իմակերիալիստական պետությունների կառքին», հայ ժողովրդի քշնամին է: Նույն պիտակով էլ դեռևս 1920-ական թթ. բանտերում և ճամրաբներում արգելափակվել էին հայրենասեր ուզմական գործիչներից 1400-ից անցնող բարձրաստիճան սպաներ, այն անձնավորությունները, որոնք խոշոր ներդրում ունեին Մայիսյան հերոսամարտերի հաղթանակում:

Խրոշչովյան «ձնիալի» տարիները բնեկումնային շրջան նաև հայ գրականության համար: Ինչպես ամբողջ խորհրդային գրականության մեջ, այնպես էլ մեզնում պահանջ զգացվեց վերանայել պատմական անցյալի արժեքները, վերագնահատել դրանք: Առաջին քայլերը խիստ վախվորած և անհամարձակ էին, սակայն ամենակարևոր՝ արվում էին: Առաջին աշխարհամարտի տարիներին երիտրուրքերի սանձազերծած հայկական կոտորածները, արևմտահայերի մղած ինքնապաշտպանական մարտերը, հայ ազատամարտիկների ֆիլայինների սխրանքները դասնում են գեղարվեստական գրականության առավել հուզող թեմաները: Վաճի «այրվող այգեստանների» իրացոլքը հասնում է Երևան, հայ ֆիլայինների արձակած զննակների որոտն արձագանքում է մեր հոգիներում: Սփյուռքից անհամեմատ ուշ, մեզանում էլ ստեղծվում է կարտի գրականությունը:

Այդ իրադարձություններին գուզընթաց, ուշադրություն են գրավում 1918 թ. թուրքական արշավանքները: Հայ ժողովրդի արևմտյան հատվածը բնաջնջելուց և Արևմտյան Հայաստանը հայարափ անելուց հետո, թուրքերը ծրագրում են ոչնչացնել նաև արևելահայությանը: Այդ ժամանակաշրջանը բնականարար, գրավում է մեր գրողների ուշադրությունը, և ստեղծվում են բախտորոշ իրադարձություններին նվիրված ստեղծագործություններ:

Հայ գրողներից առաջինն այդ թեմային անդրադառնալ արձակագիր Հարություն Սկրոչյանը «Ամիսյոտ զինվորի հիշատակարանը» երկհատոր վեպով (առաջին հատորը՝ 1966-ին, երկրորդը՝ 1973-ին): Վեպի նյութը ընդգրկում է հայ ժողովրդի համար ճակատագրական մի ժամանակաշրջան՝ 1915 թ. ցեղասպանությունից սկսած մինչև Հայաստանի Առաջին Հանրապետության գոյաւումնան երկուսուկես տարիները, մասնավորապես այն իրադարձությունները, երբ 1917 թ. Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո, ուստական զորքերը հեռացած իրենց ազատագրած Արևմտյան Հայաստանի տարածքներից ու Անդրկովկասից, և «գուրքական հորդաները ներխուժեցին Հայաստան ու Անդրկովկաս, որը մենշելիկները, դաշնակցությունն ու մուսաֆարխատներն անդրկովկասյան ժո-

¹ Հ. Ավետիսյան, Հայկական հարցը 1918 թ., Եր., 1997, էջ 213:

² Մայիսյան հերոսամարտերն ըստ արժանվույն լուսաբանված են ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Հ. Ավետիսյանի «Հայկական հարցը 1918 թ.» աշխատության մեջ:

դոփորդներին հասցրել էին կործանման եզրին»¹: Վեպի ստեղծման ժամանակը հնարավորություն չի տվել հեղինակին հանգել ճիշտ եզրակացությունների՝ փախանակ պարզաբանելու, թե արևմտահայ հատվածի համար ինչ ճակատագրական նշանակություն ունեցավ Հոկտեմբերյան հեղափոխությունը, հեղինակը դատապարտում է դաշնակցության «ազգակործան գործունեությունը»:

Ժողրական սպանդից հրաշքով փրկված արևմտահայ պատահին հայտնվում է Արարատյան դաշտի գյուղերից մեկում, սկսում ապրել իր հարազատների մոտ: Նրա վերիշշումների պաստառի վրա, ընթերցողին պատկերանում են հայոց եղեռնի ցնցող տեսարանները՝ դաջված պատանու հոգու խառնարանում: Իրադարձությունները զարգանում են սյուժետային գուգրնբացությամբ: Հասունացած երիտասարդը գորակոչվում է սկզբում՝ ոռուական, ապա՝ հայկական քանակ, քաջարար կովում քորրական գորքերի դեմ՝ հայերի համար խիստ կարևոր համարյա բոլոր ռազմաճակատներում: Գործողությունների ընթացքը տրամաբանութեն հանգեցնում է իրական-պատմական կերպարների գործունեության անդրադարձմանը, և ընթերցողի աշքի առաջ հառնում են Երևանի ազգային խորհրդի նախագահ Արամ Մանուկյանը, հայկական գորքերի հրամանատար Թովմաս Նազարելյանը, Երևանի ռազմաճակատի հրամանատար Սովուս Սիլիկյանը, Բաշ-Ապարանի հայկական գորքերի հրամանատար Դանիել-քեկ Փիրումովը, նրա տոհմակիցներ Պողոս և Հովսեփ Փիրումովները, Արշավիր Մելիքյանը, Ղուկաս Ղուկասյանը և շատ ուրիշներ: Խնդրից դուրս է զնահատել վեպի գեղարվեստական արժանիքները: Նպատակ է քացահայտել, թե այդ ժամանակ գրված երկիասոր վեպը որքանով է համապատասխանում պատմական ճշմարտությանը, կամ գրքին նայել պատմաբանի քննախույզ հայացքով: Բավական է հիշել հատորների հրատարակման տարիները՝ 1966-ին և 1973 թթ., ու մտորել՝ ինչ անցարուղ պետք է օգտագործեր հեղինակը՝ ստանալու դրանց հրատարակման բույլտվությունը: Ամենազիստը անցարուղը այն ժամանակվա հայ իրականության ամենահեղի-

նակալոր ուժի՝ ՀՅԴ-ի գործելակերպի անխնա քննադատությունն է, ավելի ճիշտ՝ հայույանը, ծաղրի, քոյնի ու նախատինը հեղեղը, որ քափում է այդ կոտակցության ներկայացուցիչների վրա, որոնք իբր «ծախուցին Հայաստանը բուրքերին»², միացան վրաց մենշևիկներին, աղքածանական մուսավարականներին և ոտնահարեցին սեփական ժողովոյի շահերը, իրենց իշխանությունը պահպանելու մոլուցով տարված՝ անհրամեշտ քայլեր չձեռնակեցին բոլշևիկյան Ռուսաստանի հետ հարաբերություններ հաստատելու համար և ամենասարավելին՝ գործարքի դիմեցին արևմտահայերի ցեղասպանությունն իրականացրած բուրքերի հետ: Վեպի առաջին հասորում պատմվում է Սարդարապատի հերոսամարտի մասին, «Որտեղ հայկական երկրորդ դիվիզիան և ժողովրդական կամավորները ջախջախեցին Երևանի վրա արշավող քորրական կորպուսը և վերահս կոտորածից փրկեցին հայ ժողովրդին»²: Բայց, թե ովքե՞ր էին կազմակերպել այդ ճակատամարտի ռազմական գործողությունները, ի՞նչ հնարանտություն, մարտավարական և ռազմավարական ինչ հնարքներ էին գործադրվել այդուն, որ իսկական ժողովրդական պատերազմը տվեց ցանկալի արյունքներ: Այդ բոլորի մասին հեղինակը գերազանց է լուել: Նրա հերոսներն են դասնում մի քանի անձնավորություն, որոնք ունեցել են բոլշևիկանու դիրքորոշում: Նրանք ճակատամարտի ավելի համեստ մասնակիցներ են, պրոտչիկներ, զնիապետ Անդրեյ Շահնազարյանը, որը «գաղտնի բոլշևիկ է»: Հերոսներից քացարություն է «Պապաշան»: Հեղինակն անուղակի հասկացնում է, թե նա Դանիել-քեկ Փիրումյանն է և այդ անվանն արժանացել է զինվորների նկատմամբ իսկապես հայրական պահվածքի համար: Դասնությամբ է ընթերցվում վեպի այն հատվածը, որը հեղինակը նկարագրում է Հայոց առաջին խորհրդարանի նիստերից մեկը և սրտի ցավով հաղորդակցում հեղինակի հոգու և զիտակցության պրիզմայով պատկերված այդ իրադարձություններին: Նիստի մասնակից, Հայկական կորպուսի հրամանատար Թովմաս Նազարելյանին ամենից շատ է հասնում այդ նախատիներից՝ դափնան, վախկոտ, հայրենավագը անցարուղը այն ժամանակվա հայ իրականության ամենահեղի-

¹ Հ. Սկրտչյան, Անհայտ գինուրի հիշատակարանը, հ. 1, Եր., 1966 (գրքի անուտացիան):

² Անդ, հ. 2, Եր., 1973, էջ 407:

² Անդ, հ. 1 (հեղինակի անուտացիան):

ճառ¹: Իսկ «հին տեսորիստ և իր խմբապետների ու հարրած զինվորների օգնությամբ»² Երևանի քնակշուրյան ահ ու դոլի մեջ պահող Դրոն ընթերցողին ներկայանում է խորհրդային դրոշմով: Նույն «պատվին» են արժանանում նաև ժողովրդի հիշողության ծալքերում գորգուրանրով պահիված հայ կամավորների՝ ֆիդայինների սխրանքները: Այդուհանդերձ, հիմա ճիշտ չեր լինի խստագույնս մեղադրել պատմական փաստերը ծուռ հայելու մեջ ներկայացրած հեղինակին: Թեկուզ այն փաստը, որ այդ տարիներին հեղինակը վեպի թեմա է դարձել, նախ՝ Սարդարապատի, ապա՝ Ղարաբիլսայի գոյամարտերը, դրական երևոյք է: Ժամանակի ընթերցողին հեղինակը հուշում էր խորհելու ոչ հեռավոր անցյալի այն դեպքերի մասին, որոնք ապահովեցին մեր ժողովրդի գոյությանը: Հեղինակի խակական հերոսն ամբողջ հայ ժողովուրդն է, որ բոնունցը դարձավ, խոյացավ իր դարավոր քշնամու դեմ, հաղթեց նրան, ստիպեց դիմել զիջումների, նվաճեց ապրելու իր իրավունքը: Այդ գոյամարտերն էին, որ պարտադրեցին քորքերին չափավորնելու իրենց անհագ ախորժակը և խոստովանել. «Հայերն ապացուցեցին, որ կարող են լինել աշխարհի լավագույն կովողները»: Վարչակարգերը կարող են փոխվել, հաջորդել միմյանց, բայց Հայրենիքը միակն է և անփոխարինելի: Եվ այդ Հայրենիքի նկատմամբ սիրո ու նվիրվածության դասեր է տալիս հեղինակը:

Ժամանակագրական առումով երկրորդ ստեղծագործությունը Միքայել Ամիրեկյանի «Վերջին հողակտորի վրա» երկիատորյա վեպ-ժամանակագրությունն է: Բայց որոշ նկատառումներով կցանկանայի նախ խոսել պատմաբան-զրոյ Բագրատ Ռուբարյանի «Սարդարապատ» վեպի մասին, որը գրվել է հերոսամարտի 70-ամյակի կապակցությամբ և լույս է տեսել 1989 թ.-ին: Ինչպես վկայում է վեպի խորագիրը, այն նվիրված է միայն Սարդարապատում ծավալվող իրավարձություններին, ավելի կոնկրետ՝ միայն դարաբաղյան գնդի սխրանքներին, իրենց մահապատճեր անվանած իրական և գեղարվեստական բազմաթիվ հերոսներին: Ստեղծագործության լույս ընծայման ժամանակաշրջանը հնարավորություն է ընձեռում պատմաբան-զրոյին հավաստիորեն նկա-

րագրելու իրադարձությունները և տալու ճշմարիտ գնահատական: Սակայն ենդիմական ոմի իր ուրույն վիլխտիայությունը: Իր լեռնաշխարհին սիրահարված գրողը դրական կերպարներ գտնում է միայն բուն հայրենակիցների մեջ: Հիմքից զորկ չէ նրա վերաբերմունքը հերոսամարտի դեկավարներից մեկի՝ Դանիել-քեկ Փիրումյանի նկատմամբ, որը Երևանյան ճակատի հրամանատար Մովսես Սիլիկյանի տեղակալը էր և հերոսամարտի ռազմական իրադարձությունների անմիջական կազմակերպչին ու դեկավարը: Նրա հետ կողք-կողքի գործում են այդ անվանի գերլաստանի մյուս անդամները՝ Պողոս-քեկ և Հովսեփ-քեկ Փիրումյանները, Դանիել-քեկի երկու որդին, որոնք կիսատ են բոլել ուսումը և կամավոր գրվել, ցանկանալով անպայման մասնակցել մեր ժողովրդի համար բախտորոշ այդ իրադարձություններին: Իսկապէս անհրաժեշտություն էր այդ անվանի զերդաստանի բոլոր անդամների սխրանքների լուսաբումը, բայց դա չանել այլ գործիչների, մյուս հայրենատերների ծառայությունները նսեմացնելու հաշվին: Առավել անարդար է, եթե արկում է ճակատամարտի անմիջական հրամանատար Մովսես Սիլիկյանի նկատմամբ, մի զորահրամանատար, որի մասին տարիներ հետո մեծ հարգանքով և ակնածանքով է գրել ռազմական գործի հմուտ գիտակ, Խորհրդային Միուրյան նարշալ Հովհաննես Բաղրամյանը՝ այդ հերոսամարտերի անմիջական մասնակիցը: Տարիներ անց գրված իր հիշություններում, նա հանգում է այն եղրակացության, որ ուսական բանակի հայազգի բարձրաստիճան զինվորականների մեջ անենատադանդապիրը Մովսես Սիլիկյանն էր: Կանխակալ վերաբերմունքի մի փաստ ևս. Բ. Ուլուրաբյանը քննադատելով և պախարակելով նահաջելու՝ Թովման Նազարելյանի հրամանները, հստոկ անդրապանում է հայկական կորպուսի հրամանատարի մի այլ հրամանի, որով նա կոչ է անում ժողովրդին՝ օրինակ ունենալ Երևանյան գորամասի հաջողությունները, կենաց ու մահու կրիվ մղել քշնամու դեմ, կրվողների համար հավաքել մրերը ու հագուստ, իսկ զենք վերցնելու ընդունակ տղամարդկանց՝ անհապաղ մեկնել ռազմաճակատ: Զգիտես ինչու, հեղինակը կարծես ուրախությամբ հավատում է անհաջի հրամաններին, իսկ վերոնշյալի մասին թերահավատություն է արտահայտում՝ հեղճանքի խոսքեր դնելով Դանիել-քեկ Փիրումյանի շորքերին: «Կորպուսի տնօրենները դնելով Դանիել-քեկ Փիրումյանի շորքերին:

¹ Անդ, հ. 2, էջ 138:

² Անդ, հ. 2, էջ 411:

ըր ապագայի համար են փաստարութք պատրաստել: Գալիք սերունդները կվարդան և կիպարտանան՝ ինչ զորավարներ են ունեցել»¹: Ընթցողի մտքում ակամայից հարց է առաջանում. ինչո՞ւ վատին հավատալ, լավին՝ ոչ: Կամ այդ ո՞ր զորավարն է, որ իրաման է արձակում, մտածելով ապագայի մասին: Ըստ իս, կա մի այլ կանխակալ վերաբերմունք ևս. որպեսզի ընդգծի Սարդարապատի ճակատամարտի կարևորությունն ու գերակայնությունը՝ Ղարաբիլիսայի նկատմամբ, ինդինակն իր հերոսների միջցողվ հավատ չի ընծայում թուրքական զորքերի Կովկասյան ուղմանակատի հրամանատար Վեհիր փաշայի տփած քարձու գնահատականին. «Սարդարապատի համար քերանը ջուր առած՝ Ղարաբիլիսայի նահատակությունն է գովում»²: Նախ, ինչո՞ւ է հերոսամարտն անվանել նահատակություն: Չէ՞ որ այդ բառի մեջ կա որոշակի քամահրանքի երան: Եվ ինու, ի՞նչ շահ ուներ թուրք զորահրամանատարը գովերգել Ղարաբիլիսայի մարտիկներին: Իսկ եթե այդ խոսքերն արտասանվելին Սարդարապատի հերոսամարտի մասի՞ն: Այդ դեպքում ինդինակն ըստ երևոյթին կիավատար Վեհիր փաշային: Այժմ, եթե այդ հերոսամարտերի մասին ստեղծվել են բազմաթիվ ուշագրավ գիտական ուսումնասիրություններ, առանց կասկածի կարելի է հավատել, որ Ղարաբիլիսայի գոյամարտ-հերոսամարտն իր նշանակությամբ չէր զիջում Սարդարապատին: Թող շտացվի, որ մենք էլ կանխակալ կարծիք ունենք շատ հարգելի ինդինակի նկատմամբ: Փիրումյանների անվանի շառավիղներից հետո, ընթերցողը մեծ հափշտակությամբ է ընթերցում 20-րդ դարի Ղևոնի երեցի՝ Գարեգին Հովսեփյանի ծավալած գործունեության, նրա վարակիչ հայրենասիրության, մարտիկների հոգին թափանցող նրա անկեղծ գրույցների ու անձնական օրինակով սիրանքի կոչելու մասին: Նրա, նաև Գևորգ Սուրենյանցի հաստատակամությունն արտահայտող դրվագներն ընթերցվում են մեծ հետաքրքրությամբ: Հավելներ նաև, որ այդ կերպարների ստեղծմամբ էլ իր նորույցն է քերում ինդինակը խորհրդահայ գրականության մեջ: Իսկ, ընհանրապես, վեպը հայրենասիրության մի ներքող է, գալիք սերունդներին և իր ժամանակակիցներին ուղղված հոգեցուց կոչ: Չենք կարող հաշվի շառնել, որ գրի ստեղծումը հա-

մընկնում է Ղարաբաղյան շարժման նախապատրաստման շրջանին, որի անմիջական մասնակիցներից էր պատմաբանը, գրողը, քաղաքացին:

Ինչպես նախապես նշվեց, այդ իրադարձություններին առավել հանգամանալից անդրադարձել է լրագրող, գրող Միքայել Ամիրբեկյանն իր «Վերջին հողակտորի վրա» երկիհատոր վեպով, որի առաջին հատորը լույս տեսավ 1973 թ., իսկ երկրորդը՝ 1979 թ.:

Պատմաբանի բարեխսդությամբ, գրողի հոտառությամբ և վարպետությամբ, ինդինակը մեծ աշխատանք է կատարել Հայաստանի արխիվներում, գրուցել Ղարաբիլիսայի գոյամարտ-հերոսամարտի բազմաթիվ մասնակիցների հետ, նամակագրական կապ հաստատել հայ ականավոր զորավար մարշալ Հ. Բաղրամյանի հետ և ստեղծել պատմական վեպի ու ժամանակագրության յուրահատուկ համաձայնվածք, մի արժեքավոր ստեղծագործություն, որն անկասկած, կարևոր ներդրում է հայ գրականության մեջ: Ընթերցողին գրավում է ինդինակի պատմախանակության մեծ զգացումը, պատմական դեպքերը և դեմքերն արթերավորելու և գնահատելու նրա հավասարակշռված մոտեցումը: Ըոլորովին սուրբ շտարպ իր ապրած ժամանակաշրջանի չափանիշներին, Մ. Ամիրբեկյանը խոսափում է մեղադրականներից, անպատշաճ խոսքերից, անհարկի բննադատությունից: Նա քննարկում է այդ իրադարձությունների պատճառներն ու հետևանքները՝ շանօնանալով սերունդների հոգում անհարկի պատկերացում ստեղծել այդ ժամանակաշրջանի գործիչների մասին: Նախորդ երկու վեպերում հանդիրավ ծաղրի արժանացած թովման Նազարբեկյանի և ոռոսկան բանակի բարձրաստիճան հայ սպաների մասին նա գրում է մեծ պատկառանքով ու հարգանքով: Նշում է, որ ոռոսկան բանակի շարքերում նրանցից քերն էին տիրապեսում հայերենին, սակայն ճակատագրական պահին արյան կանչող և մեծ պատմախանակությամբ ստանձնեցին հայկական բանակի տարրեր գորամաների դեկավարությունը, իրենց ամբողջ ուժը և զորավարական հմտությունը ներդեցին հայրենի երկրի փրկության սուրբ գործին, և այդ ընթացքում կատարվեց անխոսափելին՝ նրանք հայացած ամրողապես:

¹ Բ. ՈՒրուբարյան, Սարդարապատ, Երևան, 1989, էջ 406:

² Անդ, էջ 533:

Վեպը Ղարաբիլսայի գոյամարտի հերոսների պատվին կանգնեցված փառահեղ մի հուշարձան է: Հիմնականում նվիրված Ղարաբիլսային, այդ վեպն ըստ արժանավոյն զնահատում է նաև Սարդարապատի և Բաշ-Ապարանի իրադարձությունները՝ դրանք համարելով նույն շղայի տարբեր օրակներ: Գնահատելի է հեղինակի ամենաշայտ պատճառայեցողությունն ու կենսափիլտուիայությունը: Նա Ղարաբիլսայի հերոսամարտը գովերգելու և զնահատելու նպատակով չի նսենացնում Սարդարապատի և Բաշ-Ապարանի իրադարձությունները, այլ բացահայտում է դրանց կապը, թե ինչպես մեկի պարտությունը վատ կանդադանար մյուսին: Հեղինակը մտորում է. «Մի՞քև Ղարաբիլսայում կրվող զորքերը չին ուղարկվի Սարդարապատում և Բաշ-Ապարանում կրվող բուրքական զորքերին օգնելու, եթե Ղարաբիլսայում նրանց չղիմադրեին, չոչնացնեին: Եփ, ընդհակառակը, ի՞նչ կիներ Ղարաբիլսայի վիճակը, եթե նույն պահին տեղի չունենային Սարդարապատի և Բաշ-Ապարանի մարտերը»¹: Եզրակացությունը մեկն է՝ այդ երեք ճակատամատերը սերտորեն փոխպայմանավորված էին, միասնական էին՝ ազգափրկիչ նպատակով, համընդհանուր ոգով:

Վեպի գործողություններն ամփոփում են 1917–1920 թթ. հայ ժողովրդի համար այնքան բախտորշ և ճակատազրական երեք տարիները, երբ բոլշևիկներական հեղափոխությունից հետո քայլայփում է կովկասյան ռազմաճակատը, որը հնարավորություն է ընձեռում բուրք նվաճողներին՝ դիմել վճռական գործողությունների, իրականացնել համարութական ծրագրի մի մասը, ավարտել նաև արևելահայության բնաջնջումը: Ամառանոցային փոքրիկ քաղաք Ղարաբիլսան և նրա երկարութային կայարանը դառնում են իրադարձությունների հանգուցակներ: Դա կատարվում է Ալեքսանդրապոլի անկումից հետո, երբ առավել ծանր կացություն է ստեղծվում արևմտահայ գաղրականության և տեղացիների համար: «Հայատանի վերջին փոքրիկ հողակտորը, որը շրջապատված էր քշնամական ուժերով, կորցրեց փախաւոտի միակ հոյսը, միակ երկարութային ճանապարհը և բոլորովին կտրվեց աշխարհից»²: Հոգիչ և պատկերավոր է ժո-

դովրովի տագնապի տեսարանը, երբ սարսափահար ամրոխը ինքնապաշտպանության կույր զգացումով լցվում է նորածիլ արտերը ու ծակած այգիները : Մինչդեռ բուրքական զորքերը երեք տարբեր ուղղություններով շարունակում էին արշավել Հայաստանի վրա. առաջինը Բորչազու, երկրորդը՝ Արագածի լանջերով դեպի Երևան, երրորդը՝ Զաջոտի բարձունքից դեպի Ղարաբիլսա: Մ. Ամիրբեկյանը պատմաբանի թախնողությամբ նկարագրում է Երևանի, Ապարանի, Ղարաբիլսայի պաշտպանության ճակատների ձևավորումը: Երևանի պաշտպանության ճակատը ձևավորվեց Սարդարապատում, գեներալ Սիլիկյանի դեկավարությամբ, որն զգալի Ապարանի մարտավարական նշանակությունը Երևանի պաշտպանության գործում, Սարդարապատից հանեց մի գունդ, աշխարհազորայինների խմբեր, իրեւանային մարտկոց և ուղարկեց Ապարան: Այդպես ձևավորվեց հայ ժողովրդի ինքնապաշտպանության երկրորդ ճակատը: Երրորդը՝ Ղարաբիլսայի ճակատն էր, որ ձևավորվեց նրա մատուցներում, Համամլորի և Հաջիղարայի միջանկյալ տարածքում՝ զնյապետներ Սերոք Սամարցյանի, Շեյ Մամիկոնյանի, Նորդանյանի մասնակցությամբ, թովմաս Նազարբեկյանի ընդհանուր հրամանատարությամբ: Ռուսական բանակի այդ հմուտ զորամանատարը շատ ճակատամարտեր էր վարել, ճաշակել և պարտության դատնությունը, և հաղթանակի բերկրանքը, բայց այստեղ՝ Հայաստանի վերջին հողակտորի վրա, առաջին անգամ զգաց, որ հայկական բնակավայրերը ոչ թե քարտեզի վրա նշված «օրինատիբներ» են, այլ հարազատ ժողովրդի բնօքրանը, ժողովրդի, որի ճակատազրին իր ձեռքին է, իր զինվորների ձեռքին: Ցավագին ուժգնությամբ նա զգաց, որ իրեն այդ ժողովրդի հետ կապող պորտալարը հնարավոր չենքել: Հեղինակը մեծ հարգաճրով, ջերմությամբ և սրտառությունություն է կերտել ցարական բանակի հայազգի սպաների հայացման և հարազատ ժողովրդին մերկելու, նրան ձուլվելու ընթացքը: Դա վերաբերում է ոչ միայն Նազարբեկյանին, այլև գնդապետ Սերոք Սամարցյանին և մյուսներին: Ոչ թե հայուսանը, նախատիք և մեղադրանը, այլ խոր հարգանը, նրանց արածի զնահատում և շարածի՝ բացատրություն:

Պատմական այրերի շարքում արժանի տեղ ունի ալեքսանդրապոլի խիզախ հրամանատար զնդապետ Միքայել Մազմանյանը, որի միակ նպատակն ու ցանկությունը հարազատ ժողովրդին ծառայելն է: Նազար-

¹ «Հայաստանի հանրապետություն», 1997, 21 հունիսի («Վերջին հողակտորի վրա» վեպից զրաբնուրյան կրծատած հատվածից):

² Մ. Ամիրբեկյան, Վերջին հողակտորի վրա, հ. 1, Եր., 1973, էջ 213:

թեկյանն սկզբում նրա մասին մտածում էր, թե «անդուր են սեփական կարծիք ունեցող մարդիկ», բայց մարտի ընթացքում համոզվում է, թե ինչ անկեղծ հայրենասերի սիրու է՝ տրոփում նրա կրծքում, զարմանում ժողովրդի մարդու՝ նրա պարզ կենսփիլիտփայորյան վրա, ըստ արժանավորության նրան:

Չնայած գրաքննության խստորյանը, պատմական հերոսների շարքում իր տեղը գտավ նաև Գարեգին Նժդեհը, ճիշտ է՝ ոչ իր լրիվ, այլ՝ Գարեգին Նուրի մտացածին անվանք: Բայց այնքան բափանցիկ են նրան տրված որակումները, որ ժամանակի իրադարձություններին բիշ թե շատ ծանոթ ընթերցողն անմիջապես կլուահի նրա խկորյությունը:

Անդրամիկը կարող էր մասնակցել Ղարաբիխայի գոյանարտին, բայց չմասնակցեց: Ժամանակակիցները, նաև հետազոտությունները մեղադրեցին գորավարին դրա համար: Նրա պաշտպանությամբ հանդես եկավ Հովհաննես Թումանյանը՝ գրելով, որ նրան իրամայված էր պաշտպանել Լոռին, Թիֆլիսի ճանապարհը: Մ. Ամիրբեկյանը վեպում բուուիկ մի դիպվածով զնահատում է գորավարին: Շակատանարուի մի հատվածում հետախուզական հեծյալ ջոկատի իրամանատար Անդրամիկ Ազատյանի անունը լսելիս, բուրքերը կարծում են, թե իրենց վրա հարձակվող նա է՝ «Անդրամիկ փաշան», և սրտապատռ փախչում են: Անդրամիկի անունն անգամ սարսափեցնում էր բուրքերին: Ահա թե մեղադարների փոխարեն գրողական ինչ հնարք է օգտագործում հեղինակը:

Հիանալի է՝ Ղարաբիխայի ճակատամարտի գեղարվեստական նկարագրությունը, դրան մասնակցող իրական հերոսների, առանձնապես հմուտ իրետանափորներ կապիտան Վերիյանի և Սովորյանի անձնաւողի գործողությունները: Արտակարգ հուզիք է վերջինի մահվան նկարագրությունը: Ղարաբիխայի ճակատամարտի տարրեր հատվածների նկարագրությունները այսօրվա ընթերցողին տանում են ետ, 1918 բախտորոշ թիվը, հաղորդակից դարձնում Ղջաղ, Դարբաս զյուղերի մոտ մղված մարտերին, հայ աշխարհազորայինների անձնազոհությանը Մայմելսի բարձուներում և Ալբուբախտում, բուրքաբնակ Սարալ և Դորսալի զյուղերի մոտ մղած կոհիներին: Ղարաբիխայի ճակատամարտի ամենախոշոր գործողությունը՝ Հաջիլարայի մոտ մղած մարտն էր, որ ճակատագրի զարմանալի զուգափառությամբ տեղի ունեցավ Ավարայրի ճակատամարտի օրը՝ մայիսի 26-ին: Պատմական հավաստի փաստերով, ակա-

նատեսների և մասնակիցների վկայություններով, գեղարվեստական սրանչելի նկարագրություններով, քշնամիների՝ բոլոր սպանների տարիների հետվից տված զնահատականներով զգացվում է, թե ինչ անօրինակ սխրանքներ են կատարել հայ մարտիկները զնդապետ Սամարցյանի դեկապարույրյամբ: Հաջիլարայի մոտ հայերն այնպիսի ջարդ տվեցին բուրքական գորքերին, որ հիմնովին ջախջախնեցին բուրքական 11-րդ դիվիզիայի երկու գունու . մոտ երեք հազար զինվոր և սպա վերջին հանգրկանը գտան զյուղի մոտակա լանջերին, իսկ հրաշրով փրկված ընդամենը մի քանի տասնյակ մարդ տարիներ հետո էլ դառնությամբ բացականչում էին. «Եխ, Հաջիլարա, Հաջիլարա»... Հաջիլարայի ճակատամարտի մասին հետազոտում զնահատանքով է արտահայտվել Հովհաննես Բաղրամյանը:

Հանրահայտ հերոսներից բացի, հեղինակը համոզիչ կերտել է հասարակ ժողովրդի, իրական անձնավորությունների կերպարները, անմահացրել նրանց սխրանքը, որը բերեներեան պատմվել է Հաջիլարայում: Այդ զյուղի բնակչները, որտուն անց Ալեք թիժայի և նրա պառակ քրոջ՝ Մարգարիտի անօրինակ սխրագործությունն առաջացնում է ընթերցողի զարմանքն ու հիացմունքը: Փակված իրենց գոնում, հարմար դիրք ընդունած, նրանք ոչնչացնում են իննո՞ւ տասնյակից ավելի բոլոր զինվոր ու սպա, ապա իրենք էլ զոհվում բուրքերի պայրեցրած գոնում: Երբ բուրքերը հայտնաբերում են իրենց դեմ կրվուներին՝ «անշարժացած ճերմակ առատ մորուքով ծերունուն և սևազգեստ պատավին, զարիւրում են: Երե ծերունիներն են այսպես կովում, որեմն իրենց մնում է հետանալ միայն»:

Իրական, շարքային համեստ հերոսների մեջ արժանի տեղ են գտել նաև հոշակված հայրով Կոտոշ Արամը (Արամ Մանուչար) և Սուրեն Եղշատյանը: Սլյաքանների բեկուց դրվագային նկարագրություններով կերտված նրանց կերպարներն ավելի քանի ու հավաստի են դառնում տասնամյակներ հետո, արդեն Կիլովական դարձած Ղարաբիխայի հին գերզմանատանը, հերոսների շիրմների վրա սպացող կանանց առկայությամբ:

Պատմական և իրական հայ անձնազոհ հերոսների կողքին կերտված ված են նաև բոլոր զորահրամանատարների, նրանց հետախուզական և լրտեսական խաղերի ուշագրավ նկարագրություններ, միջոցների մեջ

խտրույթուն շնելու փորձերը: Հմուտ նկարչին վայել բանձր վրձնահարվածներով Ա. Ամիրբեկյանը կերտում է բորբական գորքերի կովկասյան ճակատի հրամանաւոր Վեհիր վաշայի կերպարը: Մարտերում բրծված գորականն ու հմուտ քաղաքագետը զարմանում է, թե ինչպես հայերը բողոքին իրենց անառիկ բերդերը՝ Կարսը, Էրզրումը և Վճռական հականարկած տվեցին Ղարաբիլսայում, Բաշ-Ապարանում և Սարդարապատում: Կյանքի փորձուրյուններով ինաստնացած թշնամի գորահրամանաւորը կարողանում է գտնել այդ մեծ ինչով պատաժանը՝ հայ գորքը ինչքան նահանջել, այնքան ուժգնացել է ատելուրյունն ու զայրույրը, ինքնայաշտպանության իր բնազորվ նա զգացել է, որ այս վերջին հողակտորի վրա պարտավոր է համաժողովրդական պայքար սկսել իր դարավոր թշնամու դեմ: Զայրացած Վեհիր վաշան խոստովանում է, որ հայերը Սարդարապատում ջարդեցին «քորքերի թերը, Ղարաբիլսայում» ուղերը», և խիստ դժվարացրին Բարու հասնելու ծրագրի իրականացումը:

Քաղաքացիական մեծ խիզախուրյուն էր պահանջվում հեղինակից 1973 թ.-ին գրելու այդ ճակատամարտերի իրական նշանակության մասին, հաստատելու, որ Մայիսյան հաղթանակներից հետո բորքերը դիմեցին զիջումների և «հաշտվեցին» հայկական «փորքիկ պետուրյան» ստեղծման փաստի հետ, պետուրյուն, որն այն ժամանակ համարվում էր քախտախնդիր կուսակցությունների ստեղծածը: Չէր հաշվի առնվում, որ հինգդարյա կորստից հետո, վերջապես վերականգնվել է հայ պետականուրյունը, թեկուզ շատ անձուկ տարածքում:

Շնայած ժամանակի գրաբնիչի արած «մաքրաջրմանը», Ա. Ամիրբեկյանին հաջողվեց ներկայացնել համաշխարհային հեղափոխուրյան հաղթանակի գաղափարով մոլորված հայ բոլշևիկների միամստուրյունը, որոնք հավատացին բուրք «կարմիր ասկլարների» հեղափոխական առաջելուրյանը, և նրանց աշքերի առջև բորքերի ձեռքով սրի բաշվեց Ակրսանդրապոլի և Ղարաբիլսայի մեծարիկ թնակչուրյուն: Այդ առունվ հատկանշական է Ղարաբիլսայի բոլշևիկներից մեկի՝ Ռուբենի կյանքն ու մահը: Նա միամստորեն հավատում էր, որ 1920-ին Հայաստան մտած բորքերը ոչնչացնելու են միայն «գաշճակ իմպերիալիսների տիրապետուրյունը»: Իր չպատճառաբանված հավատի համար գերի ընկած բոլշևիկը պատաժան է տախս կյանքով: Դաժան են հնչում բուրք վաշայի խոսքերը. «Հերիփ եք, հայեր...կոմոնիզմը կարող է ամեն տեղ

մտնել, բայց մտուրիխայից և Հայաստանից: Թուրքիա չի մտնի, քանզի մենք չենք ուզում, Հայաստան չի մտնի, քանզի շուտով Հայաստան չի լինի...»¹:

Գրի արյի ընթերցումը հարգանքի խոր զգացում է առաջացնում Սիրիակ Ամիրբեկյանի գործի և անձի հանդեպ, քանզի նա կարողացավ խիստ գրաբննուրյան և կոմոնիստական գաղափարախոսուրյան մենիշ-խանուրյան պայմաններում ստեղծել ժամանակի փորձուրյանը դիմակայող ստեղծագործուրյուն: Սակայն գրական տքնազան աշխատանքի արդյունքը ենթարկվել է գրաբննիչի «զախտի հարվածներին»: Գրաբնիշը վեպից կրծատել է քազմաքիվ արժեքավոր հատվածներ, որոնցից մի քանիսը հեղինակի մահից հետո տպագրվել են մամուլում: Այդ հատվածները վերաբերում են մասնավորապես Մայիսյան գոյամարտերի զնահատականներին, որոնք համահունչ են այսօրվա զնահատումներին: Երբ համեմատում ենք վերջին տարիներին ստեղծված պատճական աշխատուրյուններում դրանց տրված զնահատականներին, զարմանում ենք, թե ինչ խորաբափանցուրյուն պետք է տնենար հեղինակը, որպեսզի շուրջ քսան տարի առաջ լույս տեսած վեպում արտահայտեր համանման տեսակետներ: Մանավանդ, եթե հաշվի առնենք, որ 1979 թ.-ին հրատարակված վեպը պետք է ստեղծագործական բուրյուն անցներ գոնեն 5-6 տարի առաջ: Անհնար է շանդուղաբանալ վեպից կրծատված մի հատվածի, որը 1997 թ.-ին լույս տեսավ «Ապերելու և գոյատելու ոգին»² խորագրով, անվանի գրող Հրաշյա Մարևայանի զնահատականով: Այդ փոքր հատվածն ապացուցում է, որ գրող Ա. Ամիրբեկյանին առանց վերապահուրյան կարելի է անվանել նաև պատճարան: Իրադարձուրյուններին տված սեղմ, զուսպ և ժլատ (քայլ և՝ տարողունակ) զնահատականները հասնում են կարծես բանաձևային ճշտուրյան: Հեղինակն ապացուցում է Մայիսյան հերոսամարտ-գոյամարտերի փոխադարձ կապը և ամենակարևորը՝ Ղարաբիլսայի ճակատամարտում հայ ժողովորդը տարավ վայրուն հադրանակ: «Ղարաբիլսայի ճակատամարտում մոտ ուր հազար զինվոր ու աշխարհազորյան շրս օր շարտնակ համար մարտեր նղեցին մոտ

¹ Ա. Ամիրբեկյան, «Վերջին հողակտորի վրա», հ. 2, 1979, էջ 375:

² Ա. Ամիրբեկյան, Ապերելու և գոյատելու ոգին, «Հայաստանի Հանրապետուրյուն» (լրագիր), 1997, 21 հունիսի:

բան հազար ջարդարար-զավթիչների դեմ և ջախջախսեցին քորրական ընտիր գորամիավորումները. քորքերը իրաժարվեցին Թիֆլիս զնալու մտքից: Բարու էլ զնացին բավական ուշացումով: Ղարաբիլիսայի մոտ մղած մարտերում քորքերը տվեցին ավելի քան յոր հազար սպանված ու վիրավոր, այն դեպքում, երբ հայերի կորուստները չանցան մեկ հազարից: Թե՛ մարտական, թե՛ բարոյական իմաստով սա արդեն հաղթանակ է, փայլուն հաղթանակ...»¹: Լիովին համաձայն ենք հեղինակի այս զնահատականին, մանավանդ, եթե հաշվի է առնվորմ, որ այդ ճակատամարտից հետո Վեհիր փաշան հեռացվեց Կովկասյան ուազմանակատի հրանաւատրի պաշտոնից: Ոչ քե հաղթանակած, այլ պարտված ու ջախջախսված քորքերը մտան Ղարաբիլսա: Եվ մտան ոչ քե այն պատճառով, որ հայերը պարտվեցին կամ ապաշնորի էն նրանց հրամանաւարները (ինչպես գրում է Հարուրյուն Սկրտչյանը բննարկված վեպում)², այլ միայն ուազմանքերը վերջանալու պատճառով: Մայիսյան ճակատամարտ-գրյակովների խկական կազմակերպիչն ու դեկավարը ոչ քե մի անձ է, ու մի գորավոր, այլ ամբողջ հայ ժողովորդը, նրա «ապրելու ու գոյատևելու ոգին, որը հասավ պատմական խոշոր հաղթանակի»³:

Գնահատելով ու արժեքորելով Մայիսյան հերոսամարտերին նվիրված այդ պատմավեպերը, մեր խորին հարգանքի տուրքը հաստուցելով ողջ հեղինակին (Բ. Ռուբորյան), մյուս երկուսի պայծառ հիշատակին, համարում ենք, որ հայ գրողները տակավին պարտը ունեն մեր ժողովրդի հանդեպ: Եվ դարձյալ մի ցանկություն օգտագործել բոլոր հնարավորությունները իրականացնելու Միքայել Ամիրբեկյանի «Վերջին հողակոտորի վրա» պատմավեպի երկրորդ՝ ամրողական իրատարակությունը, վերականգնելով գրաքննիչի կրճատածները:

Նոր ազգագրական հանդես, № Ա, Եր., 2005, էջ 66–77:

¹ Ա. Ամիրբեկյան, Վեպի կրճատված հատվածից, «Հայաստանի Հանրապետություն», 1997, 21 հունիսի:

² Հ. Սկրտչյան, Անդ., հ. 2, էջ 102, 147:

³ Ա. Ամիրբեկյան, ՀՀ, 1997, 21 հունիսի:

ՀԱՅ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ 1896 թ. ՎԱՆԻ ԻՆՔՏԱՊԱՇՏՈԱՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՍԱՐ

(110-րդ տարելիցի առիվն)

1890-ականների կեսերից սովորական Թուրքիան ձեռնամուխ նորավ Հայկական հարցի լուծնան քորրական եղանակին՝ հայկական կոտորածներին: Առաջին հարվածն իր վրա ընդունեց հայկական Սասունը, որի գործիչները, կրահելով Սասունը հայարափ անելու քորրական պետական ծրագիրը, գործի դրեցին հնարավոր բոլոր միջոցները՝ ժողովրդի ինքնապաշտպանությունը կազմակերպելու համար: Ինքնապաշտպանական հերոսամարտերից հետո սկսվեց տեղատփորյունը, ծայր առան զանգվածային կոտորածները: Եվրոպական բնակչ հանձնաժողովի եզրակացությունը հաստատեց, որ Սասունում տեղի է ունեցել խաղաղ բնակչության կոտորած, որ ինքնապաշտպանական մարտերը սույն պատմախան են սովորական Թուրքիայի վարած հայացինց քաղաքականությանը:

Շարունակվում են պետական բոնությունները, դրանց ի պատասխան՝ հայության դիմադրձ գործողությունները: 1895-ը դառնում է արևմտահայ զավառի (իմա՝ Արևմտյան Հայաստանի) խաղաղ բնակչության զանգվածային կոտորածների տարի: Խակ Զեյրունի արծվարնում խիզախ լնոնցիներն խկավես ապստամբություն են բարձրացնում հնչալյան կոտակցության դեկավարությամբ՝ մարտահրավեր նետելով հակապետական ապարատին ու նրա վարած քաղաքականությանը: Սասունում և Զեյրունում ինքնապաշտպանական մարտերի, ժողովրդի դիմադրական կորովը բարձրացնելու, նոյնիսկ նահանջի և շարժման տեղատփության ժամանակ իրենց արժանավոր տեղն են ունեցել հայ հոգերականության նվիրյալները, որոնք արել են հնարավորն ու անհնարինը՝ ժողովրդին կոտորածներից փրկելու, ինքնապաշտպանական մարտերը կազմակերպելու ուղրությամբ: Կարերվում էր առանձնապես տեղեկատփության դերը, աշխարհի առաջադեմ հասարակայնությանը Արևմտյան Հայաստանում կատարված իրադարձությունների մասին

լուրեր տալը: Դրա կազմակերպումն իր վրա է վերցնում Ամենայն հայոց կարողիկոսության օրգան «Արարատ» ամսագիրը, որը կարողիկոսի հրահանգով 1896-ի սկզբից պարբերաբար հոդվածներ է հրատարակում Արևմտյան Հայաստանում կատարվող ողբերգական և հերոսական իրադարձությունների մասին: 1896 թ. № 2-ը ամսագիրն սկսում է «Հայաստանեայց Եկեղեցին Տաճկաստանում» ամփոփիչ խորագրով խմբագրական հոդվածով: Դրանում ամսագիրը դրվառում էր «արևմտյան հայ Եկեղեցական եղբարց... տոկոնութիւնը և նրանց առաջնորդ պատրիարքի, ամենապատիվ Մատքեսոս արքեպիսկոպոսի անվեհերութիւնը, որով քաջ հովի հանդիսացավ իր հոտին, արժանացավ ամենքի համակրանց և հայրապետական Արքոյից «Քաջարքուն» մականուան»¹: Ողջ 1896 թ. ընթացքում «Արարատը» լույս է ընծայում հոդվածներ Արևմտյան Հայաստանի տարրեր վայրերում 1895–96 թթ. տեղի ունեցած կոտորածների վերաբերյալ: Դրանց մեծ մասի հեղինակների ինքնուրյունը չի նշված: Սակայն ՀՀ Ազգային Արխմիտում կատարած մեր պրայտումներից հանգեցինք մի եզրակացության: «Արարատին» նյութեր են տրամադրել Ամենայն Հայոց կարողիկոսի դիմանը (Գրասենյակը) և Սինոդի գրաստենյակը: Տպագրված նյութերը չնշին բացառություններով, պահպանվում են այդ արխմիտի Կարողիկոսական դիման և Սինոդի օրագրություններ (56 և 57) ֆոնդերում: Դրանք բոլորը տվյալ վայրերի հոգեւոր առաջնորդների գեկուցագրերն են՝ ուղղված հայոց հայրապետին, ահազանգերը և տագնապի ազդանշանները՝ ձեռք առնել բոլոր միջոցները հայկական կոտորածները դադարեցնելու համար: 1896 թ. հունիս ամսվա «Արարատում» տպվում է կարողիկոսական դիմանից ստացած մի հեռագիր. «Հեռագիրը գումեց, որ հունիսի 2–3-ին մեծ կոտորած և ջարդ է տեղի ունեցել Վանում»: Ապա խմբագրությունը ընթերցողներին հայտնում է, որ սպասում են առավել մանրամասն պաշտոնական լուրերի՝ իրադարձությունների ընթացքը հանգանանորեն լուսաբանելու համար: Ուշադրություն է գրավում խմբագրության մեկ պահանջը, որ «Արարատը», իրեն «Գերան Հայաստանեայց Եկեղեցու», պարտավոր է պատմության համար պահպանել այդ դեպքերի նկարագրությունները, օգնել

ապագայի հետազոտողներին՝ արևմտահայերի պատմության հավաստի շարադրման համար: Խմբագրության կողմից կցված այդ առաջարանին հետևում են Արևմտյան Հայաստանի մասին վավերագրերի հրատարակությունները: 1896 թ. «Արարատի» բոլոր համարները անընդուղ հրատարակում են 1895 և ապա 1896 թ. կոտորածների վերաբերյալ վավերագրերը: Առավել մանրամասն են Վանի 1896 թ. ինքնապաշտպանությանը վերաբերող նյութերը: Այդ իրադարձություններին ամսագիրն անդրադառնում է մի քանի անգամ: Հենց հուլիս ամսվա համարում ամսագիրը հաղորդում է «Վանում և շրջակայրում տեղի ունեցած սարսափելի կոտորածների» մասին՝ հայտնելով, որ դեռևս բացակայում են պաշտոնական գեկուցագրերը, բայց մասնավոր անձանցից արդեն նամակներ են ստացվել: Նկարագրելով հունիսի 3-ի դեպքերը՝ հոդվածագիրը գրում, խմբագրությունն ընդգծում է. «Վանեցին ինքնապաշտպանութեան աստուածադիր օրինօք կամէր ապրել»¹: Ընդգծված խոսքերով խմբագրությունն իր համակրանքն է արտահայտում ինքնապաշտպանության մասնակիցների նկատմամբ: Օգոստոսի համարում «Արարատն» արտասալում է ոռուսական «Новости» թերթի 1896 թ. № 212-ում գետեղված «Վանի կոտորածը» խորագրով հոդվածը՝ իբրև ականատեսի նամակ: Այն մանրամասն նկարագրում է իրադարձությունների շղթան՝ սկսած 1895-ի վերջերից, եթե տեղի էին ունեցել Վասպուրականի գրեթե բոլոր գավառների խաղաղ բնակչության կոտորածները, որոնց պատճառով գավառաբնակ ժողովորի մի հսկա զանգված աստիճանաբար լցվել էր Վան՝ դժվարություններ ստեղծելով ժողովորի պարենավորման գործում:

Կոտսակցությունները ձեռնամուխ էին եղել ինքնապաշտպանության կազմակերպմանը, տակայն ժամանակակից ականատես Համբարձում Երամյանի վկայությամբ՝ դրա ընթացքն այնքան էլ հաջող չէր նրանց ոչ համերաշխ գործունեության պատճառով: 1895 թ. վերջերին Վասպուրականի պատրիարքական փոխանորդ Սահակ վարդապետ Բագրեանդին, անհանգուացած ողջ նահանջը հայ բնակչության դիմ կատարված սահմուկցուցիչ դեպքերից, անընդուղ նամակներ և հեռագրեր է ուղղում

¹ «Արարատ», 1896, № 2, էջ 87:

սկզբում՝ Կ. Պոլսի պատրիարք Մատթեոս Իզմիրլյանին, ապա Ամենայն Հայոց կարողիկոսին՝ ահազանգելով, խնդրելով, ապա պահանջելով միջոցներ ձեռք առնել դադարեցնելու նահանգի հայ բնակչության կոտորածները։ Նա գրում էր նաև քաղաքին սպառնացող վտանգի մասին։

1895 թ. ուշ աշնանից սկսած վաճեցիները ամեն վայրկյան մտածում էին վերահսկա աղետի մասին։ Սահակ Վարդապետը չի հավատում 1895 թ. մայիսյան բարենորոգումների ծրագրին և որոշակիորեն զրում է։ «Եթե այս բարենորոգումները հայ ժողովրդեան համար են, կարծեմ հայ ժողովրդ շախտի մնա մինչև որ բարենորոգումներն գործադրվեն»¹։ Տառապանքի փորձով իմաստնացած հոգևորականը զիտակցում է, որ շնայած Վան քաղաքը դեռևս ազատ է մնացել այդ ողբերգական դեպքերից, սակայն կիասնի նաև նրա հերքը²։ Տագմասի և ահազանգի հեռագրերին հետևում է մանրամասն հաշվետվորյունը, քեզ Վասպուրականի որ գավառում ինչքան գյուղ, եկեղեցի և ավերելու, ինչքան ժողովուրդ է կոտորվել և ինչքան՝ բռնի կրոնափոխվել³։ Ամենայն հայոց կարողիկոսին ուղղած առաջին գեկուցագիրը վերաբերում է Խոխան, Սպարկերտ, Մամուտանք, Կարկառ գավառների հայ բնակչութան կորուստներին, իսկ երկրորդը՝ Արճեշ, Արծկե, Թիմար, Հայոց Զոր գավառների հայ բնակչության սրածութանը, հայկական գյուղերի ավերմանը⁴։ Նահանգի հոգևոր առաջնորդ Սահակ Բագրևանդյան և Վարազա վանքի վանահայր Դանիել Վարդապետը չեն բավարարվում պատրիարքին և կարողիկոսին լուրեր հաղորդելով. նրանք կոնկրետ միջոցառումներ են ձեռնարկում, դիմում են նահանգապետ Նազըմ Փաշային և իրեն կայսերական կոմիտեր Վասպուրական ժամանած Սահակին Փաշային։ Վերջինս կոտորածները կանխելու վիճարեն աստիճանաբար շիլացնում է մրնուրտը, իրահրում բուրք մոլեռանդ ամրուսին, բանտարկված քուրդ ավազակապետ Շարիբին իրավիրում է Վան, երկու օր հյուրասիրում, ապա համապատասխան իրահանգներ է տալիս և ուղարկում իր ավազակառջը։ «Խսաղաղարքի» պաշտոնով Վան եկած Սահակինը

սկսեց միջամտել նահանգի քաղաքական և զինվորական գործերին, մեկուսացրեց նահանգապետ Նազըմ Փաշային իրեւ հայ հեղափոխականների (կամ Ֆիդայինների) պաշտպանի և զանգվածային խուզարկություններ սկսեց հեղափոխականներ կամ Ֆիդայիններ գտնելու պատրիարքով։

Ի հակակշիռ հայ ««հեղափոխականների»՝ Սահակինը քուրքերից ստեղծում է այսպես կոչված «հեղափոխական կոմիտեներ», այսինքն՝ մինչև ատամները զինված քուրք-քրդական խմբեր¹։ Խուզարկությունները կատարվում էին գրգռիչ եղանակով՝ 300–600 զինվորի ուղեկցությամբ, որոնք ամեն ինչ անում էին միջադեպեր ստեղծելու համար։ Խուզարկությունները որևէ արդյունք չտվին։ Այդ պատճառով պատրիարքական փոխանորդը համարձակություն ունեցավ բողոքելու և կայսերական կոմիտեից պահանջեց դադարեցնել խուզարկությունները։ Վանի հայությունն իրեն պահում էր խիստ զգույշ, որովհետև դրացի քուրքերն զգուշացրել էին սպասվող կոտորածների մասին։

Կոտորածն սպասվում էր մայիսի 31-ին, սակայն հետաձգվեց քուրքերի Կուրքան Բայրամ տոնի պատճառով։ Վանի շուկայում մի քանի օր փակ էին հայերի խանութները։ Վերջապես Սահակինը ստեղծեց կոտորածների առիթը, իսկանի 2-ի լույս 3-ի գիշերը Այգեստանից դուրս գտնվող Ավոյի դար վայրում զիշերապահ զինվորները ընդհարում են ունենում մարսախույզ քրդերի հետ, որի ժամանակ սպանվում են մի զինվոր և սպա։ Տեղական կառավարությունը, մասնավորապես Սահակին Փաշան այդ դեպքերը վերագրում էն հայ ֆիդայիններին, և հենց զիշերված ընթացքում՝ մինչև վաղ առավոտ, քուրքական մնձաքանակ գործերը պաշարում են Այգեստանի զուտ հայաբնակ բոլոր բաղերը։ Կեսօրից սկսվում է սուկալի կոտորածը։

ՀՀ ազգային արխիվում պահպանվել են բազմաթիվ հոդվածներ, որոնց հեղինակները հայ հոգևորականներ են։ «Դրանք իրատարակվել են «Արարատում» առանց հեղինակի ինքնուրբյունը նշելու։ Մեկ տասնյակից ավելի այդ հոդվածներում տարբեր հեղինակներ շարադրում են դեպքերի ողջ ընթացքը՝ սկսած իսկանի 2-ից մինչև 10-ը։ Այդ սակավա-

¹ ՀՀ ազգային արխիվ, ֆ. 56, գ. 17, զ. 52, թ. 112։

² Նույն տեղում, գ. 55, թ. 111, զ. 58, թ. 33։

³ Նույն տեղում, թ. 36–39։

⁴ Նույն տեղում, թ. 49–50։

¹ Նույն տեղում, ֆ. 56, գ. 17, զ. 70, թ. 20։

թիվ ականատեսները պատմության համար ստեղծում են իրադարձությունների շղթան: Ուշադրություն է գրավում մի հանգամանք: «Արարատում» իրատարակված տեղեկագրերում, նաև ազգային արխիվում պահպանված վավերագրերում հեղինակները գգուշանում են նշել ինքնապաշտպանության դեկավարների անունները՝ բավարարվելով «երեք կուսակցությունների դեկավարներ» արտահայտությամբ: Նրանց գգությունն ուներ եիմք և պատճառ, նամակագիրները վախենում էին սպասվող հետևանքներից: Չարադրելով դեպքերի հաջորդականությունը բոլոր հեղինակներն ընդգծում են այն փաստը, որ ինքնապաշտպանության մասնակիցները (իրենց արտահայտությամբ՝ «անձնապաշտպաններ») ողջ օր ոչինչ չձեռնարկեցին՝ հուսարվ կառավարական, պետական որևէ միջամտություն: Եվրոպական մեծ տերությունների հյուպատոսների աշխի առաջ սկսված սուսալի կոտորածը 4 ժամվա ընթացքում մոխրակույտի վերածեց Վանի Հայկավան, Թորոման, Ս. Հակոբ, Կըր Դար, Շանոյի Դար և Թուխ Մանուկ քաղերի հայերի տները: Թշնամու սրից ազատվածներն ապաստանեցին անգլիական, ռուսական, պարսկական, ֆրանսիական հյուպատոսարաններում: Այդ բոլորից հետո Վանի երիտասարդությունը դիմում է ինքնապաշտպանության: Իրենց ապստամբ ներկայացնող անգլիական հյուպատոսս սըր Ուիլյամսին նրանք պատասխանում են: «Մենք ապստամբներ չենք, այլ ինքնապաշտպաններ և ինքինքնիս կպաշտպաններ խալամական մոլեուանդ խուժանի հարձակմանց ընդդեմ... Երկուշարի օրը մենք չլիմեցինք ինքնապաշտպանութեան, հաւատարվ, որ տեղական կառավարութիւն պիտի միջամտէ և վերջ տա խուժանի հարձակմանց, սակայն, երբ տեսանք, որ արինահեղութիւնք, իրկիրութիւնք և ավարառութիւնք անարգել կյառաջանան և մեզ ալ վիճակակից պիտի ընեն Հայկավանքի, Կըր Դարի և Ս. Հակոբի դժբախտ ժողովրդեան, դեպք պատահելին 20 ժամ յետո միայն գենք վեր առինք անձի պաշտպանութեան համար»¹: Մանրամասն նկարագրելով Վանի ինքնապաշտպանների հերոսական գործերը՝ Վասպուրականի հոգևոր առաջնորդն իր տեղեկագրում գովեստով է արտահայտվում Վանի եերսական կանանց մասին: «Ուրախալի

էր տեսնել, թէ իզական սեռն ալ որպիսի ոգևորութեամբ մասնակցում էր անձնապաշտպանութեան գործին»²:

Վանի պատրիարքական փոխանորդը Իզմիրյանին և Խրիմյանին ուղած գեկուցագրերում գնահատական է տալիս քաղաքի ինքնապաշտպանների անձնազոհությանն ու անձնազոհությանը. «Եթե չինէր ընդիմութիւնը, տարակոյս չկա, որ բոլոր Վանա ժողովուրդը հոռեգոյն կերպով վիճակակից պիտի լինէր Հայկավանքի և գիտերու ու գաւառներու ժողովրդեան»: Ըստ նրա տեղակատվության՝ Այգեստանի և կենտրոնական քաղերի մեջ ցույց տված այդ դիմադրությունը, որը տեսեց 5 օր և արգելեց բուրք ու բուրդ մոլեռանդ ամբոխի մուտքը այնուեղ, «միջոց տուեց ժողովուրդին ապաստանավայր գտնել իհլապատոսարաններուն և այլ տեղեր»: Այդ ինքնապաշտպաններին Սահակ վարդապետը գնահատում է՝ անվանելով Վանի և շրջակա ցյուղերի «երիտասարդութեան և պատամեկութեան ընտրելագոյն, ամենարարմ ու զարգացած մասը»²:

Դեպքերի հոգևորական տարեզրի սրափ աշխից չի վիճակում, որ բուրքական կանոնավոր բանակի զինվորներն առաջին օրերին քողարկվում էին քրդական տարազով, հետագա օրերին նրանք կովում էին հայ ինքնապաշտպանների դեմ իրենց պաշտոնական համազգեստով: Կայսերական կոմիտեր Սաադէդին փաշան չէր սպասում ինքնապաշտպանական նման գործողությունների և դրանք որակավորում է իրեւ ապստամբություն, ընդգծում, որ ամենայն հավանականությամբ հայերի մեջ կան լավ զինված օտարահապատակներ, և ինքը պարտավոր է զենքի ուժով ճնշել այդ ապստամբությունը: Նման բռվանդակությամբ հեռազիր է ուղրում նա «վեհափառ» սուլթանին և խնդրում լրացրցիչ ուժեր: Մեր խնդրից դուրս է շարադրել դեպքերի ողջ ընթացքը: Մենք աշխատում ենք ցույց տալ, թե ինչպիսի վերաբերմունք էին ցույցարկում Վասպուրականի և այլ վայրերի հայ հոգևորականները ինքնապաշտպանների նկատմամբ և ինչպէս են իրենք միջամտել այդ իրադարձություններին:

¹ Նոյն տեղում:

² «Արարատ», 1896, № 7-8, էջ 529:

¹ «Արարատ», 1896, նոյեմբեր, էջ 527:

Կոտորածի առաջին օրը Վանում էր գտնվում Վարագա վանքի վանահայր Դաճիկ վարդապետը, որը դեսպերի առաջին ականատեսի իրավունքով, իրեն պատաժանատու համարելով հայրենակիցների կյանքի համար, ձի է հեծնում և ճանապարհվում Սաադղինի պաշտոնատեղին՝ կոտորածները դադարեցնելու խնդիրը-պահանջով նրան ներկայանալու նպատակով։ Կոտորածների ահեղ ժամին, չանալով իր բարեկամների խորհրդին, հաշվի շառնելով սեփական անձը, նա գնում է իր հայրենակիցներին փրկելու։ ճանապարհին թուրք խուժանը նրան իշեցնում է ձիուց, գազանարար խոշտանգում և զցում առուն, որ 5–6 օր աճրադ մնալով, կեր դառնալով արյան հոտից վայրենացած շներին, անճանաչելիորեն կերպարանափոխվելով՝ ի վերջո հանձնվում է հողին։ Դեպքերի ականատես Համբարձում Երամյանն այդ մասին գրում է. «Օրինեալ լինի քո հիշատակը, հայր Դաճիկ։ Դու ի կենդանութեան անձնուեք սպասաւոր էիր եկեղեցին, ժողովրդին և Վարագայ վանքին, կամովին դեալի սույզ մահ դիմելով, զոհեցիր կեանքդ՝ ուրիշներ փրկելու յոյտվ»¹։

Տեղեկագրերից, հողվածներից ամբողջանում է Վասպուրականի հոգեորդ Սահակ Բագրեսանդացու հայրենանվեր կերպարը։ Ողջ 1895 թ. ընթացքում նա հայտնվում էր այնտեղ, որ ժողովրդին զցում էր իր կարիքը։ Վանեցիները նրան անվանում էին «անձնադիր հովի և իդեալիստ Հնչակեան»²։ 1896 թ. մարտին Վանում սպասվում էր Կարմ և Բայազետի հայկական կոտորածների կազմակերպիչ, կայսերական կոմիսեր Շարիքի գալուստը։ Հոգեորդ առաջնորդը հրաժարվում է ներկայանալ նրան և ի պաշտոնե բարի գալուստ մադրել. «Զպիտի դիմաւորեմ այդ գագանը և շախուի սեղմնմ նորա արինարաքախ ձեռքը», - առարկում էր նա իրեն համոզողներին։

Քանինիզ շատախից բանտարկյալներ, որ ազատագրվել էին բոլորերին դիմադրություն ցույց տալու համար, մայիսի սկզբներին կայսերական ներուժով պետք է ազատվեին՝ հավատարմության երդում տալու պայմանով։ Արարտությունը պետք է կատարեր առաջնորդական փոխանորդը՝ Սահակ վարդապետը, որի հոգուն հակառակ էին

¹ Հ. Երամյան, Հուշարձան Վան-Վասպուրականի, հ. Ա, Ալեքսանդրիա, 1929, էջ 372:
² Նոյն տեղում, էջ 376։

կեղծ երդումները։ Սիայն նահանգապետի օգնական հայազգի Ստ. Սևլիքյանի պնդմամբ նա ընդառաջնեց կառավարության այդ պահանջին¹։ Ինանալով, թե Սահակ վարդապետը ինչ մեծ հեղինակություն է վայելում Վանի ինքնապաշտպանության դեկապարների նուռ՝ անգլիական հյուպատոսն անձամբ դիմում է նրան՝ ինքնապաշտպաններին համոզելու, որ զենքը վայր դնեն։ Նրան է դիմում նաև կայսերական կոմիսեր Սաադղինը՝ ստիպելով, որ վերջինս 60 այլ վանեցիների հետ սուլթանին ուղղված հեռագիր ստորագրի, որի մեջ ինքնապաշտպանները մեղադրվում են իրեն կատարված իրադարձությունների պատասխանատու։ Կայսերական կոմիսերին դա չի հաջողվում։ Իր հակառակությունների և ըմբոստուրյան համար կայսերական իրամանով Սահակ վարդապետը կանչվում է Կ. Պոլսի և արգելավակվում հայոց պատրիարքարանում։ Ամենայն Հայոց կարողիկոս Ալյոսի Խրիմյանը, որ քաջածանոր էր Սահակ վարդապետի հայրենանվեր գործունեությանը, մեծ ջանքեր է քափում նրան աքսորից ազատելու համար։ Այդ նպատակով նա դիմում է նորբնտիր պատրիարք Մադրախա Օրմանյանին։ 1897 թ. ապրիլի 28-ով թվագրված նամակում պատրիարքը կարողիկոսին հայտնում իր ջանքերի ապարայունության մասին։ Վանի նահանգապետը ինքն էր պատաժանել հայոց պատրիարքին։ «Բարձր Դուռը հարմար չի դատիր Սահակ վարդապետի Վան դառնալը»²։ Այդ քանը պատրիարքը քացատրում էր Վանից ստացված անստորագիր նամակներով, որ պատրիարքական տեղապահը կառավարության էր ներկայացվում աննպաստ գույներով, իրքեւ քաղաքականապես անվտան անձնափորություն։ Օրմանյանը խոստանում էր հայոց հայրապետին, որ չի դադարեցնի իր միջամտությունները և կաշխատի Սահակ վարդապետին վերադարձնել իր պաշտոնատեղին՝ Վան։

Օրմանյանից առաջ Կ. Պոլսի պատրիարքը Մատունու Խզմիրյանը, որ ժամանակակիցների կողմից ստացել էր «Երկարե» մականունը, կտրականապես մերժեց սուլթան Համիդի առաջարկը՝ պատրիարքա-

¹ Սահակ վարդապետը բոլորական կառավարության անվտանությունն էր հրավիրել իր վրա, եթե դեռ Սևոնիա վանքի վանահայրն էր. այն ավելի ոժեղացավ, եթե նա հաստատվեց Վանի նահանգի պատրիարքական տեղապահ կամ փոխանորդ։

² ՀՀ ազգային արխիվ, ֆ. 56, գ. 14, գ. 185, թ. 25։

կան կոնդակով հանդարտեցնել խոռվահույզ ժողովրդին և կոտորածների մեղքը բարդել կոտորվողների վրա: Այդ առաջարկի մասին հայտնելով կարողիկոսին՝ Իզմիրյանը գրում է. «Երբեք հայերը տեղի չեն տուած կոտորածաց և բնական ալ չեր, որ տային... Բ. Դուռը մեզմէ պահանջեց, որ կոնդակ հանելով յորդորենք ժողովուրդը տեղի չուալու: Այդպիսի յորդորը շատ անիրավ պիտի ըլլար... յանիրափ բափուած այնքան անմեղ արիններուն պատասխանատուուրինը զոհերուն վրայ բողնելուն և ջարդերն կարգադրող ու գործադրողները ի շրմեղս հանելու աշխարիի առաջ...»¹: Պատրիարք Իզմիրյանը վրդովում է, որ քուրրական արքունիքը մի քանի անգամ կրկնում է այդ պահանջը, սակայն կոտորածները, բոնի կրոնափոխությունները և առևանգումները կասեցնելու ուղղությամբ ոչինչ չի ձեռնարկում²:

Նույն պահանջով կարողիկոսին են դիմում ցարական բարձրաստիճան պաշտոնյաները՝ ստիպելով, որ վերջինս կոնդակով դիմի արևելահայությանը, որ նրանք օգնության շհասնեն արևմտահայ հայրենակիցներին՝ ազատազական շարժման մասնակիցներին որակելով իրեւ «հեղափոխական կոմիտեների» անդամներ: Ուստատանի արտաքին գործոց նախարար Գորենմիկինը կարողիկոսին է հաղորդում իր կառավարության դիրքորոշումը հայ ինքնապաշտպանների նկատմամբ. «Կառավարութիւն ուստաց ոչ բնաւ իմք կարէ հաւանել ընդ յեղափոխական եղանակս, զորս ի գործ արկեն առաջաւորք հայոց, որպիսիք ունել ոմինչ միայն կարի կործանիչս վասն յամազգայնոց իրեանց ի Տաճկաստան»³: Դիմելով դիվանագիտական հնարքների, ակնհայտ հակա-

¹ Նոյն տերում, գ. 17, գ. 70, թ. 135:

² Իզմիրյանին հաջորդած պատրիարք Մաղարիա Օրմանյանը առավել գգույշ դիրք գրավեց: Տարիներ անց, երբ նա շարադրում էր իր կորողային աշխատությունը՝ «Ազգապատումք», թնաղատական խոսք է ուղղում Մատրիոս Իզմիրյանի հասցեին՝ գտնելով, որ «Երկարն» պատրիարքը վարել է անխոհեմ քաղաքականություն: Սակայն, խոսելով հայ ազատագրական շարժումների մասին ընդհանրապես, շարժման սկզբնափորումի և հետագա ընթացքի համար մեղավոր է համարում քուրրական կառավարության վարած հայահալած քաղաքականությունը, որի հետևանքը եղավ այն, որ «1878–1882 թթ. հանդարտ աղերարկուն բռնադատեալ նոր միջոցներու մոդուցավ... անաշառ կշռապատող յայտնապես կը տեսնէ որ կերպով մը օսմանեան կառավարութիւնն էր փոփոխութեան պատճառ տուողը...» («Ազգապատում», հ. Գ, էջմիածին, 2001, էջ 5060):

³ ՀՀ ազգային արխիվ, ֆ. 56, գ. 14, գ. 52:

սուրյուն ցուցադրելով քուրրական և ուստական կառավարությունների վարած հայկական բաղարականության մեջ՝ 1896 թ. հուլիսի 29-ին հայոց կաթողիկոսը դիմում է ուստական ցարին՝ հուսարով, որ միայն նրա «հզոր ինքնակուրինը» վերջ կրնի կոտորածներին: Միամտուրյուն կլիներ կարծել, թե վեհափառ հայրապետը հավատում էր, որ ջարը միջոցներ կձեռնարկեր «զլլուվին ոչնչացման դատապարտված» արևմտահայության փրկության համար: Բայց նա դիմում էր իր ձեռքից եկած բոլոր միջոցներին: Ուշագրավ է, որ Վանի երիտասարդության ծաղիկը ներկայացնող ինքնապաշտպանները անընդիատ կապ են պահպանել կարողիկոսի հետ, նրան տեղյակ պահել իրադարձությունների ողջ ընթացքին:

Ինքնապաշտպանական խմբերի՝ Վանը բողնելուց 6 օր անց՝ 1896 թ. հունիսի 16-ին, երբ արդեն գտնվում էին պարսից սահմանագլխին՝ պատմական Խանասորի մոտակայքում, լուր են ուղարկում Սալմասու, օգնություն խնդրում կառավարության կողմից ուղարկած քուրդ եղուզակներից պաշտպանվելու համար: Այդ լուրերը կարողիկոսին է հաղորդում վանեցի նամակագիր Կարապետ Գուլաքը ըզյանը, որը հավանական է համարում, որ օգնության գնացողները՝ մոտ քառասուն հայեր, զոհելով են ինքնապաշտպանների հետ միասին: Վերջինս բողոքում է Թավրիզի հոգևոր առաջնորդ Արտեն վարդապետ Մարգարյանից, որը քայլեր չի ձեռնարկում պարսից կառավարական շրջանակներում ինքնապաշտպան փախստականների վիճակը քարելավելու համար: Հունիսի 19-ով քվագրված նամակի հեղինակը կարողիկոսին է հայտնում իր իմացած վերջին փաստերը «սիրելի Ակրտիչ Ավետիսյանի» և նրա 800 ընկերների մասին, որոնք գտնվում են Բարդուլիմեոս Առաքյալի վանքի շրջակայքում և շրջապատված են քուրդ հրոսակներով⁴: Նամակը նշինյանին է հասնում այն ժամանակ, երբ ինքնապաշտպանները շրջափակվել են: Վեհափառ հայրապետին մեծ դժվարությամբ հաջողվում է հաղթահարել ցարական բարձրաստիճան պաշտոնյանների հարուցած խոչներուները և քույլտվություն ստանալ համահայկական հանգանակություն՝ կոտորածներից մազակսելու համահայկական հանգանակություն՝ կոտորածներից մազա-

⁴ ՀՀ ԱԱ, ֆ. 56, գ. 17, գ. 55, թ. 147:

պործ խյակներին՝ թե Արևմտյան Հայաստանում մնացածներին և թե՝ Արևելյան Հայաստան զաղբածներին, օգնություն ցուցաբերելու համար:

*Տարեգիրք Երևանի Գեղարվեստի Պետական
Ակադեմիա, 2006, էջ 94–103:*

ՄԿՐՏԻՉ ԽՐԻՍΤԱՆՆ ՈՒ ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐՈՒՍԱՂԵՄԸ

XIX դ. հայ հասարակական-քաղաքական, եկեղեցական, մշակութային գործիչների մեջ ուրույն տեղ ունի Սկրտիչ Խրիմյանը. ինքնուս վարժապետ դարձած, 1854 թ. վարդապետ օծված, Վարազ և Սր. Կառավետի վաճքերի վաճահայր, Կ. Պոլսի հայոց պատրիարք, Բերդինի վեհաժողովի հայ պատվիրակության ղեկավար, Վասպորականի և Տարնի հոգևոր առաջնորդ, Կ. Պոլսի Ազգային ընդհանուր ժողովի կրոնական ժողովի առենապետ, Երուսաղեմի արքորական, ապա՝ Ամենայն հայոց կարողիկոս: Իր գործունեությամբ նա իրար շաղկապեց Արևոտյան Հայաստանի ամենահայաշատ վայրերը՝ Տարոնն ու Վասպորականը, ապա՝ Արևելյան և Արևմտյան Հայաստանը: Գործունեության վաղ արշալույսին, 1850 թ., նա մեկնեց քրիստոնեական սրբազն վայրերը. «Ճիս զորացավ այն սուրբ ցանկութիւն, տեսանել զԵրուսաղեմ, զաշխարհ Փրկչին մերոյ, յորում լոյսն ազավ, Բանն մարմին եղեւ իրաշապես և բնակեցավ ընդ մարդիկ»¹: Աշխարհական Սկրտիչ ջերմ ցանկությունն էր «Աչոր իսկ տեսանել անդ զակունս աղբերաց և զգեսոց կենանարար ջորց, որ բխեցին Երուսաղեմ, և ընթացեալ արքուցին զիւրանուական անապատն»²: Այնտեղ՝ Երուսաղեմի Սր. Հակոբյանց մեծահոչակ վաճքում օրեանած Երիտասարդ Սկրտիչը, արքեցած սուրբ վայրերի առասությունից, գեղեցկությունից, ցանկացավ հագուրդ տալ կրթության իր անհազ ծարավին, ինչին ձգուում և երազում էր նրա օժողությունը:

¹ Մ. Խրիմյան, Ամբողջական Երկեր, Նիւ Եորք, 1929, էջ 520:
² Նոյն տեղում:

Ված հոգին: Անձ էր նրա հուսախարությունը, երբ զգաց, որ այդ հոչակավոր վամբի միաբանությունը չունի նուազոր այն բարձր մակարդակը, որին ծարավի էր ինքը: Բայց սուրբ վայրերի շոշափելի մերձությունը նրա մեջ արքնացրին գրելու նիրիած բնածին ձիբը: Մենաստանի խաղաղ առանձնության մեջ նրան հատկացվել էր մի փորբիկ սենյակ. «...զի վիճակվեցավ ինձ՝ փորբկան մի փորբիկ սենյակ, շինեալ առանձին ի վերայ տանեաց և հայեր դրուն ընդ արևելս՝ ՚ի լեառն Զիրենեաց: Նախազուշա՞կ արդեռ սենյակն այն, թե տիբացու Սկրտիչ՝ վարդապետ լինելոց է»¹: Այդ սենյակում նա սկսեց գրել «Հրատիրակ Երկրին Աւետեաց» պոեմը: Քառասուն տարի անց, կրկին լինելով Երուսաղեմում, նա իշխում է, թե ինչպես է գրել և միաժամանակ՝ երգել: Այն ժամանակվա Տեր Հովհաննես մեծագործ պատրիարքը, լսելով նրա երգը, մոտենում է և հարցնում, թե ի՞նչ է երգում: Խրիմյանը պատասխանում է, որ գրում և երգում է Հրատիրակը Աւետեաց Երկրին, իրավիրում է «զմանկուն և զժողովուրդս հայոց», որ ուստի գան Երուսաղեմ: Կ. Պոլսի վերադառնարով՝ 1851-ին, նա լոյս ընծայեց իր երկրորդ ստեղծագործությունը՝ «Հրատիրակ Երկրին Աւետեաց» պոեմը: Ինչպես առաջին «Հրատիրակը», այս երկրորդը ևս իր վրա մեծ շափով կրում է Ալիքիրայան հայրերից Արսեն Բագրատունու «Հայկ դյուցազնի» ազդեցությունը, գրված է իին հայկական տաղաչափությամբ: Ուժգին հայրենասիրության հետ մեկտեղ այս քերրվածն աշշի է ընկնում սուրբ գրերի արտակարգ իմացությամբ, կրոնական ջերմ զգացումով և հոգևոր ներշնչանքով: Կարդալու ընթացքում ընթերցողն անրնիհատ զարմանում է, թե հեղինակը՝ 30-ամյա աշխարհիկ անձնավորությունը, ինչպես է ստեղծել քրիստոնեական վարդապետությանը նվիրված այդպիսի մի կորող: Պոեմն ընթերցելուց հետո պարզ է դառնում, որ միանգամայն օրինաչափ և բանական էր այրիացյալ Խրիմյանի կյանքի հետագա ընթացքը: Եվ պատահական չէ, որ հետագայի հոգևորական պատմաբանները Խրիմյանի գրական ստեղծագործությունների մեջ ամենաբարձր գնահատել են երկու իրավիրակները:

«Հրատիրակ Երկրին Աւետեացը» բաղկացած է յոթ երգից: Ամեն մի երգն ունի «մայսացոյց պատկեր իմաստից» վերտառությամբ համառոտ

¹ Նոյն տեղում, էջ 521:

բացատրություն, թե ինչ է նկարագրված այդ երգում: Առաջին երգը նվիրված է սուրբ Նազարեթ քաղաքի անարատ կույսի հղությանը և Հիսուսի անմեղ մանկությանը: Ապա ընթերցողը ծանոթանում է Բերլինին, Հորդանան գետին, և «քանի նորին կշտամբողական առ ազգն Հրեից»: Նկարագրում է Հիսուսի մկրտությունը և հորդոր է կարդում բոլոր մանուկներին՝ «ասնարատ պահելու զընկալեալ շնորհ մկրտութեան»: Երկրորդ երգում խրատում է մանուկներին (պետք է հասկանալ ընթերցողներին)՝ «չերկրպագել փառաց ախտին», իր խոսքով ընթերցողներին ուղեկցում է Տիրերական ծովի եզերը, ապա բարձրացնում ժամաբորական լեռը, նկարագրում Քրիստոսի պայծառակերպությունը, վերջում հորդորում է մանուկներին՝ հետևել Քրիստոսի «խաչակիր առարինութեան»: Այդպես մանրամասն իր բոլոր երգերով, հայկական իին տաղաշափությամբ, շրեն գրաբարով հայությանն է հանճնում Նոր կտակարանի բոլոր դրվագները: Այդ յոթ երգի մեջ դրսեորդում է Խրիմյանի քաջնացությունը հայ մատենագրությանը, մինչև իր օրերի հեղինակներն ու գիտնականները: Ցավոք, հեղինակը ծանոր չի եվլույական գլուխանության նմանատիպ ստեղծագործություններին, տեղյակ էր միայն այն սակավարիկներին, որոնք իր ժամանակ քարգմանված էին հայերեն: Պուեմ վերջում հեղինակը համառոտ ծանորություններ է տալիս «Հրավիրակում» հիշատակված սուրբ վայրերի մասին, ինչպես՝ Նազարե, Բերլինեմ, Հորդանան գետ, «զեառն փորձութեան», Տիրերական ծով, Ժարորական լեռան, Սիոն վերնատուն, Գերսեմանի ձոր և ներկայացնում քազմարիվ այդպիսի վայրերի և տեղադրությունը, և նկարագրությունը, և բացատրությունը: Դրանք լայնացնում են ընթերցողի մտահորիցնը և ցանկություն առաջացնում լինելու այդ սուրբ վայրերում. այսինքն՝ հեղինակը հասել էր իր նպատակին, հրավիրակը կատարել էր իր գործը:

Խրիմյանի կայլ Երուսաղեմի հետ շարունակվեց նաև հետագայում: Տարիներ անց՝ 1869-ին, նա ընտրվեց հայոց պատրիարք: Օսմանյան մայրաքաղաքում գտնվող պատրիարքարանը գերակա դիրք ուներ կայսրության կազմի մեջ մտնող հայկական հոգևոր հաստատությունների՝ ինչպես Կիլիկիո և Աղքամարի կարողիկոսությունների, այնպես էլ Երուսաղեմի պատրիարքության նկատմամբ, որովհետև նրանք բոլորն

ել ընտրվում և հաստատվում էին Կ. Պոլսի Հայոց Ազգային ժողովի ու վարչության կողմից՝ ունենալով պատրիարքի հավանությունը: 1869–1873 թ. Կ. Պոլսի պատրիարք Մկրտիչ Խրիմյանը քարեկանական ջերմ հարաբերություններ է հաստատում Երուսաղեմի հայոց պատրիարք Եսայու հետ, և քանի որ վերջինս տարիքով իրենից մեծ էր, հաշվի շառներով իր դիրքը, իրեն համարում էր Եսայու կրտսեր եղբայրը: Նրանք նամակներով խորհրդակցում էին իրար հետ, և Խրիմյանի խորհրդիները հաճախ շոշափում էին համազգային շահեր: Երևանի Ե. Զարենցի անվան գրականության և արվեստի բանագարանի արխիվում պահպան է Խրիմյանի ֆոնդը, որտեղ կամ նրան ձեռորվ գրված քազմարիվ նամակներ, այդ բգում նաև՝ ուղղված Եսայի պատրիարքին: Ուշադրություն է գրավում 1872 թ. մայիսի 4-ին բվագրված նամակը՝ ուղղված Երուսաղեմի պատրիարքին, որը վերջինս զգուշացվում էր «հայոց նվիրական իրավունքները» աշքարող շանելու համար, քանի որ քրիստոնյա քոյր եկեղեցիների պետերը (իտալացիներ, գաղիացիներ, խպանացիներ) ունագություններ էին կատարում հայերին պատկանող սուրբ վայրերի նկատմամբ: Թուրքական կառավարությունը, համեմատելով հայերի և եվրոպական մյուս ազգերի ունեցած կշիռը ու հեղինակությունը, համարյա միշտ պաշտպանում էր քրիստոնյա հզոր պետությունների հոգևորականների շահերը: Այդ պատճառով տուժում էր հայոց եկեղեցին: Խրիմյանի սրափ հայացը նկատում էր այդ բոլորը և կանխատեսում դրանից բխող բացասական հետևանքները. «Երուսաղեմի խնդիրը այնպես նի ընրոներ, թե սուլ Երուսաղեմի պատրիարքին կամ հոն տեղի քանի մը հայ բնակչաց կը վերաբերի, այլ ընդիանուր ազգին, որով Էջմիածնա կարողիկոսին և ինձ խոկ զիլովին»¹: Կ. Պոլսի պատրիարքը լավ գիտեր, որ հայերը Երուսաղեմում հաստատվել են մեծ զոհերի գննվ: Նա չի խարգում օմանյան պետության «Հատուր Հումայոնի» և «Հատուր Շերիֆի» 1839 և 1856 թթ. հայտարարած քարենորդումների ծրագրով: «Իբրև թե ազատ դարս մեջ կապրինք, կրոն, եկեղեցին ազատ է, իրավաց բռնություն չիկա, բայց հայերուն զոհ դեռ պետք է շարունակվի», գործում էր Խրիմյանը Երուսաղեմի պատրիարքին՝ խորհրդ տալով գործում էր Խրիմյանը Երուսաղեմի պատրիարքին՝ խորհրդ տալով գոր-

¹ Ե. Զարենցի անվան գրականության և արվեստի բանագարան (այսուհետև՝ ԳԱԹ), Խրիմյանի ֆ., գ. 141, էջ 25:

մեծ զգուշությամբ և դիվանագիտությամբ, Արքայան և Արքանայան տաճարները հայոց իրավասությունից դուրս չըդնելու, Բ. Դռան և «անողոքելի ոստիսաց» վրեժխնդրությունից զերծ պահելու համար: Նա լավ գիտեր, որ Ազգային ժողովն ու վարչությունը իրական և իրավական ուժեր չեն, որոնց վրա հենվելով հնարավոր լիներ լուծել ազգային խնդիրները. «Խորհրդությունը կուտամ անկեղծ մտերմաբար, շփուահել այնշափ Ազգային վարչության ոմին վրա. այդ երևակայական ուժը Բ. Դռան քով կապվելով չի կարե այնշափ խլրտիլ, զի ամուր շղթաներ զինքն պարավանդած են»¹: Նա համոզված էր, որ այդ մարտը շահելու համար անհրաժեշտ է խոհեմուրյուն և դիվանագիտություն:

Դրանով չի ափարտվում Կ. Պոլսի պատրիարք Խրիմյանի կապը Երուսաղեմի պատրիարքի հետ: 1873 թ. հուլիսի 14-ին Խրիմյանը նամակ է ուղարկմ պատրիարք Եսայուն, որի մեջ շոշափված հարցերը վերաբերում են ոչ թե կրոնական խնդիրների, այլ՝ տնտեսական: Երուսաղեմի Արք Հակոբյանց վանքն արքունի ճարտարապետից նվեր էր ստացել մի ազգարակ, որը նրան արժեցել էր 30-40.000 լիրա: Սակայն վանքի միարանությունն աշքարող էր արել ազգարակի մշակությունը, և դրանից ստացվում էին շնչին եկամուտներ: Անգամ հեռվից Խրիմյանը քաջատեղյակ էր Երուսաղեմի պատրիարքության տնտեսական կարիքներին և իր խորհրդներով ուղի էր նշում գործերը կարգավորելու համար: Նա զգուշացնում էր, որ ուստավորների նվիրատվությունները հետզինտե պակասում են, հետևաբար անհրաժեշտ է ունեցածը պահպանել և մշակել այնպես, որ դրանցից ստացվող եկամուտները հետզինտե ավելանան, և վանքը տնտեսապես բարգավաճի: Խրիմյանը մատնանշում է, որ մայրաքաղաքի մոտ գտնվող հողային կալվածներն ավելի մեծ արժեք ունեն մյուսների համեմատ, որովհետև նավահանգիստ ունեն և լավ ճանապարհներ, դրանց քերը դյուրին է սպառողին հասցնելը: Երուսաղեմի վերոհիշյալ հողային կալվածքն այդպիսի ազգարակ է, սակայն այն մեծ քերը չի տալիս, քանի որ նրա մշակումը կատարվում է նախնադարյան եղանակով՝ «Նոյ նահապետին արոր և խոփով»: Խրիմյանն առաջարկում է երկրագործության զարգացման հետևյալ ուղին. «Ինչպես ամեն

լույս Եվրոպային կը նդունենք, պես ու մշակութեան արուեստին գաղափարն և անկե վոխ առնումը և այս է միակ միջոցը, այսինքն՝ պես ու վուրաք, աճապարեք երկու հատ հասակավոր աշակերտներ դրկել ի Գերմանիա. մեկն հատկապես երկրագործութեան արուեստ սորվելու համար, մյուսն՝ մանկավարժութեան. մեկն՝ հացի առաստորեան, մյուսն՝ մտաց քարգավաճման: Այս երկու պետք Երուսաղեմի համար հոգի և մարմին են»²: Նախապես զգալով Երուսաղեմի պատրիարքի առարկությունները՝ այդ առաջարկություններն իրականացնելու նյութական դժվարությունների մասին, Խրիմյանը մանրամասն հաշիվ է կազմում, թե իննոց տարվա ընթացքում երկու ուսանող Գերմանիայում ուսանելու համար ինչքան ծախս կպահանջվի և համեմատում նրանց տված օգուտի հետ: Ազգի լուսավորության և երկրագործության զարգացման համար նա առաջարկում է դիմել նոյնիսկ արտակարգ միջոցների՝ վաճառել Արք Հակոբյանց տաճարի ոսկին ու արծարը և ձեռնարկել այդ գործի կատարումը: Խրիմյանը տեղեկացնում է Երուսաղեմի պատրիարքին, որ իր նախաձեռնությամբ Ազգային վարչությունը ծրագրել է Հայաստանի ամեն մի գավառից մեկ ընդունակ աշակերտ ուղարկել Գերմանիա՝ մանկավարժություն և երկրագործություն ուսանելու: «Հայոց ազգի ներկան ու ապագան բարվորելու համար ամենեն օգտակար և գորավոր միջոցն է այս»², փաստում է Կ. Պոլսի պատրիարքը՝ ընդգծելով այն մեծ դերը, որ կարող է կատարել ազգի համար լուսավորության և երկրագործության բարձր մակարդակը: 1873 թ. Խրիմյանը իրաժարվում է Կ. Պոլսի պատրիարքի պաշտոնից, սակայն չի խորոշ իր հարաբերությունները Երուսաղեմի վաճառքի միաբաններից:

1885 թ. Բ. Դռանը Վասպուրականի հոգեոր առաջնորդ Ա. Խրիմյանին իրեն «անհանգիստ» հոգեորականի, իրավիրում է Կ. Պոլսի՝ իր հսկողության տակ ունենալու համար: Օսմանյան մայրաքաղաքում նա չի դադարում ազգօգուտ գործեր կատարելուց. ընտրվում է Ազգային Ընդհանուր ժողովի կրօնական ժողովի ատենապետ, իսկ 1886 թ. բացարձակ քվեով ընտրվում է Ազգային ժողովի երեսփոխան, ապա՝ եկեղեցական համագումար-ժողովի ատենապետ:

¹ Նոյն տեղում, էջ 30:

² Նոյն տեղում, էջ 31:

1890 թ. հուլիսի 15-ի գում-գավոլի ցոյցը պատճառ դարձավ պատրիարք Խորեն Աշրօյանի հրաժարականին: Մընոլորտը Կ. Պոլսում խիստ շիկանում է: Այդ պատճառով համագումար-ժողովը գեկուցազիր-բողոք է ներկայացնում Բ. Ռուսը, բողոքում կայսերական կառավարությանը հայկական գավառներում հայ հոգևոր առաջնորդներին և բոլոր պաշտոնյաներին ոչ համաշափ վերաբերմունք ցուցաբերելու համար, մինչդեռ երկուսն էլ պաշտոնավարում են նույն հրովարտակներով: Համագումար-ժողովը բողոքում է, որ Բ. Ռուսն արգելում է սուրբ գրքերի ընթերցումը եկեղեցիներում, երկրում արգելվում են հայոց պատմության և քրիստոնեական հավատի վերաբերյալ գրքերը, արգելվում են օգտագործել «Հայաստան և Հայաստաննեայց եկեղեցի» բառերը¹: Բողոքագրում նշված էր. «Հայաստանի վարչական, դատական և ոստիկանական, ինչպես և տրոք բաշխման մեջ հայոց ազգը զրկված է վայելելու կենաց, ընչից և պատվո ապահովություն և անդորրություն»²: Համագումար-ժողովի բարձրաստիճան ինը հոգևորականներից այս փաստաթուրը կազմեցին և ստորագրեցին միայն չորսը՝ Ալբարի Խրիմյանը, Գարեգին Սրբանձտյանը, Գրիգորի Աղեարծյանը և Մատթեոս Խզմիրյանը: Չորսն էլ այդ հանդինության համար պատժվեցին և առաջինը՝ Խրիմյանը, որին ուստագնացության անվան տակ ստիպեցին մեկնել Երուսաղեմ: Նա, փաստորեն, կրկնակի աքսոր էր: 1890 թ. դեկտեմբերից «Արծիվ» Խրիմյանը փակվեց Երուսաղեմում «ճնճղովի փանողակի» մեջ: Արծիվյանց վանքի փանախցում նա գտնվում էր բուրքամետ պատրիարք Հարություն Վեհապետյանի աշալութ հսկողության տակ: Սակայն այդտեղ էլ արսորական Խրիմյանը հանգիստ չի նստում: Նրա հետ նամակագրական կայ են պահպանում արևելահայ և արևմտահայ հասարակական գործիչներ: Նա քաջատեղյակ էր երկրում կատարվող իրադարձություններին, գրադիմում էր նաև գրական գործունեությամբ: Տեղի տպարանում նա վերահրատարակեց «Հրամիակ Երկրին Աւտետեացը», բացատրելով, որ առաջին հրատարակությունն ամբողջովին սպառվել է: Մինչև երկրորդ անգամ հրատարակելը հեղինակը կատարեց

¹ Տե՛ս Հ. Կոստանդյան. Մ. Խրիմյան. հասարակական-քաղաքական գործունեությունը, Երևան, 2000, էջ 337:

² Ատեմագրությունը Ազգային ժողովո, 1890–1894, էջ 74:

մեծ աշխատանք. իր խոկ արտահայտությամբ, փոփոխություններ նշոցեց, բարձրացրեց և լեզվական, և գրական-իմաստասիրական հոգևոր մակարդակը: Առանձին հոդվածի նյութ կարող է լինել երկու հրատարակությունների համեմատությունը, սակայն դա կլինի գրականագիտական ու լեզվաբանական աշխատանք և չի մտնում մեր առջև դրված խնդիրների մեջ: Երուսաղեմում նա ձեռնամուխ եղավ մի այլ աշխատանքի ևս: Արտրական և աստանդական Խրիմյանը, տոշորվելով հայրենի Վասպորականի կարուտից, իրեն կերպավորեց Արճակում ծնված շինական Պապիկի մեջ և կյանքի դպրոցում իր տեսածն ու լածը, իր սովորածն ավանդեց բոռնիկներին՝ հայ երիտասարդներին. «Ով Վասպորական երկիր, իմ անձկալի հայրենիք, Պապիկ և Թոռնիկ հատկապես ձեզ համար զրեցի Երուսաղեմի Սիոնի լոռան վրա, խաչի հովանեաց տակ, դու կարդալով կտևենաս, որ Պապիկ Թոռնիկի նյութերը Վասպորական երկիր շինական ժողովովի ծաղկիներն քաղաք եմ, զոր փնջիկ կապելով և ահա ձերն՝ ձեզ կնվիրեմ»¹ («Պապիկ և Թոռնիկը» լույս տեսավ Էջմիածնում 1894 թ.):

Գրական գործունեությունը չեղ բավարարում արտորական գործի հոգեկան պահանջները: Հասարակական գործիչները ելք էին որոնում՝ նրան արսորից ազատելու համար: Դա հեշտ չեղ: Հնչակյան կուսակցությունը Ռուբեն Խանազատին ուղարկեց Երուսաղեմ, որպեսզի կազմակերպի Խրիմյանի փախուստը²: Այնքան մեծ էր նրա անվան հմայքը, փայելած ժողովրդականությունը, որ նրան առաջարկում էին հաստատվել եվրոպական որևէ ազատ երկրում և այնտեղից դեկավարել հայ ազգային-ազատագրական շարժումը: Խրիմյանը հրաժարվեց արկածախնդրական այդ քայլից, մասնավան՝ դա համարյա ամինար էր, որովհետև նա գտնվում էր խիստ հսկողության տակ. «Քրիստոսի ազատ քաղաքին մեջ ինչպես կաշկանդված եմ: Երկու անգամ լրտեսներ եկան Երուսաղեմ և երկար ժամանակ լրտեսեցին զիս»³: Խրիմյանն ընդամենը 6 ամիս էր Երուսաղեմում, երբ ինուազերը գոմեցին Ամենայն հայոց կարողիկոս S. S. Մակար սրբազնի մահը: Խրիմյանի հոգում առկայ-

¹ Խրիմյան Հայրիկ. Երկեր, Երևան, 1992, էջ 24:

² Ո. Խանազատ, Հիշողություններ Խրիմյանի մասին, Թիֆլիս, 1908, էջ 27–28:

³ Գ.Աթ, Խրիմյանի Փ., գ. 149, էջ 7:

ծում է հոյսի մի շող: Դեռ Մակար Թեղուտցու կարողիկոս ընտրվելու ժամանակ նա եղել էր կարողիկոսական ընտրելի: Այժմ ավելի մեծ էր ընտրության հավանականությունը: Էջմիածնում սկսվեց կարողիկոսական ընտրությունները կազմակերպելու տեսնդագին աշխատանքը: 1892 թ. մայիսի 5-ին Էջմիածնում կայացած կարողիկոսական ընտրությունների ժամանակ հոգեոր և աշխարհիկ պատգամավորների միաձայն բվեարկությամբ՝ 72 քվեով 72-ամյա Խորիմյանն ընտրվեց կարողիկոս Ամենայն հայոց: Սուլթան Արքու Համբդը ներժեց նորմնտիր կարողիկոսին ազատել նախ՝ արտօրից, ապա՝ բուրքական հպատակությունից, որովհետև արտակարգ «արտացավորյուն» էր ցուցաբերում Ռուսաստանի նկատմամբ, գգուշացնում ցարին, որ նորմնտիրը քաղաքականապես անքարենոյս է և ժողովրդական խրտումներ կառաջացնի նաև Արևելյան Հայաստանում: Միայն ռուսական ցարի խնդրանքից հետո, ընտրությունից մեկ տարի անց, սուլթանը Խորիմյանին ազատեց արտօրից և բուրքահպատակությունից, պահանջելով, որ վերջինս մեկնի իր պաշտոնատեղին, առանց ոտք յնելու բուրքական մայրաքաղաք: Երկարատև ճանապարհորդությունից հետո, ընտրությունից 17 ամիս անց, 1893 թ. սեպտեմբերի 26-ին՝ Վարագա սուրբ խաչի տոնի օրը Խորիմյանն օգվեց կարողիկոս Ամենայն Հայոց: Երկու տարի թափուր մնացած կարողիկոսական նատավայրում առաջացել էին բազմաթիվ կնճռու հանգույցներ, որոնց լուծումն սպասվում էր նորմնտիր Վեհափառից: Այնքան սերտ էին Խորիմյանի հարաբերությունները Երուսաղեմի միաբանության անդամների հետ, որ նորմնտիր Հայրապետը նրանցից Մակար Եպիսկոպոսին նամակով հրավիրում է Մայր Արքու և հաստատում Էջմիածնի տաճարի լուսարարապետի պաշտոնում: Նրա վրա է ընկնում Մայր Արքովի սրբազն անորմների ցուցակագրումը, պահպանությունը և ըստ հարկին գործունեության ժամանակ հոգեորականների տրամադրության տակ դնելը:

Խորիմյանին մեծ շափով մտահոգում էր Երուսաղեմի վանքի մշակութային հարատությունը հայ հասարակությանը նատչելի դարձնելու գաղափարը: 1866-ից մինչև 1877 թ. Երուսաղեմի պատրիարքությունն ուներ իր պաշտոնական ամսագիրը՝ «Սիոն» հանդեսը: Հայոց հայրապետը ջանքեր էր գործադրում դադարյալ «Սիոն» վերստին իրատարակելու համար: Գ-Աթ-ում՝ Խորիմյանի ֆոնդում, պահպանվում են մի քանի նա-

մակնելը, գրված անմիջապես հայոց Հայրապետի ձեռքով՝ ուղղված Երուսաղեմի միաբանության տարրեր անդամների: 1899 թ. մարտի 9-ի թվակիր նամակն ուղղված է Գ-Աթոր Եպիսկոպոս Երեցյանին, որը մինչ այդ եղել էր Էջմիածնում, պատվեր ստացել Հայրապետից, որ Երուսաղեմ հասնելուն պես ձեռնամուխ լինի «Սիոն» վերահատարակության գործին: Սակայն անցել էր բավական ժամանակ, և ամսագիրը չէր հրատարակվում: Խորիմյանը վերատին անհանգուացնում է Եպիսկոպոսին՝ իր խնդիրը-պահանջով. «Ես ամենայն հոյսով սպասում էի, որ առաջարկութիւն ընդունելուրին գտնար, որ Ս. Հակոբյանց Արողին տակ և միաբանական եղբարց գրասիրութեան և աշխատասիրութեան փառքն էր, բողում այս մեծ հոգեկան օգուտ, որ ընծայում էր շրջակա ժողովրդին և մասնավանդ Կիլիկիո մոր աշխարհին»¹: Սակայն կարողիկոսի հոյսերը չարդարացան: Երուսաղեմի պատրիարք Հարուրյուն Վեհապետյանը, պատճառաբանելով նյութական սույ պայմանները, գործնական քայլեր չէր ձեռնարկում ամսագրի վերահատարակության համար: Այս անգամ Խորիմյանը խոստանում է միանգամից վճարել 100 քածանորդագին, իսկ առաջին բվի լոյս ընծայելուց հետո՝ կրկնապատկել գումարը: Նա գիտեր, որ Ավետյաց երկիրը և Սր. Հակոբյանց վանքի հարուսականացնադարանը «Սիոն»-ին կարող են մատակարարել բազմաթիվ գեղեցիկ հողվածներ, որոնք կհետաքրքրեն ընթերցողներին: Որոշ ժամանակ անց (այս նամակը ամսարի չունի) կարողիկոսը դարձալ գրում է Գ-Աթոր Եպիսկոպոսին, բայց, ինչպես երևում է բոլորականությունից, նա Երեցյան սրբազնը չէ: Այս նամակը ևս շշափում է «Սիոն» հրատարակության խնդիրները: Ծառ վշտանալով, որ դարձարել է հրատարակվել նաև Արմաշի վանքում լոյս տեսնող «Հույս» կրոնաբարոյական և իմաստասիրական ամսագիրը, կարողիկոսը նկատում է, որ մամուլի աշխարհիկ օրգանները, հատկապես Փարիզում հրատարակվող Արշակ Չոպանյանի «Անահիտ» ամսագիրը հարձակումներ են սկսել հայ Եկեղեցականության դեմ, և նրանց պատասխանում է միայն Սլմիքարյան միաբանության պաշտոնական օրգան «Բազմավեսպը»: Խորիմյանը կարծում է, քանի որ «Անահիտ» հարձակումներն ուղղված են Կ. Պոլսի այդ

¹ Նոյյն տեղում, գ. 9, նաև՝ «Էջմիածնի», 1981, № 1, էջ 27:

ժամանակի պատրիարք Ա. Օրմանյանի դեմ, այսինքն՝ արևմտահայ հոգևորականի դեմ, պատասխանողները և պաշտպանողները ևս պետք է լինեն արևմտահայերը: Այսիրայան միաբանության անդամ հայր Սիմեոն Երեմյանը անպատճախան չի բողոքում «Անահիտի» հարձակումները, սակայն եթե պատասխանը հնչեր Երուսաղեմից կամ Արմաշից, ավելի ճիշտ կրնկավեր այն: Այս անգամ ևս հայոց Հայրապետը դրամական օգնություն է խոստանում Երուսաղեմին, ապա հայտնում է, որ պատկառելի մի գումար, իբրև գրավ, պահել է իր մոտ, անսագիր լույս ընծայելուց հետո անմիջապես կրտարկի այն: Խրիմյանը վշտանում է, որովհետև «Երուսաղեմ դիրութիւն ունի, քանի որ յուր ձեռքի տակ հարուստ մի տպարան կա: Ձեռնիաս գրողները ևս պակաս չեն միաբանութեան դասեն»¹:

Երրորդ անգամ Խրիմյանը դիմում է Երուսաղեմի միաբանության այլ անդամի՝ Մամբրե եպիսկոպոսին: Այս նամակը շնայած վերաբերում է նոյն խնդրին, սակայն ոճը լրիվ տարբերվում է մյուս երկուսից: Սա կարծեն դրամատիկական փոքրիկ պատկեր լինի, որի ռեժիսորը հայոց Հայրապետու է, իսկ գործող անձինք՝ Երուսաղեմի միաբանության ակնառու անդամները, նրանց քվում նաև պատրիարք Հարություն Վեհապետյանը: Նամակում արտահայտված է նաև ալեզարդ Հայրապետի գրական անուրանալի ձիրքն ու նուրբ հումորը: Նամակում Վեհապետը հրահանգում է Մամբրե սրբազնին իր խոսրին բնարան դնել: «Վասն «Սիմեոն» ոչ լոեցից և վասն Երուսաղեմի ոչ ներեցից: Այնուհետև դու շարե, փաստաբան վասն «Սիմեոն» կրկնակի հրատարակութեան: Եթե մեռեալ և բաղեալ «Սիմեոն» հրաման տար, որ զվեմն ի բաց առնուն, դու այն ժամ գոյյա բարձրաբարբառ. «Արի, եկ արտաքս, ով Սիմեոն, ինքիք եղեա թե նուցի ի տապանիդ անխոս, անբարբառ»²: Խրիմյանի սցենարի մեջ այս խոսքերին զայրացած պատճախան է տալիս Հարություն պատրիարքը, թե ինչպես է համարձակվում Երուսաղեմի նախկին աքտորականը, որին ինքը փակել էր Մակարի խուցի մեջ, իրեն առաջարկություն անել հրամանի ոճով: Հերթով խոսք են վերցնում միաբանության անդամներ Սահակ և Ներսես եպիսկոպոսները, Անդրեաս փարդապետը:

¹ Գ.Աթ, Խրիմյանի ֆ., գ. 11, նաև՝ «Էջմիածին», 1981, № Է, էջ 29:
² Գ.Աթ, Խրիմյանի ֆ., գ. 68, նաև՝ «Էջմիածին», 1981, նոյն տեղում:

Վերջինս խնդրում է պատրիարքից անպայման սկսել «Սիմեոն» վերաբանութակությունը, որ միաբանության «պարապ-սարապ» անդամները գրելով զբաղվեն, ոչ թե նստածեն ուտելու և քալանելու մասին: Ըստ սցենարի, այդ ժամանակ Մամբրե եպիսկոպոսը պետք է հաներ Վեհապետի ուղարկած 500 ոուրին՝ հանձներ պատրիարքին, որ վերջինս ստանար «Սիմեոն» վերաբանութակության իրավունքը և գործը պետք է ունենար հաջող վախճան: Սակայն Խրիմյանը նամակը վերջացնում էր հուսախարությամբ, կարծես նաև սպառնալիքով. «Վայ, Հայրիկի բախտին, որ բախեց աշքի լոյս և զրեց այս նամակ յուր անշափ գրադանաց մեջ. Եթե տակավին չիաջողվի բան և դու գիտես զբեզ և երեքին բարեկամներդ պատճախանատու կճանաչեն»¹: Տեղին էր նրա կանխազգացումը. «Սիմեոն» չվերաբանապետակիցները: Նրա երկրորդ շրջանի հրատարակությունն իրականացավ Հայրիկի մահից բավական ուշ՝ 1927 թ., Եղիշե Դուրյան պատրիարքի օրոք, խմբազգապետությամբ Բարկեն եպիսկոպոս Կյուլեսերյանի:

Վերը բվարկած փաստերն ապացուցում են հայկական Երուսաղեմի հետ Ամենայն Հայոց Հայրիկի ունեցած սերտ կապերի մասին և կարծես հուշում են մեր նվիրապետությունների հոգևոր դեկապարներին՝ օրինակ վերցնել Հայոց Հայրիկից:

Պատմա-Քանասիրական հանդես, 2006, № 2, էջ 79–88:

ՆՎԻՐԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐ

2006ին «Սիմեոն» հրատարակությունը Երևանում լոյս ընծայեց Եղիշե Պահելավունու «Հուշամատյանը», որը կազմել և խմբազրել է սփյուռքահայ մտավորական, ազգային-հասարակական գործիչ Նորայր Պակապունին՝ «Հուշամատյան»-ի հեղինակի որդին: Վերջինս շնորհակալ գործ է կատարել ոչ միայն իր ծնողի հիշատակը հարգելու, այլ, որ ավելի կարևոր է, մեր ժամանակների հայ երիտասարդությանը

¹ Գ.Աթ, Խրիմյանի ֆ., գ. 68, նաև՝ «Էջմիածին», 1981, № Է, էջ 31:

ծանոթացնելու և հաղորդակցելու անցյալ դարասկզբի նվիրական դեմքերի մի մեծ աստղաբոյլի հայրենանվեր գործունեության հետ: Սփյուռքի հայկական զարդօջախներում ճանաչված նշանավոր գործիչը՝ Եղիշե Պահլավունին, դեպքերի բերումով հայրենիքում ծանոր է միայն, ժամանակաշրջանն ուսումնասիրող մտավորականների ոչ մեծ խմբի, ովքեր ՀՀ արխիվի տարրեր ֆոնդերից հայտնաբերել են բազմարիբ վավերագրեր, որոնք վերաբերում են նրա գործունեությանը: Այս «Հուշամատյան»-ը գալիս է լրացնելու այդ բացը և ընթերցող լայն հասարակայնությանը ծանոթացնելու 20-րդ դարասկզբի նշանավոր հասարակական-քաղաքական գործիչ, կամավորական ջոկատների մարտիկ, Բարվի և Գանձակի հայության ինքնապաշտության կազմակերպիչ ու դեկանավար, Հայաստանի առաջին Հանրապետության կայացմանը իր նախատը բերող, խորհրդային արտակարգ հանձնաժողովի կողմից հալածական դարձած, ապա քաղաքական վտարանդի և հայրենաբաղդ Եղիշե Պահլավունու կյանքին ու գործունեությանը: «Հուշամատյան»-ը կազմող և խմբագրող Նորայր Պահլավունին նյութերը բաժանել է մի բանի մասերի:

Առաջին մասը՝ «Անդրադարձներ և վկայություններ» խորագրով, պարտնակում է ժամանակի հանրահայտ գործիչների հուշ հոդվածգնահատականները Եղիշե Պահլավունու մասին, որ հոր հիշատակի նկատմամբ սրբազն երկյուղածությամբ լի որդին հավաքել է ժամանակի տարեզրբերից, Սփյուռքում տպված տարրեր հատորներից, հեղափոխական ալբոններից, Բոստոնում հրատարակված «Հայրենիք» ամսագրից: Հոդվածների մի մասը գրված է Եղիշե Պահլավունու մահվան առիթով, բայց այն գերծ է հավոր պատշաճի ասված «գովասանական» խոսքերից. այդ հոդվածներում բացահայտում են փաստեր, վեր են հանդիպում Եղիշեի անձնությաց ծառայությունները իր ժողովրդին՝ նրա ճգնաժամային օրիսամական օրերին, մասնակցությունը Անդրանիկի կամավորական ջոկատին, գործունեությունը Բարվի հայության ինքնապաշտպանական մարտերին:

«Հուշամատյանի» երկրորդ մասը Հայաստանի Հանրապետության ազգային արխիվում պահպանված Եղիշե Պահլավունուն վերաբե-

րող վավերագրեր և փաստարդեր են, որոնք որդի Պահլավունին բրոնաջան աշխատանքով հայտնաբերել են զետեղել գրքում:

«Մատյան»-ի երրորդ բաժնում Եղիշե Պահլավունու հուշերն են Բարվի հերոսամարտի մասին: Դա գրքի ամենահետաքրքիր բաժինն է, որտեղ ընթերցողի առաջ հառնում են բազմարիվ հայտնի և անհայտ հերոսներ, անձնուրաց մարդիկ, ովքեր առաջ խոսնում են բազմարիվ հայտնի և անհայտ վերաբերությունների մասին իրենց շեմանական պատկերներունից: Ռոստոնի մասին իրեն Հ.Յ.Դ. դեկանավար գործիչ, Ստ. Շահումյանի մասին իրեն Բարվի կոմունայի դեկանավար և հոչակավոր համայնավար (կոմունատ), շատ է գրվել, շատերն են կարդացել Արքահամ Գյուլիսանդյանի հուշերը այդ ընթերցական և հերոսական օրերի մասին, բայց այնպիսի մանրամասնություններով, ինչպիս նկարագրություններով, ինչպիս Եղիշե Պահլավունին, մարդկային բնավորության գծերի այնպիսի բացահայտումով և մտերմիկ շեշտադրությունով գրված այդ հուշապատումի ամեն բազում է ընթերցողի կողմից և բվում է անցյալի հերոսական օրերի նոր էջ է բացվում ընթերցողի առաջ: Այդուղի են նաև Ալյոշա Զափարիհեն և Նորդանյանը, տարրեր ազգությունների պատկանող, բայց մարդկային վեհ հատկանիշներով, ազնվորյամբ և առաքինութեամբ հայտնի դեմքեր: Միայն դրական հատկանիշներով մարդիկ չեն Պահլավունու հետ շփողները՝ Մաղալով, Ռիքակին, Ամիրով, և որիշներ, վրացի, ռուս, հայ, դեմքեր, որոնք գործում են սեփական շահերի համար, որից տուժում է ժողովուրդը:

Այդ բաժնի մեջ, իմ կարծիքով, ամենակարևորն այն է, որ ընթերցողի առաջ հառնում և ամբողջանում է Ռոստոնի կերպարը, ամենաօրինական պահերին անգամ նա մնում է մեծատառով մարդ, խսկան դեկանավար ու առաջնորդ:

... Ծարավ է նահանջող ամբողջ զորքը ու ժողովուրդը: Ռոստոնն իրեն հատկացված ջուրը կում-կոս բաժանում է վիրավորներին, կանաց ու երեխաներին, իրեն հատկացված կառքը զիջում է տեղի բա-

հաճայի կնոջն ու երեխաներին, իսկ ինքը զինվորների հետ ոտքով հաղթահարում է ամենադժվարին ճանապարհը։ Այդ նկարագրությունները Եղիշե Պահլավունու գրչի տակից հորդել են այնպիսի անկեղծությամբ և զինվորին հատուկ շիտակությամբ ու պարզությամբ, որ ընթերցողը չի կասկածում նրա ոչ մի խոսքի վրա, որ նա խորհում է՝ Ռուսությունի նման գործիչներ են պետք բոլոր ժամանակներին դժվարությունները հաղթահարելու հաճայ։

Ընթերցող պատմաբանի համար մեծ կարևորություն ունեն «Հուշամատյանում» գետեղված Եղիշե Պահլավունու ճշտումները «Հայրենիք» ամսագրի 1925 թ. 8, 9, 10 համարներում լույս տեսած Ս. Մելիք-Յոլշյանի՝ Բարվի հերոսամարտի մասին գրած հուշերի վերաբերյալ։ Հեղինակը, իբրև ռազմական իրադարձությունների անմիջական մասնից և ականատես, պատասխանատվության մեծ զգացումով քննարկում է Վերոհիշեալ հուշերը և նատնանշում նրանում տեղ գտած պատմական անճշտությունները։ Համոզիչ փաստերով նա ապացուցում է՝ քանի որ Մելիք-Յոլշյանը չի մասնակցել ռազմական գրծություններին, պատմական դեպքերին և դեմքերին, տվել է ոչ ճիշտ մնանարանություն և արժևորում, որոնց արդյունքում շատ փաստեր աղավաղվել են։ Այդ ճշտումները առավել կարևոր են մեր ժամանակների և հետագա ընթերցողների ու պատմաբանների համար պատմական ճշմարտությունն վեր հանելու և հետագայ սերունդների սեփականությունը դարձնելու առումով։ «Հուշամատյան»-ի կարևոր էջերից են նաև «Կարսի անկումից հետո» խորագիրը կրող հուշերի շարքը։ Ընթերցողը, մանավանդ հայրենաբնակը, սրտի անհուն ցափով և կսկիծով է կարդում այդ էջերը (էջ 163–193), քանի որ դա մեր երկրի ոչ վաղ անցյալի ողբերգական իրադարձությունների նկարագրականն է։ Այդ քաժնում ընթերցողը հաղորդակցվում է տպետական իշխանության հաստատման առաջին տարիներին և հետագայում մայր երկրում մոլեզնող արտակար հաճանաժողովի կատարած բռնություններին և անօրինականություններին, սրտի ցափով մասնակից դառնում այն դեպքերին, երբ հայրենանվեր գործիչները ենթարկվում են դաժան կտտանըների...։ Սակայն նույնիսկ այդ իրադարձությունների ժամանակ ընթերցողի առաջ հառնում են նոր դեմքեր։ Ընթերցողը հանդիպում է ամենմասն «կո-

մունիսատների», բայց ամենից առաջ մեծատառով մարդկանց՝ Ալ. Մյասնիկյանի, Հ. Բժշկյանի (Գայ), Ս. Տեր Գարբիկյանի, Աշ. Հովհաննիսյանի հետ, որոնց համար հայրենիքը և պատմական ճշնարտություններ վեր է կուսակցական ամեն մի պատկանելությունից։ Սև հետաքրքրությամբ է ընթերցվում Դաշնակցության դատավարութեան գործընթացի նկարագրությունը։ Դատավարության ժամանակ Հ. Յ.-ի դատապաշտպանի դերում հանդէս է գալիս ականավոր պատմաբան, պետական-քազարական գործիչ Աշոտ Հովհաննիսյանը, որն իր ելույթում մանրամասն քննարկում է Հ. Յ. անցած ուղին, արժևորում նրա ներդրությը աղգային-պատագրական շարժման մեջ, նշում 1911–1912 թթ. ցարական կառավարության կողմից կազմակերպված Հ. Յ. դատավարությունը և համեմատական եզրեր գտնում «կոմոնինիստական» կուսակցության և ցարական կառավարության կազմակերպված դատավարությունների միջև։ Արամայիս Նրգնիլյանի՝ Աշոտ Հովհաննիսյանին ուղղած հարցին, թէ ի՞նչ է նշանակում այդ պաշտպանական ելույթը, միքեւ «կոմոնինիստները» պետք է սպառեն Դաշնակցությունից, վերջինս առանց երկմտելու պատասխանում է։ «Հարկավ, մենք այդ կուսակցությունից տակավին սովորելիք շատ քանի ունենք։ Ամոք և պակասություն չէ սովորելը»։ Ես, որ տարիներ շարունակ աշխատել եմ ականավոր պատմաբանի հետ, նրա վերջին սաներից եմ և համարում եմ նրան իմ հոգևոր հայրը, այդ տողերը կարդացի այնպիս, ասես լսեցի նրա ձայնը, տարիների հեռվից նա ասում էր նոյն խորերը, ինչ 1960-ականների վերջին, երբ Կոմկուսի ժողովներում պահանջում էր վերանայել 20-ականներին նրա ընդունած որոշումները Հ. Յ.-ի մասին և մեծ գիտնականի հասցեին այդտեղ հնչում էին նոյն մեղադրանքները, ինչ 20-ականներին։ Ակամայից մտածում եմ, գուցե այդ պաշտպանական ելույթը իր դերն ունեցավ Սովետական Հայաստանի Կոմկուսի առաջին քարտուղարին 30-ականների վերջին Սիրիի համակենտրոնացման ճամբարությամբ արգելափակելը...

«Հուշամատյան»-ն ավարտվում է, «Իգդիրյան հիշատակներ» խորագիրը կրող քաժնուվ։ Եղիշե Պահլավունու դպրոցական իշխողություններն են՝ լի դրական և բացասական կերպարներով։ Ահա զավառապես Բոգուալավուկին՝ հայտնի հայատյացը, որն իր գործունեությամբ

հարուցում է նոյնիսկ դպրոցականների ատելությունը. նրանք իրենց մանկական հոգու ողջ կարողությամբ դիմադրած են կանգնում և նրան, և նրա համախոհներին՝ հայ և ոռու կամակատարներին: Սակայն այդ բաժնում ևս կան նվիրական դեմքեր. ահա Կոմիտաս Վարդապետը, որն ամեն տեղ կատարում է իր հայրենանվեր առաքելությունը, ձայնագրում է ժողովրդական երգեր և փրկում կորստից: Ահա նաև Ավետիս Անարքունյանը, որը 1896 թ. Էգդիքի դպրոցի տեսուչն էր, աշակերտների սիրելին և նրանցից մեկին՝ մանուկ Եղիշեին «կնքել» էր հոների առաջնորդի մականունով:

«Հուշամատյան»-ը ժամանակի դեպքերի, դրական ու բացասական կերպարների հետ ընթերցողի համար ամբողջացնում է մի այլ կերպար, որը շնայած իր մասին ոչինչ չի ասում, սակայն երբ խոսում է մյուսների մասին, լավի և վատի վերաբերյալ արտահայտում իր կարծիքներով բացահայտում է իր մեծ հոգու աշխարհը. Եղիշե Պահլավունին է նա՝ հուշերի հեղինակը, իր ավանդական հայկական բազմանդամ ընտանիքով, գորովալի ծնողներով, քոյլերով ու եղբայրներով: Ժամանակի համեստ մտավորականը, ազգային, քաղաքական ու ռազմական գործիչը, հայրենիքին իր կյանքը նվիրաբերած, հայրենիքից վտարանդի ու հայրենաքաղձ... Ինքը միանգամայն արժանի է, որ իր մասին իմանան ընթերցողների լայն շրջանակներ: Ուզում ենք նշել գրքի սկզբում «Քրատարակչության կողմից» ստորագրված ընդամենը մեկ էջ խիստ տարադրումակ և ջերմ կարծիքը գրքի մասին և պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր ՀՀ ԳԱԱ բրոֆակից անդամ Աշոտ Մելքոնյանի առաջարանը, որը զիտական գնահատական է տալիս հուշերի հեղինակին, նրա կատարած հայրենանվեր գործունեությանը և ժամանակաշրջանին, արժեորում «Հուշամատյան»-ը կազմողի և խմբագրի՝ Նորայր Պահլավունու կատարած գործը, նրա դաստիարակիչ նշանակությունը այսօրվա հայ երիտասարդության համար:

Ասպարեզ, Լուս-Անցելես, 7 փետրվարի, 2007:

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ ՍԿՐՏԻՉ ԽՐԻՍՏԱԿԱՆ ԽՍԱՏԱՍԻՐԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

19-րդ դարի հայ հասարակական-քաղաքական, հոգևոր-մշակութային կյանքը հարուստ է ականավոր գործիչներով: Նրանց մեջ կան դեմքեր, որոնցով կարող ենք բնորոշել իրենց ամբողջ ժամանակը: Այդ շարքում ուրույն տեղ ունի Սկրտիչ Խրիմյանը, որի գործունեությամբ իրար կապվեցին Արևմտյան Հայաստանի ամենահայաշատ վայրերը՝ Վասպուրականն ու Տարոնը, ապա արևմտահայ մշակութային կենտրոն Կ. Պոլիսը, նաև Արևմտյան Հայաստանի բոլոր նահանգները: 42-ամյա Խրիմյանը Տարոնի հոգևոր առաջնորդի պաշտոնում այնպիսի ջանքեր գործադրեց տարբնահայության հարկային բեռլ թերևացնելու գործում, որ նրանց կողմից արժանացավ «հայրիկ» պատվամունին: Առաջին անգամ Արևմտյան Հայաստանի տարածքից Կ. Պոլսի պատրիարքը ընտրված Խրիմյանը արևմտահայության հարտահարությունների հարցը դարձրեց Ազգային ժողովի քննարկման առարկա, և Բ. Դուռ ներկայացրած նրա տեղեկագրերը դարձան հայկական հարցի հիմքը: Տարոնահայության հայրիկը հետազայտմ դարձավ Ամենայն Հայոց Հայրիկ և իր ամբողջ կյանքում չխտորեց ժողովրդի հայրը լինելու իր անապակ ուղղությունը: Իր գործունեության ընթացքում, շնայած խիստ ծանրաբեռնվածությանը և բազմազբաղությանը, Խրիմյանը գրել է նաև աշխատություններ, որոնք իրենց հետքն են բոլել հայ հասարակական մտքի վրա: Դրանցից առաջինը կարելի է համարել 1876-ին լոյս տեսած «Ծամանակ և խորհուրդ յուր» աշխատությունը. այն գրվեց օսմանյան սահմանադրության ընդունման առիրով: «Նոր օսմանների» դեկավար Սլրդիան փաշան իր հայ բարեկամ Գրիգոր Օտյանի օգնությամբ գրեց այդ փաստաթուրը, իսկ խորաման Արքուն Համիլոն նրա աջակցությամբ գահեծեց արեւ Արքուն Ազիզին, ապա՝ Մուրադ V-ին, դարձավ սուլյան և մի հարվածով թուրքիան հայտարարեց սահմանադրական միավետուրյուն: Թուրքական սահմանադրությունը հոյսերի, ակնկալիքների, տարակույսների և հարցականների շարք առաջարեց հայ գործիչներին, որի արտահայտությունը դարձավ իրավարակախոսական և իմաստափրական հարցապետություններ պարտնակող այս երկը, որտեղ Խրիմյանը

գծում էր իր պատկերացրած պետական վարչակարգի մի քանի հասկանիշները: Օսմանյան կայսրությունը նա համեմատում է Խոռոմեական ստրկատիրական պետության հետ. պատահական չէր այդ համեմատությունը: Խրիմյանը գտնում էր, որ չնայած ժամանակաշրջանների մեծ տարրերությանը, երկու կայսրության մեջ էլ ուսնահարված են եղել և շարունակվում են ուսնահարվել բազմաթիվ ժողովուրդների իրավունքները: Սպասումներ, բայց և տարակույսներ ունեցող Խրիմյանը մտորում է՝ արյո՞ք հոչակված սահմանադրությունը ի գորու է լինելու վերացնել ազգային խորականությունը, հավասարություն սահմանել տարրեր կրոններ դավանողների միջև, որպեսզի մահմեդական և քրիստոնյա ազգերը «իրար ողջունեն իրեն համարադարացի ժողովուրդը»: Հեղինակը դնում է պահանջների մի շաբթ, որն ընդգրկում է կյանքի բազմաթիվ ոլորտները. հավասարություն՝ իրավունքների և պարտականությունների, հայրենիքի ժառանգության, նրա պաշտպանության և քաղաքացիության մեջ: Կայսրությունում ապրում են բազմաթիվ ժողովուրդներ, որոնք ունեն անհամար պարտականություններ, սակայն զրկված են տարրական իրավունքներից: Ներկայացնելով ժողորդիայի հասարակական կյանքի այդ հորի երևոյթները, Խրիմյանը գտնում է, որ պետությունն էլ մի մարմին է, որի «վերքերը նեխել և փուել են», անհրաժեշտ է վիրահատական միջամտություն՝ նեխած մարմինն առողջացնելու համար: Ըստ Խրիմյանի, օսմանյան սահմանադրության հոչակումը այդ վիրահատական գործողությունն է, որի շնորհիվ «նեխած» ժողորդիան բռնելու է առողջանալու ճանապարհը: Ժվում է, հեղինակը հավատում է սահմանադրության հոչակումով ժողորդիայի առողջանարուն և իրավական պետություն դառնալուն: Սակայն հետագա շարադրանքում արտահայտվում են հեղինակի կասկածները. Խրիմյանը մտորում է սահմանադրությունը ուժ կունենա^a բռնելու ժողովովի հարստահարիչների ձեռքը, վերացնելու կողոպտիշներին, սահման ու պատճեշ կդնի^b կաշառակեր դատավորների առաջ, որ չընաբարեն «զրկյալ բողոքովին իրավունքը»: Ժողորքական սահմանադրությունը Խրիմյանը համարում է սուլ միջոց, որից օգտվելով ժողովուրդը պետք է պայքարի բռնության դեմ, օրենքների եղծման դեմ, հարստահարողների և կողոպտողների դեմ. «Գիտցիր, որ ազատ օրենք զբեզ չի փրկեր, եթե դու դարձեալ ստրկու-

թեամբ վարուիս քո ոսխ դատախազիդ առաջ»¹: Ժողովրդին առաջին օրինակ տվողը հեղինակն է, որն աներկյուղ հայտարարում է. «.... այլս չնմ կարող իին ծառայական ստրկութեամբ խոսիլ»: «Նեպքերի հետագա ընթացքն ապացուցեցին, որ հիմնավոր էին Խրիմյանի կասկածներն ու տարակույսները: Որոշ ժամանակ անց Համիլոր պաշտոնագրիկց Միութին, արսորեց, որտեղ էլ սպանվեց և սկսեց միանձնյա դեկավարությունը: Վանի շուկայի իրդեհը 1876 թ. վերջում, Ալաշկերտի հովտի մոտավորային 30 հայկական զյուղերի բնակչության կոտորածի կազմակերպումը շեյս Զալպէդյինի միջոցով 1877–1878 թթ. ոսու-բուրքական պատերազմի ընթացքում ցույց տվեցին, որ սովորան բռնել է հայերի բնաջիջման քաղաքականության ուղին: Իրավարձությունների արյունը եղավ Խրիմյանի հոգում ժայրքած իրաբուխը, որի արտահայտությունն էին «Վանգույժն» ու «Հայույժքը»: Այդ իրավարակախտսական գործերում Խրիմյանի հոգում աստիճանաբար հաստինանում էր ըմբռատության գաղափարը. նա դատապարտում է անմոռնչ հայությանը, «զոհեաց կավ» համարում, զտնում, որ «աղարտվում է մարդկության ազատ պատիվը», մարտահրավեր նեսում նրան. «Դեռ պիտի կոտորվիք, դեռ պիտի մորքվիք... քանի որ անգեն, անելջյուր, անսապար կապրիք, դուք ճարդ եք, ձեռք ու բազով ունեք...»²: 1876 թ. դարձյալ Կ. Պոլսում լոյս տեսավ Խրիմյանի «Դրախտի ընտանիք» աշխատությունը: Ըստ հեղինակի, ընտանիքը պետության հիմքն է. ամուր է ընտանիքը, ամուր է նաև պետությունը: Ազգի հարատևությունը և առողջությունը պայմանավորված է առողջ և ամուր ընտանիքով: Խրիմյանի կարծիքով ընտանիքը մի փոքր պետություն կամ քաջավորություն է, որ ծննդները կառավարում են ընտանիքը: Սակայն ստորական պետությունից այն տարբերվում է նրանով, որ այդուել չկան ուստիկաններ ու զորք, բացակայում է բռնությունն ու գալազանը, տիրում է հայրական սերն ու մայրական գորովքը: Ծնողների գործերը զավակների համար կենդանի օրինակ են և դատահարակության առաջին պայման: Ժողովրդի առաջինությունը, զրությունը Խրիմյանը կապում է ընտանիքի ամրության և դաշտանած քարոյական արժեքների հետ: Ընտանիքին վերաբերող բազ-

¹ Մկրտիչ Խրիմյան, ժամանակ և խորհուրդ իր, Կ. Պոլս, 1876, էջ 12:

² Խրիմյան Հայրիկ, Երկեր, Երևան, 1992, էջ 444:

մաքիվ հարցեր են քննարկվում այդ աշխատության մեջ. սոցիալական հավասարության; նոր ընտանիքների ստեղծման, արյունակցությունից զերծ ամուսնության, ընդգծելով, որ այդ պայմանը ոչ միայն հայ եկեղեցու պահանջն է, այլև բժշկության փորձը: Աշխատության մեջ հեղինակը բազմարիվ անգամներ ընդգծում է ընտանիքում կնոջ և տղամարդու ունեցած հավասար իրավունքները, այդ պատճառով էլ պահանջում, որ կինն ունենա համապատասխան կրթական մակարդակ: Մեծ է կնոջ դեռ ընտանիքում. «Կինը իր ամուսնու ազատ ընկեր և հավասար լծակիցն է ամենայն իրավամբ»¹: Կնոջը տալով տղամարդուն հավասար իրավունքներ, Խրիմյանը նրա վրա դնում է մեծ պարտականություն զավակների կրթության և ընտանիքի տնտեսությունը վարելու գործը: Այդ ամենին հետ միասին Խրիմյանը բացառում է կնոջ հասարակական գործունեությունը, որ նա «քուե տալու իրավունք չունենա» (այսինքն՝ ընտրական իրավունք) եւ նրա առաջ փակ լինի գիտության բնագավառը. «Կին կարող չէ Նիստոն և Հերշել լինել երկնից աստեղատունը դիտելու համար»²: Սնացած բոլոր բնագավառները նա բաց է համարում կնոջ համար: Այստեղ արտահայտվում է Խրիմյանի սահմանափակությունը, հակասականությունը, հավատարմությունը ժամանակի շափանիշներին: Բոլոր դեաքերում հեղինակը պետության և հասարակական կյանքում ամենազլաւագոր դերը հատկացնում է ընտանիքին. «Մեր ընկերական աշխարհին բովանդակ շենքը ամուսնական և ընտանեկան պատուանդանին վրա հաստատուած է. ժողովուրոց ուորը և պետութեան զահերը նորա վրա դրուած են. եթե քանդուի այս պատուանդանը՝ ժողովուրդ եւ զահերը ի միասին կը տապալին»³: Այս աշխատության բարոյական դասը այժմ էլ ունի ժամանակակից հնչեղություն և հաստատում է հավերժ իին ու նոր բարոյական արժեքներ:

Հայկական հարցը մեծ պետությունների դիվանագիտությանը ներկայացնելու նպատակով Եվրոպա մեկնած Խրիմյանը վերադարձից հետո, 1878 թ. Կ. Պոլսում լույս ընծայեց նոր աշխատություն՝ «Սիրաք ու Սամուել» խորագրով. այն ուներ լրացուցիչ վերնագիր՝ «Բարի հոր

¹ Նոյն տեղում, էջ 245:

² Նոյն տեղում, էջ 248:

³ Նոյն տեղում, էջ 206:

կրթական դասեր»: Աշխատությունը գրվել էր ավելի վաղ, քայլ դեռևս չեր քրծվել նրա ստեղծագործական քությունը: Եվրոպական գարգացած երկրներում շրջագայած Խրիմյանի մտահորիզոնն ու աշխարհներակարտն ընդլայնվեց. հզոր տերությունների վարած դիվանագիտությունից նա դասեր բաղեց և ցանկացավ իր մտորումները կիսել հարազատ ժողովրդի հետ: Այդ երկում քննարկվում են մարդկային հասարակության տարրեր պատմության ընթացքում ստեղծված հզոր պետությունների՝ Մակեդոնիայի, Հռոմի, Բաքերնի և Ասորեստանի պատմության բատերաբեմից անհետանալու փաստերը. եզրակացությունը մեկն է՝ բոլոր երևույթներն ունեն իրենց սկիզբն ու վախճանը: Խմաստանը Խրիմյանը տալիս է իշխանության առաջնային, նախական օղակից մինչև ամենաբարձր ու կատարյալ օղակների քնութագիրը: Առաջին՝ փոքրիկ քջիքը ընտանիքն է, ապս՝ տոկմային, ցեղային միությունները, նրանց զագարձակենոր՝ աշխարհակալ տերությունները: Խրիմյանը իշխանությունը համարում է պարտադիր երևոյթ բոլոր ժամանակների համար: Նա քննարկում է իշխանության տարրեր ձևերի առկայության հարցը՝ միապետությունից մինչև հանրապետություն: Հետաքրքիր է, որ նոյնիսկ այն ժամանակ (1878 թ.) հասարակական կյանքում ամենազարգացած պետությունը նա համարում է Ամերիկայի Միացյալ Նահանգները, որտեղ՝ «քաղաքակրթությունը արքուն հասակ առել է: Ուր ժողովուրդ առանց քազի, առանց կայսեր հզոր զավագանի, մի նախազահով և օրենքով կը կառավարուի»⁴: Համայնքելով փաստերը և պատմական իրադարձությունները, Խրիմյանը հանգում է այն եզրակացության, որ մարդկության բարարակրթության համար պետականությունը և իշխանությունը պարտադիր է, նրա բացակայությունը ենթադրում է քառս և անիշխանություն, դարձ դեպի վայրենությունը: Նա օրինակ է բերում ֆրանսիացիներին, նրանց հեղափոխությունների ու հեղաշրջումների փաստերը ներկայացվում է իրեւ անիշխանություն, եթե նոյնիսկ քաղաքակրթությունները և պատմական իրադարձությունները, Խրիմյանը հանգում է այն եզրակացության, որ մարդկության բարարակրթության համար պետականությունը և իշխանությունը պարտադիր է, նրա բացակայությունը ենթադրում է քառս և անիշխանություն, դարձ դեպի վայրենությունը:

⁴ Խրիմյան Հայրիկ, նշվ. աշխ., էջ 331:

ճիշտը և բնդունելին համարում է հասարակության աստիճանական զարգացումը: Միևնույն ժամանակ նա բացահայտում է, որ ժողովուրդը անկառավարելի ամքոխ է դատնում այն ժամանակ, եթե իշխանությունները քերանում են կատարել իրենց պարտականությունները: Ըստ Խրիմյանի, իշխանությունների պարտականությունը պետք է լինի «արդարություն սիրել և օրինաց արդարացի վճիռը արդարութեամբ ի գործ դնել»¹: Նա օրինավոր է համարում այն իշխանությունը, որը խորհում է իր հպատակների բարօրության համար: Ժողովրդական մարդու հարուստ կենսափորձից է բխում հեղինակի մտքերը իշխանության և օրենքի փոխհարաբերության մասին: Նրա կարծիքով իշխանության հզորության առաջին նախապայմանը «արդար և հավասար» օրենքի գործադրումն է հասարակության բոլոր խավերի վրա: Օրենքը հավասար խստությամբ պետք է գործադրվի քե' իշխանափորի և քե' ժողովրդի նկատմամբ: Անքոյլատրելի է որևէ բացառություն, առանձնապես օրենքի պաշտօնյաների համար: Վյուտելից էլ բխում են իշխանության պարտականությունները: Իշխանությունը պետք է պաշտպանի առաջինությունը, սանձահարի մոլությունը, հմտությամբ վարի երկրի տնտեսությունը, բույլ չտա երկրի հարստության և ուժի արտահոսք (խիստ այժմեական զաղափարներ), ժողովրդի առաջ բացի առաջալիմության ճանապարհը, զարգացնի զյուղատնտեսությունը, խրանի գիտության և արվեստի զարգացմանը: Միևնույն ժամանակ Խրիմյանն իշխանության պարտականությունն է համարում «ամեն հնարաւոր միջոցներ ի գործ դնելով պատերազմ շիարուցանել ոչ ուրիշ իշխանութեան դեմ, ոչ և պատճառ տալով ուրիշ իշխանութեան մը իւր դեմք»²: Փաստորեն, հեղինակը շարադրում է իր տեսակետը իշխանության վարած ներքին և արտաքին քաղաքականության նկատմամբ: Իշխանության պարտականությունների մեջ հեղինակը մի քանի անգամ ընդգծում է կրթություն ստանալու հնարավորություն ստեղծելը հասարակության բոլոր խավերի՝ ինչպես վերին շերտերի, այնպես էլ խրճիրներում ապրող հասարակ ժողովրդի համար, որովհետև «երկրին բարգավաճունք ժողովրդին բարսավոր կրթութենեն կը ծնի, ինչպես որ բշվառությունը՝ նորա տղիտութե-

նեն»¹: Թվարկելով իշխանությունների պարտականությունների բոլոր ոլորտները, հեղինակը գծում է նրանց գեղծումների և շարաջակումների պատկերը: Խրիմյանը պահանջում է, որ ժողովրդի և իշխանության շահը լինի ընդհանուր, իրարով պայմանավորված, դա համարելով բոլոր ժամանակների իշխանությունների զորության առաջին նախապայմանը: հակառակ դեպքում իշխանությունը դիմում է գեղծումների, խախտում է օրենքի հավասարությունը: Հեղինակը պահանջում է հաշվի չառնել դիրքի ու պաշտոնը, պատմել բոլոր օրինախախտներին: Նա գծում է ժողովրդի ու իշխանության պարտականությունների և իրավունքների սահմանները: «Ինչ որ իշխանութեան պարտիքն է, այն է ավասիկ ժողովրդին իրավունք և ինչ որ իշխանութեան համար իրավունք է, այն է տիրապես ժողովրդի պարտիք»²: Ընդունելով այդ չափանիշները, Խրիմյանը միաժամանակ ընդգծում է, որ իշխանությունները հաճախ չեն կատարում իրենց պարտականությունները, և հորդորում է ժողովրդին՝ տեր կանգնել իր իրավունքներին, որպեսզի իշխանությունները օգուվելով ժողովրդի տղիտությունից «չհամարձակին նոյն խև օրենքով հարստահարել, որոց օրինակ բազում անգամ և բազում տեղ կը տեսնենք աշխարհին մեջ»³: Ժողովուրդ ասելով Խրիմյանը նկատի տնի հասարակության ամենաստվար մասին՝ զյուղացիության ու արհեստագործներին, որոնց քրտինքով ստեղծվում են բոլոր բարիքները, մինչդեռ ինքը՝ ժողովուրդը, գորկ է մնում իր ստեղծածից, այն վայելում են շահագործողները: Այդ երևույթը Խրիմյանը տեսնում է ինչպես Արևելյան հետամնաց երկրներում, այնպես էլ «քաղաքակիրք» Արևմտյան աշխարհում: Սիրաք-Խրիմյանի տված դասերից ամենակարևորը աշխատանքի նշանակության ընդգծումն է, նրա գովերգը: Միայն աշխատանքի շնորհիվ է մարդը տեր դառնում բոլոր տեսակի հարստություններին: Ըննարկելով մարդկային հասարակության անցած ուղին, Խրիմյանը հանգում է այն եզրակացության, որ բոլոր հայտնագործություններն ու զյուտերը կատարվել են համար և տրնաջան աշխատանքի շնորհիվ: Նա տարբերակում է մտավոր, հոգեկան աշխատանքը ֆիզիկական աշխատանքից, բարձր գնա-

¹ Նոյն տեղում, էջ 336:

² Նոյն տեղում, էջ 337:

³ Նոյն տեղում, էջ 338:

¹ Խրիմյան Հայրիկ, նշվ. աշխ., էջ 333:

² Նոյն տեղում, էջ 335:

հատելով մտավոր աշխատանքը իբրև նարդկային հանճարի արգասիր, նա զգուշացնում է մտավոր կուրուրյունից և հիշեցնում Եղիշեի իմաստուն խոսքերը. «Կույր զրկի ճառագայթեն արեգական և տղիտուրյուն զրկի կատարյալ կենաց»: Այդ բոլորից Խրիմյանը հանգում է մի եզրակացության. «Մարդկային թշվառութեան բուն աղետաբեր արմատը կուրուրենեն կսկսի և կաճի»¹: Խրիմյանի տված դասերի մեջ կարենու է նաև աշխատանքի անհրաժեշտության փաստը. բոլոր ժողովուրդների առաջադիմության և բարգավաճման պայմանը աշխատանքն է. «Անիրավ է մարդ, թե որիշի քրտանց և ձեռաց հացին կսպասե»: Դիմելով հավերժ հին ու նոր ավետարանական կարգախոսին՝ «Քրտամբ երեսից ք կերիցի զիաց քոյ», Հայոց Հայրիկը դատապարտում է մարդու շահագործումը մարդու կողմից, մեղադրում է իր ժամանակների (նաև բոլոր ժամանակների) հզոր պետությունների տիրակալներին, նրանց հրահրած պատերազմների, մեծաքանակ զոհերի համար: Այդ տերություններն առաջնորդվում են ոչ թե մարդասիրական զաղափարներով, այլ հետապնդում են իրենց երկրների շահերը: Մարդկային հանճարն է ստեղծել Ավետարանը և Կրուպի թնդանորը (այսօր կարող ենք հավելել՝ ատոմային զենքը) ... իրար անհամատելի հասկացություններ: Եթե Ավետարանը հանուր մարդկության վեհության և առարինության քարոզիչն է, ապա 19-րդ դարի քաղաքակրթության չափանիշը Կրուպի թնդանորն է: Այս աշխարհի հզորներին համեմատելով աղբյուրի ակի վրա նստած, ժողովրդին զրից զրկող հերիարային վիշտապի հետ, Խրիմյանը քարի հոր կրթական դասեր է ավանդում հայությանը՝ օգնել «զորավորներից զրկվածներին, հարստահարողներից ճնշվածներին»՝ առանց հաշվի առնելու «նորա լեզուն և կրոնը»:

Սեծ մարդասերի իմաստախրական գործերի ավարտը եղավ «Պապիկ և քոռնիկ» աշխատությունը: Երուսաղեան արսորված Խրիմյանը, երբ «արծիվը փակվել էր ճնճղուկի վանդակի մեջ», հայրենիքի կարուտով այրվող ու մորմորվող Հայրիկը, գրեց այս երկը: Եթե «Սիրաք ու Սամուել» քարի հոր կրթական դասերն են, ապա այս աշխատությունը հայոց պապիկի պատգամներն են ողջ հայությանը: Այն լույս տեսավ 1894 թ.

¹ Նոյն տեղում, էջ 355:

Եզմիածնուում, երբ Խրիմյանը արդեն օծվել էր կարողիկոս Ամենայն Հայոց: Այս երկն ամփոփում է Խրիմյան մտածողի, իմաստասերի, բանատեղծական հոգու, ուսուցչի և դաստիարակի խոհերը, մտորամները՝ իր ժողովրդի, նրա հարատևող, աննկուն ոգու և ապագայի վերաբերյալ: Այն 19-րդ դարի զյուղական լյաճրի մի հանրագիտարան է: Հետաքրքիր են նրա հարցապնդումներն ու պատասխանները. ինչ միջոցներ են անհրաժեշտ իշխանություններին զյուղատնտեսության զարգացումն ապահովելու համար: Առաջին և ամենակարևոր ոսկին համարվում է բոլոր զյուղերում պարտադիր կերպով գլացունների, ուսումնարանների հիմնումը, դրանց միջոցով զյուղացին հաղորդակից կինի զյուղատնտեսական նոր զիտելիքների, կիմանա նոր մերենաների գոյության մասին, կլարդանա դրանք օգտագործել, այդ բոլորը կնախատեսն բերքատվության բարձրացմանը¹: Գյուղատնտեսության զարգացման համար կարևոր էր համարվում ցանելիք սերմի ընտրությունը, ցանելու եղանակը, ժամանակը: Անիրաժեշտություն էր ջրօգտագործման համակարգի ստեղծումն ու օգտագործումը: (Կարենի է զարմանալ Խրիմյան ժողովրդական մարդու փորձի և զիտելիքների խորության վրա: Մեզ մոտ դեռ նոր է արմատափորվում արհեստական ջրամբարներ ստեղծելու գաղափարը, բայց հարյուր տարուց ավելի վաղենություն ունեցող այդ երկու հայության պապիկ-հայրիկը խիստ կարևորում է արհեստական ջրամբարների կառուցումը, որպեսզի նրանց մեջ ամբարվեն ձմռան և գարնան վարարումների ժամանակ հավաքված ջորը՝ ամռան տապին չորացող բույսերին հագեցնելու համար): Գյուղատնտեսության զարգացման համար ընդգծում է նաև անսամալահության զարգացումը, հաշվի առնելով Հայատանի թնակի պայմանները: Այդ աշխատության գործականացման մասին պայմանները:

¹ Դրա առաջին օրինակը տվել էր Խրիմյանը 1880-ական թթ., Վանի հոգեւոր առաջնորդ եղած ժամանակ: Սեծ ծախսերի և գրողությունների զնույն նրան հաջողվեց Եվրոպայից գործան թերել տալ և իր երկագործական վարժարանում առաջինը գործարկեց այն: Այդ նորույրը ջերմությամբ ընդունվեց «Կասպուրականում» բազմարիվ ազգարակատերեր օրինակ վերցնելով, իրենք էլ թերել տվին զյուղատնտեսական տեխնիկական միջոցները: Տես Հ. Երամյան, Հուշարձան Վան Կասպուրականի, հ. Ա., Ալեքսանդրիա, 1929 թ., էջ 176, Ա. Թերզիսաշլյան, Արծիվը իր բույնին մեջ, Փարիզ, 1938, էջ 43, նաև Է. Կոստանդյան, Սլորի Խրիմյան. հասարակական բաղարական գործունեությունը, Երևան, 2000, էջ 306–307:

յան մեջ բարձրացված հարցերի մեծ մասը ունեն արդիական հնչեղորդուն և կարեռություն. դրանցից կարեղոր են բնության առողջացման, արհեստական անտառների բազմացման հարցերը: Դրանց գուգահեռ հեղինակն ընդգծում է այգեգործության զարգացման խնդիրը, այդ շարքում նշելով բրաստանների դերը, որոնք օգտակար և համեղ միրզ մատակարարելուց բացի կարող են դառնալ նաև շերամապահության զարգացման հիմքը:

Գյուղատնտեսության զարգացման բազմաթիվ կարեղոր հարցեր քննարկելուց հետո հայ ժողովրդի բոլոր ժամանակների պապիկ-հայրիկ իր ամենամեծ պատգամն է հղում ողջ հայությանը. նա իր բոռնիկներին «պատկում է» ճայր հողի հետ և պատվիրում՝ շրողնել երկիրը, որովհետև անմշակ հողը մեռնում է: Եթե հողը մեռնի, «Ճն ժամանակ Պապիկի տունն ընտանիք ի միասին կմեռնին»: Հողը միայն մշակելի տարածք չէ. Խրիմյանի նույն ունի ավելի լայն հասկացություն՝ հավասարեցված է հայրենիքի գաղափարին: Խրիմյանն իր հավերժական կտակ պատգամն է տալիս հայությանը՝ չըել հայրենի հողը, այն կանգուն է իր զավակների քրտնարոր աշխատանքի շնորհիվ: Առաջին անիրածեշտուրյուն է՝ դիմակայել պանդխոսությանը, կանխել արտագաղըր: Հայրենիքը և պետությունը կանգուն է իր զավակներով: Նորազարք երիտասարդությունը ժառանգություն է ստանում ամենամեծ հարստությունը՝ Հայրենիքը, նրա դաշտերն ու լեռները, նրա սուրբ հողը: Այդ կտակով այսօր էլ մեզ հետ է Հայոց Հայրիկը, քանի որ նրա պատգամներն ունեն արդիական հնչեղորդյուն:

Վարագ տարեգիրը, 2007, էջ 34–41:

ՇՈՒԺԻԻ ԴԵՐԸ ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶՍՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՉԱՐՈՒՄ

19-րդ դարի II կեսից աստիճանաբար վերելք է ապրում Շուշիի մշակութային կյանքը: 1836 թ. ցարական կառավարության կողմից պարտադրված հայ եկեղեցու կանոնադրության՝ «Պոլոշենի»-ի համաձայն

Ռուսական կայսրության հայարձնակ վայրերը բաժանվում էին վեց թեմի՝ իրենց հոգեոր առաջնորդներով և թեմական դպրոցներով: Դրանցից մեկը՝ Պարարաղի թեմն էր, որի առաջնորդանիստ կենտրոնը դառնում է Շուշին: Այդ թեմի մեջ էին մտնում Շուշի, Նովիի, Լենքորան քաղաքները շրջակա 156 գյուղերով, 7167 ծովու-ընտանիք հայ բնակչությանը¹: 1838 թ. Շուշիում բացվում է թեմական հոգեոր դպրոցը: Ակզրում սովոր կրոնական առարկաներ դասավանդող դպրոցն աստիճանաբար անցնում է նաև բնագիտական առարկաների դասավանդման: Թեմական դպրոցի ծրագիրը մեծապես կախված էր հոգեոր առաջնորդի և Վեհափառ Հայրապետի կարգադրություններից: Դարի կեսից սկսվում է նոր հոսանքների՝ զաղափարների մուտքը Շուշի: Իրքի առևտրականների քաղաքը հարաբերություններ ունենալով ուսական խոշոր կենտրոնների հետ, Շուշին դրսից ներգրավում է ընդունակ և երիտասարդ ոմեր, որոնց միջոցով նոր զաղափարներ էին բափանցում այսուեղ: Դեռևս Ներսէս Աշտարակեցու ժամանակ բոլոր թեմական դպրոցներում նրա կողմից նշանակվեցին աշխարհական գործակալներ, որոնք հետագայում ընտրվում էին ժողովրդի քվեով: Հոգեորականների դեմ տարած աշխարհական հոգաբարձուների հայրանակի շնորհիվ 1863 թ. Շուշիի թեմականի տեսուչն է դառնում Պետրոս Շանջյանը, որը Մոսկվայի և Պետերբուրգի համալսարաններում կրթություն ստանալով, դառնում է Փարփի Սորբոնի համալսարանի տնօկնողի, իսկ 1849 թ. վերադառնում է Թիֆլիս և Ներսէս Աշտարակեցու կողմից նշանակվում է Ներսիսյան դպրոցի տեսուչ: Նրա տեսչության շրջանը տևեց մինչև 1857 թ. և պատմության մեջ մեծարվեց «Շանջյան դար» անունով: Լեռն այդ մասին գրում է. «Անիերքելի պատմական իրադրիխն է մնում, որ Շանջյանը հայ առաջադիմութեան ուսիմիանացներից մեկն էր... համոզմունքի շիտակ գիննոր»: Շարունակելով Շանջյանի բնորոշումը Լեռն ոյսպով ընդգծում է. «Ազգային ուժեղ ինքնազործունեութիւն եվրոպական լուսավորութեան առաջնորդութեամբահաս Շանջյանցի կառավարած դպրոցի նշանաբանը»²: Ներսէսի մահից հետո վիրահայոց հոգեոր առաջնորդ Սարգիս արքավիսկովու Զաւալյանի եռանդուն ջանքերով և նրա արևմտահայ գործակից Տերյենց

¹ Լեռ, Պատմութիւն Պարարաղի թեմական հոգեոր դպրոցի, Թիֆլիս, 1914, էջ 97:

² Նոյն տեղում, էջ 283, 284.

Չամուտճյանի մատնությամբ Շանչյանը Թիֆլիսից հեռացավ Պետերբուրգ, իսկ տեղի հոգևոր առաջնորդը զեկուցում էր նորընտիր կարողիկոս Մատրես Չուխաճյանին, որ հազիվ կարողացել է ցրել Շանչյանի աշակերտներին: Այդ դեպքերից 5 տարի անց «Շուշու հասարակութեան առաջադեմ մասը միտք յղացավ նոյն այդ Շանչյանի ձևորը յանձնել Ղարաբաղի թեմական դպրոցը»¹: Դա տեղի էր ունեցել 1863 թ. հոկտեմբերին թեմի հոգևոր նոր առաջնորդի խնդրանորով և կարողիկոսի քարեհանությամբ: Սակայն 1865 թ., երբ Ղարաբաղի թեմի հոգևոր առաջնորդը դարձավ նոյն Սարգս Զալալյանցը, նրա միջամտությամբ Շանչյանը դարձավ հեռացվեց, այս անգամ Շուշիի թեմական դպրոցի տեսուչի պաշտոնից: Նրան հետևեցին քազմաքիվ տեսուչներ, հաճախ՝ արժանավոր մտավորականներ, երեմն՝ անարժաններ: Նրանցից ամեն մեկը իր հետքն էր քողոված թեմականի պատմության վրա. Ղազարոս Աղայանը, Պերճ Պոռշյանը, Սեղրակ Մանդինյանը մեծ ջանքեր ներդրեցին թեմականը ժամանակի զաղափարներին հաղորդակից դարձնելու գործում: Մանդինյանի ժամանակ թեմականը հասնում է զարգացման քարձության աստիճանի: Նա հատուկ դասարան է բացում, որը պատրաստում է ուսուցիչների տարրական դպրոցների համար: Նրա ջանքերով և գործուն մասնակցությամբ Շուշիում բացվում է հասարակական գրադարան, իրատարակում են գրքեր, Սիմեոն Հախումյանի խմբագրությամբ՝ «Գործ» ամսագիրը:

Ուսուցիչների հոգատար ձեռքերի տակ թեմականում հասունանում և առնականում է նոր ժամանակների շնչով լի, հայրենասիրական ոգով տողորդված մի նոր սերունդ, թեմականի 80-ականների աշակերտության սերուցքը: Ցարական կառավարությունն այդ գործընթացը կանխելու համար որոշակի քայլեր ձեռնարկեց: Վերահաս վտանգի մասին Մանդինյանը հայտնեց թեմականի հոգարաձությանը: 1881 թ. մարտին նա տեղեկություն էր ստացել, որ իշխանությունները Շուշիում պիտք է բացեն պետական արտնություններով պապահովված ռեալական ուսումնարան: Նոյն 1881 թ. սեպտեմբերին բացվեց ռեալական դպրոցը, որտեղ դասավանդումը տարվելու էր պետական պաշտոնական լեզվով՝

¹ Նոյն տեղում, էջ 286:

ուստերենով: Մինչ այդ քաղաքի ուներթները իրենց զավակներին գրագիտության համար ընդունել էին տախս թեմական դպրոց: Ռեալականի քացումից հետո կապվում են նրա հետ: Այսուղեւ ուսուցումը տարվում էր ուստերենով: Ռուսացման քաղաքականության առաջին քայլն էր դա, որին 1880-ականների երկրորդ կեսին հաջորդեց հայկական դպրոցները փակելու հրամանը: Նորընտիր կարողիկոս Մակար Թեղուտցու ջանքերով 1886 թ. վերաբացվեցին հայկական դպրոցները, սակայն նրանց գործունեությունը սեղմված էր կաշկանդող զապանակմերով: Այդ ժամանակ էլ թեմականի տեսուչն է դառնուու Լևոն Սարգսյանը՝ ՀՅԴ-ի հիմնադիրներից մեկը, որը հետագայում հեռացավ նրանից և նոյնիսկ պայքար սկսեց այդ կուսակցության դեմ: Լևոն Սարգսյանի ջանքերով թեմականը բարձրացավ նոր աստիճանի. սակայն նրա գոյությունն ընթանում էր պայքարի հորձանուտում, աշակերտական բուն ցուցերի, հոգևորականության դավերի, աշակերտությունը ցրելու, առաջադեմ ուսուցիչներին դպրոցից հեռացնելու միջոցառումներով: Այլ էր իրավիճակը ռեալականում. ուսումնական առաջին տարիներին բոլյարվեց հայերենի ուսուցում, մյուս բոլոր առարկաները դասավանդվում էին ուստերեն: 1887-88 ուս. տարուց սկսած հայոց լեզուն հանվեց դասավանդումից մինչև 1906 թ., երբ այն նորից դասավանդվեց, որտեղ միացան նաև հայոց պատմության դասերը²: Ըստ Երևայիքին այդ ուսուցման-ուժացման քաղաքականությունն էր պատճառը ռեալականի աշակերտության մեջ ընդգծված հակառուս, ավելի ճիշտ հակացարական տրամադրությունները: Այդ հաստատության շրջանավարտների գերակշռող մասը հոգու խորքում հավատարիմ մնալով հայկական քաղաքակրթությանը, դարձավ ժամանակին իշխող համանարդկային զաղափարների դավանաները: Աշոտ Հովհաննիսյանը «Հուշեր անցյալից» հոդվածում Շուշին բնորոշում է իրեւ «կովկասահայերի մտավորականության ինքնատիպ հանգույցներից մեկը»², որն անդրադառնում էր Ռուսաստանում և Կովկասում գոյություն ունեցող ազգային, սոցիալական, նաև քաղաքական հակասությունները: Ներազգային հակասություններ էին զգացվում թեմականի և ռեալականի շուրջն ընթացող բանավեճերում և պայքարում: Ակզրում «Նոր դարի»

¹ Հ. Վ. Գրիգորյան, Գ. Հ. Հարությունյան, Շուշիի ռեալականը, Երևան, 2001, էջ 40-51:

² Աշ. Հովհաննիսյան, Հուշեր և բնորոշումներ, Երևան, 1969, էջ 76:

և «Մշակի», որ ավելի ճիշտ կիմներ բնութագրել պահպանողականների և ազատականների, վիճարանություններն ընթանում էին ազգային-ծխական հարցերի շուրջ, որոնք բողարկվում էին հոգեսոր առաջնորդների և թեմական դպրոցի տեսուչի, նաև ուսուցչական կազմի միջև եղած տարակարծություններով։ Տարբեր հոսանքներին պատկանող թեմականի ուսուցիչների հակասությունները փոխանցվում էին նաև աշակերտական կազմին։ 1880-ականների կեսերից սկսած Շուշիի երեք ուսումնական հաստատություններ որոշակի դեր էին խաղում ամբողջ Ղարաբաղի հասարակական կյանքում։ առաջինը թեմական դպրոցն էր, երկրորդը՝ ունալականը, երրորդը՝ քաղաքային դպրոց։ Վերջին երկուսը ուսուկան դպրոցներ էին, իսկ առաջինը Արցախի թեմի հոգեսոր դպրոցն էր։ Չնայած հոգեսոր անվանումին նրա շրջանավարտների նույնիսկ ամենափոքր մասը չէր ընդունում հոգեսորական կոչում։ այդ դպրոցն արդեն ուներ տասնյակ տարիների ավանդույթներ, աշքի էր ընկնում համազգային ճանաչում ունեցող բազմաթիվ ուսուցիչներով, դրանց հետ հավասար, գուցե և առավել բարձր հոչակ ստուցան նրա շրջանավարտները, հայ ազգային-ազատագրական պայքարի նվիրյալները։ Այդ երեք դպրոցների շուրջն էր համախմբված մյուս դպրոցների աշակերտությունը։ Այդ դպրոցների մեջ մեր ազգի հանար մեծ նշանակություն ունեցավ թեմական դպրոցը, որի շուրջ XIX դարավերջին և XX դարասկզբին համախմբվել էր ողջ Ղարաբաղի «գործունեա, առաջաւոր երիտասարդութիւնը»¹ որը, ըստ Լեյնի, ազգարարում էր «Նոր ժամանակների սկիզբը»։ Թեմականի և ունալականի աշակերտներն ունեին իրենց խմբրատիւ և ձեռագիր աշակերտական թերթերը, որոնք լույս էին տեսնում ամիսը մեկ ամսամաս։ Ունալական դպրոցի թերթը ուսերեն էր, կրում էր «Իսկրա» անունը։ Այն խմբագրում էր Սիրայել Շահգելյանը։ Թեմականն ուներ «Կուն» թերթը, որը խմբագրում էր Թուման Թումյանը։ Թեմականի կրուսեր դասարանցիներն ունեին դարձյալ խմբրատիւ «Ծիածան» թերթը, որը լույս էր տեսնում Արտեն Տերտերյանի, Նիկոլ Պողոսյանի, Սիմոն Նա-

րինյանի համատեղ ջանքերով։² Դպրոցներում գործում էին նաև աշակերտական միություններ, որոնք իրենց անվանում էին «ինքնազարգացման խմբակներ»։ Այդպիսի մի խմբակ էր ղեկավարում թեմականի աշակերտ Սարգսի Հովհաննիսյանը, որին քաղաքի ուսիլկաններն առիթ էին փնտրում ձերքակալելու համար։ Եթե թեմականի տեսուչ դարձավ թենիկ վարդապետը, սկսեց դպրոցը մարքել «անբարենույս տարրերից» և 1899 թ. սկզբից դպրոցից հեռացրեց Սարգսի Հովհաննիսյանին, մի փոքր ուշ՝ դարձյալ 12 «անբարենույսների»։ Սարգսը՝ հետագայում Սերգեյ, ավելի ուշ՝ Արամ Մանուկյանը կարողացավ ընդունվել Երևանի թեմական դպրոցը և 1901 թ. ավարտեց այն բարձր ցուցանիշներով։ Երևանի թեմականի տեսուչն էր ճիշտ է, դարձյալ հոգեսորական, բայց արտակարգ հայրենասեր մի անձնավորություն, դարձյալ դարաբաղջիկ Գարեգին Հովհաննիսյանը՝ Սարդարապատի հերոսամարտի «Անդ Երեցը»։ Սիմոնյան համաձայն ենք ՀՀ ԳԱ իսկական անդամ Հ. Սիմոնյանի հետ, որն իր արժեքավոր աշխատության մեջ XX դարասկիզբը բնութագրում է իրեն դարձյալ հեղափոխականների ֆեռունենի շրջան։ Իսկ դարձյալ շուշնցի, այդ իրադարձությունների ականատես և մասնակից Աշոտ Հովհաննիսյանը ուշագրավ որակափորում է տալիս թեմական և ունալական դպրոցի շրջանավարտներին։ Թեմականի աշակերտներ համարյա առանց բացառության դարձան ազգային-ազատագրական պայքարի ազատամարտիկներ։ 19-րդ դարի 90-ականների վերջերից սկսած դեպի «Երկիր» Արևմտյան Հայաստան մեկնող գինատար խմբերի անդամների մեծ մասը թեմականի շրջանավարտներն էին։ Ունալականի աշակերտների հայացքներն ուղղվեցին դեպի Հյուսիս։ նրանց մեծ մասը դարձան ականափոր մարքիստներ։ Ինարկե, եղան նաև բացառություններ։ ունալականի աշակերտներից ոմանք՝ Սիրայել Հովհաննիսյան-Վարանդյանը և Սարգար Ժամհարյանը, սկզբում նաև Լևոն Արարելյանը, որը հետագայում ընդունվեց սոցիալիստ-հեղափոխականների շարքերը, դարձան ՀՅԴ անդամներ, դարձյալ իրենց կյանքը տարրեր

¹ Թվարկած անձանցից XX դարի կեսերը հասավ միայն Արտեն Տերտերյանը, ականափոր գրականագետը, մյուսները՝ ազատագրական պայքարի նվիրյալներ, իրենց կյանքը զոհաբերեցին այդ պայքարում։

² Հ. Սիմոնյան, Ազատագրական պայքարի ուժիմերում, գիրք 1, Երևան, 2003, էջ 596։

¹ Լեռ, նշվ. աշխա., էջ 182։

ձևով նվիրեցին հայ ազատամարտին: Նոր կազմավորվող ազգային կուսակցությունների անդամների մեջ դարձյալ աչքի էին բնկնում դարախողիները: Ծուշիի երիտասարդությունն սկզբում գտնվում էր հնչալյան կոսակցության ազդեցության տակ: 1890-ական բվականներին երկիր մեկնեցին շուշեցի հնչալյաններ Գարրիել Կաֆյանը, Բարսեղ Զարարյանը և Մարտիկ Սարովիսանյանը: Առաջինն օրակից իր կոսակցության գաղափարական քարոզությամբ, հնչալյան սկզբնական կազմակերպություններ ստեղծեց երկրում: Վերջին երկուսը քաջարաքար գրիվեցին, Մարտիկ Սարովիսանյանը մասնակցեց 1896 թ. Վանի ինքնապաշտպանությանը և արմենական Մկրտիչ Ավետիսյանի, դաշնակցական Պետոյի հետ դեկավարելով մարտերը, զոհ գնացին Պարսկաստանի ճանապարհին: Դարասկզբին որպես ֆիդայիներ, զինատար խմբերի անդամներ, ՀՅԴ-ի գաղափարախոսության քարոզիչներ և կազմակերպիչներ Արևմտյան Հայաստան մեկնեցին շուշեցի երիտասարդներ Խաչան Առաքելյանը, Թուման Թումյանը (Թորգոն), Եզոր Առստամյանը (Մենակ), Նիկոլ Պողոսյանը (Վանա Իշխանը), Սերգեյ Հովհաննիսյանը (Արամ Մանուկյան): Նրանցից ամեն մեկի կյանքը ազատազրական պայքարի մի ոլյսական է: Նրանց մասին գրել են թէ հուշերի հեղինակներ, թէ պատմաբաններ: Ուորեն Տեր-Մինասյանի «Հայ յեղափոխականի մը յիշատակները» յորհատորյակի էջերը լի են այս անձնափրությունների սիրանքների նկարազությամբ: Թերեւակի անդրադառնանց նրանց: Մեծ հետաքրքրություն է ներկայացնում Թուման Թումյանի կյանքը: Ծուշիի թեմականն ավարտելուց հետո ստացել է զինվորական կրություն, արժանացել սպայական աստիճանի, բայց բողել է այն, անցել Կարս՝ զինատար խումբ կազմելու և երկիր մեկնելու համար: Կարսում նրան հաջողվում է իր շուրջը համայնքել վորձառու մարտիկների, որոնց մեջ էին ուսական բանակի ենթասպաններ, զինվորներ, բվու 30 հոգի. Խմբի անդամները հետագայում հոչալվեցին (Ձեռի, Տուրքախ, Սեպուհ և ուրիշներ): Ուորենի բնորոշմանը նրանք «ամենքն ալ մեկ-մեկ պատմական դեմքեր դարձան...անհնար շանցան»: Թումյանն ընդունեց Թորգոն անոնք, իսկ իր խմբին տվեց «Մրիկի» անվանումը: Այդ խումբը բարեհաջող հասավ Սասուն և դրա մեջ մեծ ավանդ ուներ Մենակը (Եզոր Առստամյան):

Ծունդով Վարանդայի գալարից, Ծուշիի թեմականն ավարտած Եզորը մեկնում է Կարս: Նա բաջ գիտացում է, որ զինատար խմբերի հաջողությունը մեծ չափով կախված է ճանապարհի ճիշտ ընտրությունից: Երկիր անցնելու, Սասուն հասնելու 200–300 կմ ճանապարհն անցնելու համար պետք էր որոշել ուղին, հանգրվանները, քշնամու շարժումները: Անհրաժեշտ էր լավ ճանաչել տեղանքը: Մենակը ծպտված, զյուղացու կերպարանքով անցնում է Խոնուի և Բասենի շրջանները, մի քանի անգամ հասնում է Սասուն և դաշնում է կատարյալ ուղեկցորդ՝ «Փալար»: Նրա տված ցուցումներով «Մրիկի» խումբն անվնաս հասնում է Սասուն: Հրայրի պնդումով Թորգոնը մտնում է Սասուն իրամանատարական կազմի մեջ, բայց ՀՅԴ ընդիհանուր ժողովին մասնակցելու համար քողնում է Երկիրը՝ կրկին վերադառնալու նպատակով: Մենակը շարունակում է ուղեկցորդի իր գործը՝ Կարսից Բասեն, ապա՝ Խոնու-Սասուն ուղիներով: Նեվրուզի և Խանի խմբին օգնություն հասնելու ժամանակ նա զիկում է:

Ծուշիի թեմականի լավագույն աշակերտներից էր նաև Խաչան Առաքելյանը, որը Կարս մեկնողներից առաջիններից էր: Դպրոցի շնորհաշատ աշակերտներից էր նա, անդամագրվեց ՀՅԴ-ին, կատարում էր բազմաթիվ պատասխանատու հանձնարարություններ: Սակայն նրա մեծ երազը Երկիր անցնելն էր: ՀՅԴ-ն նրան ուղարկում է Կարս՝ նախապատրիստվելու և Երկիր անցնելու համար: Այնտեղ մի խումբ ընկերներով (5 հոգի) ձեռնամոխ են լինում ուսումբ պատրաստելու գործին: Երբ բվում էր, հաղթահարված են բոլոր դժվարությունները, ուսումբերը պայքում են. իինզ ընկերներն էլ զոհվում են: Ծիշտ դիտողություն է անու Ուորենը. «Ասիկա բող դաս լինի, որ կամքեն, բաղձանքեն ավելի անհրաժեշտ է գիտության հմտությունը»¹:

Ընդիհանուր ժողովից վերադառնալուց հետո Թորգոնը որտորդ Գևորգի հետ կազմում է «Որսկան» անունով 61 հոգիանոց մի նոր խումբ՝ Երկիր անցնելու: Բայց այս խումբը չունեցավ «Մրիկի» հաջողությունը:

¹ Ուորեն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. 1, Թեհրան, 1987, էջ 150:

Սասունն արդեն պարտվել էր: Թորգոմը մտածում էր՝ հարձակվելով թուրքական սահմանի վրա, նրանց զորքերի մի մասը կրաշի դեպի սահմանը և կրերևացնի Սասունի վիճակը: Խմբի կազմում էին մտափորականներ՝ ուսանող, քժիշկ, նոյնիսկ հարուստ բնտանիքների զավակներ, որոնք, ամեն ինչ բողած, գնում էին Հայաստանի համար կովելու: Օլրի մոտ սահմանն անցնելու ժամանակ ոռու սահմանապահ զորքերը շրջապատում են նրանց դիրքերը և լուր տալիս թուրքական զորքերին: Ոռու սահմանապահների հրամանատար Բիկովը օգնության է շտապում թուրքերին, և «Որսկան» խումբն ընկնում է կրկնակի կրակի տակ: Թորգոմը հրամայում է ոռուների վրա գնդակ չարձակել, կովել միայն թուրքերի դեմ, իսկ ինքը պատվիրակ է ուղարկում ոռու հրամանատարի մոտ՝ բացատրելու իրենց նպատակը: Ոռուները բանտարկում են իրար և ուղարկած երկու պատվիրակի և շարունակում կոխիք: Հայերը ստիպված անձնատուր են լինում ոռուներին, բայց գնդակահարվում են, սպանվում են նաև Թորգոմը: Բիկովը հավարտում է 27 սպանվածների դիմակները, նկարվում և արժանանում թուրք և ոռու հրամանատարության շնորհակալությանը: «Որսկան» զինատար խմբի կազմում գոհվում են բազմաթիվ նվիրյալ շուշեցիներ:

Թեմականի աշակերտներից Կարս էր անցել նաև Նիկոլ Պողոսյանը: Նրա ուսուցիչները Նիկոլին ներկայացնում էին իրեւ բնածին տաղանդ, որը կարող էր դառնալ ցանկացած բնագավառի լավագույն մասնագետ: Չուանելով Շուշիի թեմականի խիստ ուժիմը, Նիկոլը մեկնում է Երևան, ընդունվում այնտեղի թեմականը, բայց այն էլ չավարտած անցնում է Կարս: Այդտեղ իր համար ընտրելով Իշխան անունը, զինվորագրվում է Նեվրուգի երկիր անցնող «Շանր» խմբին: Կարսից մտնելով թուրքական Բասեն, 1903 թ. սեպտեմբերի 18-ին արյունալի բախում են ունենում թուրքական Դալի-բարա զյուղում տեղի գորքերի հետ:¹ Քչերին է հաջողվում փրկվել, դրանց թվում էր Նիկոլ-Իշխանը: Այդ անհաջողությունը չի ընկնում և չի վհատեցնում նրան, այլ տախարում է խորին արշավախմբային մարտավարության սխալ կամ ճիշտ լինելու հարցի շորջ:

¹ Հ. Սիմոնյան, նշվ. աշխ., էջ 605:

Անդրկովկասից ուազմական ուժեր և ուազմամբերը անցկացնելու նպատակով առեղծված հայորուկային արշավախմբերը տալիս էին բազմաթիվ զոհեր, չկատարելով իրենց առաջ դրված խնդիրները: Այդ պատճառով էլ ազգային կուսակցությունների դեկաֆարմերը հանգում են այն հաճողման, որ ամերամեջ է իրաժարվել արշավախմբեր առեղծելուց, պետք է երկիր ուղարկել կարող և ունակ անհատ գործիչներ, ժողովրդին տեղում կազմակերպելու և նախապատրաստելու համար: Բայց կուսակցությունների մարտավարության վոփիխությունից առաջ նման եզրակացության էր հանգել հրաշքով փրկված Նիկոլ-Իշխանը, որին հաջողվեց անցնել երկիր: Վահան Փափազյանի հետ հասնելով Վասպուրական, անցավ Ռշտունիք, որին տվեց Լեռնապար անունը և մեծ գործունեություն ծավալեց ՀՅԴ-ի տեղական կազմակերպությունների հիմքերն ամրապնդելու մեջ: Առանձին աշխատության թեմա կարող է լինել Իշխանի գործունեությունը Լեռնապարում: Նա երկար մնաց այլուեղ, վայելեց տեղի հայության սերն ու հարգանքը և իր մահկանացուն կնքեց 1915-ին Վահանի ինքնապաշտպանական մարտերից առաջ, զոհ գնալով երիտրուրբերի խարդավանքներին:

Արդեն նշել ենք, որ Շուշիի թեմականի աշակերտներից էր նաև Սարգիս Հովհաննիսյանը՝ Սերգեյ, ասպաքս Արամ Մանուկյանը, 1915 թ. Վասի ինքնապաշտպանության դեկաֆարմերից մեկը, Վասի նահանգի նահանգապետը, Սարդարապատի հերոսամարտի կազմակերպիչներից մեկը, Հայաստանի առաջին հանրապետության ներքին գործոց նախարարը, դիվանագործը, որի մասին գովել են բազմաթիվ գորքեր, պաշտպանվել ատենախոսություններ:

Բազմաթիվ են շուշեցի նվիրյալ հայրենասերները: Բոլորի մասին խոսել հնարավոր չել ցանկանում եմ մի քանի խոսք ասել նրանցից շատ համեստներից մեկի՝ Կոստի Համբարձումյանի մասին, որն ի տարրերություն վերը նշվածների, ավարտել էր Շուշիի ռեսլականը, Մոսկվայում և Գերմանիայում կատարելագործել գլուելիքները հոգեբանության բնագավառում, այնուհետև բողել ամեն ինչ, անցել իսոյ, հսկում էր Երկիր անցնող ուղիները, ճանապարհում խմբերը, հոգում նրանց հոգերը: Զետերեց, չարքաշ, բոլոր պայմաններին հարմարվող այդ համեստ մարդը 1905-ին Պարսկաստանից անցել էր Անդրկովկաս և մեծ գործունեություն

ծավալել հայ-քուրքական բնդիարումների ժամանակ: 1909 թ. Դաշնակցության դատի ընթացքում հանձն է առնում Ռուսաստանի ՀՅԴ կազմակերպությունների գոյությունը փրկելու գործը: 1914-ին նորից երկրում էր, Վասպուրականում, երբ Արամ Մանուկյանը բողնում է նահանգապետությունը, Կոստին Գոխարինում է նրան: Մասնակցում է դեկանարում է Պարսկաստանի կոխվները, սպանվում Սային-Կալայի մոտերքում, չտեսնելով իր երազած Հայաստանի անկախությունը, որի լուրն արդեն լսել էր: Առավել հետաքրքին այն էր, որ նրա եղրայրը հայտնի բոլշևիկ Սարո (Սարգիս) Համբարձումյանն էր, որը կարևոր պաշտոններ է վարել նորատեղ Խորհրդային Հայաստանի հանրապետությունում, նոր է առողջապահության ժողկոմ, 1925–29 թթ. ժողկոմխորհի նախագահ, հետագայում՝ ստալինյան բռնությունների գոհ¹:

Ծուշի մի հետաքրքիր ընտանիք էր ցարական շինունիկ Հարույուն Քեկանյանի ընտանիքը, որի 7 տղաները ստացել էին բարձրագույն կրթություն: Ավագը՝ Տիգրանը, դաշնակցության համակիր էր, Հայաստանի I հանրապետության դեսպանն էր Վրաստանում: Նրանց փորքը՝ Հովսեփը, բժիշկ էր, Էսէռական (սոցիալ-հեղափոխական) կուսակցության ակտիվ գործիչ: III որդին՝ Ալեքսանդրը, բոլշևիկ էր, Խորհրդային Հայաստանի կուսակցական և պետական գործիչ, ուազմիելովին անդամ, Խորհրդային Սիուրյան դեսպան Հունգարիայում, անհատի պաշտամունքի գոհ: IV եղբայրը միավետական էր, կովել է բոլշևիկների դեմ, խորհրդային իշխանության հաղթանակից հետո ապրել էր Հունաստանում, որի բանակում ծառայելով հասել գնդապետի աստիճանի: V եղբայրը դարձյալ սոցիալիստ-հեղափոխական էր, Անդրկովկասի Էսէռների աշքի ընկնող գործիչներից: Մյուս երկու եղբայրները քաղաքական կյանքին չեն մասնակցել: Չնայած գաղափարական տարածայնություններին յոր եղբայրները արտակարգ սիրով կապված էին իրար²:

Չենք կարող քեկուզ հպանցիկ շխոսել հայ-քարաքական բնդիարումների ժամանակ դարձյալ շուշեցի նվիրյալների՝ Նիկոլ Դումանի և Վարդանի (Սարգիս Մեհրաբյանի) գործունեության մասին, որոնցից

առաջինը դեկանարում էր Երևանի հայության պաշտպանությունը, երկրորդը՝ Ղարաբաղի հայության պաշտպանության գործը:

Մենք հիմնականում ուշադրությունը քենուեցինք քեմական դպրոցի սաների վրա: Բայց պակաս նշանավոր չկին նաև ուսալականի սաները: Ռուսական մշակույթի ազդեցության տակ նրանք համակվում են մարքսիստական գաղափարներով, ծառայում գիտական սոցիալիզմի գաղափարախոսությանը. Բողդան և Լյուդիկ Կնունյանցներ, Ալեքսանդր Բեկվանյան, Վաղինալավ Կասպարով, Սարգիս Կասյան, մշակույթի, գիտության տարբեր բնագավառների բազում գործիչներ՝¹ և դրանց շարքում մեր բաժնի հոգևոր հայրը՝ նշանավոր պատմաբան Աշոտ Հովհաննիսյանը, որի երկու փորքը, բայց խիստ տարտղունակ հոդվածները արտակարգ պատկերացում են տալիս Ծուշի մտավորականության մասին: Ուսալականի մարքսիստ սաները իրենց հոգու խորքում մնացին խսկապես հայ, մեծատառով մարդ և պատահական չեն, որ մինչև Խորհրդային կարգերն ապրողները դարձան ստալինյան բռնությունների գոհ: Ես միանգամայն համաձայն եմ մեր ընկերոջ, վաղամենիկ Բագրատ Ովուրյանի հետ, որ այսօրվա հեռվից նայելով «Ծուշի քեմական դպրոցի գործունեությանը (ես կավելացնեի և ոչ միայն քեմականի), չես կարող հպարտությամբ չցվել նրա համար, որ այնտեղ են գործել մեր ազգային մշակույթի փառավորված բազմաթիվ գործիչներ»:² Այդ ետնախորինի վրա պատահական չեր, որ Արցախյան շարժման օրերին արցախահյուրյանն օգնելու նպատակով ոտքի կանգնեց ողջ աշխարհում սփռված հայությունը: Դա հայ ոգու միասնության առհավատչյան էր և գիտակցումն այն հանգամանքի, որ Արցախի հարցի օրինավոր լուծումը սկիզբն էր հայ պահանջանարկության հետագա քայլերի:

Զեկուցում կարդացված Ծուշի հայոց քաղաքակրթության օրրանում, գիտաժողովի գԱԱ հրատ, 2007, էջ 102–115:

¹ Ուրբեն, նշվ. աշխ., հ. 1, էջ 278:

² Հր. Միմոնյան, Ազատազրական պայքարի ուղիներում, գիրք I. Եր., 2003, էջ 82–83:

¹ Տե՛ս Հ. Վ. Գրիգորյան, Գ. Հ. Հարությունյան, Ծուշի ուսալականը:

² Բագրատ Ովուրյան, Արցախի պատմությունը, սկզբից մինչև մեր օրերը, Եր., 1994, էջ 196:

ԱԿԱԴԵՄԻԿՈՒ ՀՐԱՉԻԿ ՍԻՍՈՆՅԱՆ (Ծննդյան 80-ամյակի առթիվ)

Պատմական Սյունիքը հայ ժողովրդին պարզեց է անվանի մարդկանց մի հոյակապ փաղանգ. այդ շարքում կարելի է իիշել հայ ազատագրական շարժման մասնակիցներ, անվանի գորավարներ, իրամանատարներ, հայրենիքին անձնուրաց նվիրյաններ, մտավորականներ՝ գիտնականներ, գրողներ, գրականագետներ և պատմաբաններ: Նրանց շարքում իր ուրույն տեղն ունի պատմ. գիտ. դոկտոր, ՀՀ ԳԱԱ խկական անդամ, անվանի գիտնական Հրաչյիկ Սիմոնյանը, որի ծննդյան 80-ամյա տարելիցն է նշում մեր ժողովրդոյ:

1928 թ. դեկտեմբերի 8-ին Գորիս քաղաքում ծնվեց մի իրաշամանուկ, որին ծնողներն անվանեցին Հրաչյիկ: Անունն արդարացրեց իրեն. չնայած քնակորուրյամբ թվում էր մեղմ ու հանդարտ, բայց երբ տեղը գալիս էր, նա հոր էր դառնում և իր հոգու կրակով վարակում շրջապատին: Կարծես աստվածաշնչյան պյատօպամը «հոր էկի արկաներ», նրա համար էր ստեղծվել: Դեռ դպրոցական, նա իրապորված կարդում էր իր ժողովրդի՝ հերոսական և ողբերգական, անօրինակ սխրանքներով լի պատմության վերաբերյալ եղող գրականուրյունն ու պատմությունն: Այդ իմաստով պատմական չէր մասնագիտության ընտրությունը: Սյնծակարգ դայրոցը Գորիսում ավարտելուց հետո երիտասարդն ընդունվեց Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը: 1952-ին ավարտեց ուսումնառությունը և աշխատանքային գործունեությունն սկսեց ծննդավայրում՝ սկզբուն Գորիսի շրջանային թերում, ապա՝ շրջկոմում: Մոսկվայում 1959-ին ընդունվեց ԽՄԿԿ Կենտկոմին առընթեր հասարակական գիտությունների ակադեմիա, որն ավարտեց 1961-ին և հենց այնուհետ, նոյն թվին, պաշտպանեց թեկնածուական ատենախոսություն, ստացավ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Դարձյալ 1961-ին Մոսկվայում լույս տեսավ նրա առաջին գիտական աշխատությունը՝ “Перевооружение промышленности Армянской ССР в послевоенныи период (1945–1950 թ.)”.

Հայաստան վերադառնալով՝ ՀՀ Սիմոնյան աշխատանքի անցավ ՀԿԿ Կենտկոմին առընթեր կուսականության ինստիտուտում որպես

ավագ գիտաշխատող (1961–1966): 1966 թվականից 11 տարի նա տարբեր պաշտոններ է փարել Հայկական ԽՍՀ Կոմկուսի Կենտկոմում: 1969-ին նա հաջողորդյամբ պաշտպանում է դրկողրական ատենախությունը և ստանում պատմական գիտությունների դրկողորի աստիճան: 1977 թ. նա վերադարձավ գիտական աշխատանքի և մինչև 1990 թ. տասներեք տարի շարունակ, փարեց ՀԽՍՀ Կոմկուսին առընթեր Մարդաբանության ինստիտուտի տնօրենի պաշտոնը (հետագայում այն վերանվանվեց հասարակական-քաղաքական հետազոտությունների ինստիտուտ): 1986 թ. Սիմոնյանն ընտրվեց Հայկական ԽՍՀ գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ (խկական անդամ ընտրվեց տասը տարի անց):

Լայն և բնողորդուն է Հ. Սիմոնյանի հետաքրքրությունների ոլորտը: Նրա գրչին են պատկանում ավելի քան 25 մենագրություններ և մի քանի հարյուր հոդվածներ: Ակզենտական շրջանում նրա հետազոտությունները կրում են փիլիսոփայական տեսական բնույթը: Հատկանշական են «Ընդունակության» տեսությունները, «Քննական վերլուծություններ» (Երևան, 1973 թ.), «Արդի բորժուական գաղափարախոսության քննադատական ուրվագծեր» (գիրք 1՝ Երևան, 1977 թ., գիրք 2՝ Երևան, 1980 թ.), «Գիտատեխնիկական հեղափոխությունը և նրա սոցիալական հետևանքները» (Երևան, 1982) և այլ գործերը: Գիտական հասունության հետ մեկտեղ Սիմոնյանն սկսում է հակվել դեպի իր արմատները՝ հայ ժողովրդի պատմության կնճռուու ու քարդ իրադարձությունների քննարկումը: Գիտական գործունեության դեռ սկզբում նրան հետաքրքրում է իր ժողովրդի այն հատվածը, որը գրկվել էր հայրենիքից և սփոյել աշխարհի բոլոր ծայրերում: Ի՞նչ խմբություններ են կատարված ազգային արմատներից լիովին կտրված, բայց նրա հոգեկան կերտվածքին անսահմանորեն նվիրված, իրարից տարրեր այդ մարմիններում, որոնք բոլորը միասին կոչվում են մի բնդիհանոր անունով՝ Սփյուռք: Այդ հարցին է նվիրված գիտնականի «Սփյուռքահայությունը սոցիալ-քաղաքական պայմաններում» ծավալուն հետազոտությունը, որը լույս է տեսել դեռևս 1968-ին:

Իրար հետ սերտորեն կապված են գիտնականի երկու աշխատություններ՝ «Թուրք ազգային բորժուական գաղափարախոսությունը և տեսագրությունը» աշխատությունը և աշխատությունը՝ «Թուրք ազգային բորժուական գաղափարախոսությունը» աշխատությունը, որը լույս է տեսել դեռևս 1968-ին:

բաղաքանությունը» (Երևան, 1986) և «Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից» (Երևան, 1991) ուսումնափրությունները: Աղյուրագիտական հարուստ հենրի, ժամանակի ճամուի և զիտական աշխատությունների օգտագործումով այդ երկու ուսումնափրություններն աչքի են ընկերում զիտական խոր ընդհանրացումներով: Առաջին աշխատության մեջ բացահայտված է բուրքական բորժուազիայի առաջացման և ձևավորման պատմական ժամանակաշրջանը, որը ճակատագրական և բախտորշ եղավ հայ ժողովրդի համար: Հանգամանորեն քննարկված են օսմանիզմ, իսլամիզմ, պանխալամիզմ, նոր օսմանիզմ, քուրքիզմ, պանթուրքիզմ հասկացությունները և դրանք ներկայացված իրեն բուրքական բորժուազիայի գաղափարախոսության հիմնական տարրերը՝ տարբեր ժամանակահատվածներում: Հեղինակը համոզի փաստարկներով ցույց է տալիս, որ թուրք պազային բորժուազիայի գաղափարախոսությունն իր առանձնահատկություններով տարբերակվում է բորժուական գաղափարախոսությունից ընդհանրապես: Այն իր մեջ ներառում է բորժուական գաղափարախոսության ամենահետադիմական տարրերը և դրանով էլ կոչված է ծառայելու թուրք թուրքուազիայի շահերին: Աշխատության մեջ քննարկված են Թուրքիայում ծավալված սահմանադրական շարժման, արդուիլամիշյան «զուլումի» տարիների, պանխալամիզմի՝ որպես կայսրության պաշտոնական ուսումների հիմնահարցերը: Համեմատվում և բացահայտվում են պանխալամիզմ ու պանթուրքիզմ հասկացությունները, ցույց է տրվում երիտրուրքերի պատմական թատերաբեմ իջնելը, նրանց ծավալած հակահայկական գործությունը, արևմտահայության կացությունը առաջին համաշխարհային պատերազմին նախորդող և հետագա տարիներին: Ուշագրավ է տակավ հայտնի փաստարդերի և թուրք պատմաբանների աշխատությունների միջոցով հայոց ցեղասպանությունը ծրագրելու ապացույցները: Դրա վկայությունն է Իբրիհամ կուսակցության Սալոնիկում 1910 թ. կայացած ժողովում դոկտոր Նազըմի առաջարկած ծրագիրը: Իր երրուստ վերջին շատ վճռականորեն է դնում այդ հարցը՝ կամ, կամ: Բազմաթիվ փաստերով հեղինակը ցույց է տալիս՝ ինչպես թուրքական հեղափոխության զոհասեղանին վճռվեց մի ողջ ժողովրդի ճակատագիր, ինչպես շրաբարվելով իր նախորդների կատարածով «կարմիր հեղափոխականի

թիկնոցը ուսերին գորշ գայր» Սուստաֆա Քեմալը գործում էր պանթուրքիզմի դրոշի տակ՝ վերջնական նպատակը համարելով նաև արևելահայության ոչնչացումը:

Այս աշխատության հետ սերտ առնչություն ունի «Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից» ուսումնափրությունը, որի մեջ հեղինակը, ներառելով նախորդ աշխատության հիմնական ելակետային դրույթները, շեշտը դնում է պանթուրքիզմի՝ հայ ժողովրդի համար այսօր էլ խիստ փոանգավոր գաղափարախոսության մերկացման վրա: Այդ հարցն արդիական սուր հենցեղություն ստացավ արցախյան շարժման ծավալումից հետո: Մանրամասն քննարկելով այդ հարցերը, հեղինակը հմտությամբ ցույց է տալիս, որ արցախյան շարժումը կրոնական հողի վրա ստեղծված շարժում չէ, ինչպես ցանկանում են հավատացնել «Փետերնացիոնալիստական» Ալբրեժանում: Մոտավորապես պազմաբիկ երկրներում հայերը համերաշխ ապրում են այդ կրոնը դավանողների հետ (Սիրիա, արարական հանրապետություններ, Իրան, Իրաք և այլն): Այլ է պանթուրքիզմի գաղափարախոսությունը և դրանց եկող փոանգը ոչ միայն հայերի, այլ նույնիսկ իսլամը դավանող ոչ թուրք ժողովրդների համար: Այդ հարցերի քննարկում հեղինակը հասցնում է մինչև XX դարի վերջը՝ բացահայտելով ժամանակակից Թուրքիայի բաղականությունը Հայկական հարցի վերաբերյալ և դրա հետ սերտ առնչվող ալբրեժանական պազայնամոլների պատրամներն ու ակնկալիքները Թուրքիայից: Աշխատության վերջում հեղինակը սուր քննադրաստության է ենթարկում Խորհրդային Սովորյան կենտրոնական իշխանություններին Սումգայիթի և Բարփի հայության նախճիրը կազմակերպելու և բոլտվության համար, անարգանի սյունին զամում ալբրեժանական «անպատճելիության» սիմոռնի հեղինակներին:

Հետագա տարիներին Հ. Սիմոնյան գիտնականի հետազոտություններն ուղղված էին հարազատ ժողովրդի ազգային-ազատազրական շարժումների ծավալմանը XIX դարի երկրորդ կեսին: Հայ ժողովրդի ազատազրական պայքարի խորհրդանից մեծ հայդուկապետ Անդրանիկը և նրա ժամանակը դարձան երկինատորանոց աշխատության թեման: Այն լույս տեսավ 1996-ին: Ժողովրդական հերոսի մասին հրատարակվել են բազմաթիվ աշխատություններ և Խորհրդային Հայաստանում (մա-

նավանդ 70-ականներից սկսած) և Սփյուռքում: Սակայն Սիմոնյանի այս մենագրությունն իր առանձնակի տեղի ունի այդ հսկա ցուցակի մեջ: Հեղինակին հաջողվել է ոչ միայն նոր խոսք ասել անվանի զորավարի ողջ գործունեության մասին, այլև արտակարգ խորությամբ մեկնարանել արևմտահայ ազգային-ազատազրական շարժման անբախտմները: Արդարացված է աշխատության խորագիրը՝ «Անդրանիկի ժամանակը»: 1865-1927 թթ. հայ հասարակական-քաղաքական կյանքի, ազատագրական պայքարի բազմաթիվ իրադարձություններ են լուսաբանված այս աշխատության մեջ: 14 գլուխներից բաղկացած այս ուսումնասիրությունն ամենայն իրավամբ կարելի է համարել ժողովրդական հերոսի համար կանգնեցված ամենափայլուն հոլովաճաններից մեկը: Իր բոլոր մենագրություններում Սիմոնյանն ընթերցողին ներկայանում է իրքև հայերենին լավ տիրապետող գիտնական. այլ է այս աշխատությունը, որտեղ հեղինակի գրչի տակ փայլում է հայոց լեզվի ճոխությունը, հարստությունը, վեհությունը: Այդ աշխատությունը կլանում է ընթերցողին խորությամբ, գիտական բարձր մակարդակով և արտակարգ լեզվանական հատկանիշներով:

2003 թ. լույս տեսան հեղինակի նոր՝ «Ազատազրական պայքարի ուժիներում» մենագրության առաջին և երկրորդ հատորները: Յոր գլխից բաղկացած առաջին հատորը նվիրված է 1905 թ. հունվարից 1906 թ. օգոստոսն ընկած իրադարձությունների մեկնարանմանը, ոուսական առաջին հեղափոխության տարիներին Անդրկովկասում ընթացող խմբումներին, հակացարական երսիցներին: Առանձնապես հետաքրքիր է ազգային կուսակցությունների գործունեության բացահայտումը ցարիքնի կողմից սահմանադրած հայ-քարարական բախումների ընթացքում: Ժամանակի մամուլի և արխիվային փաստարդերի, բազմաթիվ անհայտ փաստերի մեկնարանությամբ գիտնականն ընթերցողին ներկայացնում է այդ կուսակցությունների տարրեր գործիչների հայրենասիրական նվիրումը: Առավել հետաքրքրությամբ են ընթերցվում այն հատվածները, որոնք վերաբերում են արևմտահայ ֆիդայինների և հեղափոխական գործիչների՝ արևելահայերին օգնության հասնելու փաստերին: Սերկացված են ցարական և բուրքական գործիչների համատեղ հակահայկական ծերնարկները, հայ ազատազրական շարժման երդվալ հա-

կառակորդների և հայրենիքին նվիրյալ գործիչների մեջ խորացող առակատումը, որը հաճախ ավարտվում էր ոճրագործների մահով: Հեղինակն ապացուցում է, որ հայ վրիժառուները ոչ թե ահարեկիչներ են, այլ հարազատ ժողովրդի գոյության և արդար դատի պաշտպաններ: Խորագրերի առումով միայն V գլուխն է նվիրված արևմտահայությանը՝ «Լայնածավալ ոճիքներ բուրքական դժոխքում: Հայկական դիմադրության նոր դրսերումներ»: Սակայն ողջ հատորի բովանդակության մեջ այնպես միահյուսված և իրար շաղկապված են Հայաստանի արևելյան և արևմտյան հատվածներում կատարվող իրադարձությունները, որ զարմանում ես հեղինակի հնարամտության և բացառիկ օժտվածության վրա. իրավացի է հեղինակը, եթե այդ բոլորը ներկայացնում է իրեն մեկ ժողովրդի կյանքի և գոյության պայքարի արտահայտություն: Առաջին հատորն ավարտվում է փոքրիկ հավելվածով, որը ներկայացնում է երկու հետաքրքիր փաստարույթ, որնոր բաջանանք են հայ հանրությանը, բայց հայերեն բարգմանությամբ առաջին անգամ են իրատարակվում: Առաջինը Նիկոլայ II-ի 1905 թ. օգոստոսի 1-ի բարձրագույն իրամանն է՝ 1903 թ. հունիսի 12-ի հայ եկեղեցու շարժական ու անշարժ գոյրի բոնագրավման օրենքի չեղյալ հայտարարելու մասին և նշված է կալվածքները եկեղեցուն վերադարձնելու կամոնակարգը: Երկրորդ փաստարույթը Նիկոլայ II-ի 1905 թ. հոկտեմբերի 17-ի բարձրագույն իրովատական է: (մանիկենատ) Պետական Դումա իրավիրելու մասին. երկու փաստարույթն էլ ժողովրդական հոգումների հայրանակի արդյունք են: Այդ մեծածավալ աշխատության երկրորդ հատորը նվիրված է 1906 թ. օգոստոսից մինչև 1907 թ. հուլիսն ընկած ժամանակաշրջանին: Այն բաղկացած է 8 գլխից: Հեղինակը շարունակում է առաջին հատորի շարադրանքը և հատորն սկսում VIII գլխից: VIII և IX գլուխները նվիրված են ցարական կառավարության իրակրած ազգամիջյան պայքարի աստիճանական ավարտին, հայ-քարարական ընդհարումների շարժադրեների վերջին ակորդին, բացահայտում են գոլիցինյան հայահալած քաղաքականությունից իրաժարվելու միտումները: Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում աշխատության X գլուխը, որը նվիրված է հայ ազգային կուսակցությունների միջև ընթացող գաղափարական ալերախումներին, երկրուսակցական և միջկուսակցական տարածայնություն-

ներին: Բացահայտվում է հայ առաջին քաղաքական կուսակցության «Վայրընթացը», նրա և Հ.Յ. դաշնակցության մեջ եղած հակասությունները, բազմարիվ արմենականների ՀՅԴ շարքերն անցնելու փաստերն ու պատճառները: Այդ գիշի մյուս ենթագույնը քննարկում է Հնչալյան կուսակցության շարքերում գաղափարական տարրընթացությունների պատճառները, նրա մեջ առաջացած արևմտահայ թեր՝ առանձնանալը՝ «Վերակազմյաներ» անունվ, ինչ հնչալյան թեր՝ ուստական սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցությանը մերձնենալու հակումները: Սկզբից բվում է, թե այդ բոլորը հանրահայտ փաստեր են, սակայն հեղինակն ամեն ինչ մատուցում է ընթերցողին նոր փաստերով և հետաքրքիր մեկնարանություններով: Քննարկված և բացահայտված են նաև Ազգային երրորդ կուսակցության՝ ՀՅԴ շարքերում առաջացած ներիակ խմբավորումների ստեղծման պատճառները: Գյունականի բացառությամբ այդ հակասություններն ուժին դրսելությունին, երբ ՀՅԴ-ն ստիպված էր վերամշակել 1892 թ. իր ընդունած ծրագիրը և արևմտահայ ազգային ազատագրության խնդիրն արձարձելուց բացի, 1903 թ. հունիսի 12-ի՝ հայ եկեղեցու շարժական և անշարժ գույքի բռնագրավման ցարիզմի ընդունած օրենքից հետո կանգնեց արևելահայերի ժողովրդական բուոն բողոքների ու հակակառավարական պայքարի գույխ և ընդունեց «Կովկասյան նախագիծը»: Դրա պատճառով տարածայնություններ առաջացան կուսակցության ներսում: Զափակոր հայացքների տեր կուսակցականները ճիշտ չին համարում ցարիզմի դեմ պայքար մղելը, և նրանց մի մասը հեռացավ ՀՅԴ-ից, միացավ «Մշակ» թերքի գաղափարական ուղղությանը հետևողներին: Կատարելով խորքային վերլուծություններ՝ հմուտ հետազոտողը հանգում է հետաքրքիր եզրակացությունների, ցույց է տալիս, որ այդ փորորկալից տարիներին Դաշնակցությունն «իր մեջ ամփոփել էր հայության մեծամասնության իդեան ու ձգությունները՝ իրենց բոլոր ելեւճներով» (հ. II, էջ 169): Բացահայտելով, որ ցարական կառավարությունը ուստական առաջին հեղափոխությունը, «արտարին ու ներքին խայտառակ պարտություններից հետո» կորցրել էր իր գույխը, հեղինակը ցույց է տալիս, որ այդ տարիներին կովկասահայության իրական կառավարիչը ՀՅԴ-ն էր, ոչ թե ուստական կառավարությունը: Մանրամասն քննարկվում և գնահատվում է ՀՅԴ բն-

դրանած «Կովկասյան նախագիծը», որի նկատմամբ արտահայտած թեր և դեմ կարծիքներով կուսակցության ներսում ստեղծվեցին ներիակ ուժեր՝ միհրանական շարժումը և դրա հակադիր թեր՝ երիտղաշնակցականները: Վերջիններին գաղափարների արտահայտությունը դարձան Ս. Ամիրյանի «Ժամանակն է սրավվելու» և «Դաշնակցության կրիզի» աշխատությունները: Հ. Սիմոնյանի խնդրու առարկա հետազոտության մեջ հետաքրքիր էցեր են նվիրված նաև սոցիալ-դեմոկրատական հայ կուսակցության ծնունդին ու ստեղծման օրվանից Ռ.Ս.Դ.ԲԿ.-ի հանդեպ դրսերած բացասական կեցվածքին: Ազգային կուսակցությունների գործունեության քննարկումից հետո մի ծավալուն գլուխ է նվիրված Ռ.Ս.Դ.ԲԿ.-ի հայկական թերի, հայ բոլշևիկների գործունեությանը, ընդորժված է Ստ. Շահումյանի կատարած դերը: Այս հատորում ևս մեծ տեղ է հատկացված արևմտահայ ազատագրական շարժմանը. քննարկված են եվրոպական միջազգային սոցիալ-դեմոկրատիայի՝ Հայկական հարցի նկատմամբ դրսերած վերաբերմունքը, մեծ տերությունների՝ Լահեի և Ա և Ա խաղաղության կոնֆերանսներին հայ պատվիրակությունների ուղղած գրությունները: Մի ամբողջ գլուխ է նվիրված ՀՅԴ-IV Ընդհանուր ժողովի ընթացքի, ընդունած որոշումների քննարկմանը, ներկուսակցական ճգնաժամի հայրահարմանը, երկիր գենք կրելու մարտավարությանը, ուստական և բորբական պետական ուժերի միասնական գործողություններին՝ հայ գինատար խմբերի գործունեությունն արգելելու ուղղությամբ: Մանրամասն քննարկվում է Անդրանիկի «Մարտական հրահանգներ» գրքույթը, արժևորվում իրեն հայ ռազմագիտական գրականության ակնառու երևոյթը: Մի փորձիկ գլուխ նվիրված է ֆիդայական շարժման մայրամուտին՝ Սոլուսի կովի և Գևորգ Զառշի մահվանը, երեք ամիս անց՝ Դուրան-Բարձրավանդակի Փերարի կովին և Սպաղանաց Մակարի մահվանը: Դրանով փակվում է ավելի քան երեք տասնամյակ տևած անձնազնի հերոսների գործունեության փարագույթը: Վերջին գլուխությունների նույնական առաջին բուրժուազմները, Թուրքիայի և Պարսկաստանի աշխատավոր զանգվածների դարավոր նիրից արքնանալու փորձերը ու այդ գործընթացում հայերի խաղացած դերը: Ընթերցողին գարմացնում է այդ երկու հատորների աղբյուրագիտական հենքը, ար-

խիվային տարրեր հաստատություններից օգտագործված մեծարանակ վավերագրերը, առանց շափականցության, հարյուրավոր անձնավորությունների մասին տված տեղեկատվությունները։ Շուտով լոյս կտևնեն նաև այս աշխատության 3-րդ և 4-րդ հաստորները։

Հ. Սիմոնյանին կարելի է դասել մեր դասական գիտնական-հետազոտողների շարքը։ Իր աշխատություններով նա հարազատ ժողովրդի արդար պայքարի նվիրյալ գիտնորի պարտըն է կատարում։

Այսօր էլ մեծարգություն ակադեմիկոսն աշխատում է երիտասարդական ավագությունով։ Հարգարժան գիտնականին ցանկանում ենք բաջառողջորդություն և արևշատություն։

Պատմա-Բանասիրական հանդես, 2008, № 3, 284–290։

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՀՐԱՅԻԿ ՄԻՍՈՆՅԱՆ Հայերի զանգվածային կոտորածները Կիլիկիայում (1909 թ. ապրիլ)

Գալուստ Գյուլբենկյան բարեգործական հիմնարկությունը ազգություն գործունեություն է ծավալում ինչպես աշխարհասպայություն հայության մեջ, այնպես էլ մայր հայրենիքում։ Նրա միջոցներով հայրենիքում լոյս են տեսնում հայագիտական արժեքավոր աշխատություններ։ Երևանի պետական համալսարանի հայագիտական կենտրոնի երաշխավորությամբ վերջերս լոյս տեսավ վաստակաշատ գիտնական, ՀՀ ԳԱԱ խոկան անդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հրաչյակ Սիմոնյանի՝ բացառիկ հետաքրքրություն ներկայացնող մի աշխատություն, որի վերնագիրն ամեն ինչ ասում է զրբի մասին։ «Հայերի զանգվածային կոտորածները Կիլիկիայում (1909 թ. ապրիլ)»։

1895–1896 թթ. զանգվածային կոտորածներից գերծ մնացած հայկական Կիլիկիան 1909 թ. ապրիլի 1-ին ենթարկվեց աննկարագրելի սպանությունի։ Սինչ այդ, 1908 թ. հունիսի վերջին Օսմանյան կայսրությունում կատարվել էր երիտրոբրական «հեղափոխությունը», և իշխանության

գլուխ անցած «Սիուրյուն և առաջադիմություն» կուսակցությունն ազդարարել էր, որ ժողորդիան դատնում է «ազատության, եղբայրության և հավասարության» երկիր։ Այդ կարգախոսից ոգևորված արևմտահայությունը, կարծես մոռանալով դարերի ընթացքում տեղի ունեցած բորբդական (ընդհանրապես մահմեղական) խժդությունները, հոտավանայեց ապագային և ձեռնամուխ եղավ «օսմանյան հայրենիքի» վերածնությանը։ Բայց «հեղափոխությունից» 9 ամիս անց արևմտահայ ժողովովի մի բարգավաճ հատված՝ կիլիկիահայությունը, ենթարկվեց անմարդկային ջարդի, կոտորածների, չսված խոշտանգումների։ Ընդամենը 10–12 օրվա ընթացքում իրի ճարակ դարձան, ավերվեցին շեն քաղաքները, գյուղներն ու ավանները, քարուքանի եղան բազմաթիվ դպրոցներ ու եկեղեցներ, այրվեցին մշակույթի անգնահատելի գանձեր, բազմաթիվ ձեռագիր հիշատակարաններ, անմարդկային, գազանային ձևով խոշտանգվեցին մոտ 35.000 հայ, ողջ մնացածներից շատերը հետագա օրերին մնան հոգեկան ցնցումից, խոկ ապրողների հոգում մինչև մահ մնացին այդ անդամանելի վերքերն ու կավճականի հայ պարբերական մամուլի բազմաթիվ օրգաններ («Քյուզանդիլն», «Արևելք», «Սուրհանողակ», «Ժամանակ», «Կոհակ», «Հայրենիք», «Ազդակ», «Արևելյան մամուլ», «Անակիտ» և այլն), հասարակական, հոգևոր, մշակութային գործիչների հուշագրություններում, ականատեսների վկայություններում իրենց վերաբերնունքն արտահայտեցին մարդկության պատմության մեջ նմանը շունչեցող նախճիրի նկատմամբ։ Հր. Սիմոնյանի աշխատությունը նվիրված է այդ իրադարձությունների ընթարկմանը։ Բավական է ծանոթանալ ենթադության մի քանի էջերին, որպեսզի պատկերացում կազմենք, թե ինչ տքնածան աշխատանք է կատարել հեղինակը, և ինչ հարուստ աղբյուրագիտական հենք ունի ուսումնասիրությունը։ հատկապես ծանրակշիռ տեղ են գրավում ՀՀ ազգային արխիվի, Զարենցի անվան գրականության ու արվեստի բանգարանի և Մատենադարանի արխիվների տարրեր Փանջերի բազմաթիվ արժեքավոր վագերագրերը։ Արժանահավատ սկզբնաղբյուրներ են նաև ականատեսների հուշագրական պատումները, 1909–1920 թթ. ընթացքում լոյս տեսած այդ թեմային նվիրված աշխատությունները, վկայությունները, տեղեկագրերը։ Այդ բոլորի ըննախույզ հետազոտությամբ, դեպքերի

վերլուծությամբ և համադրությամբ ստեղծվել է կուռ, քարձրարժեք զիտական աշխատություն, որը քաղկացած է ներածությունից, 4 գլուխներից, խիստ արժեքավոր հավելվածներից: Դրանք բոլորն ել ունեն զիտական քարձր արժեք: Ներածությունը ներկայացնում և քննարկում է աշխատության աղբյուրագիտական հենքը, հատվածներ է նվիրում Կիլիկիայի անցյալին, ներկայացնում բնակչության ազգային կազմը, քարանձակը, վարչական քաժանումը, վերհանում կոտորածների պատճառները, ջարդի առիթները և սաղբանքները: Գրված է կուռ տրամարանությամբ, քազմարիվ հարցերի խորաբննին վերլուծությամբ:

Աշխատության առաջին գլուխը նվիրված է Աղանա քաղաքի կոտորածների կազմակերպման, դեպքերի և իրադարձությունների վերլուծությամբ: Հեղինակը համոզիչ փաստերով ցույց է տալիս, որ Աղանայի հայության կոտորածը պատահականություն չէ, այլ լավ մշակված ծրագրի գործադրություն: Օգտագործելով ժամանակի մամուլի իրատարկած փաստերը՝ հեղինակը նկարագրում է կոտորածների ընթացքը, ջարդարանների գործողությունները: Հայերի ունեցվածքին տիրանալու համար բուրքերը նույնիսկ իրար էին սպասում, ապա հայտարարում, թե հայերն են սպանել մահմեղականներին: Կոտորածներից միայն երկու ժամ անց տեղի հայությունը հասկացավ, որ նախճիրներ կազմակերպող իշխող վարչախոսմբն է՝ իր գործերով ու ոստիկաններով: Այդ ժամանակ մոտավորակեն հարյուր հայ երիտասարդ, որոնք «հեղափոխությանը» հաջորդած «ազատության» օրերին գենք էին ծեռք բերել, վտաղոց դուրս եկան և շղթա կազմած դիմադրեցին ջարդարաններին: Հայերի առաջին համազարկերը սարսափահար արեցին նրանց, և ոճրագործները տագնապած փախուստի դիմեցին՝ բղավելով, որ քաղաքում կովում են ֆիդայիների ջոկատներ: Աշխատության հեղինակն ապացուցում է, որ Աղանայի նահանգապետ Զևադ բեյը, զինվորական իրամանատար Ռեմզի փաշան (1895 թ. Զեյրունի հերոսական ապստամբության ժամանակ պարտված իրամանատարը) ջարդերի կազմակերպիչներն էին: Նրանք, զայրացած փորբարիկ հայերի դիմադրությունից, լրացուցիչ զորք են տրամադրում, զինում քամբակի արտերում աշխատող՝ Միջագետքից եկած 20 հազար բրյերի: Փորբարիկ հայերի՝ ամբողջ օրը ցույց տված դիմադրությունը ջարդերի կազմակերպիչներին ստիպեց մշակել

նոր ծրագիր. նահանգապետը 500 հրձիգ առանձնացրեց՝ հայարնակ քաղերի տները, եկեղեցիները, դպրոցները, իրի ճարակ դարձնելու նպատակով: Այդ ժամանակ Կ. Պոլսի կենտրոնական իշխանությունները հասուն կեռագիր են ուղարկում ջարդի կազմակերպիչներին՝ գործել զգուշությամբ, շնչառել օտարերկրյա հյուպատոսարանները և մյուս հաստատությունները: Գիտնականը քացահայուս է մեծ տերությունների հյուպատոսների՝ սկզբում լիովին անտարբեր, ապա՝ ցուցադրական օգնությունը «Կարմիր խաչի» մարմնների միջոցով: Հեղինակն ապացուցում է, որ հայ բնակչության պաշտպանության նախակով օմանյան մայրաբաղաջիկ Կիլիկիա ուղարկած քանակի վաշտերը, որոնք հայերի կողմից ընդունվեցին խանդավառությամբ և ծափերով, անմիջապես սկսեցին հայերի ծեռորում եղած սակավարիկ գենքը հավաքել: Դրանից հետո նրանք նախապատրաստվեցին ջարդն ավարտին հասցնելուն: Առաջին ջարդերը տևել էին ապրիլի 1-3-ը: Ապրիլի 4-ի «հաղադարձության» զինը հազարավոր հայերի կյանքն էր: Ապրիլի 7-ին լույս տեսավ երիտրոբրական «Ծրիդալը» թերթի նոր համարը, որը լի էր հայերի դեմ ուղղված քինախմուխի հողվածներով, վայրենի ատելությամբ, զրպարտություններով: Հայերը մեղադրվում էին պետական դավաճանության, բուրքական իշխանությունների դեմ ապստամբություն բարձրացնելու մեջ: Թերթը ազդարարում էր, որ հայերը ցանկանում են «այնտությունն ստեղծել» և ուրիշ են եկել հեղափոխության «հավասարություն և երայրություն» սկզբունքների դեմ: Այդ համարով թերթը, փաստորեն, նոր կոտորած էր նախապատրաստում: Ապրիլի 12-ին սկսեց Աղանայի հայության նոր ջարդը: Թուրքական քաղաքաստմ հնչած սաղրիչ կրակոցի հետևանքով լուրեր իորինվեցին, թե հայերը հարձակվել են բուրքերի վրա, իրդեհեկ մզկիթները, սպանել թուրքերին: Վերջիններին «Փիրկելու» նապատակով քանակի զինվորները շրջապատեցին հայկական քաղերը և սկսեցին կոտորածները: Երկրորդ ջարդի առաջին օրը Սերսինի նավահանգաստում կայանած ֆրանսիական նավի ծառայող մի սպանկարագրում է, թե զինված հայերի ինչքա՞ն դիակներ են բուրքերը քափել Սիհուն և Զհան գետերը: Ինչ չէին հասցրել կոտորածի առաջին օրերին, ավարտին հասցրին երկրորդ կոտորածի ժամանակ: Հրդեհեց քաղաքի 3/4-ը՝ կրակի և մոխիբների տակ բողնելով հազարավոր անմեղնե-

թի: Զարդեր եղան ոչ միայն Աղանայում, այլև վիլայերի բոլոր սանցակներում (Աղանա, Ջերել-Բերերեր, Կոզան), գյուղերում, ավաններում: Հալեպի վիլայերի բոլոր սանցակները (Հալեպ, Մարաշ), նաև գավառակները ենթարկվեցին ահավոր սպանության: Հեղինակը չի անտեսում ոչ մի փաստ, ոչ մի մանրություն: Անուն առ անուն բվարկվում են բոլոր գյուղերը, ավանները, կոտորածք կազմակերպողները: Աշխատության երեք գլուխներում, որտեղ քննարկված են հայկական Վիլիկիայի բոլոր փայրերի կոտորածները, առանձնապես մի փաստ է գրավում ընթերցողի ուշադրությունը. Երկու վիլայերների, 5 սանցակների բոլոր փայրերի կոտորածներից զերծ մնաց միայն անպարտելի Զեյրունը՝ շրջակա 12 հայաբնակ գյուղերով: 1895–1896 թթ. Զեյրունի ապատամբությունից դասեր քաղաք քուրքերը չհամարձակվեցին մոտենալ նույնիսկ նրա շրջակայրին: Զեյրունի անունից սարսափած քուրք ամբոխը չմոտեցավ նաև Ֆոնուկ հայկական գյուղին: Եզրակացությունը մեկն է. եթե դիմադրություն ես, չես կոտորվում: Սարսափելի են տարբեր փայրերի կոտորածների նկարագրությունները: Մարդ արարածի դժոխային ուղեղը հորինում է տանցանքի այնպիսի ձևեր, որ անհարիս է անգամ գագանին: Ընթերցողի հիշողության մեջ խարանփում է մի փայրագ քրորություն՝ Աղանայի մոտակա Խայրլը գյուղի բնակիչ Սենես Խանումի ոճրագործությունը: Նա հավաքում է շրջակա գյուղերի բոլոր հայերին, ընտրում գեղեցիկ աղջիկներին, հարսներին և նվիրում քուրք տղամարդկանց: Մնացած կանանց իր իրամանով քշում են գյուղի ամենամեծ փուռը, վրաները նավք լցնում և այրում: Թուրք «խանումի» իրամանով հայ տղամարդկանց տանում են գետի ափը, որտեղ իր ծեռորդ մեկ-մեկ բոլորին մորքում է, գետն է լցնում, և «սիրով հովանում է»: Ժամանակի հուշագիր Հակոբ Թերզյանը իրավամբ նրան անվանում է. «XX դարու անգրության մարմնացումը կնոջական տարագին տակ»:

Աշխատության շորորդ գլուխն ամենածավալուն է, համարյա կեսը (էջ 181–356): Կազմված է 16 ենթագլուխներից, որոնց խոսում վերնազերը փաստում են քննարկվող նյութի անհրաժեշտությունը: Այստեղ քննարկված են աղետյաներին օգնություն ցուցաբերելու խնդիրները. Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի, նախատաճառույց հանձնախմբի, ՀՅԴ Կ. Պոլսի կոմիտեի հովանագործությունը «Կարմիր խաչի»

առողջապահական խմբի, Ազգային ժողովի՝ այդ ուղղությամբ ծավալած գործունեությունը: Ուզ արևմտահայությունը մեծ ջանքեր գործադրեց՝ պետական մարմինների առաջ ձայն բարձրացնելով զրիվածների ապահովագրական գումարները նրանց հարազատներին վերադարձնելու համար. կառավարությունը մեծ դժկամուրյամբ և մասնակիորեն կատարեց այդ պահանջները: Հասուկ քննության առարկա է դաշնում զահերի թիվը պարզելու հարցը: Բ. Դուռը հանրությանը կեղծ փաստեր էր հաղորդում իսլամ և հայ սպանվածների թվի վերաբերյալ. հայերինը մի քանի անգամ նվազեցվում էր, մեծացվում զրիված մահմեղականների քանակը: Կ. Պոլսի երիտրուրբական «Թանին» օրաբերքը իրատարակում է Փարիզի օսմանյան դեսպանատան հայտարարությունը, որտեղ ընդգծվում էր, որ բոլոր կողմերի զոհերի թիվը չի անցնում 4 հազարից, ըստ որում, նշվում է 1924 խամաց սպանված, 533՝ վիրավորված և 1455 հայ՝ սպանված, 383՝ վիրավորված: Հայտարարության մեջ նշվում էր, որ 20 կամ 30 հազար զոհ նշելը քրիստոնյաների հիվանդ երևակայության արդյունք է: Քննարկելով բոլոր փաստերը, մանրանասն բացահայտելով կեղծիքները, հեղինակն ամրող Վիլիկիայում սպանվածների թիվը նշում է 31–32 հազար, որոնցից հայեր՝ 29–30 հազար: Այդ թիվը վերաբերում է սուկ ապրիլի 1–13-ը տեղի ունեցած ջարդերին: Սակայն կոտորածներից հետո սովոր, ցրտից, նյարդային ցնցումներից մահացել են 8000-ից ավելի մարդ: Համարելով բոլոր տվյալները՝ հեղինակն ընդհանրացնում է, որ զրիվածների ընդհանուր թիվը մոտավորապես 40 հազար է: Առանձնակի հաշվարկներ են կատարվում հայության կրած նյութական կորուստների ուղղությամբ. նշվում է, որ միայն Աղստան քաղաքում հայերի նյութական կորուստները կազմել են երեք հարյուր հազար օսմանյան ոսկի (1909 թ. գներով): Հետաքրքիր վերլուծություն է արված «Ռվեր Էլն կազմակերպել կոտորածները» ենթագլխում: Այդ դեպքերը կատարվեցին այն օրերին, երբ Կ. Պոլսում տեղի էր ունենում սույրան Արդու Համբայի կողմնակիցների զինվորական ապատամբությունը: Դրանց համբայումը շատերին դրդում է մտածել, որ ջարդերն իրականացվել են մերժությանը համապատասխան: Այդ կարծիքին եր նաև դեռևս 1907 թ. վերջին Արդու Համբայի հրամանով: Այդ կարծիքին եր նաև համագործակցող ՀՅ Դաշնակցությունը, որի ժամանակ կենտրոնը 1909 թ. մայիսին հանդիս եկավ հայտարարությամբ, ժնիվի կենտրոնը 1909 թ. մայիսին հանդիս եկավ հայտարարությամբ,

ըստ որի, ճիշտ չէր կոտորածների մեջ մեղադրել երիտրուրքերին: Դեռ երկու տարի պետք է անցներ, որ ՀՅԴ-ն զգար իր սխալը, հանդես զար այլ հայտարարությամբ և հեռանար «իբրիհաղականներից»: Անաշառ քննարկելով բոլոր փաստերը, համադրելով ականատեսների աշխատությունները, Կ. Պոլսի՝ եվրոպական պետությունների դեսպանների կարծիքները, Հ. Սիմոնյանը հանգում է այն եզրակացության, որ «Եփիկյան արհավիրքների պատասխանատունները երիտրուրքերն էին. իրենք էին, որ իրահեցին մոլեունդ ժողովուրդն ու զինվորը՝ հայերի դեմ» (էջ 217): Գրքում արտակարգ հմտությամբ ներկայացված են բորբական խորհրդարանում կիլիլյան աղևտի բուն քննարկումները: «Կրակոտ» վիճաբանությունների ընթացքում խորհրդարանի բուրք պատգամավորները կոտորածների ողջ մեղքը բարդում են հայ ֆիդայինների վրա: Նրանց են միանում բուրդ պատգամավորները: Թուրքական խորհրդարանի հայ անդամները՝ Վարդգեսը (Հովհաննես Սերենկուլյան), Նազարեթ Տաղավարյանը, Համբարձում Պոյաճյանը, Ժյուտելով ֆիդայինների մեղակցության վարկածը, պահանջում են մանրազնին քննություն կատարել և խառորդն պատճել մեղավորներին: Հարցը քննարկվում է խորհրդարանի մի քանի նիստերում (ապրիլի 18-ին, 28-ին, 30-ին, մայիսի 10-ին և 11-ին): Ի վերջո, խորհրդարանն ընտրեց երկու հոգուց բաղկացած քննիչ հանձնախումբ, որի անդամներն էին Հակոբ Պապիկյանը և Յուսուֆ Քենալ թեյը: Հայ անդամը հայտնի էր իր «քոնդ բորբասիրությամբ», նա «նվիրյալ իբրիհաղական էր և գտնում էր, որ օսմանյան հայրենիքի անքաղաքանի կուրքը պետք է համախմբվեն բոլորը՝ անկախ ազգային պատկանելությունից» (էջ 292): Նրան քննիչ հանձնախմբի անդամ էին ընտրել՝ նկատի ունենալով այդ հանգամքը: Նույն պատճառն առաջացրել էր Աղանայի հայ համայնքի բողոքը: Մայիսի 16-ին այդ երկու անդամը հասան Աղանա: Հակոբ Պապիկյանը աներկյուու և անկողմնապահ քննություն է սկսում, որի արդյունքները ցնցում են նրան: Դեպքերի ականատես Սուրեն Պարքիյանը գրում է, որ իր ազգությունը գրեթե ուրացած հայր «արյուն-արցունը լացավ կիլիլյան գերեզմաններուն վրա» (էջ 294): Հայերի անմեղությունը հավաստող փաստերը զաղափարական հեղաքեկում առաջացրին, և ցեղի ոգին արքնացավ նրա մեջ: Ծանարությունը բացահայտելու պատ-

ճառով նա ընդհարվեց հանձնախմբի բուրք անդամի՝ Յ. Ջեմալ բեյի հետ: Քննության ավարտից հետո Հ. Պապիկյանը նավով ուղևարվում է Կ. Պոլսի: Խզմիրի նավահանգստում «Իբրիհադր» թերքի տեղական բորբակցը տախտականածի վրա հարցազրույց է ունենում Հ. Պապիկյանի հետ: Վերջինս աներկյուու իր կարծիքներն է արտահայտում այդ նախաճիրի վերաբերյալ, մեղադրում նահանգապետախն, զինվորական հրամանատարներին և այլ պաշտոնյանների: Կ. Պոլսում Հ. Պապիկյանը ֆրանսերենով գրված ընդարձակ տեղեկագիր է ներկայացնում պատգամավորական ժողովին, որի ձևակերպումներն ավելի համարձակ էին, քան հարցազրույցինը: Դրա մեջ Պապիկյանը գրում է, որ ջարտերի պատասխանատուն կենտրոնական կառավարությունն է, մեղսակիցը՝ տեղական իշխանությունը և «Սիուրյուն և հատաջաղմություն» կոմիտեի անդամներն ու պարագայինները: Պապիկյանն իրավունք չուներ տեղեկագիրը հրապարակել, քանի դեռ պատգամավորական ժողովը չէր քննարկել այն: Կասկածելով, որ երբեւ իր գեկուցունը կսվի խորհրդարանում, Պապիկյանը տեղեկագրի համառոտ բովանդակությունը հարցազրույցի ձևով փոխանցեց Կ. Պոլսի մամուլին: 1909 թ. հունիսի 25-ին այն լույս տեսավ «Թասվիրի Եֆրյար» թերթում: Հարցազրույցի հայտարարությունները ցնցում առաջացրին Կ. Պոլսում: Հ. Պապիկյանի տեղեկագիրը խորհրդարանում պետք է քննարկվեր հունիսի վերջին: Հունիսի 20-ին Պապիկյանը «հանկարծամահ եղավ», և տեղեկագիրն անհայտացավ: Հանկարծամահ լինելու շինծու վարկածին ոչ որ չհավատաց: Բոլոր նրան ասպանել են քունափորելով: Հայերը սգացին նրա մահը՝ դատապարտելով իրենց, որ նրան մեղադրել են բոլքափորության մեջ, իսկ նա իր կյանքը գոհեց հանուն ազգի և ծշմարտության: Ժամանակ անց հայերը կարողացան գտնել անհետացած տեղեկագրի սևագիրը, զաղտնի տպեցին և ցրեցին: Մի օրինակն ընկալ անգլիական "Times" թերքի բորբակցի ձեռքը, որը մեծ նախարանով և ընդարձակ մեջ բերումներով հրատարակեց իր թերթում: Տեղեկագիրն ամրողացրյամբ լույս տեսավ ֆրանսերեն "Pro Armenia" թերթում, 1913 թ. ապրիլի 25-ին՝ Ֆրենսիս Պրեսսանսի առաջարանում: Անձ հայասերը, համոզված, որ Աղանայի ջարտերի կազմակերպիչը բորբական կառավարությունն է, գրուշացնում էր արեմտահայությանը, որ կարող են լինել ավելի լայնա-

ծավալ կոտորածներ: Եվ նա չխալվեց: «Մարդասիրությունն ընդդեմ մարդատյացուրյան» ենթագլուխում հեղինակն անուն առ անուն հիշում և իր երախտիքի խոսքն է ուղղում իրենց կյանքը վտանգի ենթակած և հայերին օգնած ամերիկյան ու ֆրանսիական միսիոներների, հիսուսյան և ֆրանցիսկյան հայրերի, գերմանացի գործարանատերերի: Գիտնական միևնույն ժամանակ ընդգծում է մեծ տերությունների պաշտոնական վարքագիծը այդ եղկելի իրադարձությունների նկատմամբ: Երիտրուրական կառավարության հետ իրենց հարաբերությունները շփացնելու համար նրանք այդ դեպքերի անտարեր ականատեսը եղան: Հեղինակի անաշառության ավագույցն է, որ նա ամեն հուշագրությունից, ականատեսների վկայություններից, նույնիսկ ամենափոքր հողվածներից մեկ առ մեկ հավաքել է փաստեր և մատուցել ընթերցողներին՝ ցույց տալով, որ Թուրքիայում էլ եղել են «մարդ» կոչվելու արժանի մահմեդականներ (քուրքեր, քրդեր, չերքեզներ), որոնք իրենց կյանքի գնով օգնում էին հայերին, փրկում նրանց կյանքը: Յափոք, քիչ էին նրանք, հեղինակը բվարկում է մոտ 30 անուն, մանրամասն վեր հանելով փաստերը՝ նշում է, թե նրանցից ամեն մեկը քանի հայ ընտանիքի կյանք է փրկել, ինչ զնով:

Ուշադրության է արժանի այս բարձրարժեք աշխատության խիստ սեղմ (ընդամենը 2 էջ), բայց բովանդակությամբ արտակարգ տարրության վերջաբանը: Նշելով, որ 1909 թ. Կիլիկիայի աղետը ամրող հայության գոյության դրսուրումներից մեկն է՝ հեղինակը զգուշացնում է զայիքի համար. մեր ժողովուրդն ամեն բույն պետք է պատրաստ լինի դիմակայելու հազարամյակի նոր մարտահրավերներին: Ընդգծելով, որ եթե հայությունն ունենար իր ազգային պիտականությունը, ապա չեն լինի 1895–1896 թթ. կոտորածները, 1909 թ., կիլիկյան ջարդերը և 1915–1923 թթ. հայկական Մեծ եղեռն՝ ցեղասպանությունը, փաստակաշատ գիտնականը պատգամում է ողջ աշխարհի հայությանը՝ «աշքի լույսի պես պահպանել դժվարին երկունքով ծնված Հայաստանի Հանրապետությունը»:

Աշխատության ուշագրավ կողմերից են նրան կցված երեք հավելվածները: Առաջին հավելվածը ներկայացնում է «Նյու Յորք թայն» քերքի մի քանի հոդվածները և բովակցությունները, որոնք վերաբերում են այդ օրերին՝ 1909 թ. ապրիլին կատարված իրադարձություններին:

Հրատարակված են նույնպես ամերիկյան բորակիցների հեռագրեր, որոնք նշում են, թե բորբերը ինչպես են սպանել ամերիկացի միսիոներների, ինչ վտանգ էր սպառնում Բեյրութում գտնվող ամերիկացի կին միսիոներներին: Թղթակցություններում փաստեր են հաղորդվում ջարդերի իրականացման վայրերի, կոտորված հայերի բվարանակի, բորբական գորքերի՝ կոտորածների նախաձեռնող և մասնակից լինելու մասին: Հեռագրերը և բովակցությունները սկսվում են 1909 թ. ապրիլի 19-ից, վերջանում սեպտեմբերի 20-ով: Բոլոր փաստարդերն ել ապացուցում են, որ կիլիկյան ջարդերի պատասխանատուն երիտրուրքերն են: Երկրորդ հավելվածը կրում է «Կիլիկյան պատվերներ» խորագիրը և մոտավորապես 100 էջում (391–488) պարունակում է բազմաթիվ նկարներ, որոնք պատկերում են Կիլիկիայի քաղաքները, ամրոցները, քերդերը, իրավաբակները, եկեղեցները, վարժարանները, իրղենիված քաղամասերը: Փաստորեն, այդ հավելվածը լրացնում է գրքի բովանդակությունը: Աշխատության երրորդ հավելվածը Աղանայի քրիստոնյա հոգևոր պետերի բողոքագիր – Խնդրանքն է՝ ուղղված սուլթան Սուլհամմեդ Շ-ին և բվագրված 1909 թ. հունիսի 4 (17)-ով: Այս բոլորից հետո պարզ է դասնում գրքի արտակարգ հարուստ և արժեքավոր, արդիական հնչեղություն ունեցող նշանակությունը: Սիանգամայն համաձայն ենք մեծարգո հեղինակի այն եգրակացությանը, որ զիրքը նախատեսված է պատճառաբանների, բայց առավելապես՝ «պետական ու քաղաքական գործիչների համար». որևէ փաստարդուր ստորագրելիս երկար խորհել դրա պատճառահետևանքային կասի մասին (տե՛ս աշխատության անոտացիան):

Այս աշխատությունը դաս է համայն հայության:

Լրաբեր հասարակական գիտությունների, 2009, № 1, էջ 246–252:

ծավալ կոտորածներ: Եվ նա չխալվեց: «Մարդասիրությունն ընդդեմ մարդատյացության» ենթագլխում հեղինակն անուն առ անուն հիշում և իր երախտիքի խոսքն է ուղղում իրենց կյանքը վտանգի ենթակած և հայերին օգնած ամերիկյան ու ֆրանչիական միսիոներների, հիսուսյան և ֆրանցիսկյան հայրերի, գերմանացի գործարանատերերի: Գիտնականը միևնույն ժամանակ ընդգծում է մեծ տերությունների պաշտոնական վարքագիծը այդ եղեկի իրադարձությունների նկատմամբ: Երիտրուրական կառավարության հետ իրենց հարաբերությունները շփշացնելու համար նրանք այդ դեպքերի անտարբեր ականատեսը եղան: Հեղինակի անաշառության ապացույցն է, որ նա ամեն հուշագրությունից, ականատեսների վկայություններից, նոյնիսկ ամենափոք հոդվածներից մեկ առ մեկ հավաքել է փաստեր և մատուցել ընթերցողներին՝ ցույց տալով, որ Ժուրդիայում էլ եղել են «մարդ» կոչվելու արժանի մահմեղականներ (քուրքեր, քրդեր, չեռքեզներ), որոնք իրենց կյանքի գնով օգնում էին հայերին, փրկում նրանց կյանքը: Յափոք, քիչ էին նրանք, հեղինակը բվարկում է մոտ 30 անուն, մանրամասն վեր հանելով փաստերը՝ նշում է, թե նրանցից ամեն մեկը քանի հայ ընտանիքի կյանք է փրկել, ինչ գնով:

Ուշադրության է արժանի այս բարձրարժեք աշխատության խիստ սեղմ (ընդամենը 2 էջ), բայց բովանդակությանը արտակարգ տարրության վերջաբանը: Նշելով, որ 1909 թ. Կիլիկիայի աղենոր ամրող հայության գոյության դրսորումներից մեկն է՝ հեղինակը զգուշացնում է զալիքի համար, մեր ժողովուրդն ամեն բռնէ պեսոր է պատրաստ լինի դիմակայելու հազարամյակի նոր մարտահրավերներին: Ընդգծելով, որ երե հայությունն ունենար իր ազգային պետականությունը, ապա չին լինի 1895–1896 թթ. կոտորածները, 1909 թ., Կիլիկիան ջարդերը և 1915–1923 թթ. հայկական Սեծ եղենը՝ ցեղասպանությունը, փաստակաշատ զիտնականը պատզամում է ողջ աշխարհի հայությանը՝ «աչքի լուսի պես պահպանել դժվարին երկունքով ծնված Հայաստանի Հանրապետությունը»:

Աշխատության ուշագրավ կողմերից են նրան կցված երեք հավելվածները: Առաջին հավելվածը ներկայացնում է «Նյու Յորք բայմ» թերթի մի քանի հոդվածները և բղբակցությունները, որոնք վերաբերում են այդ օրերին՝ 1909 թ. ապրիլին կատարված իրադարձություններին:

Հրատարակված են նույնպես ամերիկյան բղբակիցների հեռազեր, որոնք նշում են, թե բուրքերը ինչպես են սպանել ամերիկացի միսիոների, ինչ վտանգ էր սպառնում Բեյրութում գտնվող ամերիկացի կին միսիոներներին: Թղթակցություններում փաստեր են հաղորդվում ջարդերի իրականացման վայրերի, կոտորված հայերի բվարանակի, բուրքական գորքերի՝ կոտորածների նախաձեռնող և մասնակից լինելու մասին: Հեռազերը և բղբակցությունները սկսվում են 1909 թ. ապրիլի 19-ից, վերջանում սեպտեմբերի 20-ով: Բոլոր փաստաբերներն եւ ապացույցն են, որ կիլիկյան ջարդերի պատասխանատուն երիտրութերն էին: Երկրորդ հավելվածը կրում է «Կիլիկյան պատկերներ» խորագիրը և մոտավորապես 100 էջում (391–488) պարունակում է բազմաթիվ նկարներ, որոնք պատկերում են Կիլիկիայի բաղադրները, ամրոցները, քերդերը, իրապարսկները, եկեղեցիները, փարմարանները, իրղիկված բաղամասները: Փաստորեն, այդ հավելվածը լրացնում է գրքի բովանդակությունը: Աշխատության երրորդ հավելվածը Աղանայի բրիստոնյա հոգևոր պետերի բղորագիր – Խնդրանքն է՝ ուղղված սուլրան Մոհամմեդ Շիհ և բվարփած 1909 թ. հունիսի 4 (17)-ով: Այս բոլորից հետո ալար է դատնում գրքի արտակարգ հարուստ և արժեքավոր, արդիական հիշեղություն ունեցող նշանակությունը: Միանգամայն համաձայն ենք մնանակի այն եղբակացությանը, որ զիրքը նախատեսված է պատմաբանների, բայց առավելապես՝ «պետական ու բաղարական գործիչների համար»: Որևէ փաստաթուրը ստորագրելիս երկար խորին դրա պատճառահետևանքային կապի մասին (տե՛ս աշխատության անոտացիան):

Այս աշխատությունը դաս է համայն հայությանը:

Լրաբեր հասարակական գիտությունների, 2009, № 1, էջ 246–252:

ԱՐԺԵԶԱՎՈՐ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒԹՈՒՄ

ՀԱՅ ԳԱՂԹՕԶԱԽԻ ՍԱՍԻՆ

2007 և 2008 թթ. «Գալուստ Գյուլպենկյան» հիմնարկութեան միջոցներով Երևանի Համալսարանի իրաատարկչությունը լույս է ընծայել երեք տասնյակից ավելի պատմագիտական և գրականագիտական հետազոտություններ: Դրանց շարքում աչքի ընկնող տեղ է գրավում պատմ. գիտ. դրկուոր Ալբերտ Խառատյանի Կոտանդնուպոլիսի հայ գաղթօջախի (XV-XVII դարեր) պատմությանը նվիրված հիմնարար աշխատությունը, որի մեջ քննարկվում են բազմաթիվ կարևոր առանցքային հարցեր Օսմանյան կայսրության մայրաքաղաք դարձած նախկին բյուզանդական կայսրության մայրաքաղաքի հայ գաղթօջախի վերաբերյալ: Հայ պատմագիտության մեջ բազմաթիվ աշխատություններ են գրվել Կոտանդնուպոլիսի մասին, սակայն առաջին անգամ է, որ քննարկվում են գաղթօջախին վերաբերող այսքան տարաբնույթ հարցեր, որոնց պատասխաններն աչքի են ընկնում լայնով և խորությամբ. շոշափած ամենափոքր հարցն անգամ վերլուծվում է արտակարգ հանգամանալից: Հետաքրքրությամբ է ընթերցվում գրքի առաջարանը, որտեղ հեղինակն ըստ արժանվույն ներկայացնում է Կ. Պոլսի հայ գաղթօջախի դերը ողջ արևմտահայության կյանքում, քննարկում և արժենորում է նրա մասին գոյություն ունեցող սկզբնադրյութները և պատմագիտական գրականությունը:

Սկզբնադրյութների շարքում կարևոր տեղ են գրավում Ա. Մաշտոցի անվան Մատենադարանի արխիվում պահպող վավերագրերը, որոնց հիման վրա Ա. Սաֆրաստյանը իրատարակել է «Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին» քառահատոր ժողովածուն: Այն բացառիկ նշանակություն ունի հայ և մյուս ժողովուրդների վերաբերյալ օսմանյան օրենքները՝ ֆերմանները (արխիվային փաստարդերը) հայ մասնագետներին և ընթերցող լայն հասարակայնությանը մատչելի դարձնելու գործում: Դրանց միջոցով հայ պատմագիտությունը հաղորդակցվեց բազմաթիվ բորբ հեղինակնե-

րի գործերին, որոնք հետաքրքիր տեղեկություններ են պարունակում Կ. Պոլսի հայության նկատմամբ օսմանյան վարչական ձեռնարկումների, սեփականատիրական ձևերի վերաբերյալ: Մանրախույզ քննարկվում է նաև Ավ. Փափազյանի բարգմանած և կազմած «Թուրքական վավերագրերը Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին» ժողովածուն, որը ոչ միայն հայերեն ներկայացրել է օսմանյան կանոնամեները, բերաբները, Կ. Պոլսի հայ պատրիարքին վերաբերող բազմաթիվ փաստարդերը, այլև հանդես է եկել իրեն բարձր մակարդակի հետազոտող՝ առաջարանով և գիտական ծանոթագրություններով: Սկզբնադրյութների շարքում ներկայացված են XV-XVII դարերի տարեգրություններ, ժամանակագրություններ, դրանց հեղինակները: Ուշադրություն է գրավում Երմիա Քենոնուրծյանի տարբեր աշխատությունների՝ Ա. Խառատյանի մանրամասն քննարկումները և տված գնահատականները: Դրանք խորացնում են ընթերցողների գիտելիքների շրջանակը: Հեղինակը մեծ բարեխտնությամբ, գիտնականին վայել բծախնդրությամբ հետազոտում և գնահատում է նաև ուսումնասիրվող հարցի վերաբերյալ XIX-XX դարերի գիտնականների աշխատությունները: Ընթերցողին հայտնի է դառնում Կ. Պոլսի հայ գաղթօջախի տարբեր հարցեր ուսումնասիրած գիտնականների մի պատկանելի փաղանգ, որի մեջ արժանի տեղ են գրավում Սիսիրայան միարանության անդամները, սիյուրքահայ նշանավոր հետազոտությունները, դրանց հետ՝ նաև խորիդրասիյուրքահայ նշանավոր իրենց արժեքավոր աշխատություններով: Գիտական բարձր մակարդակով գրված այդ առաջարանը կարող էր լինել հարցի պատմագիտությանը նվիրված առանձին աշխատություն:

Բուն աշխատությունն սկսվում է օսմանյան մայրաքաղաքում հայ գաղթօջախի կազմավորման պատմությամբ: Ժամանակի գործիչների վկայություններով, փաստերով ցույց է տրվում հայ համայնքի գոյուրյունը և նրա գործունեության տարբեր կողմերը դեռևս Քյովանդական կայսրության մայրաքաղաքը Կ. Պոլսում: Մատնանշվում է բաղարը բուրքերի կողմից գրավելու դեռևս 146 տարի առաջ այնտեղ գտնվող հայ հոգևորականների անուններ, որոնք մատնանշել են 1307 թ. Սայ եկեղեցական ժողովին: Հետաքրքիր փաստեր են բերվում բուրքական ներցական ժողովին: Հետաքրքիր փաստեր են բերվում բուրքական ներցական ժամանակ Կ. Պոլսի պաշտպանների շարքում հայերի ներկայութման ժամանակ:

յուրյան և նրանց գրիվելու մասին: Փաստի հավաստիուրյունն ապացուցվում է դեպքերի ականատես տարեզիր Նեստոր Իսկանդերի աշխատուրյան մեջ:

Ժամանակի հայ և օտարազգի տարեզիրների օգնությամբ (օգտագործումով) հեղինակը ներկայացնում է քուրքական տարբեր սուլրաների գործադրած սահմովեցուցիչ իրադարձությունները, նվաճված, հպատակ ժողովուրդներով մայրաքաղաքը բնակեցնելու, նրանց ունեցվածքը քաղանելու, դիմադրական հնարավորությունները ջրատելու, նրանց միջոցներով քաղաքը վերաշինելու ջանքերը: Կ. Պոլսում արտակարգ բռնուրյուններով վերաբնակեցվել են Արևմտյան և Արևելյան Հայաստանի տարբեր վայրերից՝ իրով ու սրով, «սյուրզյունի» միջոցով բռնազարդված հայ բնակչություն (Կեսարիայից, Մրուսայից, Աղբիանուպոլիսից, Սամսունից, Թորքատից, Աղնից և այլ վայրերից): Այդ բռնազարդերը ներկայացվում են հետաքրքիր մանրամասներով: Հանգամանալից բացահայտվում է տարբեր վայրերից բռնազարդված համայնքներն ինչպես և որտեղ էին վերաբնակեցվում, հարկադրական ինչ միջոցներ էին օգտագործվում, ինչպես էին քուրքական սուլրաներն օգտագործում քրիստոնյա համայնքների նկատմամբ մտրակի և «սիրաշահելու» (որոշ «արտոնություններ» շնորհելու) քաղաքականությունը, ինչպես հայ և հոյն հարուստ զադրական վերաբնակեների ունցվածքն օգտագործելու և մայրաքաղաքը վերակառուցելու քայլերին զուգահեռ, շուներ դասի նկատմամբ կիրառվում էր գերեվարելու, գերեվաճառության և նրանց միջոցով ենիշերական գորամասերը համարելու քաղաքականություն:

Ամեն մի սուլքան (Մեհմեդ, Բայազետ, Սուլեյման Ա, Ահմեդ Ա և նրանց հաջորդները) իրականացնում էր բռնուրյան, դաժանության, հաշվեհարդարի, զանգվածային ջարդերի իր գործունեությունն ու մարտավարությունը: Մայրաքաղաքը Կ. Պոլսիս-«Ստամբուլ» վերաշինելու համար մարդարափ էր լինում զավառական տարածքը՝ Արևմտյան Հայաստանը: Արտակարգ քարեխսդությամբ, զիտական քարծը մակարդակով քննարկվում է օսմանյան մայրաքաղաքում հոյն, հայ և իրեա ազգաբնակչության միերների համակարգի մեջ ընդգրկվելու գործընթացը, նաև հոգևոր-կրոնական կյանքը օսմանյան վարչակարգին ենթարկելու, պատրիարքի միջոցով հայ համբուրյան կյանքը դեկագարելու խնդիրը:

Այդ նոնախորքի վրա բացահայտվում է օսմանյան հարկային համակարգում հայ պատրիարքների (հոգեոր առաջնորդների) դերի գերակայությունը և դրան ուղիղ համեմատական Էջմիածնի կաթողիկոսությունից նրա անկախանալու հանգամանքը:

Փաստորեն, Օսմանյան տարածքում գտնվող հայ հոգևոր հաստատություններն աստիճանաբար ենթարկվում էին Կ. Պոլսի պատրիարքությանը, պայքար էր սկսվում Էջմիածնի, ապա նաև Աղբամարի կարողիկոսների միջև գերակայության հասնելու համար, որը խրախուսվում էր օսմանյան իշխանությունների կամայականություններով: Չնայած սուլրանների տված ֆերմաններին, շատ հաճախ՝ ուսնահարում էին հայ և հոյն հոգևորականների իրավունքները, անտեսվում եկեղեցիների շինուրյան կամ վերանորոգության նրանց բերաբները, և այդ բոլորը կատարվում էր կաշառը ստանալու նպատակով: Թուրքական պետական ապարատի տարբեր օգևաներ կենտրոնում և գավառներում խառնվում էին նոյնիսկ հայ բնակչության պատկի և ամուսնալուծության գործույթներին, որոնք իրականացնում էին ոչ քե հոգևոր առաջնորդները, այլ տեղերի ենիշերի աղասին, որն իր ստացած ընծաների շնորհիվ կարող էր նոյնիսկ չհասը հաս դարձնել: Այդ փաստերը հեղինակի կողմից բացահայտվում են արյսիվային վավերագրերի, ժամանակի հայ գործիչների վկայություններով, նրանց բոլած հուշերով և աշխատություններով: Օգտագործելով պատվախնդիր և պաշտոնամու հոգևորականների միջև եղած հակասությունները, նաև աշխարհիկ զորեա հայերի աջակցությունը, քուրքական վերին ատյանները պատրիարքներ և հոգևոր առաջնորդներ էին նշանակում նոյնիսկ շատ կարճաժամկետ:

Կաշառը, քմահաճույքը, տարբեր աստիճանավորների ներկա կուրյունները պատճառ էին դառնում, որ միենույն հոգևորականը մի քանի անգամ հաստատվում էր պատրիարքական արքուն (Գրիգոր Կեսարացին՝ 6, Հովհաննես Խուլը՝ 3, Դավիթ Արևելցին՝ 4, Կարապետ Կեսարացին՝ 5 անգամ): Նոյն երեսույքը գոյություն ուներ նաև հոյն ուղղափառ համայնքում, չնայած նրանց անկայու պաշտոնավարության մեջ մեծ տեղ էր գրավում նաև եկեղեցական պետությունների ակտիվ քաղաքականությունը Օսմանյան Թուրքիայի նկատմամբ: Պատրիարքի արողությունը տիրանալու համար Կ. Պոլսի հայ գաղքօջախի ներսում ընթացող

պայքարը բացատրվում էր ոչ միայն Թուրքիայի սովորանական, կամ բարձր պաշտոնների յանական շահագրգությանը: Այդ հարցն արժանանում է հեղինակի խորքային քննարկման: Ներհակությունները բացատրվում են հայ հոգևոր-կրոնական կենտրոնների մրցակցությամբ, որի մի կողմում կանգնած էին Եջմիածնի կարողիկոսության գերակայությունն ընդունողները, մյուս կողմում՝ «քավական քուացած, բայց դեռևս իր հավակնություններից շիրաժարված Սիսը» (Էջ 162–163):

Հայ պետականության բացակայության պատճառով ժողովրդի ուժերը վերախմբավորող միակ ընդհանրական հաստատությունը Եկեղեցին էր. Վերջնականապես պետք է որոշվեր թե նրա նվիրապետություններում, որը պետք է լիներ հոգևոր կենտրոնը, և գերակա դիրքը ո՞չ պետք է պատկաներ: Այդ հարցերը ենթարկվում են արտակարգ խորքային քննարկումների և վերլուծությունների, բացահայտվում պատրիարքներից ամեն մեկի կողմնորոշումն այդ հարցում և ընդգծվում են Ամենայն Հայոց կարողիկոսության գերազանց իրավատերթունները:

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում «Սոցիալ-տնտեսական կյանքը» խորագրով գրությունը, որտեղ ներկայացվում է Կ. Պոլսի հայ քննակշռության ամենամեծ թիվ կազմող արիեստավորությունը և առևտուլ գրադիվոր խավը: Ընդգծելով, որ օսմանյան մայրաքաղաքում ոչ մահմեդականների մեջ ամենաքաղաքանարդ համայնք ունեին հայերը, հույնները և հրեաները, հեղինակը հիմնավորում է այն իրողությունը, որ այդ ժողովուրդներն էին կայսրության արիեստների և առևտորի զարգացման հենայունները: XVI և XVII դարերի հեղինակներից քերված փաստերով բացահայտվում է կայսրության տարբեր քաղաքներում գործող արիեստավորական կորպորացիաների բազմաքանակությունն ու բազմատեսակությունը (Կ. Պոլսում 150 գլխավոր համքարություններ, առանց երկրորդականների հաշվառման, Կահիրեւում՝ 252, Դամասկոսում՝ 136 և այլն): Ըստ 17-րդ դարի թուրք հեղինակ Էվլիյա Չեկիբի տվյալների, Կ. Պոլսի հետաքի 1100 ներ մասնագիտական խմբերը կազմել են 57 դասեր: Ամեն մի արիեստ իր ներսում ունեցել է բազմաթիվ խմբավորումներ. այսպես՝ ոսկերիչների ընդհանուր արիեստը՝ «քորուկը», ունեցել է 28 էսնաֆություններ, որոնք իրարից տարբերվել են կատարած գործով: Նման բաժանումներ են ունեցել նաև բազմաթիվ այլ արիեստներ: Ըստ

Եջմիածնի նվիրակ վարդապետի տվյալների, հայ արիեստավորները Կ. Պոլսում ունեցել են 189 տեսակի արիեստ, որը վկայում է մայրաքաղաքի հայ բնակչության գերազանցապես արիեստավորությամբ գրադիվոր փաստը: Ներկայացնելով Կ. Պոլսի հայ արիեստավորների՝ Էսնաֆ դասի բոլոր առանձնահատկությունները, հեղինակն ընդհանրացումներ է կատարում. հայ Էսնաֆն ուներ կազմակերպական որոշակի կառուցվածք՝ վարպետ, ենթավարպետ և աշակերտ աստիճաններով: Այդ եռաստիճանն համակարգը պահպանվել է XVIII և XIX դարերում ևս: Ներկայացվում են նաև ուսումնասիրուղներին թիվ հայտնի Էսնաֆական շրջանակներում հիերարխիական այլ համակարգ և՝ արիեստավորական վերնախավերում գործող իզլիքքաշիներն ու քյահյաները, որոնց գործունեությունն առնչվում էր արտադրության նյութական կողմի հետ: Ընտրվելով վարպետների ժողովում, նրանք իրենց ազդեցությունը տարածում էին ամբողջ պղղահայ համայնքի վրա: Չնայած բարձր մակարդակին, ուսումնա-ավատատիրական պետության համակարգում արիեստավորությունը Կ. Պոլսում «չկարողացավ հաղթահարել արտադրության մասութակտության ձևից» դեպի գործարանայինն անցնող սահմանագիծը: Արիեստավորությանը գուգահեռ տրվում է նաև հայ վաճառականության գործառույթները, բացահայտվում նրանց ծագումնաբանությունը, հայկական տարրեր վայրերից Կ. Պոլսում հաստատվելու հանգամանքները, նրանց գործունեության լայն ողբրտները (Արևելյան Եվրոպա, Լեհաստան, Ռուսաստան), նրանց երթուղիները՝ Թավրիզ-Երզրում-Թորատ-Կ. Պոլս: Վենետիկի և Լիվոռնոյի առևտորում գործուն դեր կատարող զուտահայերը գործուն էին Վաճ-Կեսարիա-Զմյունիս ուղիներով, միասնական կանգառ ունենալով Կ. Պոլսի: Նրանց գործունեությամբ էր ստեղծվում առևտրական կապիտալը, որը բարձր տոկոսների գործառույթով վերածվում էր վաշխառուական կապիտալ: Ստեղծվում էր հայ դրամատերերի դասը ի դեմս չեկապիների, որոնք գործուն էին ոչ միայն Կ. Պոլսում, այլև Արևմտյան Հայաստանում: Այդ հարցերի համակարգը հեղինակը քննարկում է արտակարգ մանրամասներով, ցույց տալիս հայ վաճառականների գործունեության բոլոր ոլորտները՝ պարենային (բոլոր ճյուղավորումներով), հագուստեղենի՝ բրդի և կաշվի, ակնավաճառների և գոհարավաճառների, գործիքների,

արտադրության միջոցների... (բոլոր բվարկել անհնար է): Քննարկվում է հայ ամիրա-սեղանափորների, վաճառական-խոջաների՝ միջազգային առևտրի ոլորտում ընդգրկվելու հարցերը, արևելահայ վաճառականների՝ բոլոր-պարսկական պայմանագրի (1618 թ.) շնորհիվ, մետարսի իին ճանապարհներով առևտոր կատարելու իրավունքների ձեռքբերումը: Միջազգային առևտրի խոշոր կենտրոն դարձած Կ. Պոլսում հայ վաճառականներն աշքի ընկնող դեր էին կատարում մասնավորապես տարանցիկ առևտրում (քարավանային առևտոր): Հեղինակը մի կարևոր ուղղում է մտցնում արևմտահայ վաճառականության՝ միջազգային առևտրում ունեցած դերի բնուրագրին: Նկատի ունենք հայ առևտրականությանը մեր պատմագիտության տված «միջնորդ» և «կոմպյուտոր» միակողմանի գնահատականին, որը հետադեմ խավին տրվող որակում էր խորհրդային տերմինարանության մեջ: Հեղինակը, բնոյինակառակը, ցույց է տալիս, որ XV-XVII դդ. արևմտահայ վաճառականությունը արևելյան հումք էր մատակարարում Եվրոպական արտադրությանը՝ դառնալով նրա զարգացման խթանիչներից մեկը: Փաստորեն, օսմանյան մայրաքաղաքում գործում էին Արևմտյան, անգամ Արևելյան Հայաստանի տարբեր վայրերից գաղթած արինեստավորներ, առևտրականներ, վաճառականներ, և Կ. Պոլիսը դարձել էր Հայաստանի փոքր խճանկարը: Գրքում պարզաբանվում է նաև հայ գաղրօջախի տեղը և դերը օսմանյան հասարակության մեջ, առավելապես շեշտվում նրա պարտավորությունները, բացահայտվում պետական պաշտոնյաների միջամտությունը համայնքի ներքին գործերին, բարձրաստիճան անձանց՝ սկզբում սեփական գրապանները, ապա՝ պետական գանձարանը լցնելու միջոցները, հայ և հույն եկեղեցիների կառուցման և վերանորոգման համար հարուցվող ամեն կարգի խոշընդուռները, մահմեղականների հագուստների ընդգծված գույները, քրիստոնյաներին բույլատրվող գույները: Դա մի ամբողջական համակարգ էր, որով ընդգծվում էր մահմեղականի արտոնյալ լինելու և քրիստոնյայի ստորացույշ իրավիճակը:

Օսմանյան կայսրության տիխական երևոյթներից էր նաև գերության համակարգը, որն սկիզբ առնելով սելջուկյան շրջանից հարատեսում է մինչև XVII-XVIII դարերը:

Այդ ժամանակից սկսած արքունիքի և տեղական պաշտոնյաների հարատացման միջոց էր համարվում սորկավաճառությունը և գերեվաճառությունը: Հայ համայնքի համար հասուն նշանակություն էր ստանում գերիների վիրկագննան գործը, որը կատարվում էր եկեղեցուց և ժողովրդից հավաքած միջոցներով, հանգանակություններով: Մեծ չափերի հասավ գերեվաճառությունն առանձնապես 1720-ական թթ. պարսկարութական պատերազմներից հետո, երբ օսմանյան մայրաքաղաքը դարձավ տարածաշրջանի սորկավաճառ խոշոր կենտրոն: Ստրուկների մեծ քանակի մասին է վկայում այն փաստը, որ սուլթաններն օրենքներ էին սահմանում նրանց նկատմամբ ունեցած սեփականատիրական իրավունքի մասին (Սուլեյման Կառունիի, Սելիմի, Սուլթան Գ.-ի ֆերմանները): Կ. Պոլսի հայ համայնքի ողբերգական երևոյթներից էր նաև դեկշիրներ՝ մանկահավաքը կամ մանկաժողովը, երբ հարկի փոխարեն հավաքած պատանիների մի մասն ուղարկվում էր զորանոցներ՝ ենիշերիների շարքերը համարելու, մի այլ խումբ՝ թիարաններ, իրք աշխատուժ նավառորդում, օգտագործվում նաև հանրային արդյունահանան ողբերում: Այս փաստերը հավաստվում են հայ, հույն և բուրք պատմարանների աշխատությունների և վավերագրերի՝ բարեխիղճ գլուխականի հնուտ օգտագործումով:

Արդիական հնչեղություն ունի աշխատության վերջին ենթագլուխը, որը նվիրված է հայ-հունական եկեղեցական հարաբերություններին: Դարեւ շարունակ կողը-կողը ապրող քրիստոնյա ժողովուրդներին հեշտ կառավարելու համար, բոլոր պետական գործիչները նրանց մեջ ստեղծում էին հակասություններ, ներկակություններ, սերմանում թշնամանը և երկաստակություն: Եվ դա նրանց հաջողվում էր: Այդ թշնամանը ավելի սրբեց XVI և XVII դարերում U. Տեղյաց խնդրի շուրջ (ցավոր, այն շարունակվում է մինչև օրս՝ տարբեր դրսուրումներով): Սակայն պետք է նշել նաև, որ օսմանյան հարկային ծանր լուծը և իրավագրկությունը մերձեցման և հաշտեցման էր մղում հույններին և հայերին՝ միասին դիմակայելու և համագործակցելու: Հաճախ այդ երկու ժողովուրդների փոխարարերությունների մեջ արտահայտվում էր կեներք, վաղ ժամանակակիցների քրիստոնեական վերաբերմունքն իրար նկատմամբ, որի վերիանումը նորույր է մեր պատմագիտության մեջ:

Երկար և ավելի մանրամասն կարելի է գրել այս արժեքավոր աշխատության մասին: Բայց բավարարվենք այսրանով: Ցանկանում եմ հեղինակի ուշադրությունը իրավիրել որոշ հարցերի վրա: Ինձ թվում է, լավ կլիներ, եթե մի զորիս հատկացվեր Կ. Պոլսի գաղթօջախի մտավոր, հոգևոր կյանքին և մշակույթին: Ի վերջո, աշխատության մեջ օգտագործված են ժամանակի մտավորականների ուսումնասիրությունները, ստեղծագործությունները: Կարելի էր նրանց օգտագործել ոչ թե միայն որպես սկզբնաղբյուր, այլ բացահայտել այդ անձնավորությունների (գործիչների) դերակատարությունը Կ. Պոլսի հայ գաղթօջախում և նրանց միջոցով ներկայացնել տեղի հոգևոր և նյութական մշակույթը: Չ՞ որ XVIII, մանավանդ XIX դարերում Կ. Պոլսի հայ գաղթօջախն էր դեկավարում և տուն տալիս արևատահայ մշակույթին: Այդ երևոյթն, անպայման, ուներ իր իմքերը, իր սկիզբը: Այդ հարցերի բննարկումը առավել ամբողջական կդարձներ գաղթօջախի պատմությունը: Սի ցանկություն ևս լավ կլիներ, որ հեղինակը կազմեր իր օգտագործած թուրքերն բառերի մի համառոտ բառարան և գետեղեր աշխատության վերջում՝ ընթերցողներին (անգամ պատմաբաններին, նոյնիսկ Արևմտյան Հայաստանով գրաղվողներին) հասկանալի դարձնելու բազմարիվ բառեր, որոնց թվարկումը մեծ տեղ կզբավի (փարաբանդա, բեղեստեն, սուրաշի, դեֆերդար, դապղիմալ, ալրը ջեմաար, աջեմի օղլան, այաներ, բազմաթիվ արիեստների անուններ): Նշվածները սոսկ ցանկություններ են, աշխատությունը լիովին կատարյալ տեսնելու ցանկություն: Հավելենք, որ պատմ. գիտ. դոկտոր Ալբերտ Խառասոյանը ընթերցող հասարակայնությանը պարզեց է, մի արտակարգ աշխատություն՝ բարձր մակարդակով, բժախնդիր վերլուծություններով և բննարկումներով: Սպասում ենք աշխատության շարունակությանը՝ Կ. Պոլսի հայ գաղթօջախի XVIII–XIX դարի պատմությանը:

Եջմիածին, 2009, № II,էջ 137–143:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԾԱԳՈՒՄՆ ՈՒ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ.

ՆՐԱ ՆԵՐՁԻՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Արևմտահայերի Ազգային Սահմանադրության ընդունումից հետո Կոստանդնուպոլիսի հայ զաղություն պատրաճներ առաջացան հայության իրավիճակի բարեկավման ուղղությամբ: Սակայն ժամանակն անցնում էր և արևմտահայության վիճակն օրդստօրել վատրարանում: Պատրիարքարանն անընդիհատ բողոքագրեր էր սուսնում բուն Արևմտյան Հայաստանից, որին օմանիան մայրաբաղարում ապրող հայությունը գավառ էր անվանում: Բողոքագրերն ահազանգեր էին, որ Ազգային Կենտրոնական վարչությանն էին հասցնում «Գավառի» հայրենասեր գործիչները: Դրանց շարրում աշքի էին ընկնում Մկրտիչ Խրիմյանն ու նրա սաները: Տարոնի 42-ամյա հոգևոր առաջնորդը իր անձններ գործունեության շնորհիվ տեղի հայության կողմից արժանացավ հայրիկ պատվանունին: Նրա ջանքերն ուղղված էին հայ բնակչության վիճակն ինչ որ ձևով տանելի դարձնելուն, զյուղացիության զարքը կանխելուն և հայրենի հողի վրա պահելուն: Ժողովրդանվեր այդ գործունեությունը նրան մեծ հոչակ բերեց, և 1869 թ. սեպտեմբերի 4-ին Կ. Պոլսի Ազգային ժողովը նրան բնտրեց հայոց պատրիարքը: Մինչ այդ պատրիարք էին ընտրվել համեմատաբար բարեկեցիկ կյանքով ապրող պյուսահայության կամ Փոքր Ասիայի ափամերձ քաղաքների հայության ներկայացուցիչները: Առաջին անգամ այդ պաշտոնում ընտրվում էր Արևմտյան Հայաստանի ամենահայատ վայրերից մեկի՝ Տարոնի հոգևոր առաջնորդը, ծագումով՝ մյուս հայաշատ վայրից՝ Վասպուրականից, գալառահայության «ցաւոց ու վշտաց» արտահայտիչը: Զնայած Արևմտյան Հայաստանից տեղացող բողոքներին ու ահազանգերին, մինչ Խրիմյանը ոչ մի պատրիարք Ազգային ժողովի բննարկման հարց չէր դարձել արևմտահայության իրավիճակի, հարստահարությունների խնդիրը: Պատրիարք ընտրվելու առաջին խոհ օրից նա բարձրացրեց գավառահայության խնդիրներով գրադիւնը անհրաժեշտության հարցը: Սի տարի անց՝ 1870 թ. նոյեմբերի 27-ին Խրիմյանի նախաձեռնությամբ Ազգային ժողովում կազմվեց ու հաստատվեց «գավառական հանձնախումբ» անոնով հանձնաժողով, որը բաղկացած էր 9 անդամից՝ 4-ը հոգևորական, 5-ը

աշխարհական։ նախազարդ Ներսէս Վարժապետյանն էր։ Պատրիարքի շրջաբերականով լայն լիազորություններով օժտված համանախաւոր իրականության ճշգրիտ պատկերը բացահայտելու նպատակով կապ հաստատեց Արևմտյան Հայաստանի գավառների հետ, մեկ տարիա ընթացքում կազմեց և Ազգային ժողովի քննարկմանը ներկայացրեց «Գավառական հարստահարությունների» տեղեկագիրը, որում նշված էր տարբեր հարկերի (զինվորական, կալվածական), հարկահավաքների, կառավարական պաշտոնյաների՝ մյութեսարփից ու կայմակամից սկսած մինչև ոստիկանը, կատարվող գեղծուները։ առանձնապես շեշտվում էր բոնի մահմեղականացման, հայկական եկեղեցիների ավերման, հոգևոր ծեսերի կատարման արգելման, մեծարանակ սպասությունների մասին։ Հարստահարությունների թվաքանակով և փայրագործությամբ ընդգծվում էին Էրզրումի և Դիարբերքի վկայերները, իսկ նրանց մեջ՝ հատկապես Վանի, Թղիի, Դուգուշանի, Բաղեշի, Մուշի և Չարսանցակի գավառները։ Հարստահարությունների տեղեկատվությունից հետո, տեղեկագրի երկրորդ մասը պարունակում էր համանաժողովի դիտություններն ու առաջարկությունները։ Տեղեկագիրը բուռն քննարկումներ և վիճարանություններ առաջացրեց Ազգային ժողովում։ Դրանք այնքան բուռն էին, որ Բ. Դուտի արգելեց հարցի հետագա քննարկումները։ Ուշիք եկած երեսփոխանները համախմբվեցին և 1872 թ. ապրիլին տեղեկագիրը հանձնեցին Բ. Դուտի, որը տարիներ շարունակ այն անուշադրության մատնեց, ապա հայտարարեց, թե փաստաբուռը կորցրել է։ Փաստորեն տեղեկագիրը ոչ մի արդյունքի շահնքեցրեց, սակայն հավաքվեց մեծ քանակությամբ տեղեկատվություն։ հարցի քննարկում բացահայտեց գավառացի պատրիարքի և ժողովի պահպանողական երեսփոխան Էֆենիիների միջև եղած հակասությունները։ Պատրիարք Ս. Խրիմյանը իրաժարական տվեց։ Նոր պատրիարքը ընտրված Ներսէս Վարժապետյանը 1873–76 թթ. Ազգային ժողովի քննարկմանը դարձավ ներկայացրեց գավառական հարստահարությունների խնդիրը։ Ամենամեծ անհավասարությունը համարելով քրիստոնյայի վկայությունը դատարանում շընդունելը, զենք կրելն արգելելը, նոր պատրիարքն ու Ազգային ժողովը, օգտագործելով առաջին տեղեկագրի նյութերը, ավելացնելով վերջին չորս տարիների ընթացքում կատարվածները, ստեղ-

ծում են նոր տեղեկագիր։ Գավառական հարստահարությունների այդ երկու տեղեկագրերը, դրանց շորջը ծավալված քննարկումները տասնամյակի վերջին դարձան հայկական հարցի արձարժման իմբռը, և դրա ակունքում կանգնած էին երկու ազգընտիր հոգևորական՝ Ս. Խրիմյանը և Ն. Վարժապետյանը։ Իսկ մինչ այդ Վարժապետյանը քանակություններ է վարտ մեծ եպարքով հետո, որը նրան խոստանում է Հայաստանի գավառներում հայ ոստիկաններ նշանակել, «մինչև իսկ քանի մը գաւառներու միրքարիթները և քաղաքներու գայմագամները Հայոց մեջն դնել տալ»¹։ Մեծ եպարքուր պաշտոնանկ եղավ առանց խոսումը կատարելու։ Երկրորդ տեղեկագիրն Ազգային ժողովն ստորագրեց 1876 թ. սեպտեմբերին, սակայն դեռ նոյեմբերի վերջին այն չէր հանձնվել օսմանյան կառավարությանը։

Օսմանյան կայսրությունն ապրում էր ներքին քաղաքական ցնցումներ։ Շալկանյան ժողովուրդները վերակել էին իրենց ազատագրական պայքարը։ 1875 թ. Թուրքիայի դեմ ապատամբեց Հերցեգովինան, ապա՝ Բոսնիան։ 1876 թ. զարնանն ապատամբեց Բողդարիան, իսկ ամռանը՝ կիսանկախ Սերբիան լրիվ անկախանալու նպատակով պատերազմ հայտարարեց Թուրքիային։ Զերնոգորիան միացավ Սերբիային։ Քաղաքական ճգնաժամ ապրող Թուրքիան ելքը գտավ սովորանին փոխելու մեջ։ 1876 թ. մայիսի 30-ին պալատական հեղաշրջումով գահիլմկեց արվեց Արդուլ Ազիզը։ նրան փոխարինած Մուրադ V-ը երեք ամիս անց հոգեկան հիվանդ հայտարարվեց և հեռացվեց իշխանությունից։ Օգոստուի 31-ին զահ բարձրացավ Արդուլ Համիլ II-ը, որը խոստումներ տվեց նոր օսմանների դեկապար Միղհատ փաշային, սահմանադրական կարգերի կողմնակից ձևացավ և դեկտեմբերի 10-ին իրանորների համազարկով Թուրքիան հոչակեց Սահմանադրական միապետություն²։ Դրանով ձախողվեցին նոյեն օրը Կ. Պոլսում իրավիրված Դեսպանաժողովի աշխատանքները, որը Բ. Դունից պահանջում էր ստորագրել Օսմանյան կայսրության եվրոպական մասի քրիստոնյա ժողովուրդների վիճակը բարելավող միջոցառումների ծրագիր։ Այդ հանգամանքն իրարանցում

¹ Ատենագրութիւնը Ազգային ժողովոյ, 1876–1877 թթ., էջ 183։

² Զ. Կիրակոսյան, Բորժուական դիվանագիտությունը և Հայաստանը (XIX դարի 70-ական թթ.), Երևան, 1978, էջ 64–65։

առաջացրեց հայոց Ազգային ժողովի երեսփոխանների շարքերում: Թեժ վիճարանուրբուններից հետո ժողովը քվեարկության դրեց «Զայն բառնարու պիտօք». որոշվեց «յանուն ազգին» պահանջներ ներկայացնել կառավարությանը: Կայսրության եվրոպական մասի քրիստոնյա ժողովուրդների վիճակը բարեկավելու Դեսպանաժողովի մշակած միջոցառումների ծրագիրն ստիպում է Ազգային ժողովի երեսփոխաններին միարանվել և միասնական ծրագիր ներկայացնել: Նրանք գտնում են, որ հայերն իրավունք ունեն պահանջել նոյն արտոնությունները, ինչ տրվելու է ապատամբ ազգերին, ընդգծելով, որ հավատարմությունը պետք է վարձատրվի ավելի բարձր: 1876 թ. վերջերին Ազգային ժողովը պատրիարքի ղեկավարությամբ կառավարող ատյաններին ներկայացրեց Գավառական հարստահարությունների II տեղեկագիրը իրքը խնդրագիրպահանջ: Այն 1876 թ. վերջին լոյս տեսավ առանձին գրքոյելով «Տեղեկագիր գավառական հարստահարութեանց» խորագույք: Հայ իրականության մեջ այն բազմաթիվ քննարկումների ենթարկվեց, իսկ Ռաֆֆին արձանագրեց, որ 25 տարվա ընթացքում Տաճկաստանը «մեծ առաջադիմություն է գործել ոչ-մահմեղական ազգերը նորանոր ձևերով կերպելու, կողոպտելու և անպատճելու մեջ...»¹:

Սահմանադրական միապետություն Խոշակված Թուրքիան մերժեց եվրոպական դեսպանների պահանջները, պատճառաբանելով, որ բարենորոգումներ պետք է կատարվեն բոլոր հպատակներ համար, ոչ թե միայն քրիստոնյաների: Դեսպանաժողովի աշխատանքները փակույի մտան: Հայության համար ստեղծվեց անբարենպաստ միջնորդութ, ուժեղացան արևմտահայության հարստահարությունները: Պատրիարքարանն ու Ազգային ժողովն իրար ետևից բոլորազեր էին ներկայացնում Բ. Դուանը: Հայ ժողովրդի գոյության հարցը դառնում էր Արևելյան հարցի բաղկացուցիչ մասը: Փակույի մտած Դեսպանաժողովի աշխատանքներն ապացուցում էին ճգնաժամը խաղաղ ճանապարհով լուծելու անկարելիությունը: Հասունանում էր ճգնաժամը պատերազմի վերաճելու պահը: Մեծ տերություններից Անգլիան և Գերմանիան շահազրդված էին Ռուսաստանի և Թուրքիայի միջև աճող հակասություններով:

¹ Ռաֆֆի, Ե. Ժ., հ. 9, 1958, էջ 231:

Դեսպանաժողովի ձախողման պատճառով մեծ տերություններն իրենց դեսպաններին ետ կանչեցին Կ. Պոլսից: Սրբեցին ռուս-բուրքական հարաբերությունները: Մոտապուտ պատերազմից խոյս տալու նպատակով ռուսական կառավարությունը որոշեց մի անգամ ևս ստիպել Թուրքիային զիջումների դիմել: Բանակցություններն ընթացան Լոնդոնում, բուդապեշտում: Մարտի 31-ին Լոնդոնում ստորագրված վեց մեծ տերությունների արձանագրությունը վերջին նախագողուշցումն էր Թուրքիային, որով Դեսպանաժողովը գգալի զիջումներ էր անում առճակատումը հարրելու համար: Սիրիաի կառավարությունն Անգլիայի խորհրդով մերժեց մեծ տերությունների առաջարկությունները, դրանք համարելով միջամտություն իր ներքին գործերին և խիստ նվաստացուցիչ¹: Փաստը են, պատերազմի պատասխանատվությունն ընկնում էր Անգլիայի վրա, որի դեսպանը հայուարաքեց, թե իր կառավարությունն օգնելու է Թուրքիային՝ Կ. Պոլիսն ու նեղուցները պաշտպանելու գործում: 1877 թ. ապրիլի 12-ին ռուսական ցար Ալեքսանդր II-ը ստորագրեց պատերազմական հրովարտակ (մասնիչեստ) «Սլավոն եղբայրներին օգնելու» կարգախոսով:

Երկու կողմից զավթողական նպատակներ հետապնդող պատերազմը տևեց տաս ամիս. այն ընթանում էր Բալկանյան և Կովկասյան ուազմաճակատներում, որոնց իրամանատարները ցարի երկու եղբայրներն էին: Պատերազմական գործողությունների բատերաքամը Կովկասյան ուազմաճակատում Արևմտյան Հայաստանն էր: Ալավոն ժողովուրդների ազատության կարգախոսով սկսված պատերազմը ոգենորություն և հոլյուեր առաջացրեց հայության երկու հատվածներում: Թուրքական լծից ազատագրվել ճգտող արևմտահայությունը մեծ հույսեր էր կապու ռուսական բանակի հաղթանակի հետ: Ռուսական գործերը դիտվում էին իրքը ազատաբարներ և փրկարաբներ: Արևմտահայերին հուզում և ոգենորում էր, որ ռուսական բանակի բազմաթիվ ականավոր գորավարներ հայազգի էին: Սեր խնդիրը չէ անբաղանակ պատերազմական գործողությունների մասնամասներին, սակայն անհրաժեշտ է փաստել, որ Կովկասյան ուազմաճակատի հաղթական բոլոր գործողություններում

¹ Զ. Կիրակոսյան, 62վ. աշխ., էջ 87-88:

ամենամեծ դերը կատարեցին հայազգի գորավարները, իսկ հայության երկու հատվածներն էլ ամեն ինչում իրենց օգնությունն էին ցուցաբերում ուստական բանակին:

Պատերազմի առաջին օրերին Կ. Պոլսի հայոց պատրիարք Ն. Վարժապետյանը դիվանագիտական նկատառումներով շրջաբերական իդեց արևմտահայությանը, հայտարարելով, թե օսմանյան երկրի պաշտպանությունը հավասարագոր է Հայաստանի պաշտպանությանը¹: Թուրքական մեծ վեզիր Միղիատ փաշան բոնեց Ազգային ժողովին և պատրիարքին սիրաշահելու ուժին: Նա այցելեց պատրիարքարան և հարստահարությունների վերացման, զավառներում հայ պաշտոնյաներ նշանակելու խոստումներ տվեց: Շարիարի օրենքով քրիստոնյան զենք կրելու իրավունք չուներ, դրա համար էլ սահմանված էր զինվորական հարկը (քեղելը ասկերիէ): Հայ-ոուս հարաբերությունները սրելու նպատակով 1877 թ. նոյեմբերին իրատարակվեց սուլթանի իրադեն (հրաման), որով զենքի էին կոչում 17–45 տարեկան բոլոր քրիստոնյաներին: Ուստական զենքի միջոցով ազատազրվելու հոլոյն կապող արևմտահայությունը ի դեմս Ազգային ժողովի կորականապես մերժեց սուլթանի իրադեն: Թուրք կառավարող շրջանները մասնուի միջոցով հայերին մեղադրեցին դավաճանության մեջ: Հայ վերնախավին իրենց կողմն զրավելու բուրք կառավարող շրջանների քայլերն ավարտվեցին անհաջողությամբ: Ազգային ժողովի երեսփոխաններն աստիճանաբար հակվում էին այն մտայնությանը, որ արևմտահայության անվտանգությունը կառելի է ապահովել միայն մեծ տերությունների հովանափորությամբ: Պատրիարքարանն ու Ազգային ժողովը որոշեցին մի կողմից դիմել մեծ պետություններին, մյուս կողմից՝ շահել սուլթանի համակրանքը: Ուստական զորքերի մուտքը Ալրիանապոլիս և Էրզրում ստիպեց Ազգային ժողովի երեսփոխանությանը 180 աստիճանով փոխել զործեակերպը. որոշվեց դիմել Ուստաստանին, մեծ տերություններին, նաև սիրաշահել սուլթանին: Եթե ակնհայտ դարձավ Թուրքիայի պարտությունը, Արդու Համիլը խորամանկ քաշրշուկներով հայցելով մեծ տերությունների, մասնավորապես Անգլիայի միջամտությունը, ձգուում էր զինադադարի:

Խաղաղության պայմանագրի: Ռազմավարական մեծ նշանակություն ունեցող Ալրիանապոլիսի հետո ուստաները նշան Կ. Պոլսից 12 կմ հեռավորության վրա գտնվող Սան-Ստեֆանո փոքրիկ քաղաքը: Զինադադարի պայմանների հարցը բնիարկվում էր Եվրոպական և կովկասյան ուազմանակատներում: Բանակցությունները ձգձգվում էին, որովհետև զինադադարի պայմանների ամեն մի կետ բուրքերը համաձայնեցնում էին անգլիացիների հետ: Զինադադարի Կովկասյան նախագիծն ավելի ուշ կազմվեց, քան Եվրոպականը: Ալրիանապոլում գտնվող Խօնաւոր վարում էր բանակցությունները: Զինադադարի Կովկասյան նախագիծը հօգուտ հայերի չէր. շեշտվում էր Ասիական Թուրքիայի, այսինքն Արևմտյան Հայաստանի ճանապարհագործ լինելը, բնակչության ցածր մակարդակը, նաև միջազգային քաղաքական իիմնախնդիրները: Իգնատիկին խորհուրդ չէր տրվում Կարսից և Էրզրումից բացի այլ տարածքների հարց բննարկել, որովհետև դա կզրդուեր Անգլիային: Կովկասյան բանակի զիսավոր կորպուսի հրամանատար Լորիս-Մելիքովը արտահայտում էր տրամագծորեն հակառակ կարծիք. նա ընդգծում էր այդ տարածքի օգտակարությունը, Կաղզվանի աղահանքերը, Սողանլուի անտառային հարստությունները, Կարսի և Բայազելիսի ուազմական ու տնտեսական կարևորությունները¹: Պեսր է նշել, որ Լորիս-Մելիքովի այդ կարծիքի մեջ ունեց դեր էր կատարում նրա ազգային պատկանելությունը, Արևմտյան Հայաստանի տարածքների մի մասը բուրքական բռնապետությունից ազատազրելու խնդիրը: Բանակցությունների ընթացքին համակ ուշադրությամբ հետևում էին ողջ հայության հասարակական-քաղաքական շրջանակները: Դադարել էին Ազգային ժողովի նիստերը. լորեր էին շրջում, որ զինադադարի պայմաններ մեջ արևմտահայությանը վերաբերող խնդիրներ չեն շոշափվում: Այդ պահին դարձյալ գործի ձեռնարկեց Ս. Խրիմյանը. նա իր բնակարան իրավիրեց Ազգային ժողովի երեսփոխան հոգևորականներին, բացատրեց Ն. Վարժապետյանի՝ նիստերը դադարեցնելու և անգործության մատնելու վնասակարությունն ազգի համար, առաջարկեց դնարել նոր պատ-

¹Տես Ս. Լ. Չեռնով, Կ վօրուս Սան-Ստեֆանո լօգօրու-Իշտորիա СССР, 1975, 6, էջ 137–138:

¹ Ա. Սարովիան, Հայկական խնդիրն ու Ազգային սահմանադրությինը Թիվրիայում (1860–1910), հ. Ա., Թիվրիս, 1912, էջ 116:

թիարք¹: Մ. Իզմիրյանի կարծիքով անհրաժեշտ էր հանդիպել պատրիարքին և համոզել, որ ընդունի քաղաքական նոր դիրքորոշում: Հանդիպման ժամանակ Վարժապետյանը համաձայնություն հայտնեց լինել այնտեղ, որտեղ ազգի շահերն են: Վերսկսվեցին Ազգային ժողովի նիստերը: Պատրիարքը քաղաքական քննարկման ներկայացրեց մի տեղեկագիր, որով բարձրացվում էր Լիբանանի օրինակով Հայաստանին ինքնավարություն տալու խնդիրը: Ազգային ժողովի քննարկումների և զինադադարի քանակցությունների ընթացքում եղած տարածայնությունները արևմտահայ քաղաքական գործիչների միջև գրեթե հարթվեցին: Բոլորը լծվեցին Հայկական խնդրի արծարծնանը: 1878 թ. հունվարի 13-ին Ազգային ժողովը քննարկեց Անգլիայի դեսպան Լայարդի առաջարկությունը՝ Արևմտյան Հայաստանին ինքնավարություն տալ Անգլիայի հովանավորությամբ: Առաջարկությունը մերժվեց Ազգային ժողովի կողմից այն պատճառաբանությամբ, որ դա անզինական «փնտրիք» է, որը հետապնդում է երկու նպատակ՝ վաստակել Ռուսաստանի անվտանգությունը և հայերին թշնամացնել բորբական կառավարության հետ: Պատրիարքի հանձնարարությամբ Այլրինապոլսի առաջնորդական փոխանորդ Գ. Ռուսական կառավարությունը ունեցավ քանակությունների ուսական կողմի դեկանար Իզնատիկ հետ և հոյս հայտնեց, որ հայերն էլ բոլղարացիների նման կազատվեն օսմանյան լծից: Համաձայնվելով, որ ուսները գրավել են Արևմտյան Հայաստանի զգակի տարածքներ, Իզնատիկ պատասխանեց, որ «հայերը անլաստրատ գտնուեցան» և նրանք չեն կարող ստանալ այն, ինչ բոլղարները: Նա միաժամանակ խորհուրդ տվեց շիուահատվել՝ ժամանակ չկորցնել, «գործելու ժամն է»²: Իզնատիկ հետ տեսակցություն ունեցան նաև Ազգային ժողովի առենապետ Ստ. Ալանյանը ու Հ. Նուրյանը, Թուրքիայի արտաքին գործերի նախարար Սավիթը փաշայի խորհրդական դիվանագետ Սարգսի Համանջյանը, որը քանակցությունների ընթացքում գործում էր իրեւ հայ և համոզում Իզնատիկ բոլղարների օրինակով հայերին ազատություն շնորհել: 1878 թ. հունվարի 19-ին Աղքանարդություն զինադադար է կնքվում: Հաշության պայմանների քննարկում-

ներն ընթանում էին Սան-Ստեֆանո ավանում, հայ մեծահարուստ, վառողի գործարանատեր Սուարել քեյ Դասյանի տաճը, որը Իզմանտիկ նստավայրն էր: Թուրքական կառավարող շրջանները զարմացած էին, որ հայերը համազործակցում են ուսների հետ, իսկ հայերը դա վերացրում էին ուսական կողմի նախաձեռնությանը: Բանակցություններին մասնակից բոլոր կողմերը երկակի խաղ էին խաղում և հաճախ իրենք խճճվում դրա հանգույցներում: Թուրքերը մի կողմից հրահրում էին հայերին, որպեսզի հայկական պահանջները բոլղարականին, մյուս կողմից դիտողություն անում Ն. Վարժապետյանին ուսական դիվանագետների հետ քանակցելու համար: Հայերը սիրաշահում էին սուրբանին, երբեմն էլ հանդուզի պատասխաններ տալիս, որ Բ. Դուռը չգնահատեց հայերի հավատարմությունը, խրախուսեց իրենց թշնամիներին:

Դիվանագիտական քաշրշուկներն ավարտվեցին 1878 թ. փետրվարի 19-ի, երբ Սան-Ստեֆանոյում ստորագրվեց ոսու-բուրքական խաղաղության պայմանագիրը, որն անվանվեց նախնական՝ «այրելեմինար», որովհետև ենթադրվում էր Եվլուսային վերաբերող հարցերը քննարկել համանվառական կրնֆերանուտմ: Պայմանագրի 16-րդ հոդվածը վերաբերում էր Արևմտյան Հայաստանին. «Նկատի առնելով այն, որ ուսական գործերի դրս բերումը Հայաստանի՝ Թուրքիային վերադարձվելիք վայրերից կարող է առիթ տալ բախումների... Բ. Դուռը պարտավորվում էր անհապաղ կենսագործել հայաբնակ մարզերի տեղական կարիքներից բխող բարելավումներ և բարենորոգումներ, զերծ սրահել հայերի անվտանգությունը քրդերից և չերքեզներից»¹: Հայերին վերաբերող հարցեր էին շոշափվում նաև 17, 19, 25, 27-րդ հոդվածներում: Առանձնապես կարևոր էր 19-րդ հոդվածը. Թուրքիան անկարող էր 1 միլիարդ 410 միլիոն ռազմատուգանք վճարել, այդ պատճառով Արդահանը, Կարսը, Բարումը, Բայազետը և մինչև Սողանլու ողջ տարածքն անցնում էր Ռուսաստանին: Ռուսական պատվիրակությունը բալկանյան ժողովուրդների նման հայերի համար ևս պահանջում էր ինքնավարություն: Սակայն բորբական պատվիրակությունը համոզված Անգլիայի հովանագործության վրա, դիմադրում էր և պատճառաբանում, թե հայերը չեն նավորության վրա,

¹ Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղականության մասին հայերի համար ևս պահանջում էր ինքնավարություն: Անգլիայի հայերի համար ևս պահանջում էր ինքնավարություն: Խմբ. Զ. Կիրակոսյան), Երևան, 1972, էջ 92:

² Ռուսական կառավարության մասին հայերի համար ևս պահանջում էր ինքնավարություն: Յիլիապովիս, 1907, թիվ 152:

դժգոհել Թուրքիայից¹: 16-րդ հոդվածը հայերն սկզբում ընդունեցին մեծ ցնծությամբ. պարբերականներում ընդգծվում էր, որ 16-րդ հոդվածի բովանդակությունը ենթադրում էր «նահանգական ինքնավարություն»: Սակայն դա լոկ ենթադրություն էր: 16-րդ հոդվածով առաջին անգամ հայկական հարցը դարձավ միջազգային քննարկման առարկա: Թուրքիան առաջին անգամ ընդունեց Հայաստան տարածքի գոյությունն իր նվաճած երկների շարքում և պարտավորվեց ոտսական գորքերի առկայությամբ 6 ամսվա ընթացքում կատարել բարենորոգումները. սակայն անորոշ էր, թե ինչ բարեփոխումներ էին կատարվելու, դրա մասին միայն ընդիանուր դատողություններ կային: Ամենավատն այն էր, որ մի փոքրիկ արտահայտությամբ՝ «զերծ պահել հայերի անվտանգությունը քրդերից և չերքեզներից», Բ. Դուանը հաջողվեց սեպ խրել դարավոր հարլան հայ և քորդ ժողովուրդների միջև: Հայերի սկզբնական ոգևորությունն աստիճանաբար մարեց: Թուրք պաշտոնյաները հաճախ իրը շփորում էին Հայաստան և Քորդիստան անվանումները, ասելով, որ Հայաստանն անցավ Ռուսաստանին, իսկ Քորդիստանը մնաց Թուրքիային²: Թուրքական «Ստամբուլ» թերթը Քորդիստան էր անվանել նույնիսկ Վանի գավառը: «Մշակի» թրավակիցը հարց էր բարձրացնում՝ Վանի գավառը ինչպիսի Քորդիստան էր, եթե տեղի քորքերը, քրդերը, նույնիսկ բոշաները միասին՝ թվարանակով ավելի քիչ են, քան հայերը³: Սան-Ստեֆանոյի պայմանագրով ուժինանում էր Ռուսաստանի ազգեցությունը ողջ Եվրոպայում, առանձնապես՝ Բայկանուրում: Դա ձևատու չէր եվրոպական պետություններին, որոնք ցանկանում էին վիճարկել ոտսական գեների հաղթանակի արդյունքները: Փաստուն, Սան-Ստեֆանոյի պայմանագրի կնքումից անմիջապես հետո հարց էր բարձրացնում դրա արդյունքները համաեվրոպական վեհաժողովում քննարկելու մասին: Ռուսաստանը համաձայն էր համաեվրոպական քննարկմանը, սակայն միայն այն հոդվածների, որոնք խսկապես ունեին համաեվրոպական նշանակություն: Անգլիան պահանջում էր բոլոր

փածների բննարկումը, իսկառակ դեպքում սպասնալով պատերազմով, իր նավաստրմը Միջերկրական ծով մտցնելով և Իշխանաց կրզիների մոտ կառանելով: Ռուսաստան ստիպված էր գնալ գիշումների: Դանց արդյունքը եղավ 1878 թ. մարտի 30-ին Ռուսաստանի և Անգլիայի միջև կնքված գաղտնի պայմանագիրը, որով Ռուսաստանի դիրքերը զգալիորեն բոլուցան. ամրապնդվեցին Թուրքիայի դիրքերը: Պայմանագրի 7-րդ հոդվածը պահանջում էր, որ Հայաստանին վերաբերող խոստումները արվեն ոչ թե միայն Ռուսաստանի, այլ նաև Անգլիայի ամունից: Իսկ 10-րդ հոդվածը վերաբերում էր Ռուսաստանին անցնող Ալաշկերտի հովտին և Բայազետին. անգլիական կողմն ընդգծում էր, որ հովտը Պարսկաստան տանող տարանցիկ ճանապարհ է և քորքերի համար ունի մեծ նշանակություն. այդ պատճառով ստիպում է ռուսական կողմին այն վերաբարձնել Թուրքիային, վիշտարեն Պարսկաստանին զիջելով Կոտուրը⁴: Ռուսաստանին սպառնալուց հետո Անգլիան անցավ Թուրքիային սպառնալուն և նորք խարեւուրյամբ իր աջակցության վոլուստուցմանը սուլթանին առաջարկեց Անգլիային հանձնել Կիարոս կղզին: Չափանելով պայմանագրի վավերացմանը սուլթանի կողմից, Բիկոնսֆիլդի հրամանով Կիարոսը ուազմակալվեց Անգլիայի կողմից: Այդ բոլորն ամրագրվեց 1878 թ. մայիսի 25-ի (հունիսի 4) Անգլիայի և Թուրքիայի միջև կնքված գաղտնի պայմանագրով: Երկու գաղտնի պայմանագիրն էլ վճարակար էին հայերի համար: Մինչ մեծ տերությունների միջև դիվանագիտական սուր պայքար էր բնրանում, այդ ընթացքում ուսնահարվում էին փոքր ժողովուրդների շահերը: Սան-Ստեֆանոյի պայմանագրի կնքումից հետո համակած խանդավառությունն աստիպարար տեղատվություն ապրեց: 16-րդ հոդվածի անորոշ արտահայտությունները դրդեցին հայ ազգային գործիքներին աշխատանք սկսել: Հայոց պատրիարքն սկզբում սկսեց Բ. Դուան հետ գործակել. սուլթանը բոլղարական հարցը տասլալելու նպատակով Ն. Վարժապետյանին խորհուրդ է տալիս պատվիրակություն ուղարկել մեծ տերությունների մոտ: Վերջինս որոշեց դիմել և՝ ոտսական, և՝ եվրոպական պետական մուտ:

¹ Записки графа Н. П., Игнатеева о Сан-Стефано, Петроград, 1916, с. 203:

² Զ. Կիրակոսյան, Բորժուական դիվանագիտությունը և Հայաստան (XIX դարի 70-ական թթ.), Երևան, 1978, էջ 149:

³ «Մշակ», 1878, թիվ 64:

⁴ Հայաստանը միջազգային դիվանագիտության... փաստաթուրերում, էջ 104–105:

երկու պատվիրակություն ստեղծվեց Եվրոպա և Ռուսաստան ուղարկելու նպատակով: Պատվիրակների հետ ուղարկվող բոլոր փաստաթորթերի իրական հեղինակները պետական ծառայության մեջ գտնվող ազգանդվեր գործիչներ էին, որոնք ստիպված էին քողարկել իրենց ինքնուրյունը՝ գ. Օոյան (Միջիատ փաշայի օգնականը), Աերվիշեն և Հովհաննես Սագրը: Պատվիրակությունը կազմվեց նոյն Օոյանի խորհրդով. առաջին պատվիրակը Մկրտիչ Խրիմյանն էր. Արևմտյան Հայաստանին քաջածանոր, ողջ հայության աննացորդ հարգանքին արժանացած մի անձնավորություն, որը, սակայն, չէր տիրապետում Եվրոպական ոչ մի լեզվի և հեռու էր լիվանագիտությունից: Խրիմյանի քարտուղարը դարձավ 22-ամյա մի անփորձ երիտասարդ՝ Սինաս Չերազը, որը գերազանց տիրապետում էր ֆրանսերենին: Ռուսաստան ուղարկվող պատվիրակը դարձալ հոգևորական Խորեն Գալֆայանն էր՝ Նար. Պեյր, որը ուսական արքունիքում իր գործն ավարտելուց հետո պետք է միանար Եվրոպական հայ պատվիրակությանը: Դեռ հայտնի չէր վեհաժողովի իրավիրման վայրը, եթե մարտյան մի առավոտ «խաստ զայտնիության պայմաններում» զիխավոր պատվիրակն ու իր քարտուղարը Կ. Պոլսից շողենավով ուղևորվեցին Եվրոպա, իսկ Բրինդիզի նախահանգստից ճանապարհը շարունակեցին երկարուղով: Առաջին հանդիպումը եղավ Հռոմում Խոտայիայի արտաքին գործերի նախարար Կորտիի հետ, որի ժամանակ վերջինս ընդգծեց հայերին պաշտպանելու իր պատրաստականությունը: Մարտի 19-ին պատվիրակությունը Փարիզում էր, այդտեղ էր նաև Եգիպտոսի նշանավոր պետական գործիչ հայազգի Նորբար փաշան: Վերջինս առաջարկեց վեհաժողովին ներկայացնել չափավոր պահանջներ: Ֆրանսիայի արտաքին գործոց նախարար Վայրինգտոնը մատնանշում էր, որ հայերի պահանջները՝ ինքնավարություն Լիբանանի օրինակով այնքան էլ ճիշտ չեն, քանի որ Հայաստանի և Լիբանանի միջև կան զգալի տարբերություններ. Լիբանանում չկար բուրք բնակչություն, մինչդեռ հայկական նահանգներում հայերի հետ խառն ապրում էին զգալի քով մահմեղականներ: Այդ պատճառով Վայրինգտոնն առաջարկում էր ներկայացնել վիճակագրական փաստաթորթեր հայ բնակչության տոկոսային հարաբերության մասին: Պատվիրակները հաշվի են առնում դիտողությունների մի մասը, ներկայացնում են ապա-

գա ինքնավար Հայաստանի քարտեզը, որտեղ նշված էին հայերի քացարձակ մեծամասնություն կազմող նահանգները, սակայն հաշվի չեն առնում Հայաստանի և Լիբանանի տարբերության մասին դիտողությունը և փոփոխություն չեն մտցնում ծրագրաւմ: Ապրիլի 11-ին պատվիրակությունն Անգլիայում էր. մինչ այդ Լոնդոնում Զեյմ Բրայսի նախաձեռնությամբ ստեղծվել էր անգլ-հայկական ընկերությունը Լորդ Կարնարվոնի պատվավոր նախագահությամբ: Հայ պատվիրակությունը Լոնդոնում արժանանում է ճոխ ընդունելությունների, որոնք չեն շլացնում համեստ հոգևորական նախկին պատրիարքին. այդտեղ նա քացահայտ գգում է, որ «քաղաքակիրք աշխարհի մեծ նարդագիները» փոքր ժողովուրդների շահերն են ուսնահարում: Հայամետ գործիչների նախաձեռնությամբ անգլիական խորհրդարանում քննարկման առարկա դարձավ Հայկական հարցը, որի ժամանակ արտաքին գործերի նախարար Սուսրերին հայկական բարենորոգումների մասին տրված հարցին պատասխանեց. որ Թուրքիայում հայերն այնպես են խառնված մյուս ազգությունների հետ, որ միայն նրանց համար բարենորոգումներ իրականացնել հնարավոր չեն: Հայ պատվիրակության համար այդ հարվածը խիստ անակնեալ էր, և նրանք հարկ եղած պատասխանը չուվին Անգլիայի նախարարին: Սիայն թեղինում, եթե 16-րդ հոդվածը դառնալու էր քննարկման առարկա, Խրիմյանը, Նար-Պեյր և Ստ. Փափազյանը պատասխանեցին Սոլյուրիին, փաստերով ապացուցելով, որ հայերը մեծամասնություն են կազմում Մեծ Հայրի Էրգրումի, Վանի, Բիրլիսի և Խարբերդի վիլայեթներում: Սոլյուրիին անորոշ պատասխան տվեց հայերին, որովհետև օրեր առաջ կնքվել էր անգլ-թուրքական զաղոնի պայմանագիրը:

Հայ պատվիրակները Բեղլին հասան վեհաժողովի բացման օրը: Վեհաժողովի աշխատանքներն սկսվեցին հունիսի 1-ին և ավարտվեցին հուլիսի 1-ին: Դրան մասնակցում էին 6 մեծ տերությունների ներկայացուցիչները և Թուրքիայից 3 ներկայացուցիչ: Բեղլին եկած Հունաստանի, Ռումինիայի, Սերբիայի, Զերնոգրիայի և Իրանի ներկայացուցիչները Վեհաժողովին իրավահավասար մասնակցելու իրավունք շտացան: Հայ պատվիրակները ևս ոչ մի նիստի շմասնակցեցին: Վայրինգտոնը խորհուրդ տվեց փաստաթորթերն ուղարկել Վեհաժողովի բոլոր մասնա-

կիցներին: Բիսմարկին ներկայացվեց երկու ծրագիր. առաջինը՝ պատրիարքարանի, երկրորդը՝ Նորար փաշայի խիստ չափավոր ծրագիրը: Երկուսն էլ հայության երկու հատվածների կողմից տարբեր դիրքերից ենթարկվեցին սուր քննադատության: Խորիշյանը համաձայն էր Նորար փաշայի չափավոր ծրագրին, Նար-Պեյի նպատակն էր Սեծ Հայրում ոռուական տիրապետության հաստատում՝ Լորիս-Մելիքովի կառավարիչ նշանակվելով, իսկ Կիլիկիային տրվի ինքնավարություն, որի բազավոր օծվի իր եղբայր Գվիդոնը, ինքը՝ կարողիկոս: Չնայած իր մեջ պարունակած ուշագրավ առաջարկություններին, այն խիստ արկածախնդրական էր և հանդիպեց Անգլիայի դիմադրությանը: Հայ պատվիրակների չխամաճայնեցված գործոդուրություններն աննպաստ տպավորություն էին քողնում: Անգլո-ռուսական և անգլո-բուրբական գաղտնի դաշնագրերի հայտնությունն իրարանցում առաջացրեց, մանավանդ Կիսլովսի խնդրի հայտնությունը պարզ դարձեց հայ պատվիրակության ձախողումը: Անգլիայի և Ռուսաստանի միջև ընթացող սուր հակամարտությունն իր կնիքը դրեց վեհաժողովի արյունըների վրա: Անգլիական դիվանագետները ողջ ընթացքում վարում էին Ռուսաստանից և Թուրքիայից զիջումներ կորզելու քաղաքանություն: Ուժեղ ճնշման տակ ուսուները Թուրքիային զիջեցին Բայազետը և Ալաշկերտի հովիտը՝ 9.600 քառ. կմ. տարածք: Ռուսաստանին մնաց միայն Կորսը: 16-րդ հոդվածի քնարկման ժամանակ Սոլյարեին առաջարկեց կրճատել ուսուական գործերի առկայության հարցը: Նշատերից դուրս քննարկումների ժամանակ պատերազմի սպառնալիքով Անգլիային հաջողվեց հարթել տարածայնությունները: 16-րդ հոդվածը դարձավ Բեղլինի վեհաժողովի 61-րդ հոդվածը: 16-րդ հոդվածի առաջին մասը «Հայաստան» անվանումով հանվեց հոդվածից: Մնաց միայն «հայաբնակ մարզեր» անորոշ արտահայտությունը: Հոդվածի կատարման պատասխանատվությունը ուսուներից վերցվեց և հանձնվեց մեծ տերություններին, որոնց շահերի հակասությունները երբեք բույլ չեն տա համաձայնեցված գործոդուրություններ: Իսկ Հայաստանի ինքնավարության խնդիրը անգլիական դիվանագիտության խարդավանքների հետևանքով մատնվեց անուշադրության: Տարիներ անց անգլիական գործիչ Լոյդ Ջորջը խոստվանեց, որ 16-րդ հոդվածի փոփոխությունը Անգլիայի ճնշման հետևանք էր, որով «Հայա-

տանը զոհաբերվեց Անգլիայի հաղթական զոհաւարանին»¹: Հայ պատվիրակները բողոքագրեր ներկայացրին վեհաժողովի մասնակիցներին, որում նշվում էր «Փրենց իրավունքները չեն ճանաչվել, որովհետև խաղաղաւոր են եղել»: Այդ բառը շեշտելով հայ պատվիրակներն արդեն ընդունում էին, որ ազատության ճանապարհը ոչ քեն խնդրագրերն են, այլ զերքը, ոչ քեն «քրքե», այլ «երկար շերեվիք»: Հովհան 1-ին բողոք ներկայացնելուց հետո Խորիշյանը ու Զերազը հեռացան Բեղլինից: Մինչև նրանց Պոլիս հասնելը, լուրը տարածվել էր արևմտահայության մեջ, առաջարկել հիմարափություն և հուսախարություն: Ուժգին հարվածից ուշքի եկած Վարժապետյանը դիմում էր հայ գաղթօջախներին՝ կոչ անելով վերաբանալ Հայաստան և ձեռնամուխ լինել նրա վերածնության գործին: Պատվիրակության քարտուղար երիտասարդ Զերազը մի գրքովկ լրաց ընծանեց «Թե ինչ շահեցանք Պեղլինի վեհաժողովին» խոստն վերնագրով, որի մեջ պատմելով պատվիրակության կատարած աշխատանքների մասին, շարադրանքն ավարտում է ոգևորությամբ. «Պեղլինի վեհաժողովն մի ոսկեհանք շահեցանք. մեզ անել է խիզախել և հանել ոսկին»²: Հիմարափիված զլսավոր պատվիրակը հորդորում էր հայ պանդոխտներին հայրենիք վերադառնախս «Զեր բարեկամաց և ազգականաց համար իբրև պարզե մէկ-մէկ գէնք տարեք, գէնք առեք և դարձեալ գէնք: Ժողովուրդ...քո ազատութեան յոյսը քո վրայ դիր, քո խնդրին ու բազկին ոյժ տուր, մարդ ինքնիրմեն պետք է աշխատի որ փրկութի»³: 61-րդ հոդվածի վտանգավոր հետևանքները ժամանակին զգաց Գր. Օսյանը. «Յաջողեցանք 61-րդ հոդված մը դնել Պեղլինի դաշնագրին մեջ. իցիվ քեն յաջողինը զնջել զայն»⁴: Իսկ Խորիշյանի աշակերտ Գ. Արվանձտյանը, որ պատրիարքի հանձնարարությամբ հայկական նահանգներում ցանկանում էր կանխել արտագաղթը, իրատեսորեն գրում է. «Օսարէն պետք չէ բան յուսալ, ջանանք մենք զմեզ հոգալ», ապա ավելացնում. «Հայաստան յուսալ, ջանանք մենք զմեզ հոգալ», ապա ավելացնում. «Հայաստանի մեջն է բուն հայկական խնդիրն և մեր Պեղլինի մեջ կ'որոնենք տանի մեջն է բուն հայկական խնդիրն և մեր Պեղլինի մեջ կ'որոնենք

¹ Պլոյլ Ջորջ, Պարագանել առաջարկությունների մասին, 1957, էջ 390:

² Զերազ Ս., Թե ինչ շահեցանք Պեղլինի վեհաժողովին, Վ. Պոլիս, 1878, էջ 29:

³ «Հայ սիրտ» շարադրեր, 1927, թիվ 30:

⁴ Գ. Օսյան, Սահմանադրական խորեր ու ճառեր, Վ. Պոլիս, 1910, էջ ԺԵ:

զայն»¹: Դա պայքարի կոչ էր, որ դարձավ առաջադեմ մտավորականության գործունեության նշանաբանը:

Փաստորեն, այստեղ արտացոլվեց հայկական հարցի առաջացման երեք փուլերը. առաջինը՝ ակունքներն են՝ գավառական հարստահարությունների տեղեկագրերը, իայ ժողովոյի լինելիության խնդիրը: Երկրորդը՝ Սան-Մտեֆանոյի պայմանագիրը բուրք-ուսական հարաբերությունների ետնախորրում և երրորդը՝ Բնոլինի վեհաժողովը՝ հայկական հարցի միջազգայնացումը և նրա շահարկումը մեծ տերությունների կողմից:

*Հայկական հարցի միջազգայացման 130 ամյակը և պատմության
դասերը, գիտաժողովի նյութեր, 2009, էջ 22–39:*

ՈՒԾԱԳՐԱՎ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆ ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂՈՒԹՆԵՐԻ ՍԱՍԻՆ

ՀՀ ԳԱ «Գիտություն» իրատարակությունն այս տարի լրիս է ընծայել ԳԱԱ իսկական անդամ, հասարակական գիտությունների բաժնամունքի ակադեմիկոս-քարտուղար, պ.գ.դ. Վաղինմիք Շարլտարյանի Մոսկվայի և Պետերբուրգի հայկական գաղութների պատմությանը նվիրված ծանրակշիռ մի աշխատություն, որը նոր էջ է բացում ողջ աշխարհում սփոփած հայ գաղրօջախների ուսումնասիրության մեջ: Սիսյան Ռուսաստանի հայ գաղրօջախներին նվիրված բազմաթիվ հետազոտություններ են կատարվել հայ և ուս ուսումնասիրողների կողմից (Նոր Նախիջևան, Ղրիմ, Գրիգորիովոլ, Հյուսիսային Կովկաս, Աստրախան), սակայն Մոսկվայի և Պետերբուրգի հայկական գաղոջախների վերաբերյալ համապարփակ ուսումնասիրություն դեռևս չկար իրապարակի վրա: Այդ բացը լրացնելու է զայխ բազմավաստակ գիտնականի վերը նշված աշխատությունը, որն ունի խիստ արդիական հնչեղություն: Այս

տարի Պետերբուրգի հայ համայնքը նշում է իր սկզբնավորման 300 տարին. հավոր պատշաճի գնահատելով Պետրոս Մեծի ներդրումն այլ բնագավառում, Ռուսաստանի հյուսիսային մայրաքաղաքի հայ և ուս բնակչությունը նշում է նաև հայ գաղրօջախի ծանրակշիռ դերը: Ահա այդ ետնախորքի վրա առավել ակնհայտ է երեսում պատմաբան գիտնականի կատարած գործի արժեքը: Ստվարածավալ այդ աշխատությունը (454 էջ) բաղկացած է ներածությունից (երկու խոսք), չորս գլուխներից, վերջաբանից (վերջաբանի վոլուսարեն), հավելվածից և անձնանուններից ու տեղանունների ցուցակից: Մեծ հետաքրքրությամբ է ընթերցվում առաջին գլուխը, որը նվիրված է Մոսկվայի և Պետերբուրգի հայկական գաղութների առաջացման գործընթացի վերհաննանը: Համայնքելով հայ և ուս գիտնականների հաղորդական տեղեկությունները, աշխատության հեղինակը բնրեցողին է մասուցում արտակարգ հետաքրքիր փաստեր մուկովյան ուսական պետությունում գործող հայազգի դիվանագետների գործունեության վերաբերյալ: Երկու մահմերական երկրների՝ Պարսկաստանի և Թուրքիայի միջև բաժանված Հայաստանի հայությունը, առանձնաապես վաճառականներ, իրենց հայացքը հասում էին Ռուսաստանին, որն ուներ առևտորի լայն հնարավորություններ, հարուստ ու մեծ շուկա, որը բացառվում էր կրտնական ու ազգային ճնշումը: Առևտորականների հետ միասին Մոսկվան դեպի իրեն էր ձգում նաև արհեստավորների, բարգմանիչների, դիվանագետների, Հայաստանի ազատագրության խնդիրներով շահագրգուված հասարակական-քաղաքական և հոգեոր գործիչների: Մոսկվայի հայ գաղրօջախի, հայ համայնքի ձևավորման գործընթացն ավարտվում է հայ եկեղեցու և ուսումնական հաստատության կառույցով. լավ է մեկնաբանված հայ ժողովոյի, հայ համայնքների գործեկակերպը, որն արժանի է բարձր գնահատականի: Հայլ որտեղ էլ լինում է, երկու կառույց է ձեռնարկում՝ եկեղեցի ու դպրոց: Դա հայի ազգային ամենակարևոր հաստիանիշն է: Մոսկվայում կառուցվեցին Ս. Խաչ և Ս. Հարություն եկեղեցները, բացից Լազարյան ճեմարանը, որը մեծ դեր խաղաց ողջ հայության կրթական գործում:

Ուշագրավ է նաև Պետերբուրգի հայկական համայնքի ձևավորման գործընթացի բացահայտումը: 1703 թ. սկսված Պետերբուրգի կառուցումն արագ տեմայերով ավարտվում է և 1712 թ. Պետերբուրգը դառնում

¹ Գ. Մուսանձաւեանց, Թորոս աղբար Հայաստանի ճամրորդ, հ. 1, Ա. Պոլիս, 1879, էջ 270:

Ե Ուսաստանի մայրաքաղաքը: Քաղաքն արագ կառուցապատելու և բարեկարգելու նպատակով Պետրոս Մեծը արտոնությունների է շնորհում այնտեղ հաստատվողներին, որոնք ձեռնամուխ են լինում տարրեր ոլորտների զարգացմանը: Նոր բարեկարգված մայրաքաղաքում արդեն 1714 թ. տեղի հայերը բույլտվորյուն են խնդրում եկեղեցի կառուցելու համար: Չնայած տարրեր խնդրագրերին, եկեղեցի կառուցելու բույլտվորյունը հայերն ստանում են սուկ 1740 թ.: Ուստի հոգևորականները խոչընդոտներ էին հարուցում հայ եկեղեցի կառուցելու համար, հայերի առաքելական (ոչ ուսական) դավանանքին պատկանելու համար: Եթե չինեին սահմանափակումները դավանանքի բնագավառում, ավելի մեծ կլիներ Պետերբուրգում բնակություն հաստատել ցանկացողների քանակը (թիվը): Միայն Եկատերինա Երկրորդի օահ քարձրանալուց հետո կառավարական սենատը 1763 թ. հունիսին հասուկ հրամանագրով հայերին բույլատրեց եկեղեցիներ կառուցել: Այդ քաղաքականության արդյունքում հայերի թիվը Մոսկվայի և Պետերբուրգի գաղրօջախներում (համայնքներում) զգալիորեն մեծացավ: Տարբեր վայրերից (Ամստերդամ, Զմյուտիխ, Սպահան, Նոր Ջուղա) հայ վաճառականները բույլտվորյուն են խնդրում քաղաքում ապրելու համար: XVIII դարի 60-70-ական թվականներին վերջնականապես ձևավորվում է Պետերբուրգի թվով փոքր, բայց խիստ կենսունակ հայ համայնքը:

Երկրորդ գլուխը նվիրված է ուսական մայրաքաղաքների հայ հանայնքների ներքին կյանքի բննարկմանը: Օգտագործելով մեծարանակ արխիվային վավերագրեր (առանձնապես Մատենադարանի կարողիկոսական դիվանի տարրեր ֆոնդերի փաստարդեր) հետինակը բննարկում է երկու համայնքների հոգևոր հոգաքարձության գործունեության և եկեղեցիների ունեցվածքը տնօրինելու համար ստեղծված **եկեղեցական խորհուրդների** իրավունքների հարցերը: Արտաքուստ հոգևոր իրավասություններով օժտված այդ մարմինները փաստորեն իրականացրել են աշխարհիկ, խիստ ընդգծված ազգային գործառույթներ: Արտակարգ հետաքրքրությամբ են ընթերցվում եկեղեցական խորհուրդներում տարրեր ժամանակամիջոցներում գործող հայրենասեր գործիչների ծավալած գործունեության փաստերը: Բացահայտվում են եկեղեցական խորհուրդների եկամուտների գոյության գանագան միջոցներ, կազմված են

ուսաստանյան մայրաքաղաքների հայկական եկեղեցիների և նրանց խորհուրդների եկամուտների ստեղծման և ծախսերի աղյուսակները: Քննարկման և վերլուծության առարկա են դառնում նաև երկու՝ հայ գաղրօջախների բնակչության բնական աճի, տեղաշարժերի, արհեստական ճանապարհով կատարվող ներփակությունների խնդիրները: Այդ բոլոր փաստերը համադրվում են ուսական կայսրության տարածքում գտնվող մյուս գաղրօջախների հայ բնակչության թվաքանակի հետ:

Ժամանակի ընթացքում երկու գաղրօջախները դառնում են կրթական, զիտական, մշակութային կենտրոններ և դեպի իրենց են ձգում այդ բնագավառների նշանավոր անհատներին: Դրա շնորհիվ երկու մայրաքաղաքները դառնում են հայ-ուսական հարաբերությունների սերտացման կենտրոններ. տեղի նշանավոր գործիչները հետամուտ են լինում օտարի լուծը բրավիելու, հայրենի երկիրն ազատազրելու գաղափարին: Աշխատության մեջ հանգամանորեն բացահայտված են հայ գործիչների՝ ուսական կողմնորոշման, Ուսաստանի օգնությամբ և հովանափրությամբ հայկական պետականությունը վերականգնելու ծրագրերը (Մովսես Սարաֆյան, Հովսեփ Արդուրյան և այլք): Այդ հարցերը բավականին հանգամանորեն քննարկված են աշխատության երրորդ գլխի «Քաղաքական մաքառումների բառույթներում» բովանդակալից խորագիրը կրող առաջին ենթագլխություն է ներկայացնում համայնքների նշանավոր գործիչներ Լազարյանների, ուսահայ թեմի առաջնորդ Հ. Արդուրյանի և Վիրահայոց թեմի առաջնորդ Ներսես Աշտարակեցու այդ ուղղությամբ ծավալած գործունեության տարրեր դրվագների բացահայտումն ու արժնորումը: Լազարենյակ լինելով Անդրկովկասի (առանձնապես Ուսաստանի տիրապետության տակ անցած Արևելյան Հայաստանի) ժողովրդագրական իրավիճակին, հեռուսկոր Պետերբուրգում և Մոսկվայում ապրող հայ հայրենասերներն առաջինը բարձրացրին ներգաղթի կազմակերպման և պարսկական լծից ազատազրկած տարածքները հայերով վերաբնակեցնելու խնդիրները, ստիպելով բարձրաստիճան ցարական պաշտոնյաներին ընդունել հայանապատ ոյոշումներ:

Մամուլի բազմաթիվ օրգանների և արխիվային հարուստ փաստարքերի օգտագործումով հեղինակն ընթերցողին է մատուցում ուսական մայրաքաղաքների հայության հասարակական կյանքի տարրեր ուրբառների գործունեության հետաքրքիր փաստեր: Հայկական այդ գաղրօշախները հայրենասիրական արտակարգ գործունեություն են ծավալում 1890-ական թվականներին Արևմտյան Հայաստանում մոլեգնող արդուլ-համիլյան կոտորածներից իրենց կյանքը փրկած հայ գաղրականներին օգնելու խնդրում: Կապ պահպանելով Ամենայն հայոց կարողիկոսի, Կ. Պոլսի հայոց պատրիարքի հետ, մայրաքաղաքների հայ համայնքները հանգանականությամբ պատկառելի գումարներ են հավաքում Կ. Պոլսի հայոց պատրիարք Ս. Օրմանյանի միջոցով Արևմտյան Հայաստանում որբանոցներ ստեղծելու (Մշո Ս. Կարապետի, Առաքելոց վաճր), զյուղերում նախակրթարաններ բացելու նպատակով: Անընդհատ կապեր պահպանելով Մայր Հայրենիքի հետ, ուսական երկու համայնքներն անմիջականորեն արձագանքում են նրանց առնչվող բոլոր հրատապ խնդիրներին (հայ եկեղեցու գույքի բռնագրավման 1903 թ. հունիսի 13-ի օրենքին, Անդրկովկասում հրահրած հայ-քարական ընդհարումներին, նույնիսկ հոգեհանգիստ է կատարվում ազատազրական շարժման նվիրյալ Զրիատափոր Սիրայելյանի հիշատակին): Երկու մայրաքաղաքների հայությունն առանձնապես ակտիվ գործունեություն ծավալեց առաջին աշխարհամարտի տարիներին, երբ ողջ աշխարհի հայության շրջանում մեծ շարժում սկսվեց արևմտահայ փախստականներին օգնելու համար: Այդ ժամը տարիներին Մոսկվայի հայկական կրմիտն սկսեց հրատարակել «Արմենիան Յետպիկ» հանդեսը, որի խմբագիր-հրատարակիչը անվանի պատմաբան, հրապարակախոս Ալեքսանդր Զիվիլեգովն էր: Ռուսական մայրաքաղաքների հայ գաղրօշախների օգտաշատ գործունեության արտահայտությունն էր կառավարության բոլյտփությամբ Պետերբուրգում հայ փախստականների հարցերով գրադիուդ կազմակերպությունների ներկայացուցիչների համագումարը, որտեղ քննարկվում են գաղրականների և փախստականների հետ կապված տարրեր հարցեր: Գործնական լուծում տարով բազմաթիվ խնդիրների, համագումարը մեծ գործ կատարեց նաև ոու

հասարակայնությանը հայ ժողովրդի մեծ ողբերգությանը հաղորդակից դարձնելու բնագավառում:

Հեղինակն արտակարգ խորությամբ և հմտությամբ վերլուծում է հայ-ոուսական հասարակական կապերը, քննարկում գաղրօշախների հայության առանձնահատկությունները, ընդգծում նրանց հասուկ ամենակարևոր առանձնահատկությունները. առաջին հայ պարտավոր է լինել իրեն հյուրնկալող երկրի խսկական քաղաքացի և երկրորդ՝ հավատարիմ մնալ իր ազգին ու ավանդույթներին, չնոտանալ մայրենին, օգտակար լինել հայրենիքին: Գաղրաշխարի հայության այդ երկու կարևոր հատկությունները պարտապիր են բոլորի համար: Աշխատության անխոնց հեղինակը բազմաթիվ հետաքրքիր, նաև սակավ հայտնի փաստերով ապացուցում է այդ իրողությունը: Աշխատության ամենանշագրավ մասը «Մշակույթ» խորագույք գույխն է՝ բաղկացած «Կրոպյուն», «Գիտություն», «Գրականություն և մամուր», «Արվեստ» ենթագլուխներից: Ընթերցողը կանված կարդում է բոլոր բաժինները, ցանկանում մտապահել այդրան հետաքրքիր փաստերի և դեպքերի գոնե փոքր մասը: Մայրաքաղաքների մշակութային կյանքի իրադարձությունների քննարկմանը գուգահեռ տրվում է նաև առավել հետաքրքրություն ներկայացնող իրադարձությունների մեկնաբանությունները: Ռուսական մայրաքաղաքների մշակութային, կրթական-գիտական գործիքները օգնության են հասել ոչ միայն Արևելյան Հայաստանի, այլ նաև Արևմտյան Հայաստանի կրթական-լուսավորական գործունեությանը: Կ. Պոլսի պատրիարքը, Աղքամարի, Ս. Կարապետի և Վարագա վաճրի վարժարանները, Վաճի՝ Երամյան, Կելլոնական, Սանդիխտյան իգական, Էրգրումի՝ Սանասարյան վարժարանները մշտակես զգացել են Պետերբուրգի և Մոսկվայի հայ համայնքների օգնությունն ու աջակցությունը: Մեծ եր նրանց ներդրումը նաև հայագիտական բարձրարժեք աշխատությունների, հայ պատմիչների գործերը հրատարակելու ասպարեզում: Ռուսական մայրաքաղաքների հայ համայնքները դարձան ազգային մշակույթի ավանդներն իրենց մեջ ամրապնդողները և զարգացնողները, միևնույն ժամանակ ծավալեցին երկու տիպի համարժեք գործունեություն. առաջինը՝ հայ մշակույթը ոուսական և համաշխարհային հասարակությանը հաղորդակցելու և երկրորդ՝ ոուսական ու համաշխարհային

մշակույթի, գիտության նվաճումները, ձեռքբերումները հայ ժողովրդին ծանոթացնելու և հաղորդակցելու գործում:

«Վերջարանի փոխարեն» խորագրով հատվածում աշխատության հեղինակն ի մի է քերում երկու մայրաքաղաքների հայ համայնքների գործունեությունը, ընդգծում և գնահատում նրանց կատարած գործը: Աշխատությունն ավարտվում է անձնանունների և տեղանունների ցանկերով: Աշխատությունն ունի արդիական և քաղաքական հնչելություն: Այժմ, եթե ավելի քազմանարդ են դարձել ուսական գաղրօջախները, առավելապես Մոսկվայի և Պետերբուրգի հայկական համայնքները, անհրաժեշտ է այս աշխատության ուստերեն իրատարակությունը. այն առավել կնայատի հայկական համայնքների գործունեության արժեորմանը, ինչ որ ձևով կօգնի նրանց՝ ազգայինը պահպանելու կարևոր հիմնախնդրում:

Լրաբեր հասարակական գիտությունների, 2010, №3, էջ 343–348:

ՎԱՆ-ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆՍՏԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԸ 19-ՐԴ ԴԱՐԻ ԱԿԵՍԻՆ

Վասպուրականը Արևմտյան Հայաստանի հոծ հայարնակ նահանգներից էր: Իր աշխարհագրական դիրքով նա սահմանակից էր Արևելյան Հայաստանի, Պարսկաստանի և նրա միջոցով Արևմտյան Հայաստանի տարրեր նահանգներին: 19-րդ դարի II կեսին հայությունը թվական գերակշռություն և հարաբերական մեծամասնություն էր կազմում Վասպուրականում: Այնուղի գոյություն ունեին երեք հիմնական ազգեր՝ հայեր, քրիստոնյաներ: Երկրի բնիկ ազգը հայերն էին, ովքեր պատմական հայրենիքում դարերի ընթացքում ստեղծել էին իրենց քարձր մշակույթը: Հայերի հետ կողք կողքի ապրում էր նաև նրա խաշնարած ու վաշկատուն հարևանը՝ ցեղային կյանքով ապրող քորոյ, ուսումնական և ավարառուի ոգով. նրանք աստիճանաբար գրավում

էին հայերի հողերը, հայ ավատատերին փոխարինելու էր գալիս քուրդ ցեղապետը: Մուրքերն իշխում էին քաղաքականապես՝ իրենց ձեռքում ունենալով այստական, վարչական ապարատը, դատարանը: Դիպուկ բնորոշում է տվել ուսումնասիրողներից մեկը. «Թուրքը երկրի իրավական տերն էր, քուրդը՝ իրական տերը, հայը՝ հայրենիք ունեցողը և իրավագործիկը»¹: Չնայած տնտեսական ու քաղաքական անկայուն վիճակն, 19-րդ դարի երկրորդ կեսից աստիճանաբար սկսում է զարգանալ մշակութային կրթական կյանքը: Դարի առաջին կեսին, մինչև 1830-ական թթ. Վանում չկային կանոնավոր դպրոցներ: Զաղաքի հայկական քաղանականում գտնվող եկեղեցիներին կից աստիճանաբար քացվում են փորբիկ վարժարաններ, որոնք հաճախ կարծ կյանք էին ունենում: Դրանցից կարելի է հիշատակել Վանի Այգեստան քաղանակի Ավետիս Սահառունու և Նորաշենի եկեղեցուն կից Հովհաննես Քոլոզ Վարժապետի քացած դպրոցները: Վերջինս սովորել էր Երևանի ժամանակակից վարժարանում, 1839 թ. Վերադարձել հայրենի Վան և դարոց քացել, որտեղ ուսուցումն ընթանում էր գրաբարով: Մոտավորապես հարյուր աշակերտ ունեցող դպրոցն աչքի չել ընկնում իր նորություններով: Ժամանակակից գործիչները քարձր էին գնահատում Հովհաննես Քոլոզի գիտելիքների մակարդակը, սակայն երկակի վերաբերմումը էին ցուցաբերում նրա մշակութային և հասարակական գործունեության նկատմամբ: 1850-ականների ընթացքում Կ.Պոլսում ծավալված սահմանադրական և հակասահմանադրական պայքարի ալերախումներն աստիճանաբար հասնում էին նաև հայկական նահանգներ: Վասպուրականի հայտնի գործիչներից մեկի՝ Երեմիս Տեկանցի արտահայտությամբ, հայ հասարակությունը՝ հոգևորականությունն ու մտավորականությունը քածանվեց երկու մասի՝ սահմանադրականներ և հակասահմանադրականներ. ըստ նրա նորի կողմնակիցները կոչվեցին «զուսավորյալը», իսկ հետո գաղափարակիցները՝ «հայվարյալը»: Հենց այդ չափանիշներով էլ գնահատվում է Հովհաննես Քոլոզը, որն իր «Տեսարանք Վասպուրական աշխարհին»² աշխատության մեջ հարձակվում է 1858-ին Վարագս վանքում «Ժառանգավորաց» վարժարան քացած Մկրտիչ Խորիմյանի վրա,

¹ գ. Գիգապետան, Խորիմյան Հայրիկ, Գաղափարների աշխարհը, Թեյրութ, 1954, էջ 6:

² Մատենադարան, ձևագիր 9424:

պաշտպանելով Վանի հոգևոր առաջնորդ Պողոս Սելիքյանին և նրա արքանյակներին: Կարելի է մնձ հոդված գրել Վարազա Ժառանգավորաց վարժարանի, նրա ուսուցիչների ու սաների, ամենահայտնիների մասին: Բավական է նշել, որ Վարազա վանահայրը մնձ փոփոխություն առաջացրեց Վասպորականի կրթական ասպարեզում, իր սաներին տալով նաև աշխատանքային դաստիարակություն, նրանցից պատրաստելով բանվորներ, տպագրիչներ, երկրագործներ, նաև արժանավոր հոգևոր և մտավորական գործիչներ, նրանց օժանդակությամբ իրատարակեց Հայաստանի տարածքի առաջին պարբերականը՝ «Արծոի Վասպորական» ամսագիրը: Խրիմյանն իր գործունեությամբ իրար կապեց Արևմտյան Հայաստանի ամենամեծ հայկական նահանգները՝ Վասպորականն ու Տարոնը, ժողովրդանվեր գործունեության համար 42-ամյա Խրիմյանը տարոնահայության կողմից արժանացավ հայրիկ պատվանունին: Նա առաջին զավառահայն էր, որ ընտրվեց Կ.Պոլսի հայոց պատրիարք, առաջին պատրիարքն էր, որ Ազգային ժողովի քննարկման առարկա դարձրեց զավառական հարստահարությունների խնդիրը, որը դարձավ հայկական հարցի ներքին բովանդակությունը: Հավատալով մնձ տերությունների մարդասիրական գործունեությանը, Քեոլինի վեհաժողովում նա ներկայացրեց արևմտահայության խնդրագիրը, ապա հիասքափելով նրանց՝ հավերժական շահերին հավատարիմ քաղաքանությունից, Կ.Պոլսում պանդուստ հայությանը քարոզեց վերադառնալ հայրենի երկիր և հարազատներին մի-մի հրացան տաճել նվեր, հույսը դնել սեփական բազկի վրա. «Մարդ ինքն իրմեն պետք է աշխատի, որ փրկուի»: Այդ զարափարը դարձավ ազատազրական զաղտնի խճակների և նոր ստեղծված ազգային կուսակցությունների կարգախոսը: Նա առաջին կարողիկոսն էր, որ համարձակվեց դեմ զնալ ոռոսական ցարի պահանջին, հայությունից պահանջեց պաշտպանել իր եկեղեցու իրավունքները, կառավարությանը չիանձնել նրա ունեցվածքը, որովհետև դրանով էին պահպանվում հայկական դայրոցներն ու բարեգործական հաստատությունները: Նրա գործունեությանն արտակարգ բարձր գնահատական են տվել նոյնիսկ ժամանակակից ոռու պատմաբանները՝ Երեմեկը և Շերեմետը, Գոլորորոդկոն և Ամֆիոնատրովը, նվորապացի Ֆրեդերիկ Դեվիս Գրինը, ֆրանսիացի Ալբեր Վանդալը, նաև

խոլանդացի Լինչը Արևմտյան և Արևելյան Հայաստանին նվիրած իր աշխատություններում: Կարելի է քննարկել նաև Խրիմյանի հոգևոր-իմաստափրական թեմաներու գրված աշխատությունները, բայց դրանց մասին գրվել են զիտական աշխատություններ և հոդվածներ, այդ բայում նաև տողերիս հեղինակի գրչի արյունքները: Սակայն առավել կարևոր է բացահայտել Խրիմյան մանկավարժի գործունեությունը, վերլուծել նրա Ժառանգավորաց և Երկրագործական վարժարանների սաների համահայկական, նաև համամարդկային գործունեության շառավիղները, նրա գինակից ընկեր հոգևորականների արևմտահայ զավաներուն ծավալած աշխատանքները: Ժառանգավորացի նրա աշակերտներից, նրա «արժանընտիր ձագերից», Վասպորականի Արծուի ձագուկ՝ Տարոնի Արծուիկի բոփշները և զիտական գործունեությունը առանձին ուսումնասիրությունների առարկա է: Գարեգին Սրվանձտյանցը եպիսկոպոսարքանի հասած ազգընտիր հոգևոր առաջնորդ, իր ազգանվեր և ժողովրդանվեր գործունեության համար Բարձր Դուռ կողմից քաղաքականապես անբարեկոյ համարված և Կ.Պոլսի աքսորված, իր հասարակական-հոգևոր գործունեության ընթացքում հաճույքի համար զրադիր նաև ազգագրությամբ, իայ բանակյուսական մեծարժեք գործերի հայտնագործությամբ: «Գրոց-Բրոց», «Հնոց-Նորոց», «Մանան», «Համով-հոտով» բանակյուսական ազգագրական ժողովածուները, «Թորոս աղքար ճամփորդ Հայաստանի» ուղեգրական երկիսորդ աշխատությունը մնձ հոչակ բերին ոչ միայն նրան, այլև ամբողջ իայ մշակույթին, իսկ «Գրոց-Բրոցում» տեղ գտած իայ ժողովրդական եպոսի՝ Սասունցի Դավթի առաջին պատումը՝ «Սասունցի Դավթի կամ Սիերի դուռ» խորագրով, իրաշք հայտնագործություն համարվեց համաշխարհային՝ էպոսագիտության պատմության մեջ: Գիտնականներն այն որակեցին իրեն իայ ժողովրդի «ազնվորյան վկայական»¹: Նրա կատարած գործը շատ բարձր է զնահատել նաև Ռուսաստանի Կայսերական Զնագիտական Ակադեմիան՝ նրան շնորհելով ակադեմիկոսի պատվավոր կոչում: Կովկասի Հնագրագիտական հանձնաժողովը, որը

¹ В. Брюсов, Поззия Армении, Москва, 1916, стр. 44.

հրատարակել էր «Акты Кавказской Археографической комиссии» 12 հատորը, ծրագրել էր բարգմաննել և պատրաստել հրատարակության նրա 13-րդ հատորը, որը ինչ-ինչ պատճառներով չիրականացավ։ Այդ փաստին մենք տեղեկացել ենք Վրաստանի Կենտրոնական Պետական Պատմական արխիվում աշխատելու ժամանակ, երբ հանդիսացինք Սրբանձոյանցի ժողովածուների և ոսկեգործական աշխատորյան բարգմանությանը և ծանրություններին¹։

Սկրտիչ Խորիմյանի մասին սփյուռքում լույս են տեսել բազմաթիվ աշխատություններ, որոնք գործիք են արխիվային հենքից: Նախկին Խորդրդային Սիուրյան տարածքում և այսօրվա ՀՀ անկախ հանրապետությունում արխիվային հարուստ հենքի և ձեռագիր սկզբնաղբյուրների վրա հենված ուսումնափրությունը իմ գիրքն է, իսկ Արվանձտյանցի մասին շնայած գրվել են բազմաթիվ հոդվածներ, սակայն առ այսօր միակ համապարփակ հետազոտությունը իմ աշխատությունն է, մանավանդ երկրորդ հրատարակությունը, որը հարստացել է երկու մեծ հոդված-գլեկուցումներով: Այդ բոլորի շարքում ամենաբարձրը արժենորում են Արվանձտյանցի գործունեությանը տված հետազոտող Արշակ Ալպյանցյանի գնահատականը, «Իր ազգին կեանքը հայտնաբերեց իր կեանքով»²:

դոդ գաղտնի խմբակի անդամ: Թիֆլիսում նա հաճախ էր զեկուցումներով հսնդիւս գալիս երիտասարդության առաջ, քրքակցում «Մշակին», այդ ընթացքում էլ սերտ կապ պաշտպաներով Վանի իր գաղափարակից ընկերների հետ: Թիֆլիսում լույս տեսան նրա վորքիկ գրքույկները՝ «Հայրենիքի պահանջները և հայ գյուղացին» (1881 թ.) և «Մասիս լուսների հարավային ստորատները» (1882 թ.), որոնք արժանացան մեծ ուշադրության: Եթե հայ գյուղացու պահանջների մեջ նա առաջարկում էր սոցիալական խնդիրներ, դրանք սերտ միահյուսելով ազգային հարցերի հետ, ապա երկրորդը բարձրացնում էր հայ-քրդական և հայ-աստրական դաշինքի հիմնահարցը ազգային-ազատագրական պայքարում:

Հեղինակը բացահայտում է քորքական կառավարության՝ հայերս ոչնչացնելու ծրագիրը, Գարայնիի խան քորդ Հուսերին աղայի գրույցի միջոցով հավաստիացնում, որ 1877-78 թթ. ոուս-քորքական պատերազմից, Սան-Ստեֆանոյի պայմանագրից և Բեռլինի վեհաժողովից հետո Քարձի Դուռը որդեգրեց հայկական հարցին քրդականը հակադրելու և քրդերին իր ձեռքի գործիք դարձնելու քաղաքականությունը: Վերոհիշյալ խանը հավատացնում էր հեղինակին, որ հայությունն իր հույսը պետք է դնի ոչ քե եվրոպական մեծ տերությունների օգնության վրա, այլ միայն հայ-քրդական և հայ-աստրական համագործակցության վրա: Քուրդ խանը հայկական խնդիրը համարում էր «քրդերի և ասորիների խնդիր», որքան որ հայերը քրդերի և ասորիների զարգացման համար աշխատեն, այնքան էլ յուրասից գործին կօգնեն»¹: Ցավոք, երս նման մտածող քրդերը սակավարիկ էին, և քորքական կառավարությանը հաջողվեց քուրդ ցեղապետներին գործիք դարձնել հայերի ոչնչացման ծրագիրն իրականացնելու համար: Իր գործունեության ընթացքում որպեսզի հեշտությամբ անցնի ոուս-քորքական սահմանը, 1883 թ. Թոխմախյանը Խրիմյանի կողմից Վարագում ձեռնադրվում է վարդապետ, մի տարի անց նշանակվում տեղի վարժարանի տեսուչ, տարբեր տարիներ վանահայր է կարգվել սահմանամերձ Ս.Քարդութիմելոսի, Թաղլոսի, Դերիկի վանքերում, նոր սկիզբ առած հայության շարժմանն օգնելու համար: Թորքական կառավարությունը ուշի ուշով հետևում էր կասկածելի վար-

¹ Վրաստանի ԿՊՊԸ, ֆ. 416, գ. 4, զ. 27:

² Էջեր հայ զրականութեան, հ. Ա, Գ-ակիրէ, էջ 8:

¹ Ա. Թղթամախոսն, Մասիս լեռների հարավային ստրոտները, Թիֆլիս, 1882, էջ 57:

դապետի գործունեությանը: 1887 թ. Վանում նա բանտ նետվեց, այնուղի ենթակալվեց ահավոր կտուանքների: Նրանից լորեք ստանալու նպատակով բանտի դեկավարությունը 4 օր շարունակ գլխիվայր խաչում է նրան, բայց այդ տաճաճքները բուրքերին ոչ մի օգուտ չտվեցին, նա ոչ մի լոր կամ փաստ չհաղորդեց խոշտանգողներին: Բանտից ազատված Թոխմախյանը շարունակեց իր հայրենանվեր գործունեությունը, սակայն նրա կյանքը ունեցավ եղերական փախճան: Կեղծ դավաճանության մեղադրանքով Ս. Նախավկայի վաճրում հայտնի հայդրիկապետ Հոնոն այրվող քոնիրի մեջ նետեց Արևեն Թոխմախյանին: Դա 1891-ին էր: Դրանք Խրիմյանի աշակերտներից ամենանշանավորներն էին:

Անցնենք նրա մերձավոր ընկերների, ընդհանրապես ծագումով փանեցիների հոգևոր մշակութային գործունեությանը: Այդ շարքում ընդգրծված տեղ են գրավում Տելքանց կամ Տեր-Սարգսեանց հայտնի գերդաստանի շառավիղները, որոնցից ամենանշանավորները երեք եղբայրներն են՝ Երեմիա, Արիստակես և Սեղրակ Տելքանցները: Ավագը՝ Երեմիան, (1829–1885) փարդապետ էր Ճեռնադրվել Լիմ անապատում: Խրիմյանի պատրիարքության տարիներին եղել է Կ. Պոլսի հայոց պատրիարքության քարտուղարը: 1868-ին Մ. Խրիմյանի հետ միասին Էջմիածնում Ամենայն Հայոց կարողիկոսի կողմից օծվել են Եպիսկոպոսներ և կոչվել են կարգակից եղբայրներ: Առաջնորդական պաշտոններ է փարել Արևելյան Հայաստանի տարբեր նահանգներում Վանում, Խարբերդում, Բաղեշում, Սուլում, Արարկիրում և այլ վայրերում: Սակայն մեզ համար առավել կարևոր նրա բողած հոգևոր-գիտական ժառանգությունն է, Մ. Մաշտոցի անվան մատենադարանում պահպող 11 ճեռագիր հասորները՝ «Տոհմային հիշատակարանները», որոնք ընդգրկում են 1850–1880 թթ: Հիշատակարանի այդ հասորները մեծ նշանակություն ունեն երեսուն տարվա հայոց պատմության համարյա բոլոր երեսույթները, իրադարձությունները մեկնաբանելու խնդրում: Նրա ճեռագրերից հավաստի տեղեկություններ կարող ենք ստանալ Խրիմյանի՝ Վարագում և Ս. Կարապետի վաճրերում ծավալած վանական գործունեության մասին, հայ-քրդական հարաբերությունների, Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի, Վանում բացված դպրոցների, պողոսյան և ապողոսյան պայքարի, Ալբանարի կարողիկության, հայ պահպանողական հոգևորականների (Պողոս, Խաչա-

տուր Շիրոյան և այլք) մասին: Լինելով հայոց պատրիարքարանի հոգեոր քարտուղարը նա իր մոտ է պահել զանազան փաստարդերի պատճեներ, որոնք այժմ կարող են ակզբանադրյալի դեր կատարել: Սի փոքրիկ փաստ 1877–78 թթ. ուսու-քուրքական այստերազմից հետո արևմտահայության արտազարդին խոշնեղութելու և մայր հայրենիքում պահելու նպատակով Կ. Պոլսի պատրիարք Ներսես Վարժապետյանը երեք փարդապետ ուղարկեց Արևմտյան Հայաստան: Գարեգին Սրբանձայանց, Արիստակես Տելքանց և Վահան Տեր-Սինասյան (Պարտիզակցի): Եթե առաջին երկուսի տեղեկագրերը մեզ են հասել նրանց աշխատությունների՝ Գ. Սրբանձայանցի «Ժողով աղքար»-ի երկու հասորները և պատրիարքարանին ուղղած գեկույցը, Արիստակես Տելքանցի «Այցելություն ի Հայաստան 1878 թ.» ուղեգործությունը, ապա Պարտիզակցու գեկուցագիրը մեզ է հասել Երևանի Տելքանցի հիշատակարանների Ա-րդ հասորի միջոցով (Զեռագիր № 4182 էջ 585 և հետագա շարադրանքը): Մեծ անհրաժեշտություն է ճեռագիր հասորների հրատարակությունը, այն կարող է ծառայել իրեն հավաստի սկզբնադրյուր:

Երկրորդ Տելքանցը, ինչպես արդեմ ասեցինք, Արիստակեսն է (1849–1896), բնիկ վաճեցի, ավարտել է Վարագա Ժառանգավիրացը: 1875 թ. Կ. Պոլսում իրատարակում է «Պանդոխտ վանեցին» նամակների, երգերի մի ժողովածու, որի առաջարանը գրել է Մ. Խրիմյանը: Եղել է նաև Վարագի վաճահայր, 1878-ին կատարում է պատրիարքի հանձնարարությունը. մայիսին դուրս գալով Կ. Պոլսից, Տրավիզոնի վրայով մտնում է Բաքերդ, ապա Կարին, Խնոս, Վարդո, հունիսին արդեն Սշո դաշտում էր: Շանապարհորդության ընթացքում տեղագրում է այդ վայրերը, մանրամասն նկարագրում տեղի վաճերելը, նրանց եկամտունները, հավելյալ նշերով թե որ վաճրում ինչ վարժարան կարելի է բացել և քանի աշակերտ պահել: Արիստակեար կազմում է իր եղած վայրերի ժողովրդագրական պատկերը: Պատրիարքարան ներկայացրած իր գեկուցագիր-տեղեկագրից բացի, իր տեսածն ու զգացածն ամփոփում է մի աշխատության մեջ «Այցելություն ի Հայաստան 1878 թ.» խորագրով, որն իր մեջ ամփոփում էր Սշո, Սասունի, Բիրիսի բոլոր վայրերի վիճակագրությունը: Արիստական հնչեղություն ունեն այդ վայրերի գյուղերի, նրանց բնակիչների մասնամասն ցուցակները: Գարեգին Սրբանձայանցի «Ժող-

րու աղբարի» երկու հասորի հետ այդ աշխատությունը լրացնում է Արևմտյան Հայաստանի ժողովրդագրությունը և ապացուում, որ ոռություրքական պատերազմից հետո էլ հայությունը մեծամասնություն է կազմում իր բնիկ հայրենիքում: Տեսանցի այս աշխատության ձեռագիրը գտնվում էր մատենադարանում, այն հրատարակություն է պատրաստել, առաջարանը և ծանրությունները գրել վաղամեռիկ պատմաբան Հայկաց Պողոսյանը: Տեսանց եղբայրներից կրտսեր՝ Սեղրակ Տեսլանց (1853–1938 թթ.) դարձյալ սկզբնական կրթությունն ստացել է Վանում, ապա հաստատվել է Կ.Պոլսում, գրադիվել ուսուցչությամբ և գրական աշխատանքով: 1876 թ. հրատարակում է «Շահենն ի Սիալիր» վեպը: Այն հետաքրքիր է երկու առումներով: Վեպի հերոսը՝ Շահենը խոյս տարով քորքական հայահայած քաղաքականությունից հայտնվում է Արևմտյան Հայաստանում, սակայն այնտեղ էլ գրավում է ցարական իշխանությունների ուշադրությունն ու կասկածը, ապա արսորվում է Սիրիի: Փասուրեն երիտասարդ Տեսլանցը քննադատում է միաժամանակ քորքական և ցարական իշխանություններին՝ իրենց ազգայնամոլ քաղաքականության համար: Զարմանալ կարելի է երիտասարդ հեղինակի հեռատեսության և իմաստուն կանխատեսումների վրա: Այդ վեպից բացի Սեղրակ Տեսլանցը հրատարակել է քանաստեղծությունների ժողովածու «Վառարանի մը կայծեր» խորագրով: Նա «Ասպետ» ծածկանուվ ժողովրդական երգեր է հրատարակում Զմյունիայում լույս տեսնող «Արևմտյան մամուլում»:

Տեսլանցների նման հասարակական և հոգևոր-մշակութային գործիչների մի ընտանիք էր Նարանյանների ընտանիքը: 5 եղբայրները՝ Կարապետը (1834–1930 թթ.) Պողոսը (1856–1886 թթ.), Գարբիելը (1862–1905 թթ.), Մարկոսը (1862–1927 թթ.), Սիրայելը (1867–1954 թթ.) ուշագրավ և հայրենանվեր գործունեություն են ծավալել ոչ միայն Վանում, այլև Արևմտյան Հայաստանի տարբեր նահանգներում: Գ-րականության և Արվեստի բանագարանի արխիվի Գ. Սյովանձտյանցի և Մ. Խրիմյանի ֆոնդերի մեջ կան բազմաթիվ նամակներ գրված Կարապետ Նարանյանի ձեռքով ուղղված Մ. Խրիմյանին: Կարապետ Նարանյանը, որ Վանում հասել էր բաղարազլիսի աստիճանի, 1880-ականների կեսին, ավելի ճիշտ՝ 1886-ին Վանի պողոսյան-ապողոսյան պայքարում Սելիքյանին

հոգևոր առաջնորդ շրնտրելու համար, իր վրա գրավեց քորքական կառավարության ուշադրությունը, անցավ Կ.Պոլիս և բռնվելով, Ալբանի Ավետիսյանի հետ բանտարկվեց Եղիզօս, արսորվեց, ապա ազատվեց և շարունակեց ազգանվեր գործունեությունը. նա ջանքեր էր բափում հայ-քրդական դաշինք ստեղծելու ուղղությամբ: Իր մաշկի վրա նա զգաց նաև մեծ եղանի սարսափները, մտավորականության հետ արսորվեց, սակայն ողջ մնաց և 1918 թ. հաստատվեց Կ.Պոլսում:

Հետաքրքիր և ողբերգական է Պողոս Նարանյանի կյանքը: Սկզբում վարդապետ, ապա ծայրագոյն վարդապետ, մանկավարժական գործունեություն է ծավալում Համբարձում Երամյանի «Խնամատար» դպրոցում: Որբանոցին օգնելու համար Վանի ուսուցիչների մեծ մասը մեկ տարի՝ 1882 թ. ձրի դասավանդում են այնտեղ: Այնուհետև նա հոգևոր առաջնորդի պաշտոններ է վարում Արևմտյան Հայաստանի տարբեր վայրերում՝ Բալու, Խարբերդ, Չարսանաջակ, Շապաղուր, Երզնկա: Այդ աշխատանքի արդյունքը եղավ «Արտօսը Հայաստանի կամ տեղեկագիր Բալու, Ջարբերդ, Չարսանաջակ, Շապաղուրի և Երզնկայու» տումնախիրությունը, որը լույս տեսավ Կ.Պոլսում: Նշված վայրերի հայության ծանր վիճակը նկարագրելու հետ միաժամանակ, նվիրյալ հոգևորականը համար և անզիջում պայքար է մղրմ այդ վայրերի հայ մեծահարությունների (չորսականների դեմ), ովքեր միացած թուրք վերնախավին և կառավարական պաշտոնյաններին, ծծում են ժողովրդի արյունը: Դաժան էր այդ անզիջում պայքարի արդյունքը, այդ մեծահարությունները իրար միացած Պողոսին մատնում են կառավարությանը՝ իրեն խոռվարար և նա շղթայակաս Պոլիս է տարփում, դատավարտվում բանտարկության: Կ.Պոլսի հայոց պատրիարքարքարանը չի միջամտում կառավարության առաջ՝ իր հոգևոր առաջնորդի իրավասությունները ուղևատակ տալու համար, նաև խուսափում է հոգալ նրա հոգսերը: Կ. Պոլսի գաղտնի պատրագրական խմբակներից «Վարիչ մարմինը», որի անդամները հետազայում ամբողջովով մտան հնչակյան կուսակցության շարքերը, հաջողեցնում են գաղտնի տեսակցել նրա հետ, հայքայի նրա ուտելիքն ու հանդերձը, այդ քայլի համար արժանանալով պատրիարքական վիխանուրդ Գևորգ Յորբակյանի նախատիմքին: Բանտում էլ Պողոս Նարանյանը կմըռում է իր մահկանացուն:

Նարանյան եղբայրներից նշանավոր էր նաև Մարկոս Նարանյանի մանկավարժական լուսավորական գործունեությունը: Նա ակտիվ անդամակցում էր 1870-ականների վերջին, 80-ականների սկզբին ստեղծված լուսավորական Սիացյալ ընկերության աշխատանքներին, որը մնաց գործունեություն էր ծավալել բուն Արևմտյան Հայաստանում: Սիացյալ ընկերության ընդհանուր տեսուչը Սկրտիչ Սարյանն էր, իսկ տեղակալը՝ Մարկոս Նարանյանը, որը միաժամանակ Տափոսի շրջանակի փոխտեսուչն էր: Այդ ընկերության եռամյա տեղեկագիրը (1880–1882 թթ.) ցույց է տալիս, թե ինչ մնաւ աշխատանք է ծավալել Արևմտյան Հայաստանի Տարոն-Տուրուբերանի, Վասպորականի, Տափոսի, Կիլիկիայի շրջանակներում, ճշգած վայրերի գյուղերում դպրոցներ բացելու ուղղությամբ: Սակայն բուրքական կառավարությունն աստիճանաբար սեղմում էր օդակը. 1885–87 թթ., երբ Կ. Պոլսի Քաղաքական ժողովի ատենապետ էր ընտրվել Հովհաննես Նուրյանը՝ Բ. Դուռն նվիրյալ պաշտոնյան, պարտադիր կանոնադրություն ստեղծեց բոլոր կրթական ընկերությունների համար, սեղմեց նրանց գործունեության շրջանակը, իսկ կառավարությունը ուսուցիչներին և տեսուչներին ենթարկեց հարցարնեությունների, ստիպելով դադարեցնել իրենց աշխատանքը: 1886 թ. դեկտեմբերի 15-ին ձերբակալվեցին Սիացյալ ընկերության ընդհանուր տեսուչ Սկրտիչ Սարյանը՝ Ալաշկերտում, Մարկոս Նարանյանը՝ Մուշում: Առանց հարցարնեության, չիմանալով իրենց դեմ եղած մեղադրանքը՝ նրանք երկար մնացին բանտում, հետո առանց դատական վճռի արտորվեցին: Մ. Սարյանը 1900-ին մեռավ Զմյուռնիայի հիվանդանոցում, իսկ Նարանյանը Երուսաղեմում (արսորում) երկար մնալուց հետո մերժան արժանացավ¹:

Քազմաքիլ են Վանի մշակութային գործիչները. բոլորի մասին գրել հնարավոր չեն, սակայն չգրել Համբարձում Երամյանի մասին չի կարելի: 1857 թ. ծնված վանեցին 11 տարեկանում կորանում է երկու աշքով: Գիտելիքների է ձեռք բերում ինքնուսուցմամբ, 1874 թ. սկսում է աշխատել որպես ուսուցիչ: Նրա գործունեության շառավիղներն ընդարձակվեցին որուս-թորքական պատերազմից հետո, երբ բազմաքիլ մանուկներ որ-

բացան: 1878 թ. Վանում նրա նախաձեռնությամբ ստեղծվեց «Խնամատար» ընկերությունը, որի նպատակն էր որքանոց ստեղծել արեավիրքներից որքացած հայ մանուկների համար: Վանում բռնկված ուժգին սովոր ստիպեց ընկերության կոչով դիմել հայության բոլոր հատվածներին: Արեւահայերն արձագանքեցին այդ կոչին: Գրիգոր Արծրունին «Սշակի» միջոցով հանգանակություն կազմակերպեց հօգուտ Վանի սովորների: Հավաքվեց պատկառելի մի գումար որքանոցի համար: Տան վարձելու փոխարեն Վանի Սովելոց հանձնաժողովի նախագահ Սկրտիչ Խորիմյանը որքանոցի տրամադրության տակ դրեց Կարմրվոր Ս. Աստվածածին վաճրը, որն ուներ բավականին մշակելի հողեր ու փայրեր, նրանց հանձնվեց նաև Ս. Խոաչի և Ս. Գրիգորի վաճրերը¹: 1880 թ. սեպտեմբերին Կարմրվոր վաճրում բացվեց որքանոցը: Տասնամյակի կեսին որքանոցի գործերը դժվարացան, հանգանակությունները պակասեցին, իսկ որքանոց-վարժարանը նորից վերադարձավ Վան: Երամյանն աստիճանաբար բարձրացրեց վարժարանի հեղինակությունը, որտեղ սկսեցին ընդունվել նաև բոշակավոր աշակերտներ: Ակզրում իննամյա վարժարանը 1888-ից դարձավ 10-ամյա: Վարժարանի հեղինակությունն այնքան բարձրացավ, որ նրա շրջանավարտներն իրավունք ստացան կրությունը շարունակել ելքուպական համալրաներում: Վանի ուսումնական խորհուրդը Պողոս Սելիքյանի առաջնորդության ժամանակ ցանկացավ արգելել ամառային արձակուրդները, սակայն Երամյանը չանաց այդ իրանամյան և տվեց արձակուրդները: 37 տարի վարժարանը շարունակեց իր գոյությունը (1878–1915 թթ.) Հ. Երամյանի տնօրինությամբ: Այն սկզբից կոչվեց որքանոց, 1888 թ. հետո՝ որքանոցի վարժարան, իսկ 1904 թ. կոչվեց հիմնադրի՝ Երամյանի անունով: 1890-ականների սկզբին հայերի նկատմամբ բուրքական հալածանքներն ուժեղացան. նոյնիսկ շափափոր հայացքների տեր Հ. Երամյանն ու իր վարժարանն ընկալ կասկածանքի տակ: Նա բանտարկվեց և երկու ամիս շարունակ հարցարնեություն էր, որովհետև նրա բոնագրաված իրերի մեջ գտել էին Ռ. Պատկանյանի «Ազատ երգերը»: 1915 թվից նա փոխադրվեց Ալեքսանդրիա: Այստեղ է

¹ Է. Կուտանոյան, Սկրտիչ Խորիմյան. Խասարակալան-քաղաքական գործունեությունը, Երևան, 2000, էջ 304:

¹ Սիացյալ ընկերության եռամյա տեղեկագիր, 1908–1911 թթ., Կ. Պոլսի, 1912, էջ 13–16:

լույս տեսավ նրա երկու հատորանոց «Հուշարձան Վաճ-Վասպուրական» արժեքավոր աշխատությունը:

Բազմարիվ են 19-րդ դարի Ա կեսի Վաճեցի մշակութային հասարակական գործիչները, նրանց մասին ոչ թե հոդված կարելի է գրել, այլ մի հսկա աշխատություն: Կարելի է հրատարակել նաև մեծ հանրագիտարան՝ նվիրված Վաճի անվանի հոգևորականներին, գրողներին, մշակույթի և մանկավարժական գործիչներին:

Թրիստոնյա Հայաստան 2010, № 21, 22, 23:

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՆՎԱՆԻ ԳՈՐԾԻՉՆ ՈՒ ԳԻՏՆԱԿԱՆԸ

(Մաղաքիա Օրմանյանի ծննդյան 170-րդ տարելիցի առթիվ)

19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի հայ եկեղեցու և հասարակական-քաղաքական կյանքի ականավոր դեմքերից է Մաղաքիա Օրմանյանը՝ հոգևորականի տեսական գլխավոր հսկա պաշարով եղակի մի անձնավորություն, հայ եկեղեցու նվիրյալ սպասավոր:

Ծնվել է 1841 թ. փետրվարի 11-ին Կ.Պոլսի Բերա քաղաքասում, Խոռոմեադավան ընտանիքում: Հայրը դեղագործ Ամսոն Օրմանյանն էր, մայրը՝ Եղիսաբեր Սիասերյանը: Նախնական կրթությունը Կ.Պոլսում ստանալուց հետո տասնամյա Պողոսը (ավագանի անուն է) մեկնում է Հռոմ և ընդունվում տեղի Անտոնյան միաբանության Ս. Լուսավորչի վանքը: 1855 թ. դեկտեմբերի 25-ին նորմնածա է օրինվում և վերանվանվում Մաղաքիա: Երեք տարի անց կրոնավոր է դառնում, կրշտվում եղայր Մաղաքիա: Սովորում է Վատիկանի դպրոցի ճարտասանության դասարանում, իսկ 1858 թ. ուսումը շարունակում է Սուրբ Աստվածածին դպրոցում: 1860 թ. ավարտում է Հռոմի հոգևոր ուսումնական հաստատությունները, ստանում իմաստավորության, աստվածաբանության, եկեղեցական իրավագիտության մագիստրոսի կոչում, ընտրվում Հռոմի աստվածաբանական կաճառի անդամ: Հռոմում նա եռանդուն մասնակցութ-

յուն է ունենում հակահասունյան պայքարին, դիմագրավում հռոմեադավան հայությանը կարողիկության մեջ ձուլելու քաղաքականության: Պապականության դեմ մղած պայքարի արտահայտություն են դառնում «Հայ արեւելեան կարողիկեայք» (1870) և «Ռեվերսուրուս կամ Հայք և պապութիւն» (1872) աշխատությունները, որոնք լույս տեսան խուլերեն: Դրանց գաղափարական շարունակությունը եղան «Արևելյան կարողիկաց կրոնական ազատությունը և քաղաքական իրավունքները» (1872) ու «Վատիկան և Հայք» (1873) գործերը՝ ֆրանսերեն: Այդ գրքերն անցան պապական արգելված գրքերի շարքը: Օրմանյանի գաղափարների ձևավորման վրա մեծ ազդեցություն ունեցավ հանդիպումը Խոտայի ազգային հերոս Գարիբադդիի հետ 1875 թ. Հռոմում: 1876 թ. Օրմանյանը վերադառնում է Կ.Պոլսի և որոշում վերջնականապես իր կապերը խզել Վատիկանից, ընդունվել հայ եկեղեցու գիրքը: «Հռոմադասանութենէ հեռանալու միտքը իմ վրա ոչ կիրքի մը վայրկենական որոշում և ոչ շահադիտութեան կեղծիք երայլ երկար ատեն խորհուած և կշռուած, և խոհական քայլերով յառաջացած գործ մը եղած է»¹: Այդ հաստատուն գաղափարներով 1877 թ. փետրվարին Օրմանյանը խնդրանքով դիմում է Կ.Պոլսի հայոց պատրիարք Ներսէս Վարժապետյանին: Վերջինս արդեն տեղյակ էր նրա ազգափարական-հայասփարական գործերին, եղոյքներին, խորհուրդ է տալիս մնալ իր տեղում (հռոմեադավանների շրջանում) և «վամորել»: Մոտ երեք տարի դեռևս հռոմեադավան Օրմանյանը աշխատում է իրեն Ղալաքիայի Ազգային մատենադարանի տեսուչ: 1877–78 թթ. ուսու-թուրքական պատերազմից հետո արևմտահայության մեջ տիրող ոգեստությունն առիք էր դառնում քաղմարիկ ազգափարական ձեռնարկների: Դրանց շարքում ուշադրության կենտրոն են դառնում Օրմանյանի ազգային թեմաներով կարդացած բանախոսությունները: 1879 թ. հունվարի 8-ին Օրբագյուղում Օրմանյանի դասախոսությունը՝ «Հայուն անցեալն ու ներկայն ու ապագայն» թեմայով մեծ ընդունելություն գտավ և «Մասիս» մեջ հրատարակվեց: Այդ շարքը շարունակվեց մեկը մյուսից հետաքրքիր թեմաներով՝ «Հայութեան հոգին», «Հայ երիտասարդութիւն», «Հայ ազգութիւն», «Կարոտ եմք»: Ուսկըստարում, Սամարիա-

¹ Մ. Օրմաննեան, Խոհեր և Խոսք (յետմահու հրատարակութիւն), Երևան, 1929, էջ 6:

յումև Օքաջուղում կարդացած այդ դասախոսություններն ապացուցեցին, որ դրանց հետինակը հոգով արդեն հայադավան էր: Հայ Եկեղեցու գիրկը դառնալը պարզապես այնոր է լիներ հանդիսավոր ձևականություն, որը գրեթե «ժողովրդական ցույցի» կերպարանով տեղի ունեցավ 1879 թ. հոկտեմբերի 28-ին¹: Իր հետ հայ Եկեղեցու գիրկը վերադարձան 75 հոգի (30 կին, 45 տղամարդ): Այդ իրադարձությանը բարձր գնահատական է տալիս Հ. Սիրունին, այն համարելով բացառիկ երևոյթ: «Հայ Եկեղեցին միակ շաղախն էր դեռ այն օրերուն՝ հայ ավանդություններով թրծելու համար հայ ժողովրդի ցանուցրիկ զավակները»²: Քանի որ, հոռմեադավան Եկեղեցուն Օքաջուղան արդեն օծվել էր վարդապետ, հայ առաքելական Եկեղեցու գրկում նա ստանում է ծայրագույն վարդապետություն և կարգում Դալարիայի Ս. Լուսավորիչ վաճրի բարողիչ: Նրա ազգային-հոգևոր գործունեություն ծավալելու գործում մեծ դեր է խաղում պատրիարք Ներսես Վարժապետյանը, որի ջանքերով 1880 թ. ապրիլի 2-ին Օքաջուղան ընտրվում է Կարինի (Լրգումի) հոգեոր առաջնորդ: Մայսի վերջին նա արդեն Կարինում էր:

Սան-Ստեֆանոյի պայմանագրի հետ կապված ազատության հույսերը ի դերև եկան Բեռլինի վեհաժողովի 61-րդ հոդվածով: Արևմտահայությունն զգաց, որ «Եվրոպան դավեր ու դափանաներ էր իրեն՝ զինքը դարձյալ մինակ ձգելով իր ցավերուն և հուսահատութեան մեջ»³: «Մարդ ինքն իրմեն պետք է աշխատի, որ փրկուի» և «Երկարէ շերեփի» խրիմյանական բարոզները դարձան ժամանակի ազգային գործիչների և երիտասարդության կարգախոսը: Դրանց առաջին արձագանքները եղան Արևմտյան Հայաստանի տարրեր վայրերում ստեղծված ազգային-ազատագրական նպատակներ հետապնդող զաղտնի ընկերություններն ու կազմակերպությունները, որոնց շարքում իր ուրույն տեղն ունի Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունը:

Դեռ հազիվ մեկ տարի էր, որ Օքաջուղանը գտնվում էր Կարինում, երբ տեղի երիտասարդները 1881 թ. մայսին հիմնում են մի գաղտնի

կազմակերպություն «Պաշտպան հայրենյաց»¹ անունով, որի ստեղծման նախաձեռնողն էր արինատավոր Խաչատոր Կերեքյանը՝ Կարապետ և Հակոբ Նշկյանների, Հակոբ Երախիլյանի, Հովհաննես Աստուրյանի, Եղիշ Տորոսյանի գործակցությամբ: Խերթ՝ Օքաջուղանը, հետագայում «Ազգապատում»՝ Գ-հատորում այդ կազմակերպության նպատակը համարում էր «զինեալ բուրդին և շերեգին բռնութեանց» զենքով պատասխանելը, Ժխտելով հակակառավարական որևէ նպատակ հետապնդելը: «Պաշտպան հայրենյացը» սկսում է եռանդուն գործունեություն ծավալել: Ակրտիչ Խրիմյանի միջոցով հարաբերություն է հաստատում այդ ժամանակ Վանում ստեղծված «Սև խաչ» զաղտնի կազմակերպության հետ. անդամներից մեկը մեկնում է Կ. Պոլիս, այստրիարք Ներսես Վարժապետյանին տեղեկացնում իրենց կազմակերպության մասին, ցույց տալիս անդամաստումները, որոնք վերջին պատվիրում է անհապալ ոչնչացնել, ոստիկանության ձեռքը չընկելու համար: Մի այլ անդամ մեկնում է Թիֆլիս՝ Գ-իդոր Արձունու հետ հարաբերություն հաստատելու համար: Այդ բոլոր գործիչները խրախուսելով կազմակերպության անդամներին՝ խիստ իրահանգ են տալիս գործել արտակարգ գգուշությամբ: Սակայն կազմակերպական այդ աշխատանքների ընթացքում, մի տարի անց՝ 1882 թ. նոյեմբերին ոստիկանությունը պատահարար բացահայտում է կազմակերպությունը: Ձերբակալվում են 72 հոգի, բռնը էլ արինատավոր: Կասկածի տակ է ընկնում նաև Մաղաքիա Օքաջուղանը: Վերջինս պատրիարքարանի հանձնարարությամբ իրեւ ընճիշ մեկնել էր Սշո, Ալաշկերտի և Բասենի վաճքերը ու նոր էր վերադարձել Կարին: Զգալով, որ իր վրա կասկածներ կան, դրանք ցրելու և ձերբակալվածներին օգնելու նպատակով 1883 թ. մարտի 24-ին նա շտապում է Կ. Պոլիս²: Չնայած Օքաջուղանի՝ այդ կազմակերպության հետ առնչություն ունե-

¹ Այդ կազմակերպության մասին տես մանրամասն Ռ. Հովհաննիսյան, Արևմտահայ ազգային-ազատագրական շարժումները և Կարինի «Պաշտպան Հայրենյաց» կազմակերպությունը, Երևան, 1965:

² Տարիներ անց Օքաջուղանը զուսպ և ժամանակայություններով նկարագրում է «Պաշտպան հայրենյացի» գործունեության բացահայտումը և իր Կ. Պոլիս մեկնելը: Խորիրդային շրջանի ականավոր պատմարան Մ. Ներսիսյանը արիսխային փաստարքերի օգնությամբ ճիշտ զնահատական է տալիս այդ բոլորին, որը հաստապում է նաև Ռ. Հովհաննիսյանի աշխատության մեջ:

¹ Հ. Սիրունի, Օքաջուղան և իր ժամանակը, Էջմիածին, 1961 թ. մայիս, № 5, էջ 42:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում, հունիս, № 6, էջ 16:

նալու ժխտումներին, ժամանակակիցները զիտեին նրա կազմակերպչական դերի մասին: Տարիներ անց դա խոստովանում է Գյիգոր Զոհրապը, որն իր «Ծանոթ դեմքերի» մեջ, գրաքննությունից խոյս տալու, բայց ժողովրդին տեղյակ դարձնելու նպատակով գրել է. «Օրմանյան սրբազն մեր եպիսկոպոսներուն երիտասարդը և մեր երիտասարդներուն եպիսկոպոսն է»: Խսկ երիտրուրական հեղափոխությունից հետո 1912 թ. դեկտեմբերի 21-ի նիստում, երբ Կ.Պոլսի հայոց Ազգային ժողովը դառնում է հրաժարեցրած պատրիարքին, Զոհրապը հանդէս է գալիս դատապաշտպանի դերում, ժխտում նրա՝ սուլթան Արդուլ Համիլին ստրկամիտ ծառայելու հանգամանքը և վկայում. «Մրրե Կարճու առաջնորդ հեղափոխական գործունեություն մը ունեցավ: Անուրանալի է, որ Կարճու մեջ առաջին ցնցումը իր օրովը եղավ, ու շարժման գործու ինքը գտնվեցավ: Այդ պատճառով Օրմանյան սրբազն Պոլսի քերպեցավ և հարցարնեութեան ենթարկուելել հետո հազիվ կրցավ օժիքը ազատե»¹:

Իր նկատմամբ կասկածները ցրելոց հետո Օրմանյանը ձևնանուխ եղավ դատապարտված հայերի ազատությունը կազմակերպելուն: 72 հոգուց դատի առաջ կանգնեցին 56-ը, որոնցից 16-ը ևս ազատվեցին, մահվան դատապարտվածների պատիժը փոխարինվեց՝ 15, 13, 10, ապա ավելի քիչ տարիների: Ներսես Վարժապետյանի հետ միասին քափած ջանքերի շնորհիվ բանտարկվածներից ոչ մեկը սահմանված պատիժը չկրեց: Երկար ժամանակով Օրմանյանը մնաց Կ.Պոլսուն, սակայն իր վրա մնաց Կարճու առաջնորդությունը և 1884 թ. սեպտեմբերի վերջին, առանց կարմեցիներին իմաց տալու, մտավ Կարին, շարունակեց ընդհատված աշխատանքները: 1884 թ. նոյեմբերի վերջին բանտից ազատվեցին վերջին բանտարկյալները, և հանդարտված Օրմանյանն սկսեց իր հովվական այցելությունները:

1886 թ. հունիսի 8-ին Գարեգին Սրբանձտյանցի հետ Մայր Աբոն Ս. Էջմիածնում Մակար կարողիկոսի կողմից օծվում է եպիսկոպոս: Այդ ժամանակ նրան իրավիրում են Գևորգյան Շեմարանում աստվածաբանություն դասախոսելու, սակայն նա հանձնարարություն էր ստացել հայոց պատրիարքարանից իբրև քննիչ մեկնել Վան տեղի հոգեոր առաջ-

նորդ Պոլսու Սելիքյանի ապազգային գործունեության պատճառով առաջացած պողոսյան-ապողոսյան վեճերը հարթելու համար: Նրան հաջողվում է ճիշտ քննություն կատարել և Պոլսու Սելիքյանն ազատվելով հոգեոր պաշտոնից՝ արտղվում է Լիմ անապատ (Վանքը)¹: Դարձյալ պատրիարքարանի հրահանգով Օրմանյանը զնում է Ալբամար՝ տեղի կարողիկոս Խաչատորի և միաբանության միջև եղած վեճերը հարթելու և այդ մասին գեկուցազիր ներկայացնելու համար: 1886 թ. օգոստոսին նա արդեն Կարինում էր, որ շարունակում է աշխատանքները: Սեպտեմբերի 2-ին բանտից ազատվում են «Պաշտպան հայրենյացի» վերջին բանտարկյալները: Թեմական առաջնորդը գրադվում է ոչ միայն Կարինի, այլև Թորքումի, Կիսկիմի, Սպերի Վիճակներով, անձնվեր գործունեություն է ծավալում գավառահայության Վիճակը բարելավելու ուղղությամբ²: Նոր էր Կարին վերադարձել, երբ 1887 թ. հունիսի 24-ին ստանում է Ամենայն Հայոց Մակար Թեղուտցի կարողիկոսի կոնդակը, որով նա կանչվում էր Էջմիածնի՝ Շեմարանում դասախոսի պաշտոն վարելու համար: Հետաքրքիր զնահատական է տալիս այդ գործունեությանը Հակոբ Սիրունին, նշելով, որ Մակար կարողիկոսը մի ամբողջ վիճակ բողեց առանց հոգեոր առաջնորդի, մտածելով, որ ավելի լավ է մի վիճակ բողել առանց կառավարողի, բայց դրա փոխարեն պատրաստել բազմաթիվ վիճակ կառավարողներ, ապա ավելացնում է, որ Օրմանյանը պարաւատեց՝ «հասցուց վիճակ կառավարողներ, բայց միևնույն ատեն Կարինում ցոյց տվալ, թե ինչպես պետք է վիճակ մը կառավարել»³:

Օրմանյանի կյանքում յորահատուկ փուլ էր Էջմիածնի Գևորգյան Շեմարանում դասավանելու շրջանը: 1874 թ. բացված Գևորգյան Շեմարանը ազգի համար պատրաստել էր բնտիր մտավորականներ, բայց ժամանակակիցների վկայությամբ նա չէր կատարել իրեն վերապահված դերը՝ հոգեորականների նոր սերտնադասության հաստինացնելը: Շեմարանում պատրաստվածում էին բնտիր ուսուցիչներ, սակայն այդ հոգեոր հաստա-

¹ Այդ մասին ավելի մատրաճաստ տե՛ս Է. Կոստանդյան, «Գարեգին Սրբանձտյանց» և նույնի «Սիրուիչ Խորհմյան» աշխատությունները:

² Հետազոյմ «Ժողով և խօսրում» Օրմանյանը գոհունակությամբ է արտահայտվում Կարինի հոգեոր առաջնորդի իր գործունեության մասին, նշելով, որ կարմեցիները «օրինությամբ» են իիշել այդ օրերը: (Մ. Օրմանեան, Խոր և խօս, էջ 141):

³ Հ. Սիրունի, Օրմանյան և իր ժամանակը, տե՛ս Էջմիածնի, 1961, թիվ 6, (2), էջ 18:

¹ Էջմիածնի, 1961, թիվ 5, էջ 20:

տուրյան մեջ պակասում էին կրոնական դասերը. ցածր դասարաններում ավարտվում էր Սուրբ Գրոց պատմությունը, իսկ համալսարանական լսարաններում կրոնական առարկաներ չէին դասավանդվում: 1886-ին, երբ Օրմանյանն Էջմիածնում եպիսկոպոս էր օծվում, նրան նման առաջարկություն արվեց: Սակայն վերջինս Կ. Պոլսի պատրիարքից համաձարարություն էր ստացել, որի կատարման համար նա հրաժարվեց այդ առաջարկից: Քանակցություններ սկսվեցին Ամենայն հայոց կարողիկոսի և Կ. Պոլսի պատրիարքի միջև, և միայն 1887 թ. հունիսին կարողիկոսական կոնդակով Օրմանյանը հրավիրվեց ճեմարան՝ ուսուցչական պաշտոնի: Նույն տարվա սեպտեմբերին նա արդեն աստվածաբանություն էր դասավանդում երեք լսարաններում, օրական շրու ժամ: Քանի որ դասախոսության ծեռնարկ չկար, ծրագիր կազմելը վստահվեց Օրմանյանին, որը դասավանդման լեզուն ընտրեց գրաբարը. «Հարկ եղավ բնական աստվածաբանութիւնը սկսիլ՝ հոգեբանութիւնն ալ խառնելով, ջատագովական ճիշդ լրացնել և տեսական ու բարոյական աստուածաբանութեանց անցնի, շարաբական դաս մըն ալ Ավետարաններու ներածութեան յատկացուեցան երեք լսարանները համախմբելով»¹: Մեկ ուսումնական տարի Օրմանյանը դասավանդեց ճեմարանում և այդ փոքր ժամանակահատվածը, որ մեծ գործնակություն էր պատճառել կարողիկոս Մակարին, գրգռում է ցարական պաշտոնյանների դժգոհությունը: Մի ամբողջ տարի՝ 1887 թ. օգոստոսի վերջից, այսինքն Օրմանյանի Էջմիածին գալուց սկսած, ցարական պաշտոնյանները բանակցություններ են վարում հայոց կարողիկոսի հետ, նրան ճեմարանի դասախոսի պաշտոնից հեռացնելու համար: Սկզբում բանակցությունները վարող Սինոդի դատախազ Կանչելին էր, որը կարողիկոսին հանձնարարում էր հեռացնել Օրմանյանին՝ պատճառաբանելով նրա ուսուահպատակ շինելը: Մակարը չի կատարում այդ «խնդրանը» - իրամանը. նա մեծ հոյսեր էր կապում Օրմանյանի հետ, զգալով, որ նրա դասախոսությունները տալիս են հոգենոր ճեմարանին անհրաժեշտ աստվածաբանական գիտելիքներ, ծրագրել էր մյուս ուսումնական տարում ընդլայնել այդ առարկաների շարքը: Սակայն կարողիկոսի ծրագրերը մնացին բորբի վրա: Սակար

թեղուցու հետ բանակցություններ սկսեց Կովկասի կառավարչապետ Դումբուկով-Կորսակովը: Կարողիկոսն այս անգամ էլ չանաց նույնիսկ Կովկասի կառավարչապետի հրահանգին: Ուսումնական տարվա վերջին՝ հունիս ամսին, գործին միջամտում է ցարական արքունիքը. Ուսուսաստանի ներքին գործերի մինիստրության գաղտնի խորհրդական Գիրսը իրեն օգնական ունենալով հոգենոր գործերի Դեպարտամենտի աշխատակից, ցարական արքունիքի կամերյունկեր, տիտղոսային (տիտւլարին) խորհրդական իշխան Ռիուտովին, զայխ է Հայաստան՝ Մայր Արոռ Սուրբ Էջմիածնում հանդիպունքներ ունենում Ամենայն Հայոց կարողիկոսի հետ, ատիպերով նրան «սեփական նախաձեռնությամբ Ուսուսաստանի սահմաններից արտաքսել Օրմանյան եպիսկոպոսին»¹: Մեր կարծիքով այդ բոլորի պատճառը Կարինի «Պաշտպան Հայենաց» կազմակերպության հետ Օրմանյանի ունեցած հարաբերություններն էին: Այսպիսով, ցարական արքունիքին հաջողվեց Օրմանյանին հեռացնել Էջմիածնից:

Սակայն Գևորգյան ճեմարանում Օրմանյանի քողած հետքը նշանակալից էր: Հայ եկեղեցու անվանի գործիչները, որ սովորել էին ճեմարանում, հետազայում նրան համարեցին իրենց հոգենոր հայրը և ուսուիչը: Կ. Պոլսում կարճ ժամանակ Օրմանյանը Կելլյունական վարժանում վարեց կրոնագիտության ուսուցչի պաշտոնը:

1888 թ.սեպտեմբերին Կ. Պոլսի պատրիարքը ընտրված Խորեն Աշքայանը գումարեց եպիսկոպոսների հավաք, որտեղ առաջարկեց եկեղեցու բարեկարգության զանազան մերուներ: Օրմանյանն արտահայտեց իր կարծիքը. եկեղեցու բարեկարգությունը ձեռնարկելուց առաջ անհրաժեշտ է զարգացած և կրթված հոգենորականություն պատրաստել: Ընդունվեց հենց այդ տեսակետը: Ակզրից մտածեցին Կ. Պոլսում Դարե-

¹ ՀԱԱ 56 ֆոնդում մեր կողմից հայտնաբերված նորահայտ փաստարդերը վկայում են ցարական արքունիքի՝ Օրմանյանի նկատմամբ ունեցած բացառական վերաբերունքը (տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, գ. 2, գ. 1312, գ. 1327): 1956 թ. «Էջմիածնի» հանդեսի № 6-ում, էջ (46-52) լույս տեսակ Վասիլ արենա Գալաճգարյանի «Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանը Գևորգյան ճեմարանի աստվածաբանութեան դասախոս» հոդվածը, որտեղ փաստարդեր են հրատարակված Սանկտ-Պետերբուրգի պետական կենտրոնական արխիվից, (ֆ. 821, գալ. 138, գոր 103, թ. 6-7, թ. 11-12, թ. 18, թ. 24-25):

¹ Մ. Օրմանեան, Խոհեր և Խոսր, էջ 144

վանք բացել, ինտո ամենահարմար վայրը համարեցին Արմաշի վանքը, որը մոտիկ էր Պոլսին և նրա վանահայրն էր նորբնտիր պատրիարքը: Այդ վանքը երեք դար արդեն գոյություն ուներ (17-րդ դարից) և այն ժամանակ էլ կրթական օջախ էր եղել: Հայ մեծահարուստ Արիկ Ունճյանի օգնությամբ իրականացավ Արմաշի Դարենվանքի հիմնարկերը: 1889 թ. սեպտեմբերի 18-ին Մադարիա Օրմանյանն սկսեց իր գործունեությունն Արմաշում, առաջին տարին մենակ, առանց աջակից ունենալու, երկրորդ տարին Օրմանյանին միացավ երիտասարդ վարդապետ Եղիշե Դուրյանը, որը տասը տարի ուսուցչություն էր արել Պարտիզակում և հոչակիվ այդ գործունեությամբ: Վեց երկար ու ծիգ տարիներ այդ վանքում Օրմանյանը գործեց իրքև փոխվանահայր, իսկ Դուրյանն իրքև Դայրեվանցի տեսուչ: Հնայած ուսուցման տարրեր ձեւրին, ավանդած տարրեր առարկաներին, երկուսն էլ ձգտում էին իրենց սաների մեջ մտցնել որոնելու ձգտումը և վերլուծելու ընդունակությունը: Արմաշն արդարացրեց Օրմանյանի հույսերը: Դա նոր դպրոց էր հայ եկեղեցու գրկում: Ինչ փորձեց ստեղծել Եջմիածնում, հաջողվեց իրականացնել այստեղ՝ Արմաշում: 1895 թ. առաջին յոր սաները վարդապետական թեզ ներկայացրին, մյուս տարի հինգ սան օծվեցին վարդապետ, իսկ 1897 թ. մի հոգի միայն մտավ հոգենոր ասպարեզ: Այդ 13 հոգենորականները իրենք էլ կարողացան աճեցնել նոր սերունդ, որոնք հասան նվիրապետական բարձր պաշտոնների: Սակայն Երուսաղեմ աքսորդական Բագմիրյան պատրիարքի փոխարեն պատրիարքական տեղապահ ընտրված Բարդուղիմեոս Չամիշյանը Ազգային ժողովի նախագահ Հովհաննես Նորյանի հետ ձգտում էին փակել այդ հաստատությունը, մանավանդ Դայրեվանը ինվանավոր Արիկ Ունճյանը քանտարկված էր: Ազգաղավ այդ գործիշների ցանկությունը շիրականացավ: Պատրիարքական ընտրությունների ժամանակ ի դեր և կան տեղապահի և Նորյանի ձգտումները: Հարուրյուն փաշա Տատյանի անմիջական նախաձեռնությամբ իրավիրված եկեղեցական համագումարը 1896 թ. նոյեմբերի 6-ին պատրիարք ընտրեց 55-ամյա Մադարիա Օրմանյանին:

Պատրիարքական ընտրությանը նախորդել էին մեր ժողովրդի համար դժմակ օրեր: Արդուիամիլյան ճնշումներին ուղիղ համեմատական բարձրացել էր ազգային ազատագրական շարժումների ալիքը:

1894 թ. Սաստինի ինքնապաշտպանական մարտերին հաջորդեցին տեղի հայուրյան կոտորածները: 1896 թ. Վանա մեծ դեպքին կամ ինքնապաշտպանական մարտերին հետևեցին Վասպորականի հայուրյան կոտորածները: 1895–1896 թթ. Զեյրունի հերոսական ապստամբությունը ստիպեց մեծ տերություններին բռնի տակ միջանալ և փրկել Օսմանյան կայսրության հեղինակությունը: Հայուրյան բարենորդումների խնդիրը մեծ տերությունների և բորբական պաշտոնյաների համար դարձել էր օրակարգի խնդիր: Դրանք իրականացնելու համար 1896 թ. նոյեմբերի սկզբին ազգային կուսակցությունները (ՀՅԴ-ն) կազմակերպեցին օսմանյան դրամատան գրավումը, որին դարձյալ հաջորդեցին հայուրյան կոտորածները:

Ահա այդ պայմաններում Գարբիել Նորատունյանի, Տիգրան Յուսուֆյանի, անգամ բանտարկված Արիկ Ունճյանի սատարումով 57 քվեարկողներից 47 քվեավ Օրմանյանն ընտրվեց պատրիարք: Աքրով Համիլոյ, որ տեղյակ էր 1880-ական բավականներին Օրմանյանի ազգասիրական գործունեությանը, իր կարծիքն է հայտնում նորընտիր պատրիարքի մասին. «Թող իր ազգը սիրե, բայց իրեն դեմ սուր չքաշե»¹: Տասնմեկ օր անց ընտրությունը վավերացվեց սուրբանի կողմից: Հայ ազգային կուսակցությունները հիշելով «Պաշտպան հայրենյացի» օրերը, սկզբում նրա մեջ տեսնում էին իրենց գաղափարակցին, իսկ սուրբան Համիլոյ միշտ կասկածով էր վերաբերվում նրան: Ուշադրության արժանի է մի հանգամանք. Ժամանակի ընթացքում կուսակցական գործիշները հայ հանրությանը պատրիարքին ներկայացնում էին իրքև սուրբանի գործակից, իսկ Օրմանյանն իր բոլոր աշխատություններում բացահայտ գրում էր, որ կոտորածների կազմակերպիչը պետությունն էր, պետական աւայանները. «Կատարուած կոտորածները խաժամուժ աճրոխին կատալորեան կամ վրեժխնդրութեան հետևանք չին երբեք, այլ պարզապես բարձրեն արձակուած իրամաներու գործադրութիւն էին և նոյնիսկ մայրաքաղաքի մեջ կատարուած 1896 թ. օգոստոսի 14-ին կոտորածին գործադիրները՝ նոյն օրեր և. Պոլիս բերուած Համիլոյի գոնիին

¹ Ս. Օրմանյան, Խոհք և Խօսք, էջ 171:

բուրդերն էին...»¹: Պատրիարքը ընտրվելուց հետո կոտորածի նոր փորձ տեղի ունեցավ Եղիոլիայում 1897 թ. մարտի սկզբին: Նորընտիր պատրիարքը Ազգային վարչության համագործակցությամբ բողոքազիր ներկայացրեց կառավարությանն ու արքունիքին, որի հետևանքով Հասան Ֆեհմի փաշայի նախագահությամբ հանձնաժողով ստեղծվեց և Եվդոկիա ուղարկվեց: Արդյունքում 72 բուրք մեղադրվեցին և դատապարտվեցին: Նորընտիր պատրիարքի ազգանախատ գործունեության հետևանքն էր քվով 1200 հոգու՝ բանտարկվածների և մահվան դատապարտվածների ընդհանուր ներում ստանալը, որոնց շարքում էին չորս անվանի հոգևորականներ՝ Եզնիկ Եպիսկոպոս Ապահովին, Հակոբոս վարդապետ Շահպաղյան, Հոսիկ քահանա Քաջունի և Վահան քահանա Խոյեան, որոնց Օրմանյանը պարտավորվում է պահել պատրիարքայանի հսկողության ներք: Ամենօրյա հարաբերություն պաշտպանելով Բ. Դուան և անձամբ սուլթանի հետ՝ պատրիարքը Օրմանյանը գործի էր դնում բոլոր միջոցները, որպեսզի չկրկնվեն 1894–1896 թթ. իրադարձությունները, քանի որ փորձով համոզվել էր, որ «զոհուած երեք հարյուր հազար կեանքեր չեն կրցած եվրոպացինները շարժել և գործի մղեր»²: Սուլթան Համբիլի հակահայ գործողությունները զավելու համար ցուցաբերած դիվանագետի հատկությունները վկայում են նրա հեռատեսության մասին: 12 տարի պատրիարքը լինելու ողջ ընթացքում Օրմանյանը հոգեբան վիլատիայի հմտությամբ բնուրագում է Արդուլ-Համբիլի վարչական ընդունակությունների դրական և բացասական կողմերը: Վերջինս զահ էր բարձրացել Արդուլ-Ազիզի և Մուրադի սպանություններով, նրանց դիակների վրա, դարձել էր խիստ կասկածամիտ և բոլորի մեջ տեսնում էր իր դեմ դավադրություն լարողի: Ընդգծելով Համբիլի վարչական կարողությունները, հմուտ արտարին քաղաքականությունը, մեծ աշխատասիրությունը, խորաքանցությունը, Օրմանյանը նշում է, որ կայսերական զահի երեք ոտքերը հաստատում էին՝ մատնացույց անելով վերոհիշյալ առանձնահատկությունները: Գահի կաղացող՝ շրբորդ ուորը Օրմանյանը համարում է իր հպատակ ժողովրդի նկատմամբ ցուցաբերած վերաբերմունքը. կասկածու, անձնական կյանքի համար ծայրահեղության

հասած երկշուր սուլթանի քաղաքականություն էր. «Զավել և միայն զավել եղած է իր ներքին կառավարության ոճը, շահիլ և սիրությին օտար էր իր միտքէն և այս էր կայսերական զահուն կաղացող չորրորդ ոսքը»¹: Համբիլը սարսափում էր, որ հայերն իր դեմ մահափորձ են կազմակերպելու օդապարիկով Ելլոզի մեջ իջնելու միջոցով և խուսափելու համար անընդհատ փոխում էր իր ննջարանը, ամրացնել էր տախս պատուհանների վանդակները, բայց ոչ մի միջոց, այդ բվում նաև Օրմանյանի՝ նրան հանդարտեցնելու փորձերը չեն փոխում իրադրությունը: Հայերից զգացած երկյուղն այնքան մեծ էր սուլթանի մեջ, որ սկսում է կասկածել նաև պատրիարքին, նրան անընդհատ պահում է իր տեսադաշտում և առիթը բաց չի բռնում վերջինիս շքանշաններով պարզեցնելու, համակրանքը շահելու համար: Միաժամանակ Համբիլը շարունակում է իր հակահայ գործողությունները. ճիշտ է, զանգվածային կոռուպածները չեն կրկնվում, բայց սաստկանում էին հալածանքներն ընդհանրապես և մտավորականների նկատմամբ՝ առանձնապես. հարկերի բարձրացում, բուն Արևմտյան Հայաստանի հայության երքևեկության արգելքներ, մշակութային ընկերությունների գործունեության խափանում: Հաշվի չառնելով սուլթանի՝ պատրիարքի համակրանքը շահելու քաղաքականությունը, Օրմանյանը «երբեք չեր դադրեր զանգատի և բողոքի ձայնը բարձրացնել կեղերից կարգադրութեանց դեմ և մինչև իսկ իրաժարականության լայնական յայտարարութեան դիմել, եթե պահանջուած դիտողությունները չիրամայուին»²: Զանի անգամ պատրիարքը կրկնում է իր իրաժարականները. 1899 թ. օգոստոսին տրված իրաժարականի պատճառը համարելով «հայերը բոլոր օրինական իրավունքների և վայելումների գրկուած են», նա հոկտեմբերին ներկայացնում է գրավոր իրաժարական՝ սկզբում արդարության և կրտնի նախարարություն, ապա արքունիքին: Ներքին գործոց նախարարը 1900 թ. ապրիլի վերջին կանչում է Օրմանյանին և հորդորում հետ վերցնել իրաժարականը: Երկար տևած այդ իրաժարականը պատրիարքը ես է վերցնում, որովհետև, ճիշտ է, բոլոր պահանջները չեն բավարարվում, բայց համեմատական փոփոխություններ են կատարվում. «գավառացի ազգայնց կացորինը

¹ Նոյն տեղում, էջ 184:

² Նոյն տեղում, էջ 193:

¹ Խոհեր և խօսք, էջ 176:

² Նոյն տեղում, էջ 178:

տանելի ըլլալու չափ բարվորեցավ...»¹: Այսու հրաժարականի առիրք եղավ Կիլիկիայի կաթողիկոսի ընտրության հարցը: Գլխորիս Աղեաքճյանի ընտրությունը սուլթանը շվավերացրեց, իսկ նրա մահից հետո, եթե պետք է կատարվեին կաթողիկոսական նոր ընտրություններ, Բ. Դուռը, անձամբ սուլթանը հրահանգեցին Կիլիկիո արոռոր անկախ հայտարարել Կ. Պոլսո պատրիարքությունից, դրա միջոցով նաև Ամենայն Հայոց կարողիկոսի գերակայությունից: Այդպիսով քուլանում էր Ամենայն Հայոց կաթողիկոսի հեղինակությունը: Այդ նկատառումով Էլ 1902 թ. հուլիսին պատրիարք Օրմանյանը հրաժարական ներկայացրեց Բ. Դուռը: Բանակցություններ են սկսվում այդ հարցի շորոջ. դրանք ավարտվում են պատրիարքի հաղթանակով, և 1902 թ. օգոստոսի վերջին Օրմանյանը ետ է վերցնում հրաժարականը, որովհետև ճանաչվում են և Կ. Պոլսո հայոց պատրիարքի, և Ամենայն Հայոց կարողիկոսի իրավունքներն ու գերակայությունը Կիլիկիո արոռոի վրա: Տեղի են ունենում նոր կարողիկոսական ընտրություններ և Երուսաղեմի լուսարարավետ Սահակ Խապայան եալիսկոպոս ընտրվում է Կիլիկիո կարողիկոս: Չորս անգամ Օրմանյանը հրաժարական ներկայացրեց կամ Բ. Դուռը, կամ սուլթանին: Դրանք նաև համարում է բոլորի ցույցեր, «լարախաղացի հնարքներ, որ ստիպված էր հաճախ աճպարարությանը դիմել»²:

Սակայն այդ ընթացքում սաստկանում են կուսակցությունների, մանավանդ ՀՅԴ-ի հետապնդումները: 1903 թ. հունվարին նրա դեմ մահափորձ է կատարվում: Օրմանյանը դա համարում է տղայական ծեռնարկ, որպեսզի որևէ մեկը չտուժի դրանց, իսկ ՀՅԴ-ի պաշտոնական օրգան «Դրոշակը» դեպքը համարում է «անհատական նախաձեռնության արդյունք», որին մասնակից չէ որևէ կուսակցություն:

Օրմանյանի պատրիարքական ներկարատև շրջանի գործունեության ամենամեծ արդյունքն արևմտահայության ազգային սահմանադրության պաշտպանությունն էր բուրքական կառավարության արգելակման քայլերից: Կառավարությունը դեռևս Մատրեսու Իզմիրյանի, ասլա Խորեն Աշոցյանի պատրիարքության շրջաններից առաջարկում էր քննարկել Սահմանադրությունը՝ այն կասեցնելու միտումով: Հնարավոր

¹ Նոյն տեղում, էջ 197:

² Հ. Սիրունի, Օրմանյան և իր ժամանակը, Էջմիածին, 1961, № Է, հուլիս, էջ 47:

և անհնար բոլոր միջոցներով գործող պատրիարքը դիմադարձ կանգնեց այդ քայլին. «Կառավարութեան գիտավոր նախառական ժողովը և մնայուն երեսփոխանութիւնը և ժողովրդական քուլով ընտրութիւնները ջնջել, սակայն մենք շիմանալու և չը կրահելու դեր կը պահեինք»¹: Տասներկու տարի անընդհատ Շաղարական և կրոնական ժողովի հիմնական անդամների մասնակցությամբ ժողովներ գումարվեցին, որոնք կառավարությանը ներկայացվեցին իրեւ հավաքներ՝ տարբեր առիրներով, ոչ թե Ազգային ժողովի նիստեր: Օրմանյան իրավունք ուներ հայտարարելու: «Այսօր 12 տարի ետքը, Սահմանադրութիւնը ամրող պահած ըլլալու և անվնաս ազգին վերադարձած լինելու գոհունակութիւնը կրզամ»²:

Օրմանյանի պատրիարքության դժնիսկ տարիներն ավարտվեցին 1908 թ. Երիտրուրքական հեղաշրջումով: Սկզբում հավատարկ երիտրուրքերի խոստումներին՝ «ազատություն, հավաարություն, եղբայրություն» կարգախոսին, հայ ազգային կուսակցությունները, մանավանդ նախկին պատրիարք, արքորական Մատրեսու Իզմիրյանը, որ արդեն վերադարձել էր Երուսաղեմից և դարձյալ վերընտրվել պատրիարք, ստիպեցին Օրմանյանին հրաժարական ներկայացնել, ավելի ճիշտ՝ Ըստիանուր ժողովը նախկին պատրիարքին հրաժարյալ և դատի ներակա ամբաստանյալ: Երկու տարուց ավելի տևեց դատական քաշրշուկը: Այդ ընթացքում Ամենայն Հայոց կարողիկոս ընտրված և օծված Մատրեսու Իզմիրյանը վախճանվեց և սկսվեցին կարողիկոսական նոր ընտրությունները:

Թեև ամբաստանյալ, քաղաքական մեկուսացված կյանքով ապրող Մալարիա Օրմանյանն իրեն նվիրել էր գիտությանը, ազգի և եկեղեցու պատմության շարադրանքին: Եթե դեռ չը կայացել Կ. Պոլսի Ազգային ժողովի դատավարության նիստը, Արևելյան Հայաստանում, Էջմիածնում ծափալված կարողիկոսական ընտրությունների բոհ ու բոհի մեջ կարողիկոսական նոր ընտրելի է առաջարկվում նաև ամբաստանյալ պատրիարքը: Այդ հանդուգն և խիզախ քայլին դիմողը և թեկնածու

¹ Խոհեր և խօսք, էջ 208:

² Մ. Օրմանյան, Յիշաստակագիր երկու տասնամեա պատրիարքութեան, պրակ 1, Կ. Պոլսի, 1910, էջ 3:

առաջադրողն էր 20-րդ դարի մեր «Ալևնդ Երեցը», մայիսյան հերթասահարտերի մասնակից Գարեգին վաղապետ Հովսեփյանը, որը մի քանի տարի անց ինքը ընտրվեց Կիլիկիո կարողիկու: Այդ քայլին նա ձեռնարկեց 1911 թ. Թիֆլիսում հրատարակած «Մադարիա արքեպիսկոպոս Օրմանեան և կարողիկոսական ընտրութիւն» գրքույկով, որում ըստ պատշաճի զնահատեց «մի բարձրաստիճան հոգևորականի, որ ծանր օրերի մեջ ցույց տուած իր խելքը գործունեութեան համար արժանի էր երախտագիտութեան և շնորհակալութեան»¹: Դատապարտելով Կ. Պոլսի քաղաքական լրագրությունը, Գ. Հովսեփյանը Օրմանյանին ներկայացնում է իրեւ «Գիտուն, քաղաքագետ, լեզվագետ, փորձառու, մեր եկեղեցու անցյալին և ներկա պահանջներին բազ ծանոթ և գործունեության անսահման եռանդով լցված»² անձնավորություն: Երիցս իրավացի էր Գ. Հովսեփյանը:

Հասարակական կյանքից լիովին մեկուսացված Օրմանյանը ոչ թե հուսահատական ճիգեր էր անում իրեն արդարացնելու, այլ նվիրվել էր գիտական աշխատանքներին: 1909 թ. հունվարին ավարտեց «Համապատումը՝ չորս ավետարանների մեկնությունը, բացատրություններով, Պաղեստինի տեղագրական պատկերներով: Այն լույս տեսավ 1909 թ. փետրվարին: Հեղինակը «Համապատումի» նպատակ է համարում «Ավետարանը ժողովուրդին ընտելացներ»³: Գիրքը ժողովուրդի մեջ լսվ ընդունելություն գտավ: Օրմանյանը շարունակեց իր հոգևոր-մտավոր գործունեությունը: Հայ եկեղեցին եվրոպական հասարակությանը խիստապես ծանոքացնելու նպատակով նա ձեռնամուխ եղավ ֆրանսերեն աշխատություն պատրաստել «Հայոց եկեղեցի» ընդիանուր վերնագրով, որը պարզ և ամփոփ պարունակելու էր նրա պատմությունը, վարդապետությունը, դափնական բարեկարգությունը, վարչությունը և ներկա կացությունը: Հեղինակի նպատակն էր համաշխարհային հասարակությանը ներկայացնել հայոց եկեղեցու «ազատախությունը, իրեւ տիստը մը, որ կրնա ըլլալ բաժանեալ եկեղեցիներու միութեան մոտենալու»⁴:

¹ Էջմիածին, 1961, № Ե, էջ 22:

² Նոյն տեղում:

³ Ս. Օրմանեան, Խոհր և Խոսր, էջ 296:

⁴ Նոյն տեղում:

Գիրքը լոյս տեսավ Փարիզում հայտնի հայագետ Ֆրեդերիկոս Մաքերի միջնորդությամբ, հրատարակիչ Էնենսը Լըռուի կողմից: Աշխատության առաջարանը գրել էր ֆրանսիացի գիտնական Բերտրան Բարեյը, որն ըստ արժանվույն զնահատելով այդ աշխատությունը, իր հիամունքն է արտահայտում հեղինակի մտրի ազատության նկատմամբ, գտնելով, որ այն «զարմանք կը պատճառէ եվրոպացի ընթերցողներու, որոնք վարժ չեն այդպահ ազատութեամբ գրող եկեղեցականներու հանդիպիք»¹: Այնքան մեծ էր զրի ազդեցությունը Եվրոպայում, որ այն քարզմանվեց և հրատարակվեց նաև անգլերեն, ուստերեն, ազգա հեղինակն այն դարձրեց հայերեն, որն ունեցավ երեք հրատարակություն: Այդ աշխատությամբ «Հայոց եկեղեցվոյն արժանիքը բոլոր լուսավորեալ և գիտական աշխարհի մեջ տարածուեավ»²: Այս գիրքը ևս դասվեց Հոռմի պապի արգելված զրերի շարքը (1911 թ. ապրիլ), որանով ավելի բարձրացնելով աշխատության հեղինակությունը:

Մինչ հեղինակը գրադիւն էր այսպիսի ոստմնասիրություններուն, Կ. Պոլսի Ազգային ժողովի Քննիչ հանձնախումբը շարունակում էր Մադարիա Օրմանյանի գործի ընտությունը: 1908 թ. նոյեմբերից մինչև 1910 թ. հոկտեմբեր քաշշելուց հետո հանձնաժողովը նոր ամբաստանություն ներկայացրեց Ատենապետաց դիվանին 1911 թ. հունիսին. այն դարձյալ ձգձգվեց մինչև 1912 թ. Վերջը: Օրմանյանի ամբաստանության հարցի ըննարկման ժամանակ դատապաշտպանի դեր ստանձնեց Գրիգոր Զոհրապը, որն իրեւ հմտու իրավաբան, պաշտպանեց վերջինի իրավունքները, ինըն իր կողմից դատապարտելով Ազգային ժողովի բոլոր անդամներին, որ այդ ազատության ժամանակաշրջանում (ակնարկում է Երիտրուրբական հեղափոխությունը), երբ իննգ տարի Սահմանադրությունը գործադրելու իրավունք ունեն, արյուր նրա «ոտարրական և հիմնական պայմանները հարգված են»³: Զոհրապի պաշտպանական ելույթը այնքան տպագրիչ էր, որ Օրմանյան սրբազնը անպարտ հոչակլեց: 1913 թ. մարտին Օրմանյանը եկեղեցական երեսփոխան ընտրվեց, իսկ 1914 թ. ապրիլին՝ առաջին ատենապետ, որը չհասցրեց

¹ Մ. Օրմանեան, Հայոց եկեղեցին, Փարիզ, 1909. էջ 14:

² Ս. Օրմանեան, Խոհր և Խոսր, էջ 298:

³ Էջմիածին, 1961, № Ե, մայիս, էջ 2:

պաշտոնավարել, որովհետև Կ. Պոլսից հեռացել էր: Նոյնիսկ առաջարկություններ եղան տարբեր գավառներում հոգևոր առաջնորդի պաշտոնավարելու (Աղանա, Եզիստոս), սակայն Օրմանյանը գերադասեց զիտական գործունեությունը: Դա դարձավ սրբազնի իրական դափնիեազսիկը: Օրմանյանն սկսեց «Ազգապատումը»՝ հայ եկեղեցու և ազգի «զոգընքաց պատմությունը», որը գրել ձեռնարկեց 1910 թ. վերջերին: Առաջին հատորը լույս տեսավ 1912 թ. սեպտեմբերին: Այդ ժամանակի համար արտակարգ մի աշխատություն էր դա, որ այսօր ևս պահպանում է զիտականության բարձր մակարդակը՝ օգտագործված աղբյուրների և հեղինակների նշումը: Այսօր էլ այն զարմացնում է իր ընդգրկումով, լայնքով և խորությամբ: Զարմանում ես, որ նման մակարդակի և ծավալի աշխատանք կատարել է մի անհատ, ոչ թե զիտական մեծ հաստատություն: Երկու հատորը միասին կազմում էին 3400 էջ. այդտեղ պատմությունն սկսելով Քրիստոսի ժամանակներից, հեղինակն այն հասցնում է մինչև 1808 թ.: Դանիել Սուրբառեցի կարողիկոսի մահը: Երրորդ հատորը հեղինակը ծրագրել էր հասցնել մինչև 1909 թ.: Մատքեռս Խօմիրյանի կարողիկոսության սկիզբը: Սակայն Ազգային ժողովը նրան հանձնարեց մեկնել Երուսաղեմ՝ պատրիարքության գործերն ուսումնասիրելու: Այդ խնդրով նա զրադվել էր դեռևս իր պատրիարքության տարիներին, մինչև իրավաբական տալը: 1908 թ-ից մինչև 1914 թ. աճքաստանյալ Օրմանյանը բռնորովին չի զրադվում այդ խնդրով: 1914 թ. Երուսաղեմում նա քննարկում է գեղծումների բազմաթիվ հարցեր, դրա հետ միասին զրադվելով իր ամենասիրելի գործով. տեղի «Ժառանգավորացում» սկսում է դասախոսել Ավետարանի ներածություն, տրամաբանություն և հոգեբանություն, քնական և ջատագովական աստվածաբանություն, դրա հետ միասին սկսում է «Ազգապատումի» Գ. հատորի աշխատանքները: Շարադրանքն ընդառնվում է, որովհետև հեղինակի տրամադրության տակ համապատասխան աշխատություններ և առուտներ չկային:

Օրմանյանը Երուսաղեմում էր, երբ սկսվեց Առաջին աշխարհամարտը, որի ընթացքում տեղի ունեցավ հայ ժողովրդի ամենամեծ ողբերգությունը՝ ցեղապահությունը։ Կյանքի վերջին տարիներին զրկած «մսոհք և խօսքի» մեջ Օրմանյանն արտակարգ ճիշտ գնահատական է տալիս ուս-բորբական պատերազմի կովկասյան ճակատում կատար-

վող ռազմական գործողություններին, հայերի նկատմամբ իրազործված քատմնելի երևոյթներին: Նա ապացուցում է, որ բուրքական կառավարությունն իր պետուրյան մեջ գործեց ամենամեծ սխալը. «Հայր Թուրքին անհրաժեշտ տարրն է... Թուրքին զավառները շենցնողը, Խողը մշակողը, առևտուրը ապահովողը հայն է եղած և հայն է տակապին, հայր Թուրքիայեն պակսեցմողը Թուրքին ոլսերիմ քշնամին կըլլա: Թիւրքիա իսր խակ ինքնութիւնը կը վտանգե, երբ հայր կը ջնջե»¹:

Պատրիարքության հոգևորականների հետ Օրմանյան արտօրվեց Դամակոս, որտեղ էլ ավարտեց իր «Խոհեր և խօսքը»: Այն, ինչպես նաև «Ազգապատումի» Գ-հասորը հրատարակվեցին հետմահու: 1918 թ. մայիսի վերջերին հնարավորություն է ստեղծվում Կ. Պոլսի վերադառնալու: Նոյեմբերի 19-ին 78 տարեկան Մադարիս Օրմանյանը կնքում է իր մահկանացուն: ավարտվում է մի փոքրիկոտ կյանք, սակայն ողջ հայությանը և քաղաքակիրք քրիստոնյա աշխարհին մնում է նրա բռնած պատմագիտական, հոգևոր-իմաստասիրական մեծ ժառանգությունը: Եթե չքարելենք նրա հրատարակած բազմարիլ հոդվածները, այլ նշենք միայն ծավալուն աշխատությունները, ապա «Ազգապատումի» երեք հասորները, «Հայոց եկեղեցին» աշխատության տարրեր լեզուներով հրատարակությունները, 12-ամյա պատրիարքություն «Հիշատակագիրքը», «Խոհեր և խօսքը» հնարավոր չէ պատկերացնել, որ պատկանում է մի հոգևորականի գրչին: Իր կատարած անխոնջ աշխատանքը ժամանակակիցների և հետագա սերնոյի կողմից գնահատվել է ըստ արժանավույն, իսկ հասարակական գործունեությունը ժամանակակիցների կողմից արժանացել է երկակի՝ հակասական գնահատականների: Զա և բարձր է զնահատվել, և այպահնվել:

Անցել էն ժամանակներ և 170 տարի հետո նոր սպառակ գործություն է զնահատել հայոց եկեղեցու և հայոց պատմության անխոնջ հետագուստին: Առաջին փորձն արվել է 1961-ին և 1962-ին, երբ Էջմիածին հանդեսում լրիս է տեսել Հակոբ Սիրուսու «Օրմանյան և իր ժամանակը» աշխատությունը: Չնայած իր բարձր արժանիքներին, Վերոհիշյալ աշխատության մեջ առավել բննարկվում է նրա գործություն տարբեր

¹ Ա. Օրմանեան, Խոհք և խօսք, էջ 337

շրջափուլերը: Դեռևս քննարկման և վերլուծության չի ենթարկվել նրա գիտական ծանրակշիռ գործունեությունը և բողած ժառանգությունը: Մեր սերունդը և ապագայի ուսումնասիրողները պարտը ունեն հատուցելու անխոնջ ազգային-հոգևորական գործի, հայոց եկեղեցու նվիրյալ որդու, մեծ քաղաքացու, գիտնականի և հայի հանդեպ:

Լրաբեր հասարակական գիտությունների, 2011, №3, էջ 14–32:

ԳՐԻԳՈՐ ԶՈՀՐԱՊՆ ԱՐԵՎԱՏԱՀԱՅՈՅ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՌՄԵՎ ՕՍՍԱՆՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ (Ծննդյան 150-ամյակի առթիվ)

Երկրաշափի և իրավաբանի բարձրագույն կրթություն ստացած Գրիգոր Զոհրապն 1883 թ. սկսած զբաղվել է փաստաբանությամբ և իրավագիտություն է դասավանդել Կ. Պոլսի Դար-յուլ-ֆյունսի համալսարանում: Տիրապետելով ֆրանսերենին, ռուսերենին, հունարենին ու բուլղարենին, իր աշխատանքային գործունեության առաջին խակ օրերից նա աշքի է ընկել փաստաբանի փայլուն ունակություններով, ինչի հետևանքով հանրահայտ է դարձել արևմտահայ իրականության մեջ:

1880-ականների վերջերից սկսած՝ արևմտահայությունը շարունակարար Զոհրապնի թեկնածությունն էր առաջադրում՝ նրան Ազգային ժողովի երեսփոխան ընտրելու համար: Այսպես՝ Խարբերդի հոգևոր թեմի առաջնորդի, գավառական ժողովի ատենապետի և ատենադպրի ստորագրությամբ հաստատված մի փաստարդով դեռևս 1888 թ. սեպտեմբերի 27-ին ծանուցվում էր Կ. Պոլսի պատրիարքական փոխանորդ Սիմոն Սեֆերյանին, որ երեք անձից բաղկացած ընտրելիների ցուցակում ըվեների բացարձակ առավելությամբ Ազգային ժողովի երեսփոխան է ընտրվել Գրիգոր Զոհրապն: Սակայն պատրիարքարանը շվավերացրեց այդ ընտրությունը, որովհետև Ազգային Սահմանադրության

համաձայն՝ ընտրյալի տարիքը պետք է լիներ 30 և ավելի, մինչ դեռ, Զոհրապն այդ ժամանակ դեռևս 27 տարեկան էր:

1891-ին, երբ Կ. Պոլսում բնարանալու էին Ազգային ժողովի պատգամավորների թափոր տեղերի ընտրությունները, Զոհրապնի անունը նոցվեց մի քանի թաղերի ընտրելիների ցուցակի մեջ: Քանի որ Գոգկունուուգ թաղամասում նա ստացավ ըվեների բացարձակ մեծամասնությունը, մյուս տեղամասերն այլևս չըվեարկեցին Զոհրապնի անդամության հարցը: Սակայն Ա. Արվիխարյանի ընտրագրումով՝ Կ. Պոլսի «պահպանողական փաշուրեան դեկափար» Հովհաննես Նորյանի անմիջական նախաձեռնությամբ Զոհրապնի ընտրության փակերացման հարցը նույնիկ չդրվեց ըվեարկարդյան դարձյալ տարիքի պատճառաբանությամբ: Ու շնայած հաջորդ նիստերում ապացուցվեց նաև նրա 30 տարեկանը լրացած լինելու փաստը, սակայն «գոնապեսությանն իր միակ Աստուածը համարող» Նորյանը, հաշվի շատներով մի խոճք երևափոխանների պահանջները, հարցը կրկին յորեց քվեարկության, և Զոհրապնի ընտրությունը համարվեց չնյալ՝ «գեկեալ»:

1894 թ. ընտրությունների ժամանակ ևս Քաղաքական ժողովը հստոկ տեղեկացիք ներկայացրեց, լստ որի՝ Զոհրապն երեսփոխան մի ընտրվել: Համիլյան «գուլումի» տարիներին՝ գանգվածային կոսորտների ժամանակ, դադարել էին Ազգային ժողովի նիստերը, իսկ Ս. Օրմանյանի պատրիարքության շրջանում նիստերը տեղի էին ունենալ հավաքույթների անվան տակ, որովհետև վտանգ կար, որ արյունոտ սուրբանը ամեն լրպե կարող է կասեցնել Ազգային Սահմանադրությունը: Մինչդեռ համիլյան կոտորածների ժամանակ՝ 1895–1896 թթ., Զոհրապնը, ցուցաբերելով քաղաքական մեծ արիություն, ստանձնում է հայ բանտարկյալների պաշտպանությունը, բազմաթիվ դատեր է շահում և մեծ թվով անմեղ կյանքեր փրկում:

1902 թ. Զոհրապնին Կ. Պոլսից հեռացնելու նպատակով Արդուլ Համիլը կայսերական երտսարտակով նրան նշանակում է Զանգերի կառավարչի օգնական: Դա արտքին հավասարագոր պաշտոն էր, ուստի դրանից խուսափելու համար նա դիմեց ուսական դեսպան Խվան Զինովիին, որը Զոհրապնին նշանակեց դեսպանատան փաստաբան-իրավախորհրդատու: Քիչ անց՝ 1905 թվականին, երբ բարք գայմագանը

խոշտանգել էր մի բոլղար հեղափոխականի և նրա դեմ դատ էր բացվել, փաստաբանությունն ստանձնում է անվեհեր Զոհրապը: Դա էր պատճառը, որ Թուրքիայի արդարադատության նախարարը նրան զրկեց դատավաշտայանի և փաստաբանի իրավունքից, իսկ տպագրական տեսչությունն արգելեց անգամ գրական ստեղծագործությունների տպագրությունը, նոյնիսկ՝ անվան հիշատակությունը մամուլում: Զոհրապը ստիպված էր համեմատարար կարծ ժամանակով հեռանալ Եվրոպա (Ֆրանսիա), սակայն երիտրուրքական հեղաշրջումից հետո նա վերադարձվ Կ. Պոլիս:

Այդ օրերին տարրեր գավառական ժողովներում կրկին բարձրացվեց Զոհրապին Ազգային ժողովի երեսփոխան ընտրելու հարցը: 1908 թ. օգոստոսի 8-ին Զմյունիայի գավառական ժողովում ըվեների բացարձակ առավելությամբ Զոհրապն ընտրվեց Ազգային ժողովի պատգամավոր, սակայն նրա հակառակորդները, որոնք ստացել էին անհնան քանակությամբ քվեներ, մամուլում նյութեր հրապարակեցին ընտրության իր՝ «ապօրինի» լինելու մասին: Եվ շոտով Զոհրապն ինքը մասուլում հանդես եկավ իրաժարականով, վճռականորեն հայտարարելով, որ չի ցանկանում դառնալ ազգային անհամաձայնության առարկա: Միայն 1908 թ. օգոստոսի 24-ին՝ Կ. Պոլսի միացյալ երկու քաղաքանակություն կայացած քվեարկության ժամանակ (Սամարիա և Թոփ-Գարո) Զոհրապը ըվեների բացարձակ մեծամասնությամբ ընտրվեց Ազգային ժողովի երեսփոխան:

Սուլթանի 1908 թ. հուլիսի 13-ի իրադեով (իրովարտակով) վերահստատված Սիլիանայան սահմանադրության իինան վրա սկսվեցին նաև Օսմանյան խորհրդարանի անդամների ընտրությունները: Խորհրդարանում (մեջլիս) հայերին հատկացվեց 10 տեղ, որից երկուսը՝ Կ. Պոլսում: Երկու տեղի համար իրենց քեկնածությունն առաջարեցին 6 հոգի, որոնցից առաջին իսկ քվեարկության ժամանակ առավելագույն քվե (61-ից՝ 45) ստացած Գրիգոր Զոհրապն ընտրվեց Օսմանյան խորհրդարանի անդամ, իսկ երկրորդ քվեարկության ժամանակ մյուս երեսփոխան ընտրվեց Պետրոս Հալաջյանը: Սակայն դրանով քննուկը շահարքվեց, հետադիմական ուժերը միավորվեցին Զոհրապի դեմ՝ միասնական պայքարության մեջ:

«ոռուսական դեսպանատան հայ պաշտոնեան», որը ծառայել է «ոռուսական նենգամիտ ու անգորդ քաղաքականութեանը» և նոյնիսկ ընդունել ոռուսականակություն, իրավունք չունի լինելու Օսմանյան խորհրդարանի անդամ:

Թուրքական մամուլի հերյուրանքներին պատուախանեց հայկական մամուլը, իսկ Զոհրապն ինքը մեկնարանեց, որ երբեք չի փոխել քաղաքացիությունը և միշտ էլ եղել է օսմանահպատակ: Միայն այդ բարորից հետո Իրրիհատի կոմիտեն համաձայնեց, որ Կ. Պոլսից խորհրդարանի հայ անդամները լինեն Գրիգոր Զոհրապը և Պետրոս Հալաջյանը: Բայց դրանով կնճախը շիարքվեց: Քիչ անց՝ 1908 թ. նոյեմբերի 22-ին, Իրրիհատի կոմիտեն մոռանալով իր ստորագրությունը, Սալիմ բեյին ուղարկեց հայոց պատրիարք Մատթեոս Խօմիլյանի մոտ՝ Զոհրապի ընտրությունը չեղյալ հայտարարելու պահանջով: 1908 թ. վերջերին դրան հետևեց արևմտահայության միահամուռ դիմադրությունը, որի պատճառով ապարդյուն անցան բազում մեքենայությունները:

Առաջին՝ 1908 թ. ընտրությունը ամենածանր փորձությունն էր, որը զերազանց հաղթահարեցին և Զոհրապը, և նրա բազմաթիվ անկեղծ համակիրները: Դրանից հետո նա Օսմանյան խորհրդարանի անդամ ընտրվեց ևս երկու անդամ՝ 1912 և 1914 քվականներին՝ միշտ էլ հաղթահարելով բազմաթիվ խոշնորտները:

Այսպիսով, արևմտահայ հասարակսկան շրջանակներում մեծ հրաշակ ձևար բերած Գրիգոր Զոհրապը 1908 թ. օգոստոսին ընտրվելով Հայոց Ազգային ժողովի երեսփոխան, իսկ նոյեմբերի վերջին՝ Օսմանյան մեջլիսի մերու, մինչև իր եղերական մահը՝ 1915 թ. հունիս ամիսը, հավատանորեն իր պարտը կատարեց հարազատ ժողովույի առջև՝ դատանորությունում հայության քննուկի ընտրակնան և լուծում առաջարկելու գործի եռանդուն մասնակիցը և Ազգային ժողովում, և Օսմանյան խորհրդարանում:

Ուսումնասիրելով Ազգային ժողովի ատենազրությունները և Օսմանյան խորհրդարանում հնչած Զոհրապի երույթները, ինչպես նաև՝ հայկական մասնություն իրավարակված հաղորդումներն ու տեղեկատվությունները, զարմանում ու հիանում ենք, թե մեկ պատգամափորն ինչպե՞ս է կարուր, զարմանում ու հիանում ենք, թե մեկ պատգամափորն գործունեություն: Զոհրապը երույթացել ծավալել այդրան բազմաթիվ գործունեություն:

ներ է ունեցել Ազգային ժողովի և Օսմանյան խորհրդարանի գրեթե բոլոր նիստերում, մասնակցել բազմաթիվ հարցերի քննարկումներին, ներկայացրել անհրաժեշտ առաջարկություններ և ձեռնամուխ եղել դրանց իրականացմանը: Բայց նա չի բավարարվել սուկ պաշտոնական ելույթներով. տպագործիչ էին տարրեր առիթներով իրավիրված համաժողովրդական հավաքներում, Ազգային ժողովում և Օսմանյան խորհրդարանում ինչած Զոհրապի բանախոսությունները: Լինելով արևմտահայերենի հմուտ գիտակ, նա եղակաց տիրապետում էր նաև բոլոր երենին, ուստի ժողովրդի առջև երւոյք էր ունենում և բոլոր երեն, և հայերեն: Թուրքերը գարմանում էին Զոհրապի գիտելիքների ու հմտությունների վրա և խոստվանում էին, որ իրենցից ոչ ոք չի կարող նրա բոլոր երեն ելույթներին հավասար հնչեցնել:

Զոհրապը չէր պատկանում որևէ քաղաքական կուսակցության, բայց համակիր էր Հայ Յեղափոխական Դաշնակցությանը: Ուստի պատահական չէ, որ երբ 1908 թ. օգոստոսին ՀՀԴ Կ. Պոլսի Պատախանատու մարմինը Սամարիա քաղի Սահակյան վարժարանում բանախոսություն է կազմակերպում Օսմանյան Սահմանադրության վերաբննության հարցի վերաբերյալ, իրեն բանախոս հրավիրվում է Գրիգոր Զոհրապը: 1908 թ. օգոստոսի 19-ին «Արևելք» այս առիթով գրում էր. «...Զոհրապին անունը բավական էր համախմբելու ստուար բազմութիւն մը, որով լեցուած էր Սամարիա Սահակյան վարժարանը»¹: Զոհրապի նախորդ ելույթները գրեթե միշտ ինչել էին բոլոր երեն, բայց այդ դեպքի հետ կապված «Մանզումեն» մեծ գլուխնակությամբ տեղեկացնում էր. «Առաջին անգամն էր, որ հասարակութիւնը բեմի վրա պիտի լսեր Զոհրապը հայերեն լեզուով»²:

Ունկնդիրներին հանգամանալից կերպով պարզաբնելով «Սահմանադրություն» հասկացության եռյունը, Զոհրապը բացատրում էր, որ այդ արժեքին, իր նվիրվածության իմաստով, արևմտահայությունն ավելի առաջադիմական է եղել տիրապետող ազգությունից և նրա պետական կառույցներից, քանզի Արևմտահայոց Ազգային սահմանադրությունն ընդունվել է դեռև 1860, իսկ սուլթանի կողմից հաստատվել՝ 1863 թվականին: Նրա կարծիքով, Օսմանյան սահմանադրության վե-

¹ «Արևելք», Կ. Պոլսի, 1908, օգոստոսի 19, № 6877:

² «Մանզումեն Եֆրիար», Կ. Պոլսի, 1908, օգոստոս 20/2 սեպտեմբեր, № 2205:

րաբննության վերաբերյալ իր առաջարկած պայմանները բխում են «համորեն Օսմաննեան ազգին օգուտեն»¹, որովհետև օսմանյան երկրում «պետութեան գործինը ճնշչի ու բռնադատիչ գործիք մը դարձած է սակավարի մարդոց ձեռքը» և նրանք իրենց գործողություններուն հակված են «ազգատ քաղաքացիներլ ստրուկի վերածելու»²: Ընդգծելով, որ պետության հիմնական գործն է «կեանքի պայքարին մեջ» քեւ ու թիկունք կանգնեն իր ժողովրդին, Զոհրապը դրականորեն էր վերաբերվում Օսմանյան սահմանադրության վերաբննության հարցին: Արձանագրելով, որ Օսմանյան կամ Միդիատյան սահմանադրությունը հաստատվել է 30 տարի առաջ, նա հիշեցնում էր, որ վերջինիս հիմնադիմներից մեկը Գրիգոր Օսյանն էր, ով «ճշմարտապես շրեղապես հայ մը և Օսմանցի եղափ»³: Սուլթան Համիլի հրամանով Սիլիհատի սպանությունից հետո նա հեռացավ Ֆրանսիա, այնտեղ էլ կնքեց իր մահկանացուն և քաղված է Պեր-Լաշեզի գլեզմանատանը: Յավերով դրա համար, Զոհրապը միաժամանակ նշում էր, որ Օսմանյան սահմանադրության վերաբննության գաղափարը հիմնադիմների է նրա 116-րդ հոդվածով: Բանախոսը սլաքարանում էր, որ սահմանադրության վերաբննության պահանջը չի դրվում ոչ նախարարների խորհրդի, ոչ էլ Ավազմերի ժողովի անդամների կողմից, որովհետև համբյան բռնապետության օրերից՝ 30 տարի շարունակ, «պետական մարդոց այդ երկար շարքը հաջորդաբար և փոխնիվուն նախարարական, դեսպանական, վալյութեան» և այլ պաշտոններ վարելով, մասնակցել են «սահմանադրութեան դադարման դավաճանութեանը»⁴: Ու քանի դեռ նրանք շարունակում են այստուններ գրադեցնել, փաստորեն Սահմանադրության թշնամիները վարում են սահմանադրական պետության կարևոր պահունակությունը: Ավելիմ՝ Զոհրապը պետում էր, որ Ավազմերի ժողովը կազմավորվել է «կարգ մը մարդասպաններն և ավազակներեն»⁵, միայն քեւ ու թիկունք ոչ Շիլլերի ավազակներն են, ո՛չ էլ Բակոնինի անար-

¹ Գրիգոր Զոհրապ, Երկերի ժողովածու, յավելալ հասոր (Ե), գիրք առաջին, աշխատավորենամբ Արեւոտ Շարութեանի, Եր., 2004, էջ 55:

² Նույն տեղում, էջ 57:

³ Նույն տեղում, էջ 67:

⁴ Նույն տեղում, էջ 62:

⁵ Նույն տեղում, էջ 64

խիստները, այլ «Նազմ փաշայի պես արխինաքարաւ ուրուկան մը»¹: Պնդելով, որ Օսմանյան ազգը իր ճակատագիրը նման անձանց ձեռքը հանձնելով՝ Ավագների ժողովը դարձնում է «քիարան», Զոհրապը պահանջում էր ընտրության իրավունքը չափահաս բոլոր անձանց համար՝ անկախ սեղից, ազգությունից և ունեցվածքից: Այս համարձակ ելույթով նա փաստորեն ընդգծում էր, որ Սահմանադրությունը ոչինչ չի փոխել ժողովայում:

Զոհրապի բանախտության հատուկ ուշադրության առարկան էին Սահմանադրության 11-րդ և 16-րդ հոդվածները, որոնք վերաբերում էին կրոնական առանձնաշնորհումներին, ինչպես նաև ապակենորոնացման սկզբունքն առաջարդող 108-րդ հոդվածը, որը խիստ անհրաժեշտ էր հայկական գավառների համար: Բազմարիվ այլ հոդվածներ քննարկելուց հետո, հիմնավորելով ամեն ազգի՝ «Փր գոյութիւնը պահպանելու և զարգանալու իրաւունքը»², Զոհրապն իր բանախտության ավարտին ընդգծեց, որ «Չատ յարգելի և պարտաւորիչ են օսմանեան քաղաքացիութեան կապերը»³, որոնք ամրապնդելու համար պետք է ջանք բարեն հավասարապես բոլոր ազգությունները: Ընդունելով օսմանյան «միասնական հայրենիքի» գաղափարը, Զոհրապը կոչ էր անում իր հայրենակիցներին. «Ազգութեանց դարաւոր հանգոյցները կարելի չեն գրի մեկ շարժումով, մեկ ժամուան մեջ լուծել, մեջտեղեւն բառնայ: Համբերութեան, խոհեմուրեան, կամքի մեծ պաշար պետք է ունենալ»⁴:

Ուստինասիրողներից ոմանք գտնում են, որ ժամանակին Զոհրապը նույնպես տարվել է Երիտրուրքերի խոստումներով, հավատացել նրանց: Սակայն սա իրավարակային բանախտություն էր: Երիտրուրքերի իշխանության գալու հենց առաջին ամիսներին Զոհրապը իիմնավորում էր կայսրության տարբեր ժողովուրդների համագործակցության անհրաժեշտությունը, բայց միաժամանակ նրանց դաստիարակության, թերությունները բացահայտելու, ինչպես նաև փոխադարձ կասկածներն ու տարակույսները վերացնելու կոչ էր ամում:

¹ Նոյն տեղում:

² Նոյն տեղում, էջ 66:

³ Նոյն տեղում:

⁴ Նոյն տեղում, էջ 6:

Զոհրապի բաղադրական գործունեարյունն արտացոլվել է նաև հայոց Ազգային ժողովում և Օսմանյան խորհրդարանում հնչած նրա բազմարիվ այլ ելույթներում: Կան հարցեր, որոնք նա զուգահեռ կերպով բարձրացրել է վերոհիշյալ երկու մարմիններում: Դրանցից ամենակարևորը ոչ խումանների զինվորագրության խնդիրն էր:

1909 թ. մարտի 22-ին Թերայի Ս.Երարքության եկեղեցում կազմակերպած հայկական հանրահավաքի ժամանակ առաջադրելով ոչ խլամների զինվորագրության խնդիրը, Զոհրապն այն դիտում էր Օսմանյան սահմանադրությունից բխող՝ ազգերի իրավահավասարության իրավունքի տեսանկյունից: Արձանագրելով, որ ոչ խլամներին զինվորագրելը խևարյուրում է, հավասարության սկզբունքը և խորությունը դիմում տարբեր ազգերի միջև, Զոհրապը պահանջում էր վերացնել զինվորական տուրքը՝ թերթել ասկերին, եթերպ երկու սկզբունքից. նախ՝ տնտեսապես բայրայված հայր և վիճակի չել զինվորական տուրք վճարել և երկրորդ՝ ամենակարևորը, ոս այսի վեհագրիքն հավասարութեան սկզբունքն ու վիրավորիչ խորութիւն մը պիտի բերե այն դրոշին տակ ապրու ազգերուն միջեւ»¹:

Քանի որ հեղաշրջումից հետո «հավասարություն, եղբայրություն, ազատություն» կարգախոսը մնացել էր լոկ իրեւ կարգախոս, այս հանրահավաքից 2-3 ամիս անց՝ 1909 թ. հունիսի 3-ին, Զոհրապը երույթ է ունենում Օսմանյան խորհրդարանում: Նա վճռականորեն պահանջում է, ոչ մի դեպքում ոչ խլամներից զինվորական տուրք չպահանջել: Զոհրապի կարծիքով, քանի որ «զինուորագրութիւնը սահմանադրութեան համաձայն ամեն քաղաքացիի տրուած իրաւունք մը ի է»², այդ պատճառով կառավարությունն իրավունք չունի ոչ խլամներից զինվորական տուրք պահանջել, այլ անհրաժեշտ է նրանց զինվոր վերցնել:

Նոյնի 1909 թ. հունիսի 22-ին խորհրդարանը նորից է քննարկում ոչ խլամներից զինվորական տուրք զանձելու հարցը: Զնայած արդեմ մեկ խլամներից զինվորական տուրք զանձելու հարցը:

¹ Նոյն տեղում, էջ 195:

² Նոյն տեղում, էջ 245:

լամներից զինվորական տուրը վերցնեն և միայն 1910-ից փորձեն նրանց զինվորագրել: Խորհրդարանում նորից վիճաբանություն է սկսվում: Հիմնական ընդդիմադիրը Զոհրապն էր. նա պահանջում էր, որ խորհրդարանի մեծամասնությունը հարգի վորքամասնության իրավունքները, և ընդունի օրենք՝ «Սահմանադրութեան համաձայն բոլոր օսմանցիները զինուրը պետք է տան»¹:

Իսլամ երեսփոխանները հայերի կողմից զինվորական տուրից հրաժարվելը բացատրում էին նրանով, որ վերջիններս և մյուս քրիստոնյաները նյուրական շահ են ուզում ապահովել: Հարցի քննարկումը շարունակվում է, և 1909 թ. օգոստոսի վերջին Զոհրապն Օսմանյան խորհրդարանի բուլղար պատգամավորների հետ միասին պահանջում է հարգել իրենց իրավունքները: Արևմտյան Հայաստանի հեռավոր անկյուններից հայերը աջակցության հեռագրեր են հղում հայ պատգամավորներին: Ի վերջո պայքարը արդյունք է տախս. ոչ խալամների զինվորագրության խնդրի քննարկումն ունենում է դրական ավարտ: Անցնում է ժամանակը, և արդեն 1915-ի ապրիլի 10-ին հայտնի է դառնում, որ կառավարությունը հրամայել է հավաքել հայ զինվորների գենքերը: Դարձյալ սկսվում են վիճաբանությունները, սակայն հայ երեսփոխանները արդեն զգում են, որ իրենք գտնվում են զործող հրաքլիք վրա: Իրենց համարելով «հայ իթքիատական մեպուններ»², օսմանյան խորհրդարանի հայ պատգամավորները Զոհրապն և Վարդգեսի ղեկավարությամբ որոշում են դիմել իթքիատի ղեկավարներին՝ հայ զինվորների գենքը իրենց ձեռքին բողնելու պահանջով՝ «փնքզինքնին ջարդերէ ազատ պահելու նպատակա»³:

Խորհրդարանում Զոհրապնի բարձրացրած հարցերից կարեսոր էին նաև հարստահարությունների դադարեցման և հայարձնակ նահանգների ապահովության խնդիրները: Այս հարցերը ևս խորհրդարանի տասը հայ պատգամավորները բազմարիվ անգամներ բարձրացնում և օրինավոր լուծում են պահանջում:

¹ Նոյն տեղում, էջ 253:

² Գրիգոր Զոհրապն, Երկերի ժողովածու, յավելյալ հասոր (2), գիրք Երկրորդ, աշխատափորթյամբ Ա. Շարուրմեանի, Եր., 2004, էջ 307:

³ Նոյն տեղում, էջ 307:

Դեռևս 1908 թ. հոկտեմբերի 17-ին, երբ հայ պատգամավորները որոշակի հույսեր էին կապում Օսմանյան սահմանադրության հետ, Ազգային ժողովում Զոհրապն այս հարցերի վերաբերյալ արտահայտել էր իր որույն կարծիքը: Նա հարստահարությունները համարում էր ոչ թե չարաշահումներ, այլ ոճրագործություններ, որոնց արգելակման համար պետք է բազրիրով դիմել Բ. Դուանը: Ուստի կազմվում է մի բանաձև, որում գավառական հարստահարությունների մասին տեսակետ հայտնելու հետ միասին, առաջարկվում էր հայերից ու բուրքերից քննիչ հանձնախումբ ստեղծել և ուղարկել հայաբնակ գավառներ՝ «զեղծարար պաշտօնեաններու դեմ միջոցներ գործ դնելու»¹ համար: Կառավարությունից պահանջվում էր նաև քննիչ հանձնախմբին հանձնարարել անմիջային պաշտոնանկ անել զեղծումների մեջ հաստատված պաշտոնյաներին, վայիններին, «համիլին» զնդերի սպասներին հեռացնել ուստիկանական և քաղաքացիական պաշտոններից, ձերքակալել ազդեցիկ չարագործներին և նրանց դատավարությունը փոխադրել Կ. Պոլս: Հայկական գավառներում մոլեգնող սովոր բերլացնելու նախակով առաջարկվում էր ժողովրդին ցորեն և սերմացու բաժանել, տուրքերի պարտքերը ջնջել, հայ գյուղացիներից հափշտակված հողերը վերադարձնել: Սակայն դրանով քննարկումը չափարարվեց:

Հարստահարությունների խնդիրը Հայոց Ազգային ժողովում ամենաշատ քննարկվող հարցերից էր նաև 1911–1912 թվականներին: 1911 թ. նոյեմբերի 25-ին կայացած քննարկման ընթացքում Զոհրապն պատմական ակնարկի միջոցով ներկաներին հիշեցրեց, որ Ազգային ժողովում առաջին անգամ այդ հարցն արձարձիկ է Ա. Խրիմյանի պարտիարքության տարիներին և անվարան կերպով հայտարարեց, որ 1870 թվականից Հայաստանում ոչինչ չի փոխվել: «Հայաստանի մեջ ավագակութիւններ, մարդասպանութիւններ կլննեն, յափշտակութիւններ և աւարառութիւններ կը գործեին, բռնարարութիւններ կը կատարեին»², որովհետև բուրքերը բրդերին գործիք էին դարձել, նրանց հավատաց-

¹ Գրիգոր Զոհրապն, գիրք Ե, էջ 82:

² Գրիգոր Զոհրապն, գիրք Զ, էջ 112:

նելով, որ խալան ունի բոլոր իրավունքները, կարող են աներկյուղ «կոռոպտել և սպանել բրիտանեան»¹:

Այն ժամանակ կառավարությունը բացահայտորեն բաջալերում էր չարագործներին: Զառասուն տարի անց ուժիմի փոփոխությունը չէր կարող փոխել մարդկանց իոգերանությունը, և Զոհրապն իրեւ Օսմանյան խորհրդարանի անդամ, ցավով արձանագրում էր. «... իրական Սահմանադրություն մը դեռ հաստատուած չէ այս երկրին մեջ»²: Սահմանադրության առաջին պայմանը և պահանջը համարելով հավասարությունը, Զոհրապը նշում էր, որ խալամի և բրիտանյայի միջև հավասարություն չկա նույնիսկ՝ Օսմանյան խորհրդարանում: Անհավասարության առաջին օրինակը համարելով Կիլիկիայի հայության կոտորածը՝ Զոհրապը նկատում էր, որ արդարություն հաստատելու համար Ալանա ուղարկված «զինուրական առեանները միասին կախաղան բարձրացուցին ջարդող և ջարդուղը»³:

Անհրաժեշտ է նշել, որ Կիլիկիո հայության կոտորածների հարցը Զոհրապը բազմաթիվ անդարձել է թե՛ Ազգային ժողովում և թե՛ Օսմանյան խորհրդարանում, նաև՝ Հակոբ Պապիկյանի բաղման սգահանդեսում և ամեն անգամ տեղի ունեցածը համարել է բուրքական կառավարության մեջը:

Միաժամանակ, Ազգային ժողովում ունեցած իր երույթում նա կարծես ցանկանում էր զսպել իր հայրենակիցների գայլութը՝ հարցին մոտենալով դիվանագիտորեն. «Օսմաննեան խորհրդարանին մեջ հայ երեսփոխանը վայրկյան մը իսկ մոռնալու չէ հայ ազգին մասնառու դիրքը և իր խոսքերուն առաջ բերելիք արյիսնքն ալ լաւ կշռելու է բերան բանալն առաջ»⁴:

Արդեն այս նախադասությունը բավական է ցոյց տալու, թե ինչ պայմանների մեջ են գործել հայ երեսփոխանները Օսմանյան խորհրդարանում: Սակայն դա չի խանգարել, որ նոյն Զոհրապը 1911 թ. նոյեմբերի 28-ին անձամբ իր կողմից «Յիշատակագիր» ներկայացնի փար-

չապես Սայիդ փաշային՝ ինց առաջին նախադասության մեջ արձանագրելով, որ Օսմանյան Սահմանադրության իոչակումից չորս տարի է անցել, սակայն «Անառողջի հայաբնակ նահանգներու կացորեան մեջ բարեկաման ոչ մեկ նշան երեսցած է»¹: «Յիշատակագրի» հեղինակն ապացուցում էր, որ նախորդ վարչակարգի աղետարեր բարարականությունը շարունակվում է, անընդհատ խախտվում է հայերի հողային սեփականության իրավունքը, իսկ կառավարությունը չարագործներին չգտնելու և չյատելու քաղաքականությունն է փարում: Ուստի Զոհրապն աներկյուղ հայտարարում էր. «Կառավարութեան նպատակը Անառողի նահանգները հայերէն պարպեճն է, սուոյզ է, որ այդ նպատակը պիտի իրականացնայ»²: «Յիշատակագրում» նաև կոնկրետ միջոցներ էին առաջարկվում անդորրությունն ու կարգը վերականգնելու համար. մեծ իրավասություններ տալ նաև նախանգապետերին, հայաբնակ նահանգներուն նշանակել հայ նահանգապետ, հայերից լինեն քաղաքային և դատական պաշտոնյանների և ժանդարմների մի մասը, պաշտոնանիկ անել անբարեհույս պաշտոնյաններին, համլիդն զորախմբերը մտցնել կանոնավոր բանակի մեջ, ձերբակալել հանցազործ աշխիքավանտերին, հայկական հեռավոր նահանգները կենտրոնի հետ կապել երկարություն: Զոհրապը պահանջում էր նաև կարգավորել հողային հարաբերությունները, բանզի կայսրության գոյության ընթացքում քրդերն ու բորբերը միշտ էլ գագրել են հայերի հողերը, հողագորկ գյուղացին արտագաղթի է դիմել: Ուստի պիտք է այնպես ամեն, որ վերադառն գարքական հայերը կարողանան իրենց հողերի տերը դառնալ, ոչ թե դրանք մնան քրդի և բորք ավատատերերին, և նրանք էլ տուրք գանձեն հայերից: Ուշադրության արժանի է վարչապետ Սայիդ փաշային ուղած «Յիշատակագրի» վերջարանը, որտեղ իր ողջ լյանը օսմանյան պետական օրենքներն ուստանափառ իրավարան և հասարակական ու ազգային գործիչը հայտարարում էր. «Հայութեան փրկութիւնը օսմանցիութեան փրկութեան մեջ է»³: Գուցե դա դիվանագիտական արտահայտություն էր, բանզի Զոհրապը հոյս էր հայտնում, թե իր առաջարկու-

¹ Նոյն տեղում, էջ 113:

² Գրիգոր Զոհրապ, գիրք Զ, էջ 115:

³ Նոյն տեղում, էջ 116:

⁴ Նոյն տեղում, էջ 123:

¹ Նոյն տեղում, էջ 128:

² Գրիգոր Զոհրապ, գիրք Զ, էջ 133:

³ Նոյն տեղում, էջ 136:

յունները կատարելուց հետո «օսմանեան պիտութիւնը... դեպի ճշնարիտ սահմանադրութիւն կ'ընթանայ...»¹:

Այս «Յիշատակագրի» մի տարբերակը՝ առավել խիստ արտահայտություններով, «Թագղիք ներկայացուած Բ. Դուան» խորագրով, 1912 թ. փետրվարի 14-ին Զոհրասպը հսկնում է կառավարությանը: Թագղիք հեղինակը Բ. Դուան ուշադրությունը երավիրում էր «հայկական նահանգներու վրա, որ ներքին քաղաքական ու բնկերային վիճակը այն աստիճան անհանդելի դարձած է, որ մեզի իրավունք կուտա վտանգուած տեսնելու որքան պետութեան, նույնքան և հայ ժողովրդի շահերը»²: Զոհրասպը նշում էր, որ 1872–1876 թթ. ընթացքում Հայոց պատրիարքարանը, նաև գավառական առաջնորդարանները բազմաթիվ տեղեկագրեր են ներկայացրել իշխանություններին՝ ահավոր հարտահարությունների վերաբերյալ, բայց օրինավոր գանգատներն անլույի են մնացել կառավարության կողմից: Այդ պատճառով տեղական իշխանությունները ավելի են սաստկացրել իրենց զենդումները և նոյնիսկ խլամի օրենքով հիմնավորել իրենց հափշտակությունները: Սահմանադրության հոչակումով հայությունը ջանաց մոռանալ անցյալի արիավիրքները, հուսալով, որ «նոր ռեժիմը...իր առաջին պարտականութիւններէն մին պիտի համարեր հայարնակ նահանգներու անմիջական բարեկարգութեան հոգն ու զործադրութիւնը»³:

ՈՒ թեև կառավարության առաջին բայերը հույսեր ներշնչեցին տառապյալ հայությանը, սակայն դրանք շտուով ի դերե ելան. հայերին վիճակից այնպիսի սուկալի արիավիրք, որը Զոհրասպի բնորագրումով՝ գերազանցեց «համիտեան շրջանի պատմական արինահեղութիւններն ու տառապանքները»⁴: Դա Կիլիկիայի հայության սարսափելի սպասողն էր, բարբարութեան ջարողը, որը Զոհրասպի խոսքերով՝ արտասափորեց «Օսմանեան սահմանադրութեան մաքոր էջերը»⁵: Ավագակախմբերը նորից սկսեցին համարձակ ասպատակությունները, նորից ավելացան

բնապետական տուրքերը, բնություններն ու բնի խլամացումը: Խսկ Օսման վիաշայի նման հանցագործ պաշտոնյաններն ու զինվորականները՝ որոմ սերմանողները, անպատիժ մնացին:

Թագղիքի մեջ Զոհրասպը ներկայացնում էր հայտնի ոճրագործների մի հակայական ցուցակ, որոնց մի մասը թեև արդեն ծերակալված էր, բայց նրանց դատը չէր կազմակերպվում և երկար ձգձգելուց հետո աստիճանաբար ազատում էին բանտից: Նանք էր վիճակը մանավանդ բաղնչի, Վանի, Դիարբերիի և Խարբերդի նահանգներում, որուղի բացարձակապես գոյուրյուն չուներ կյանքի, գոյքի, պատվի ապահովություն: Զոհրասպը մանրանաս (11 կետով) նշում էր, թե ի՞նչ իրավախսայտումներ են կատարվել, ո՞մ կողմից և ինչպէս պետք է պատժել հանցաներ բույլ տված բարձրաստիճան պաշտոնյաներին:

Զոհրասպը կոնկրետ միջոցաւումներ է առաջարկում նաև «հեղային հարցը» կարգավորելու ուղղությամբ (7 կետ), մատնանշում «նախարարաց մողովի կատարելիք գործադրությունները»¹: Նա ներկայացնում է 16-րդ Խողվածից բաղկացած մեծ փաքերը, և ընդգծում, որ Սահմանադրական իիմունքներով գործադրելու դեպքում «զատափի իշխանութեանց իրավասութիւնը կրնդարձակուի»²: Դրա համար դատական պաշտոնյաներն ու «քաղաքային ջրօն քննիչները» իրավունք պետք է ստանան հսկել բոլոր պաշտոնյաներին և հարկ եղած դեպքում «անարժան և գեղձարար» անձանց ազատել պաշտոնից:

Քազմարիկ են այն խնդիրները, որոնց լուծանը մասնակցել և ելույթ է ունեցել Ազգային Ժայռովի երեսինսան և Օսմանյան խորիդրանի անդամ Գրիգոր Զոհրասպը: Հարցեր կան, որ Զոհրասպը սկզբու բարձրացրել է Ազգային ժողով, ապա՝ Օսմանյան խորիդրանում. զավառական հարտահարությունների, զինվորական տուրքի, հողային

¹ Գրիգոր Զոհրասպ, զիրը Զ, էջ 160:

² Նոյյն տեղում, էջ 165: Ցանկանում ենք շնորհակալությամբ նշել բանափրական վիստության հետազոտական աշխատանքը, որի վիստությունների դրսուր Ալեքսան Շարությանի հետազոտական աշխատանքը, որի վիստության հետազոտական աշխատանքը, շնորհիվ նա ի մի է թերել 19-րդ դարի վերջի և 20-րդ դարակարգի հայ մամուլը, Հայոց Ազգային ժողովի աստիճանագրություններում, Գալականության և արվեստի բանգարանի արխիվային ֆոնդերում պահպանված այն բոլոր նյութերը, որոնք վերաբերում են Գրիգոր Զոհրասպի հասարակական, իրավաբանական գործությանը և իրատարակել մեծ գուտի «Մրկերի» Ե և Զ հատորներում:

¹ Նոյյն տեղում, էջ 137:

² Գրիգոր Զոհրասպ, զիրը Զ, էջ 150:

³ Նոյյն տեղում, էջ 152:

⁴ Նոյյն տեղում, էջ 153:

⁵ Նոյյն տեղում:

խմբի, Կիլիկիայի հայության կոտորածների, Օսմանյան սահմանադրության վերափոխության մասին և այլն: Հարցեր կան, որ քարձրացվել են սոսկ Օսմանյան խորհրդարանում՝ իին վարչակարգից տուժածների մասին, բյուջեի, դատարանների և դատական օրենքի, իրքիհատիք և իրիլաֆի մասին: Իսկ գուտ ազգային հարցերը քարձրացվել են Հայոց Ազգային ժողովում, ամուսնական, կրթական խնդիրներ, կովկասահայ քանտարկալմների խնդիրը (ՀՅ Դաշնակցության գործով), կարողիկոսական ընտրությունների հարցը:

Ընթերցելով Հայոց Ազգային ժողովում և Օսմանյան խորհրդարանում ինչած Զոհրապի ելույթները, ապշում են նրա անսահման եռանդի, զիտական ունակությունների, հարցերի իմացության, հայրենասիրության, խիզախության, ողջամտության, անլուծելի խնդիրների լուծումը փնտրելու կարողությունների վրա: Զկա մի նիստ, որտեղ Զոհրապը ելույթ չի ունեցել, չկա մի հարց, որի մասին իր կարծիքը չի հայտնել: Նա ոչ միայն հայության շահերի պաշտպան էր, այլև ազգի ներսում պառակտումները վերացնող հմուտ հաշտարար: Իր ելույթներում Զոհրապը բազմից պահանջել է մի կողմ դնել կոտակցական տարածայնությունները և միաբանվել ազգային շահերի շուրջ:

Բավական է կարդալ 1912 թ. դեկտեմբերի 21-ի նրա ելույթը՝ ի պաշտպանության հայոց նախակին պատրիարք Սահարիա Օրմանյանի, որպեսզի զաղափար կազմենք ոչ միայն Զոհրապի վաստարական ունակությունների, այլև մարդկային ազնվության ու լայնախության մասին: Օսմանյան հեղաշրջումից հետո՝ 1908-ից մինչև 1912 թ. դեկտեմբերի 21-ը, Կ. Պոլսոի նախակին պատրիարք Մ. Օրմանյանն ամրաստանալի վիճակում փակված էր իր տանը և կյանքի հարփածներին դիմագրավելու համար գրադպուտ էր զիտական գործունեությամբ: Նա մեղադրվում էր Արդուլ-Համիլին հնագունդ ծառայելու և ազգային շահերը ուսնահարելու մեջ: Զոհրապը, որը հետևել էր Մ. Օրմանյանի ազգային գործունեությանը 1880-ականների սկզբից, նրա մասին գորե հոդված-ակնարկ «Ծանոթ դեմքեր» ժողովածուի մեջ, ներկայացնում է Կարինում Օրմանյանի ծավալած ազգային հեղափոխական, ապա՝ հոգևորական գործունեությունը, մատնանշում Արդուլ-Համիլին երբեմն համակերպելու, երբեմն զգուշորեն դիմադրելու քաղաքականությունը և անհամաձայ-

նություն հայտնում Ազգային ժողովում նրա հարցը բննարկողների հետ: Զոհրապը հարց էր ուղղում Ազգային ժողովի անդամներին. ինճ տարի է, ինչ «Սահմանադրությանը գործադրելու կատարեալ ազատությին կվայելենք», արդյոք գործադրություն են արդարության գոնեն տարրական պայմանները: Նա նախատում էր իր գործընկերներին, որ դատում են մի անձնավորության, որը չի կարող հերթել իրեն ներկայացնող մեղադրանքները՝ բացակա լինելու պատճառով, և հանգում այն եղարկացության, որ շնայած Համիլի գահակարումը շարունակվել է մինչև 1908 թ., բայց հայկական զանգվածային ջարդերը ընդհատվել են 1896 քվականին և Օրմանյանի պատրիարքության տարիներին ոչ մի կոտորած չի եղել: Գտնելով, որ Օրմանյանը հետևել է համակերպության քաղաքանությանը, Զոհրապը նշում էր, որ դա «այն ժամանակի պայմաններուն նայելով՝ պարտադրական քաղաքականությին մըն էր»: Ուստի շեշտերով, որ նախկին պատրիարքը «վերջին մինց տարուան կեանը և իր հոգեկան տառապանքը... լուրեամբ և ազգօգուտ աշխատություններով անցուց», ընդգելով «ազգին մատուցած շատ մը ծառայութիւններով անցուց», Ազգային ժողովին առաջարկում էր «ազգատ կացուցանել Օրմանեան սրբազնը իրեն դեմ եղած բոլոր ամրաստանությներէն»¹: Զոհրապն անաշառ զնահատական էր տալիս Օրմանյանի գործունեությանը, փրկում նրան ամրաստանյալի կարգավիճակից՝ հնարավորույթներուն տալով, որ վերջին իր հմուտ գրչով ստեղծի պատմագիտական արժեքափոր գործեր:

Զոհրապը շարունակեց իր գործունեությունն Օսմանյան խորհրդարանուն նոյնիսկ 1915 թ. սկզբներին՝ մինչև արյունակի ապրիլի վերջը: Բազմաթիվ մտերիմներ նրան առաջարկեցին՝ քանի դեռ ժամանակ կար, հեռանալ թուրքիայից: Զոհրապը մերժեց բոլոր առաջարկությունները, զանելով, որ իր պարտը է կիսել հարազատ ժողովուի ճակատագիրը: «Չէ, վախսչի չեմ կրնար, պարտը է մինչեւ վերջը պատճեշին վրա կենալ»²: Երբ հարցականի տակ էր դրված արևմտահայության գոյությունը, Զոհրապն իր կյանքի գնով ընդունում էր ամեն մի մարտահրավեր: Բավական է իիշել թաղեարի երևին շպրտած նրա վերջին խորերը.

¹ Գ. Ռիզոր Զոհրապ, գիրք Զ, էջ 237:

² Գ. Ռիզոր Զոհրապ, Էջեր ուղևորի մը օրագրեն, Խզմիք, 1922, էջ ԺԲ:

«Օր մը հաշխվ պիտի պահանջվէ ծեզմէ և դուք չպիտի կարենար արդարացնել ձեր արարքները»։ Եթ երբ շարագործ հեգնանքով հարցնում է, թե ով պետք է լինի այդ հաշխվ պահանջողը, Չոհրապը արիարար պատասխանում է. «Ես, իբր խորիրդարանի հայ մեպու, ծեզմէ հաշխվ պիտի պահանջեմ»¹։ Իրավացի էր Արշակ Ալպյանյանը, երբ նկատում էր, թե այդ խորերով Չոհրապը ստորագրեց իր մահվան դատավճիռը։

Այսպիսով՝ Հայոց Ազգային ժողովում և Օսմանյան խորիրդարանու Չոհրապն աշխատել է մեծ նվիրվածությամբ, ուժերի գերազույն լարումով։ Օսմանյան խորիրդարանում հնչած նրա համարձակ քննդատական ելույթներն ու առաջարկություններն ապացուցում են, որ Չոհրապը եղել է ազգի նվիրյալը։ 1912 թ. հունվարի 5-ին Կ. Պոլսի «Ժամանակ» թերթին տված հարցազրույցում նա քանից շեշտել է, որ գերադասում է ընտրվել իրեւ հայուրյան ներկայացուցիչ՝ «Ես օսմանցի ըլլալն առաջ հայ եմ»², և եթե հայուրյունը շշանկանա իր ընտրությունը, «Ես լաւագոյն կը սեպեմ երեսփոխան չըլլալ»³։ Նույն օրը «Լուսարձակ» թերթին տված հարցազրույցում Չոհրապն ավելի է մանրանանել իր նպատակները՝ հայտնելով, որ իրեն նույնիսկ նախարարական պաշտոն է առաջարկվել, քայլ ինքը մերժել է «անոր համար որ չհաւատացի, որ առաջարկուած այդ պաշտոնը կրնա իմ ազգիս արժանապատոքնանը հետ համեմատական ըլլալ»⁴։ Նա ընդգծում էր, որ հայուրյունը Օսմանյան խորիրդարանում պիտի ներկայանա իր «լավագոյն ու պահճակի ուժերով»⁵։

Իր ողջ գործունությամբ Չոհրապն ապացուցեց, որ Օսմանյան խորիրդարանում հայերն, իսկապես, պատվավոր տեղ են գրավել՝ հսկուելով իշխող ազգի նախանձն ու ատելությունը։

Վեմ, 2011, № 4, էջ 238–249:

¹ Ա. Ալպյանյան. Անհետացող դեմքեր. Գրիգոր Չոհրապի կեանքը և իր գործը, Կ. Պոլիս, 1919, էջ 245.

² «Ժամանակ», 1912, Կ. Պոլիս, 5 յունուարի:

³ Նույն տեղում։

⁴ «Լուսարձակ», Կ. Պոլիս, 1912, 5 յունուարի:

⁵ Նույն տեղում։

**ՍԱՂԱՔԻԱ ՕՐՍԱՆՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ
ԷԶՄԻԱԾՆԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՃԵՄԱՐԱՆՈՒՄԵՎ
ԱՐՍԱՇԻ ԴՊՐԵՎԱՆՋՈՒՄ
(1887–1896 ԹԹ.)**

Սակար Թեղուտցի կարողիկոսը 1886 թ. ամռանը մի խոմք արեմտահայ և արևելահայ վարդապետների ձեռնադրում է եպիսկոպոս։ Դրանց շարքում էին արևմտահայ հասարակական-քաղաքական, հոգեվոր-մշակութային կյանքում առաջնակարգ տեղ գրաված Գարեգին Սրբանձույանցն ու Մաղարիս Օրմանյանը։ Դեռևս 1860–1861 թթ. Ակրտիչ Խրիմյանի հետ Գ. Սրբանձույանցը եղել էր Էջմիածնում, ծանոր էր այստեղի վարդ ու քարին, նույնիսկ «Արծուի Վասպորականի» էջերում իր տպափորություններն էր կիսել արևմտահայ ընթերցողի հետ։ Մ. Օրմանյանն առաջին անգամ էր լինում Էջմիածնում. այստեղ նրան հետաքրքրում էր ամեն ինչ, նաևական Գևորգյան ճեմարանը, դասավանդող ուսուցիչները, ճեմարանի ուսանողների գիտելիքները։ Սակար կարողիկոսի աշքից շի վրիպում Մ. Օրմանյանի հետաքրքրությունը և ուշադրությունը ճեմարանի նկատմամբ։ Մասնավոր զրոյցների ընթացքում շփվելով նրա հետ՝ Ամենայն հայոց հայրապետը ծանորացել էր վերջինիս աստվածաբանական գիտելիքների հսկա պաշարին, դրա համար էլ նա առաջարկում է Մ. Օրմանյանին մնալ Էջմիածնում, ճեմարանում դասավանդել աստվածաբանություն առարկան։ Մինչ այդ Մակար կարողիկոսը նուակոված էր, որ ճեմարանում հետին պլան են մղված աստվածաբանական գիտելիքները։ Ծիշտ է նկատել Հ. Սիրունին. «Մակար էր, որ հայ հոգևորականություն մը պատրաստելու մտահոգություն ունեցավ»։ Այդ նպատակի համար նա ընտիր ուսուցչական կազմ հավաքեց ճեմարանում։ «Են սակայն անոր ալ պակսեցավ քուն մարդը, որ պիտի կարենար հոգևորական նոր սերտնի մը կորիզը խնորել։ Այդ անձը Օրմանյանը պիտի ըլլալ...»¹։ Չնայած իր մեծ ցանկությանը, Օրմանյանը, ներտություն խնդրելով, իրաժարվում է Էջմիածնում մնալու առանձինությունում։

¹ Սիրունի Հ. Տ., Օրմանյան և իր ժամանակը Էջմիածին, 1961, թ. 2 (հունիս ամիս), էջ 19:

ջարկից, որովհետև մինչև այդտեղ գալը հանձնարարություն էր ստացել Կ. Պոլսի պատրիարքից՝ վերադարձին մտնել Վասպորական և քննել ամբողջ Արևմտյան Հայաստանում, նաև արևմտահայ մշակորային կենտրոն Կ. Պոլսում մեծ աղմուկ համած պարույան-ապողոսյան երկարատև պայքարի հանգամանքները և համապատասխան զեկուցագիր ներկայացնել պատրիարքին¹: Զցանկանալով տարածայնությունների առիր ստեղծել Կ. Պոլսի հայոց պատրիարքարանում՝ կարողիկոս Մակար Թեղուտցին բոյլ է տալիս Օրմանյանին կատարել պատրիարքի հանձնարարությունը՝ առաջարկելով 1887 թ. ուսումնական տարին սկսելուն պես լինել Եջմիածնում՝ ճեմարանում դասախոսելու համար:

Պատվով կատարելով պատրիարքի հանձնարարությունը՝ 1887 թ. ամռանն Օրմանյանը ստանում է կարողիկոսի՝ իրեն Եջմիածնի հրավիրելու և ճեմարանում դասավանդելու կոնդակը: 1887 թ. ուսումնական տարին Մ. Օրմանյանն սկսում է իրք Գևորգյան ճեմարանի աստվածաբանության դասախոս: «Գևորգ կարողիկոս իր հիմնած և փայփայած և օժտած վարժարանական հաստատութեան հոգեւոր ճեմարանի անուն և աստիճան էր տուած, բայց իր օրով ո՛չ ճեմարանական բարձրութեան էր հասած և ո՛չ հոգեւորականութեան էր ծառայած»²: 1874 թ. իիմնայր-ված ճեմարանը տվել էր բազմաթիվ շրջանավարտներ, որոնք ակնառու տեղ էին գրավում հայ հասարակական-մշակորային կյանքում, բայց.... զարմանալի և տարակուսելի մի երևոյք, 13 տարվա գրյուրյան թիրացրում ճեմարանը դեռևս չէր տվել ոչ մի հոգեւոր սան, շրջանավարտներից ոչ մեկը չէր ճեռնադրվել որևէ հոգեւոր աստիճանում: Գևորգի մահից հետո Մակար կարողիկոսը ճեմարան հրավիրեց բարձրորակ ուսուցիչների: Արշակ Նահապետյան, Սեղրակ Մանդինյան, Փիլիպոս Վալդանյան, Ստեփան Պալասանյան, Սարգս Գարբիելյան, բայց նրանք Օրմանյանի թնորոշումով «հոգեւորական ուսմանց ճիշդը» չէին կարող տալ: «Համալսարանական կրօնուսույցի մը պետքը կզգացնեն, Հոգեւոր ճեմա-

րանի ուսուցչական մարմինը լրացնելու համար»¹: Այս հանգամանքը լիովին բավարարում էր ցարական կառավարության պաշտոնյաներին, մանավանդ Սինողի դատախազին, քանի որ այդ վիճակում ճեմարանն ավելի հեշտությամբ կիրակվեր իրք աշխարհիկ ուսումնական հաստատությունը²: Դեռևս մեկ տարի ճեմարանում դասավանդում չափարարած՝ Օրմանյանն անգամ զգում էր. «Հոգեւոր ճեմարանի մեջ կրոնական ուսմանց թուրքիսնը տեսնելով կառավարությունը կը բաղձար օգտուի անտի ճեմարանը փակել տալու»: Դրա համար էլ և Սինողի դատախազը, և կառավարության մյուս ներկայացուցիչները հաշու աշրով չեն նայում Օրմանյանի ներկայությանն ու գործունեությանը: Սինչդեռ Մակար Թեղուտցին անընդիատ քաջալերում է աստվածաբանության դասախոսի գործունեությունը: Փաստորեն, հոգեւոր ճեմարանում տասը տարուց ավելի գործերուց հետո ավելանում է նոր, կրոնական ճյուղը: Բոլոր կորսերում Օրմանյանը դասախոսում է աստվածաբանական գիտելիքներ՝ շաբարական 24 ժամ: «Հարկ եղավ բնական աստուածաբանությունը սկսիլ հոգեւորական ալ խառնելով, ջատագովական ճիշդը լրացնել և տեսական ու բարոյական աստուածաբանութեանց անցնիլ. շաբարական դաս մըն ալ Աւետարաններու ներածութեան յատկացուեցան երեք լսարանները համախմբելով, որոց շաբար երեկոներ բարյախտառին ալ կկատարէի եկեղեցական և աշակերտական կեանքի նիստերով»³: Նա մասնակցում էր նաև եկեղեցու և փանքի աշխատանքներին, շաբարյին հոգեւորականի նման ներկա էր լինում ժամերգությանը, սաղմոս էր ասում, Ծնունդի և Ավագ հինգշաբթի ծանրաշխատ օրերին, «Երբ հոգեւորականները կը փախչեն, վլաս առի սիրով...աստեմարանութեն ալ փայտչող չեմ և աշակերտաց ալ բարի օրինակ լինել պարտը ե», - գործ է Փայտչող չեմ և աշակերտաց ալ բարի օրինակ լինել պարտը ե»: Օրմանյանը⁴: Մակար կարողիկոսը բարձր է զնահատում Օրմանյանի Օրմանյանը⁴: Մակար կարողիկոսը բարձր է զնահատում Օրմանյանի աշխատանքը և միշտ ոգեւորում ու զովում է նրան: Այդ աշխատանքը տալիս էր իր շոշափելի արլյունը: Հետո 1887-1888 թթ. ուսումնական տալիս էր իր շոշափելի արլյունը:

¹ Նոյն տեղում:

² Գրականության և արվեստի բանգարանի արխիվ (այսուհետև՝ ԳԱԱԹ), Թորոս Ազատյանի ֆոնդ, XII բաժին, գործ 11545:

³ Օրմանեան Մ., նշվ. աշխ., էջ 148:

⁴ ԳԱԱԹ, Թորոս Ազատյանի ֆոնդ, XII բաժին, գործ 11545, էջ 42:

¹ Այդ մասին մանրամասն տեսն Հովհաննիսյան Ա., Նալբանդյանը և նրա ժամանակը, հ. Ա., Ե., 1955, էջ 374-378, Կոստանդնուպոլիս Ե., Գարեգին Մըրվանձույանց (կյանքը և գործունեությունը), Ե., 2008, էջ 101-106:

² Օրմանեան Մ., Խոհեր և Խոսք, Երրուաղիմ, 1929, էջ 142:

տարվա վերջին ճեմարանի ողջ գոյուրյան ընթացքում առաջին անգամ «զորս ուսումնավարտներ վանականութեան համար ուխտագիր տուին կարողիկոսին...»¹, և դրա մեջ ամենամեծ շնորհը պատկանում էր արևմտահայ նոր ուսուցչին: Նույնիսկ ճեմարանի տեսուչ Արշակ Նահապետյանը կուսակրոնուրյուն է ընդունուում²:

Ճեմարանում աշխատելու մեկ տարվա ընթացքում Օրմանյանն զբաղված էր ոչ միայն դասախոսություններով, այլև Մանկար կարողիկոսի խորհրդով «Արարատում» հանդես եկավ Հայ Առաքելական եկեղեցուն նվիրված հողածաշարով, որը կրում էր «Առող Հայաստանեաց» խորագիրը և դրսերում էր հեղինակի խոր իմացությունները Հայ Առաքելական եկեղեցու անցած ուղու մասին: Հողվածաշարը ամբողջանալուն պես, դարձյալ կարողիկոսի հանձնարարությամբ, լույս տեսավ առանձին գրքույկով՝ նոյն խորագրով, և մեծ ընդունելություն գտավ ամբողջ հայ իրականության մեջ: Արխիվային փակերագրերը փաստում են, թե որ փայրից ինչքան դիմումներ են ստացվել այդ գրքույկներն իրենց ուղարկելու խնդրանքով³:

Մինչ նվիրյալ հոգենորականը դասախոսում էր ճեմարանում, սինողի դաստիարակը, Կովկասի կառավարչապետը, Պետերբուրգի օստար դավանությունների դեպարտամենտի դեկանը Մոսալովը գործի են դնում ամեն ճիգ ու ջանք՝ Օրմանյանին Էջմիածնից հեռացնելու համար: Լուրը հասում է նոյնիսկ Կ. Պոլիս, Օրմանյանի արևմտահայ համակիրներին և գաղափարակիցներին: Սի ամբողջ ուսումնական տարի, երբ նոր դասախոսը մեծ նվիրումով կատարում էր իր գործը, նրա արևմտահայ քարեկամներն իրենց ճամակներում հարցումներ էին ուղղում ճեմարանի նոր ուսուցչի նկատմամբ ցարական կառավարության ունեցած բացա-

¹ Նոյն տեղում, գ. 11546:

² Մ. Օրմանյանը ճեմարանում ունենում է հայտնի աշակերտներ, դրանց շարրում չի կարելի շիշատակել Սեծի տանն Կիլիկիո ապագա կարողիկոսին, 1918 թ. մայիսյան եերամարտերի ակտիվ մասնակից, XX դարի Անոնց երեցին՝ Գարեգին Հովհաննին, որը մինչև իր կյանքի ավարտը շնորհակարության և երախտագիտության մեծ զգացումով էր լցուած Մաղարիս Օրմանյանի նկատմամբ: Այդ քարձը զգացումն արտահայտեց հետագայում, 1908 թ. Էջմիածնում Օրմանյանին նվիրված գրի իրատարակությամբ (տես Հովհաննի Գ., Մաղարիս արքեպիսկոպոս Օրմանեան և կարողիկոսական ընտրութին, Թիֆլիս, 1911 թ., II իրատ.):

³ ՀՀԱԱ, ֆ. 56, գ. 7, գ. 868:

սական վերաբերմունքի մասին: Օրմանյանը, որը հենց սկզբից լսել էր իր նկատմամբ կառավարության բացասական վերաբերմունքի մասին, ճամակներում ժխտողական պատասխաններ էր տալիս: Միայն ուսումնական տարիա վերջին (մայիսի 21/հունիսի 2) Հովհաննես ավագ քահանա Սկյուանին ուղղած նամակում Օրմանյանը խոստվանում է, որ մարտ ամսից իրեն հայտնի է ամեն ինչ, թեև կարողիկոսը բոլորին իրահանգել էր իրեն ոչինչ չափել կառավարական պաշտոնյանների այդ ընթացքի վերաբերյալ: Նա կարողիկոսի մոտ ցոյց չէր տալիս, թե զիսի ամեն ինչ և մեծ նվիրումով շարտնակում էր դասախոսությունները: Նոյն այդ նամակում Օրմանյանը մանրամասն պատմում է ցարական կառավարության՝ իրեն Էջմիածնից հեռացնելու ուղղությամբ կատարված քայլերի, կարողիկոսի հակաբայլերի մասին: Պատրիվակելով Օրմանյանի օտարականական լինելը՝ ցարական պաշտոնյանները ցանկանում են նրան հեռացնել Էջմիածնից, իսկ կարողիկոսը պնդում էր իր իր իրավունքները՝ նշելով, որ Ամենայն հայոց վեհափառն իրավունք ունի բոլոր օտարականատակ, «մանավանդ ուխտեալ եպիսկոպոսների» աշխատանքի իրավիրելու Էջմիածնում: Կարողիկոսը իրահանգել էր ճեմարանի աշխատակիցներին Օրմանյանին ոչինչ չափել ցարական պաշտոնյանների այդ քայլերի մասին, իսկ վերջինս աշխատում էր մեծ նվիրումով և չէր արտահայտում իր մտահոգությունները: Նրա գործունեության մասին «կարողիկոս և եպիսկոպոսները, տեսուչ եւ ուսուցիչները, եւ ամենուն խորհրդականներ այն համոզումն ունին, որ եթե Օրմանեան հեռանա, ճեմարան ալ փակուած կը լինի: Մինչեւ հիմա, կրտսե քան հասկցողները, կրօնական ճիշտ շտեմիր եւ շտեմենալիս թիզ կիմանայինք, այժմ, որ կրօնական ճիշտը մտավ, եւ տեղը ուրիշը չկա, որ շարունակէ, եթէ հեռանա, հոդ է, թէ ճեմարանին հոգին կենի, այլևս հոգենոր ճեմարան շմբար»¹: Օրմանյանի հետ շփորդ Էջմիածնի հոգենորականներն ընդունում են, որ նա «ճեմարանը քիլատոննեայ» արագ, նույնիսկ հորդորում են նրան: «Դուն ժամ մի ժամը մեզի, ճեմարանը թեզի ժամ է»: Օրմանյանի դասախոսությունները ճեմարանում, աստվածաբանական քարոզները, ուսանողներին հոգևորական ողով տոգորելը բացահայտ գգում են ոչ միայն Էջմիածնա-

¹ Գ.Աթ, թ. Ազատյանի ֆ., XII բաժին, գ. 11545:

կաները, այլև «պրոկուրօրն եւ նաշանիկն» (ցարական պաշտոնյաները): Մինչ Օրմանյանն աշխատում էր մեծ նվիրումով և իր արեմտահայ մտերիմներին հայտնում էր, որ ուսումնական տարրա ավարտին՝ արձակուրդի ժամանակ, մտադիր չէ Պոլիս գնալ, այլ ցանկանում է օդափոխության մեկնել արեելահայ որեւ հաճելի փայր, այսա բարձրանալ փոքր Մասիսը, ցարական պաշտոնյաները կարողիկոսին հեղերում են սպառնալի գրուրյուններով և պահանջում Օրմանյանին հեռացնել ճեմարանում պաշտոնավարելուց, նաև բնդիանրապես Արևելյան Հայաստանից: Կարողիկոսը համառորեն դիմադրում է: Տեսնելով, որ գրուրյուններն ու սպառնալից պահանջները արդյունք չեն տալիս, օտար դավանության դեպարտամենտի դեկավար Մոսարբը երկու պաշտոնյա է ուղարկում կարողիկոսի մոտ: Արդեն 1888 թ. հունիսին պարզ է դառնում, որ «Պետքրորդք կայսեր կողմանէ քննչներ կ'սպասուին Էջմիածնայ գործերը նայելու արդեն Տփդիս են և անտի այսօր վաղը կը մեկնին»¹: Էջմիածնին եկած ցարական պաշտոնյաների ուժքին ճշման ներքո Վեհափառ հայրապետն ստիպված զիջում է. «...կարողիկոսն ստիպեալ էր տեղի տալ առաջին բուռն գօրութեան յասուկ պատզամատրի ցարին, որ բացարձակ կամոր կամէր զիկուացումն Օրմանեանի, հակառակ ամենայն համոզկեր փաստից... կարողիկոսն պարտարուեցաւ տեղի տալ առաջին բուռն գօրութեան, երբ սպառուեցան ամենայն միջոցը»²: Սեր կարծիքով ճիշտ չէ Օրմանյանը՝ գրելով, թե իրեն հեռացրել են օտարահպատակ լինելու պատճառով: Ճիշտն այն է, որ ցարական պաշտոնյաները ևս տեղյակ էին նրա մասնակցությանը Կարինի «Պաշտպան հայրենյաց» գաղտնի կազմակերպության գործունեությանը և կարծում էին, որ Արևելյան Հայաստանում վերջինս կօժանդակի նման կազմակերպության ստեղծմանը:

Արդեն 1888 թ. հովիսի վերջին Օրմանյանն ստիպված հեռանում է Էջմիածնից: Ընդամենը մեկ ուսումնական տարի է Օրմանյանը դասավանդում Էջմիածնի ճեմարանում և այդ ժամանակը նա բարձր է գնահատում. «կեանքիս երջանկագոյն օրերն եղան, վարչական ազատ գրականի նույրեալ պատուաւ եւ հանգիստ կերպով Էջմիածնին անցած-

ներս: Յաւով բաժանուեր էի Էջմիածնին, ոչ միայն անհատական կեանքիս, այլև հայ եկեղեցականութեան զարգացման համար աշխատութեան գրկուելուս տեսակետուն: Փափար ունելի եւ կարողիկոսին հաւանութիւնն ալ ստացած էի, ճեմարանի աշակերտութեան կեսը Տաճկահայերէն առնելի եւ ազգին երկու մեծ բաժիններուն մեջ աշխատող եկեղեցականներու միջեւ եղայրակցութիւնը բաջալերել եւ համերաշխութիւնը արձարձել»³:

Սեկ տարի նա մնում է Կ. Պոլսում: Պատրիարքարանից և Արևմտյան Հայաստանի տարբեր վայրերից նա առաջարկություններ է ստանում հոգևոր առաջնորդի պաշտոն կատարելու համար, բայց դեռևս չի տալիս իր համաձայնությունը: Այդ ընթացքում Կ. Պոլսի նորընտիր պատրիարք Խորեն Աշրօյանը հրավիրում է անվանի հոգևորականների խորիրդակցություն՝ հայ եկեղեցու բարենորդությունների խնդիրը բննարկելու համար: Խորիրդակցության հրավիրված Ս. Օրմանյանն անում է կարեւոր առաջարկություն. բարենորդություններ անելուց առաջ աներամեշտ է պատրիարքի կարող և ունակ հոգևորականներ, հայ եկեղեցուն արժանավայել սպասավորներ: Պատրիարքը համաձայնում է այդ առաջարկին, որոշվում է հոգևորականների նոր սերունդ աճեցնելու համար՝ Դարեկանը բացել (յորատեսակ հոգևոր ճեմարան): Ստեղծվում է եկեղեցական վարժարանի հանձնաժողով՝ Օրմանյանի նախազահությամբ: Հանձնաժողովի մյուս անդամներն էին Արիկ Ունճյանը, Տիգրան Յուսուլյանը, Հովհաննես Եսայանը, Պատրիկ Կյուլյենյանը և Գարբիել Գարբիելյանը: Ակզրում մտածում են Դարեկանը բացել Կ. Պոլսում, ապա հանգամանալից բննարկումից հետո պատրիարք Աշրօյանն առաջարկում է Դարեկանը բացել Արմաշի վաճրում: 1889 թ. պատրիարքարական կոնդակով, Կենտրոնական վարչության Խառն ժողովի որոշմամբ Դարեկանը բացվում է Արմաշի Ս. Աստվածածոր Զարխափան վաճրում, որի անփոփոխ վաճահայրը պատրիարք Խ. Աշրօյանն էր: Ս. Օրմանյանը դառնում է վաճրի փոխվանահայր և Դարեկանը տեսուչ: Դարեկանը ինամակալարության ատենապետն է դառնում Տիգրան Յուսուլյանը, բայց ըստ Օրմանյանի՝ «քուն խնամակալը Արիկ Ունճյանն էր, որ հոգւով ու եռանդով, հսկութեամբ ու օգնութեամբ ամեն

¹ Նոյն տեղում, գ. 11546:

² Նոյն տեղում, գ. 11547:

³ Օրմանեան Մ., 62վ. աշխ., էջ 149:

գործառնութեանց վարիչ էր....»¹: Ստեղծվում է 7 տարփա ուսումնական ծրագիր, առաջին երեք տարում կրոնական ճյուղերի ընդհանուր դասընթաց էր՝ Նոր Կոտակարանի ներածության, տոների և ծեսերի բացառության, բրիստոնեական ընդհանուր գիտելիքների հիման վրա: Այդ դասընթացն այնպէս էր կազմված, որ ավարտողները կարողանային «վարժապետութիւնը կամ քահանայութիւնը արժանապէս վարել»: Երկրորդ եռամյան անցնողներն այն ուսանողներն էին, որոնք հանձն էին առել կուսակրոնություն ընդունել և սարկավագ ձեռնադրվել: նրանք պետք է անցնեին փիլիսոփայության և աստվածաբանության մասնագիտական դասընթացը՝ կատարելագործելով առաջին եռամյայի հայկարանական և լեզվագիտական ճյուղերը: Վեցերորդ տարին ավարտողներն ընդունելու էին «քահանայական ձեռնադրութիւն»՝ մի տարի և աշխատելով ավարտանոի վրա, ապա «վարդապետական գաւազանի օրինութեամբ.... գործնական ասպարեզ կը մտնային Կ. Պոլսոյ պատրիարքարանին տրամադրութեան ներքեւ»²:

Դպրեվանքի գործունեությունն սկսվում է 1889 թ. ուսումնական տարում: Սեպտեմբերի 28-ին Հռվիաննես ավագ քահանա Սլյոյանին ուղած նամակում Օրմանյանը հայտնում է՝ Դպրեվանքում սկսած իր նոր աշխատանքի մասին. «....վարժարանի կարգադրութիւնը զիս կը զրադեցնէ: անդուի և անդադար: Առայժմ ամենայն ինչ յաջող կը փայլէ ասու. լավ յարաբերութիւնը, հաւասար եռանի և աշակերտաց կողմանէ պատրաստակամութիւն: Վարագայ խաչէն յետոյ³ կարեսոր դասեր պիտի սկսին: Ակզրում դեռ ինչ ինչ պակասութիւններ ունիմք, մանաւանդ տաճկարան չունիմք: Ամեն քան ի միասին առեալ վարժարաննիս քարական գողտրիկ ձեւ առավ, եթէ ներքինն ալ արտաքնոյն նմանի, կարող եմք գոհ լինել»⁴: Օրմանյանի օգնական և Դպրեվանքի փոխտեսուչ է դառնում Եղիշե վարդապետ Դուրյանը: Նվիրյալ հոգևորականները միասին ձեռնամուխ են լինում Դպրեվանքի գործունեության կարգավոր-

մանը: Դպրեվանքի տեսուչը հետաքրքիր գնահատական է տալիս իր աշխատանքին. նշերով, որ տասնյակ տարիների ընթացքում տարբեր նախատակների է ծառայել, որախությամբ արձանագրում է, որ վերջապես հասել է իր ազգին իսկական ծառայություն մատուցելու ժամանակը. «Ամենուն միացեալ գործութեամբ եկեր եմ նոր գործ մը գործել և Հայաստանեայց եկեղեցւոյ մշակներ պատրաստել»: Նա քննադատական հայացքով վերլուծում է իր ողջ գործունեությունը. «...Անտօնեան միաբանութեան վաճական հայկերուտ, կարողիկ միաբանութեան վարդապետ, հականասունեան խնդրան շահատակ, հակապապական զրուածոց եկեղենակ, հայոց եկեղեցւոյ եպիսկոպոս, Կարնոյ վիճակին առաջնորդ, Մայր Արքոյ ճեմարանին ուսուցիչ, այսպէս իրարու անյարիր վիճակներու մէջ մարգևալ, ի հակառակաց լճեալ փորձառութեամբ տեսնինք, թէ ինչ պիտի կարենանք կատարել»⁵: Նշելով իր անցած զիգզագ ճանապարհը, դիտարկելով, որ իր մտերիմներն առավել քարձը են գնահատում Գևորգյան ճեմարանում կատարած աշխատանքը, Օրմանյանը խորիս է, որ անցած ուղի բոլոր փակերն եւ ինչ-որ ձևով նապատակում են իր գործունեությանը: Նա ճտորում է, որ արդեն մեկ ամիս բացված Դպրեվանքը իրականում բացվել է կես ամիս առաջ, սակայն ոչ բոլոր ուսանողներն ունեն իրենց զգեստները, ուսուցչական խունքը դեռ չի ամբողջացված, բոլոր ուսանողները չեն, որ ոնքն դասագրեն, բայց նոր ձևով կերպարանափոխսկած վանքն արդեն ունի նոր վարժարան: Օրմանյանի արտահայտությամբ «Երկունի և փոփոխութիւնների մէջ» գտնվող Արմաշի վանքը շուտով կընդունի «հաստատութիւնների մէջ»: Հ. Սլյոյանին նա խոստվանում է, որ պարտավորություն է վերցրել անձամբ անեկ ամեն ինչ: Դպրեվանքն աստիճանաբար տալիս է նորընծա կուսակրոն հոգևորականներ, որոնցից մեկին՝ Սլյոյի արելու Աղապետուն, իր հանձնարարականներն ու խորհրդականներն է տալիս փոխվանահայր՝ Դպրեվանքի դեկանապետ: Նշերով հոգևորականի՝ ժողովրդին ու վանքին ծառայելու նպատակը, Օրմանյանը փաստում է, որ նրանց շարքում կամ այդ «օրենքը անարդողներ», որը փաստում է դառնում «հոգեւորական դասուն դեմք բարձրացեալ մեղապատճառ է դառնում «հոգեւորական դասուն դեմք բարձրացեալ մեղա-

¹ Օրմանեան Մ., նշվ. աշխ., էջ 154:

² Նոյն տեղում, էջ 156:

³ Խոսքը վերաբերում է Վարագա Ս. Խաչի տոնին, որ միշտ նշվում էր սեպտեմբերի վերջին կիրակին:

⁴ Գ.Աթ, թ՛. Ազատյանի ֆ., XII բաժին, գ. 11553:

⁵ Նոյն տեղում, գ. 11554:

դրանց»¹: Ըստ Օրմանյանի՝ քահանայության նախատակը և բարձրոր-յունը ժողովրդին ծառայելու, վաճականության ու վեղարին հավատա-րիմ մնալու մեջ է: Ով չի կատարում այդ պարտականությունները, ուրեմն նա շեղվել է իր ճանապարհից: Ժամանակի ոչ մի իրադարձու-թյուն Օրմանյանին չի շեղում Դպրեվանքի աշխատանքները կարգավո-րելու հոգսերից: Զեռք ձեռքի տված Եղիշե Դորյանի հետ՝ նրանք ամեն ինչ անում են Դպրեվանքը բարձր մակարդակի վրա պահելու համար: Այդ ընթացքում նրանք կապ են հաստատում հայկական նոյնիսկ հեռա-փոր զարդարակայրերի հետ՝ այնտեղից աշակերտ քերելու, արժանավոր հոգևորական պատրաստելու և իր տեղին ուղարկելու համար: Այդ առի-րով էլ Օրմանյանը շնորհակալություն է հայտնում Հ. Սլորյանին, որ նրա շնորհիվ Կալկարայից աշակերտ պետք է տնենան²: «Դպրեվանքի տե-սուչն առանձնապես զոհ է Դորյան հայր սուրբի աշխատանքից, որը, ըստ Օրմանյանի, «իր կեանքը կը սպառէ. ի դասի և դասարանի», կար-ծես թե դարձել է «մենակեաց և անապատակեաց»: «Դպրեվանքի հաջո-դություններն ակնիայտ դարձնելու համար Օրմանյանն աշխատում էր բոլոր առարկաների դասավանդումը հասցնել բարձր մակարդակի: Նա առանձնապես ջանք էր գործադրում օտար լեզուների ուսուցումը կար-գավորելու, լավ ուսուցիչներ գործի մեջ ներգրավելու համար: Նրան հա-ջողվում է վարժարանի վերջին դասարանում անգերենի ուսուցումը ուժեղացնել, մտցնել նաև իտալերեն և գերմաներեն. «այսպէս լեզուա-կան հմտութիւններն կաշխատինք ընդարձակե՛ք»³: Նրա ջանքերն ուղղ-վում են նաև քնական գիտությունների ճյուղի համար նոր մասնագետ-ներ հրավիրելու գործին: Նա աշխատում է վարժարանն ավարտած ուսանողներին ուղարկել արտասահման՝ աստվածաբանական ճյուղը բարձր մակարդակի հասցնելու նպատակով: Նրա կարծիքով ավելի ճիշտ է ուսանողներին ուղարկել «Գերմանիո և Անգլիո համալսարաննե-րը», որտեղ «կլոնական և իմաստափրական և քննարանական առումով ավելի լուրջ են», քան «նոր աշխարհի» (նկատի ունի ԱՄՆ. – Ե. Կ.) ուսումնական հաստատությունները: Քննարկելով թուստոնի, Ֆիլադել-

ֆիայի և Նյու Յորքի ամերիկյան սեմինարիաների (մեմարան կամ Դպրեվանք) ուսումնական ծրագրերը՝ գտնում է, որ հայ երիտասարդնե-րը արտասահման պետք է մեկնեն միայն կատարելագործման նպատա-կով. «Ըստ իս էական է, որ նախ մեր ընթացքը հայկական ոգով ու հայ-կական ճաշակով ավարտի և յետքը անոր վրա զգենումք օտարը: Առա-ջին ու նախնական ընթացքը օտարաց ձեռով ընել տալու կողմնակից չեմ»⁴:

Օրմանյանի ջանքերն ուղղված էին իր սաների մեջ ուժեղացնելու սերը Դպրեվանքի նկատմամբ: 1890 թ. լրանում էր Արմաշի վանքի վե-րանորոգության և ուխտի սուրբ տաճարի կառուցման 75 տարին: Զանի որ այդ տոնակատարությունը սաների և ուսուցչական կազմի մեջ կրոր-րորեր հայրենասիրության և հավատքի եռանդ, Օրմանյանը կազմակեր-պում է մեծ տոնախմբություն՝ «Փ պատի ամենաօրինեալ և հրաշագործ Զարխափան Ս. Կոսին», երբ վանքի մեջ հաստատվել է նոր միարա-նություն և նոր վարժարան: Տոնակատարությունը տևում է 1890 թ. հունի-սի 2-ից մինչև 10-ը: Շազմարիվ հրավիրյալներ Կ. Պոլսից մասնակցում են հանդեսին:

Օրմանյանը չի բավարարվում իին վարժարանի շենքում աշխատե-րով: Իրքև «գերազոյն աւետիս» նա հաղորդում է Հ. Սլորյանին, որ 1892 թ. զարնանը ձեռնամուխ է լինելու վարժարանի նոր շենքի շինությանը², քանի որ իր կոչումը Դպրեվանքին ծառայելն է, հոգևորականների նոր և կրքված սերունդ անեցնելը: Շոտով ակնիայտ են դառնում Դպրեվանքի տեսուչի աշխատանքի պատուիները. եռամյա կրքություն ստացած ավագ սարկավագները, ըստ հոգևորական օրենքների, ընդունում են «կրսակ-րոն քահանայութիւն և յարելայութիւն»: Ծնծայացուներն ըստ օրինի-րուն քահանայութիւն և յարելայութիւն: Ծնծայեալը էին Ներսես, Սար-ստանում են իրենց ընծայության գիրը: «Ծնծայեալը էին Ներսես, Սար-գիս, Ծնորհայի, Դավիթ և Սլորուի ավագ սարկավագները»³:

Արմաշում աշխատելու ողջ ընթացքում Օրմանյանը չի մոռանում Գեորգյան ճեմարանում մեկ ուսումնական տարի իր աշխատանքային գործունեության մասին. իր խոհերն ու մտորումներն է հայտնում համա-

¹ Գ.ԱԹ. Թ. Ազատյանի ֆ., XII բաժին, գ. 11563:

² Նոյյն տեղում, գ. 11578:

³ Նոյյն տեղում, գ. 11604:

¹ Գ.ԱԹ. Թ. Ազատյանի ֆ., XII բաժին, գ. 11523:

² Նոյյն տեղում, գ. 11598:

³ Գ.ԱԹ. Թ. Ազատյանի ֆ., XII բաժին, գ. 11653:

կիրերին և մտերիմներին, ընդգծում Մակար կարողիկոսի՝ ճեմարանի հոգևորական ճյուղը բարձրացնելու և բնտիր հոգևորականներ պատրաստելու ցանկությունը, ուրախանում է, որ ճեմարանի գոյությանը վտանգ չի սպառնում ցարական կառավարության կողմից: Հիմնական վտանգը նա տեսնում է «ճեմարանի նախկին աշխարհական ձևի մեջ» և գովեստով նշում է, որ Մակար Թեղուտցին ջանք չի խնայում «քրոքափել ծրագիրներէ նախկին աշխարհական ձևը եւ բոլորովին եկեղեցականի վերածել»¹: Նրան հոգում է այն հանգամանքը, որ ճեմարանի երեք լսարաններ ուզում են միացնել դասախոսության խնայողության համար. ըստ նրա՝ դա կարող է խախտել «ուսման աստիճանաւորութիւնը եւ չի հաշվի առնուելու առարկայի սկիզբը և վերջը»²:

Արմաշում գտնվելու ամբողջ ընթացքում Օրմանյանի ուշադրությունից չի փրփառ Էջմիածնում կատարվող ոչ մի դեպք: Նա առանձնապես ծանր է տանում Մակար կարողիկոսի մահը (1891 թ.) և ակնիտ հետևում է նոր կարողիկոսի ընտրության իրադարձություններին, նախապատրաստական աշխատանքներին, ընտրապայքարին, գնահատականներ տալիս կարողիկոսական բոլոր թեկնածուներին, քննարկում Արիստակս Սեղրակյան և Սուրիաս Պարզյան վեճերը՝ սրամուրեն այն համեմատելով «Դավիթ-Դանիելյան» վեճի հետ: Կարողիկոսական ամբողջ ընտրապայքարի ընթացքում (1891 թ. մայիսից մինչև 1892 թ. մայիս) Օրմանյանը հետևում է Էջմիածնի իրադարձություններին: Երեմիա Գալստյան, Սուրիաս Պարզյան, Արիստակս Սեղրակյան, Էջմիածնում պայքարի մեջ նետված պատկառելի եախսկոպոսների մի մեծ խումբ դառնում են Օրմանյանի քննարկումների, գնահատականների և վերլուծությունների առարկան: Հ. Սկրյանին գրած նամակներում ինքն առաջադրում է նոր թեկնածուների անուններ, հավանություն տալիս Ս. Պարզյանի՝ արևմտահայ թեկնածուներից կարողիկոս ընտրելու առաջարկին: Նշելով, որ Ս. Մուրադյան և Ս. Խորիմյան եախսկոպոսները հաշվից դուրս են (իրեն նախկին կարողիկոսական ընտրելի), Օրմանյանն առաջադրում է նաև Խ. Աշրգյանի, Ս. Խզմիրյանի և Հ. Վեհապետյանի թեկնածությունները: Մինչ այդ քննարկում էր այն հարցը, թե արևմտա-

հայերից ո՞վ պետք է պատգամավոր ընտրվի կարողիկոսական ընտրություններին մասնակցելու համար: Ընտրությունները պետք է տևի տնօւնային 1892 թ. մայիսին: Արևմտահայ հասարակական և հոգևոր գործիչների մեծ մասը հակված էր Ս. Օրմանյանին ուղարկել Էջմիածնի իրեն կարողիկոսական ընտրության պատգամավոր: Օրմանյանը չի ցանկանում բողնել իր աշխատանքը և իրեն պատգամավոր, որը պետք է արտահայտի արևմտահայ ընտրողների կարծիքը (իսկ ընտրողը՝ տսկ իրենը), մեկնի Էջմիածնի: Հ. Սկրյանին գրած նամակում նա հայտնում է, որ չի ցանկանում Արմաշից հեռանալ, քանի որ եթե հաշվի չառնի «վանահայրական գրադմունքը, վերատեսչական պարտքը», չի ուզում խարարել «ուսուցչական գործը», որովհետև շաբարական 25 ժամ դասախուտում է և կես ուսումնական տարին մեծ վեսա կիսասնի իր ուսանողներին. իր բացակայությունը նշանակում է «աշակերտաց տարեկան ընթացքը ջղակոտոր հանել»¹: Էջմիածնի գնալուց հրաժարվելու պատճառներից մեկն էլ համարում էր տեղի իրական կացությանը քաջածանոր լինելը (կարծես թե ակնարկում էր, որ կարող են լինել անարդար ընտրություններ): Չնայած իր հրաժարականին, Կ. Պոլստի պատրիարքն այն չի ընդունում, որովհետև Էջմիածնի մեկնելու փաստարդերն արդեն պատրաստելու ընթացքի մեջ են, արտաքին գործոց նախարարը պաշտոնապես դիմել էր մեծ եպարքոսին և «պաշտոնագիրն ալ կազմել տուած են»²: Օրմանյանն ստիպված էր համակերպվել: Նա 1892 թ. ապրիլին մեկնում է Էջմիածն՝ վանահայրական պաշտոնի փոխանորդությունը հանձնելով Ներսես ծայրագոյն վարդապետ Բարբողիմեռայանին, վարժարանի վերատեսչական փոխանորդությանը՝ Եղիշե վրդ. Դուրյանին: 1892 թ. մայիսի 5-ին Էջմիածնում տեղի են ունենում կարողիկոսական ընտրությունները և 72 քվեով Ամենայն Հայոց կարողիկոս է ընտրվում Սկրյանի Խրիմյանը³:

¹ Նոյն տեղում, գ. 11581:

² Նոյն տեղում, գ. 11582:

³ Թուրքական կառավարությունը չեղ ազատում Երոսաղեմի արտօրական բուրքահպատակ Խրիմյանին, արգել դնելով նրա կարողիկոսական ընտրության վավերացմանը: Միայն ուսական ցարի անմիջական միջամտորդյանը նա պատվեց արտիքից և ընտրությունից 17 ամիս անց նա օգվեց Ամենայն հայոց կարողիկոս

¹ Նոյն տեղում, գ. 11571:

² Նոյն տեղում, գ. 11523:

Որոշ ժամանակ անց Օրմանյանը վերադառնում է Արմաշ և վերսկսում իր աշխատանքները: Նա գործնական աշխատանքներ է սկսում Դարեվանքի անունով հոգևոր մամուլ հրատարակելու ուղղությամբ: Պոլսահայ մամուլի բազմարիվ օրգաններից նրան առաջարկում էին ուղարկել ցանկացած հոդված, և իրենք կիրապարակեն: Օրմանյանը մերժում է բոլոր առաջարկները և հայտնում է իր բուն նպատակը. «...Չուտ կրօնական թերը մը իմնենէ, որուն խմբագրականը ամբողջ մեր պիտի կարգադրիմք, ուղղութիւնը մեր պիտի տամք, հոգին մեր պիտի շնչեմք, ոչ շահու նպատակ ունեցող և ոչ աւելի ծախուող ձեւերու հետեւելով»¹: Երկար ժամանակ և մեծ ջանքեր են պահանջվում թերք հրատարակելու համար: Տարքեր օրգաններին հղած առաջարկները մերժվում են, սակայն Օրմանյանը համառորեն շարունակում է աշխատանքն այդ ուղղությամբ: Նրա ուշադրության կենտրոնում Ուրյուճյանի «Մասիս» էր, որի համար պատրաստ էր իր վրա վերցնել և «մատակարարութիւնը, եւ վարչութիւնը, եւ պատասխանատութիւնը»: Արմաշում աշխատող Օրմանյանը խսդրում է Կ. Պոլսի իր մտերիմ բարեկամին՝ Հովի. Սկրյանին. «Մասիսը» կերպով մը ձեռութիւն անցուցեք. և դպրեվանաց խմբագրութեամբ և Զեր մատակարարութեամբ լուրջ հանդէս մի հանիմք...»²: Ի վերջո, Օրմանյանին հաջողվում է կարգավորել «Մասիսը» իրք կրտսնական շաբարքերը հրապարակելու գործը. այն պետք է հրատարակեր Կ. Պոլսում, որտեղ ամեն շաբար Օրմանյանը նյութերը պետք է ուղարկեր նոյնիսկ հավելումով: Թիվ 1-ը պետք է լույս տեսներ 1896 թ. մայիսի 18-ին: Սկրյանին ուղղված նամակում Դարեվանքի տեսուչը մանրամասն նշում է թիվ 1-ի բովանդակությունը: Այդ հոդվածներն են:

«յառաջարան-կրօնարքերը մը.

կրքական-պէտքը.

կրօնական-կրօնի բարոյական.

բարովի նիւթ-սնամէջ մտքեր.

Ս. Գիրք-ընթերցում Ս. Գոոց.

(տես Կոստանդյան Է., Սկրտիչ Խրիմյան հասարակական-բաղարական գործունեությունը, Ե., 2008, էջ 349-352):

¹ Գ.ԱԹ, Թորոս Ազատյանի ֆ., XII բաժին, գ. 11604:

² Նոյն տեղում, գ. 11638:

ծխական-ժամագիրը

Ս. Գիրք-Սաղմոս, Հոփիսիմեան կուսանք, կանոնք նկաղեցոյց»¹:

Սայսի 18-ին նախատեսված համարը լոյս է տեսնում հունիսի 1-ին: Դրանից հետո Արմաշում գտնվող հոգևոր շաբարքերի խմբագիրը շաբարքա սկզբանի ուղարկում էր ամսագրի բարը հոդվածները Կ. Պոլիս և հայտնում, որ իր հոդվածների տակ պետք է ստորագրի «երեք սկզբնատերով Ս.Ս.Օ. ձևով» (Մադարիս Եպիսկոպոս Օրմանյան): Երեք թիվ 1-ում հոդվածների մեծ մասի հեղինակը խմբագիր հրատարակի Օրմանյանն էր, սպա հաջորդ թվի հեղինակները Դարեվանքի վարժարանի հոգևորականներն են, որոնք վարդապետ են օծվել, այդ պատճառով իրահանգվում է բոլոր անուններից հետո գրել վ. (այսինքն՝ Վարդապետ): Կրտսնական շաբարքերի վերաբերյալ, ըստ երևույթին, դիտողություններ են լինում, որոնց մասին Հ. Սկրյանը հաղորդում է Օրմանյանին: Վերջինիս պատասխանը լիովին բնութագրում է նրա գործելակերպը: Ընդունելով նյութերի և լեզվի համար կատարած դիտողությունները՝ նա պատասխանում է, որ դա խիստ անձնական մոտեցում է: ամեն մեկն ունի իր ոճը, և ինքը չի ուզում դրանք խառնված տեսնել: Խորիելով, որ ինքն ու իր սաներն ունեն իրենց յուրահատուկ ոճը և լեզվի համար երբեք «անարգանք» չեն կրել, Օրմանյանը ընդգծում է, որ ժամանակը կիսարքի ամեն ինչ, և Դարեվանքի շաբարքերը կտուսնա «Փիր ծեն ու ուղղութիւնը»: Սիևնոյն ժամանակ նա արգելում է Դարեվանքի հեղինակներից զատ այլ հեղինակների հոդվածները տպել՝ պոլուսն յուրած մի խորեր»: Շաբարքերի հրատարակությունն աստիճանաբար ընկնում է հունի մեջ: Ամեն շաբար Օրմանյանը 7-11 հոդված Արմաշից ուղարկում է Կ. Պոլսի նոր՝ հաջորդ թվի հրատարակության և նոյնիսկ պահեստային նյութեր: Սակայն Օրմանյանին հետաքրքրում էր ոչ միայն Դարեվանքի օրգան «Մասիսը», այլև հայ մանուկի տարրեր օրգաններ, առավելապես Էջմիածնում հրատարակվող «Արարատը», որտեղ գետեղվում էին Սայր Արոնին, Էջմիածնի ճեմարանին և հոգևոր դասին վերաբերող բազմաթիվ նյութեր: Այդ պատճառով և դրանց շնորհիվ Օրմանյանը մշտապետ կապ էր պահպանում տեղի միա-

¹ Նոյն տեղում, գ. 11643:

բանության և ամսագրի խմբագրակազմի անդամների հետ, այնպէս որ Դարեկանքը ամսագրի ամենահավատարիմ բաժանորդն էր: Սակայն արդեն 1895 թվականն էր. հայոց պատրիարքը Մատթեոս Իզմիրլյանն էր, որի օրոք ուժգնանում են հալածանքներն արևմտահայության նկատմամբ: Օսմանյան կառավարությունն արգելում է այլ երկրներից, առավել ևս Արևելյան Հայաստանից գրականություն կամ մամուլ ստանար: Օրմանյանը տեղեկանում է, որ «օսմաննեան բյունուանը նոր կանոն է սկսած, ոչինչ արտասահմանի հրատարակութիւն շտանեք եւ ոչ ուրեք, ուստի ինչ որ իր ձեռքը կանցնի ու կերպան կր կորսուին, եւ որովհետև ընտ մէջ Պոլսոյ և Նիկոմեդիոյ ուրիշ ճամպայ չկա, բան մը ընդունելու յոյս ալ չկա»¹: Ուրիշ ոչինչ չէր մնում, բան մասնավոր անձանց միջոցով ստանալը, բայց նրանք ևս ենթարկվում էին խիստ խուզարկության: Իբր անդորրություն հաստատելու նպատակով կառավարությունը «հեծեալ և հետեւակ զինուորներ կը շրջեցնէ, կամ կը սփոռ. զանազան կողմեր», բայց նրանք ավագակներից ավելի վատ են վերաբերվում հայ գյուղացիների հետ: Կ. Պոլսի հայոց պատրիարքին ուղած նամակում Օրմանյանը տեղեկացնում է, որ իրենց տարածքում տեղի բնակչության անվտանգությունն ապահովելու համար շրջող զինվորները համագործակցում են «զինեալ գողերու և չերքեզներու հետ». Ինց այլ ժամանակ նրանք Արմաշի հայ պահակների ձեռքից «խում են զենքերը և անհետանում»²:

Իրադրությունը երկրում հետզիեստ շիկանում է. սկսվել էին 1895–1896 թթ. համիլյան կոտորածները: Այդ ժամը օրերին Կ. Պոլսի հայոց պատրիարք Մ. Իզմիրլյանը արևմտահայ մամուլի օրգաններում հրատարակում էր իր հորդոր դիմումը ողջ արևմտահայությանը՝ օգնել «կարուեալ և արկածեալ ազգայնոց»: Առաջին արձագանքներից էր Մադարիա Օրմանյանը: Նա 1896 թ. հունիսի սկզբներին (6-ին) դրամահավաք է սկսում Դարեկանքի ամբողջ միարանության մեջ՝ տուժածներին օգնելու համար: Հավաքվում է «երկու հազար երկու հարյուր վարսունեկ ու կես (2261 1/2) դահեկան, որն Օրմանյանն իր նամակի հետ ուղարկում է պատրիարքին՝ խնդրելով բաժանել գումարը՝ ում հարմար է գտնում և «օրինել զմեզ հայրական օրինութեամբ»: Ուղարկված գումա-

րին կցված էր համագնակությանը մասնակցած միաբանների ցուցակը, նրանց տվյալ գումարի չափը: Ամենամեծ գումարը տվյալ էր Օրմանյանը՝ 540 դահեկան, ապա նրա տեղակալ Եղիշե Ղուրյանը՝ 216 դահեկան: Հանգանակությանը մասնակցել էին նոյնիսկ Դարեկանքի սաները՝ վճարելով ինչքան կարող էին 40, 30, 20, 10, 5 դահեկան: Դա ապագա հոգեորականներին հայրենասիրական և ազգասիրական ոգով դաստիարակելու մի դաս էր¹:

Արմաշի վանքի և Դարեկանքի աշխատանքներին զուգահեռ՝ վանքի փոխանահայրը և Դարեկանքի տեսուչը ուշադրությամբ հետևում էր արևմտահայության հոգևոր-ճշակութային կյանքի զարգացմանը: Քաջատեղյակ լինելով հոգևոր գրականությանը և հայերենի հարուստ բառապաշտակին՝ նա գործնական խորհուրդներու օգնում էր իրեն հարցուներ ուղղող անձանց: Դրանց շարքում առաջինը Հովհ. ավագ քահանա Սկրյանն էր, որը ձեռնամուխ էր եղել Սաղմոսը և Ս. Գիրքը աշխարհաբար քարգմանելու ծանր ու պատվավոր գործին: Վերջինի քարգմանությունը նա համարում էր համեմատաբար դյուրին: Օրմանյանը գտնում է, որ բոլորը (ինչպես և ինքը) «համոզեալ» պիտոր է պաշտպան լինեն «առոք զիրքը աշխարհաբար ընելու» գործին, բայց կարևորը համարում է ոչ թե «քառական» (քառացի) քարգմանությունը, այլ «աւելի իմաստի քարգմանությին լինելը, որ աղօրողը մտաց մեջ զաղափար մը կազմեր և աշխարհաբարին մէջն ալ բառը իմանալով, իմաստը շիմացած չմնար»²: Սաղմոսի քարգմանությունը համարելով նոր և դժվարին գործ՝ Օրմանյանը մտորում է այնպիսի կատարելությամբ քարգմանելու մասին, որ ընթերցողը շտարակութիւն, թե տեսատի մեջ կան նաև աշխարհաբար և գրաբար արտահայտություններ, կամ մտածեն, որ քարգմանությունը Սաղմոս չէ, նաև նման է «գրողբական սաղմոսին»: Խորհելով, որ սաղմոսը շատ իին է, այն քարգմանված է քազմարիկ լեզուներով, Օրմանյանը հայտնում է, որ «Սաղմոս քարգմանելէ դժուար գործ կարծեմ չկա»³: Թարգմանության ընթացքում այն անհրաժեշտ է համեմատել բնագրի հայտնության հետ, նոր ստեղծել «մեր գործածական օրինակի իմաստը, հունարենի հետ, նոր ստեղծել «մեր գործածական օրինակի իմաս-

¹ Նոյն տեղում, գ. 11635:

² Նոյն տեղում, գ. 11638:

³ Նոյն տեղում, գ. 11639:

¹ Գ.Ա.Թ, Թորոս Ազատյանի ֆոնդ, XII բաժին, գ. 11607:

² Նոյն տեղում, գ. 11627:

տը», անհրաժեշտ է սոուզեկ՝ ո՞րն է ճիշտ, և որը՝ սխալ, իսկ եթե չեն համապատասխանում՝ որը պետք է ընդունվի և հարգվի (պետք է խրթի՞ն քարզմանել, թե՞ պարզ): Ըստ Օրբանյանի՝ այդ հարցին կարող են լինել տարբեր պատասխաններ, բայց կարեոր է հարգել քարզմանչի «ուղեգիծը»: Դրանով հանդերձ՝ նա շատ հետաքրքիր դիտողություններ է անում, այնպիսիք, որ հնարավոր չէ անտարբեր անցնել որպանց կողըով նույնիսկ այսօր¹:

Հոգեմտավոր այդ աշխատանքները հավելյալ գործեր էին, որ կատարում էր վանքի փոխվանահայրը և Դպրեվանքի տեսուչը: Նրա հիմնական կոչումն այդ երկու հաստատությունները կարգավորելը և բարձր մակարդակի հասցնելն էր, ինչին որ ուղղում էր իր ջանքերն Օրմանյանը: Այդտեղ աշխատելու ողջ ընթացքում (1889 թ. աշնանից մինչև 1896-ի աշուն) նա ծավալում է և նյուրական, (գործնական), և հոգեւոր մեծ գործունեություն: Ակզրում վերակառուցվում են հրդեհված ուսումնարանն ու հյուրանոցը, ապա կառուցվում են եռահարկ ուսումնարանի նոր շենք՝ «1080 կանգուն տարածութեամբ», եռահարկ հյուրանոցի նոր շենք՝ 40 սենյակով, կիսաքանդ փուտր վերանորոգվում է, ապա կառուցվում է նոր փուտ, նոր ջրաղաց, շինվում է նոր ջրուղի, և վանքի ջուրն անցնում է երկար ճուղածությամբ:

Առավել ուշագրավ էին այն աշխատանքները, որոնք կատարվեցին հոգևոր-բարոյական թմագավառում. դրանցից ամենակարևորը արժանավոր հոգևորականների սերունդ պատրաստեն էր: Եռամյա կրթություն ստացած սարկավագներն ընդունում են «կուսակրօն քահանայութիւն և յարեղայութիւն»: Այդ կապակցությամբ Դարեկանքի տեսուչն իր ուրախությունն է: Կիսում պատրիարք Ս. Խօմիրյանի հետ: Որոշ ժամանակ անց 12 ընթացավարտ աշակերտներից 7-ը վարդապետ են ձևադրվում, իսկ մյուսների ձեռնադրության օրը ևս նշանակվում է: դրա-

Նոյն տեղում:

Եից հետո նրանք կարող են ծառայել ժողովրդին իրեն վարդապետ: 4 տարին ավարտած 8 աշակերտ սարկավագ են դառնում, առաջին տարին ավարտած 15 աշակերտ պետք է դպիր դառնան, ավարտած 20 աշակերտ պետք է մեկնեն զանազան վայրեր՝ ուսուցչության: Առյօն քանակի նորբերաներ քահանա են ձեռնադրվել: Դպրեվանք ընդունվել է մոտավորապես 90 աշակերտ, որոնց մի մասը հիվանդության պատճառով հետացել է վանքից: Այդ ձեռքբերումների մասին Օրմանյանը սկզբում հաշիվ է տալիս պատրիարք Մ. Խոմիքյանին. դա 1896 թ. հունիսի սկզբին լր, սակայն շատ ժամանակ չանցած՝ արդեն սեպտեմբերին, արդուիլամխյան ճնշումներից ստիպված՝ «երկար պատրիարքը» հրաժարական տվեց: Ծանր իրավիճակ էր ստեղծվել ողջ արևմտահայության, առավել ևս հայ հոգևորականության, հայկական ուսումնական հաստատությունների, դրանց շարքում նաև հոգևոր ուսումնարանների համար: Նման ծանր վիճակ է ստեղծվում նաև Արմաշի Դպրեվանքի համար: Այդ մասին Օրմանյանը նամակով դիմում է պատրիարքական տեղապահ արքեպիսկոպոս Բարբուղիմնոս Չամիչյանին¹: Հաղորդեալ նրան Դպրեվանքի ծանր կացության մասին՝ Օրմանյանն իր միակ միսիքարությունը համարում էր սարկավագների քահանայական օծումը, «ոքք դժուարին ժամանակաց մէջ մտադիր ստանձնեցին քրիստոնեական լուծը, և Տիրամբ....օրինութեամբ պիտի լինեն անշուշտ ի ժամուն Ժիր մշակներ»²: Դպրեվանքի վիճակն օրեցօր ավելի է ծանրանում. տեսուչ ստիպված էր աշակերտներին աստիճանաբար արձակել: Ակզրում նա իինք աշակերտի ճանապարհում է Արմաշից, երկուսն աշխատանքի են մեկնում իրենց զյուղերը, երրորդը Պոլսից էր և մեկնում է իր ծննդավայրը, իսկ վերջին երկուսն ուղարկվում են Ազգային հիվանդանոց, որով հետև ծանր հիվանդ էին: Սակայն Օսմանյան կառավարությունն արդեն

¹ Վերջինս պատրիարքական տեղապահ էր ընտրվել Ա. Արքիարյանի բնորչումով Կ. Պոլսի «պահպանողական վարչության» դեկանար Հովհաննես Նորյանի միջոցով: Իր «միակ երջանկությունը ստրանին ծառայենք» համարող Զամբյանը տեղապահության ողջ ներացրում ջանրեր էր բախտության պատրիարք ընտրվելու համար, բայց դա նրան չհաջողվեց (տե՛ս Արարատ, 1896, № 8, էջ 381, նաև Կոստանդնուպոլիս Է., Մկրտիչ Խրիմյան, հասարակական-բաղդարական գործունեությունը, էջ 395):

²ԳԱԹ, թ. Ազատյանի ֆ., XII բաժին, գ. 11656:

արգելել էր հայերի երթեւկը, այդ պատճառով իհնզին էլ ոստիկանները քանտարկում են Կ. Պոլսում: Դպրեվանքի տեսուչը, իմանալով այդ մասին, շտայ նամակով դիմում է պատրիարքական տեղապահին, որպեսզի գործի դնի իր ողջ հեղինակորյունը՝ Դպրեվանքի սաներին բանտից ազատելու համար, քանի որ նրանք ոչ մի հանցանք չեն գործել և կասկածի ենքակա չեն: Արմաշի փոխվանահայրը ցանկանում է արձակել վանքի վարդապետներին, քանի որ վիճակն այնքան ծանր է, որ բոլորին տեղում պահել հնարավոր չէ: Սակայն պատրիարքական տեղապահը ո՞չ օգնում է Դպրեվանքի հոգևորականներին, նաև նոր կուսակրոնություն ընդունած արեղաներին մեկնել այլ վայրեր աշխատելու, ո՞չ է օգնում է բարեկավել օրեցօր վատքարացող վանքի կացությունը: Պատրիարքական տեղապահից բացի՝ Օրմանյանը օգնություն և խորհուրդ է խնդրում ավագ քահանա Հ. Սկրյանից, նաև նախկին պատրիարք, Արմաշի անփոփոխ վանահայր Խորեն Աշրօյանից: Նրանց պատմելով վանքի ծառայութների, Դպրեվանքի աշակերտների և ուսուցիչների ծանր վիճակի մասին՝ հայտնում է, որ 18 վարդապետ և մի ամբողջ դասարանի սաներ, որոնք ստացել են «հայերէն վկայական և տաճկերէն հայտագիր», Նիկոլեղիայում բանտարկված են: Զցանկանալով վատ արտահայտվել պատրիարքական նոր տեղապահի մասին՝ Դպրեվանքի տեսուչը նախկին պատրիարքին գրում է, որ ըստ երեսույթին տեղապահը չի կարողանում Դպրեվանքի վիճակը բերևացնել, մինչդեռ ինքը պատրաստ է ցրել բոլոր աշակերտներին, միայն թե նրանք սովոր չմեռնեն: Օրմանյանը խորհուրդ է խնդրում Աշրօյանից, հայտնելով, որ «յօդուտ դպրեվանաց» սիրով պատրաստ է ընդունել ամեն մի խորհուրդ: Անարդյունք են անցնում ոչ միայն Աշրօյանին ուղղված նամակները, այլև պատրիարքական տեղապահ Բ. Չամիչյանին ուղղված բազմաթիվ խնդրանքները: Օրմանյանը 1896 թ. հոկտեմբերին տեղեկացնում է վերջինիս, որ կառավարությունն արգել է ցրել ցրելու Դպրեվանքի վարդապետներին և աշակերտներին, և նրանց բոլորին սպառնում է սովորական հուրյուն, իսկ ձերբակալված աշակերտները դեռևս գտնվում են բանտուս: Այդ օրերին պատրիարքական տեղապահը նամակով դիմություն է անում Դպրեվանքի տեսչին, թե ինչու ծանր պայմաններում Խաչվերացի օրը «չորս նորընծաներ բազարված են, առանց նկատի առնե-

լու դրամական անձկութեան պարագան»¹: Թվում է՝ պատրիարքական տեղապահն անտեղյակ էր Դպրեվանքի կանոնագրին և օրենքներին, որոնց մասին հայտնում է նրան փոխվանահայր տեսուչը: Օրմանյանը գրում է, որ ձեռնադրվածները երեք տարուց ավելի սարկավագ միարան էին և ավելի քառ էին վանքին. «Վարդապետ միարանը միջոց կ'ստանա անձին բաւելու և վանքին օգնելու»²: Իր վրայից հեռացնելով առանց տեղապահի գիտության ձեռնադրություն անելու նկատողությունը՝ Օրմանյանը հայտնում է, որ, Ազգային ժողովի Կենտրոնական վարչության 1892 թ. հովիսին հաստատած կանոնադրության 8-րդ հոդվածի համաձայն, երեք դասարան ավարտածները սարկավագ են ձեռնադրվում, իսկ երեք տարի «աարկավագութիւն ընտելերը աքեղան ձեռնադրվում»³: Օրմանյանի հանձնարարությամբ Կ. Պոլիս է ճանապարհվում նրա տեղակալը՝ Դպրեվանքի փոխտեսուչ Եղիշէ Շորյանը. ճանապարհին՝ Նիկոմեդիայում, կառավարական պաշտոնյանները նրան կանգնեցնում են և արգելում մեկնել Կ. Պոլիս: Բարդութիւննու Չամիչյանին հաղորդելով այդ ամենը՝ Դպրեվանքի տեսուչն ուղղակի խնդրում և աղաջում՝ գործադրել իր բոլոր ջանքերը, միայն թե ցրվող աշակերտները ջանտարկվեն և հասնեն իրենց հայրական օջախները, իսկ վանքի միարան հոգևորականների համար աշխատանքի տեղ գտնել մտուկան վիճակներում: Պատրիարքական տեղապահը ոչ մի քայլ չի ձեռնարկում Դպրեվանքի գործությունն ապահովելու համար: Աստիճանարար ծանրանում է Արմաշի վանքի և Դպրեվանքի վիճակը: Օսմանյան հարկային վարչությունը (տեսչությունը) փաստաթղթեր է ուղարկում վանքի փոխվանահորն ու Դպրեվանքի տեսչին (Մ. Օրմանյանին՝ պահանջելով մի քանի տարվա շնչարված հարկ՝ 650 ուկու պարտը⁴: Տեղապահ սրբազնին սովորական նամակին Օրմանյանը կցում է մեծ փաստաթուղթ՝ «Եղեամուտքի վիճակ» և «Պարտուց ցուցակ», որտեղ մանրամասն նկարագրված էին վանքի ծանր վիճակը և իր հրաժարականի պատճառները: Նա փաստում է նաև, որ տեղի վարչական մարմինները վանքից պահանջում են

¹Գ.Աթ., թ. Ազատյանի ֆոնդ, XII քամին, գ. 11667:

²Նոյն տեղում:

³Նոյն տեղում:

⁴Գ.Աթ., թ. Ազատյանի ֆոնդ, XII քամին, գ. 11669:

անարդարացի հարկեր, անընդհատ բարձրացնում դրանց շափու, որը վճարելը վանքի համար անհնարին է:

Նոյն այդ ժամանակ մոտակա բուրքական զյուղերի բնակիչները, հավատացած լինելով իրենց անձեռնմխելիության մեջ, հաշվի չեն առնում Դարեվանքի մասնավոր սեփականատիրոջ իրավունքները, հատում են նրան պատկանող անտառի ծառերը: Բազմաթիվ այլ փաստերով գոյց տալով վանքի անելանելի կացությունը՝ Օրմանյանը հայտնում էր պատրիարքական տեղապահին Դարեվանքի փակման անհրաժեշտության մասին. նման ծանր սոցիալական ու քաղաքական պայմաններում հնարավոր չեն շարունակել նրա գործունեությունը. «Արմաջու վանքի մեջ Դարեվանաց ուսումնարան դադարելով, անոր յարակից պաշտօներն ալ իրենց գոյութիւնը կը կորսնցնեն, իմ վերատեսչական և փոխանական պաշտօններս ալ միանգամայն, որով ես ալ սոյն պաշտօններէն հրաժարեալ պետք է նկատուիմ»¹: Փաստացի այդ հրաժարականից հետո երկու մեծ հավելվածներով Դարեվանքի տեսուչն ու վանքի փոխանակայրը ներկայացնում է այն ծանր փիճակը, որի պատճառով նա ստիպված էր դիմել այդ քայլին: Այդ հավելվածներում մանրամասն հաշվետվություն է տված վանքի կավածական արդյունքների, ուխտավորներից ստացած հասույթների, ապա կատարած ծախսերի մասին, որոնց մեջ մտնում են «ընդհանուր մատակարարութիւնը, կալուածք և շինուածք»: Ծախսերը կատարվել էին եկեղեցու, ուսումնարանի, աշխատողների աշխատավարձի, ուսուստի, կարասիների, փոխադրամիջոցների, մաքրության համար: Պատրիարքական տեղապահին ուղղված այդ փաստաթթերում ներկայացնելով վանքի և ուսումնարանի ծանր կացությունը, Օրմանյանը մի քանի առաջարկություններ է առնում՝ անհրաժեշտ համարելով «ուսումնարանը փակել, լոկ վանքի պահպանութեան շափ փարդապետ և սպասաւոր պահել»²: Նոյն այդ փաստաթթում Օրմանյանն ընդգծում է, որ նման պայմաններում անգամ «Դարեվանաց ներքին կենցաղը պահուած է միշտ կատարեալ վանքան ձեւին մեջ, միաբանութիւն եւ դայրոցականութիւն առհասարակ իրկան»:

բեւ մի վանական մարմին նկատուած են»¹: Պատրիարքական տեղապահին ուղղված նամակներն ու հաշվետվությունները մնում են անարձագանք և անարդյունք, այդ պատճառով Օրմանյանը ջանքեր է գործադրում Կ. Պոլիս մեկնելու բույլություն ձեռք բերելու համար: Որպեսզի փոխատեսուչ Ե. Դուրյանի նման իրեն էլ կառավարական պաշտոնյաները շկանգնեցնենին Նիկոլելիայում, նա խնդրանք նամակներ է հղում Հռվի. Սկրյանին, պատրիարքական տեղապահին, ապա Բ. դրանը մոտ կանգնած և հեղինակություն վայելող հայ աշխարհական անձնավորություններին: Արխիպային փաստարդերը լուս են, թե ինչ միջոցներով և ում օգնությանք է Օրմանյանին հաջողվում 1896 թ. օգոստոսին հասնել Կ. Պոլիս: Այնուղի ևս նրա ջանքերն արդյունք չեն տալիս: Փակվում է Դարեվանքը: Դադարեց այդ հոգեւոր ուսումնական հաստատության գործունեությունը, որն զգալի դեր խաղաց արևմտահայ հոգևոր-մշակութային կյանքում:

Օմանյան մայրաքաղաքում հայ ազգային կյանքը և մքնուրուը խիստ շիլացած էր. ճիշտ է, աստիճանարար բուլացել էին 1895–1896 թթ. համիլյյան կոտորածները, սակայն դրա հետևանքները դեռ երկար զգացվեցին արևմտահայության մեջ: Հայոց պատրիարք Մ. Խզմիլյյանի հրաժարականից հետո պատրիարքական տեղապահ ընտրված Բարքուղիմեռու Զամիշյանից դժգոհ էին բոլորը, այդ պատճառով Ազգային ժողովը և Կրոնական Ժողովը դադարած են համարում նրա գործունեությունը: Որոշ ժամանակ անց՝ 1896 թ. վերջին, Հայոց Ազգային ժողովի անդամ Հարություն (Արքին) Տատյանի և բանում գտնվող Արքի Ունճեանի սատարումով Մադարիս Օրմանյանն ընտրվում է Կ. Պոլսի հայոց պատրիարք: Նրա առջև բացվում է գործունեության լայն ասպարեզ:

Լրաբեր հասարակական գիտությունների, 2012, № 2-3, էջ 14-32:

¹ Նոյն տեղում:

² Նոյն տեղում:

1 Նոյն տեղում, գ. 11671:

XX ԴԱՐԱՍԿՂԲԻ ԱՌԱՋԻՆ ԵՐԿՈՒ ՏԱՄՆԱՍՅԱՎՆԵՐԻ ՆՇԱՆԱՎՈՐ ՀՈՔԵԼՅԱՆՆԵՐԸ

Հայ մշակույթի զարգացման գործում իր ծանրակշիռ տեղն է ունեցել Սլսիքարյան միաբանությունը, որն անգնահատելի գործունեություն է ծավալել երեք ուղղություններով.

1. Հայ մշակույթը և նրա համաշխարհային նշանակություն ունեցող գանձերը եվրոպական երկրներին ու նրա ժողովուրդներին ծանրացնելու ասպարեզում:

2. Հայ ժողովրդին հարորդակից է դարձել եվրոպական զարգացած երկրների մշակույթին:

3. Նոր աստիճանի է քարձրացրել հայագիտության բոլոր բնագավառները, մեծ ներդրում ունեցել հայոց պատմության և պատմագրության, փիլիսոփայության, լեզվի, լեզվաբանության և քառարանագիտության, բնական գիտությունների, դրամագիտության զարգացման բնագավառում:

Այդ բոլորն իրականացվել է հայրենի եզերից հեռու, երկրորդ փորձի հայրենիք դարձած երկու տարրեր օջախներում, որոնք թեալու, ճակատագրի բերումով, քաժանված էին, քայլ հոգեպես միշտ միասին էին՝ սրբազնությունուն իրենց հիմնադրի՝ Սլսիքար աքրահոր հիշատակն ու ավանդները: Այս երկու միբանություններն էլ իրենց անգնահատելի ծառայությունն են մատուցել հայ մշակույթի համարյա բոլոր բնագավառներում: XX դար ուրեմն դրած համայն հայությունն ի խորոց սրտի իր խոսքն ուղղեց Աստծուն՝ շնորհակալություն հայտնելով Սլսիքարյան երկու միաբանությունների գործունեության համար: 1901 թ.՝ դեռևս հովիս ամսին, Վենետիկի Սլսիքարյան միաբանությունը, համախմբվելով արքահայր Իգնատիոս Կյուրելյանի շուրջը, հաղորդեց ի բոր աշխարհի, որ պատրաստվում է իր կազմավորման երկիրյուրամյակը նշել 1901 թ. սեպտեմբերի 8-ին՝ սուրբ Տիրամոր ծննդյան օրը՝ հիմք ընդունելով այն փաստը, որ 1701 թ. սեպտեմբերի 8-ին Սլսիքար Սեբաստոցին իր շուրջն է համախմբել 7 դպիր և 4 արելա ու ստեղծել այս միաբանությունը, որի գաղափարը նրա մոտ ծագել էր Սևանա կղզու վանքում՝ Տիրամոր պատերի առաջ աղոթելիս:

1901 թ. հովիսին ստեղծվում է Կարգադրիչ մարմին՝ Հոսիկ Սևանաբանի դեկապարությամբ և Եսայի Տայեցու մասնակցությամբ, ովքեր դափնաներային խտրության շղնելով՝ հրավերքներ են ուղղում ամբողջ հայության հոգեսր առաջնորդներին, հայտարարություններ տպագրում հայ և եվրոպական մամուլի բազմաթիվ օրգաններում գտնելով, որ այդ միջոցառումը սուկ վանական նկարագիր չունի և քանի որ շոշովում է համամարդկային, համանեվրոպական ու համահայկական խնդիրներ, ցանկացած անձ կարող է իր մասնակցությունը բերել այդ տոնախմբությանը: Հատուկ անվանական հրավերքներ են ուղարկվում Ամենայն Հայոց Կարողիկոս Սկրոտիչ Խրիմյանին, Հռոմի պապին, Կ. Պոլսի հայ առաքելական և կարողիկ պատրիարքներին՝ խնդրելով, որ երեք նրանք չկարողանան իրենց ներկայությամբ պատվել տոնակատարությունը, ապա այնուեղ ուղարկեն իրենց ներկայացուցիչներին: Այդ հորեալանի տոնակատարությանը Վենետիկի միաբանությունը նվիրեց մի ծավալուն աշխատություն՝ «Յիշատակարան երկիրի լիրամնա յոթելինի Սլսիքարեան միաբանութեան ի Վենետիկ 8 սեպտեմբերի 1701–1901 սեպտեմբեր 8» խորագրով: 218 մեծալիր էջերից բաղկացած «Յիշատակարան» ամբողջական պատկերացում է տախս իր ժամանակակցին և հետագա սերունդներին՝ այդ հանդիսավոր միջոցառման ընթացքի վերաբերյալ: Մասնակիցների ելույթները, իդված հեռագրերը, միաբանության անդամների գործունեության քացահայտումները, տոնակատարության ընթացքում հնչած գնահատականները արժելորում են միաբանության անցած 200-ամյա (այժմ արդեն՝ 300-ամյա) ուղին: Հայության առաջ նրանք բնորոշվում են իրքի «անձնուեր զինուրներ», որոնք «հիմնեցին մեր գրական շենքը եւ զայն հետզհետեւ վեր բարձրացնելու միջոցներ հայրայրեցին մեզի նախնեաց գրքերու իրատարակութեամբ, մեր դասական լեզուն, մեր պատմութիւնը, աշխարհագրութիւնը և հնորինները մշակելով, օտար մատենագրութեանց իրաշակերտները բարզմանելով... տպարաններ ու դպրոցներ բանալով, գիտական թերթեր հիմնելով, հայկական Ակադեմիա մը հաստատելով եւ մրցելով եվրոպացոց հետ՝ ինչ բանի մեջ որ կարելի էր, աղղուելով անոնցմն, իրացուցին անոնց ձիքերը... առաջ կորսնցնելու ազգային նկարագիրն ու ողին: Այդ ամենը որին անոնք՝ անձնական ուժերով, անխառն օտար տարրերի»:

Հորելյանի տոնակատարության մասնակիցները համեստ և շափառոր արտահայտություններով գծում էին միաբանության անցած երկիրյուրամյա փշոտ ու տառապալից, բայց արգասարեր ուղին: Առավել քարձրարժերն օտարազգի մասնակիցների հնչեցրած գնահատականներն էին՝ ուղղված ոչ միայն միաբանության անդամներին, այլ նաև նրանց ծնող և սնող ժողովրդին: Այդ տեսակետից պետք է ընդգծել Վենետիկի պատրիարք, իոնոմեական կարդինալ Հովսեփ Սարտոյի խոսքը: «Եվրոպա՝ Արեւելի կայարտի իրեն կրոնը եւ գարզացումը. այդ Արեւելի հարազատ որդիներեն է հայ ազգը, որ հազարումներու ներքեւ չէ. կորսնցուցած իրեն հստակ նկարագիրը, իրեն գեղեցիկ ձիրքերը, որոնցով ինքը ներկա զարգացած Արևմուտքին կը պատկանի, բայց Արեւելի»: Կարոյինալն այդ բացառիկ ազգի զավակներին ճնշում է հարյուրամյակների և հազարամյակների կյանք՝ ի պայծառություն իրենց ազգին և հայրենիքին, որովհետեւ «Հայաստանը մեր ամենուն Հայրենիքն է»: Միաբանության հուզված անդամները շնորհակալություն են հայտնում և արքահոր շորթերով խոստովանում, որ Վենետիկն է իրենց երկրորդ հայրենիքն է, որովհետեւ նրա «մայրական գուրզութանքով» են պահպանել իրենց գոյությունը: Այդ տոնակատարության ժամանակ տեղի է ունենում Սլյիքար Սեբաստոց արձանի հիմնարկերը՝ արքահայր արք. Իօնատիոս Կյուրելյանի, Ամենայն Հայոց Կարողիկոս Սլյուտիչ Խրիմյանի ներկայացուցիչ, Եվրոպայի թեմի հոգենոր առաջնորդ Գևորգ Եպս. Յուրյունյանի և Կ. Պոլսու հոռմեադավան հայոց պատրիարքի ներկայացուցիչ Ռուսացն Եպիսկոպոսի անմիջական մասնակցությամբ: «Յիշատակարանը» հուզիչ պատկերացում է տալիս Սլյիքարյան միաբանության Վենետիկի մասնաճյուղի երկիրյուրամյա հորելյանի տոնակատարության հսմահայկական և համաելքութական ընդգրկումների մասին: Եվրոպայի օտարազգի հոգենոր և քաղաքական գործիչների, աշխարհասփյուր հայության տարրերի համար գարզացումների մասին իրենց հոգենորդների համար գարզացումների մասին առաջարկությունը կազմում է Ա. Բաշինչական մասնակիցները ոչ միայն մեծահարուստներ էին, այլև մշակութային օջախներ՝ Լազարյան ճեմարանի դասախոսական և ուսանողական կազմը, Ռիգայի հայ ուսանողությունը, հայկական բազմարիվ վարժարանների ուսանողներ: Գորգեր, հարուստ գրականության հազվադեպ նմուշներով լի գրադարաններ, գեղարվեստական բացառիկ արժեք ներկայացնող կտավներ, որոնց մեջ առանձնացվում է Գ. Բաշինչականի Սևանա լճի տեսարանը ներկայացնող կտավը: Առանձնապես շեշտվում է Գ. Գափամանայանի նվերը, որը բնորոշվում է որպես «ճարտարութեան և զիտուի զարմանալի միաբանություն»: Կտավը պատկերում է Մասիսի ամենաբարձր գագարը, նրա ստորոտին՝ Արարատյան բնաշխարհը, որի վրա իշխում է տիբուրյան ոզին, տղիսուրյունն ու բնորությունը ըստ առած բոշում են՝ իրենց ետևից գերանիով մահ սփոնզով և աշխարհն ավերակ դարձնելով: Այդ խորապատկերի վրա «Ալիշան, Դուրեան, Գամառ-Քարիպա, Սրուանձտեանց, Ալ. Ծատուրեան կը կողկողին ու կը զայրանան»: Նկարի խորրում պատկերված է Սլյիքար արքահայրը:

Նվիրատվություններ եղան նաև գումարներով: «Յիշատակարանը» (էջ 197–198) իրապարագում է նվիրատուների ցանկը և նվիրատվության մամբ: Ամենահոգիչն այն է, որ այստեղ ընդհանրապես չի խոսվում դավանական տարրերությունների, միաբանության տարրեր թերի տարածայնությունների մասին, այլ ընդգծվում է նրանց համամարդկային, համազգային գործունեության մեծ նշանակությունը: Պատահական չէ, որ հղած հեռագրերի մեջ առաջնակարգ տեղ է տրվում Վիեննայի Սլյիքարյան միաբանության արքահայր Արտեն Այտընյանի հեռագրին:

Աշխարհի տարրեր ծայրերից 300-ից ավելի հղած հեռագրերը սովորական հեռագրեր չեն, այլ յորատեսակ զիտական զեկուցումներ, ընդարձակ նամակներ: Արևմտյան և Արևելյան Հայաստանի տարրեր մշակութային կենտրոններ, հայկական զարդօջախներ, հայ մանուկի տարրեր և բազմարիվ օրգանների խմբագիրներ և աշխատակիցներ իրենց ջերմ վերաբերմունքն են արտահայտում միաբանության անդամներին: Այդ 300-ից ավելի հեռագրերից ամեն մեկն իր մեջ ամփոփում է 50-ից ավելի սոորագրություն: Հեռագրերի ջերմությունը չի եզրափակվում միայն բառերով, դրանք արտահայտվում են նաև նվիրատվություններով, որոնց մասնակիցները ոչ միայն մեծահարուստներ էին, այլև մշակութային օջախներ՝ Լազարյան ճեմարանի դասախոսական և ուսանողական կազմը, Ռիգայի հայ ուսանողությունը, հայկական բազմարիվ վարժարանների ուսանողներ: Գորգեր, հարուստ գրականության հազվադեպ նմուշներով լի գրադարաններ, գեղարվեստական բացառիկ արժեք ներկայացնող կտավներ, որոնց մեջ առանձնացվում է Գ. Բաշինչականի Սևանա լճի տեսարանը ներկայացնող կտավը: Առանձնապես շեշտվում է Գ. Գափամանայանի նվերը, որը բնորոշվում է որպես «ճարտարութեան և զիտուի զարմանալի միաբանություն»: Կտավը պատկերում է Մասիսի ամենաբարձր գագարը, որի վրա իշխում է տիբուրյան ոզին, տղիսուրյունն ու բնորությունը ըստ առած բոշում են՝ իրենց ետևից գերանիով մահ սփոնզով և աշխարհն ավերակ դարձնելով: Այդ խորապատկերի վրա «Ալիշան, Դուրեան, Գամառ-Քարիպա, Սրուանձտեանց, Ալ. Ծատուրեան կը կողկողին ու կը զայրանան»: Նկարի խորրում պատկերված է Սլյիքար արքահայրը:

Նվիրատվություններ եղան նաև գումարներով: «Յիշատակարանը» (էջ 197–198) իրապարագում է նվիրատուների ցանկը և նվիրատվության

շափր, իսկ ընդհանուր գումարը հասնում է 10728,35 լիտալական դրամի միավորի:

Բոլոր զեկուցումների և ելույթների մեջ «Յիշատակարան» առանձնապես ընդգծում է հայոց նահապետի՝ Ղևոնդ Ալիշանի պատասխան հուզիչ ելույթը, ում կյանքի 70 տարիները միահյուսված էին այդ միաբանության գործունեությանը, և ով, ցափոք, իր մահկանացուն կճեց տոնակատարությունից 2 ամիս անց՝ նոյեմբերի 9/22-ին: Արտակարգ հուզիչ է այն փաստը, որ այդ հորելյանի տոնակատարությունը նշվեց ոչ միայն Վենետիկում, այլև Կոստանդնուպոլսում, Պարտիզակում, Դիարբերիում, Ալեքսանդրապոլում, Կարսում, Կիալրոսի Ս. Մակարի վաճքում, Ալաղջսայում, Աբարումանում և բազմաթիվ այլ հայաբնակ վայրերում: «Յիշատակարանում» ոչ միայն բվարկվում են այդ վայրերի անոնները, այլև տեղի բրակիցները մանրամասն հաշվետվորյուն են ներկայացնում այդ տոնակատարությունների մասին:

Միաբանության հորելյանին անդրադասն ոչ միայն հայկական թերթերը և մամուլի այլ օրգաններ, այլև օտարերկրյա մամուլը: «Յիշատակարան» մանրամասն տեղեկություններ է հաղորդում, թե խորական, ֆրանսիական (գաղղիական), ռուսական, հունգարական, զերմանական, անգլիական մամուլի որ օրգանն ինչ հոդվածով է լուսաբանել այդ տոնակատարությունը: Փատորեն, 110 տարի առաջ հրատարակված այդ «Յիշատակարան» յուրահատուկ հաղորդակցության՝ կատար միջոց է դարձել պատմության քառութիներում, և այսօրվա ընթերցողը դրա միջոցով ամբողջական պատկերացում է կազմում այդ իրադարձությունների մասին:

XX դարասկզբի երկրորդ հորելյանը տասը տարի անց էր՝ 1911 թ., երբ Վիեննայի Սլիֆքարյան միաբանությունը հանդիսավոր պայմաններում նշեց իր կազմավորման 100-ամյա հորելյանը, «Հանդես ամսօրեայ» ուսումնաբերի 50-ամյակը և մեկ տարի անց, իրեւ այդ տոնակատարությունների առհավատշա, հրապարակվեց «Հուշարձան» գրական ժողովածուն: 450 մեծադիր էջերից կազմված այդ ժողովածուն խկապես մի հոյակապ հուշարձան է գալիք սերունդների համար, և այսօր, երբ նշվում է այդ միաբանության ծննդյան երկիրաբուրամյա տարեկիցը, այն մեզ ամբողջական պատկերացում է տալիս այդ իրադարձությունների

մասին: «Հուշարձան» սկսվում է առաջարանով, որի հեղինակն արքահայր գերապատվելի Ներսես Աղինյանն է, նա էջերում բացահայտում է այն պարագաները, որոնք իրենց հանդիսավորյան պատճառ դարձան: «Մին կը շոշափեր միաբանութեան խանձարութը, որ երկրորդ անգամ Ավստրիական ուստանին մեջ կը գտնելուեր 100 տարի առաջ: Երկրորդ կավետեր միաբանութեան ընդհանրական Արքայի՝ Գեր. Գրիգոր Արքեալիս. Գովիդիկեանի 50-ամեա յաջող տարիներու բոլորումը՝ այն օրեն ի վեր, երբ սուրբ օծնամք քահանա բարձրելոյն կը կարգուեր եւ կը թևակրխեր գործնական ասպարեզը...եւ երրորդը կը յիշեցներ միաբանութեան ուսումնաբերին՝ «Հանդես ամսօրեայ» 25-ամեա բազմարդին գործունութիւնը ի նպաստ հայ գրականութեան»: Քանի որ չէր կարելի լուրյան մատնել այս երեք հորելյանները, հայր Ակինյանը գտնում է, որ հրատարակված հոյակերտ «Հուշարձան» ապագայի ընթերցողներին ոչ միայն հաղորդակցից կդարձնի այս դեպքերին ու դնմքերին, այլ նաև «Հանդեսի» ու Եվրոպայի նշանավոր հայագետների մասնակցությամբ լույս կընծայի հոդվածների մի ընտրանի, որն խկապես «Հուշարձան» կդառնա ապագայի ընթերցողների համար: Այդ խմասով ժողովածուն խկապես կատարել է իր առջև դրված խնդիրը: Ժողովածուն էջ 1-66-ը ներտայալ մի մեծ տեսություն է՝ «Ակնարկ մը Վիեննական Սլիֆքարյան միաբանութեան հարիւրամեա գործունութեան վրա»: Այն սկսվում է Սլիֆքար արքահոր կենսագրությամբ, այս Կ. Պոլսում միաբանության հաստատումով տեղափոխվելլ Սորեայի Սերոն քաղաքը: Վիեննայի մասնացյուղը ևս Սլիֆքարյան միաբանության հաստատումը համարում է 8-ը սեպտեմբերի 1701 թ.: Ակնարկն ունի ենթաքայլեր, որոնք առանձին-առանձին ըննարկում են միաբանության գրական գործունությունը, վերլուծում սկզբից Վիեննակի, ապս Վիեննայի մասնացյուղերի նը, վերլուծում սկզբից Վիեննակի, ապս Վիեննայի մասնացյուղերի հրատարակած աշխատությունները՝ տարբերակում չնելով նրանց հրատարակած գործը, միջև, հավասարապես բարձր է գնահատում նրանց կատարելս-ընդգծում նրանց հաջողությունները դասական հայերենի կատարելս-գործնան, տարբեր բառարանների հրատարակության, բառարանագի-տուրյան զարգացման, սրատմագիտուրյան, աստվածաբանության, հոգեոր գրականության, վիխտովիայության, ընդհանուր և ազգային պատմության ուսումնասիրուղների կատարած գիտական սիրանքների

բնագավառում, մանրամասն բացահայտում միաբանության հոգևոր հայրեր, ականավոր զիտնականներ Ռափայել Ուզունյանի, Պողոս և Ալոնդ Հովհանների, Հովսեփ Գարբրծյանի, Մադարիա Գարյազյանի, Փիլիպոս Շամճեյանի, Արտեն Այտնյանի գործունեության բնագավառները (բոլորին բվարկել և նրանց իրատարակած աշխատությունները բնարկել հնարավոր չեն): Թվարկած անձնավորություններին ու նաև բազմարիվ այլ զիտնականներին նվիրված են առանձին հոդվածներ, տրված են դիմանկարները, վերլուծած նրանց գործունեությունը, նշված իրատարակած աշխատությունները, նույնիսկ օտարազգի զիտնականների գմանատականները: Մի օրինակ մանրամասն վերլուծված է Արտեն արք Այտնյանի զիտական գործունեությունը, լեզվաբանության և թերականության բնագավառում կատարած նրա ներդրումը, աշխարհաբարի և գրաբարի պայքարի արտացոլումը, որը զիտնականը գալիս է այն եզրակացության, թե «գրաբարը կատարած արդեն իոր շրջանը, հարկ է բանախրաց ռով մնալ և աշխարհաբարը՝ իրեն ժողովրդական բարքառ, ընտրել նոր գրականութեան լեզու, խնամել և մշակել»:

1895-ին նշեց նրա գործունեության 50-ամայկը, իսկ 1902-ին, եթք մահացավ, Վիեննայի քաղաքավետությունը գրեց «Այտնեանով այնպիսի մարդ մը կը պակասի, որուն գուգակշիռ երկրորդ մը՝ դարեր շեն կրնար յառաջ թերել»: Ակնարկում մեծ անդրադարձ է կատարվում հայր Կոլեմես Սիալիյանի գործունեությանը՝ իրեն «անմշակ զիտական մի ճյուղի», ով դրամագիտությանը նվիրված մեծ ներդրում ունեցավ Կիլիկյան Հայաստանի Ռուբինյան արքայատոհմի դրամների հայտնաբերման և նրանց մասին ընդարձակ հոդված-ուսումնասիրություն գրելու մեջ:

Հետաքրքիր բաժին կա նաև՝ նվիրված Ալիքարյան տպարանի գործունեությանը՝ իմբնադրման օրվանից մինչև 1901 թ.: Ընդգծված է նրա իրատարակած 21 հայերեն ատլասների նշանակությունը, ափսոսանով նշված, որ իրատարակել է ավելի շատ օտար լեզուներով (2000 հատոր), քան հայերենով (500 հատոր), սակայն տպարանն ունի հայերեն գրերի 70 տառատեսակ, և հայերեն տպագրված գրերն աչքի են ընկնում «տպագրական արուեստի մեծ նրբութեամբ» (Հուշարձան, էջ 46): Այդ տպարանում են լրիս տեսել միաբանության անդամների նշա-

նավոր աշխատությունները, «Եվրոպա» շաբարաքերը, «Հանդես աճսորեան», տարբեր բառարաններ, 1837 թ. 25, իսկ 1893 թ. 50 լեզվով լույս տեսավ «Որ օրինեն զայնոսիկ» աղորքը: Ակնարկում բավականին հետաքրքիր տեսլեկություններ է պարունակում «Ալիքարեան մատենադարանը» (էջ 47–49) բաժինը: Այսուղի նշվում է, որ Տրիեստում հավաքած գրքերի փոքր մասն է հաջողվում թերել Վիեննա: Սակայն տեղում միաբանությանը հաջողվում է գնել Վելարավորաց վաճրի 8000 հատոր մատենաշարք, ապա տեղի «բարձրապաշտոն անձանց» նվիրատվություններով ստեղծում հոգևոր մատենադարան: Դեռ 1863 թ. մատենադարանին ուներ 63.000 հատորներ, որոնցից հայերեն էին 11.000-ը: Մատենադարանում պահվում էին նաև 460 հայերեն թերք, եվրոպական հեղինակների՝ հայերի մասին գրված 1900 հատոր, 950 հայերեն ձեռագիր, նաև փոքր թվով հունարեն, լատիներեն, ասորերեն, արաբերեն, դպտերեն, վրացերեն, գերմաներեն, ֆրանսերեն (գաղղիկերեն) ձեռագրեր: Հակոբ Տաշյանը 1895 թ. կազմել և իրատարակել է հայերեն ձեռագրաց ցուցակը՝ 1500 էջ ծավալով:

Ակնարկի հեղինակի ուշադրության կենտրոնում է եղել միաբանության բանգարանը՝ հանրաբանական, կենդանաբանական, բուսաբանական, բնագիտական, հնախոսական, ազգագրական և դրամագիտական հավաքածուներավ, որոնք ցուցադրված են երեք սրահներում: Առաջին սրահում հանրաբանական հարուստ հավաքածուն էր՝ 18.000 նմուշով, նաև խեցիների 7000 կտորից բաղկացած հավաքածուն: Աղքատ էին համարկում բուսաբանական և կենդանաբանական բաժինները: Երկրորդ սրահն աճրողովվին հատկացված էր բնագիտությանը, քիմիայի և ֆիզիկայի փորձերին: Երրորդ սրահը նվիրված էր հնախոսական (արխեոլոգիական), ազգագրական ու դրամագիտական հավաքածուներին: Կային 4000 տարբան հնության 2 եզրական մումիա, բազմարիվ արձաններ, իին հայկական քանդակներ և մեծադիր յուղանկարներ: Մեծ ուշադրություն էր կու Սիալիյանի, Սիմոն Անոռնյանի և Գրիգորիս Գալեմբերյանի ջանքերով ստեղծված դրամագիտական հավաքածուները, որտեղ կային 16.000-ից ավելի հին դրամներ, հազվադեպ օրինակներ, ամենահարուստը և ակնառուն 3000 կտոր ուրինյան հայկական դրամների հավաքածուն էր: Այդ բաժնում կար նաև սպարեւ-

կան, իսկ Արշակունյաց, Սասանյան, իին Խոնական, Խոռոմեական, Բյուզանդական, արաբական, օսմանյան, արևելյան պետությունների 1500 և արևմտյան երկրների 4000 հնադրամ: Ինչպես տեսնում եք, քանօքարան արտավարդ հարուստ էր և պատիվ կրերեր ոչ միայն միարանության, այլ նաև ցանկացած պետության: Ակնարկի մյուս բաժինը նվիրված է միարանության մամուլի հիմնադրման ուղղությամբ գործադրած ջանքերին: Դեռևս 1819-ին փորձեցին սկիզբ դնել «Ծանոթութիւնը վաճառագիտութեան» թերթին, որն ընդունելություն չգտնելով՝ առաջին համարից հետո դադարեց: Երկրորդ ձեռնարկը եղավ 1847-ին, երբ Հակոբ Շելեայի Տուոյանի խորհրդով և հորդորով ձեռնարկեցին «Եվրոպա» շաբարաթերթի հրատարակությունը՝ գիտական-քանախրական և քաղաքական բաժիններով: 11 տարի անց՝ 1858-ին, զգացին, որ քաղաքական բորերի կարիքը չկար, այդ ժամանակ էլ շաբարաթերթը դարձավ Երկշաբարաթերթ, իսկ 1863-ի վերջին ընդհանրապես դադարեց նրա հրատարակությունը: Միարանությունը «Եվրոպայի» գլխավոր արդյունքն է համարում, որ նրա էջերում աշխարհաբարը մաքրվեց «օտարություններից և ուսմկաբանությունից», բարձրացավ գրական լեզվի մակարդակը: 1886 թ. Միարանությունը ձեռնարկեց մի նոր ամսաթերթ՝ «Համբես ամսօրեայրարությական, ուսումնական, արուեստագիտական» անվանումով: Ուներ մի քանի քամին՝ պատմություն, քանասիրություն, արվեստագիտություն, տեսչագիտություն, նոյենիսկ՝ վիճակագրություն և քաղաքագիտություն: Ընթացքում այս քամինները վերացան, և այն դարձավ հայագիտական ուսումնաթերթը. միարանության 100-ամյա տարեկան նշվում էր դրա 25-ամյակը: «Համբես ամսօրեային» թրակցել են քաղմարիվ անվանի հայագետներ՝ Նիկողայոս Աղոնց, Արշ. Ալյոյանյան, Հրաչյա Աճառյան, Ստ. Մալխասյան, Գրիգոր Խալարյանց, Առաքել Սարուխան և ուրիշներ, դրանց շարքում նաև՝ քաղմարիվ օտարազգի հայագետներ: «Համբես ամսօրեան» մինչև օրս էլ շարունակում է իր երրոր: «Հուշարձանի» ամենածանրակշիռ քամինը, որն ընդգրկում է մոտավորապես 350 էջ, օտարազգի և հայ գիտնականների 40 հոդված ուսումնասիրություններն են (Գալենքերյան, Նորայր Բյուզանդացի, Վերեր, Գ. Իսալարյանց, Կոնիքեր, Անտոնան Մեյյեն, Ստ. Մալխասյան, Հ. Աճառյան, Մարկվարտ, Ավինյան, Ստրիգովսկի, Կ. Բատմաջյան, Բ. Կյուլեսերյան և շատ ուրիշ-

ներ. ինչպես նշեցի, 40 հոդված, 40 անվանի հեղինակ և 40 շատ հետարքի հարցեր ու պատասխաններ): Դա խսկապես մի փառահեղ հուշարձան է, որ պատիվ կրերի ցանկացած գիտական հիմնարկության: Վերջում ցանկանում են նշել, որ այս երկու հորենանների և կարեսոր ժողովածուների մասին տեղեկություն են ստացել՝ շնորհիվ մի այլ ծանրակշիռ հայագետի՝ Մալարքիա Օրմանյանի, որի «Ազգապատում»-ի բառը և գիտություններում հեղինակը քաղմարիվ անգամ վկայակոչել է այս ժողովածուները, աշխատությունները: Օրինությամբ և շնորհակալությամբ հիշելով Վենետիկի և Վիենայի Սլիֆարյան միարանության մեր հայրենակիցներին՝ երախտիքի խոսք ուղղենք նաև Ս. Օրմանյանի հիշատակին, որի ծննդյան 170 տարեկան է այս տարի:

Քրիստոնյա Հայաստան, 2012, № 2-3:

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ, ՄԱՂԱԶԻԱ ՕՐՍԱՆՆՅԱՆ ԵՎ ՕՏԱՐԱԶԳԻ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԸ

Երկարատև և դժնիսկ պատմության ընթացքում Հայոց Եկեղեցին ապրել է վերելքներ ու վայրէջքներ, ունեցել անկախ պետականություն: Մեծ ու փոքր տարածքներով, ականատես եղել պետականության կորստին և վերահսկատմանը, այդ բարորով հանդերձ մնացել իր ժողովրդի պահապանն ու ամուր հենարանը: Պետականությունից գորկ հայության համար Հայոց Եկեղեցին հաճախ կատարել է նաև աշխարհիկ իրավասություններ, և հայ ժողովուրդը, ի դեմք նրա տեսել է իր հզոր պաշտպանին: Աշխարհի քրիստոնյա երկրների մեջ Հայ Եկեղեցին պահպանել է իր բարձր պատիվը, հավատարիմ մնացել առաքելական հնագույն Եկեղեցու ավանդույթներին:

Մասմեղական քաղմարիվ քոչվոր ցեղերի հարձակումների պատճառով իր պետականությունը կորցրած հայությունը հաճախ է իր հայուցը հառել քրիստոնյա Եվրոպային՝ նրանից ակնկալելով օգնություն: Հայոց Եկեղեցու անվանի հայրապետները (Միքայել Սեբաստացի, Հա-

կոր Զուղայեցի և այլը) օգնության խնդրանքով պատվիրակություններ են ուղարկել Եվրոպական պետություններ, բայց այնտեղ Հռոմի պապը օգնության դիմաց առաջարկել է ընդունել կարողիկություն, փոխել դաշտանանքը: Բազմարիվ հասարակական գործիչներ (Խարայել Օրի, Հովսեփ Էմին և այլը) իրենց հայացքը հառել են հեզիետն հզրացող հյուսիսային հարեւանին՝ քրիստոնյա Ռուսաստանին, սակայն նրանց պատասխանը միշտ բխել է իրենց ծավալապաշտական ձգտումներից և Հայաստանը եղել է շահարկման առարկա:

Դարեր շարունակ, չնայելով իրենց քաղաքական անքարեհույս վիճակին, Հայոց Եկեղեցին և հայությունը հավատարիմ մնացին իրենց ավանդույթներին և դավանաքին, ոչ մի գոտով չխարվելով հզոր պետությունների խոստումներից: Այդ հանգամանքը խիստ զայրացնում էր հոնադավան, առավելապես կաթողիկ հովվապետներին, և նրանք իրենց երկրներում հայադավան, ազգային առաքեական ուղղափառ Եկեղեցին ներկայացնում էին իրքեւ հերձվածող, աղանդավորական Եկեղեցի: Եվրոպական տարրեր դեկավարները չէին հանդուրժում, որ պետականությունը կորցրած, փորբարանակ մի ժողովուրդ իմբռուրույն դավանանք ունի և աշխատում էին սեպ խրել, խախտել այդ ժողովրդի միասնությունը: Դա նրանց երրեմն հաջողվում էր: Արևմտահայ մշակորային կենտրոն Կ. Պոլսում, որտեղ գոյություն ուներ մեծ հայկական համայնք, կաթողիկներին հաջողվեց պառակտել համայնքի միասնությունը, ստեղծվեց առանձին կաթողիկ համայնք, որը բուրքական պետական վարչական ապարատի կողմից ստացավ «կաթողիկ միլերի» անվանումը: Ինուր էին համազգային զաղափարների տեր հայ և կաթողիկ դավանանքի մշակորային գործիչները միասնություն քայլողում (Տուր ինձ քո ձեռքը, եղբայր եմք մենք), բանաստեղծություններով ոգեշնչում տարրեր դավանանքների հայերին միասնության զաղափարները: Պառակտում է առաջանում նոյնիսկ հոռմեադավան հայերի շրջանում: հասունան և հակահասունյան պայքարը այդ պառակտման ցայտուն դրսնորումն էր: Մի խումբ հայ կաթողիկներ դիմագրավում են պապականությանը, հոռմեադավան հայերին կաթողիկության մեջ ծովելու, ազգային արմատներից հեռացնելու քաղաքականությանը: Դրանցից էր Հռոմի աստվածաբանական կաճառի անդամ, հոռմեադավան բնտանիքում ծնված, Հռո-

մուս բարձրագույն կրթություն ստացած Մադարիա Օրմանյանը, որն ուժգին պայքար է ծավալում հռոմեադավան հայությանը ձուլելու քաղաքականության դեմ: Այդ պայքարի արտահայտությունն են դասնում 1870 և 1872 թվերին խոպերեն լույս տեսած «Հայ արեւելեան կարողի-կեայր» և «Ռեներութուս կամ Հայր և պապութին» աշխատությունները և դրանց գաղափարական շարունակությունը՝ 1872 և 1873 թթ. Փրանսերեն լույս տեսած «Արեւելեան կարողիկաց կրօնական ազատութիւնը և քաղաքական իրաւունքները», «Վատիկան և Հայր»¹ գործերը, որոնք անցան պապական արգելված գրքերի շարքը: Հռոմում Կարողիկ Եկեղեցու վարդապետ օծված Մ. Օրմանյանը 1876 թ. զալիս է Կ. Պոլիս և որոշում իր կապերը խօսել Վատիկանից, վերադառնալ Հայ Եկեղեցու գիրկը: «Հռոմեադատականուն հեռանալու միտքը իմ վրա ոչ կիրքի մը վայրկենական որոշում և ոչ շահադիտութեան կեղծիք էր, այլ երկար ատեն խորհուած և կշռուած, և խոհական քայլերով յառաջացած գործ մը եղած է»²: 1879 թ. հոկտեմբերի 28-ին գրեթե «ժողովրդական ցույցի» կերպարանուով 75 հռոմեադավանի հետ (30 կին 45 տղանարդ) Օրմանյանը Կ. Պոլիսի հայոց պատրիարք Ներսես Վարժապետյանի քաջակերանուվ վերադարձավ Հայ Եկեղեցու գիրկը և ստացավ ծայրագույն վարդապետության աստիճան: 1880 թ. ապրիլին Օրմանյանն ընտրվեց Կարինի հոգեուոր առաջնորդ³: 1886 թ. Ամենայն Հայոց Կարողիկոս Մակար Թեղուտոցու կողմից մի քանի արժանավոր հոգեւորականների հետ նա օծվեց Եպիսկոպոս: Դեռևս Հռոմում Աստվածարանական կաճառի անդամի կոչում ստացած Օրմանյանը քաջատեղյակ էր ընդհանուրապես քրիստոնեության, մասնավորապես Հայ Առաքելական Եկեղեցու պատմությանը: Դրա շնորհիվ և Հայոց Հայրապետի քաջակերանուվ նորընծան Եպիսկոպոսը 1886 թ. «Արքատ» ամսագրում հոդվածաշարով լույս ընծայեց «Արք Հայաստանայց» աշխատությունը, որը շուտով լույս տե-

¹ Տես Հ. Թ. Սիրունի, Օրմանեան և իր ժամանակը. «Եղմիածին», 1961, Եր., էջ 37:

² Ա. Օրմանյան, Խոհեմ և խօսք, Երևանէմ, 1929, էջ 6.

³ Սեր Խանդիք դուրս է անդրադառնավ նրա առաջնորդական գործունեությանը և մասնակցութեանը «Պաշտպան Հայրենիաց» ազատագրական զաղտնի կազմակերպության գործունեությանը: Այդ մասին տե՛ս Ո. Փ. Հովհաննեսյանի արժեքավոր աշխատությունը:

սակ իբրև առանձին աշխատություն¹: Անգամ հպատակի ծանրությունն այդ գրքույկին (93 էջ, 14 գլուխ) հաղորդակցում է մեզ նորրենա եպիսկոպոսի աստվածաբանական հսկա գիտելիքների պաշարին: Առաջին վեց գլուխներում տարով Հայ Եկեղեցու նախարարսավորչյան շրջանի քրիստոնյա եպիսկոպոսների գործունեությունը, բացատրելով, «Եկեղեցական դասակարգութիւնը», կարողիկոսական աստիճանի առանձնահատկությունը, Մեծ ու Փոքր Հայքերի առաքելական հաստատությունների գոյությունը, հեղինակն անդրադառնում է Հայ Եկեղեցու և մյուս քրիստոնյա Եկեղեցիների հարաբերություններին: Այդ գրքույկում աստվածաբան հոգեւորականը հանդես է քերում գիտելիքների արտակարգ լայնություն և խորություն: Այդ իմաստով առավել հետաքրքիր է աշխատության Զ («Առաքելական հաստատութիւն») գլուխը, որտեղ անդրադառնում է առաքյալների և նրանց հետնորդների գործունեությանը: Անդրադառնուվ հայ և քրիստոնյա մյուս Եկեղեցիների փոխհարաբերությունների փաստերին, Մ. Օրմանյանը պատմական հետազոտությունների հիման վրա, հնագույն հայ և այլազգի պատմիչների վկայություններով ապացուցում է Հայ Եկեղեցու անկախությունը բոլոր հնավանդ Եկեղեցիներից: Բացահայտելով, որ Գ-րիզոր Լուսավորչից առաջ մենք ունեցել ենք այլ բարձրաստիճան հոգեւորականներ, որոնք սերտորեն կապված լին Թաղեռն և Բարդույիմեռն առաքյալների գործունեությանը, Օրմանյանն ապացուցում է, որ թեեւ Գ-րիզոր Լուսավորչից՝ քրիստոնեությունը պետական կրոն ընդունած Հայաստանի առաջին Կարողիկոսը, հայրապետության աստիճանն ստացել է Կեսարիայում, բայց մինչ այդ քրիստոնեությունը լայն ծավալ էր ընդունել Հայաստանում և շնայած պետական-վարչական հալածանքներին, նա աստիճանաբար ընդլայնում էր իր գործունեության շրջանակները: Հայ եւ օստար հնագույն պատմիչների Վկայություններով Օրմանյանն առանձին գլուխներում անդրադառնում է Հայոց Եկեղեցու և Կեսարիայի, Անտիոքի, Կոստանդնուպոլիսի ու Հռոմի Եկեղեցիների փոխհարաբերությունների հարցերին², ապացուցում, որ

շնայած Հայ Առաքելական Եկեղեցին ձգտել է քարի դրացիական փոխհարաբերություններ հաստատել նշյալ քրիստոնյա Եկեղեցիների հետ, բայց միշտ եղել է ազատ և անկախ Եկեղեցի, երբեք չի ենթարկվել այլ քրիստոնյա Եկեղեցու և պետության, հավատարիմ է մնացել իր հնավանդ սովորույթներին: Համեմատելով այդ բոլոր Եկեղեցիների հոգեւոր աստիճանները, Օրմանյանը ցույց է տալիս, որ ոչ մի Եկեղեցու ամենաբարձրաստիճան հոգեւորականը (մետրոպոլիտ, արքեպիսկոպոս, երգարք, պատրիարք, Կ. Պոլսու տիեզերական պատրիարքություն և Հռոմի պապություն) չունի ձեռնադրության կանոն և միայն «Հայաստանեայց Եկեղեցոյ կարողիկոսութիւնն է», որ տրվում է մյուռնի օծմամբ և անվանվում է «օծեալ Հայրապետ»: Հայ Եկեղեցու նվիրյալ հոգեւորականը համեմատելով բոլոր քրիստոնյա Եկեղեցիների գործունեությունը բավականին աներկյուղ, հաստակած և արտակարգ անաշառ զնահատում և ապացուցում է, որ Հայոց Եկեղեցին իր հավատի պարզությամբ, հնավանդ դավանությամբ և կանոնադրության պահպանությամբ միշտ զրավել է առաջնակարգ տեղ: «Քրիստոսեան Եկեղեցեաց ամեն ճիշերէն աւելի Հայաստանեայց Ս. Եկեղեցին անտիւնդ և անադարտ կը պահէ նախկին դարուց հաւատը, նախկին դարուց դաւանութիւնը, նախկին դարուց հիմնական կանոնները»¹: Չնայած «հզորագոյն և բազմագոյն» քրիստոնեական Եկեղեցիների գոյությանը, դարերի ընթացքում վերջիններս նոր կերպարանք տվին հնին և այնպիսի փոփոխություններ կատարեցին իրենց կանոնադրության մեջ, որ լուսաբանելու փոխարեն ամեն ինչ եղեցին և «աստուծաշունչ պատգամները խեղաքիրեցին»: Խսկ մեր հնավանդ Եկեղեցին «Երկարտեև դժուարին ժամանակների» և «դժպիկի պարագաների» պայմաններում անգամ «... իբրև գիտելիկ իրաշալի, որ իսկ աճիւնէն կեանս կատանայ»², - ահա Օրմանյանի եզրակացությունը: Դարերի ընթացքում հասնող և վերածնվող փյունիկի հետ և համեմատվել ոչ միայն մեր Եկեղեցին, այլև մեր երկիրը և մեր ժողովուրդը: Մաղաքիս Օրմանյանի «Արոռ Հայաստա-

¹«Արոռ Հայաստանեայց» գրեց Մաղաքիս եպիսկոպոս Օրմանյան, առաջնորդ Կարճոյ, Վաղարշապատ ի տպարանի սրբոյ կարողիկէ Եջմիածնի 1886-Ռ-ՑԼ.Գ., հրամանաւ S. S. Մակարայ Վեհափառ սրբազնագոյն Կարողիկոսի Ամեմայն Հայոց:

²Տե՛ս Անդ, Է, Թ, Ժ գլուխները:

նեայց» աշխատությունը մեծ արձագանք առաջացրեց ոչ միայն Արևելյան, այլև Արևմտյան Հայաստանում¹:

Սի ամբողջ տարի Էջմիածնի Գևորգյան ճեմարանում աստվածաբանություն եւ հոգեւոր այլ առարկաներ դասավանդող Օրմանյանն արժանացավ ցարական կառավարության քաղաքական անվտակությանը եւ չնայած Մակար Կաքողիկոսի ջերմ պաշտպանությանն ու համապահնումներին, ինուացվեց Էջմիածնից, ընդհանրապես Արևելյան Հայաստանից՝ օտարահպատակ (քուրքահպատակ) լինելու պատրիարքով։ Սակայն, Արեւածան Հայաստանում նա չկարողացավ վերստին ստանձնելու իր նախկին պաշտոնը՝ Կարինի հոգեւոր առաջնորդությունը, որովհետեւ «Պաշտպան Հայրենյաց» կազմակերպության հայտնաբերումը քուրքական կառավարության կողմից, նրան դարձրել էր քաղաքականապես անբարեհույս նաև քուրք պետական ապարատի աշբում։ Այդ ժամանակ Կ. Պոլսի հայոց պատրիարքն էր Խորեն Աշրօյանը, որը 1888 թ. սեպտեմբերին Կ. Պոլսում գումարեց եպիսկոպոսների հավաք Հայ Եկեղեցու քարեկարգության հարցերը քննարկելու նպատակով։ Տարրեր առաջարկությունների հետ հնչեց նաև Ս. Օրմանյանի կարեւոր առաջարկությունը՝ Եկեղեցու քարեկարգությանը ձևանամուխ լինելուց առաջ անհրաժեշտ է պատրաստել զարգացած և կրթված հոգեւորակտնորդյուն։ Միաձայն ընդունված առաջարկն իրագործելու համար անհրաժեշտ էր Դպրեվանք քացել։ Ամենահարմար վայրը համարվեց Կ. Պոլսին մերձակա Արմաշի վանքը, որի վանահայրը նորընտիր պատրիարքն էր։ Երեք հարյուր տարի գոյություն ունեցող վանքը (ԺԷ. դարից) միշտ եղել էր կրթական օջախ։ Վանահայրության փոխանորդ դարձած Մադրիդի նախարար է ապահովություն տալու համար անհրաժեշտ էր առաջարկությանը 1889 թ. սեպտեմբերին Արմաշում Դպրեվանք քացեց՝ աշխատանքի երկրորդ տարում իրեն աջակից ունենալով երիտասարդ վարդապետ Եղիշե Դուրյանին։ Տեղում քացվեց Եկեղեցական քարձագույն ուսումնարան, որտեղ ուսուցման առաջին երեք տարին հավասարեցված էր լրիվ միջնակարգ դպրոցի ծրագրին։ այն ավարտողմերը կարող էին

¹ՀՀ ԱՍ Փ. 56-ի, ցուցակ 7-ում ցտնվում է թիվ 868 մեծ գործը, որը ցույց է տալիս թե ինչ արձագանքներ ե ունեցել այդ աշխատությունը և ինչպես տարրեր վայրերից նամակներ են ստացվում աշխատություններունց հունաց առարկությունուն:

տաղցորյուն աճել¹: Հաջորդ երեք տարին կրոնական բարձրագույն կրթություն էր տալու սահմերին: Արտակարգ բարձր էր հայագիտական առարկաների դասավանդումը: Դպրելանքն արդարացրեց իր վրա դրած հույսերը: Սի քանի տարի անց՝ 1895 թ. վարդապետական թեզ ներկայացրին 7 սան, 1896-ին՝ հինգը, իսկ մի տարի անց՝ ես մեկը: Կուսակրոս հոգեւորական դարձած այդ 13 հոգին կարողացան աճեցնել նոր սերունդ, որը հասավ նվիրապետական բարձր պաշտոնների²:

Աբդուլհամիլյան կոտորածների, ազատազրական շարժման ալիքի բարձրացման, ինքնապաշտպանական մարտերի ուժգնացման և հայ ազգային կուսակցությունների պատասխան եղույթների պայմաններում տեղի ունեցած պատրիարքական ընտրությունների ժամանակ Գարբիել Նորասունկյանի, Տիգրան Ցուսովյանի սատարումով պատրիարք ընտրվեց Մալարիա Օրբանյանը, որի 1880-ական թթ. ծավալած ազգայիրական գործունեությանը տեսչակ էր արյունախտմ սույրանը:

Երկար ու ծիգ պատրիարքական գործունեության շրջանում (1896-1908 թ.) Օրմանյանը կարողացավ վարել հավասարակշռված քաղաքականություն, այդ ընթացքում տեղի չտևեցան զանգվածային կոսոռուածներ, պատեհ առիթներով ներկայացրած իր հրաժարականներով նա զսպում էր սուլթանի ոտնձգությունները, նյուու կողմից՝ չափավորում էր ազգային կուսակցությունների անխոհեամ քայլերը, արժանանալով նրանց բացասական վերաբերմունքին, հաճախ էլ՝ կազմակերպված տարրեր մահափորձներին: Սակայն այդ բոլորը չին ազդում պատճառիր եւ պատճառաբան Օրմանյանի գիտական զնահատականների վրա, որն իր աշխատություններում մխտելով բազմաթիվ պատճառաբանների եւ ժամանակակիցների զնահատականները՝ թե ազատազրական շարժումները, ժողովրդական հոգումները եւ ազգային կուսակցությունների գործությունները պատճառ դարձան արդուիլամիլյան կոտորածներին, նա

¹ Տես «Ալբանյան Դպրությանը 25 ամեայ յորելեանին առքին, 1889-1914», Ա. Պոլիս, 1914:

² 25 տարվա ընթացքում Դպրեվանքի 221 շրջանավարտից 39-ը միայն ընդունեցին հոգեստ կոչում, բայց այդ կոչում ընդունածները եղան Արևմտյան Հայաստանի տարածքի օրինակելի կուսակրոն հոգեարականները («Հայ ժողովրդի պատմություն», հ. VI, Երևան, 1981, էջ 774):

անվարան և բացահայտ հայտարարում է, որ սխալ է ընկալվում պատճառահետեւանքային կապը, ընդհակառակը, ազգային ճնշումները, հայածանքները, զանգվածային կոտորածները պատճառ դարձան ազատազրական շարժման ալիքի բարձրացման:

Պատրիարքական 12 տարիները գիտնական Օրմանյանից խեցին մեծ ժամանակ և ավարտվեցին 1908 թ. երիտրուրբական հեղաշրջումով, երբ Ազգային ժողովի անդամները և կուսակցությունների ներկայացուցիչները նրան ստիպեցին հրաժարական տապ՝ մեղադրանք ներկայացնելով իրեն դատի ենթակա ամրաստանյալ¹: Չորս տարի շարունակ (1908 թ. հուլիսից մինչև 1913 թ. սկիզբը) տեսած դատական բաշրջուկների ընթացքում Օրմանյանն զբաղվում էր իրեն ամենից հաճելի և հարազատ գիտական գործունեությամբ: Հասարակական կյանքից լիովին մեկուսացված գործիչը ոչ քեզ ճիգեր էր գործադրում արդարանալու համար, այլ զբաղվում էր գիտությամբ, հոգեառ և պատմական արժեքների գնահատությամբ: Այդ տարիները գիտնական պատմաբանի և Հայ Եկեղեցու տարեգիր Օրմանյանի գործունեության ամենափայլուն շրջանն էր: 1909 թ. հունվարին նա ավարտեց «Համապատումը»՝ չորս ավետարանների մեկնությունը, դրանց համեմատությունը, արտակարգ բացատրություններով: Այն լոյս տեսավ 1909 թ. փետրվարին: Ժողովրդի մեջ լայն ընդունելություն գտնելու շնորհիվ 1911 թ. այն վերահրատարակվեց: Աշխատության նախարանում հեղինակն ընդգծում է իր նախատակը, նշելով որ Ավետարանի ուսումնասիրությամբ զբաղվողները «քազմազան ուղղություններ եւ նպատակներ ունեցած են»², ոմանք ցանկացել են պայքարել Ավետարանի դեմ, գտնել թերությունները, մյուսները՝ «ջատագովական դեր են ստանձնել», Օրմանյանը բացահայտում է ընդգծում է իր նպատակը: Քանի որ չորս Ավետարաններից ամեն մեկը հաճախ իրարից անկախ գործողություններ է պարզաբանում, կարիք է զգացվում իրար հետ համեմատելով լուսարաններ տարբերությունները և գոհացնել ընթեցողին: «Համապատում» մեջ են ընդգծում է Օրմանյանի ոչ միայն աստվածարանական, այլև պատմական գիտելիքների բարձր մակարդակը: Ամեն մի դեպքը,

դարձությունը հեղինակը տախի է չորս Ավետարանների մեկնությամբ, ապա հավելում իր կարծիքը, նշում ամեն մի Ավետարանի դրական հատկանիշներն ու իր կարծիքով դարերի ընթացքում նրանց մեջ հայտնված հավելումներն ու թերությունները: Կատարելով ծանրակշիռ աստվածաբանական աշխատանք, գիտնական-աստվածաբան հոգեւորական իմտությամբ արժենորում է իր կատարած աշխատանքը. «Զանը դրուած է բայր կարեսոր տեղեկությունները ամփոփել, որով ընթեցողը պիտի գտնի ոչ միայն պատմական, վարդապետական, դաւանական և բարոյական տեսություններ, այլև ժամանակագրական, տեղագրական, հնախօսական, գրչագրսկան և լեզուաբանական տեղեկություններ, նախնական և գլխաւոր փափազը եղած է Աւետարանները ժողովրդականացնել, այսինքն՝ Աւետարանները հաւատացեալ ժողովուրդին ձեռնահատրեան և կարողութեան յարմարացնել»¹: Նա իր կարեսոր նպատակներից մեկն է համարում Հայոց Եկեղեցին երրուպական հասարակությանը ծանրացնելը, որպեսզի նրանց մեջ վերանա Հայ Եկեղեցու մասին տարածված բյուր կարծիքը: Ամրաստանյալ, հասարակությունից մեկուսացված Օրմանյանը ձեռնամուխ եղավ «Հայոց Եկեղեցին և իր պատմութինը, վարչութինը, բարեկարգութինը, արարողութինը և ներկայ կացութինը» աշխատության շարադրմանը: Քանի որ հեղինակը զերազանց տիրապետում էր ֆրանսերենին, աշխատությունն առաջին անգամ լոյս տեսավ 1910 թ. հենց ֆրանսերենի, գիտնական Բերտրան Բարեյի առաջարանով: Գրքի իրատարակությունն ստանձնեց Փարիզի իրատարակիչներից Երևան Լեռուն, հայերենագետ ուսուցչապետ Ֆրեդերիկ Մակերի միջնորդությամբ: Սեծ հետաքրքրություն է ներկայացնում ֆրանսիացի գիտնականի առաջարանը, որտեղ նա սկզբում համառոտ գնահատում է աշխատությունն իրեն արեւելյան քրիստոնեության վարդապետությունը, նվիրապետությունը, դավանանքը ներկայացնող գործ: Բ. Բարեյլն ընդգծում է. «Հեղինակը ձեմին և ոճին գեղեցկութեան հետեւող մը չէ և իր գիրքը միմիայն սկզբունքներու և նեղութիններու արձագանքն է»²: Բարձր գնահատելով աշխատության հեղինակի սկզբունքայնությունը՝ ֆրանսիացի աստվածաբան-գիտնականը իր զար-

¹ Սեր խնդրից դուրս է քննարկել Օրմանյանի պատրիարքական ցործունեությունը:

² Ս. Օրմանեան, Համապատում, Կ. Պոլիս, 1911, էջ 2:

¹ Անդ, էջ 2:

² Ս. Օրմանեան, Հայոց Եկեղեցին..., Կ. Պոլիս, երրորդ իրատ., 1913, էջ 14:

մանրն է արտահայտում նրա անկախության և ազատամտության նկատմամբ, ընդգծելով, որ Երուսաղի ընթերցողները սովոր չեն այդպիսի ազատամտությամբ գրող «Եկեղեցականներու համոյիալի»: Բնորդան Բարեյլը այդ ազատամտությունը վերագրում է ոչ միայն հայ հեղինակին, այլև Հայ Եկեղեցուն և նրա «ժողովրդական կազմակերպութեան»: Իր և ֆրանսիացի ընթերցողի համար նա բացահայտում է, որ Հայոց Եկեղեցին և ազգն այնքան սերտ են, որ կազմում են միևնույն «հաստատութիւնը»: Հայ ազգի և Եկեղեցու մեջ հեղինակության պայքար չկա: Եկեղեցու վարչությունը գտնվում է աշխարհականների ձեռքին: Հոգենոր պաշտոնյանների ընտրությանը մասնակցում է նաև աշխարհական տարրը: Եկեղեցականները («հայ կղերը») և աշխարհականները այնքան միասնական են, «փրար խառնուած և իրարու մեջ բափանցած»¹, որ Հայոց Եկեղեցին կոչվում է Ազգային Եկեղեցի: Ուսումնավորելով քրիստոնեությունը պետական կրոն հոչակելու ժամանակից հայ ժողովրդի և Եկեղեցու պատմությունը՝ ֆրանսիացի գիտնականն իրավացիորեն նշում է, որ դարերի ընթացքում պետականությունը կորցրած հայության համար Եկեղեցին «փրկութեան տապան» է եղել, պահել է հայության ազգային ինքնությունը, ավանդությունները, լեզուն ու գրականությունը: Ֆրանսիացի աստվածաբանը լիովին համաձայնում է հայ հեղինակի հետ, որ նախնական Եկեղեցիները կազմափորկել են ըստ ազգության, այն պահանջով, որ ամեն մի ազգ Ավետարանը քարոզի իր լեզվով: Չնայած պետականության բացակայությամբ, աշխարհի տարրեր ծայրերում սփռված հայերը պահպանել են իրենց լեզուն և ինքնությունը Հայ Եկեղեցու շնորհիվ: Ուշազրակ է ֆրանսիացի աստվածաբանի եզրահանգումը. «Ես շատ յստակ տպարութիւն գոյացուցած եմ, որ Հայը, եթէ հաւատալ ալ դադրի, հաւատացնալ մը ըլլալէ շդադրիր»², որովհետեւ ազգության զգացումներու շենքը հիմնված է Հայ Եկեղեցու վրա: Ֆրանսիացի հեղինակը հետաքրքիր դիտողություններ է կատարում մահմելական տիրապետության տակ գտնվող հայության և նրա խաղացած դերի վերաբերյալ: Ըստ Բարեյլի, հայերի միջնորդության շնորհիվ են արեւմտյան գաղափարները մուտք գործել օսմանյան պետությունում:

¹ Անդ, էջ 15:

² Անդ, էջ 18:

յուն, և երեք բուրքական վարչական ապարատը զերծ լինելու անկարգություններից, «Արեւելը շատ աւելի մեծ օգուտներ քաղած կը լլար Հայերու վաճառականական հանճարէն և ճարտարութեատական կարողութեանն»¹: Ֆրանսիացի աստվածաբանը քարձու է, գնահատում Արեւմտյան Ազգային Սահմանադրությունը, նրա շնորհիվ ստեղծված կրոնական և բաղարական ժողովների գործունեությունը: Նշերով, որ Հայոց Ազգային Սահմանադրությունը կարգավորում է հայության ներքին գործերը, նա միեւնույն ժամանակ ընդգծում է, որ այն, նշանառ յեղափոխութիւն մը կը գործէր Արեւելի սովորութեանց մէջ»²: Նա բացահայտում է Ազգային Սահմանադրության հեղափոխիչ դերը արեւմտյան կյանքում, առանձնապես կարեւորում Սահմանադրությամբ ընդունված կրթության օրենքը. «Ազգը կուգէ, որ երկու սեռէ մանուկները, ինչ-որ ալ ըլլայ իրենց վիճակը, ամենքն ալ առանց խտրակեան ընդունին կրթութեան բարիքը, և գոնէ անհրաժեշտ եղու զիտելիքները ստացած ըլլան»³: Գիտնականը քարձու գնահատելով Հայոց սահմանադրության մեջ տեղ գտած կրթության իրավունքը, նկատում է, որ այդ օրենքն ընդունելուց քանի տարի ամեն հանրապետուական Ֆրանսիան («Գ-աղդիան») նախնական կրթության օրենքն ընդունեց և հավելում է, որ պետական ծանր տուրքեր վճարող արեւմտյանությունը այդ օրենքով և բազմաթիվ «քարեւպաշտական և բարեգործական» հաստատություններով, ծանր զոհուությունների գնով հոգում էր բոլոր ծախսերը: Սակայն Արդու Համիլու շիանդութեան ազգային հայատակ, ազատարար ապրի իրեւ իր Եկեղեցւոյն անդամ»⁴: Դրա հետեւանը սկսվեցին ազգային հայածանքներն ու ճշշումները հայության նկատմամբ: Տեղյակ լինելով պատմական իրավարձություններին՝ ֆրանսիացի հեղինակը նշում է, որ ԺՄ դարավերջին և հաջորդ դարի սկզբին «հայերը կասկածելի դարձան թէ Թուրքիոյ և թէ Ռուսիոյ

¹ Անդ, էջ 19:

² Անդ, էջ 20:

³ Անդ, էջ 21:

⁴ Անդ, էջ 21:

մեջ հաւասարապէս»¹: Այդ պատճառով ամբողջ արևմտահայությունը ցնծությամբ ընդունեց եւ ողջունեց երիտրոբրական «յեղափոխութիւնը» (հեղաշրջումը), հավատալով նրանց կարգախոսներին: Բայց նոր կառավարությունն առաջ անցավ հնից եւ որոշեց, որ ժամանակը եկել է ջնջելու «կրօնական հասարակութեանց առանձնաշնորհումները»: Բարեյլը դրա մեջ տեսնում էր առավել եւս մահմեղականների առանձնաշնորհումների խմբիրը եւ շեշտում, որ տարբեր ազգությունները միայն այդ միջոցներով կարող են իրար մեջ համերաշխություն հաստատել և «ամենուն հասարակ եղող հայրենիքը մեծութեան և բարօրութեան հասցնել»²:

«Հայոց Եկեղեցին» աշխատության հայերեն առաջին իրատարակության առաջարանում Ս. Օրմանյանը հայ բնիքը գողնութեան ծանորացնում է նաև ֆրանսիացի այլ գիտնականների՝ այդ աշխատությանը տված ծանրակշիռ գնահատականներին: Նրանցից Ֆրենսիս Շապոնիերը այն գնահատում է իրեւ «Հայ Եկեղեցւոյ պատմութեան և սկզբունքներուն ճիշտ եւ գրեթե կատարեալ ամփոփումը», որը հայերի մոտ լրացնում է «աստուածաբանական գրականութեան դատարկը»³: Էդվին Պիրսը այդ աշխատությունը համարեց Արևելյան քրիստոնեության մասին լրացնող այն պակասը, որը գոյություն ուներ Արևելյան Եկեղեցիների պատմությունն ուսումնաշիրողների մեջ: Աշխատությունը բարձր գնահատեց Ս. դը Ստեֆանոն, ընդգծելով հայության (ազգի) և Եկեղեցու սերտ միասնությունը եւ այն «գաղափարներու ազատամտութիւնը, որ Հայոց Եկեղեցւոյն տիրապէս ժողովրդականութեան արդիւնքն է»: Սի այլ գիտնական՝ Ալեքսան Հաուտինը փաստելով ապացուցեց Հայոց Եկեղեցու անցած երկարատեւ դժվարին ճանապարհը, երբ չի կրցրել իր սերտ շփումը ժողովրդի հետ եւ «ողջամիտ մնացած է»: Սի այլ աստվածաբան՝ Վիկտոր Շապոտն իր համար հայտնագործություն համարեց, որ Հայոց Եկեղեցին «Լապէս ժողովրդական կազմութիւն ունի եւ աշխարհական տարրին հետ կապակցեալ կր մնայ» այն աստիճանի, որ իր մատակարարությունը հանձնել է նրա ձեռքը: Ֆրանսիացի բոլոր գիտնականներն անվերաբանում են այս պատճենը՝ անվերաբանելով անվերաբանական անվերաբանությունը:

այստեղության ուսումնասիրությունը օգտակար դաս կարող է լինել արևմտյան Եկեղեցիների համար, «որուն նուիրապետութիւնը աշխարհական տարրէն կր մեկուսանայ, երբոր զայն չի կրնար կառավարել»¹ (Անգլիա Գործերնատիս): Սի այլ աստվածաբան՝ Հայսիտ Լուսունը բարձր է գնահատում Ս. Օրմանյանի աշխատությունը, որն իրենց ծանութացրել է արտակարգ հիմ «սկզբնատիս» Եկեղեցու հետ. այն Եկեղեցու, որը զերծ է մնացել այլ Եկեղեցիների ազգեցությունից, չի ճանաչելով ոչ մեկի գերիշխանությունը, հավատարիմ է մնացել «Արևելյան նախնական քրիստոնեութեան ժառանգութեանը», քանի որ այն ձեռավորվել է առարյալների կողմից²: Ս. Օրմանյանին բավականին ուրախացրեց եւ գոհացրեց ֆրանսիացի աստվածաբան գիտնականների այդ արժենորումը: Աշխատության ֆրանսներն իրատարակությանը ծանորացան եւ իրենց գոհունակությունը հայտնեցին նաև մամոլի հայ օրգանները («Սշակը» եւ «Քիւզանիդինը»): Առաջինը հայտարարեց, որ լավ կլինի այդ աշխատության հայերեն տարբերակը իրատարակվի եւ հոգեսոր դպրոցներում ծառայի իրեւն լավագույն դասագիրը Հայոց Եկեղեցու մասին: «Քիւզանիդինը» ընդգծեց, թե այդ գիրքը պետք է գտնվի բոլոր հայերի մատենադարաններում, որովհետեւ վերաբերում է «Արևելքի ամենին ազատական Եկեղեցիին», որը գրված է «Արևելութիւն ամենին անկաշկանդ մտրի տեր քրիստոնեայ մատենագրի ոճովն ու ներշնչումովը»³:

Հայկական շրջանակների այս բարձր գնահատականները Ս. Օրմանյանին կուղմնորոշեցին աշխատության հայերեն իրատարակությունն իրականացնելու գործը, չնայած սկզբում նա մերժել էր այդ առաջարկը, գտնելով, որ այն ոչ թե լինելու է ֆրանսներնից հայերեն հասարակ բարգմանություն, այլ գիտական աշխատության նոր շարադրանք: Բազմարիվ իորդորների հետեւանքով աստվածաբան գիտնականը ձեռնամուխ եղավ հայերեն շարադրանք. հայերեն իրատարակության նախարանում իրավաբակայնորեն հայտարարելով, որ Հայոց Ազգային Եկեղեցու նկատմամբ տածած «անկեղծ սերն է» իրեն առաջնորդել այդ աշխատությունը գրելու, որպեսզի «Հայաստանեայց Սուրբ և Առաքելա-

¹ Անդ:

² Անդ, էջ 22:

³ Անդ, էջ 10:

¹ Անդ:

² Տես Անդ, էջ 11:

³ Անդ

կան Ուղղափառ Եկեղեցին աւելի սիրելի ընել իրեններուն, և յարգելի օտարմներուն»: Մեծ էր աշխատության ընդունելությունը աշխարհի համայն հայության շրջաններում, այդ պատճառով այն տնեցավ երեք հրատարակություն. առաջին անգամ լույս տեսավ 1911 թ., եկրորդ անգամ՝ 1912-ին և երրորդ անգամ՝ 1913 թ.: Երեք հրատարակությունների նախաբանը գրել է Օրմանյանը: Գրքի տպագրական ծախքերի հոգսը իր վրա վերցրեց «Զմիւնիայի առեւտրական հրապարակի գլխաւորներից Կարապետ Էֆենտի Արապեանը»: Մանրամասն շարադրանքով աշքի է ընկնում մանավանդ առաջին հրատարակության նախաբանը, որտեղ հեղինակը բացատրում է այն բոլոր հանգամանքները, որոնք ստիպեցին իրեն ձեռնամուխ լինել այդ աշխատությունը ֆրանսերեն շարադրելու և հրատարակելու գործին, մեկ առ մեկ բննարկում ֆրանսիական գլխաւորների տեսակետներն ու կարծիքներն այդ աշխատության մասին, նախաբանին կցում է նաև Բերտրան Բարեյի՝ ֆրանսիական հրատարակության առաջարանը, հայտնում է հայ ընթերցողներին, որ զիրքը բարգմանված է ոռուերեն և անզերեն: Ըստ երեսությին, ոռուերեն հրատարակությունը չի ընկել հեղինակի ձեռքը, այդ պատճառով, հայերեն առաջին հրատարակության նախաբանին նա կցում է ոչ միայն Բերտրան Բարեյի, այլև անզերեն բարգմանության առաջարանը Մանչեստրի եպիսկոպոս Ուելտրնի հեղինակությամբ: Վերջինս հայտնում է, որ զիրքը անզերեն է բարգմանել Գ.ք. Գրիգորյանը: Ակզրում նախատեսված էր, որ անզերեն առաջարանը պետք է գրեր Սոլյուերիի «մեծահմուտ եպիսկոպոս Տրտ. ՈՒօրոտուրքը», սակայն նրա անսպասելի մահը խախտեց պլանները, և ինքը հանձն առավ այդ պատվավոր գործի կատարումը: Անզիացի ընթերցողների համար բացահայտելով Հայ Եկեղեցու առաքելական ծագումը՝ անզիացի հեղինակը նշում է, որ Գրիգոր Լուսավորչի ժամանակից սկսած Հայոց Եկեղեցին «անկախ ընթացքի մը հետևեցաւ», դիմագրավելով մյուս քրիստոնյա եկեղեցիների (Կեսարիո, Անտիոքի և Կոստանդնուպոլս) տիրապետական հակումներին: Անզիացի հոգեւորականը բարձր է գնահատում այն հանգամանքը, որ Հայ Եկեղեցին միշտ կրղմնակից է եղել Քույր Եկեղեցիների միասնությանը, ճիշտ ընդունելով այդ բառի իմաստը: Հայոց Եկեղեցին «փափաքեցաւ, որ միութիւնն հաստատուի Եկեղեցիներու միջեւ հոգեւոր հա-

դորդակցութեան հիման վրայ, իրենց որոյն դիրքերը փոխադարձար յարգելով...»¹: Մանչեստրի եպիսկոպոսը գրում է, որ Հայոց Եկեղեցին երեք աղամդավոր չի եղել, մերժել է «եւտիքական հերետիկոսութիւնը», ինչի մեջ մեղադրիվ է, բնդգծում է, որ Հայ Եկեղեցու հասուլ է «անքերի ներդամտութիւնը եւ լայնամտութիւնը» այլ դափանանքների հանդեայ, եւ դա նրան հասուլ է եղել «ամէն դարերու մէջ»: Անզիացի եպիսկոպոսը բարձր է գնահատում Հայոց Եկեղեցու անցած պատմական ուղին, ճիշտ է համարում, որ նա ընդունում է միայն երեք Տիեզերական ժողովների որոշումները, արժեկորում է հայ աշխարհական դասի «զորաւոր ազդեցութիւնը Հայոց Եկեղեցու վարչութեան մէջ»: Չննարկեանլ Մ. Օրմանյանի աշխատությունը, Ուելտրն եպիսկոպոսն ընդգծում է անզիացի ընթերցողների համակրությունը Հայոց Եկեղեցու նկատմամբ և հավելում, որ այդ աշխատությունը կօգնի անզիացի հավատացյալներին վստահությամբ լցվելու Անզիական Եկեղեցու նկատմամբ: Մանրամասն բացահայտելով աշխատության արժանիքները՝ առաջարանի անզիացի հեղինակը հասուլ է արժանիքներ է համարում, որ աշխատության հեղինակը Հայոց Եկեղեցու բարձրաւոհճան հոգեւորականներից է, Կոստանդնուպոլսի նախկին պատրիարքը, լիովին ձեռնհաս մի անձնափորություն, որն ի վիճակի է բարձր մակարդակով վերլուծել ոչ միայն Հայոց Եկեղեցու, այլ աշխարհի բոլոր քրիստոնյա Եկեղեցիների պատմությունը: Օտարազգի այդ տարբեր գլխաւորների տեսակետները և աշխատության վերաբերյալ արված բոլոր դիտուրությունները Օրմանյանը տեղադրում է հայերեն առաջին հրատարակության նախաբանում, նաև կից տախի Բարեյի և Ուելտրնի առաջարանները:

Հայ հասարակության կողմից եւս գիրքն ընդունվեց մեծ խանդավառությամբ և բարձր գնահատականներով: Այդ աշխատությունը միայն դրական գնահատականներով շրնջունվեց. եղան նաև ըննադատողներ: Դրանք հոռմեադական հայերն էին («ազգայինները» - Մ. Օ.-ի արտահայտությունն է): Օրմանյանը բնական է համարում այդ հանգամանքը և նշում, որ իր տեսությունները նրանց նպաստավոր չեն: Իր նպատակը շիամարելով քննադատական դիտուրություններին պատա-

¹ Անդ, էջ 24:

խանելը՝ նա հաղորդում է ընթերցողներին, որ ձեռնարկել է Հայ Ազգային Եկեղեցու մասին նոր աշխատուրյուն շարադրել, որ տեղ կգտնեն հարկ եղած բացատրությունները¹: Դրանից հետո հեղինակը ձեռնամուխ է լինում աշխատության բուն Խորյան բացահայտմանը: Հնարավոր չէ մասնամասն վերլուծել այդ աշխատության բոլոր բաժինները կամ գլուխները: 45 գլխից բաղկացած աշխատության սուկ վերնագրերի թվարկումը ցույց է տալիս հեղինակի կատարած մեծ աշխատանքը հարազատ ժողովրդին Հայ Եկեղեցու Էռոյունը բացատրելու և բացահայտելու մեջ: Փաստելով, որ Հայոց Եկեղեցին «հայ ազգութեան հետ նույնացած է», այդ պատճառով կ «նշանաւոր դեր ունեցած է ազգային կեանքին մէջ», 270 էջանոց համառոտ աշխատության հենց առաջին գյխում («Ճնշ է մեր նպատակը») ընթերցողին պարզ եւ հասկանալի լեզվով հեղինակը մատնանշում է աշխատություն գրելու հանգամանքները, ապա անցնում է բուն նյութին՝ Հայ Եկեղեցու ծագման պատմությանը, ցանկանալով «անրափանցելի վարագոյրի մը ներքոյ ծածկուած» իրադարձությունների հետազոտությամբ լուսաբանել առաջին առարյանների գործունեությունը, Հայոց Եկեղեցու «սկզբնական հիմնադիրներ» ճանաչելով Ս. Թադեոս եւ Ս. Քարդուղիմեոս առարյաններին, նրանց ամփանելով «Առաջին Լուսատրիչը Հայաստանեայց»², որոնց գերեզմանները իրեն նվիրական սրբավայրեր պահպանվում են Արտազի (Մակո) եւ Աղրակի (Պաշրալե) վանքերի մեջ: Անցնելով Հայ Եկեղեցու նախնական ժամանակի վերլուծությանը, պատճական փաստարդերի համեմատությամբ Օրմանյանը հավաստում է, որ Թադեոս եւ Քարդուղիմեոս առարյանների միջոցով քրիստոնեությունը Հայաստանում տարածվելու ժամանակից ի վեր, մինչև 301 թ. պետական կրոն հաստատելու ժամանակը, այն «շարունակական եւ տեսողական գոյութիւն ունեցաւ Հայաստանի մէջ», չնայած պետական հալածանքներին, ճնշումներին: Իրեն դրանց ապացույց հեղինակը նշում է Հայոց Եկեղեցու Տնօնացոյցի եւ Յայսմափորքի մեջ հիշատակված մարտիրոսների և նահատակների անուններ, ապա

¹ Ըստ երեսույթին խորը վերաբերում էր եռահատոր «Ազգապատումին», որը հեղինակն սկսել է շարադրել դեռևս ամբաստանայի վիճակում, 1910 թ. վերջերից, որի 1 հատորը լոյս տեսավ 1912-ին:

² Ս. Օրմանեան, Հայոց Եկեղեցին..., Կ. Պոլիս, 1913, էջ 29–30:

յակոչում է նաև օտար մատենագիրների (լատին մարտիրոսագիրներ, Տերտուղիանոս և ուրիշներ):¹

Չարտունակության մեջ Օրմանյանն անդրադառնում է Հայաստանի ամբողջական դարձի գործընթացին, նվիրագետության հաստատությանը: Հատուկ պարզաբանվում է «Ս. Գրիգորի Հայոց Եկեղեցու գլուխ ըլլարո» հանգամանքը, նրա ձեռնադրությունը Կեսարիայում, որն առիր է տվել զանազան վիճաբանությունների: Հոյների կարծիքով Հայոց արռոն սկզբում Կեսարիային է ենթարկվել, ապա «հերձուածի հետեւանօր» Եղարում բաժանվել է նրանից: Լատիններն էլ նշում են այդ հանգամանքը, որ Կեսարիային ենթակա Հայոց արռոն «Սենքեստրոս Ա պապի» առանձնաշնորհումով, «փնքնազլուխ» է հոչակվել: Օրմանյանն ապացուցում է, որ Հայոց արռոր առաքելական հաստատություն է, այն «ոչ թէ սկզբնաւորեցաւ, այլ վերանորոգուեցաւ Ս. Գրիգորի ձեռքով»²: Իրար են հաջորդում Դ-Ե դարերի Հայ Եկեղեցու պատմության, հայ դպրության սկզբնավորության, պատմության արժանահիշատակ դրվագների քննարկումները: Հատուկ ուշադրություն է դարձված նեստորականության, ետիդեականության դեմ մղած պայքարին, վերլուծվում են Քաղկեդոնի ժողովի որոշումները, բացահայտում՝ հայերի՝ այդ ժողովին շնասնակցելու պատճառները, ներկայացնում Դվինի I (506 թ.) և II (554 թ.) ժողովների նշանակությունը Հայ Եկեղեցու անկախության պահպանման համար: Թվում է հեղինակը բոլիչներով է քննարկում Հայ Եկեղեցու պատմության տարրեր իրադարձությունները, սակայն ուշադիր ուսումնավրողը կիասկանա, որ հեղինակի հասուկ քննության առարկա են դառնում առանձնապես կարեւություն նշանակություն ունեցող դրվագները՝ կարողիկուսության տեղափոխությունները, Կիլիկիո հայ իշխանավետությունը եւ ի վերջո կարողիկուսության վերապարձը: Իրադարձությունների այդ մեծ շղթայի քննարկման հանգուցակետը դարձյալ Հայ Եկեղեցու անկախության հիմնահարցն է. Հոյնական, Ասորական, Լատինական Եկեղեցիները ամեն մի պատճական դեսպ օգտագործում էին Հայ Եկեղեցու վրա տիրապետող դիրք ունենալու, նույնիսկ «իրեն մեջ ձուլելու համար»: Հայոց Եկեղեցին, որ դեմ չէր միարանության եւ

¹ Տես Անը, էջ 39:

² Անը, էջ 40:

բարեկամության գաղափարին, դա այլ կերպ էր հասկանում. «...Հայոց Եկեղեցին միաբանութիւնը հասկցաւ միշտ բառին ճիշտ եւ սեղմ նշանակութեամբ: Նա միաբանութիւն բաելով ուզեց ունենալ Եկեղեցիննրու միջեւ հոգեւրական հաղորդակցութիւն: ...Նա երբեք չուզեց հանդուրժել, որ միաբանութիւնը տիրապետութեան փոխուի եւ մարդուսութեան վերածուի»¹: Այդ մեջքերումը բացատրում է հայ հոգեւրականների եւ Եկեղեցու դիրքերի կայունությունը, սակայն այդ դիրքերը միշտ չեն անսասան: Հայոց Եկեղեցին են անցավ քարքարոտ եւ վշոտ տանջալից ուղի, քավական է իիշել արտարին ճնշումները (Քրացիսկյան եւ դոմինիկյան միաբանությունների Կիլիկիայում ծավալած գործունեությունը, ունիրութական շարժման հետեւանքները) եւ ներքին պառակտումները (Սոս, Աղքամարի կարողիկոսությունների, Կոստանդնուպոլս եւ Երոսալեմի պատրիարքությունների ստեղծումը եւ քուրքական սուլթանների գործելակերպը այն Էջմիածնից անջատելու ուղղությամբ), որպեսզի պատկերացնենք, թե ինչ դժվարություններ էին հաղթահարում Էջմիածնի հոգեւոր հայրերը «Ամենայն Հայոց» միասնությունը պահպանելու համար: Գիտնական աստվածաբանն առանձնակի ուշադրություն է դարձնում մշակույթի զարգացման ասպարեզում հայ հոգեւոր հայրերի կատարած քայլերին, տպագրության գյուտին, նրա նշանակությանը: Առանձին վերլուծության են ներքարկվում ԺԷ-ԺԹ դարերի Հայ Եկեղեցու նշանափոր իրադարձությունները՝ 1836 թ. ցարական կառավարության կողմից հաստատված Հայ Եկեղեցու կանոնադրությունը՝ «Պոլոյշենի»-ն, 1860 թ. Կ. Պոլսում հայության «Ազգային Սահմանադրությունը», որը սուրբանը հաստատեց 1863 թ., եւ նշվում է, որ չնայած հայությունը գտնվում էր 3 օտար պետությունների՝ ռուս, պարսիկ, քուրք տիրապետությունների ներքո, սակայն պահպանվում էր ազգային միասնությունը, որը Հայ Եկեղեցու գործունեության արդյունքն էր. «...Քաղաքակրթեան եւ յառաջադիմութեան եւ ազատութեան այն մեծ շարժումը, որ բռվանդակ հայութեան, այսինքն Ռուսիոյ ու Թուրքիոյ և Պարսկաստանի Հայերուն վրայ կը տեսնուի, արդինք և մեծաւ մասամբ իր Եկեղեցական դասա-

կարգին ձեռորով սկզբնաւորած գործունեութեան եւ ազդեցութեան»¹: (Այդ տեսությանը կարելի է համաձայնել որոշ վերապահումնով. ԺԹ դարի մանավանդ Երկրորդ կեսից ազգային կյանքի շարժիչ եւ առաջնորդիչ ուժ է դառնում նաև հայ մտավորականությունը): Հայ Եկեղեցու պատմության ընթացքը մեկնարանելով մոտավորապես մինչեւ իր ապրած շրջանը՝ պատմական իրադարձություններից հետո Օրմանյանն անցնում է տեսական հարցերի, այսինքն՝ վարդապետության եւ դավանանքի հարցերի քննարկմանը: Այդ բաժնում փայլուն ձեւով դրսեւրվում է հեղինակի՝ աստվածաբան գիտնականի հմուտ կարողությունները: Նշելով, որ տարրեր դավանական սկզբունքների հետեւող Եկեղեցինները բոլորն իրենց հիմնակետ են համարում Ավետարանը եւ այդ նույն աղբյուրից են բաղում իրար հակասող վարդապետությունները՝ հեղինակը նկատում է, որ դրա պատճառը պետք է որոնել «Ավետարանի գրութեան կերպին ու ոճին մեջ»: Ուսումնամիջությունը զարմացնում է գիտնական Օրմանյանի հոգու ազատությունն ու անկախությունը, եւ այն բացատրությունը, որ նա տալիս է Ավետարանի վերաբերյալ.

«Աւետարանի պարունակած վարդապետութիւնը նման է նախնական նիրին, անկարգ ու անհարք նիրին, որ ընդունակ է առնուլ այն ձեւն ու կերպը, զոր արիեստաորը անոր կուտայ»²: Հետո նա հավելում է. տարրեր դավանանքի Եկեղեցիններ այնպիսի փոփոխություններ արեցին իրենց վարդապետության մեջ, որ նույնիսկ դժվար է քրիստոնեության հետքերը նշարել: Օրմանյանի սկզբունքայնությունն ու ազատախությունը հասնում է այն աստիճանի, որ նույնիսկ նշում է այդ դավանանքի Եկեղեցու անունը: Այդ բոլոր փոփոխությունները բացատրենց հետո Օրմանյանն անդրադասնում է Հայաստանեաց Ռուսական Եկեղեցուն, որ իրեւ հնավանդ Եկեղեցի «հաստատուն կը մնայ աւանդական եւ դրական գետնին վրայ»: Նվիրապետության եւ ծիսականության վրա հիմնված իին Եկեղեցինները հարազատ եւ հավատարիմ են մնացել նախնական իին դրույթներին: Եկեղեցինների մյուս բաժինը նվիրապետություն չունեն (ըստ Օրմանյանի) եւ ծիսականության չեն ընդունում, դրանց բվին հեղինակը դասում է ԺԶ դարից հետո առաջացած արեւմտյան

¹ Անդ, էջ 125:

² Անդ, էջ 127:

Եկեղեցիները, որոնք առաջացել են բողոքական բարեկարգությունից հետո եւ քրիստոնեական հարանվանություններ են: Այդ խմբից Օրմանյանը զատում է Անգլիկան կամ Եպիսկոպոսական Եկեղեցին, որն ունի ծիսականություն եւ նվիրապեսություն, նրան դասերով հնավանդ Եկեղեցիների շարքի մեջ: Հետաքրքիր տարրերակում է դժում Օրմանյանը դավանություն եւ վարդապետություն կրոնական սուրբ գրական հասկացությունների միջև, ցոյց տալիս տիեզերական ժողովների նշանակությունը տարրեր դավանանքների Եկեղեցիների էությունը բացահայտելու մեջ, մեկ առ մեկ նշում տիեզերական ժողովների կայացման տեղն ու բիզով, վերլուծելով, թե որ դավանանքների Եկեղեցին, քանի տիեզերական ժողովի որոշում է ընդունում, որի արդյունքում ստացվում է հետեւյալ հարաբերությունը. Հայ, Հույն, Լատին՝ 3:7:20, ինչպես տեսնում ենք տարրերությունն ակնհայտ է: Օրմանյանի քննարկման առարկան է դառնում «հաւատոյ հանգանակի» էության բացատրությունը, որը փաստորն դավանության պաշտոնական բանաձեւն էր: Հեղինակը նշում է, որ արեւմուտքի ժողովներն ու պայերը հաճախ են փոխել իրենց հանգանակը, հարմարեցրել եւ համաձայնեցրել նոր դավանությունների հետ, նոյնիսկ 1870 թվին գումարված Վատիլիկանի ժողովը «նոր բացատրություններ աւելցուց իր հանգանակին վրայ»¹: Ընդգծելով հոռմեադավան Եկեղեցու պատմիչ գործելակերպը, Օրմանյանը հայտարարում է, որ պատմական վերջին կոնդակը «վճռականապես հոշակած է Եկեղեցոյ եւ գիտութեան ապահարզանը»: Համեմատերով այդ բոլոր փաստերը Հայ Եկեղեցու գործունեության հետ, Օրմանյանը նշում է, որ «Հայոց Եկեղեցին խոճամիտ ճշութեամբ անփոփոխ կալահի նախկին եւ առանդական ձեւերը»²:

Հետագա շարադրանքն ընթանում է տարրեր դավանանքների Եկեղեցիների գործունեության համեմատության միջոցով. Կարողիկ Եկեղեցուց Հայոց Եկեղեցու գիրկը վերադարձած հեղինակը առանձնապես շնչուում է Հայոց Եկեղեցու «Ներդամտութեան հոգին»: «Հայ Եկեղեցին...սիրեց հաստատուն մնալ աստուածաբանական լայնախոհութեան եւ Եկեղեցական ազատամտութեան սկզբունքներուն վրայ, զոր ան-

խախտ եւ անփոփոխ պահեց եւ պիտի պահէ ասկէ ետքն ալ»¹: Սակայն այդ լայնախոհությունը հաճախ վնասել է Հայ Եկեղեցուն, քանի որ դրա հետեւանքով մնեացել է մարդուրությունը (նոյնիսկ մեր օրերում):

Եկեղեցու պատմության ուսումնասիրողին հետաքրքիր են Օրմանյանի բացատրությունները Հայ Եկեղեցու խորհուրդների վերաբերյալ, հստակ ընդգծում են մկրտությունը, հաղորդությունը, ապաշխարությունը կամ խոստովանությունը, ձեռնադրությունը (բոլոր աստիճաններով): Խորհուրդների բացատրությամբ ավարտվում է աշխատության մի բաժին եւս: Հաջորդ բաժինը Վարչությունն է, որի ամենակարևոր մասը նվիրապետության կազմակերպությունն է. դրա մեջ մանրամասն ցոյց է տրվում նվիրապետական արուների՝ պատրիարքությունների ձեւավորումը: Ընդհանրական Եկեղեցու վարչությունից անցում է կատարվում Հայ Եկեղեցու նվիրապետության աստիճաններին. Ծայրագոյն պատրիարք կամ Ամենայի Հայոց Կարողիկոս, որին ժամանակին ենթակա էին Վրաց և Աղվանից կարողիկոսությունները (տրվում է դրանց պատմությունը), Աղքամարի և Սսի կարողիկոսությունները, Երոսադեմի և Կ. Պոլս պատրիարքություններն իրենց իրավասություններով, թեմերը (նվիրապետության IV աստիճան), որոնք կոչվում են նաև Եպիսկոպություն կամ վիճակ, մանրամասն բերում է ամեն մի նվիրապետության թեմերի բանակը:

Կարեւոր բաժին է նաև «Բարեկարգութիւնը», որտեղ քննարկվում են հոգեւորականությանը վերաբերող բոլոր հարցերը. բացատրվում են կուսակրոն հոգեւորականության աստիճանները: Մասնակի բացատրություն է տրվում նաև Եկեղեցական հասույթներին, մասնավորապես բացատրվում է, թե իրամական պետության տարածքում գտնվող հայկական Եկեղեցիներն ինչպես են աստիճանաբար զրկվել իրենց կալվածքներից եւ դրանք «զրերէ բոլորն ալ Կոստանդնուպոլայ մզկիրներուն կը պատկանին»²: Հետաքրքրությամբ է ընթերցվում «Աշխարհականներու մասնակցությունը» ենթագլուխը, որը բացատրվում է, թե ինչպես են կատարվում բարձրաստիճան հոգեւորականութերի ընտրությունները: Հեղինակը Հայաստանի Արևելյան հասվածների

¹ Անդ, էջ 137:

² Անդ, էջ 140:

¹ Անդ, էջ 145:

² Անդ, էջ 178:

հայոց Եկեղեցիների բարձրաստիճան հոգևորականների օրինակով ցույց է տալիս, որ «Ազգային Սահմանադրության» և «Պոլոյշենի»-ի սկզբունքները դեմ չեն եղել աշխարհական տարրի մասնակցությանը նրանց ընտրություններին, Եկեղեցու մատակարարությանը: Բացատրվում է Արեւելահայոց հոգաբարձուների խորհրդի, սինողի, կոնսիստորիաների և Արեւմտահայոց՝ ընդհանուր, բաղաբական և կրտնական ժողովների և նրանց իրավասության տակ գտնվող դատաստանական, ուսումնական, կուսակային, փանական և Եկեւմտական օժանդակ խորհուրդների դերը և ծավալած գործունեությունը Հայ Եկեղեցու համակարգում:

Բաժիններից մեկում բացատրվում է Հայոց Եկեղեցուն բնորոշող անունը: Տալով քրիստոնեական տարրեր Եկեղեցիների անունները, Հունականը՝ Օքոռոքս, Ուռուսականը՝ Պրավոլավ, Լատինականը՝ Կարոլիկ, Անգլիականը՝ Եպիսկոպոսական, Օրմանյանը նշում է, որ մեր Եկեղեցին կոչվել է Հայաստանեաց կամ Հայոց պարզ անուններով, իսկ նրան կցած «սուրբ, առաքելական և ուղղափառ կոչումները լոկ իբրև պատուանուն կը գործածուին և ոչ իբրև յատուկ անուն»¹: Ցարական կառավարությունը պահանջեց Եկեղեցուն տալ վարդապետական կոչում: Այդ պատճառով էլ հաշվի առնելով Ս. Գրիգոր Լուսավորչի կատարած գործը և քրիստոնեության պետական ընդունումը, ուսուները Հայ Եկեղեցին կոչեցին Գրիգորյան, որը հայոց մեծամասնության մեջ լավ ընդունելություն զգտավ, քանի որ այդպիսով չէր ընդգծվում Հայ Եկեղեցու առաքելական ծագումը և ցույց էր տալիս Հայ Եկեղեցու սկզբանակրումը: Կարծիքների փոխանակության ժամանակ Օրմանյանի նախընտրածը «Հայոց Ուղղափառ Եկեղեցի» անվանումն էր: Հեղինակը մանրամասն բացատրում է Եկեղեցու կրտնական շենքերի կազմությունը (գավիր, ժամատուն, դաս, բեմ, խորան, սեղան), վերջացնում է գմբերով և զանգակատնով, որը երկար ժամանակ խորամական իշխանությունների կողմից արգելվում էր, ինչպես նաև կոչնակահարությունը: Բացատրության նյութը են դառնում նաև կրտնական պաշտոնյաների տարրեր աստիճանները, կրտնական պարտավորությունները, Եկեղեցական տո-

նացույցը՝ Աստվածահայտնություն, Տեառնընդառաջ, Ավետում, Այակերպություն, Վերափոխում, Խաչվերաց, Աստվածածնա ծնններ, Ընծայում և հղություն (վերջին երեքը նշում է իբրև վերջին դարերի մուծված տոններ): Նշում է Ընդհանրական Եկեղեցու կողմից ընդունված սուրբերին (որանցից Հին կոտակարանի սուրբերը, որոնք քով շատ են, ապա Նոր կոտակարանի սուրբերը՝ Հիսուսի ժամանակակիցները, Առաքելոց տոնները և Ավետարանիշները): Հայոց Եկեղեցու կողմից ընդունված սուրբերը անհամեմատ քիչ են. առաջինն սկսվում է Սանդուխտ կոյսից (Ս դար), Եղեսիայի Հայրապետ Արքի և Արգար բագավոր (Բ դար), ապա հերթով նշում է Հայ Եկեղեցու կողմից սրբազնած անձանց անունները: 40-րդ գլխում գրականության ընդհանուր տեսությունն է, որտեղ առանձնակի հարգանքով է նշում Հայ Եկեղեցու և ողջ հայության գոյության ամենամեծ գենքը դարձած հայ դպրության և գրականության ստեղծումն ու զարգացումը, որը «հեռացուց այն ազգային վտանգը, որ Հայ Եկեղեցւոյն, Հայ ազգին է հայ ամիսային կորստեանը բնաջինջ կսպառնար»¹: Ընդգծվում է հայ պատմագրության ստեղծումը, պատմահայր Խորենացու, Ղազար Փարպեցու, Եղիշեի, Կորյունի, Վասնի Երեցի, և մի հակա ցուցակ գիտնական, պատմիչ, բարգմանիչ հոգենրականների անուններ, որոնք ոչ միայն մեզ եւ մեր պատմությունն անմահցրին, այլև հաղորդակցեցին հոյն փիլիսոփանների աշխատություններին: Այդ հակա ցուցակում Օրմանյանը գտնում է, որ բարքը հոգենրականներ էին, միայն երկուսն էին աշխարհական՝ Ամիրլովլար քժիշկը և Երեմիա Քեռուուրծյան պաշտոնյան: Շարադրանը աստիճանաբար հասնում է ԺԸ–ԺԾ դարերի պատմության ընթացքին, հեղինակը գնահատականներ է տալիս մշակույթի տարրեր գործիչներին: Զնայած դավանանքների տարրերությանը՝ հոգենրական գիտնականը անկողմնակալ և բարձր գնահատական է տալիս Վենետիկի և Վիեննայի Միփարյան միարանությունների գործունեությանը և ափստանքով ավելացնում է, որ իրենց ուղղությունը սովորել է նրանց հեռու մնալ Հայոց Եկեղեցուց: Դրա հետ մեկտեղ պատմաբան և պատմագիր Օրմանյանը չի խոսափում ցույց տալ Զամշյանի գիտական աշխատություններում

¹ Անդ, էջ 188:

տեղ գտած թերությունները, առավելապես «հայ ազգին ծագման ուսումնախրութեան մէջ»: Բայց այդ թերությունները նա վերագրում է նաև ժամանակին: Ըստգծելով էջմիածնի ճեմարանի (որտեղ ինքը դասախոսել է) և Արմաշի դարձելանքի (որի դեկանարն էր) նոր սկսած հետազոտական գործունեությունը, Օրմանյանը համարձակ հայութարարում է, որ ազատամիտ վարդապետության և կրոնական ներողամտության մեջ Հայոց Եկեղեցին քրիստոնեության բոլոր ճյուղերում առաջին տեղն է գրավում:

Աստվածաբան Օրմանյանը բնութագրում է նաև աշխարհի քրիստոնյա Եկեղեցիների առկա կացությունը և արտաքին կերպարանը: Ըստ Օրմանյանի, ամբողջ քրիստոնյա աշխարհը ներկայացվում է չորս մեծ ճյուղերով, երկուոք՝ Արեւուտքում (Կարողիկ և Բողոքական), երկուոք՝ Արեւելքում (Երկարնակ և միարնակ): Հայկական Եկեղեցին պատկանում է միարնակ ճյուղին և այդ բնագավառում «առաջնորդին կը վայել»: Հնավանդ Եկեղեցիներին վայել Հայոց Եկեղեցին ազգային Եկեղեցի է, որի կենտրոնը և գերազույն իշխանությունը վայելող արոռը Էջմիածինն է: Նրա իշխանությունը (իրավասուրյունը) տարածվում է ամբողջ աշխարհի հայադավան հավատացյալների վրա: Ամբողջ ԺՇ դարի ընթացքում (մինչեւ այս աշխատության լույս ընծայումը) ուսուահայ թեմերը (վիճակները) կառավարվում էին 1836 թ. ցարական կառավարության հաստատած «Պոլոյքենիո»-ով, իսկ ժուրիայի վիճակները՝ սուլթանական իրովարտակով հաստատված 1863 թ. Սահմանադրությամբ: Զնայած այդ երկու կանոնադրությունների հական կետերը համաձայնեցված էին Հայ Եկեղեցու նախնական կանոններին և հնավանդ սովորություններին, բայց ենթակում էին երկու պետությունների պահանջմանը:

Աշխատության նախավերջին գլխում նա բնդիանրացրած գծում է հայության «ազգային նկարագիրը»: Նշելով հայոց պատմության «գդնդակ և եղերական» էջերը, հայ ժողովրդի մարտիրոսությունը, Օրմանյանը արձանագրում է ճիշտ փաստեր՝ օտար տիրապետողների մոտ գրաված գործունյա դիրքը, վաճառականության, գիտության և արվեստի մեջ ունեցած բարձր դիրքը: Նա հավաստում է, որ Ասիայում առեւտուրը գտնվում էր հայերի ձեռքին, նոյնն էր միջին դարերում Լե-

հաստանում և Հոնգարիայում, ամենավառ ապացույցը Հնդկաստանի հայկական թնկերությունն էր, որի շարունակությունը դարձավ անգլիակական թնկերությունը: Նոյնն էր նաև օսմանյան կայսրության մեջ, որի մայրաքաղաքի «ամենահոյակապ ճարտարապետական շինութիւնները եւ պետութեան ու հանրութեան աւելի օգտակար հաստատութիւնները ամենն ալ հայերու գործերն են»¹: Հայերի վարչական, դիվանագիտական, զինվորական պաշտոնները նշկում են նաև ոռուական կայսրության մեջ, Եգիպտոսում և այլուր: Դրա հետ միասին Օրմանյանը բննադատական մոտեցում է հանդես թերում հայությանը «իբրև հանրութիւն» ներկայացնելու ժամանակ, գտնելով, որ հայությունը իրեն համար, իբրև ազգ եւ ժողովորդ չի ձեռնարկում այնպիսի քայլեր, որքան օտար երկրներում, օտարների համար: Վերջին 45-րդ ենթագլխում Օրմանյանը ձգում է բացարել, թե Հայ Եկեղեցին ինչ ագրեցություն եւ նշանակություն է, ունեցել ազգային ինքնահաստատման ու գոյության պահպանման վրա: Նշելով, որ ոմանք Հայաստանի անկումը բացարում են նրա քրիստոնեություն ընդունելով, ոմանք կարծում են, թե լավ կլիներ, եթե «հայությունն ընդուներ իսլամը», մի մասն էլ գտնում էին, որ ավելի լավ կլիներ հայությունը կարողիկություն ընդուներ եւ հզոր պետությունների հովանավորությունը վայելեր: Օրմանյանը պատմական փաստերի անհերքելի ապացույցներով մխտում է այդ բոլոր դրույթները եւ անվարան հայութարում է, որ Հայոց Ազգային Եկեղեցին եղել է այն միակ «յօդակապը, որ Հայկայ սերունդին ցրուած մնացորդները կրցած է անբակտերի պահել և իբրև մէկ ազգ պահպանել: ...Եկեղեցւոյն շնորհիսն է, որ Հայութիւնը մնացած է իբր յատուկ եւ ինքնուրյան մարմին նը, որ դարերու այլայլութեանց եւ արկածներու, բռնութեանց ներքեւ ալ, ինըն իր մէջ շարունակուելով միշտ նոյն մնացած է»²: Իրավացի է Օրմանյանը, եթե գրում է որ «քաղաքական կապակցութեան կապի» (պետականության) բացակայության դեպքում Եկեղեցական կապակցության կապն է նրան փոխարինում եւ «միութեան ու գոյութեան պետք եղած ոյժը կը նետեն»³: Աշխատությունն ավարտվում է 2 մասից բաղկա-

¹ Անդ, էջ 238:

² Անդ, էջ 293:

³ Անդ, էջ 244:

ցած հավելվածով: Ա մասը հայ կարողիկոսների ժամանակագրությունն է (հին տոմարով), որտեղ նշված են նաև մինչեւ Գրիգոր Լուսավորիչը (քրիստոնեությունը պետական կրոն ընդունելը) կարողիկոս օծված անձանց անունները: Ցուցակն ավարտվում է Գետրգ Սուրենյանցով: Բայց սում նշված է թեմերի վիճակագրությունը, որտեղ մանրամասն տրված է Հայ Եկեղեցու բոլոր նվիրապետությունների թեմերի քանակը (ընդհանուր թիվը 101 թեմ է): Այդ նույն վերնագրի տակ առանձին-առանձին նվիրապետությունների կազմով նշված է հայ բնակչության բնագավառը (առանձնացված են՝ հայադարձն, կարողիկ, բողոքական): Դրանով վերջանում է Հայ Եկեղեցուն վերաբերող այս սեղմ աշխատությունը: Բայց այս աշխատությամբ չամանափակվեց Մադարիա Օրմանյանի Հայ Եկեղեցուն նվիրված աշխատանքը: Դրա բազմ ու պսակը դարձավ եռահատոր «Ազգապատումը», որի վերնագրին հարակից գրված է «Հայության աշխատանքությունը անցընթաց սկիզբէն մինչև մեր օրերը յարակից ազգային պարագաներով պատմուած»: Դա Հայ Եկեղեցու ընդլայնված պատմությունն է, ավելի ճիշտ կլինի ասել հայ ժողովրդի պատմությունն է քրիստոնեություն ընդունելու ժամանակից ի վեր: Թեևկուզ թերևնակի ծանրությունն այդ աշխատությանը աայշեցնում է ընթերցողին, այդպիսի պատվավոր աշխատություն կվայելեր նույնիսկ մի մեծ գիտական հաստատության, մինչդեռ այն գրել է մի անհատ:

Էջմիածին, № 2012, Ե (5), էջ 45–63:

ԱՆՁԱՌՈՒՆԵՐԻ ՑԱՆԿ

- Արքա Միրզա – 229
- Արգար բագավոր – 505
- Արդու Ազիզ – 335, 385, 426
- Արդու Համիլ Ա-ը – 21, 52, 56, 145, 315, 326, 335, 337, 369, 385, 388, 420, 425–427, 435, 439, 448, 449, 493
- Արեղին թիյ – 38, 252
- Արեղյան Մ. – 267, 270
- Արովյան Խաչատոր – 65, 70–74, 117, 125, 167
- Արքահամյան Ա. – 272
- Ա. դր Ստեֆան – 494
- Արդե – 505
- Արոնց Նիկոլայոս – 218, 261–263, 266, 482
- Ազատյան Անդրանիկ – 108, 302
- Ազատյան Թորոս – 249, 253, 254, 255
- Արարելյան Լևոն – 349
- Արանասյան Նահապետ – 126, 117
- Արամդարյան Հարություն – 70, 71, 73, 74, 167
- Արեր Վանդալ – 406
- Արեարքեան Գրիգորիս – 7, 40, 80, 91, 101, 162, 324, 415, 428
- Արեարքյան Խաչատոր կարողիկոս – 7, 11, 33, 40
- Ալեքսանդր բիծական – 111, 303
- Ալեքսանդր – 354
- Ալեքսանդր 2-րդ – 54, 142, 143, 161, 276, 387
- Ալեքսանդր 3-րդ – 54, 56, 143, 157
- Ալի թիյ – 96
- Ալիշան Ղևոնդ – 171, 173–176, 264, 268, 477, 478
- Ալպյանձյան Արշակ – 408, 450, 482
- Ալսկիս – 262, 265
- Ալինյան Ներսես – 213, 268, 271, 482, 479
- Անարոնյան Ավետիս – 334
- Անարոնյան Հովհաննիս – 93, 100
- Ահմեդ Ա – 376
- Աղարարյան – 112
- Աղարելյան Մարկոս – 194
- Աղարելյան Սարգիս – 252
- Աղայան Ղ. – 56
- Աղասի (Կորապետ Թոոր-Սարգսյան) – 92, 93, 96, 98
- Աղրգյան Խորեն – 324
- Աճառյան Հրաչյա – 190, 265–267, 271, 284, 482
- Աճեմյան Վարուժան – 130, 134
- Ամասոսի Սահակ – 57

Ամիրքելյան Միքայել – 103, 104, 106, 109, 111, 114, 115, 296, 299, 301, 302, 304–306
Ամիրովլար – 505
Ամիրյան Ս. – 362
Ամիրով – 331
Ամֆիտեատրով – 406
Այվազեան Արմեն – 244, 245
Այվազովսկի Գ.արքիել – 196
Այտբնյան Արսեն – 477, 480
Անահիտ – 183, 215
Անանուն – 266
Անդրանիկ – 108, 302, 328, 330, 359, 360, 362
Անդրեաս Վարդապետ – 328
Աննա – 84
Անջելո Գուրենատի – 495
Անտոնյան Սիմոն – 481
Անտոնան Սեյյեն – 482
Աշըգյան Խորեն – 9, 10, 40, 87, 100, 115, 116, 118, 120, 121, 324, 347, 349, 423, 428, 457, 462, 470, 488
Աշտարակեցի Ներսես – 229
Ապահովաց Եզնիկ Վարդապետ – 7, 91
Առաքել Քեյ – 391
Առաքել Սարուխան – 482
Առաքել Վարդապետ – 83
Առաքելյան Գ. – 241
Առաքելյան Խաչան – 350, 351
Առստամյան Եղոր (Մենակ) – 350, 351

Ասլանյան Սոն. – 390
Ասողիկ – 266
Աստուրյան Հովհաննես – 419
Ավիալթելյան Թադևոս – 408
Ավետիս – 16
Ավետիսյան Հրանտ – 185, 240
Ավետիսյան Մկրտիչ – 317, 350, 413
Արարո – 80
Արապեան Կարապետ Էֆենտի – 496
Արարատյան Առաքել – 76
Արզանյան Հակոբ – 72
Արիստակես – 410
Արիստոտել – 290
Արծրուն Թովմա – 219
Արծրունի Արծան – 183
Արծրունի Գրիգոր – 63, 408, 419
Արծրունի Թովմա – 219
Արծրունի Սահակ – 185
Արդույան Հ. – 401
Արշակունի – 268
Արտեն Վարդապետ Մարգարյան – 317
Արտեն արքեալիսկոպոս Այտբնյան – 177
Արտավազդ – 273
Արփիարյան Ս. – 10, 435
Բարայանի Ավ. – 137
Բարիլաս – 262, 265, 287
Բարկեն Եսիսկոպոս Կյուլեսերյան – 235, 329
Բագրատիոնի Իռան – 149

Բագրատոնի – 193
Բագրատոնի Արսեն – 171, 173–176, 319
Բագրատոնի Կարապետ արքեալիսկոպոս – 149
Բագրատոնի Սահակ – 185, 216
Բագրատոնիներ – 224
Բագրևանդյան Սահակ – 309, 310, 313–315
Բակունին – 439
Բաղրամար – 139
Բաղրամյան Հովհաննես – 197, 299, 303
Բաշինջալյան Գ. – 477
Բասիլոսյան Կարապետ – 99, 100
Բասմաջյան Կ. – 482
Բարդուղիմենոս – 180
Բարդուղիմենոս Զամիշյան – 48, 91, 102, 424, 486, 469–471, 473, 498
Բարեյլ Բերտրան – 281, 431, 491, 492, 494, 496, 497
Բարբորիմենոսյան Ներսես ծայրագոյն Վարդապետ – 463
Բարխուդարյան Վաղիմիք – 241, 246, 398
Բարդուղիմենոս Վարդապետ Թագագճյան – 93–98, 100
Բարյատինսկի – 43
Բարսեղ Կեսարացի – 290
Բելեան Սարգսի – 81
Բել – 212
Բելինսկի – 74, 76, 196
Բեկարյան Ալեքսանդր – 355
Բեկարյան Հարուրյուն – 354
Բեյ Մամիկոնյան – 107, 301
Բենիկ – 204, 250
Բենիկ Վարդապետ – 349
Բժշկյան Հ. (Գայ) – 333
Բիկոնսֆիլդ – 393
Բիկով – 352
Բիսմարկ – 396
Բյուզանդացի Նորայր – 259, 264, 482
Բոգուլավսկի – 333
Բոու Ամպահակ – 212
Բորբորիսոն – 285
Գ. Հասել – 148
Գարբիելյան Գարբիել – 457
Գարբիելյան Սարգս – 452
Գարբյան Հովսեփ – 259, 480
Գալեմքերյան Գրիգորիս – 68, 177, 481, 482
Գալո – 112
Գալուստ – 139
Գալստյան Երեմիա – 462
Գալֆայան Խորեն – 394
Գամառ-Զարիսա – 477
Գարագաշյան Ա. – 220, 284
Գարագաշյան Մարտիրա – 480
Գարայնի Խան – 409
Գարեգին Առաջին – 129
Գարեգին Նժդիկ – 302
Գարիբալդի – 417
Գալիամաճյան Գ.ր. – 477

Գեղամ Սևան – 133
Գեղամյան Եղիշե – 149
Գևորգ – 327, 351, 452
Գևորգ (Հինգերորդին) (Սուրենյանց) – 57, 154
Գևորգ Դ. Կոստանդնապոլսեցի – 42–44, 235
Գևորգ Եպս Յությունյան – 476
Գևորգ Սուրենյանց – 508
Գևորգյան Տեղիկեր – 93, 94, 99, 100
Գեղորգ – 80
Գիրս Նիկոլայ – 43, 44, 155, 423
Գյողիանդարյան Արքահամ – 183, 331
Գյուլբենկյան Գալուստ – 364, 374
Գյուլխանդանյան Արքահամ – 331
Գյուտ – 186
Գոզաքսըզյան Կարապետ – 317
Գոյիցին – 199–202, 208
Գոլորորողին – 406
Գովիդիկյան Գ. Գիգոր – 479
Գորեմիկին – 101, 199, 316
Գուլքարզյան Կարապետ – 317
Գվիդոն – 396
Գ. Գոգ – 84
Գրիգոր Աստվածարան – 290
Գրիգոր Լուսավորիչ – 79, 94, 180, 214–216, 273, 285, 486, 496, 508
Գրիգոր Սրանչելագործ – 290

Գրիգորյան Գ. Գ. – 496
Դաղյան – 391
Դանիել Ասորի – 271, 272, 286, 287
Դանիել Վարդապետ – 310, 314
Դանիել Վարուժան – 129
Դանիելյան – 269, 270, 314
Դավիթ Աճիար – 172, 183, 186, 210, 272
Դավիթ Արևելյան – 377
Դավիթ Բեկ – 224
Դեղի-Քեշիշյան (Խե) – 99
Դեյանով Իվան – 43, 45, 155
Դեմիրճյան Դերենիկ – 218–221, 224, 225
Դենինտ Ալեքսանդր – 8, 47, 135, 136, 141, 142, 155–157
Դերձակյան Արիստակես – 39
Դյուլորի Ե. – 259, 261, 264
Դշտուին – 112
Դոբրոլյուրով – 196
Դոնդուկով-Կորսակով Ալեքսանդր – 43–45, 146, 155, 423
Դուրյան Եղիշե – 329, 424, 458, 460, 463, 467, 471, 473, 477, 488
Դուրյան Պետրոս – 477
Եայրճրօղլու – 94
Եզյան Կ. – 137, 141
Եզնիկ Եսլիսկոպոս Ապահովի – 426
Եզնիկ Կողբացի – 172
Եկատերինա II – 400
Եղիազարյան Սուրեն – 303

Եղիշե – 31, 40, 57, 172, 183, 217–221, 334, 342, 505
Եղիշե Դուրյան – 329
Եղիշե Պահլավոնի – 329–334
Եղշատյան Սուրեն – 113, 303
Ենիստոնյան Նշան – 96
Ենովք վարժ. – 183
Եսիկան Սամոսատցու – 287, 288
Եսայան Հովհաննես – 457
Եսայեան Կարապետ – 86
Եսայի Հասան Ջալալեան – 246
Եսայի պատրիարք – 321, 322, 406
Եսայի Տայեցի – 475
Եվսեբիոս Կեսարացի – 290
Երամյան Համբարձում – 309, 314, 413–415
Երեմյան Միմեռն – 328
Երեմյան Սուրեն – 225
Երեցյան Գևորգ Եսլիսկոպոս – 327
Երիցյան Ալեքսանդր – 70
Երկանյան Տեր Կարապետ – 86, 96, 98–100
Երմոլով – 229
Եփրեմ Ասորի – 290
Եփրեմ Զորագետցի – 229
Զահրատ – 130
Զարարյան Բարսել – 350
Զինովի Իվան – 43, 45, 155, 435
Զորյան Պետրոս – 130
Զոհրաբյան Սովետս – 72

Զոհրապ Գ. Գիգոր – 420, 431, 434–450
Զույան Սեղս – 130
Զորյան Ստեփան – 105
Էղվին Պիրս – 494
Էքայիկյան Հակոբ – 419
Էմին Մ. – 270, 271
Էնվեր Փաշա – 64
Էնթիանյան Համբարձում – 194
Էռնեստ Լորու – 431, 491
Էվլիյա Չելեբիի – 378
Թաղեսու (Առաքյալ) – 180, 486, 498
Թաղեար բեյ – 64, 449
Թարխանեան Գրիգոր – 236
Թեմուրզադեներ – 122
Թեմուրոս Միստուսացի – 262
Թեմուրոս Ոշտունի – 224
Թերզյան Հակոբ – 368
Թեղողս Կայսեր – 222
Թիմուրյան Միասք – 127
Թիրաքյան Հարոբրյուն – 10
Թովմանիսյան Արտեն – 408–410
Թորգոմ – 351, 352
Թորոս – 9
Թումանյան Հ. – 55–61
Թումանյան Հովհաննես – 302
Թումանյան Նվարդ – 60
Թումյան Թուման (Թորգոմ) – 348, 350, 351
Թուրիկ Եալ. – 183
Թրիկո – 96
Ժաղովսկոյ – 11

Ժամհարյան Մարգար – 349
Ժան Պոլ Սարտր – 132
Իզնատն – 389–391
Իզմիրլեան Մատթեու – 11, 40, 48, 57, 83, 87, 100–102, 155, 162, 310, 313, 315, 316, 324, 390, 424, 428, 429, 432, 437, 462, 466, 468, 469, 473
Իլլարիանովիչ Սիխայիլ – 208
Ինճիճյան Դ. – 259, 270
Իսահակյան Ավ. – 56
Լազարյան Հովհաննիմ – 70
Լազարյաններ – 71, 76, 401
Լայարդ – 390
Լայբնից – 196
Լենին – 208
Լեռ – 15, 58, 264, 268, 283, 284, 345, 348
Լեռնյանց Գարեգին – 68
Լիխոտին – 149
Լինչ – 407
Լոյդ Զորջ – 396
Լյուբոյ Ստանիլավ – 209
Լոռուսն Հայսին – 495
Լորիս Սելիքով – 276, 389, 396
Լուկովոս – 20
Խարանայան Ե. – 149
Խալաք – 111, 112
Խալարյան Գրիգոր – 482
Խանազատ Ռուբեն – 9, 325
Խաչատրյան – 125, 139
Խաչատրեան Տէր Խաչատրյան – 86

Խաչատրյան Գ. – 259
Խաչիկ – 17
Խապայան Սահակ – 428
Խառատյան Ալբերտ – 374, 375, 382
Խարախսանեան Ներսէս – 80–83
Խորով – 183
Խորածանյան Դանիել – 252
Խորեն Ստեփանե – 192–197
Խորենացի Մովսէս – 150, 172, 185, 210, 212, 217, 272, 505
Խորիսոռութեաց Խորեն – 221
Խորձենացի Տիրայր – 183, 287
Խրախունի Չարեն – 130
Խրիմյան Սկրտիչ (Խրիմյան Հայրիկի) – 4, 5, 7, 10, 11, 31–36, 39, 40, 47, 51–54, 57, 63, 69, 78, 79, 81, 84, 88–91, 100, 102, 116, 117, 120–126, 128, 137, 139, 141–146, 155, 156, 158, 159, 160–164, 169, 170–183, 185, 195, 199, 200–202, 206, 207, 233, 234, 237–239, 277, 279, 313, 315, 317–329, 335–344, 383–385, 389, 395–397, 394, 405, 406, 408, 410–412, 415, 419, 443, 451, 462, 463, 475, 476
Խրուշչով – 293
Շատորեան Ալ. – 477
Կամսարական Կ. – 135–144, 146, 147
Կանայան Դրաստամատ – 243, 294
Կանոնի Սուլեյման 381

Կանչելի – 421, 422
Կասյան Սարգս – 355
Կասպարով Վաղիսավ – 355
Կարապետ Երգնկաց – 16
Կարապետ Կեսարացի – 377
Կարապետյան Լուսիկ – 55, 57
Կարքեցի Հովհաննես – 229, 230
Կարենյան Հակոբ – 72
Կարնարվոն Լորդ – 395
Կարո Սասունի – 84
Կաֆյան Գարբիել – 9, 350
Կեսարացի Գրիգոր – 377
Կերեցյան Խաչատրու – 8, 419
Կիրակոս Գանձակեցի – 219, 266
Կիրակոսյան Ջ. – 392
Կյուլեսելյան Բարեկն – 482
Կյուլպենլյան Պատրիկ – 457
Կյուրեղյան Իզնատինու – 474, 476
Կնուսյան Բոգդան – 208, 355
Կնուսյան Լյուդվիգ – 355
Լոյլուրակին – 147
Լոմիրսա – 104, 334
Լոնիքեր – 482
Լոստանինու – 72
Լոստանյան Էմմա Աշոտի – 3, 4, 5, 6, 236, 240, 242
Լոտոշ Արամ (Արամ Սանյան) – 113, 303
Լորյուն – 259, 261–264, 266–270, 282, 285, 288, 505
Լորտի – 394

Լոման – 282
Լոռուպ – 342
Հազկերտ – 222
Հազկերտ Ա – 261
Հազկերտ Բ – 261
Հալածյան Պետրոս – 436, 437
Հախումյա Սիմեոն – 346
Հակոբ պատրիարք – 179
Հակոբ Փաշա – 11
Համամշյան Սարգս – 390
Համբարձումյան Կոստի – 353, 354
Համբարձումյան Սարո (Սարգս) – 354
Համիլ Զալալեյին – 276
Հայկ նահապետ – 212, 216
Հառտին Ալբերտ – 494
Հասան Ֆեհմի Փաշա – 426
Հատուենեան Ռուպեր – 129–135
Հարուրյուն – 328
Հարուրյունյան Հ. – 267, 269, 271
Հերիքնազ – 112
Հիպատոլիոս – 261
Հիսուս – 320, 505
Հյուրշման Հ. – 259
Հովհորդ – 82
Հոմերոս – 174
Հովհան Եկեղեցացի – 287
Հովհան Մանդակոնի – 183
Հովհան Ռուկերան – 290
Հովհաննես Դրաստամակերտցի – 219
Հովհաննես Խուլ – 377

Հովհաննես պատրիարք – 319
Հովհաննես Պլուզ – 215
Հովհաննես Սագրզը – 394
Հովհաննես Քողոք – 405
Հովհաննիսյան Աշոտ – 4, 126, 128, 167, 333, 355, 347, 349,
Հովհաննիսյան Միքայել – 349
Հովհաննիսյան Ռաֆիկ – 93
Հովհաննիսյան Սարգիս – 349, 353
Հովհաննիսյան Սերգեյ (Արամ Մանուկյան) – 349, 350, 353
Հովհաննիսյանի Ար. – 137
Հովհաննիսյան-Վարանյան – Միքայել – 349
Հովհանն – 183
Հովհանյան Դևոնդ – 480
Հովհանյան Պողոս – 480
Հովհեփ Էմին – 484
Հովհեփ Պաղճածի – 287
Հովհեփ Սարսոն – 476
Հովհեփ Վայոցձռեցի – 183
Հովհեփ Փիրումով – 294
Հովհեփյան Գարեգին – 57, 298, 349, 354, 430
Հովհեփյան Գարեգին վաղապետ – 430
Հովհն Եռուխն – 27
Հուսեին աղա – 409
Հուսիկ քահանա Քաջունի – 426
Հռոփանոս – 262
Հրաչյա – 96
Ղազար Զահկեցի – 245

Ղազար Վարդապետ – 83
Ղազար Փարաեցի – 62, 259, 263, 265, 266, 268, 269, 282, 284, 285, 287, 288, 505
Ղազարեան Արմենակ (Դժոխը Հրայր) – 84
Ղազարիկ – 183
Ղազարոս Աղայան – 346
Ղենդ – 298
Ղենդ Երեց – 57, 94, 183, 349, 430, 505
Ղորդանյան – 107, 301, 331
Ղուկասյան Ղուկաս – 294
Շամճեյան Փիլիպոս – 480
Շանկյույն Հարություն – 9, 10, 11, 12, 14
Շիհաննիկույսան Արքին – 16, 17
Մազմանյան – 113
Մազմանյան Միքայել – 301
Մաքենս Ա. Կոստանդնապոլսեցի – 42
Մաքենս արք. – 308
Մաքենսյան Հրաչյա – 305
Մալխասյան Ս. – 264
Մալխասյան Ստ. – 268, 271, 482
Մակար Թելուտեցի կարողիկոս (Մամիկոնյան) – ամ. հայոց կարողիկոս – 49–51, 56, 158, 162, 197, 326, 328, 347, 420–423, 451–453, 454, 462
Մաղալով – 331
Մամբիե Վերածնող – 183

Մամբրե Խափսկոպոս – 80, 328, 329
Մամիկոնյան – 221
Մամիկոնյան – 283
Մամիկոնյան Հովհան – 150
Մամիկոնյան Վարդան – 183, 218, 220, 223–225, 266
Մամիկոնյաններ – 224, 267, 268
Մաննելյան Հակոբ – 225, 261–263, 266, 269
Մանդինյան Սեղրակ – 37, 209, 346, 452
Մանուկեան Ալեք – 133
Մանուկեան Արամ – 244, 294, 349, 354
Մանուշակ – 112
Մաշտոց Եղիվարդեցի – 289
Մատրես – 308
Մատրես Ա Կոստանդնապոլսեցի – 154
Մատրես Ուհայեցի – 150
Մատրես Բ Կոստանդնապոլսեցի – 227
Մարգարիտ – 111, 303
Մարգարյան Արեն – 317
Մարզպետոսի Գևորգ – 224
Մարկինոս – 222
Մարկվարտ – 271, 482
Մարկվարտ Ե. – 263
Մարտրյան – 122
Մարուշ – 112
Մարտել Պրուս – 132
Մարտիրոսյան Լիլիկ – 115
Մարտիրոսյան Մ. – 268
Մարտիրոսյան Ա. – 266, 267, 271
Մացակ – 114
Մելիք Յովյան (Բաֆֆի) – 332
Մելիքզարե – 117
Մելիքյան – 412
Մելիքյան Արշավիր – 167, 294
Մելիքյան Պողոս – 123, 125, 146
Մելիքյան Պողոս – 36, 91, 119, 120, 122, 123, 406, 415, 421
Մելիքյան Ստ. – 315
Մելիք-Յովյան Ա. – 332
Մելքոնյան Աշոտ – 6, 147, 148, 149, 151, 240, 256–258, 334
Մեհմեդ – 376
Մեհրաբյան Հոսկի – 475
Մեղավորյան Հակոբ – 9
Մենակ (Եզոր Առատամյան) – 351
Մեջուխչա – 124
Մեկրով Մաշտոց – 172, 179–186, 210, 211, 216, 222, 261–266, 269–274, 282–290
Մերկանյան Հաճի – 94
Միասերյան Եղիսաբեր – 416
Միասնիկյան Ալեքանդր – 333
Միլիաս փաշա – 335, 337, 385, 387, 388, 394, 439
Միլիայիլ Ռոմանով – 276
Մինաս – 94, 279, 394
Միքայել – 412
Միքայելյան Քրիստովոր – 402

Սիրայէլեան Վարդգէս – 241
Սլսիրար Այրիվանեցի – 266
Սլսիրար Անեցի – 266
Սլսիրարյան Մարգո – 192, 193, 195–197
Սլսիրարյան Մարգո – 69, 71, 75, 77, 165–169
Սլսիրարյան Վերգուշ – 105, 112
Սլըյան Հ. – 459–463, 465, 470, 473
Սլըյան Հովհ. ավագ քահանա – 458, 464, 467
Սլըրտիչ աբեղա Աղավնունուն – 459
Սլըրտիչ ավագ սարկավագներ – 461
Սլըրտիչ Ավետիսյան – 317, 319
Սլըրտիչ Էմին – 37, 267
Սլըրտչյան Հարություն – 293, 306
Սլըրտչյան Հարություն – 306
Սյասնիկեան – 243
Սյասնիկյան Ալ. – 333
Սոսալով – 199, 454, 456
Սոսոն բիձա – 114
Սովուս Խորենացի – 183, 261, 263, 266, 268, 269
Սովուս Կաղանկատվացի – 219, 266
Սովուս Սիլիկյան – 294, 297
Սովուս – 184
Սովուսյան Գորգեն – 108, 302
Սուհամմել Ե-ին – 372

Մուշեղ Տարոնեցի – 183, 287
Մուստաֆա Քեմալ – 359
Մուրադ (սոլլան) – 426
Մուրադ V – 335, 385
Մուրադ Գ-ի – 381
Մուրադեան Սկրտիչ Ա. քհնյ. – 87
Մուրադեան Յովհաննես վրդ. – 80, 83
Մուրադյան Մ. – 462
Մուրադյան Մելքիսեդեկ – 47, 49, 155, 158
Մուրավյով – 201
Մուրատ – 88
Մուրատ պեյ – 17
Մուրյան Մսեր – 76
Մորա Մելիք – 237
Յ. Քեմալ թեյ – 371
Յակոբոս Պատրիարք – 172
Յովհաննիսեան Սիմեոն վրդ. – 83
Յուրուճյան Գևորգ – 413
Յուսուֆ փաշա – 252
Յուսուֆ Քեմալ թեյ – 370
Յուսուֆյան Տիգրան – 425, 457, 489
Նազար – 109
Նազարբեկով Թովմաս – 106, 107, 113, 294, 295, 297, 299, 301
Նազարեթ Զավուշ – 94
Նազարյան Ստեփանոս – 74–76, 167
Նազըմ փաշա – 310, 311, 358

Նազիմ թեյ – 64
Նարանյան Կարասյան – 412, 414, 419
Նարանյան Մարկոս – 414
Նարանյան Պողոս – 7, 91, 410, 412, 413
Նարանյան Սիրայել – 63, 74–76, 115–126, 129, 159, 167, 168, 232, 275
Նավաշիճե – 205
Նահապետյան Արշակ – 452, 453
Նարեկացի – 217
Նարիմանով – 243
Նարինյան Սիմոն – 348, 349
Նարայի Խորեն – 48, 394, 395, 396
Նելիդով Ա. Ի. – 49, 52, 136, 142
Նեռլեքեն – 259, 264
Նեստոր – 262
Նեստոր Խոկանդեր – 376
Ներսես – 328
Ներսես Աշտարակեցի – 42, 70, 73, 345, 401
Ներսես Էպ. – 328
Ներսես Ալեծ – 57
Ներսես Շնորհալի – 217, 266
Ներսիսյան Սլըրտիչ – 4, 62–67
Նժդիկ Գարեգին – 302
Նիկոլ Դուման – 352–354, 384, 411, 417–420, 485
Նիկոլ Պողոսյան (Վասնա իշխան) – 348

Նիկոլսկ բարոն – 43
Նիկոլայ – 155
Նիկոլայ 2 – 54, 88, 199, 200, 202, 203, 206, 361
Նիկոլայ Նիկոլաևիչ – 276
Նիկողայոս (Կիլիկիայի կառողիկոս) – 91
Նիկողայոս Պալյան – 159
Նիկողոս Խաչիկոպոս – 94
Նիրուլ հույն – 16, 27
Նյուտոնի Գրիգոր – 290
Նշկյաններ – 419
Նովիկով Ե. Պ. – 136
Նորատունկյան Գարրիել – 412, 425, 489
Նորար փաշա – 396
Նորյան Հովհաննես – 50, 390, 414, 424, 435
Շահան-Քեշիշյան Թորոս – 96
Շահգելյան Սիրայել – 348
Շահեն – 412
Շահնազարյան Անդրեյ – 295
Շահնուր Շ. – 133
Շահոմյան Ստեփան – 292, 331, 362
Շահպալյան Հակոբոս – 426
Շամյան Սոլոմոն – 130
Շամբեշիշյան Փանոս – 94
Շանշյան – 345, 346
Շապուն Վիկոտր – 494
Շարիփ – 310, 314
Շերեմետե – 136, 198, 406

Ըերմագանյան Գալուստ – 72, 225
Շիլք – 439
Ծիշմանեան Ղետնդ – 82
Ծիրոյան Խաչատոր – 91, 410, 421
Ծմավոնյան Հարուբյուն – 241
Ծնորհալի ավագ սարկավագ – 461
Ծուշանյան Վ. – 133
Ուկան Ստ. – 119
Ուելտոն – 496, 497
Ուզունյան Ռափայել – 480
Ությունյան – 464
Ուխյամս – 312
Ուլուբարյան Բագրատ – 296, 297, 306, 355
Ունճյան Արիկ – 424, 425, 457, 473, 488
Ուրուսվ – 423
Զամուռճյան Հովհաննես – 119, 346
Զամուռճյան Տերյենց – 345, 346
Զամչյան Մ. – 259, 505
Զառու Գևորգ – 362
Զարենց Ե. – 239, 321, 322
Զերազ (Մինաս) – 94, 161, 279, 394, 397
Զիլինգարյան Սիմոն – 145
Զոլացյան Փանոս – 94, 96
Զոպանյան Արշակ – 327
Զուգասարգեան Բարկեն – 213

Չոլիսաճյան – 116
Չոլիսաճյան Մարեն – 346
Չոլիսաճյան Մատրեն – 346
Պալասանյան Ստ. – 37, 452
Պահլավոնի Եղիշե – 329–334
Պահլավոնի Նորայր – 329, 330, 334
Պանիրյան – 122
Պապիլյան Հակոբ – 370, 371, 444
Պասկեիչ – 229
Պատկանյան Գարբիել – 72, 73, 167
Պատկանյան Ո. – 415
Պատկանյան Քերովիք – 37, 74, 270, 415
Պարզյան Սուրիաս – 462
Պարթևյան Սուրեն – 370
Պարոնյան Հակոբ – 161
Պետոն – 350
Պետրոս Բյուլբյուլի – 125
Պետրոս Սեծ – 229, 399, 400
Պետրոս Շանջյան – 345, 346
Պիսարե – 196
Պյատոն Եղիսացու – 287, 290
Պիեվե – 202, 203
Պողոս – 416
Պողոս-քեկ – 297
Պողոսի – 122
Պողոսին – 36
Պողոսյան Հայկազ – 93, 412
Պողոսյան Նիկոլ (Վանա Իշան) – 348, 350, 352

Պողոսյան Վարուժան – 197
Պոյաճյան Համբարձում (Սուրադ) – 9, 10, 12, 81, 82, 370
Պոտորյան Ալբատիչ – 68
Պորփյուր – 290
Պոռշյան Պերճ – 346
Զալալելլին – 337
Զալալյան Սարգիս – 76, 116–118, 345, 346
Զափարիձե Ալոշ – 331
Զեյմս Բրայս – 395
Զևադ թեյ – 366
Զիվիլեգով Ալեքսանդր – 402
Զուղայեցի Հակոբ – 484
Զրբաշյան Էղվարդ – 61
Զրպեայան Շահան – 230
Ուեխս Լիքենդի – 148
Ուեմզի փաշա – 96, 366
Ուիրակին – 331
Ուստում – 204, 244, 331, 332
Ուորեն – 304, 350, 351
Ուորինյաններ – 177, 480
Ուուփինյան Նահապետ – 159
Ուուճուզյան Գ. – 390
Ուստու – 196
Ուուփինոս – 262
Ո. Դանիելյան – 128–130, 132–135
Սաալելլին – 310, 311, 313–315
Սալիմ թեյ – 437
Սալլանըյան Միքայել – 71
Սալվադոր – 96
Սահակ – 264, 265
Սահակ – 282, 284–286, 289, 291
Սահակ – 328
Սահակ Եպ. – 328
Սահակ Պարքն – 57, 126, 181–183, 272, 274
Սահակ Վարդապետ – 310, 313–315
Սահառոնի Ավետիս – 30, 405
Սամարյան Սերոբ – 107, 108, 109, 301, 303
Սամուել – 338, 342
Սամվել Անեցի – 266
Սայիդ փաշա – 53, 445
Սանասարյան Ա. – 141
Սանիկնց Յովհաննես – 217
Սասանյաններ – 222
Սասունցի Դավիթ – 237, 407
Սավիեն փաշա – 390
Սարաֆյան Մովսէս – 401
Սարգիս – 461
Սարգսյան Լևոն – 347
Սարյան Ալբատիչ – 414
Սարտիսան Ա. – 390
Սարուխանյան Մարտիկ – 350
Սաֆրատյան Ա. – 374
Սերաստացի Ալիքար – 474, 476, 477, 483
Սերաստացի Նազարեթ – 16
Սերեն – 219
Սելյակյան Արիատակես – 462
Սելիմ – 381
Սևմերճյան Մնացական – 92, 93, 100

Սենեմ խանում – 368
Սեպոն – 350
Սերովք Արարատյան – 230
Սերվիչն – 394
Սևակ Գ. – 269
Սևիլյան Հրաշյա – 116
Սեֆերյան Սիմոն – 434
Սիլիկյան – 301
Սիմոնյան Հրաշիկ – 349, 356, 357, 359, 360, 362, 364, 370, 418
Սիպիլյան Կղեմես – 480, 481
Սիրան – 112
Սիրաք – 338, 342
Սիրունի Հակոբ – 421, 433
Սմբատ Բյուրատ – 93
Սոլսբերի – 395, 396, 496
Սողոնն – 182
Սուլեյման Ա – 376
Սուվորով – 63
Սուրեյա Փաշա – 162
Սուրենյանց Գևորգ – 298
Սուրմառնի Դանիել – 432
Սվաճյան Հարություն – 36, 119, 124, 126
Ստալին – 63
Ստեփան Վարդապետ – 86
Ստեփանոս Սյունեցի – 183
Ստեփանոս Տարոնեցի – 219
Ստրչիգովսկի – 482
Մրկանձտյանց Գարեգին (Սանդենց Օհանես) – 4, 7, 11, 30–39, 40, 63, 77, 79–81, 90, 91, 116, 120–128, 162, 173, 209–217, 237,

249–259, 324, 397, 407, 408, 411, 412, 420, 451, 477
Վաղինակոսն – 394, 395
Վահան Լիքենի – 11
Վահան քահանա Խոյեան – 426
Վահրամ Պահլավոնի – 224, 282
Վասակ – 218, 222
Վարանյան – 204, 349
Վարանյան Մ. – 209
Վարդան (Սեհրաբյան Սարգիս) – 354
Վարդան Բարձրաբերդի – 219
Վարդան Վարդապետ – 83–86, 89
Վարդանյան Փիլիպոս – 452
Վարդես (Հովհաննես Սերենկոյան) – 370, 442
Վարդիքը – 197
Վարժապետյան Մամիկոն – 93
Վարժապետյան Ներսես – 37, 47–49, 153, 155–157, 167, 232, 247, 252, 276, 280, 385, 388, 389, 390, 391, 393, 397
Վերեր – 482
Վեհապետյան Հարություն – 324, 327, 328
Վեհապետյան Հարություն – 33, 34, 47–50, 97, 155, 156, 324, 327, 328, 462
Վեհիք Փաշայի – 110, 298, 304, 306
Վերիլյան – 108, 302

Վիքրո Հանրի – 93, 97
Վիտունի – 201, 206
Վիրզիլոս – 171, 174
Վոլթեռ – 27
Վորոնցով-Դաշկով – 208
Վուան Դ. Կրման – 261, 263
Վուան Ե – 261
Վուանշապոհ – 181, 182, 216, 263, 270–272, 282, 285–287
S. S. Սևկար – 325
Տաղավարյան Նազարեթ – 370
Տամատեան Սիհրան – 81, 82
Տաշյան Հակոբ – 481
Տատիչե – 198
Տատյան Արքին Փաշա – 11, 424, 473
Տատյան Վահրամ պեյ – 10
Տեր Գարրիելյան Ա. – 333
Տեր Գրիգոր – 96
Տեր Հարությունյան Նիկողայոս – 68
Տեր Հովհաննես – 319
Տեր-Սկրտչյան Գ. – 261, 264
Տեր-Գարրիելյան Ա. – 333
Տեր-Հակոբյան Կարապետ – 93
Տեր-Մարտիրոսյան Մարտիրոս – 93
Տեր-Մինասյան Վահան (Պարտիզակեցի) – 247
Տեր-Սկրտչյան Գ. – 266
Տեր-Մովսիսյան Մերուս – 59
Տեր-Նահապետյան Ղևոնյ – 93
Տեր-Սարգսենց Տելքան – 410

Տեր-Սարգսյան Արխատակես (Տելքան) – 247, 411
Տեր-Սերովք – 268
Տերտերյան Արտեն – 348
Տելքան Երեմիա – 116, 405, 410–412
Տեր Բարսեղ – 86
Տեր Գարրիկ – 86
Տեր Կորապետ – 86
Տեր Հասրապ – 86
Տեր Մինասեան Ռոբեր – 35, 85, 105, 111, 113
Տեր Քաջ – 86
Տեր Քերոր – 86
Տիգրան II – 14, 20, 224, 354
Տոլսոյ Դիմիտրի – 43, 155
Տոնապետյան Պետրոս – 10
Տողյան Հակոբ Չելեսի – 482
Տորսոնյան Եղիշ – 419
Տրդատ Մեծ – 214, 215, 285
Տր. Ռոբտուլլը – 496
Րաֆֆի – 37, 63, 386
Փասպանյան Գ. – 7
Փալստոս Բյուզանդ – 150
Փարպեցի – 218–221
Փափազյան Ավ. – 375
Փափազյան Ստ. – 395
Փափազյան Վահան – 353
Փիլոն – 290
Փիրումյան – 298
Փիրումյան Դանիել-բեկ – 294, 295, 297
Փորբուգայյան Ակրտիչ – 7, 137

Փոքր Կորյուն – 266
Քարմիլ – 112
Քեռութեան Երեմիա – 375, 505
Քեշյան Բյուզանդ – 14
Քեփսիզյան Սկրտիչ – 91, 92
Քիրկասեան Խորայէլ – 83
Քլետոն – 136
Քոսյան – 257
Քրիստո – 320, 325, 432, 490
Օբեյդուլլա – 144–146
Օզանյան Անդրանիկ – 59, 61, 65
Օհանես քահանա – 96
Օհանես Քոլող – 30
Օնու Մ. Կ. – 136, 143
Օսման վիաշ – 447
Օսյան Գրիգոր – 159, 279, 335, 397, 394, 439
Օրբեյան Ատեփանոս – 150, 219
Օրի Խորայէլ – 484
Օրմանյան Անտոն – 416, 417
Օրմանյան Մաղարիս արքեպիսկոպոս – 5, 7, 87, 102, 121, 207, 226–236, 239, 241, 245, 246, 264, 266–274, 280–291, 315, 328, 416, 418–430, 431–433, 435, 448, 449, 451–458, 460–473, 483, 484, 486–491, 494–496, 498, 499, 501–508

Յազլյան Պերճ – 134
Յուաղ վիաշ – 15
Յրեղերիկ Դեմիս Գրին – 406
Յրեղերիկ Մարլեր – 431, 491
Յրենսիս Շաբոնիեր – 494
Յրենսիս Պրեսանսե – 371

Гирс Ի. Կ. – 29
Дервиш Паша – 29
Нелидов – 29

ՏԵՂԱՆՈՒՆԵՐԻ ՑԱՆԿ

Արաքուման – 478
Ազոլիս – 32
Ազրակ – 251
Աղանա – 98, 366–373, 432, 444
Աղերքեցան – 148, 188, 243, 359
Աղրիանապոլիս – 276, 277, 376, 388–390
Արագինե – 79
Արենք – 10, 184
Ալաշկերտ – 139, 148, 256, 276, 277, 337, 393, 396, 414, 419
Ալեքսանդրապոլ – 106, 107, 111, 150, 203, 204, 300, 304, 415, 478
Ալբոմբախտ – 109, 302
Ալվարինջ զյուղ – 86
Ալսարյան – 149, 150, 195, 478
Ալսարբալար – 149–151, 195, 243
Ակն – 39, 127, 248, 250, 251, 376
Ակ-սու – 225
Ահրոնք – 84
Աղրակ (Պաշրալե) – 498
Աղրամար – 33, 91, 125, 139, 172, 235, 320, 377, 403, 410, 421, 500, 503
Աղվորիկ – 251
Ամասիս – 248
Ամերիկայի Սլացյալ Նահանգներ (ԱՄՆ) – 20, 195, 241, 339, 460
Ամիդ – 262, 265
Ամստերդամ – 400

Ամրտոլու – 79
Այգեստան – 30, 311, 313, 405
Այրարատ – 125, 176, 294
Անգլիա – 11, 26, 27, 44, 82, 85, 195, 278, 279, 386–393, 395–397, 497
Անդր – 86
Անդրկովկաս – 62, 70, 74, 76, 106, 110, 116, 150, 188, 204, 229, 292, 353, 354, 360, 374, 375, 401, 402
Անդրոն – 94, 95
Անդրիխաս – 129
Անի – 176
Անտիոք – 486, 496
Աշկալա – 257
Աշտարակ – 205
Ապարան – 107, 188, 301
Ապուչիս – 250
Ապրանք – 251
Առաքելոց վանք – 79, 83, 402
Առնիատ զյուղ – 237
Ասիա – 155, 506
Ասիական Թուրքիա – 389
Ասորեստան – 339
Ասորիք – 255
Ասորախտ – 69, 195, 398
Ավարայր – 103, 109, 175, 187, 225, 291, 302
Ավոյի դաշտ – 311
Ավստրիա – 20, 195, 232, 479

Ավստրո-Հունգարիա – 189, 278
Ավրան գյուղ – 80
Արաքիլիք – 7, 248, 251, 410
Արագած – 62, 107, 301
Արարատ – 171, 186
Արգո – 251
Արդահան – 188, 277, 391
Արևելյան Անտոլիա – 146
Արևելյան Եվրոպա – 379
Արևելյան և Արևմտյան Հայաստան – 7, 13, 16, 31–33, 37, 39–41, 46, 54, 59, 64, 70, 71, 89–91, 100–102, 106, 111, 117, 118, 124, 127, 135, 143, 145, 146, 148, 149, 151, 152, 157, 158, 160, 161, 210, 213, 215, 219, 222, 229, 237, 240, 247, 248, 251, 252, 277, 293, 307–309, 318, 326, 335, 349, 350, 376, 377, 379, 380, 382–384, 387, 389–391, 394, 401–404, 406, 407, 410–414, 418, 427, 429, 442, 452, 456, 466, 477, 488, 503
Արևելյան Ուռմելիա – 143
Արծկե – 310
Արճակ – 325
Արճեղ – 310
Արմաշ – 226, 280, 327, 328, 424, 457, 459, 461–465, 467, 469–471, 488, 506
Արտազ (Մակո) – 498
Արտոս – 251
Արցախ – 5, 37, 348, 355
Արեա – 16, 17

Արիա – 12
Բաբելոն – 339
Բաբելոն – 148, 411
Բազմաշեն – 251
Բարում – 53, 110, 111, 189, 391
Բալկաններ – 276, 277
Բալու – 7, 255, 413
Բակուրիանի – 150
Բաղեց (Բիրլիս) – 39, 81, 82, 256, 384, 395, 410, 411, 447
Բայազետ – 139, 148, 256, 276, 277, 314, 389, 391, 393, 396
Բայաս – 17
Բաշ-Ապարան – 103, 108, 109, 291, 294, 300, 304
Բասեն – 140, 183, 253, 256, 351, 352, 419
Բարդուղիմնես Առաքյալի վանք – 317
Բարձր Հայք – 147, 149, 210, 251, 257
Բարու – 110, 165, 194, 304–306, 330–332, 359
Բերլինեն – 320
Բեյրութ – 372
Բենկա – 248, 250
Բենլին (Պենլին) – 9, 15, 30, 37, 135, 137, 142, 170, 176, 189, 233, 234, 251, 252, 277–279, 318, 395–398, 406, 409, 418
Բեսարարիա – 73, 148
Բերա քաղաքաս – 416
Բերդուգ-Զայ – 93

Բյուզանդիա – 12, 222, 223
Բոսնիա – 385
Բոստոն – 232, 330, 385, 460
Բորչալո – 107, 301
Բուլայեշտ – 189, 190, 387
Բուլղարիա – 232, 275, 277, 385
Բունաշեն – 79
Բըեսա Լիսովսկ – 188, 189
Բըինդիզ – 394
Բրուսա – 91
Գանձակ – 194, 204, 241, 330
Գանձասար – 246
Գասման – 248, 250
Գարանլըք (Մուր Ճոր) – 94
Գերսեման – 320
Գելիեզուզան – 84, 86, 88
Գեղախոռ – 257
Գերմանիա – 20, 189, 195, 278, 323, 353, 386
Գոլդան գալաք – 181
Գողբն – 285, 290
Գորիս – 356
Գուգարք – 150
Գուգկունճուզ – 435
Գոմ-Գափու (Գոմ-Գարու) – 7, 9, 13, 16, 18, 22, 24, 29, 40, 51, 162, 324
Գրիգորիոսպոլ – 398
Գրիք – 257
Դամասկոս – 378, 433
Դավիթ (Թավրիզ) – 32
Դարրաս – 109, 113, 302
Դարդանել – 53

Դերիկի վանք – 409
Դեջան – 148, 256
Դիաղին – 148
Դիարբերիք – 140, 384, 447, 478
Դուրան-Բարձրավանդակ – 85, 362, 363
Դսել – 108
Դվին – 499
Եզիստոս – 87, 394, 432, 507
Եղեսչա – 183, 262, 263, 265, 290, 505
Ելլոզ – 413, 427
Ելիզավետապոլ – 241
Եկեղեց գալաք – 183, 214
Եղվարդ – 205
Ենիճե Գալեի – 96
Ելրոպա – 12, 13, 15, 25, 26, 28, 177, 195, 196, 275, 278, 281, 338, 339, 391, 392, 394, 431, 436, 476, 479, 483
Երասխ – 176
Երևան – 214
Երևան – 3, 32, 65–67, 104, 107, 117, 129, 147, 165, 187, 205, 225, 246, 293–297, 301, 312, 318, 321, 329, 349, 352, 355–358, 364, 374
Երգնիկ – 148, 252, 413
ԵրգնկաՊատու – 254
Երոսակեն – 11, 40, 51, 52, 56, 97, 102, 125, 170, 235, 318–329, 342, 405, 414, 424, 428, 429, 432, 500, 503
Եփրատ – 176

Զեյրուն – 31, 91–101, 122
Զիլե – 248
Զմար – 250
Զմյուտիս – 47, 379, 400, 412, 414, 436
Էլզաս – 278
Էջմիածին – 32, 39, 41, 43, 44, 47, 49, 50, 52, 54–57, 60, 61, 79, 116, 117, 129, 155, 163, 165, 177, 179, 193–196, 198, 203, 205, 207, 226, 231, 235, 280, 321, 325–327, 341, 343, 377–379, 382, 410, 421, 422, 424, 429, 433, 451, 452, 454–457, 462, 463, 488, 500, 506, 508
Էրզրում (Կարին) – 7–9, 33, 34, 47, 48, 82, 83, 101, 102, 110, 112, 135, 136, 140–142, 144, 147–149, 155, 156, 158, 226, 234, 251, 252, 256, 257, 259, 276, 279, 280, 304, 314, 379, 384, 388, 389, 395, 403, 411, 418, 420, 421, 448, 459, 485, 488
Ընձրաք – 86
Թարորական լեռ – 320
Թաղենու Առաքեալի վանք – 214
Թավրիզ – 317, 379
Թելեմելիք գյուղ – 93
Թիմար – 310
Թիֆլիս (Թբիլիսի) – 32, 56, 58, 59, 69, 70, 71, 105, 116, 117, 141, 146, 165, 190, 193, 194, 196, 203, 243, 302, 306, 310, 312, 345, 346, 351, 409, 419, 421, 430

Թորբում – 148
Թորոման – 312
Թուխ Մանուկ – 312
Թուրքիա (Տաճկաստան) – 11–13, 15, 29, 45, 46, 52, 53, 62–64, 82, 113, 131, 145, 150, 152, 157, 167, 188, 198, 226, 233, 234, 243, 275, 277, 278, 305, 307, 316, 335, 336, 358, 359, 362, 363, 365, 367, 372, 377, 378, 385–388, 390–393, 395, 396, 399, 433, 436, 440, 449, 493, 500, 506
Թոփ-Գաբու – 436
Թորքատ (Եփուկիս) – 7, 251, 248, 376, 379, 426
Թրիկո – 96
Ժնև – 10, 369
Իզմիր – 241, 334, 371
Իլիջա – 257
Իմերեթիա – 59, 73, 117
Իտալիա – 278, 394, 416
Իրան – 359, 395
Իրաք – 359
Լահե – 362, 363
Լեհաստան – 379, 507
Լեմն – 17
Լենքրան – 345
Լեռնային Ղարաբաղ – 151, 188, 243
Լեռնապատ – 353
Լրձե – 256
Լիբանան – 268, 390, 394, 395
Լիմ – 170

Լիվոնին – 379
Լոքարինգիա – 278
Լոնդոն – 29, 190, 387, 395
Լոռի – 58, 150, 205, 302
Լու-Անջելես – 77, 90, 112, 217, 246, 334
Խայլրլ – 368
Խանասոր – 317
Խաշխալտուխ – 86
Խասգիոյ – 86
Խարբերդ (Քարբերդ) – 38, 39, 252, 253, 255, 395, 410, 413, 434, 447
Խիզան – 310
Խնոս – 148, 351, 411
Խոյ – 353
Խորհրդային Հայաստան – 354, 357, 359
Խորհրդային Սիուրյուն – 297, 354, 357, 359
Խուր – 79
Խուլի – 84
Ծալքա – 149, 150
Կ. Պոլիս – 7, 9, 16, 29, 32, 33, 34, 35, 37–40, 43–45, 47–49, 51–53, 77, 80, 83, 87–89, 91, 100, 102, 112, 116, 118, 119, 122–125, 129, 130, 135, 136, 140, 141, 143, 144, 146, 155, 158–160, 162, 170–172, 175, 176, 179, 180, 189, 193, 207, 226, 231, 235, 241, 247, 253, 256, 275, 310, 315, 318–324, 327, 335, 337, 338, 355, 367–371,

374–383, 385, 387, 388, 389, 394, 406, 407, 410–414, 416, 417, 419, 420, 422–425, 428–438, 443, 448, 450, 452, 454, 455, 457, 461, 463, 464, 465, 466, 469–471, 473, 475, 478, 479, 484–488, 496, 497, 503, 500
Կազան – 74
Կալիֆոնիա – 190
Կալկարա – 460
Կահիրե – 378
Կաղզան – 389
Կամախ – 148, 252
Կամրկապ – 250
Կան – 257
Կաշո գյուղ – 250
Կապան – 96
Կարասու գետ – 225
Կարկառ – 310
Կարս – 96, 110, 112, 187, 188, 276, 277, 304, 350–352, 389, 391, 396, 478
Կելկիք – 148
Կեմճ – 81, 83
Կեսարիա – 376, 379, 486, 496, 499
Կիլիկիա – 91, 101, 235, 320, 327, 364, 366–370, 372, 373, 396, 414, 428, 430, 444, 446, 448, 480, 499, 500,
Կիպրոս կղզի – 278, 393, 396, 478
Կիսկիմ – 256, 421

Կիրովական (Վանաձոր) – 3, 105, 114, 303, 306
Վլոր Դար – 312
Կյումուշհանե – 252
Կոզման – 368
Կովկաս – 13, 43, 44, 51, 63, 70, 106, 135, 136, 139, 140, 144, 146, 155, 198, 199, 200, 207, 208, 298, 304, 306, 347, 407, 454
Կուրտիկ լեռ – 79
Կոմկոնց – 257
Կոռոց – 170
Հալեպ – 93, 94, 368
Համա – 147
Համազաշեխ – 83
Համամլու – 107, 301
Համսոր – 148
Հայաստան – 3, 5, 20, 30, 37, 38, 41, 61, 63, 65, 67, 78, 89, 90, 94, 104, 106, 107, 108, 110, 113, 115, 130, 131, 138, 142, 151, 160, 169, 172, 176, 180, 182, 186, 188, 189, 191, 197, 200, 209–212, 223, 224, 229, 233, 236, 237, 240, 241, 243, 244, 246–248, 255, 266, 269–273, 277–279, 283, 285, 288, 291, 293, 295, 299, 300, 301, 304, 305, 323, 324, 330, 352–354, 356, 361, 372, 374, 375, 380–385, 388, 390–393, 395–397, 399, 411, 416, 423, 443, 476, 484, 486, 498, 499, 507
Հայկավանք – 312, 313
Հայոց-ձոր – 212, 310

Հայք – 213
Հայֆա – 53
Հաջիլարա – 107, 109, 111, 113, 301–303
Հասան-Կալա – 258
Հավլաբար – 194
Հարդանան – 320
Հացեկաց – 181, 267
Հացիկ (Հացեկաց) – 283
Հերարի – 363
Հերցեգովինա – 232, 385
Հյուսեյնիկ – 253
Հյուսիսային Կովկաս – 241, 398
Հովհաննավանք – 34
Հորդանան – 320
Հորդոր – 251
Հունաստան – 241, 274, 275, 354, 395, 507
Հունգարիա – 354, 507
Հռոմ – 226, 279, 339, 394, 416, 417, 484, 486, 487
Հռոմելիս – 273
Հրազդան – 176
Զորակ – 251
Զորավանք – 213
Ղալարիա – 417, 418
Ղարաբաղ – 32, 205, 345, 346, 348, 355
Ղարաբիլիսա – 103, 104, 105, 107–114, 187, 188, 205, 291, 296, 298–306
Ղղլաղ – 109, 113, 302
Ղուզուշ – 384

Ղուրբար մեզրե – 253
Ղուրսալ – 109, 302
Ղրիմ – 275, 398
Ղապալզուր – 413
Մաղրիդ – 190
Մալարիա – 7, 248, 249
Մակերեսիա – 339
Մամոտանք – 310
Մայմեխ – 109, 302
Մայն – 190
Մանազկերտ – 32
Մանչեստր – 497
Մասիս – 175, 477
Մատրաս – 241
Մարաստան – 213
Մարգարիա – 7, 248
Մարտկո – 278
Մարց գյուղ – 205
Մղենք – 87
Մերոն – 479
Մեծ Բիխտանիա – 142, 143
Մեծ Հայք – 150, 395, 396
Մետեխ – 206
Մերդենել – 112
Մերսին – 367
Միջազետք – 270, 285, 287, 366
Միջերկրական ծով – 393
Միտիլի – 16
Մշոյ դաշտ – 32, 80, 81, 127
Մոկոնք – 86
Մովկաս – 70, 71, 75, 88, 135, 189, 190, 193, 195, 201, 263, 265, 345, 353, 356, 398–404

Մոտկան – 79
Մորեա – 479
Մուղնի – 205
Մուշ – 7, 34, 83, 89, 140, 183, 237, 251, 384, 410, 411, 414, 419, 384
Նազարեթ – 320
Ներքին Կարմիր աղբյուր – 165
Նիկոմեդիա – 466, 471
Նյու Յորք – 461
Նոր Նախիջևան – 75, 88, 195, 241, 398
Նոր Ջուղա – 400
Նորաշեն – 405
Նուխի – 135, 345
Շանոյի Դար – 312
Շապին-Գարափիսար – 148
Շատախ – 79
Շեմիկ – 79, 84
Շիշի – 40
Շիվիլիկ – 95
Շխնոց – 257
Շոշի – 32, 193, 194, 205, 344–348, 350–355
Շրզմ – 251
Ռուկուտարում – 417
Չանդր – 435
Չարսանչակ – 210, 253, 254, 384, 413
Չեննողրիս – 232, 385, 395
Չինաստան – 274
Չմշկածագ – 253
Պաղեստին – 430

Պարսկաստան – 116, 274, 350, 353, 354, 362, 363, 393, 399, 400, 404, 500
Պարտիզակ – 424, 478
Պաֆրա – 248
Պետերբուրգ – 43, 54, 146, 147, 195, 201, 277, 345, 346, 398–404, 454
Պեր-Լաշեզի – 439
Պոնտուլս – 96
Պուլանըս – 81
Պրոսիս – 376
Զաջոռի քարձունք – 107, 301
Զավախը – 147, 149–151, 241, 243, 244
Զերել-Բերերել – 368
Զհան – 367
Ռիգա – 477
Ռշտոնիք – 353
Ռումինիա – 395
Ռուսաստան (Ռուսիա) – 11, 20, 26, 27, 41, 44–46, 48, 49, 53, 54, 59, 60, 62, 69, 70, 71, 88, 89, 101, 106, 119, 135, 137, 140, 142, 152, 155, 158, 163, 164, 189, 200, 208, 229, 233, 238, 251, 275, 277, 278, 295, 316, 326, 347, 354, 379, 484, 386, 388, 390–394, 396, 398, 399, 400, 401, 407, 423, 493, 500
Ս. Արագինէ – 79
Ս. Աղքերակա վանք – 79
Ս. Բարդուղիմենս վանք – 409
Ս. Գրիգորի – 415

Ս. Դամիել վանք – 79, 83
Ս. Էլուսավորչի վանք – 416, 418
Ս. Խաչ – 399, 415
Ս. Կարասյետ վանք – 32, 34, 35, 39, 78–85, 89, 90, 93, 94, 173, 318, 402, 403
Ս. Հակոբ – 312
Ս. Հակոբյանց – 312, 318, 322–324, 327
Ս. Հարուրյոն – 399
Ս. Ղազար – 170, 171
Ս. Մակար վանք – 478
Ս. Մարարուկ – 79
Ս. Յովհաննէս – 79
Ս. Նշան վանք – 40
Սալմաստ – 317
Սալոնիկ – 358
Սամարիա – 417, 436, 438
Սամոսաստ – 183, 265, 287
Սամսոն – 248, 376
Սային-Կալա – 354
Սանդոխ – 99
Սան-Ստեֆանո – 276, 277, 278, 398, 391, 392, 393, 409, 418
Սասոն – 78–90, 94, 100, 256, 307, 350–352, 411, 425
Սատաղ լեռ – 214
Սարալ – 109, 302
Սարդարապատ – 100, 103, 107–109, 188, 291, 294–298, 300, 301, 304, 349, 353
Սր. Ծննդյան վանք – 322
Սր. Հարուրյոն վանք – 322

Սեբաստիա – 7, 248, 249, 250
Սեմալ – 84, 86
Սեպոհ լեռ – 214
Սերբիա – 232, 385, 395
Սերովրէ վանք – 215
Սև ծով – 7
Սևանա լճի – 474, 477
Սևաստ (Սեբաստիա) – 248
Սիբիր – 333, 412
Սիհուն զետեր – 367
Սինան – 253
Սինոպ – 16, 248
Սիմն – 320, 325, 328
Սլս – 375, 503, 500
Սիրիա – 147, 359
Սլիքան զյուղ – 34
Սղերդ – 140, 256
Սյունիք – 356
Սոլոյս – 362, 363
Սողանլուղ – 389, 391
Սովոր Զերմուկ (Սառ Զերմուկ) – 257
Սորբոն – 345
Սումգայիր – 359
Սոֆիա – 276
Սպահան – 400
Սպահանց Մակար – 362
Սպարկերտ – 310
Սպեր – 148, 256, 421
Ստամբուլ – 29, 130
Վաղարշապատ – 199
Վան – 7, 30, 32, 34, 36, 39, 40, 47, 51, 101, 116, 119, 122, 135–143, 147, 160, 187, 234, 251, 276, 293, 307–315, 317, 337, 350, 353, 379, 384, 392, 395, 403–406, 409, 410, 412, 413–416, 419, 425, 447
Վանանդա – 183
Վասպուրական – 33–36, 90, 91, 122–125, 139, 143, 160, 161, 173, 176, 204, 279, 309, 310, 312, 313, 314, 416, 318, 323, 325, 335, 353, 354, 383, 404–407, 414, 425, 452
Վատիկան – 417, 485
Վարազա վանք – 32, 34, 35, 78, 90, 146, 160, 172, 173, 179, 211, 217, 310, 314, 318, 326, 237, 403, 406, 408–411, 458
Վարանդա – 351
Վարդենիք – 253
Վարդո – 411
Վարի Խոյս – 253
Վելարավորաց – 481
Վենետիկ – 172, 177, 379, 474, 475, 476, 478, 479, 483, 505
Վերին և Ստորին Բասեններ – 148
Վերին ու Ներքին Պուլանըսներ – 32
Վիեննա – 176, 177, 178, 189, 275, 477, 479, 480, 481, 483, 505
Վաղիկավկազ – 195
Վրաստան – 151, 243, 244, 354, 408, 503
Տաղվորիկ – 84, 86, 88
Տափուշ – 165

Տարոն (Տարօն) – 32–35, 39, 78–
 84, 90, 123, 124, 160, 173, 176,
 181, 185, 238, 267, 283, 284, 318,
 335, 383, 406, 407, 414
 Տիբերական ծով – 320
 Տիգրանակերտ – 38, 101, 255,
 256
 Տիգրոն – 222, 282
 Տղմուս գետ – 225
 Տյուրիկ – 9, 248, 250
 Տորին – 190
 Տորութերան – 414
 Տրապիզոն – 7, 39, 80, 189, 248,
 252, 411
 Տրիեստ – 53, 177, 481
 Փակեր – 251
 Փարիզ – 15, 27, 62, 175, 176,
 230, 275, 327, 345, 369, 394, 431,
 491
 Փերարի – 362
 Փերի – 253, 254
 Փշատ – 251
 Փոքր Ասիա – 135, 274, 383
 Փոքր Հայք – 9, 248, 279
 Փոքր Մասիս – 456
 Փսանք – 79, 86
 Քեմալի – 256
 Քիոս – 16
 Քղի – 148, 384
 Քուրդիստան – 392
 Օլրի – 352

Օշական – 179, 191, 205
 Օսմանյան կայսրություն – 147,
 232, 364, 374, 377, 380, 385, 425,
 507
 Օրյու – 39
 Օրբագյուղ – 417, 418
 Յարդին – 84
 Յիլաղելֆիա – 460
 Յոնիկ – 93, 94, 96, 97, 368
 Յրանկանուրտ – 190
 Յրանսիս – 20, 118, 195, 232,
 278, 436, 439, 493, 394
 Յոյոկдере – 29
 Կոնстанտինոպոլ – 29
 Կүմ-Կապу – 29
 Լոնդոն – 29
 Ստամբուլ – 29
 Տուրցիա – 29

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Յուրահատուկ հաշվետվորյուն գիտնականի անցած պատվարեր գործունեության մասին (Էմմա Կոտտանոյանի հոդվածների ժողովածուի իրատարակության առիրով)	3
Գում-Գափուի ցույցը (100-ամյակի առիրով)	7
Հայաստանի մեջն է բուն Հայկական խնդիրը և մենք Պետինի մեջ կորոնենք զայն (Գարեգին Սրբանձտյանի ծննդյան 150-ամյակի առիրով)	30
Յարական կառավարությունը և Ամենայն Հայոց կարողիկոսի ընտրությունները	41
Ինչպես վայել է ազգի հայրերին	55
Անվանի պատմաբանը և հասարակական գործիչը (ակադեմիկոս Մ. Գ. Ներսիսյանի ծննդյան 85-ամյակի առիրով)	62
Արմերափոր ներդրում հայ պարբերական մամուլի պատմության ուսումնասիրության մեջ	68
Հայ հոգեվորականութեան դերը Սաստինի 1894 թ. պատամբութեան ընթացքին	78
Հայ հոգեվորականության դիրքորոշումը Զեյրունի 1895 թ. ապստամբության նկատմամբ	90
Հարգանքի ուշացած սուլոր	103
Աշուտ Հովհաննիսյանը և արևմտահայության պատմության ուսումնասիրության մի քանի հարցեր	115
Արմերափոր ներդրում սիյուռքահայ գրականության ուսումնասիրության մեջ	128
Ուստական փոխհուսատոս Կոստանդին Կամարականի գործունեությունը Վանում 1880-ական թվականներին	135
Էրզրումից Զավախը (գրախոսություն Ա. Մելքոնյանի «Զավախը. պատմություն ուրվագծեր» աշխատության մասին)	147
Եկեղեցու և պետության փոխհարաբերության մի քանի հարցեր (19-րդ դարի 2-րդ կես, Ուստական, Թուրքիա)	152
Մարզո Համբարձումի Սլսիքարյան	165

Միմիանելու և Ակրտիչ Խրիմեանը	169
Սեսրու Մաշտոցը և նրա աշակերտները Խրիմյան Հայրիկի գնահատությամբ	179
Ակադեմիկոս Հրանտ Ավետիսյան (ծննդյան 75-ամյակի առթիվ)	187
Մարգո Միմիանը. Խորեն Ստեփանեի «Հայկական աշխարհ» ամսագիրը	192
1903 թ. հունիսի 12-ի Յարական Կառավարության՝ Հայ Եկեղեցու շարժական և անշարժ գույքի բռնպարավման օրենքը և համառողովրդական ընդունումը	198
Գարեգին Եալիսկոպոս Սրբանձտյանը և վաղ միջնադարեան Հայաստանի պատմութեան մի քանի հարցեր	209
Դերենիկ Դեմիրճյանը և Վարդանանց պատերազմը	218
Մադարիա Օրմանյանի պատմագիտական հայացքները	226
Պատմագիտութիւնը Հայաստանի մէջ	236
Արևմտյան Հայաստանի ժողովրդագրական գործընթացները 19-րդ դարի 70–80-ական թթ. բատ Գարեգին Սրբանձտյանցի ...	247
XX դարի հայ գիտնականները և գրերի գյուտը	259
Իսկ վաղը եղեն էր ...	
Ինչ էր նախորդել Հայոց Յեղասպանությանը (հարցազրույց պատմական գիտությունների յոլուոր Էմմա Կոստանդյանի հետ)	274
Սեսրու Մաշտոցն ու գրերի գյուտը Մադարիա Օրմանյանի գնահատությամբ (գրերի գյուտի 1600-ամյակին)	280
1918 թ. մայիսյան հերոսամարտերի արտացոլումը խորհրդահայ գեղարվեստական գրականության մէջ	291
Հայ հոգևորականության դիրքորոշումը 1896 թ. Վանի ինքնապաշտպանության նկատմամբ (110-րդ տարեկիցի առթիվ)	307
Ակրտիչ Խրիմյանն ու հայկական Երուսաղեմը	318
Նվիրական անուններ	330
Պետության գաղափարը Ակրտիչ Խրիմյանի իմաստափրական աշխատություններում	335

Շոշիի դերը հայ ազգային-ազատագրական պայքարում	344
Ակադեմիկոս Հրաչիկ Սիմոնյան (ծննդյան 80-ամյակի առթիվ)	356
Ակադեմիկոս Հրաչիկ Սիմոնյան Հայերի գանգվածային կոսորտները Կիլիկիայում (1909 թ. ապրիլ)	364
Արմեքափոր աշխատություն Կոստանդնուպոլիսի հայ գաղրօշակի մասին	374
Հայկական հարցի ծագումն ու առաջացումը. նրա ներքին բովանդակությունը	383
Ուշագրավ աշխատություն Մոսկվայի և Պետերբուրգի հայկական գաղրաների մասին	398
Վաճ-էլասպրուականի հասարակական մշակութային գործիչները 19-րդ դարի II կեսին	404
Հայ Եկեղեցու անվանի գործիչն ու գիտնականը (Մադարիա Օրմանյանի ծննդյան 170-րդ տարեկիցի առթիվ)	416
Գրիգոր Չոհրապն Արևմտահայոց Ազգային ժողովում և Օսմանյան խորհրդարանում (ծննդյան 150-ամյակի առթիվ)	434
Մադարիա Օրմանյանի գործունեությունը Էջմիածնի Գելորդյան մեմարանում և Արմաշի Դպրեվանքում (1887–1896 թթ.)	451
XX դարասկզբի առաջին երկու տասնամյակների նշանափոր հորելյանները	474
Հայոց Եկեղեցին, Մադարիա Օրմանյանը և օտարազգի գիտնականները	483
Անձնանունների ցանկ	509
Տեղանունների ցանկ	525

ԷՍՍԱ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԵՐ

Համակարգչային ձևավորումը՝ Ն. Աղամյանի
Համակարգչային շարվածքը՝ Մ. Գրիգորյանի
Տպագրիչ՝ Լ. Մուրադյան

Ստորագրված է տպագրության 23.09.2013 թ.:

Տպարանակը՝ 150 օրինակ:

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՈՒԹՅԱՆ ԻՆՍԻՏՈՒՏ
ИНСТИТУТ ИСТОРИИ НАН РА
INSTITUTE OF HISTORY OF NAS RA

ՀՀ, 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4
PA, 0019, Ереван, просп. Маршала Баграмяна 24/4
24/4, Marshall Baghramyan Ave., 0019, Yerevan
<http://www.academhistory.am>